ԳԱՐԵԳԻՆ
ՍԵՎՈՒՆՑ

ԻՐԱՆԱԿԱՆ
ՆՈԹԵՐ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԳԱՐԵԳԻՆ ՍԵՎՈՒՆՑ

630

Библиотека
Н. Б. и І. Н. Кусиньянъ

ԻՐԱՆԱԿԱՆ ՆՈԹԵՐ

2704

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1949

ГАРЕГИН СЕВУНЦ
ИРАНСКИЕ ЗАПИСИ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949 г.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ ՄԻ ԳԵՏԱԿԻ ԱՓԻՆ

Մեր մեծ հայրենիքի ծայրագույն հարավում՝ Ադրբեջանում է գտնվում Աստարա քաղաքը, որը մի փոքրիկ, դանդաղահոս գետակով բաժանվում է երկու մասի։ Քաղաքի մի մասը պատկանում է մեզ, իսկ մյուս մասը՝ Իրանին։

Սահման հանդիսացող գետակը հենց այստեղ էլ թափվում է Կասպից ծովի մեջ։ Ծովափին շատ մոտ, ընդամենը մի քանի տասնյակ մետրի վրա, գետակի վրայով կամուրջ է ձգված, որը նույնպես բաժանված է երկու հավասար մասի։

Սահմանապահ զինվորը քայլում է մինչև կամրջի կեսը և վերադառնում։

Ոչ մի քայլ կեսից այն կողմը։

Տասնյակ տարիների ընթացքում իրանցիները բազմիցս առիթ են ունեցել հավաստիանալու մեր սահմանապահների քաղաքավարության և ազնվության մեջ։

Հենց այստեղ՝ Աստարա քաղաքում, գետակի այն կողմից երբեմն մեր կողմն են անցնում ձիեր, կովեր, ջորիներ։ Մեր սահմանապահները միշտ էլ խնամքով դրանց վերադարձնում են տերերին։

Եվ այլ կերպ էլ չէր կարող լինել։

Ցարական իշխանությունը տապալելու օրից սովետա-

կան ժողովուրդը միշտ էլ ձգտել է բարի-դրացիական հարաբերություններ հաստատել հարևան երկրների հետ և առաջին հերթին հաստատել է Իրանի հետ։ Եվ իրանական ժողովուրդն այժմ գիտե, որ աշխարհի բոլոր տերությունների մեջ նրա ամենալավ բարեկամը սովետական պետությունն է։

Գուցե հենց այդ բարի-դրացիական հարաբերության պատճառով է, որ սահմանն անցնելուն պես մեզ, մի խումբ սովետական քաղաքացիներիս, Աստարայի իրանական մասում դիմավորեցին բարեկամաբար։ Առաջին հերթին մեզ շրջապատեցին երեխաները։ Նրանք առաջարկում էին սիգարեթ, մորի, կեռաս... Ոտաբոբիկ, կիսամերկ այդ երեխաները մրցում էին իրար հետ, ամեն կերպ աշխատում մեր ուշադրությունը գրավել։ Իսկ նրանք, ովքեր ոչինչ չունեին ծախելու՝ մոտենում էին, հետաքրքրությամբ նայում մեզ։ Սակայն մեզնով հետաքրքրվում էին ոչ միայն երեխաները։

Քաղաքը մտնելուն պես փողոցի երկու կողմում շարված խանութներից մեզ հրավիրում էին որևէ բան գնել։ Դրանք գավառային «ունիվերսալ» տիպի խանութներ էին, ուր իրար հետ խառը դրված էին ածուխ, հաց, օճառ, ձու, բրինձ, նավթ ու կանաչեղեն... Այդ խանութների շարքում էին գտնվում նաև պայտարները, պղնձագործները, թիթեղագործներն ու կոշկակարները։

Իրանական Աստարա մտանք շուկայի եռուն ժամանակը։ Շրջակայքից գյուղացիները շուկա էին հանել բրինձ, թռչուններ, պանիր և զանազան մանրունք։

Շուկա էին դուրս եկել և տեղացիները։

— Օրական ի՞նչքան օգուտ ունես, —հարցրի «ունիվերսալ» խանութներից մեկի տիրոջը, որի ճաղատ գլուխը բաց էր, իսկ հագին ուներ փոշուց ու քրտինքից սևացած մի ջապիկ։ Մինչ նա կպատասխաներ իմ հարցին, մոտեցավ մոտ տաս տարեկան ոտաբոբիկ մի երեխա, պղնձե երկու դրամով գնեց մի կտոր մաստակ ու վազեց։

Խանութպանը հանեց իր գզրոցը, թափ տվեց այն և նրա մեջ գցեց պղնձե դրամները։

— Առավոտից մինչև հիմա այս երկու ղրանն է։ Գնորդները քիչ են, մարդիկ փող չունեն, —պատասխանեց նա՝ մեղավորի պես ժպտալով։

Դժվար էր հավատալ նրան, ուստի ասացի.

— Էլ ի՞նչու ես այստեղ նստում, ուրիշ մի գործով զբաղվիր։

Դալկադեմ այդ մարդը նույն ժպիտը դեմքին պատասխանեց.

— Ուրիշ գործ չկա, ստիպված մենք մեզ խաբում ենք։

Հարևան խանութպանի և մի ծեր գյուղացու միջև ծագած վեճը խանգարեց մեր զրույցը։

Բանից պարզվեց, որ գյուղացին ցանկանում էր ետ վերցնել նոր միայն վաճառած իր երկու հավը, իսկ խանութպանը չէր տալիս, ստիպում էր նրան հեռանալ այդտեղից, չնայած ծագած վեճի մեղավորն ինքն էր, հավերը գնելիս նա խոստացել էր երկսին երեք թուման տալ, իսկ վերցնելուց հետո տվել էր երկու թուման ու յոթ ղրան։

— Այ բալամ, քեզ ղուրբան, փողդ չեմ ուզում,—ասում էր ծերուկը՝ օգնություն հայցող հայացքով շուրջը նայելով։

— Գնա կորիր, յղար հավեր են, երևում է՝ մի տարի կուտ չես տվել, իսկ երեք թուման ես ուզում։

Ծերուկը համառում էր.

— Ախպեր, գյուղ տեղ է, հավն ինչ աչքը տեսնում է՝ ուտում է։ Մի դրա քարճիկը նայիր տես. ամեն ինչով լիքն է։

— Գնա, գնա, ավել պակաս մի խոսիր,—պնդում էր խանութպանը։

Ծերուկը համառում էր.

— Աստված սիրես, տղաս մեռնում է, դեղ պիտի առնեմ. քառասուն վերստ ոտքով եկել եմ, ինձ մի չարչարի...

Հուղմունքից նրա լայն, արևայրուկից համարյա սևացած ճակատին քրտինքի կաթիլներ էին գոյանում ու գլորվելով կորչում ալեհեր միրուքում։ Նա քառասուն վերստ

ոտքով եկել էր դեղ գնելու՝ ձեռքին ոչ մի դեղատոմս չունենալով։ Դեղորայքը նրան պետք է տար տեղական դեղագործը՝ ըստ իր հայեցողության։ Սակայն ո՞վ կարող էր ասել, թե ինչով է հիվանդ նրա տղան և ինչ դեղ պետք է գնել։

Ճիշտ նույն կերպ դժվար էր ասել, թե երբ կվերջանա նրա և խանութպանի վեճը։

Սակայն շուտով փողոցի անկյունում երևաց կանաչավուն համազգեստ հագած ոստիկանը և նրանց վեճն իսկույն հարթվեց։

Ծեր գյուղացին հեռվից ոստիկանին տեսնելուն պես վերցրեց ոտքերի մոտ դրած դատարկ խուրջինը և հեռացավ՝ լուռ, գլխահակ, մտամոլոր։

Փողոցում անցնող-դարձողներից ոչ ոք ուշադրություն չդարձրեց այդ խաբված ու վիրավորված մարդու վրա։

Ես մոտեցա փոքրամարմին, մրոտ դեմքով մի պղնձագործի, որը խանութի առաջ անագած ամաններ էր դրել, իսկ ինքը խսիրի վրա ծալապատիկ նստած ճաշում էր։ Ճաշը բաղկացած էր եփած բրնձից, մի քանի կանաչ սոխից ու հացից։ Խանութի դռանը կանգնած էր նրա երեխան։ Երևում էր՝ ճաշը նա էր բերել։ Ինձ շատ դուր եկավ այդ վարպետի պատրաստած պղնձե փոքրիկ կուժը, բայց որովհետև ոչինչ գնելու ցանկություն չունեի, միայն ասացի.

— Շատ լավ կուժ ես պատրաստել, վարպետ։

Նա թողեց ճաշը, հարգալից ժպտալով մոտեցավ ինձ և ըստ երևույթին իսկույն կռահելով, որ սահմանը նոր եմ անցել, ասաց.

— Քեզ փեշքեշ է, վերցրու։

— Շնորհակալ եմ, ի՞նչի համար ես փեշքեշ անում։

Վարպետը կարոտալի մի հայացք ձգեց դեպի սահմանի մյուս կողմը և ասաց.

— Ամբողջ խանութս փեշքեշ կանեմ այն կողմին։

«Այն կողմ» ասելով նա նկատի ուներ սովետական

հողը, որն ընդամենը հարյուր, հարյուրհիսուն մետրի վրա էր գտնվում։

— Իսկ ինչու՞,— թերահավատությամբ հարցրի ես։

Նա ցույց տվեց խանութի դռանը կանգնած պղնձի պես դեղին դեմքով տղային և ասաց.

— Տեսնու՞մ ես, վեցը ունեմ, բայց ոչ մեկին կրթություն տալ չեմ կարողանում։ Իսկ հորեղբորս թոռները, որ այն կողմում են մնացել, ասում են հիմա Բաքվում մեծ ինժեներներ են։ Իսկ այստեղ ի՞նչ պետք է սովորեն սրանք։ Այ, այն պիտի սովորեն...

Նա մատով ցույց տվեց դիմացի խանութը, ուր երկու հողի նստած դեյլան էին ծխում։

Ամեն ինչ պարզ էր ու հասկանալի։

Սահմանից հարյուր մետր անցնելուց հետո մեզ համար իսկույն բացվեցին մի բոլորովին այլ աշխարհի դռներ։

Արտաքին տեսքով իրանական Աստարան շատ քիչ է տարբերվում սովետական Աստարայից։ Երկու մասի վրա շողշողում է հարավի նույն պայծառ, ջերմաշունչ արևը, որի շողերի տակ ազատ սավառնում են ծիծեռնակները, արագիլները թռչում այս ու այն կողմ։ Երբեմն բարձր-բարձր երկնքում սավառնում են ուրուրն ու բազեն, գիշատիչ հայացքով որս փնտրում սահմանի այս ու այն կողմում։

Քաղաքի երկու մասի տների բակերում ազատ խոյանքով երկինք են ցլանում բարդիները։ Իրենք իրենց, առանց խնամքի, թե բակերում և թե բակերից դուրս աճում են նռնենիները, թթենիները, սալորենիները և խաղողի թփերը։ Հեռվից, ասես կապույտ երկինքին թիկն տված, անտառապատ սարերը նայում են վեհանիստ Կասպից ծովին։ Նույն ոսկեգույն, ոսկու շեղջի պես մաքուր ավազն է փռված քաղաքի երկու մասի ծովափին։

Սակայն հենց առաջին պահից զգում ես, որ դրանք՝ փոքրիկ գետակով բաժանված քաղաքի երկու մասերը, երկու միանգամայն տարբեր աշխարհներ են՝ դեմ հանդիման կանգնած։

Այգաեղի բնակիչները մեծամասամբ ադրբեջանցիներ են։ Նրանք խոսում են այն լեզվով, ինչ լեզվով խոսում են մեզ մոտ ադրբեջանցիները Լենքորանում, Բաքվում։

Եվ ոչ միայն Աստարայում, այլ և Աստարայից դեպի Փեհլևի ձգվող ճանապարհի վրա գտնվող գյուղերում ապրում են միմիայն ադրբեջանցիներ։ Անցյալում, դարեր շարունակ, նրանք ապրել են միասին՝ մի պետության մեջ։ Հետագայում նվաճողների քմահաճույքով այդ ժողովուրդը մասնատվել է։ Եվ չնայած մասնատված, երկու երկրների մեջ բաժանված, մեկ է նրանց լեզուն, նույնն են սովորություննները, ծեսերը։

Սակայն առաջին պահ շատ տարօրինակ էր թվում, երբ նրանցից լսում էինք «արբաբ», «խան», «քեդխուդա» բառերը։ Դրանք ձևի համար չէին գործ ածվում։ Այստեղ իսկապես կային և՛ աղաներ, և՛ խաներ, և՛ քեդխուդաներ (գյուղապետեր), և՛ արբաբներ (տերեր)։ Սրանք էլ հենց ճորտացնում են գյուղացիներին։ Բերքը հավաքելու ժամանակ գյուղացու գլխին կանգնում է հողատիրոջ մարդը և կոպը ձեռքին բաժանում բերքը մի քանի մասի.

— Սա հողի բաժինը, սա ջրի բաժինը, սա լծկանի բաժինը, սա քո աշխատանքի համար, սա էլ սերմացուի դիմաց,—ասում է նա՝ բերքը բաժանելիս։

Պարզ է, որ գյուղացիներից շատերը հողի, ջրի և լծկանի տերեր չեն։ Հաճախ նույնիսկ սերմացուն նրանցը չի լինում։ Հետևապես նա իրավունք ունի վերցնելու բերքի միայն մեկ հինգերորդը։

Բայց դրանով գործը չի վերջանում։ Այդ ամենից բացի գյուղացին պետք է վճարի նաև զանազան հարկեր, որոնցից են՝ եկամտահարկը, գլխահարկը, մրգատու ծառերի հարկը, զինծառայության հարկը և այլն։ Մի քանի տեղեր հարկերի գանձումը կախված է տեղական իշխանավորների քմահաճույքից։

Իրանում մինչև օրս էլ գոյություն ունեն կառն ու բեգյարը։

Շատ հաճախ գյուղացիները ձրի աշխատանք պետք է կատարեն հողատիրոջ համար—ջրանցքների, ճանապարհների վրա։

Գյուղացու գլխին իշխանության գծով քեդխուդայից բացի կանգնած են դեխդարը (գավառակի պետը), բախշդարը (գավառի պետը), ֆարմանդարը (նահանգապետը) և վերջապես օստանդարը (գեներալ նահանգապետը)։ Երկրի տերերը՝ շահը, խոշոր կալվածատերերը, կապիտալիստները դրանց միջոցով իրականացնում են իրենց իշխանությունը։ Շատ բան հիշեցնում է մեր հեռու անցյալը։

ԳՈՂԱՑՎԱԾ ԿԻՆԸ

Աստարայում մենք ծանոթացանք մի տարեց կնոջ հետ, որը ծառայում էր Զ.-ի տանը։ Նա զրկված էր մի աչքից. դեմքին ծանր, տանջալի կյանքն իր անջնջելի դրոշմն էր դրել։ Չնայած դրան, կինը մեզմ բնավորության տեր էր ու քաղցրախոս։ Առանց «քեզ մատաղ», «հոգուդ մեռնեմ»-ի խոսք չէր ասում։ Երբ նրան կանչում էին, նա պատասխանում էր.

— Գալիս եմ, հոգուդ մեռնեմ...

— Մի բաժակ թեյ էլ տուր,—ասում էին նրան։

— Բերեմ, քեզ մատաղ,—պատասխանում էր նա և քիչ հետո լիքը բաժակը սեղանին դնելով ասում.

—Խմիր, ցավդ տանեմ։

Մի անգամ պարզվեց, որ այդ կինը հայերեն խոսել գիտե։ Զարմանալի էր, Աստարայում բնիկ հայեր չկան։ Այդ տանջահար կինը բացեց իր գաղտնիքը.

— Դա իմ մայրենի լեզուն է, ի՞նչպես չիմանամ։

— Այդ ի՞նչպես հասկանալ,—հարցրի նրան։

Եվ կինը պատմեց իր տխուր կենսագրությունը։

— Ես, բալա,—սկսեց նա,—Բաքվում եմ մորից ծըն-

վել։ Հերս ընտեղ բանվոր էր։ Նոբելի մոտ էր ծառայում, մենք էլ Բալախանում էինք ապրում, բալքա լսած լինես։ Մեր տան մեծ երեխան ես էի։ Մերոնք միշտ ինձ էին ուղարկում խանութից գնումներ կատարելու։ Խանութն էլ, մի Հաջի Միրզա կար, ոչ մխիթարվի նա, նրանն էր։ Դե էլ հինչ տեղից ասես, որ նրա տունը մարդ չէր գալիս։ Դու մի ասի դրա տանն եկողներից մեկն աչք է դրել ինձ վրա, ես էլ անտեղյակ։

Մի անգամ արդեն մթնել էր, մայրս ուղարկեց, թե գնա մի գրվանքա պանիր բեր։ Գնացի, պանիր առա, տուն գալիս մեկ էլ էն իմացա, որ ինձ բռնեցին, ֆայտոնի մեջ գցեցին։ Վախից ես ուշագնաց եղա, մեկ էլ որ աչքերս բացեցի և նայեցի շուրջս՝ ոչ տուն կար, ոչ քաղաք։ Կողքիս երկու մարդ էին նստած. մինն ինձ բռնել էր, որ չընկնեմ։ Նոր սկսեցի լաց լինել, ուզեցի թռչել ֆայտոնից, ամա կողքիս նստած մարդը կուռս պինդ էր բռնել։ Ոչ մխիթարածն սկսեց ինձ հանգստացնել, գրպանից կոնֆետ հանեց, ուզեց զոռով խաբել։ Ես խփեցի նրա ձեռքին... Գլուխդ ի՞նչ ցավեցնեմ, այդ թաղվածը բերեց, հասցրեց այստեղ, երեք տարի պահեց իրենց տանը, հետո թե. «Դու իմ կինը պետք է լինես»։ Ինչքան լաց եղա, աղաչեցի, որ այդպիսի բան չանի, չլսեց այդ ոչ մխիթարածը... Ես էլ հի՞նչ կարող էի անել. ծնողներիս մի լուր տալ չէի կարող, մենակ տնից փախչել էլ չէի կարող... Ամուսնանալուց հետո էլ առանց նրան տնից դուրս գալու իրավունք չունեի։ Ոտս տնից դուրս էի դնում թե չէ, ծեծում էր։ Այ, տեսնո՞ւմ ես, ինչպես էր ծեծում։

Այս ասելով կինը ցույց տվեց իր կուրացած աչքը։

— Եվ այդպես էլ ծնողներիդ հետ չկարողացա՞ր կապվել։

— Չէ, հոգուդ մեռնեմ, չկարողացա։ Քանի այն ոչ մխիթարածը կենդանի էր, հնար չկար։ Հետո էլ մեռավ, հոգիս ազատեց, բայց ծնողներս էլ չկային։

Դրանից հետո այդ կինն ամուսնացել էր մի մշակի հետ։ Ուրիշները մեզ պատմում էին, որ նրանք՝ մշակը և այդ կինը, չտեսնված սիրով էին ապրում։ Երբ մեկը հիվանդանում

էր, մյուսը հանգիստը կորցրած չէր իմանում ինչ անի, որ ամուսինն առողջանա։ Չէ՞ որ այս անգամ մշակը նրան ավազակի պես չէր փախցրել, այլ ամուսնացել էր կնոջ հոժար կամքով։ Նրանք սիրահարվել և ամուսնացել էին այն ժամանակ, երբ կինը մոտ քառասուն տարեկան էր արդեն։ Եվ դա նրա առաջին սերն էր։ Ասում են՝ առաջին սերն ամենաուժեղն է։ Նա՝ այդ կինը ոչնչով մեղավոր չէր, որ այդ սերը նրա սրտի մեջ հյուրընկալել էր կյանքի համարյա վերջալույսին։ Նրա շրջապատում այժմ քիչ կանայք չկային, որոնց համար բոլորովին անծանոթ էր սեր ասված բանը։ Նրանց ամուսնացնում էին ծնողները՝ հաշվի չառնելով աղջկա ցանկությունը։ Զարմանալու ոչինչ չկար. մենք ոտք էինք դրել մի այլ, բոլորովին այլ աշխարհ։

ՀԱՆԵԼՈՒԿԱՅԻՆ ՄԱՐԴԸ

Հետագայում ես Աստարայում հաճախ էի լինում։ Ամեն անգամ կանգ էի առնում իմ ընկերոջ՝ Պ-ի մոտ։ Դա բալակյան գեղեցիկ, կապտավուն աչքերով, երկար թարթիչներով քսանյոթ-քսանութ տարեկան մի երիտասարդ էր։ Իր կյանքում նա երբեք արևելքում չէր եղել, հետևապես այն ամենը, ինչ տեսնում էր այստեղ, նրա համար նորություն էր։ Ամենաչնչին, մեզ համար սովորական բաները նրան զարմացնում էին։ Նրա հետ մի որևէ տեղ գնալիս շարունակ հարցեր էր, որ տալիս էր, ապա, լսելով պատասխանները, աչքերը կկոցում էր և մտածում, ցանկանալով պարզել, թե ինչու այս բանն այսպես է և ոչ ուրիշ կերպ։

Շատ լավ հիշում եմ, թե ինչպես նա զարմացավ, երբ առաջին անգամ չադրայով կին տեսավ։ Դրան հետևեց հարցերի մի տարափ. քա՞նի տարեկանից են չադրա կրում, ի՞նչպես են տղաները որոշում աղջիկների գեղեցկությունը, երբ նրանց դեմքը չեն տեսնում, ի՞նչ կանեն այդ չադրայով կա-

նայք, եթե անծանոթ մի տղամարդ հանկարծ փորձի նրանց հետ խոսել, մինչև հարսանիքը փեսացուն կարո՞ղ է տեսնել իր հարսնացուին։

Մեղքս չեմ թաքցնում, երբեմն-երբեմն, ուղղակի կատակի համար, նրան սխալ պատասխաններ էի տալիս և նրա զարմանքը կրկնապատկում։

Մի անգամ էլ, երբ եկել էի նրա մոտ, նա ձայնին խորհրդավորություն տալով ասաց.

— Այստեղ ես բավական հետաքրքիր մի հարևան ունեմ, Մամեդ Աղա անունով։ Նրա տարիքը քառասունից անց է, իսկ կինը քսանհինգ տարեկան է և արդեն երեք երեխա ունի։ Մի անգամ երեկոյան տուն էի եկել, ցանկացա լվացվել, իսկ լվացարանում ջուր չկար։ Դեռ լույս էր, Մամեդ Աղան նստած իր պատշգամբում, ինքնաեռը կողքին դրած թեյ էր խմում։ Տեսնելով, որ իմ լվացարանում ջուր չկա, նա դեպի իր սենյակի խորքը նայելով կանչեց կնոջը, ինչ որ բան ասաց։ Քիչ հետո կինը մի դույլ ջուր բերեց ինձ համար։ Ես չիմացա ինչպես հայտնել իմ շնորհակալությունը։ Ստիպված իրար վրա կրկնեցի.

— Յախշի, յախշի...

Կինը գնաց, իսկ Մամեդ Աղան ինձ հրավիրեց թեյի։

Այստեղից էլ սկսվեց մեր ծանոթությունը։ Նա մի քիչ ռուսերեն գիտի։ Կես խոսքով, կես ձեռքի շարժումներով մենք իրար հասկանում ենք։ Մի բան միայն չեմ հասկանում։ Ամենքն այստեղ որևէ գործով զբաղված են, իսկ թե ինչ գործի տեր է այդ Մամեդ Աղան, ոչ մի կերպ չեմ հասկանում, ոչ խանութ ունի, ոչ արհեստ, ոչ պետական ծառայող է, ոչ էլ հողատեր։ Բայց ամենից լավ նա է ապրում։ Տունը որ տեսնես՝ կզարմանաս. պատերին, հատակին թանկարժեք խալիներ են փռված։ Ինձ թվում է, թե այս Աստարայում ոչ ոք նիկելապատ մահճակալներ չունի՝ նրանից բացի։ Վերջերս այստեղ մի ինչ որ տոն էր։ Տեսնեիր, թե դրա կինն ինչպես էր զարդարվել։ Վզին ձգել էր մարգարիտների շարան, մատներին հագցրել թանկարժեք

մատանիներ, ականջներին՝ օղեր։ Ինքն էլ հնոցից պակաս չէր հագնվել։ Սև շևիոտից կոստյում էր հագել, գլխին դրել ծղոտե շլյապա, ձախ ձեռքի միջնամատին հագցրել սև ակով մատանի։ Այդպես երբ նրան տեսա՝ աչքերիս չհավատացի։

— Յախշի, յախշի, Մամեդ Աղա,— ասացի նրան, իսկ նա բավական բարձր տրամադրության մեջ ցույց տվեց բակում սյունից կապած գառը, ասելով.

— Сегодня его долой будем...

Ուզում էր ասել այսօր մորթելու ենք։

— Մեծ արքա ես դարձել, մեծ,— ասացի նրան, կարծելով թե նա կհիշի իր գանգատները կյանքից։ Ախր մինչ այդ նրա հետ զրուցելիս շարունակ գանգատվում էր, թե այս չկա, այն չկա, հետո հայհոյում էր այստեղի՝ Աստարայի գավառապետին, ոստիկանապետին, դատախազին և քաղաքագլխին։ Մի խոսքով ինձ թվում էր, թե դա իսկապես դժգոհ մարդ է, կարծում էի, թե իր դժգոհությունների համար դրան ոչ պաշտոն են առաջարկում, ոչ աշխատանք։ Բայց վերջերս մի դեպքից հետո ես հասկացա, որ խիստ սխալ կարծիք ունեմ Մամեդ Աղայի մասին։ Թեհրանից այստեղ էր եկել մի հոգևորական քարոզիչ։ Այստեղ ասում էին, թե նա շատ մեծ դեմք է երկրի հոգևորականների շարքերում։ Սովորաբար այստեղ ավելի երկրորդական քարոզիչներ են գալիս, իսկ այս անգամ, չգիտեմ ինչու, եկել էր այդպիսի մի կարևոր մարդ։ Այդ օրերին Մամեդ Աղան շարունակ նրա հետ էր լինում։ Մի երկու անգամ հարցրի, թե ինչու է եկել այդ մարդը, Մամեդ Աղան խելքը գլխին բան չասաց։ Հետո ուրիշներից իմացա, որ այդ շեյխը անգլիացիների մարդն է. գալիս է այստեղ իբր թե քարոզ կարդալու, բայց լրտեսություն է անում. հարցնում է, թե ովքեր են եկել Սովետական Միությունից, ինչ գործով, ինչքան ավտոներ են անցել կամրջի այն կողմից այս կողմը... Ասում են նա այստեղ հատուկ մարդիկ ունի, որոնք նրա բացակայության ժամանակ այդ լուրերը հավաքում են և սպասում, մինչև նա կամ մեկ ուրիշը գա։ Անգլիացիները լրտեսներ հավաքագրում են բնակչու-

թյան տարբեր խավերից. ժանդարմերիան և հոգևորականությունն արդեն նրանց լավագույն օգնականներն են: Հա, ես Մամեդ Աղայի մասին էի ասում: Նայում եմ դրան և մտածում՝ մի՞թե իսկապես լրտես է: Գիտես, դա շատ հավանական է: Մեր կողմից այս կողմն անցնող մարդկանց հետ Մամեդ Աղան առաջինն է ծանոթանում: Ամենից շատ նա ծանոթներ ունի շոֆերներից: Հենց որ քաղաքի կենտրոնական խանութների առաջ ավտո է կանգնում և շոֆերը ցանկանում է որևէ բան գնել, մեկ էլ տեսնում ես Մամեդ Աղան ձեռքերը մեջքին դրած, ժպիտը դեմքին մոտենում է շոֆերին, սկսում նրա հետ զրուցել: Շոֆերներն էլ կարծելով, թե նա միջնորդ է, հարցնում են նրան դեսից, դենից: Ով ինչ էլ ցանկանան նրանք, Մամեդ Աղան գտնում է: Իր ծառայության համար նա հրաժարվում է որևէ վարձատրություն ստանալ, այլ խնդրում է, որ շոֆերները վերադարձին Սովետական Միությունից այս ինչ կամ այն ինչ տնային իրեր բերեն: Այստեղ նման բաները շատ թանկ են: Մեզ մոտ ամանեղենը շատ է աժան, իսկ այստեղ սրանք մեծ գումար պետք է վճարեն, որովհետև երկիրը նման իրեր արտադրող գործարաններ չունի: Այստեղ սրանց պատրաստածը միայն այն կավե ամաններն են: Հազար տարի առաջ էլ այդպիսի ամաններ են պատրաստել:

Չգիտեմ, ուրիշ քաղաքներում կա՞ն գործարաններ, ֆաբրիկաներ, որ էլեկտրական սարքեր, ամանեղեն, կենցաղային անհրաժեշտ իրեր արտադրեն: Ես այստեղ հարցրի իմացողներից, ասում են այդ բոլոր իրերը ներմուծվում են արտասահմանից: Մի ժամանակ Գերմանիան հեղեղել է սրանց շուկան հազար տեսակ մանր-մունր ապրանքներով...

— Ես այդ գիտեմ,—ընդհատեցի նրան,—դու Մամեդ Աղայի մասին էիր խոսում:

— Հա, Մամեդ Աղան ուղղակի հանելուկային մարդ է: Իմ կարծիքով նա համ լրտես է, համ մաքսանենգ: Ի միջի այլոց ասեմ, որ այստեղ մաքսանենգներ շատ են եղել: Դե

հասկանալի է, չէ՞ որ մինչև այնտեղ ուղղակի երկու քայլ է-ոտքդ դիր գետի մյուս ափին և բոլորովին այլ աշխարհում ես։ Բայց հիմա դժվար է, վախենում եմ։ Վերջերս Թեհրանից այստեղ էր եկել մի գրող, որպեսզի անձամբ խոսի մեր սահմանապահների հետ, թույլտվություն ստանա և անցնի այն կողմը։ Նա ասում էր, որ ինքը դեմոկրատ է, չի կարող դիմանալ այստեղ և անպատճառ ցանկանում է սահմանն անցնել։ «Լա՜վ, հարցրի դրան, իսկ չգիտե՞ք, որ առանց անձնագրի, առանց հատուկ թույլտվության սահմանն անցնել չի կարելի»։ Նա ասաց, որ եթե իրեն թույլ չտան, ինքը ղչռով կգնա, կամ կփախչի։ Հետո նա մտերմացավ Մամեդ Աղայի հետ։ Միշտ միասին էին լինում։ Ահա մի քանի օր է, ինչ այդ գրողը քաղաքում չի երևում։ Թե ուր է գնացել, չգիտեմ։ Գուցե և գիշերը սահմանն անցել է, ով գիտի։ Եթե այդպես լինի, Մամեդ Աղան անշուշտ օգնած կլինի, որովհետև նա, ինչպես ինքն է պատմում, մինչև 1920 թիվը մեր կողմերում խանութ է ունեցել, այնտեղ ապրել։ Միայն քսան թվից հետո նա թողել է խանութը, անցել այս կողմը։ Այն կողմում, իր ասելով, նա բարեկամներ ունի, որոնց մոտ քսան տարի է, ինչ չի տեսնում։ Հիմա դուք տեսեք և՛ այն կողմից է փախել և՛ շարունակ խոսում է այն մասին, թե մեր կարգերը շատ է հավանում։ Որի՞ն հավատաս։ Դրա համար էլ ասում են, որ այդ Մամեդ Աղան հանելուկային մարդ է։ Հա, ես մոռացա ասել, որ օրերով չի երևում, իսկ վերադառնալուց հետո երբ հարցնում ես, կամ ասում է Արդաբիլ է գնացել, կամ մոտ գյուղերը։

Ընկերոջս հետ խոսելով մենք հասանք մեզ հայտնի խանութների, արհեստանոցների շարքը, ուր մարդիկ իրենց ամենօրյա միապաղաղ, միօրինակ աշխատանքն էին կատարում։ Պայտարներից մեկը ձի էր պայտում, մյուսը ծալապատիկ նստած փոքրիկ զնդանի առաջ չախ-չխկոցով մեխ էր պատրաստում, գլխարկ կարողներից մեկը կաղապարին էր հագցնում ձեռքի գլխարկը, մյուսը ձևում էր մորթին այնպիսի մտասուզությամբ, ինչպես միայն մեծ գիտնականը կարող է

լինել իր լաբորատորիայում։ Դրանից մի քիչ այն կողմ խանութպաններից մեկն առաստաղից կախած սխտորի և սոխի շարանն էր մաքրում փոշուց, որից շատ դժվար էր ազատվել, որովհետև բավական էր մի ավտոմեքենա անցներ, որպեսզի փոշու ամպի մեջ կորչեին ոչ միայն իրենք խանութպանները, այլև խանութները՝ բրնձի քսակներով, չոր մրգի և այլ ուտելեղենի արկղներով... փոշու ամպը ցրվելուց հետո դարձյալ տեսնում էիր նույն մարդկանց՝ անվրդով նստած իրենց տեղերը։

Մենք այդտեղ որևէ գործ չունեինք, հետևապես այնքան էլ ցանկալի չէր կուլ տալ այդ փոշին, ծծել նեխած մրգեղենի, կաշվի, տժվժիկանոցներում խաշվող էժանագին մսի, փողոցներում կուտակված աղտեղությունների ծանր հոտը։

Աստարայում զբոսնելու համար ամենից հարմար տեղը ծովափն է։ Երբ էլ գնաս ծովափ, այնտեղ խաղաղ է։ Աստարացիները, մեծամասամբ մանուկները, ամառվա շոգին լողանում են մեր սահմանից շատ մոտ—կամրջի մոտերքը։ Իսկ ծովափնյա մյուս տարածության վրա հազվագյուտ դեպքում են մարդիկ լինում։ Երբեմն ծովի վրա կարելի է տեսնել մեկ կամ երկու մակույկ։ Մեծ նավեր այստեղ չկան, ուրիշ տեղից էլ չեն գալիս։ Այդ խաղաղությունն է պատճառը, որ ծովափի ավազի վրա հաճախ կարելի է տեսնել նապաստակների, աղվեսների հետքեր։ Ամենից շատ աղվեսներն են այստեղ վխտում, որովհետև ծովափը հարուստ է զանազան թռչուններով։

Մի ուրիշ անգամ, երբ ես նորից եկա Աստարա և ընկերոջս հետ դուրս եկանք որսի, նա ինձ պատմեց, թե ինչպես է ինքը հյուր գնացել տեղական խաներից մեկի տունը։

ԽԱՆԻ ՄՈՏ

— Այդ խանը,—պատմեց՝ ընկերս,—հետաքրքիր մարդ է։ Մենք հինգ հոգով որսի էինք գնացել այ այն անտառապատ սարերը. տեսնո՞ւմ ես, այնտեղ։ Ավտոն այն կողմերը

քոլորովին չի գնա. տեղ-տեղ ուղղակի կածաններով պետք է գնալ: Մեր ձիերը հազիվ էին անցնում: Այդպիսի կածաններից մեկը մեզ հասցրեց մի գյուղ: Դրա անունը տվին, ես հետո մոռացա: Արտաքինից էլ երևում էր, որ գյուղացիները շատ աղքատ են ապրում: Մի կարգին խրճիթ չկար, մինչդեռ ապրում էին անտառի մեջ: Բայց դա չէր զարմանալին: Այստեղ ոչ մի բնակիչ չկար: Դռները փակ էին, եղած պատուհանները ծածկած: Սկզբում մի շուն հարձակվեց մեզ վրա, հետո նա էլ, ասես ձանձրացած հաչելուց, ետ մնաց:

Մենք գյուղամեջում կանգ առանք, նայեցինք այս ու այն կողմ, որպեսզի մի մարդ տեսնենք ու հետը խոսենք: Մեկ էլ ահա երևաց կարճահասակ, ծաղկատար դեմքով մի մարդ՝ մորթե փափախը գլխին, իր հասակից երկու անգամ երկար մի փայտ ձեռին: Նա անվճռական քայլերով մոտեցավ մեզ, մի քանի անգամ ձեռքը դրեց կրծքին՝ միաժամանակ ամեն անգամ մեջքից կորանալով: Հետո իմացա, որ այստեղ այդպես են ողջունում:

— Ո՞ւր են այս գյուղի բնակիչները,— հարցրինք նրան:

Մարդը ժպտալու փորձ արեց, որից նրա դեմքը կնճռոտվեց: Դեղին ատամները բաց արած նայեց մեզ, բայց ոչինչ ասել չկարողացավ: Մեր երկրորդ հարցին էլ նա չպատասխանեց: Բանից պարզվեց, որ այդ մարդը խուլ ու համր է: Նա ձեռքի շարժումներով ցանկանում էր մեզ ինչ որ բան հասկացնել, սակայն մենք ոչինչ չէինք հասկանում: Դժվար էր հասկանալ, թե ինչու գյուղում մարդ չի երևում:

Քիչ հետո մի պատի տակ մենք տեսանք ճերմակամորուս մի ծերունի, որը շապիկի օձիքը լայն բացած, միջատներ էր փնտրում: Նա մեզ հասկացրեց, որ գյուղացիները անասունների հետ սարերն են բարձրացել, գյուղում թողնելով իր նման մի քանի ծեր, հաշմանդամ, ուժասպառ ծերերի:

— Իսկ արոտավայրերը հեռո՞ւ են,— հարցրինք նրան:

— Չէ, խանի գյուղը, որ անցնեք, մի քիչ էլ գնաք՝ կհասնեք:

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Մեզ համար պարզվեց, որ խանն այդտեղից այնքան էլ հեռու չի ապրում, ուստի որոշեցինք նրան անպատճառ տեսնել։ Վերջերս այս շրջաններում երեք-չորս հոգուց բաղկացած ավազակների խումբ էր երևացել։ Պարզ է, որ խանը ցանկության դեպքում կարող էր ձերբակալել այդ ավազակներին, հանձնել դատական օրգաններին։ Բայց նա այդ բանը չէր անում։ Զինված ավազակները թաքնվում էին մեկ այս, մեկ այն գյուղում, կերակրվում գյուղացիների հաշվին և սուտ լուրեր տարածում Սովետական Միության հասցեին։

Հարմար առիթ էր, պետք էր խանին տեսնել և այդ պրովոկատորների մասին հարցնել։

Մենք գնացինք խանի մոտ։

Այն գյուղը, ուր նա ապրում էր, ընկած էր անտառապատ սարի լանջին։

Խրճիթների մեծ մասն այնպիսին էր, ինչպես նախորդ գյուղում՝ աղքատիկ, խոնավ, ցածրիկ...

Գյուղի ամենաբարձր տեղն աչքի էր ընկնում երկհարկանի, կարմիր կղմինդրով ծածկված, ծովահայաց մի տուն։

Դա խանի տունն էր։

Խանը՝ բարձրահասակ, տարեց, լայն ճակատով, սև ու խիտ հոնքերով, խոժ աչքերով մի մարդ, մեզ դիմավորեց դարպասի մոտ կանգնած։ Ինչպես երևում էր, նա հեռվից տեսել էր, որ դեպի իր տունն ենք գնում։

Մեկ-մեկ մեր բոլորի ձեռքը սեղմելով, խանն ասաց.

— Շատ ուրախ եմ ձեզ նման պատվելի հյուրեր ունենալու համար։

Չհարցնելով, թե ինչ գործի համար ենք եկել, ովքեր են իր հյուրերը, նա մեզ բոլորիս հրավիրեց երկրորդ հարկի պատշգամբը, որտեղից չքնաղ տեսարան էր բացվում դեպի Կասպից ծովափին ընկած և կանաչի մեջ թաղված հարթություններ։

Պատշգամբի հատակը ծայրե-ծայր ծածկված էր գորգով, իսկ դրա վրա դրված էին մի սեղան և մի քանի աթոռ-

ներ։ Սյուներից մեկից կախված էին վայրի այծի եղջյուրներ, մյուսից սոխակի վանդակ։ Պատշգամբի վրա բացվող դռներից մեկի առաջ փռված էր վագրի մորթի։

Մեզ հրավիրելով նստել կապտավուն սփռոցով ծածկված սեղանի շուրջը, խանը մոտեցավ պատշգամբի եզրին, ծառաներից մեկին կարգադրեց ոչխար մորթել։ Մենք առարկեցինք դրա դեմ, իսկ նա ցույց տվեց թե դա իր համար վիրավորական է։

— Ի՞նչպես կարելի է, իմ կյանքում այս տանը ձեզ նման թանկագին հյուրեր չեմ ունեցել։

Անելով այդ, նա նորից նայեց բակը, կարգադրեց մեր ձիերին կեր տալ։ Խանի շարժումներից, դեմքի արտահայտությունից դժվար էր ասել, որ նա ուրախ չէ մեզ նման հյուրեր ունենալու համար։ Երբ խոսում էինք դեսից-դենից, նա ասաց, որ ինքն այն գլխից էլ ցանկացել է, որպեսզի Սովետական Բանակը հաղթանակով դուրս գա այս պատերազմից, որովհետև միայն այդ դեպքում կարելի էր վայելել խաղաղություն։

— Ռուսները խաղաղասեր ժողովուրդ են, նրանք կռվել են միայն այն դեպքում, երբ նրանց վրա հարձակվել են։ Գերմանիայի հաղթանակից մենք օգուտ չէինք ունենա, իսկ ռուսների հետ մենք դրացիներ ենք, քանի՜-քանի՜ տարի հանգիստ առևտուր ենք անում...

Ես լեզուս կծում էի, որպեսզի չծիծաղեմ։ Մեզ հետ խոսում էր մի մարդ, որի համար միևնույն էր, թե աշխարհում ով ում կհաղթանակի, միայն թե իր շահերին ոչ ոք չդիպչի։ Սովետական Բանակն Իրան մտնելիս նա ցանկացել էր փախչել Թեհրան, կարծելով, թե իրեն մի բան կանեն։ Ոչինչ չէին արել. նրա գյուղում սովետական բանակայիններից ոչ ոք ոտք չէր դրել։ Ըստ երևույթին խանը դրանից իր համար որոշ եզրակացություն հանել էր, բայց ներքուստ դեռ շարունակում էր վախենալ Սովետական Բանակից և մնալ նրա թշնամիներից մեկը։ Այդ պատճառով նա միջոցներ չէր ձեռք առնում պրովոկատորների դեմ։ Այժմ մեզ տեսնելով, նա

ամեն կերպ ցանկանում էր ծածկել իր թշնամությունը, մեր երկրի բարեկամներից մեկը ձևանալ։ Խոսք չկա, որ մենք նրան չէինք մեղադրի ստելու մեջ։ Նրա սուտն ապացուցելու համար հարկավոր էին փաստեր, իսկ այդպիսի փաստեր մենք չունեինք։

Երբ խոսք եղավ երկու-երեք պրովոկատորների մասին, խանը, ուսերը թոթվելով, ասաց.

— Լսել եմ, բայց չեմ հավատում, որ այդպիսի մարդիկ լինեն։ Իմ գյուղերում եթե երևան, կբռնեմ, գլուխները կկտրեմ։

Ի՞նչ կարող էիր ասել այսպիսի հայտարարությունից հետո։ Մարդն ասում էր, որ մեր բարեկամն է. մեզ ընդունում էր որպես լավագույն բարեկամների և թշնամիների, պրովոկատորների մասին այդպիսի հայտարարություն էր անում։

Քիչ հետո մեջտեղ եկավ խորովածը, որը ինչ որ առանձնահատուկ, անուշ բույր ուներ։ Խանն ինքը, շամփուրներն ընդունելով ծառայից, բարակ լավաշով՝ յուղայով մսի կտորները քաշեց ափսեի մեջ, հետո նառ-շարբաթ լցրեց վրան և, մի կտոր բերանը տանելով, հրավիրեց մեզ ընդօրինակել իրեն։ Ես նայեցի մերոնց և չկարողացա ծիծաղս պահել։ Խանը հետաքրքրվեց, թե ինչու եմ ծիծաղում։

—Զինվոր մարդու փորում սա չի մարսվի,—կատակեցի ես։

Իսկ մենք մեզ հետ մի քիչ «վառելիք» էինք վերցրել։ Մի շիշ հենց իմ պայուսակում էր գտնվում։ Հանեցի, դրի սեղանին։

— Կարելի՞ է,—հարցրի խանին։

— Օ՜, արա՛ղ, մեղքս ի՞նչ թաքցնեմ, դրանից ես էլ միմի թաքուն խմում եմ, բայց վերջացել է։ Շատ ուրախ եմ։

Եվ նա էլ մեզ հետ խմեց և երբ տրամադրությունը բարձրացավ, ոգևորված ասաց.

— Չէ, ես չեմ իմացել, ռուսները հրաշալի մարդիկ են։

Ճաշից հետո մենք նրան հրաժեշտ տալով շարունակեցինք մեր ճանապարհը։ Ողջ գյուղը, մեծ ու փոքր, դուրս էին

նիել փողոցները մեզ տեսնելու։ Մեր ընկերներից երկուսը նրանց ձեռքով էին անում... Աղբյուրի մոտ կանգ առանք ձիերը ջրելու։ Մեր շուրջը բազմաթիվ մարդիկ խմբվեցին։ Այստեղ մեր և նրանց մեջ ինքնաբերաբար զրույց սկսվեց։ Մենք նրանցից չթաքցրինք, որ գնալու ենք անտառ և հենց այդտեղ խնդրեցինք երկու գյուղացու ուղեկցել մեզ։ Դրանցից մեկը մոտ երեսուն հինգ տարեկան, ամրակազմ, շլապինդ, խելոք հայացքով մարդ էր։ Նրա մասին ասացին, որ անտառում ամեն մի ծառի տեղը գիտի։

Հետևյալ օրը, երբ մեր ուղեկիցների հետ բավական մտերմացել էինք, այդ նույն մարդը գաղտնիքի ձևով մեզ ասաց.

— Այն երկու ավազակը չորս օր առաջ եղել են մեր գյուղում։ Խանը նրանց հաց ու փող է տվել, ճամփա գցել։

Ես ապշել էի։ Երեք անգամ ստիպեցի նրան երդվել, որ իր ասածը ճիշտ է։ Նա երդվեց ղուրանով, բոլոր սրբերով, նորից ու նորից հաստատեց իր ասածը։

Դուք տեսնո՞ւմ եք ինչ մարդիկ կան աշխարհում։

— Բայց դրան ավելացրու՝ այս աշխարհում,— ասացի Գիկլովին։— Կան, սիրելիս, կան, տարբեր մարդիկ կան այս աշխարհում։ Իսկ քո տեսածը խան է—մեծ կալվածատեր, իշխան, շահագործող, ուրեմն ինչո՞ւ ես զարմանում։

Հետո, բավական հետո, երբ հաջողվեց այդ ավազակներին ձերբակալել, ես իմացա, որ նրանց ձեռքին եղել են անգլիական նոր տեսակի հրացաններ։ Միթե՞ պարզ չէ, թե ինչ կերպ անգլիական այդ հրացանները կարող էին ընկնել Իրանի ամենածայրամասային նահանգը։ Այդ խանը, որի մասին խոսվեց, կապ էր պահպանում Թեհրանի անգլիական դեսպանության հետ։ Ուրեմն, այն պահին, երբ Սովետական Բանակը հերոսական մարտեր էր մղում ֆաշիստների դեմ, Չերչիլի մանկլավիկներն այստեղ՝ Իրանում զենք էին բաժանում, որպեսզի այն որևէ կերպ ուղղեն Սովետական Միության, Իրանական դեմոկրատիայի դեմ։

Ինչ արած, մենք գտնվում էինք ուրիշ աշխարհում։

Եվ քանի մենք ավելի էինք խորանում իրանական տերիտորիայում, այդ բանն ավելի էր նկատվում։

Աստարայից մեր ավտոն թռչում էր ասֆալտապատ ճանապարհով։ Քաղաքին մոտ ճանապարհի երկու կողմերին վայրի նռնենու և շլորի թփուտներ էին աճել։ Ձախ կողմ սփռված էր Կասպից ծովը, իսկ դեպի աջ կանաչ դաշտեր էին, որոնք բազմերանգ գորգերի պես փռվել էին հնավում սևին տվող լեռների ոտքերի տակ։

Հետո ճանապարհը մտավ խուլ թվացող անտառի մեջ։ Տեղ-տեղ անտառը շատ խիտ էր և ճանապարհից ոչ մի արահետ չէր գնում դեպի նրա խորքերը։ Իսկ տեղ-տեղ էլ այն նոսրանում էր, ապա բացատներում երևում էին բրնձի դաշտերը։

Անտառի խոնավությունից, այդ բացատներում գոյացած լճերից ծանր ու գաղճ էր օդն այս կողմերում։

Այս ու այնտեղ հանդիպում էինք գեղնած, նիհար, ժամանակից շուտ ծերացած գյուղացիների։ Հեռվից լսելով մեր ավտոյի շչակի ձայնը, նրանք կանգնում էին ճանապարհի կողքին, մինչև մենք անցնեինք։

Մոտ քառասուն կիլոմետր գնալուց հետո կանգ առանք ճանապարհի կողքին կառուցած մի կրպակի մոտ, ուր սկսնատես եղանք մեզ համար զարմանալի մի դեպքի։

Կրպակի մոտ կանգնած էր մոտ քսանութ տարեկան մի երիտասարդ՝ դանդուր, թե գանգրացրած շագանակագույն մազերով, նույն գույնի կոստյում, կարմրավուն կոշիկներ հագին։ Նրա առաջ ծնկի էր եկել միջին տարիքի մի գյուղացի՝ տանը գործած մահուդի կարկատած շալվար և, ըստ երևույթին, երբեմնի ճերմակ քաթանից, կեղտոտ, պատառոտված շապիկ հագին։ Նա այնպես էր երիտասարդի ոտքերն ընկել, ինչպես մեզ մոտ ցույց են տալիս թատրոններում կամ կինոնկարներում, երբ որևէ թագավորի հպատակներից մեկը ահրոջ առաջ գետնին է փռվում ու որևէ բան խնդրում։

Կրպակի առաջ կանգնած երիտասարդը մեզ տեսնելով կարմրատակեց ու ոտով բոթեց գյուղացուն, որ նա ոտքի

կանգնի։ Կանգնելու փոխարեն գյուղացին ավելի էր կռացում գետնին։

— Այս ի՞նչ է եղել,—հարցրեց մեզ ուղեկցող պարոնը, երիտասարդի անվանը «խան» տիտղոսը կցելով։

Երիտասարդը շուռ գալով, գյուղացուն թողեց հետևը և ապա ժպտալով, շատ քաղաքավարի բարևեց մեր ուղեկցին։

— Իր գլխու սկսել է անտառը կտրել։

Գյուղացին գլուխը գետնից բարձրացնելով չորեքթաթ տվող մանկան ձիրքում ասաց.

— Էլ չեմ անի, չեմ անի... տունս փլվում էր, երկու գերան էր հարկավոր...

Երիտասարդը բարկությամբ հրամայեց.

— Դե՛, վեր կաց կորիր, որ աչքս քեզ չտեսնի։

Գյուղացին չէր համարձակվում ոտքի կանգնել։

Կրպակի մեջ կանգնած մարդը ձեռքերով նշան արեց նրան անմիջապես վեր կենալ ու գնալ։

Երիտասարդն զբաղվեց մեր ուղեկցի հետ, իսկ գյուղացին, օգտվելով հանգամանքից, հեռացավ։

Մեր ընկերը կրպակում գտնվող մարդուց հարցրեց այնտեղ դրված ապրանքների գները, ապա ուսերը թոթվելով հարցրեց.

— Ի՞նչու այսքան թանկ եք վաճառում։

Հետո նա իր ասածին ավելացրեց.

— Այդ գներով ոչինչ չես ծախի։ Աժան տուր, որ գնեն։

Կրպակում գտնվող մարդը՝ գանգուր մազերով երիտասարդին ցույց տալով, ասաց.

— Ապրանքը նրանն է, իմը չէ։

Ավտոյից իջածները եկան, նստեցին իրենց տեղերը։ Երբ մենք շարժվեցինք, մեր ուղեկիցը մեզ բացատրեց.

— Այդ երիտասարդն այստեղի խանի տղան է։ Նրա հայրը յոթ գյուղ ունի։ Ահա այս հողերը, անտառը նրան են պատկանում։

Ինձ զարմացրեց ոչ այն, որ այդքան հողի, գյուղերի,

անտառի տերը մի մարդ է, այլ այն, որ այդպիսի հարստության տեր մարդը չէր ամաչել և ճանապարհի մոտ բաց էր արել մի կրպակ, ուր շատ մանր, էժանագին բաներ, ինչպես օրինակ ոսպ, սիսեռ, կանաչեղենի սերմեր, եփած ձու, հինգղրանանոց սիգարեթ, կավե ամաններ էին ծախում։ Պարզ է, այստեղ—հետամնաց այս շրջանում, թանկարժեք բաներ նա չէր կարող ծախել։ Գնող չէր լինի։

— Բայց նա Թեհրանում էլ մեծ խանութ ունի,—բացատրեց մեր ուղեկիցը։

Մի՞թե դժվար էր պատկերացնել այն գյուղացիների վիճակը, որոնց բախտը լիովին կախված է նման խաներից, աղաներից ու քեդխուդաներից։

ՄՈՒԹ ԱՆՏԱՌՈՒՄ

Որոշ ժամանակից հետո, երբ մի անգամ ընկերներով որսի դուրս եկանք, մեզ հաջողվեց գյուղացիների կյանքին ավելի մոտիկից ծանոթանալ։

Որսի էինք դուրս եկել երեկոյան։ Մինչև տեղ հասանք՝ արդեն մութն էր։

Վայրի վարազներ որսալու համար գիշերն ամենից հարմար ժամանակն է։

Հաշպարի շրջանում անտառի միջով առաջանալով հասանք մի փոքրիկ գյուղ։ Այստեղ մեզ խորհուրդ տվին հետներս վերցնել Ալի անունով մի գյուղացու, որը հայտնի որսկան էր և տեղին շատ լավ ծանոթ։

Ալու ընտանիքը դեռ քնած չէր։ Նրա խրճիթի սրահում ճրագը ճպելով լույս էր տալիս։ Նույնպիսի ճրագներ էին վառվում և մյուս խրճիթների առաջ։

Դա հնուց մնացած սովորություն է։

Իրանում երեկոյան պահերին, ուր էլ գնաք՝ անշուշտ կտեսնեք տների սրահներում վառված ճրագներ։

Ալու սրահում, վառված ճրագի աղոտ լույսի տակ, ա-

առաջին հայացքից նույնիսկ դժվար էր որոշել սրահի մի անկյունում, եղեգնյա խսիրի վրա ծվարած երեխաների թիվը։ Նրանք մեզ տեսնելուն պես անհանգիստ շարժվեցին, իսկ երկուսն սկսեցին լաց լինել։

Ալին՝ խորն ընկած աչքերով, դուրս ցցված այտոսկրներով, դեղին մաշկով, միջին տարիքի այդ մարդը, գրգռված ու վշտաբեկ էր երևում։ Մեզ տեսնելով նա չշփոթվեց։ Ինչպես երևում էր՝ մենք առաջինը չէինք, որ դիմում էինք նրա օգնությանը։ Ալին բարի ժպտաց, սակայն այդ ժպիտը չծածկեց նրա ներքին վիշտը։ Երեխաներին նա սաստեց, որ լռեն, իսկ ինքն ընդառաջ եկավ մեզ։ Նա հագին ուներ հնամաշ, փոշուց ու քրտինքից դեղնած մի շապիկ ու չգիտես անցյալում ինչ գույն ունեցած մի շալվար։

— Երեխաները մեզնից վախեցա՞ն, որ լալիս են,— հարցրի Ալուն։

— Ոչ, ձեզնից ի՞նչի պիտի վախենան։ Նրանք վախենում են, որ ինձ տանեն բանտարկեն։

Բանից պարզվեց, որ Հաշպարում մի ժանդարմից գողացել են հրացանը։ Ժանդարմապետն առիթից օգտվելով հերթով կանչում էր գյուղացիներին, հարցաքննում ու տուգանելուց հետո բաց թողնում։

— Իսկ ի՞նչու է տուգանում։

— Նրա համար, որ չեն իմանում, թե ով է գողացել։

Երիտասարդ ժանդարմապետի բախտը բացվել էր։ Կարճ ժամանակամիջոցում նա մեծ գումարի տեր էր դարձել, որովհետև հարցաքննության էր կանչում համարյա բոլոր գյուղացիներին՝ քեդխուդաներից բացի։

Մեզ հետ քիչ զրուցելուց հետո Ալու տրամադրությունը փոխվեց։ Նա ցավ հայտնեց, որ ոչինչ չունի մեզ հյուրասիրելու համար։

Եվ ի՞նչ կարող էր ունենալ նա։

Պատուհանում դրած ճրագի լույսը թափանցում էր նրա սենյակի ներսը, ուր կիսախավարի մեջ երևում էին մերկ կավով ծեփած պատերը։ Ներսում ևս հատակին փռված էր

խսիր։ Դրա վրա չարսավում փաթաթված կուչ էր եկել մի կին, նրա կողքին, չգիտես ինչու, դրված էր կավե սափոր։ Այդ դիրքով նա նման էր բանտարկյալի, որին կարծես թույլ էին տվել միայն օգտվել ջրից։

Ինձ այնպես թվաց, թե սա նրանց ապրելու հիմնական տեղը չէ, այլ ինչ որ ամառանոցային վայր է։

— Իսկ ձմեռը որտե՞ղ եք ապրում,—հարցրի Ալուն։

— Ամառ ձմեռ սա է մեր ապրելու տեղը,—պատասխանեց նա՝ ձեռքով ցույց տալով թե սքահը և թե սենյակի ներսը, որտեղից խոնավության ու հոտած պանրի հոտ էր փչում։ Խավարից և այդ հոտից օդը թվում էր թանձր ու մածուցիկ։

Դժվար էր շնչել։

Օդայում, պատուհանին դրած ճրագի շուրջը, վխտում էին տարբեր տեսակի մժեղներ ու մոծակներ։

Մեր աչքերն արդեն սովորեցին սրահի աղոտ լույսին։ Արդեն կարելի էր անկյունում կծկված երեխաներին մեկը մյուսից տարբերել։ Ամենից փոքրը` դրանցից մոտ չորս տարեկան էր, գունատ, կեղտոտ դեմքով, ուռած փորով։ Նրանք անընդհատ քորում էին՝ իրենց մարմինները։ Մոծակների խայթոցից նրանց մաշկը վերքերով էր ծածկված։

Սրահը, որի տակ նրանք գտնվում էին, նրանց կարող էր պաշտպանել միայն անձրևից։

Հարևանների տները ոչնչով չէին տարբերվում Ալու խրճիթից։ Ցածրիկ, մի դուռ և մի պատուհան ունեցող այդ խրճիթները հիշեցնում էին միջնադարը։

Տեսնելով նրանց այդ խղճուկ վիճակը, ես ակամայից մտածում էի, թե ինչո՞ւ այդ մարդիկ այդքան խեղճ պետք է ապրեն։ Չէ՞ որ նրանք օրնիբուն աշխատում էին հարուստ բնության գրկում, բերրի հողի վրա, ուր գետին ընկած սերմը իզուր չէր կորչում։

Բայց երկար մտածելու ժամանակ չկար։ Մենք թողե-

ցինք Ալու խրճիթը և մի քանի շների գիշերային ոռնոցի տակ գնացինք գյուղից։

Անտառը մտնելու համար հեռու պետք չէր գնալ. այն գտնվում էր հենց այստեղ, գյուղին շատ մոտ։

Երբ մենք արդեն անտառում էինք, մեզնից մեկը, որ փորձված որսկան էր, նախազգուշացրեց.

— Ոչ մի շշուկ չպետք է լինի, հասկանու՞մ եք, այդ անիծվածը սատանա կենդանի է. բավական է մարդու հոտ առնի և պոկ, փախչում է։ Իսկ եթե պատահեց անհաջող կրակեցիր՝ կգա, փորդ կթափի։ Այստեղ այդպիսի դեպքեր եղել են։

Նրա ասածը մեզ վախեցնել չէր կարող։ Մեզնից ամեն մեկը ձեռքին զենք ուներ և բացի դրանից գիտեր, որ վայրի վարազը մարդու վրա հարձակվելիս վազում է մի ուղղությամբ. բավական է տեսնես նրան, մի քայլ աջ կամ ձախ կանգնես, որպեսզի նա իր վերցրած ուղղությամբ կողքովդ անցնի։ Փորձված որսկանները սովորաբար կանգնում են ծառի բնի հետև։

Մենք շարունակում էինք խորանալ անտառում։

Ալին, չնայած ոտաբոբիկ, մեզնից արագ էր քայլում թավ, վայրի անտառի նեղ արահետներով։ Ասենք ինձ թվում էր, թե այդտեղ ոչ մի արահետ չկա. կարծես առաջինը մենք էինք ոտք դնում այդ հինավուրց ծառերի՝ կաղնիների, կեչիների, թխկենիների, վայրի տանձենիների տակ։

Երբեմն մեր ընթացքն զգալի դանդաղում էր, որովհետև պատահում էին ճյուղերով, փշաթփերով, փաթաթուկներով փակված տեղեր, որոնց արանքով անցնելու համար մեկս մյուսին պետք է օգնեինք։

ԱՆՀԱՋՈՂ ՈՐՍ

Շների հաչոցը վաղուց մեզ չէր հասնում։

Աջից կամ ձախից երբեմն կանչում էին բուերը, ինչ որ

թռչուններ, երևի անհանգիստ քնի մեջ, հանկարծ թևահարում էին ու լռում։

Մեր ոտքերը մերթ խրվում էին բոլորովին խոնավ, ներքնակի պես փափուկ հողի մեջ, մերթ փշրում էին անցյալ աշնանից գետնին թափված ու մնացած չոր ճյուղերը։ Օդի մեջ մերթ զգացվում էր ծառերի փշակներից եկող ինչ որ ձյութի դուրեկան բուրմունքը, մերթ խոնավության ու ճահճուտի ծանր հոտը։

Գիշերային այդ լռության մեջ հանկարծ շատ մոտիկից լսվեց մարդկային մի աղաղակ, որը միայն ահ կարող էր առաջացնել անծանոթ մարդու մեջ։

Այդ ձայնը լսելուն պես Ալին կանգ առավ ու շշուկով ասաց.

— Եկել են, եկել են։ Հիմարը հիմա բոլորին կքշի։

— Գնա, գնա, նրանց երեսը պինդ է, քիչ հետո նորից կգան,— իսկույն կռահելով թե բանն ինչումն է, ասաց մեր փորձված որսկանը։

Գիշերային լռության ու խավարի մեջ աղաղակողը բրնձի արտերի պահապանն էր։ Նա արտի մեջ հասարակ, մի քանի փայտից շինած աշտարակը բարձրացած, զենք չունենալով, այդ ձևով քշում էր բրնձի արտերն անխնա ոչնչացնող վարազներին։

Պղնձագույն լուսնի լույսով ողողված բացատը, ուր մենք դուրս եկանք, բավական մեծ էր, բաժանված մի քանի խոշոր քառակուսիների։ Հասուն հասկերը, ասես երկար ժամանակ ուղղահայաց կանգնելուց հոգնած, մեկ-մեկու վրա էին հենվել, ապա բոլորը միասին խոնարհվել էին գետնին։

Առատ բերք էր սպասվում։

— Այս տարի կհարստանաք, Ալի,— ասացի ես մեր ուղեկցին, երբ նա ինձ մոտ կանգնած սուր հայացքով վարազների հետքերն էր փնտրում։

— Հա, տերերը շատ կհարստանան,— մի տեսակ ափսոսանքով ասաց նա։— Այս հողերը մերը չեն, տերը նստած է Ռեշտում, նրա աչքը լույս։

Սա նորություն չէր մեզ համար։

Հետաքրքրականը բրինձ մշակելու ձևն էր։ Շատ ծանր է իրանական գյուղացու աշխատանքը բրնձի դաշտերում։ Հողը վարում են պապենական, միջնադարյան շութով, իսկ լծկան անասուններ չունեցողները՝ ձեռքով։ Վարելուց հետո ջուրը բաց են թողնում փոքրիկ քառանկյունիների բաժանված արտերի մեջ և երբ այնտեղ ստացվում է հեղեղուկ տիղմ, նոր միայն ցել են անում, կատարում սածիլում։ Վերջին աշխատանքը՝ սածիլումը կատարում են կանայք և աղջիկները՝ մինչև ծնկները տիղմի մեջ խրված։

Մի անգամ, մայիսի 8-ին, ես ներկա էի գեղջուկ կանանց և աղջիկների այդ ծանր աշխատանքին։ Մենք երկու ընկեր էինք և նրանց մոտենալ չէինք կարող, որովհետև ցեխ էր։ Բայց դրանից չէինք ցանկանում նրանց ամաչեցնել։ Իսկ նրանք՝ մոտ տասը կին և աղջիկ, հեռվից մեզ տեսնելով, ուրախացան, սկսեցին երգել։ Կանանցից մեկը դույլը վերցրեց, խփեց նրա վրա պարի եղանակ, երկու կին, ոգեշնչված այդ եղանակից, սկսեցին պարել։ Սակայն նրանք ցեխում խրված ոտքերը շարժել չէին կարող, ուստի շարժում էին մարմնի վերին մասերը՝ թևերը, ուսերը, թիկունքը։ Նրանց շարաճճության վրա ուշ չէին դարձնում ցել անող երկու գյուղացին, որոնց եզները համառում էին, չէին ուզում շարժվել տիղմի մեջ։ Իսկ շարժվել հարկավոր էր։ Շարժվել հարկավոր էր նաև գյուղացիներին։ Նրանք պետք է քայլեին տիղմի մեջ, որը գետնաձյութի պես կպչում էր նրանց ոտքերին։ Ամեն քայլ անելու համար մեծ ջանք էր հարկավոր։ Նաև հարկավոր էր ջանք թափել եզներին տեղից շարժելու համար։ Այդ պատճառով էլ նրանք ժամանակ չունեին անգամ իրենց գլուխը բարձրացնելու։

Մեզ համար բնավ տարօրինակ չէր, երբ այդ գյուղերում ծերունիների քիչ էինք հանդիպում։ Մարդիկ այստեղ ժամանակից շուտ են գերեզման մտնում։

Մեր ուղեկից Ալին հազիվ քառասուն տարեկան լիներ, սակայն ծանր կյանքի լուծը նրան ժամանակից շուտ էր

ծերացրել։ Նրա ասելով կյանքի օրենքն է այդպես, ինքը մենակ չէ։

Մենք խոսում էինք շշուկով, որ չլինի թե մեր ձայնը հասնի վարազներին։

Բայց այդ օրը մեր որսը ձախողվեց։

Գիշերային լռության մեջ դարձյալ լսվեց ինչ որ մարդկային աղիողորմ ճիչ, որը շատ քիչ էր նմանվում նախորդ ճիչին։

Ալեն, լսելով այդ ճիչը, հանկարծ վեր թռավ տեղից և առաջ վազեց։ Մենք էլ հետևեցինք նրան։

Անհայտ մարդը շարունակում էր ճչալ և օգնություն կանչել։ Քայլելով մածուցիկ ցեխի միջով՝ մենք դուրս եկանք մեկ ուրիշ բացատ, ուր նույնպես բրնձի արտեր կային։ Դրանցից մեկի ծայրում չոր խոտի վրա մի մարդ գալարվում էր։ Մենք մոտեցանք ու գրպանի լապտերով լուսավորեցինք նրան։ Դա մոտ երեսուն հինգ տարեկան մի գյուղացի էր, փոս ընկած այտերով, մանր սև աչքերով ու սուր քթով։ Նրա վիզը կրակից հանված փայտի պես սև էր։ Հագի շալվարի փողքերը քշտված էին մինչև ծնկները։

Մեզ տեսնելով մարդն ամբողջ մարմնով դողում էր և բացագանչում։

— Օձը, օձը...

Այդ բացագանչելիս նրա դեմքն անասելի ծամածռվում էր, այտոսկրները կարծես զրկվում էին մկաններից, իսկ քիթն ավելի էր սրվում։ Մեր հայտնվելը գիշերվա այդ պահին և ով լինելը նրան, ինչպես երևում էր, բնավ չէր զբաղեցնում։ Ովքեր էլ ուզում են լինեն։ Կարևորն այն էր, որ մարդիկ էին, որոնք նման դեպքում պարտավոր էին օգնել։ Չէր կարելի անտարբեր նայել մի մարդու, որը գիտեր, որ իրեն մահն է սպառնում և լալիս էր՝ դեմքն անասելի ծամածռելով։

Մենք ստիպված թողեցինք որսը և տարանք նրան Փեհլևի, ուր սակայն հիվանդանոցը չգտանք, ուստի ստիպված էինք ուղարկել նրան Ռեշտի հիվանդանոցը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Փ Ե Հ Լ Ե Վ Ի

Աստարայից Փեհլևի տանող ճանապարհն անտառի և մի քանի փոքրիկ բնակելի կետերի միջով անցնելուց հետո նորից դուրս է գալիս Կասպից ծովափը, ուր ծովն ինքը ցամաքից բաժանվելու համար ճանապարհի երկարությամբ ավազե ամբարտակ է բարձրացրել։ Ճանապարհը երբեմն անցնում է ծովեզրից տասը-քսան մետրի վրա, իսկ ծովը չի երևում։ Ավազե ամբարտակներն իրենք իրենց, առանց մարդու խնամքի կանաչապատվել են։ Ամբարտակի վրա աճել են մոշի, նռնենու, մասրենու թփուտներ, որոնք ծովը ծածկում են աչքից։

Առաջին անգամ Փեհլևի գնալիս մենք կանգ առանք այդպիսի մի տեղ, որպեսզի տեսնենք, թե ինչքան հեռու է ծովը մեզնից։ Հազիվ քսան քայլ էինք արել, երբ Կասպից ծովը բացվեց մեր առջև՝ ինչպես շուռ եկած երկինք։

Մեր հայտնվելուն պես վայրի բադերի մի երամ ջրի մակերեսին քսվելով, վախեցած թռավ հեռուն։

Երկու արագիլ ծանր և ասես մտածված քայլերով մեզնից հեռացան՝ երբեմն միայն թափահարելով իրենց թևերը, բստ երևույթին ստուգելով դրանք՝ վտանգի դեպքում թռչելու համար։

Թեպետ Փեհլևու շուրջը հարթ տարածություն է, բայց հեռվից քաղաքը չի երևում։ Կանաչ դաշտերի մեջ այս ու այնտեղ վերասլաց բարդիները իրենց հետև ծածկում են հորիզոնը։ Քաղաքի մոտերքում եղեգնուտով շրջապատված փոքրիկ լճակներ կան, ուր երամներով լողում են վայրի բադեր, ձկնկուլներ։

Կասպից ծովափին ընկած Փեհլևին (նախկին Էնզելի) հայտնի է որպես նավահանգիստ։

Մենք առաջին անգամ քաղաք մտանք իրիկնադեմին։

Մեր ավտոն անցավ մի երկար փողոցով, որի երկու

կողմերին կային մի հարկանի, երկհարկանի տներ՝ բարձր պարիսպներով: Մի քանի տների բակերում նկատելի էին մանդարինի ծառեր, որոնցից ծանր ոսկե գնդակների պես կախվել էին մանդարինները:

Ճանապարհը մեզ տարավ մի փոքրիկ, կլոր ասֆալտապատ հրապարակ: Հրապարակին էին նայում մի քանի եռահարկ, ապա մի հարկանի տներ՝ իրենց խանութներով, սրճարաններով ու զանազան փոքրիկ արհեստանոցներով: Դրսից եկողներն այստեղ էին կանգնեցնում իրենց ավտոմեքենաները: Նույն այդ հրապարակից չորս ճանապարհ է բաժանվում: Մեկը դրանցից այն էր, որով մենք եկել էինք, մյուսը տանում էր քաղաքի մյուս մասը, երրորդը՝ դեպի շուկան, իսկ չորրորդը՝ ծովափնյա բուլվարը:

Առայժմ ժամանակ չկար քաղաքի հետ կարգին ծանոթանալու: Երկար ճանապարհից հետո հարկավոր էր լվացվել, հանգստանալ, իսկ հյուրանոցը գտնվում էր քաղաքի մյուս մասում՝ Ղազիանում, ուր գնալու համար հարկավոր էր անցնել փոքրիկ ծովածոցի վրայով ձգված կամուրջը:

Ծովածոցը փոքրիկ նավերի ու նավակների հրաշալի կայան է: Կասպից ծովի վրա հաճախակի մոլեգնող փոթորիկներն այստեղ չեն տարածվում, որովհետև նրանց դեմ երկաթբետոնից կառուցված է մի կիլոմետրից ավելի երկարություն ունեցող ամբարտակ: Ծովածոցի շարունակությունն է կազմում դեպի Ռեշտ քաղաքը ընկած Էնզելի լիճը՝ 30 կիլոմետր երկարությամբ և 10 կիլոմետր լայնությամբ: Լճի խորությունը տեղ-տեղ հասնում է 2,5 մետրի, իսկ մեծ մասամբ մի մետրից չի անցնում: Էնզելի լճի վրա մի քանի ավազե կղզիներ կան, որոնցից ամենից մեծը 1,260 մետր երկարություն և 760 մետր լայնություն ունի: Մյուս կղզիների վրա այգիներ են ձգված: Էնզելին շատ լավ որսավայր է: Ծովային բադերն այստեղ բազմաթիվ երամներ են կազմում:

Ծովածոցում խարիսխ էր ձգել շահի ճերմակ, գեղեցիկ նավը, որից, ըստ տեղացիների պատմածի, նա օգտվում էր

այնտեղ գալուց միայն։ Մնացած ժամանակ նավը մնում էր կանգնած։

Կամուրջն անցնելուց հետո դուք դարձյալ մտնում եք մեկ ուրիշ կլոր հրապարակ, որի վրա գտնվում են երկհարկանի հյուրանոցը, մաքսատունը և զանազան խանութներ։

Հրապարակից մի փողոց տանում է դեպի ծովափ, իսկ մյուսը՝ դեպի քաղաքային անտառում ու Ռեշտ։

Ամառը Փեհլևիում շատ շոգ է լինում։ Ծովից և մոտակա լճերից ջուրը գոլորշիանում է, օդը դառնում բաղնիքի օդի պես խոնավ ու տաք։ Հենց այդ պատճառով էլ բնակիչներից շատերն ամառվա կիզիչ արևի տակ աշխատում են քիչ դուրս գալ տնից, իսկ եթե դուրս են գալիս, ապա գնում են ծովափ լողանալու։

Քաղաքի բնակիչների մեծ մասը արհեստավորներ, բանվորներ, մշակներ և մանր առևտրականներ են։ Հիմնականում այստեղ ապրում են պարսիկներ, ադրբեջանցիներ և հայեր, որոնց հաճախ իրարից տարբերելը դժվար է, մանավանդ դրսից եկած մարդու համար։ Առանձնապես իրարից դժվար են տարբերվում երիտասարդները։ Տղաները, անկախ իրենց ազգային պատկանելիությունից, մեր այդտեղ գտնվելու ժամանակ, սիրում էին երեկոյան պահերին փողոց դուրս գալ գլխաբաց, ինչ որ օծանելիքով օծված մազերով, երկար պիջակ և երկար շալվար հագած։

Երիտասարդների զբոսանքը համարվում էր քաղաքի կենտրոնական փողոցով և կամ ծովափնյա բուլվարով մի քանի անգամ ետ ու առաջ գնալը։

Քաղաքում կար երկու կինոթատրոն և մի թատրոնական շենք՝ սիրողների և կամ դրսից գաստրոլի եկած դերասանական խմբերի համար։ Ռեստորանի տեր Գրիշա անունով մեկը մի կինոթատրոն ուներ Փեհլևիում, իսկ մյուսը՝ Ռեշտում։ Կինոնկարներն առնում էին Թեհրանից։ Իսկ այդ գործով զբաղվող վաճառականները, բնավ հաշվի չառնելով ժողովրդի պահանջները, ամերիկացիներից, անգլիացիներից գնում էին ամեն տեսակի դատարկ, բովանդակությունից

զուրկ կինոնկարներ։ Մեկ երկու անգամ ցուցադրելուց հետո կինոդահլիճները կիսով չափ դատարկ էին լինում։

ԱՆԺՊԻՏ ՊԱՏԱՆԻՆ

Այստեղ շահրդարեի՝ քաղաքային վարչության մոտ գտնվող ճաշարանում մի քանի օր շարունակ մենք տեսնում էինք մոտ տասնհինգ տարեկան մատուցող մի տղայի։ Հաճախ, ճաշի ժամանակ հաճախորդները զվարճալի կատակներ էին անում, բայց նա երբեք, ոչ մի առիթով չէր ժպտում։ Պատանու չափից դուրս լրջությունը մեզ զարմացնում էր։ Մի անգամ ճաշարանի տիրոջը հարցրի.

— Այդ տղան մի՞շտ է այդպես լուրջ։

— Այո։ Ահա երկու տարի է, ինչ նա աշխատում է իմ ճաշարանում և այդքան ժամանակամիջոցում ոչ մի անգամ չի ժպտացել։

Տիրոջ այս բացատրությունից հետո իմ մեջ բուռն ցանկություն առաջացավ ինչ կերպ էլ լինի իմանալ դրա պատճառը։ Հազվադեպ բան է, երբ մարդ զուրկ է անգամ ժպտալու ընդունակությունից։

Հետևյալ առավոտյան նախաճաշի համար բավական շուտ գնացի ճաշարան։ Այնտեղ դեռ ոչ ոք չկար։ Փոքրիկ սպասավորն զբաղված էր ինքնաեռով։

— Նախաճաշը պատրա՞ստ է, փոքրիկ,—հարցրի նրան։

— Հա, պատրաստ է։

— Իսկ արբաբն ո՞ւր է։

— Արբաբն Ռեշտ է գնացել, հիմա պիտի եկած լիներ, ամա չեկավ։

— Իսկ նախաճաշն ո՞վ է պատրաստել։

Նա զգալիորեն զարմացած էր իմ հարցերից, սակայն համեստությամբ պատասխանեց.

— Ես եմ պատրաստել։

— Դու ժամի քանիսի՞ն ես արթնացել, որ հասցրել ես

— Գիշերվա ժամին, հենց որ աքլորները կանչել են։

— Մի՞շտ այդ ժամին ես արթնանում։

— Հա, բա ինչ, միշտ,— պատասխանեց նա, բաժակի մեջ թեյ լցնելով։

Իսկ ճաշարանը բաց էր լինում մինչև գիշերվա ժամի 12-ը։ Ինձ համար ամեն ինչ արդեն պարզ էր։ Փոքրիկն օրվա մեջ քնում էր երեք-չորս ժամ. մնացած ժամանակ նա ոտքի վրա էր— վառարանն էր վառում, ինքնաեռն էր տաքացնում, ամաններն էր լվանում և ապա սպասարկում էր հաճախորդներին։ Նա գունատ էր, դեղնած, բայց սուր աչքեր ուներ և տեսնում էր, որ իր հասակակիցներից նրանք, ովքեր ունևոր ընտանիքի զավակներ են, դպրոց են գնում, կուշտ քնում, ազատ ժամանակ վազում, ծովում լողանում։ Ինքը և իր նման շատ շատերը զուրկ էին այդ հաճույքից։ Օրվա մեջ նա այնքան էր հոգնում, որ նրա միակ երազը մնում էր կուշտ քնելը։

Եվ միթե՞ զարմանալի էր, որ այդքանից հետո այդ պատանին երբեք, երբեք չէր ժպտում։ Իմ ընկերը մի անգամ գրազ եկավ ինչ կերպ էլ լինի ծիծաղեցնել այդ պատանուն։

— Գիտես ինչ,— ասաց նա,— ինձ համար այժմ ուղղակի հետաքրքիր է իմանալ, ինչպե՞ս նա ծիծաղել կամ ժպտալ չի կարողանում։

— Այդ քեզ երբեք չի հաջողվի, Իվանով, իզուր չփորձես,— պնդեց ընկերս, որ արդեն բավական ժամանակ էր, ինչ ճաշում էր այդ ճաշարանում։

Իվանովը մնաց իր ասածին։

— Դուք ինչ գործ ունեք, եթե այդ ինձ չհաջողվի, կգնեմ մի լիտր օղի՝ ընթրիքն էլ հետը։ Իսկ եթե հաջողվեց, այն դեպքում բարի եղեք ինքդ այդ ամենը դնել սեղանի վրա։

Համաձայնվեցին։

Այժմ արդեն մենք էինք անհամբեր սպասում, որպեսզի տեսնենք, թե ինչպես է Իվանովը ծիծաղեցնում այդ պատանուն։ Պետք է ասեմ, որ մեր ընկերների շրջանում նա հայտ-

նի էր որպես կատակասերի մեկը։ Նա պարզապես տխրել չգիտեր և զարմանում էր, երբ տխուր մարդ էր տեսնում։

— Գործերդ վա՞տ են, եղբայր, տեսնում եմ բոլոր զըս-պանակներդ թուլացած են։ Այստեղ փորձված փականագործներ կան, արի լարենք զսպանակներդ և գործդ հաջող կգնա, թե չէ տխրելով բան չի լինի,—ասում էր նա սրան ու նրան և միայն իրեն հայտնի միջոցներով ուրախացնում մարդկանց, մոռացնել տալիս նրանց տխուր խոհերը, վիշտը։

Մի անգամ նրան ասացին.

— Իվանով, քո մայրը երևի քեզ ծիծաղելով է աշխարհ բերել։

— Իսկ դուք ի՞նչ էիք կարծում. ես մորս հինգերորդ տղան եմ։ Մայրս ասում էր սպասում էր աղջկա, բայց երբ ինձ տեսավ՝ ծիծաղեց։ Դե մայրս որ ծիծաղեց, ես էլ ծի-ծաղեցի։ Եվ այն օրից ծիծաղում եմ։ Ուղղակի «Կրոկոդիլ»-ի նյութ է, տղերք։

Մենք համոզված էինք, որ գրազը նա պետք է տանի, որ նրան կհաջողվի պատանի մատուցողին մի կերպ ծիծա-ղեցնել։ Իվանովի գործն այս դեպքում մի քիչ դժվարանում էր, որովհետև պարսկերեն չգիտեր։

Եվ ահա մի օր էլ, երբ մտանք այդ ճաշարանը, այնտեղ ոչ ոք չկար՝ պատանի մատուցողից բացի։ Կեսօրվա տաքից նեղված նա գլուխը դրել էր սեղանին ու քնել։ Սեղաններից մեկի տակ կուչ եկած խարտյաշ կատուն նույնպես ննջում էր։ Իվանովը մեզ ձեռքով նշան արեց աղմուկ չբարձրացնել, իսկ ինքը կատվին հատակից բարձրացնելով գնաց դեպի մատուցողը։ Նա նստեց նրա դեմ ու դեմը, ապա կատվի թաթով սկսեց փաղաքշել պատանու ձեռքը։ Տպավորությունն այնպես էր, որ կատուն արթնացնում է նրան։ Բայց տղան, ինչպես երևում էր, խորն էր քնած։

Հենց այդ պահին էլ ներս մտավ արբաբը, տեսավ Իվա-նովի կատակը և ամբողջ ուժով գոռաց.

— Աղա, փուչ։

Պատանին վախեցած վեր թռավ, շփոթված դես ու դեն

նայեց։ Իվանովը ծիծաղեց, իսկ նա տիրոջը տեսնելու պես
մի պահ քարացավ տեղը, հետո ծոծրակը քորելով գնաց դե-
պի խոհանոց։

Հետևյալ առավոտյան նրա դեմքին պարզ երևում էին
ծեծի հետքեր. ուռած էին շրթները, աչքի մեկը կարմրած էր
և նույն այդ աչքի տակն էլ կապույտ։

Որքան էլ մենք ցանկացանք իմանալ, թե ով է նրան
ծեծել, պատանին ոչինչ չասաց.

Արդեն պարզ էր, որ Իվանովը գրազը տանում է ավել։

Դժվար էր ասել, թե երբ այդ պատանին կժպտա այն-
պես, ինչպես ժպտում են աշխարհի բոլոր երջանիկ մարդիկ։

ԻՆՉՈՒ ԵՆ ԲԱՆՏԱՐԿԵԼ

Փեհլևիի սրճարաններից մեկում մենք հանդիպեցինք
հինգ երիտասարդի, որոնք սուրճ էին խմում և տաք-տաք
զրուցում ինչ որ բանի մասին։ Դրանցից մեկն արդեն մեզ
ծանոթ էր։ Տեղից բարձրանալով նա մոտեցավ մեր սեղանին՝
մեզ կրկին հանդիպելու համար բավական ուրախ։ Քիչ զրու-
ցելուց հետո նա ներկայացրեց իր չորս ընկերներին։ Նրան-
ցից ամենաավագը, որ մոտ 30—32 տարեկան կլիներ, ռու-
սերեն ասաց.

— Я очень рад.

— Դուք ռուսերեն գիտե՞ք,— հարցրի նրան մի տեսակ
զարմացած։

Նրա փոխարեն պատասխանեց մեր ծանոթը.

— Եթե չխանգարեին՝ շատ լավ կիմանար։

— Իսկ ո՞վ խանգարեց։

— Ոգո շահի կարգերը։ Նրա օրոք ոստիկանությունն
արգելում էր ռուսերեն խոսելը։ Իսկ մեր հարգելի ընկերը
չենթարկվելու համար տուժեց. երկու տարի բանտ նստեց։

— Երկու տարի բանտ նստեց ռուսերեն խոսելու հա-
մա՞ր։

— Զարմանալի՞ է,— խոսեց ռուսերեն մի քիչ իմացողը,— Ռզա շահի օրոք այստեղ լինեիք և տեսնեիք, թե ինչեր էին կատարվում։ Անկարելի էր խոսել ազատության, աշխատավորների՝ բանվորների, գյուղացիների դրությունը բարելավելու մասին։ Չէր կարելի խոսել այն մասին, որ մեզ մոտ գյուղացիությունը շահագործվում է խոշոր հողատերերի կողմից, որ նրանց արդար վաստակը ձեռքներից խլում են, թողնում մերկ, սոված, խավարի ու աղքատության մեջ։ Չէր կարելի ասել, որ բանվորներին շահագործում են միջնադարյան մեթոդներով։ Այդպես ասողներին կոմունիստ էին համարում ու բանտ նետում։ Իսկ իմ բանտարկվելը միանգամայն պատահական բան էր։ Դեռ վաղուց այստեղ ապրում էր մի ռուս մարդ։ Նա բավական ծեր էր, ուստի ոչ մի տեղ չէր աշխատում, խողեր էր պահում, միսը ծախում և դրանով էլ ապրում։ Չգիտեմ ինչպես էր եղել, որ 1917 թվից հետո նա մնացել էր այստեղ։ Նա մեզնից մոտ էր ապրում և, պետք է ասեմ, շատ բարի մարդ էր։ Ամեն օր առավոտից մինչև իրիկուն աշխատում էր, իսկ կիրակի օրերը հագնում ակնոցները և ժամերով գրքեր կարդում։ Մի անգամ մոտով անցնելիս հետաքրքրությունից նայեցի նրա գրքին։ Նա նկատեց այդ և ասաց. «Ի՞նչ ես այդպես նայում. միևնույնն է չես կարող կարդալ»։ Ես խնդրեցի նրանից գիրքը, թերթեցի և շատ ափսոսացի ռուսերը չիմանալու համար։ Նա թե. «կուզես արի սովորեցնեմ»։ Դրանից հետո ամեն կիրակի օր նա ինձ ռուսերեն էր սովորեցնում։ Եվ ամեն անգամ մի բան չիմանալուս համար բացականչում էր. «Ну, глуп ж ты»։ Մի քանի ամիս այդպես շաբաթը մեկ անգամ գնում էի իմ ուսուցչի մոտ։ Բայց մի օր էլ նա ինձ ասաց. «Մեռնելուս ժամանակը եկել է, պետք է գնամ տանը մեռնեմ»։ Եվ իսկապես, որոշ ժամանակից հետո թողեց, գնաց։ Ես նրան չէի մոռանում, իսկ «Ну, глуп ж ты» ինձ այնքան էր դուր եկել, որ ամեն առիթով կրկնում էի այս ու այնտեղ։ Մի անգամ էլ այս երկու ընկերոջ հետ միասին գնացինք մի ժամագործի խանութ՝ նոր տեսակի ժամացույցներ նայելու։ Հենց այդ ժամանակ

Հետո եկավ ոստիկանության աշխատողներից մի սպա, հարցրեց. «Ժամացույցս պատրա՞ստ է»։ Ժամագործը նրան մեկնեց ոսկե ժամացույցը։ «Ինչքա՞ն պետք է վճարեմ», տեղեկացավ սպան անփութորեն։ «Հինգ թուման», պատասխանեց ժամագործը։ «Վերցրու», գրպանից հանած թղթադրամը ժամագործի առաջ դնելով ասաց սպան ու կտրուկ շուռ եկավ։ Ժամագործը սեղանից վերցրեց մի թումանը, որ թողել էր սպան, խռոված պես հոնքերը կիտած մեզ նայեց։ Ես չկարողացա ինձ զսպել ու բարձր ասացի. «Ну, глуп ж ты»։ Դու մի ասի սպան խանութից դուրս չէր գնացել, դեռ իմ հետևը կանգնած էր։ Նա բռնեց թևս, ինձ շրջեց իր կողմը։ Կատաղած հարցրեց. «Ի՞նչ ասացիր»։ Եվ այս էր։ Նա մի քանի կոպիտ խոսք ասաց, ես պատասխանեցի։ Ինձ տարան ոստիկանատուն, արձանագրություն կազմեցին, իբր ես կոմունիստ եմ, վարկաբեկում եմ ոստիկանության աստիճանավորներին և հազար նման բաներ...

Այստեղ երիտասարդը կանգ առավ, պայծառացած դեմքով նայեց մեզ և շարունակեց.

— Պետք է ասեմ, որ այդ երկու տարվա բանտարկությունն իզուր չանցավ։ Ես բանտ գնացի որպես միամիտ մանուկ, իսկ այնտեղից դուրս եկա աշխարհի շատ գաղտնիքներ ըմբռնած։ Այդ գաղտնիքների թվին էին պատկանում և ճշմարտությունը Սովետական Միության մասին։ Ռզա շահի օրոք սև ռեակցիան, ֆաշիստական տարրերն ամեն տեսակի զրպարտանքներ էին տարածում Սովետական Միության հասցեին և մնում անպատիժ։ Ոչ մի թերթ չէր կարող գրել, մեկն ու մեկը որևէ տեղ չէր կարող ասել, որ դա նախ և առաջ աշխատավորների երկիր է, ամենքի հետ ուզում է ապրել հաշտ ու խաղաղ։ Ընդհակառակը, ցանկանում էին մեր ժողովրդին կռվի հանել ռուսների դեմ։

Երիտասարդներից մեկն շտապեց ավելացնել դրան.

— Այդ միայն ռեակցիայի ցանկությունն էր. ժողովուրդը երբեք չէր ցանկանա իր հարևանի հետ կռվել։

— Ընդհանրապես մեր ժողովուրդը պատերազմելու ցանկություն բնավ չունի,—խոսակցությանը խառնվեց մեկը, որ մինչ այդ լուռ էր։

— Բայց մեր պատմություններով երևի ցավեցրինք Ձեր գլուխը։ Ներեցեք, հիմա մենք պետք է գնանք ժողովի։

Նրանք բոլորը ելան ու դուրս գնացին։ Մենք կանչեցինք մատուցողին մի-մի բաժակ սուրճ ևս պատվիրելու համար։

— Այդ երիտասարդները շատ են չարչարվում, բայց նրանց արածի արդյունքը չի երևում։

— Իսկ ի՞նչ արդյունք եք ուզում,—հարցրինք նրան։

— Դրանք բոլորը ժողովրդականներն են. ազատության համար են պայքարում, բայց դե ո՞ւր է իսկական ազատությունը։ Ելի ապրողն ապրում է, իսկ մեռնողը մեռնում։ Հարուստները մեր երկիրը դարձրել են ծախու առարկա. առաջ ծախում էին Հիտլերին, հիմա էլ բաժան-բաժան են եղել։ Մի մասն ուզում է ծախել Ամերիկային, մյուս մասը՝ Անգլիային։ Վերցրեք մեր թերթերը, կարդացեք, տեսեք ինչ է կատարվում մեջլիսում։ Ես քաղաքականությամբ շատ եմ հետաքրքրվում, սակայն հաճախ ինքս էլ չեմ հասկանում, թե ինչ է կատարվում մեզ մոտ։

Ինչպես երևում է մեր զրուցակիցը պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք իրենք ոչինչ չեն անում, իսկ ուրիշներից շատ բան են պահանջում։ Ժողովրդի շահերի համար մարտնչող երիտասարդներն իրենց հայրենիքի էնտուզիաստներն էին։ Նրանք աշխատում էին իրենց ուժերը ներածի չափ։

Մեր մատուցողը, ինչպես պարզվեց նրա խոսակցությունից, ավելի խոսում էր ազատության մասին, քան որևէ բան անում՝ մոռանալով իրանական հայտնի առածը. «Հալվա, հալվա ասելով բերանդ չի քաղցրանա»։

Մենք շատ ուրախ էինք, որ ծանոթացանք իրանցի այդ հրաշալի երիտասարդների հետ, որոնց նվիրվածությունն իրենց ժողովրդի ազատագրական գործին կարող էր միայն ուրախացնել ամեն մի ազնիվ մարդու։

Այդ սրճարանից դուրս գալուց հետո ինձ թվաց, թե Փեհլևիին այժմ բոլորովին այլ տեսք ունի։ Մինչև մեր այդ զրույցը Փեհլևիի կլոր հրապարակը թվում էր մի կլոր սեղան, որի շուրջը տեղ էին գրավել միայն և միայն առևտրականնե-րը, իսկ քաղաքի բանվորները, մշակները, մոտակա գյուղերի գյուղացիությունը և նրանց շահերի համար մարտնչող ինտե-լիգենտներն ասես բացակայում էին։ Ոչ։ Նրանցից էլ կային այստեղ։

ԾՈՎԱՓԻՆ

Փեհլևիի ծովափը, այնտեղ, որտեղ լողարանն է, մեզ շատ էր դուր եկել։ Այն հարթ է՝ ասֆալտապատ ճանապարհի պես։ Այստեղ քո հայացքի առաջ լայնորեն բացվում է ոչ միայն ծովը, այլև ծովափը՝ մոտ քառասուն կիլոմետր երկարությամբ։ Ափը ավազոտ է։ Արևի տակ մաքուր, հատիկ—հատիկ ավազը կարծես ցորեն է ոսկեղ տակ փռված։ Մինչդեռ ջրին շատ մոտ այդպես չէ։ Այստեղ ավազի հատիկներն ավելի մանր են։ Ծովի մակընթացության ժամանակ հսկայական ալիքները գլորվում են ծովափ. կարծես զուտ նրա համար, որպեսզի ջրեն ավազը, հարթեն։ Իսկ երբ ալիքները նահանջում են, ծովափը թվում է ասֆալ-տապատ, ջրով նոր միայն ցողված ուղի։ Եվ հենց այդ պատճառով էլ ծովափով մեր ավտոն սլանում էր այնպիսի արագությամբ, ինչպիսի արագությամբ կարելի է սլանալ լայն, ասֆալտապատ ավտոճանապարհով։ Մի փոքրիկ տարբերություն միայն կար։ Այստեղ ծովին շատ մոտենա-լուց երբեմն դուրս վազող մի ալիք սպառնում էր ծածկել մեզ իր տակ։ Մեր շոֆերը նկատելով այդ, որոշ տեղ հեռա-նում էր ափից և նորից վերադառնում՝ երբ ուժասպառ ալիքը վերադառնում էր ծով։ Ավտոմեքենայի այսպիսի ըն-թացքը դուր էր գալիս մեր ընկերներից մեկին, որը ծովափ քիչ էր տեսել։ Հաճախ, երբ շոֆերը չէր հասցնում հարձակ-

վող ալիքներից փախչել և նրանք զարնվելով ավտոյի անիվներին վշշում էին, նա մանկան պես հրճվում էր։

Մի անգամ այդ խաղը մեզ թանկ պետք է նստեր։ Ազարտի մեջ մտած շոֆերն իր ավտոն քիչ էր մնում նավ դարձնի ու լողա ջրերի մեջ։ Եվ ահա ծովը պատժեց նրան. Հսկայական մի ալիք այնպես խփեց մեր ավտոյին, որ նա դղրդաց, խլացած մոտորով կանգ առավ։ Զարմանալին այդ չէր իհարկե, այլ այն, որ ջուրն այս անգամ չուզեց նահանջել, մնաց մեքենայի տակ։

Ծովին քիչ ծանոթ իմ ընկերը այս անգամ էլ, քանի չէր պարզվել, թե ինչ է կատարվել մեզ հետ, լիաթոք ծիծաղեց։ Բայց հենց հետևյալ ալիքը, որ քիչ էր մնում մեքենան ամբողջովին ծածկի, նրա դեմքից թռցրեց ոչ միայն ծիծաղը, այլև գույնը։

Մենք երեքով թռանք ջրի մեջ, որպեսզի հրելով դուրս հանենք մեր ավտոն։ Իզուր էին մեր ջանքերը։ Երկու ալիքը միայն նրա անիվները բավական խրել էին ավազի մեջ և ավտոն ցեխն ընկած էշի պես չէր էլ ուզում շարժվել տեղից։

Մեր աչքի առաջ ավտոմեքենան քանի գնում ասես խորանում էր ծովում, թաղվում, իսկ մենք ոչինչ չէինք կարող անել։

Դա երեկոյան դեմ էր. արևն արդեն մայր էր մտնում, ծովափին մեզնից բացի մարդ չէր երևում։

Ի՞նչ անել։

Հենց այդ պահին հեռվում երկու ձիավոր երևացին և մեզ ուրախացրին։ Օգնության հույս կար։

Սպասեցինք։

Ահա նրանք մոտեցան։ Նրանց ձիերի վրա մի-մի խուրջին էր գցած։

— Էյ, մեզ օգնեցեք մեքենան ջրից հանենք,— դիմեցի նրանց։

Արտաքինից դրանք գյուղական չարչիներ էին. շուկայից գնումներ էին կատարել և վերադառնում էին տուն։ Նրանք իրար հետ հայացք փոխանակեցին, ապա մեկը դրանցից.

որ կարծես մի քիչ հասակով էր—մոտ քառասուն հինգ տարեկան, թերահավատորեն հարցրեց.

— Ինքը դուրս չի գալի՞ս։

— Չէ, տեսնում ես, մնացել է ջրի մեջ։

Նրա դեմքին բացարձակ կասկած հայտնվեց։

— Ես իմ աչքով եմ տեսել, աղա. դա գետ է անցնում, սար է բարձրանում, էդ ի՞նչպես է, որ այստեղ չի ուզում գնալ։

Նա ընկերոջը նշան արավ չկանգնել. կարծես չլսելով մեր խոսակցությունը, մյուսը ձիերն առաջ արած քշեց։

— Չի ուզում, որովհետև մոտորը փչացել է։ Բայց ընկերդ ո՞ւր է գնում, ասա թող մնա, օգնի։

Այստեղ մեզ հետ խոսողը կոկորդը բռնից և աղերսական տոնով խնդրեց.

— Թող գնանք, աղա, ի՞նչի մեզ ձեռք եք առնում։ Դա տասը գոմեշի ուժ ունի, ինքը որ չի կարողանում գնալ, մենք ի՞նչպես հանենք, թող գնանք, ճանապարհի մարդ ենք, տեղներս հեռու է, ուշանում ենք...

Նրա ասածները ես թարգմանեցի ընկերոջս։ Սա չնայած մեր ողբերգական վիճակին, ծիծաղեց, դրանով իսկ խորացնելով կասկածը պատահական ճամփորդի մեջ։ Ի՞նչ կարող էինք անել, ինչպես հասկացնեինք այն մարդուն, որ մենք նրան ձեռք չենք առնում, այլ իր օգնության կարիքն ենք զգում։

Իմ հետագա բացատրությունները ևս ապարդյուն անցան։ Մարդը չուզեց մեզ հավատալ։ Ըստ երևույթին նա փչացած ավտոմեքենա չէր տեսել։ Այլ կերպ այնպես կասկածամտորեն չէր նայի թե մեզ և թե մեր ավտոյին, որն ուրիշ տեղեր գետեր է անցնում, ձիուց էլ արագ սարն է բարձրանում, իսկ այստեղ չգիտես ինչու պետք է կանգ առներ։ Այդ մարդը զարմանքից ու թերահավատությունից փոքրիկ, կարմրած աչքերը ճպճպացնում էր և վախենում, թե չլինի՞ մեզ օգնելուց հրաժարվելու համար նրան մի վատ բան անենք։ Տեսնելով նրա թերահավատությունը, մենք նույնիսկ կըշ-

ատմբելու համար խոսք չգտանք, չնայած մեր ավտոն քայլ առ քայլ ավելի էր խրվում ավազի մեջ։

Մարդը գնաց, թողնելով մեզ չորս կողմ նայելիս։

Արևն էլ արդեն թաքնվեց հորիզոնի հետև՝ ծովափին փռելով ստվեր։

Շոֆերը տեղանքի հետ ծանոթ էր։ Մեզնից մոտ մի կիլոմետր հեռավորության վրա մի տնակ կար, որ նրա ասելով ձկնորսներ էին ապրում։ Նա վազեց նրանց օգնության կանչելու։

— Այ քեզ փորձա՜նք։ Լսիր, չլինի՞ դրանք էլ չհավատան ու չգան։ Կարող է պատահել, գիտե՞ս։ Կասեն այդ ի՞նչ ավտո է, որ ջրի միջով է գնում. կամ եթե կարող է գնալ, ապա ի՞նչու է կանգնել։ Ազնիվ խոսք, ես այս դեպքը չեմ մոռանա։ Այդ գյուղացին գնաց, հաստատ համոզված լինելով, որ մենք իրեն ձեռք ենք առնում։ Անխիղճն այնպես էլ չհավատաց մեզ։

— Գուցե նա հավատում էր, բայց չուզեց ուշանալ,— ասաց ընկերս։

— Ձկնորսներն այդպես չեն վարվի։ Նրանց մոտ փորձանքի մեջ գտնվողին օգնելու սովորությունն ավելի ուժեղ է.

Մինչ մենք այսպես խոսում էինք, տնակի մոտ երևացին չորս հոգի և դեպի մեզ վազեցին։

ՁԿՆՈՐՍՆԵՐԻ ՄՈՏ

Օգնության եկած ձկնորսները տեղ հասնելով քաղաքավարի բարևեցին մեզ և ապա իսկույն մոտեցան ջրի ու ավազի մեջ թաղված ավտոյին։ Մենք էլ երեքով մտանք ջրի մեջ։ Դա քիչ զարմացրեց ձկնորսներին։ Դրանցից երկուսը միջին տարիքի մարդիկ էին, իսկ մյուսը քսաներկու-քսաներեք տարեկան, թիկնեղ, խոշոր աչքերով երիտասարդ էր՝ միայն մի շապիկ հագած։ Նրա բաց օձիքի տակից երևում էր մազմզոտ, բրոնզագույն մաշկը։

— Ինչո՞ւ եք թրջվում, ինչո՞ւ...,—առարկեց այդ երիտասարդը, երբ ես և ընկերս նույնպես մտանք ջրի մեջ։

— Իսկ ի՞նչու մենք ձեռքներս ծալած մնանք,— ասացի՝ ջրի մեջ նրա կողքին կանգնելով։

Երիտասարդը բարեհաճորեն ժպտաց՝ բաց անելով առողջ, ձերմակ ատամների շարքը։ Շատ պարզ երևում էր, որ նա ամաչում է։ Առայժմ դժվար էր հասկանալ, թե ինչու է նա ամաչում։ Առանձնապես ուժ չգործադրելով, վեց հոգով ավտոն հանեցինք ցամաք։ Շոֆերն զբաղվեց մասերը չորացնելով, իսկ ես ու ընկերս սկսեցինք մզել մեր թրջված շալվարները։ Երիտասարդ ձկնորսը մի տեսակ կարեկցանքով էր նայում մեզ. կարծես մեր շալվարները թրջելով մենք՝ շատ էինք տուժել։ Երկու մյուս ձկնորսներն էլ բարեկամաբար ժպտում էին։

— Ինչ է, շա՞տ եք թրջվել,—դիմեց ընկերս նրանց։

— Հա, աղա, յաման թրջվել եք։ Կուզեք գնանք մեզ մոտ, կրակի վրա չորացրեք,—պատասխանեց երկարահասակ, ոսկրոտ ձկնորսը, դարձյալ ժպտալով։ Նա կարծես մի բան գիտեր և մեզ չէր ուզում ասել։

— Բայց այդ ի՞նչու ես այդպես խորհրդավոր ժպտում, —դիմեցի ես նրան։

Երկարահասակ ձկնորսը գրպանից հանելով թութուն, ցանկացավ գլանակ պատրաստել, բայց ընկերս նրան մեկնեց իր արծաթե ծխախոտատուփը։

— Սիգարետ ծխիր։

Ձկնորսը գլուխը մինչև կուրծքը խոնարհեց՝ հրաժարվելով սիգարից։ Մեր ընկերն ստիպեց նրան.

— Վերցրու, վերցրու, մի ամաչիր, լավ սիգարետ է։

Ձկնորսը մեղավորի պես նայեց ընկերներին, բայց հարկադրված մի ծխախոտ վերցրեց՝ դարձյալ խորը գլուխ տալով և ասաց.

— Մեզ մոտ սա ընդունված չէ։

— Ի՞նչը չի ընդունված,—հարցրի նրան։

— Էս էլի, որ արբաբի ծխախոտատուփից ծխախոտ վերցնես։

— Ապա ի՞նչպես է ընդունված։

Ձկնորսը կապտավուն ծուխ արձակելով քթանցքներից, ասաց.

— Ով գիտե։ Մեր արբաբներից ո՞ր մեկը կմտներ ջրի մեջ, մեզ կօգներ ավտոն հանելու։

— Իսկ ո՞վ պիտի օգներ։

— Նրանց գործը չէ, թե ով կօգներ։ Նրանք կկանգնեին այստեղ, հրաման կտային։

— Զարմանալի է։

— Ինչ եք զարմանում, աղա,—շարունակեց նույն մարդը։—Ես միայն երկու տարի է, ինչ ձկնորս եմ. մինչ այդ Փեհլևիում մշակ էի։ Քանի՜-քանի՜ անգամ է պատահել, որ այս կամ այն արբաբի համար բեռ եմ տարել՝ շուկայից, նավահանգստից... Միշտ էլ բեռը մեջքիդ են տալիս, ճանապարհը ցույց տալիս, իսկ իրենք տասը-քսան քայլ հեռանում քեզանից։ Նույնիսկ բեռը մեջքիդ ուղղելու, հանգստանալուց հետո նորից այն վերցնելու համար պետք է կողմնակի մարդ կանչես։ Մեզ մոտ Փեհլևիում մի ուսուցիչ կար՝ Խալիլ էր անունը։ Մի անգամ Թեհրանից վերադառնալուց հետո նա իջավ ավտոյից և ինձ կանչեց, իրերը տվեց, թե տուն տար։ Վերցրի դրա իրերը, իսկ ինքը մյուսների նման չհեռացավ ինձանից։ Խոսելով գնում էինք։ Ճանապարհին դա թե. «Տեսնո՞ւմ ես ինչ լավ բան է աղա լինելը։ Դու տնքում ես, չարչարվում, ես ինձ համար հանգիստ գնում եմ։ Այդքան չարչարվելուդ համար էլ երեք ղրան փող ես ստանալու—ինչ կուզես գնիր։ Ծառով փլովն ուտողը Զամանովը (սա Փեհլևիում հայտնի հարուստ է) և ուրիշներն են լինելու։ Դու էլ եփած շամփա կեր. կուզես մեռիր, կուզես՝ ապրիր, մեր ի՞նչ գործն է»։ Սկզբում ես դժվար հասկացա նրա միտքը, հետո նա ավելացրեց. «Որ մեռնես էլ, ոչ ոք քեզ իր սփռոցից մի կտոր հաց չի տա։ Քեզ տեսնողն էլ,—ասաց,—զզվանքով է նայում վրադ։ Տես, շորերդ պատառոտված է, կեղտոտ, էհ, եթե ճիշտն ասենք՝

ոչլոտ։ Ո՞ր քաղաքավարի մարդը կթողնի իրա դռնով ներս մտնես։ Շատ-շատ՝ բեռը մեջքիդ կհասնես դուռը, բեռդ կըվերցնեն, քեզ էլ ճամփու կդնեն։ Աշխարհի գործն է այդպես։ Դու մշակ ես, պետք է չարչարվես, այդպես քրտնես, հողի տաս, լավ ապրողն էլ ապրի... Մի տեղ քիչ էր մնում դրա բեռը դնեմ ու գնամ։ Բայց որ մոտեցանք նրանց տանը, նա թե. «Դու էլ կասես մարդ եմ չէ՞։ Քեֆիդ չկպչելու համար ես էլ կասեմ մարդ ես։ Իսկապես, մարդ ես։ Զամանովն էլ մարդ է, դու էլ։ Միայն մի փոքրիկ տարբերություն կա։ Նա հարուստ է, քեֆն ուզածի պես պետք է ապրի, իսկ դու մշակ ես՝ պետք է տանջվես։ Հասկացա՞ր ինչումն է տարբերությունը։ Նա իրավունք ունի քեզ ծաղրելու, ձեռք առնելու, որովհետև դու անխելք ես, նա՝ խելոք։ Գլուխներդ ինչ ցավացնեմ, այդ մարդը խոսեց, խոսեց, վերջն էլ ավելացրեց. «բայց իմացիր, դու էլ մարդ ես, իսկապես մարդ ես, մարդավարի ապրելու իրավունք ունես։ Գնա նստիր, մտածիր, տես ինչու մարդավարի չես ապրում»... Հետո նա ինձ ամեն ինչ հասկացրեց»։

Ձկնորս դառնալուց հետո այդ նախկին մշակի վիճակը շատ քիչ էր փոխվել։ Այժմ նա, ինչպես երևում էր, հպարտ էր իր գիտեցածով։ Առաջ նա չէր էլ հասկացել իր շուրջը տիրող անարդարությունը։ Հասկանալով այդ, մարդն իրեն բավական հպարտ էր զգում։

Մեր մեքենայի հետ շոֆերը կատարեց ճիշտ այնպիսի պրոցեդուրա, ինչպիսին կատարում են ջրում խեղդվածի հետ։ Նրա մետաղե «թոքերից» ջուրը քամելուց հետո շոֆերն սկսեց այն գործի դնել։ Սկզբում մոտորը խռխռաց, մի քանի անգամ խուլ հազաց, ապա սկսեց գործել՝ պատրույգից թանձր ծուխ արձակելով։ Այժմ մենք բավական փորձված էինք, որպեսզի ծովի ալիքների հետ այլևս չխաղանք։ Ասենք խաղալու էլ ժամանակ չկար. շուտով մութը պետք է ընկներ։

Ծովում, ափից բավական հեռու, կանաչավուն գույնը տեղի էր տալիս ինչ որ սևի և գորշագույնի խառնուրդի։ Ծովից դեպի ափ էին վազում ճերմակաբաշ ալիքները, խռնավ

ավազի վրա ասես պառկում հանգստանալու և չգիտես ինչու իսկույն պոկվում ավազից ու նորից դեպի ծովը վազում։

Ծովաբադերի վերջին երամները սլանում էին դեպի հարավ։

Մեր ավտոն էլ նրանց զուգընթաց գնաց որոշ տեղ, ապա ծռվեց դեպի ձկնորսների տնակը, որ կառուցված էր այդտեղի ամենաբարձր կետում—ոսկեգույն ավազուտում։

Տնակից հորիզոնը ծովի վրա ավելի լայն բացվեց, իսկ հակառակ կողմից երևաց կանաչ մի դաշտավայր։ Զարմանալի էր՝ կանաչուտը հասնում էր տնակին և այնտեղ էլ վերջանում։ Մի բան խանգարել էր նրան իջնել մինչև ծովափ։ Խանգարողն ի հարկե ծովն էր եղել։ Ինչքան էլ ահեղ փոթորիկ լիներ՝ նրա ալիքները երբեք չէին հասնի տնակի բարձրությանը։ Դարերի ընթացքում ծովը հեռացել էր իր նախկին ավելի բարձր ափից, ավելի խորացել, իսկ կանաչը որոշ տարածության վրա հետամտել էր նրան և այնտեղ կանգ առել։ Ոչ մի բույս առայժմ չէր համարձակվում այդ բարձրությունից իջնել, ավելի մոտենալ ծովին։ Միայն մոշի թփերն էին իրենց փշոտ թփերը գորշ ավազի վրայով անվախորեն մեկնում դեպի ծովը։ Մինչդեռ մասրենիները և վայրի նռնենիների թփերը չէին համարձակվում այնքան բարձրանալ, որ իրենց առաջ փռված ավազի բլուրներից նայեն ծովին։ Նրանք ասես ծովից թաքուն էին ապրում այդ լայն դաշտավայրում։ Թփուտներն իրենց մեջ թաքցնում էին տարբեր տեսակի թռչուններ՝ փայտփորիկներ, կկուներ, ճընճղուկներ, մոշահավեր և իհարկե սողուններ։ Սողունների, մանավանդ օձերի համար այստեղ շատ լավ տեղ էր։

Ցերեկն ավազն արևից այնքան էր շիկանում, որ ոտաբոբիկ չէր կարելի քայլել, իսկ գիշերները մեղմ էր ու զով։

Ձկնորսներից երկուսի ընտանիքները հենց այդտեղ էլ ապրում էին։ Տնակի մոտ, թփուտների մեջ խաղում էին մի քանի բոլորովին մերկ կամ հնոտիներ հագած մանուկներ։ Մեր մեքենան տեսնելուն պես նրանք թողեցին իրենց խաղը,

շարքով կանգնեցին ճանապարհի կողքին։ Դրանց մեջ երկուսն արդեն դպրոցական հասակի էին։ Փորձեցի նրանց հետ զրուցել։ Նրանք մեկը մյուսի հետև ծածկվեցին՝ ամաչելով պատասխանել իմ հարցին։

— Դպրոց չե՞ն գնում,—հարցրի ձկնորսներից մեկին։

— Մեզնից ո՞վ է գնացել, որ դրանք գնան,—պատասխանեց ձկնորսը, մեզ հրավիրելով խորոված ձուկ ճաշակելու։

Մենք ուտելու ախորժակ չունեինք։ Բայց ստիպված էինք մերժել նրանց հրավերը. հյուրասիրությունը պետք է տեղի ունենար բաց երկնքի տակ՝ փափուկ ավազի վրա նստած։ Հենց այդտեղ էլ դրված էր մանղալ՝ թեժ կրակով։

— Ըստ երևույթին դուք ամեն օր խորոված ձուկ եք ուտում,—հարցրի ոսկրադեմ ձկնորսին։

— Չէ,—պատասխանեց նա,—նախ ամեն օր ձուկ չի լինում, իսկ հետո լինի էլ՝ չի ուտվի։ Երբեմն սիրտդ ուրիշ բան է ուզում, բայց չկա։

Նրանք այստեղ գլխավորապես որսում էին այսպես կոչված կարմիր ձուկ, օսետրինա և սևրյուգա։ Դրա համար փոքրիկ առագաստանավով դուրս էին գալիս ծովի խորքերը, այնտեղ ուռկան գցում։ Միշտ չէ որ հաջող էր լինում որսը։ Երբեմն վերադառնում էին ձեռնունայն, իսկ երբեմն էլ՝ բավական հաջող որսով։ Հաճախ պատահում էին շատ խոշոր գայլաձկներ։

Մի ուրիշ առիթով ես ականատես եղա ձկնորսների աշխատանքին։ Նրանք իրենց հետ բերել էին տասից ավելի տարբեր մեծության գայլաձկներ։ Տախտակե հատակին թափված ձկները դեռ փախչելու փորձեր էին անում՝ պոչով հատակին զարկելով, մերթ ընդ մերթ էլ լայն երախները բանալով։ Մեկը դրանցից բավական մեծ էր։ Ձկնորսներն ասում էին, որ նրա կշիռը 162 կիլոգրամ է և որ սայլակի վրա դրած այդտեղ էին քարշ տվել չորս հոգով։ Մանրիկ, կիսափակ աչքերով գայլաձուկը շշմած նայում էր շուրջը և ըստ երևույթին չէր հասկանում իր հետ կատարվածը։ Նրա աչքերի առաջ ձկնորսները բանում էին մյուսների փորոտի-

քը առանձնացնում խավարը, մաքրում... Թվում էր, թե հատակին ընկած այդ կիսակենդան, դեռ թփրտացող ձկը, գաղաղած իր տեսածից, ահա վերջին ճիգը կանի, կցատկի տեղից և մի հարվածով գետին կգլորի դանակավոր ու կացնավոր մարդկանց, որոնք մորթոտում էին մյուս ձկներին։ Հենց այդ պատճառով էլ ինձ համար ցանկալի էր, որ ձկնորսներն առաջին հերթին վերջացնեն գործը գերված մեծ ծովահենի հետ։ Նրա որովայնում ով գիտեր ինչեր կլինեին։ Մինչդեռ նրանք բնավ չէին շտապում այդ աշխատանքը կատարելու։ Ըստ երևույթին նրանց հաճույք էր պատճառում տեսնել վիթխարի ձկան փախչելու ապարդյուն փորձերն ու թփրտոցը։

Դժբախտաբար սպասելու ժամանակ չկար։

Ես այնպես էլ չիմացա, թե ինչ դուրս եկավ այդ մեծ ձկան փորից և մինչև օրս էլ ափսոսում եմ։ Գոնե կպատմեի երեխաներին, իսկ նրանք անշուշտ կլսեին մեծ հետաքրքրությամբ։

Այս անգամ էլ, երբ ձկնորսները մեզ հյուր կանչեցին, ինձ թվում էր, թե այստեղ էլ արտակարգ մի բան կլինի։

Արտակարգ ոչինչ չկար։

Դույլի մեջ լցված պատրաստ էին սովորական ծածաններ։ Ձկնորսներից մեկը ձկներից յուրաքանչյուրը չորս-հինգ մասի բաժանելով հագցրեց երկաթե շամփուրներին ու դրեց մանղալների վրա։ Մանղալում կրակը թշշաց, կապտավուն ծուխը պտույտ եկավ մանղալից վերև՝ շուրջը տարածելով խորոված ձկան դուրեկան հոտը։

Մենք հրաժեշտ տվինք բարի, զրուցասեր ձկնորսներին ու վերադարձանք Փեհլևի, ուր արդեն երեկոյան ճրագներն վառել էին։

«ՈՒՂՂԱՓԱՌ» ՄՈՒՍՈՒԼՄԱՆԸ

Մեր ծանոթ Զեյնալովին՝ երեսուն անց տարիքով, միջահասակ, զվարճասեր այդ բաքվեցուն, հանդիպեցինք միանգամայն պատահականորեն, հենց փողոցում։

Նա հարազատի պես ողջագուրվեց մեզ հետ, ապա իրար հետևից հարցրեց.

— Այդ ե՞րբ եկաք, քանի՞ օր է, ի՞նչպես եկաք, ո՞րտեղ եք կանգ առել...

Ոգևորությունից նա չէր սպասում իր հարցերի պատասխաններին և բնավ ուշադրություն չէր դարձնում մեր շուրջը խմբված մարդկանց։

— Ուրեմն նորեկներ եք. իսկ ես արդեն երեք տարի է, ինչ այստեղ եմ...

Իր խոսքն ընդհատելով նա դիմեց մեր շուրջը խմբված մարդկանց և ադրբեջաներեն շատ քաղաքավարի ձևով ասաց.

— Ջանըմ, հարսանիք հո չի, որ կանգնել նայում եք։ Երբ հարսանիքս լինի՝ ձեզ բոլորիդ կհրավիրեմ։

Պատահական անցորդները ժպտացին, ուրախ ցրվեցին։

Նրանք ըստ երևույթին շատ լավ էին ճանաչում Ջեյնալովին, ծանոթ էին նրա ուրախ բնավորությանը։

Եվ իսկապես, այնուհետև ուր էլ գնայինք Ջեյնալովի հետ, բոլորը ժպտադեմ բարևում էին նրան։ Իսկ նա յուրաքանչյուրի հետ խոսելու նյութ էր գտնում։

— Ես նրանց տակն ու գլուխը շատ լավ գիտեմ,— ասաց նա այն ժամանակ, երբ մենք նկատեցինք, որ նա բավականաչափ ծանոթներ ունի։

— Այդ դեպքում Փեհլևիում մեզ ուրիշ ուղեկցող չի հարկավոր, դու ամեն ինչի մասին կպատմես։

— Օ, աչքիս վրա,— պատասխանեց նա,— այդ պարտականությունը կարող եմ սկսել կատարել հենց այս պահից։ Նախ և առաջ ես կուզենայի իմանալ, կցանկանա՞ք ծանոթանալ իրանական խմիչքի հետ։ Մինչև գործի անցնելը յուրաքանչյուրիդ առաջարկում եմ հարյուր-հարյուր գրամ օղի։ Մի կաթիլ էլ ավել չեմ տա։ Հրաշալի ապխտած ձուկ ունեմ. կուզեք կարող եմ շաշլիկ պատվիրել։ Ինչ որ կուզեք՝ ասեք, իմ հայրիկը ժլատ մարդ չի եղել, ինձ էլ ասել է ժլատությունը մարդություն չի։ Ուրեմն, որպեսզի մեր անելիքները շատ պարզ լինեն, նախ և առաջ ձեզ հրավիրում եմ ինձ մոտ։

Ճիշտ է, կին չունեմ տանը, որ ձեզ համար մի լավ դոլմա, կամ ճաշով փլով պատվիրեմ: Իմ ձեռքով էլ խորոված է գալիս: Ի՞նչպես է, համաձայն եք իմ ծրագրին: Եթե համաձայն եք, թույլ տվեք գործի անցնել: Դրա համար այստեղ կա քաղաքային տրանսպորտ. ճիշտ է, մի քիչ հիշեցնում է Եկատերինա երկրորդի ժամանակի տրանսպորտը, բայց ոչինչ: Հարկավոր դեպքում միայն մի բառ պետք է ասել՝ կառք և դուք ձեր տրամադրության տակ կունենաք երկու ձիու ուժով տրանսպորտ: Այնուհետև կարող եք գնալ կամ քառատրոփ կամ սովորական քայլվածքով: Այստեղ քառատրոփի ընթացքի շատ սիրահարներ կան: Ո՞րն է ձեզ համար ձեռնտու:

— Մեզ համար ամենից ձեռնտուն այն է, որ մենք ոտքով քայլենք քաղաքում, իսկ դու շարունակես քո բացատրությունները: Ամենից լավը դա է: Ինչ վերաբերում է ուտելուն, ապա մենք կուշտ կերել ենք:

Ջեյնալովն արտիստական շարժվածքով առաջ ընկավ, ասելով.

— Այդ դեպքում՝ խնդրեմ. ուր ուզում եք, կարող եմ տանել, ում հետ ուզում եք, կարող եմ ծանոթացնել: Գնանք: Այ մեր դեմից գալիս է պարոն Նաջաֆը: Սա բրնձի կապալառու է: Ունի երկու տուն, երեք կին, օրուջի ժամանակ ծածուկ ճաշում է ճաշարաններում, խմիչք խմում, իսկ երեկոյան տանը ձևանում ուղղափառ մուսուլման: Ընկերները կատակով նրան այդպես էլ անվանում են: Կուզե՞ք ծանոթացնեմ, հետաքրքիր անձնավորություն է:

— Իսկ որտեղի՞ց գիտես նրա գաղտնիքները:

— Ինքն է ասում: Պարոն Նաջաֆն ինձնից ոչինչ չի թաքցնում: Մենք իրար հետ շատ պարզ ենք խոսում: Նա միշտ շողոքորթում է ինձ, իսկ ես առանց քաշվելու ասում եմ, որ կեղծում է: Չի էլ վիրավորվում: Հիմա տեսեք ինչպես քաղցր կբարևի:

Դեմից եկող դեր, կոկիկ հագնված, լայնեզր գլխարկ դրած, ճերմակ շապիկի վրա սև փողկապ կապած, գլուխը

խնամքով սանրած պարոնը, հավասարվելով մեզ, քաղաքավարությամբ գլխարկը հանեց և բարևեց ոչ միայն Ջեյնալովին, այլ բոլորիս։ Կարծես մենք նրա վաղուցվա ծանոթներն էինք։

Ջեյնալովը բնավորությամբ բնավ չէր փոխվել, ինչպես եղել էր առաջ, այնպես էլ մնացել էր հիմա։ Նա սիրում էր անգամ ամենամոտ մարդուն ձեռք առնել։ Այս անգամ էլ, հանդիպելով կապալառու պարոն Նաջաֆին, ուշադիր նայեց նրա պարարտ փորին և ասաց.

— Աչքիս մաշված եք երևում, աղայե Նաջաֆ։ Ի՞նչն է պատճառը, կամ վատ երազներ եք տեսնում կամ գործերն են վատ գնում։

— Իրավունք ունեք նկատելու, աղայե Ջեյնալով, ծանր փորձանքից պրծա։ Թեհրանից գալիս մեր ավտոն քիչ էր մնում գլորվի ձորը։ Լավ ազատվեցինք։ Խոստացել եմ մի ոչխար մատաղ անել։

Հետո նա մանրամասն սկսեց պատմել, թե ինչպես եղավ, որ իրենք ազատվեցին աղետից։

Ջեյնալովը նուրբ հեգնանքով նկատեց.

— Տեսնենք ում էիք լավություն արել, որ ազատվել եք։ Թեհրանում երևի մի բարի գործ եք կատարել։ Դրա զորությունն էլ ձեզ պահել է։

Կապալառուն գոհ ժպտաց, ասելով.

— Դե կյանքումս ես ե՞րբ եմ վատ գործ կատարել։ Փառք ալլահին, ուրիշները որ չգիտեն, նա հո վերևից տեսնում է…

— Հա, հա, տեսնում է և զարմանում, աղայե Նաջաֆ։

— Էլի, էլի, աղայե Ջեյնալով։

Պարոն Նաջաֆը դիմեց մեզ։

— Ախպեր, սա ինձնից ի՞նչ է ուզում։ Ես մի խեղճ ու արդար մարդ եմ. ձեր օրենքներն էլ ավելի եմ հավանում, քան մերը։ Մեզ մոտ խմիչք չի կարելի խմել, խոզի միսից երշիկ չի կարելի ուտել, օրուջի ժամանակ միս չի կարելի ուտել… էլ ո՞ր մեկն ասեմ։ Պարոն Ջեյնալովը գիտի, որ այդ

բոլորը ինձ համար չէ։ Համ օղի եմ խմում, համ երշիկ եմ ուտում, մոլլաներին էլ չեմ հավատում, նրանց հետ բարեկամություն չեմ անում։ Էլ ի՞նչ եք ուզում ինձնից։

Ջեյնալովը ձեռքը կապալառու Նաջաֆի պարարտ փորին դնելով ասաց.

— Այդ բոլորը սրա համար է, մեր օրենքի հետ ի՞նչ կապ ունի։ Մեր օրենքում չի էլ ասված, թե ինչը կարելի է ուտել, ինչը չուտել։ Ինչ որ քեֆդ տալիս է՝ կեր, ինչ որ չի տալիս՝ մի կեր։ Նույնն է աստծուն հավատալու գործում. կուզես հավատա, կուզես մի հավատա, քո գործն է։ Բայց մեր օրենքով խիստ արգելվում է երկու կին պահելը։ Իսկ երեքի մասին, էլ չեմ ասում։

Կապալառու Նաջաֆը ցինիկորեն ժպտալով ասաց.

— Ես գիտեի, գիտեի, որ այդ կասեք, աղայե Ջեյնալով։ Կարող եմ ձեզ հայտնել։ Մեկից օրենքով բաժանվեցի, տարա, թողեցի Թեհրան՝ իր բարեկամների մոտ։

— Ա՜, ահա թե ինչու վերադարձին աղետից ազատվել եք։ Երևի ձեր կնոջ ցանկությունն եք կատարել։

— Հա, հա, ես մի արդար մարդ եմ, ուրիշի ցանկության վրա չեմ բռնանա... Զուգեց, ես էլ ասացի. «Քո քեֆն է»։ Վերջացավ։ Ինքն էլ է գոհ, ես էլ։

— Հիմա քանի՞սը մնաց։

Պարոն Նաջաֆը ցուցամատը և միջամատը, որին հագցրած էր ոսկե մատանի, բարձրացրեց, ինքն էլ չգիտես ինչու ծիծաղեց։

— Ես ձեզ պահեցի, պարոն Ջեյնալով, բայց պիտի ասեմ, որ ձեզնից խիստ վիրավորված եմ։ Այնքան հյուր եմ կանչում, ոչ մի անգամ չեք գալիս։ Ե՞րբ կգաք ձեր բոլոր ընկերների հետ։

Ջեյնալովն նրան հուսադրեց.

— Կգանք, կգանք, պարոն Նաջաֆ, երբ ժամանակ եղավ՝ կգանք։

Կապալառուից բաժանվելուց հետո Ջեյնալովն ասաց.

— Տեսա՞ք, քիչ է մնում ասի, որ ինքը կոմունիստ է։

Միք ծիծաղի. դա մեզ մեծ քանակությամբ բրինձ է տալիս և քիչ շահ չունի։ Դրա համար էլ աշխատում է դուր գալ բոլորին։ Բայց գիտեմ, որ դրա աստվածը միայն փողն է։ Է, այստեղ այսպիսի մարդիկ քիչ չկան։ Ահա մեկ ուրիշ օրինակ։ Լավ նայեցեք այդ երկարահասակ, սևադեմ մարդուն։ Դա ազգությամբ հայ է, շատ զուսպ կյանք է վարում և շատերը չգիտեն, որ ամերիկական լրտես է։ Նա իբր թե ամերիկացիների կրոնն է քարոզում քրիստոնյաների մեջ։ Ուրիշ գործ չունի. առևտրով, արհեստով չի զբաղվում, պետական պաշտոն չի վարում։ Ասում է, թե իբր իր եկամուտը քարոզչական աշխատանքից է ստանում։ Քաղաքը ոտք դնող յուրաքանչյուր նոր մարդու հետ աշխատում է ծանոթանալ, որպեսզի իմանա, թե ինչո՞ւ է եկել, ինչքա՞ն պետք է մնա։ Մի տեսեք, թե ինչպես կնայի ձեզ, ոտից գլուխ կչափի, որոշ տեղ էլ դեռ կհետևի։

Ջեյնալովը չէր սխալվում։ Ծղոտե լայնեզր գլխարկ դրած, ճերմակ փողկապ կապած, սև կոստյում հագած մարդը շատ ուշադիր նայեց մեզ, հետո ժպտալով բարևեց Ջեյնալովին։

Մենք առաջացանք, իսկ նա ինչ որ ծանոթ գտավ և մի աչքի տակով մեզ հետևելով սկսեց զրուցել։

— Ուրեմն ամերիկացիներն այստեղ էլ իրենց լրտեսներն ունեն,— ասաց մեր մի ընկերը։

— Զարմանո՞ւմ ես։ Դուք Փեհլևին երկրորդակա՞ն քաղաք եք կարծում։ Թանկագին ընկերներ, ամերիկացիները և անգլիացիները միշտ էլ ձգտել են այս կողմերը։ Ապա հիշեցեք 1918—20 թվերի դեպքերը։

ՄԻ ՔԱՆԻ ԷՋ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մենք գնացինք ծովափնյա բուլվարը, նստեցինք մի ակացու տակ, խոսեցինք դեսից-դենից, իսկ իմ գլխում մեկ

առ մեկ վերականգնվում էին Փենլեու հետ կապված դեպքերը։

Պատմությունից հայտնի է, որ անգլիական իմպերիալիստները շատ վաղուց են ձգտել Իրանը գաղութացնել և հանել են իրենց նպատակին։

Դեռևս 1872 թվին անգլիացիները Իրանի շահին ստիպեցին ստորագրել մի պայմանագիր, որը նրանց իրավունք էր տալիս Անգլիան Հնդկաստանի հետ կապող հեռագրագծի կառուցման հատուկ կոնցեսիա ստեղծել։ Իրանը, ըստ այդ համաձայնության, պարտավոր էր վճարել հեռագրագծի կառուցման հետ կապված ծախսերը և գիծն սպասարկող անգլիացիների աշխատավարձը։ Հեռագրական բազմաթիվ գրասենյակներն իրենց աշխատակիցներով հանդերձ անձեռնմխելի էին և հանդիսանում էին լրտեսական կենտրոններ։ Անգլիական իմպերիալիստներն Իրանի հարավում Սպահանը և Ահվազն իրար միացնող խճուղի կառուցեցին, զավթեցին Կարուն գետի վրայի նավագնացությունը։

1901 թվին ավստրալիացի ձեռնարկող Վիլյամ դ' Արսին Իրանի հարավի նավթային շրջաններում հետախուզական աշխատանք ծավալելու իրավունք ձեռք բերեց։

Ընդամենն ութ տարի հետո, 1909 թվին, անգլիական իմպերիալիստներն իրենց թաթը դրին Իրանի հարավի նավթի վրա։ Նրանք գնեցին Դ' Արսի ակցիաները, ապա ստեղծեցին Անգլո-իրանական նավթային ընկերություն։ Այս ընկերությունից Իրանը ոչ մի օգուտ չուներ։ Նա պարտավոր էր բավական մեծ տոկոսներ վճարել՝ Անգլիայից մինչ այդ ստացած փոխառության համար։

Սակայն անգլիացիներն այն ժամանակ իրավունք ստացան մշակելու միայն Իրանի հարավի նավթը։ Նրանք չկարողացան իրենց թաթը դնել նաև Իրանի Հյուսիս-Ադրբեջանի, Գիլանի, Մազանդարանի, Գորգանի և Խորասանի հարստությունների և նավթաբեր հողերի վրա։ Մինչդեռ այդ բանը նրանք վաղուց էին երազում։

Անգլիական ագահ իմպերիալիստներին ձեռք բերածը չէր բավարարում։ Օրեց-օր ավելի մեծ թափ էր ստանում առևտուրը Մերձավոր Արևելքի երկրների հետ, օրեց-օր ուժեղանում էր այդ երկրների ժողովուրդների գաղութացման պրոցեսը, որի ընթացքում անասելի մեծանում էր և նավթի նշանակությունը։

Անգլիական իմպերիալիստներին նավթ էր հարկավոր՝ Հնդկական օվկիանոսում, Պարսկական ծոցում անընդհատ երթևեկող նավերի համար։

Նրանք ամեն կերպ ձգտում էին տիրել Իրանի ողջ նավթին՝ ներառյալ և հյուսիսի մարզերը։

Իրանի հարավում ստեղծված անգլո-իրանական նավթային ընկերությունը փաստորեն մի պետություն էր՝ պետության մեջ։ Նա ուներ իր գործարանները, ճանապարհները, ոստիկանությունը և զինվորական ջոկատները։

Իրանում անգլիացիները 1911 թվին կազմակերպեցին հատուկ ժանդարմերիա՝ իրենց կողմից նշանակված հրահանգիչներով։ Բայց դրանով էլ անգլիացիները չէին բավարարվում։ Նրանք իրենց նպատակների կենսագործման համար զինում և օգտագործում էին Հարավային Իրանի տարբեր քոչվորական ցեղերին։

Իսկ քոչվորական ցեղերը, որ կազմում էին Իրանի բնակչության մեկ երրորդը, համարյա ինքնուրույն էին։ Ցեղերի ղեկավարներն ունեին իրենց զինված ջոկատները, վարում էին իրենց սեփական ներքին քաղաքականությունը և հաճախ չէին ենթարկվում կենտրոնական կառավարությանը։

Դիմելով ամեն տեսակի խարդախությունների անգլիացիները դարձան շատով Իրանի փաստացի տերերը։

Ուխտանական թվականներին ցարական Ռուսաստանը ևս իր համար շատ ձեռնտու համաձայնություն կնքեց Իրանի հետ։

Ցարական Ռուսաստանը Հյուսիսային Իրանում ուներ

ամեն տեսակի կոնցեսիաներ, ինչպես օրինակ՝ խճուղիների կառուցման, ձկնորսության, հեռագրական և նավթային։ Նույն ժամանակ հիմնվեց այսպես կոչված «Учетно-ссудный» բանկը, որը մեծ ազդեցություն ուներ Իրանի տնտեսական և քաղաքական վիճակի վրա։ Հյուսիսային մարզերի կալվածատերերի մի մասը ռուսական հպատակություն ընդունելով՝ ուռճացրեց իր առանց այն էլ ուռճացած տնտեսությունը։

Անգլիական իմպերիալիստներն ամեն կերպ ձգտում էին բոլորովին դուրս մղել Իրանից իրենց այս ուժեղ մրցակցին և երկրում տիրել մեն-մենակ։ Ցարական կառավարությունն Իրանում տարվող իր քաղաքականությունից չէր կարող հրաժարվել։

1917 թվին ցարական զորքերը գրավեցին Հյուսիսային Իրանը և շարժվելով դեպի հարավ, հանդիպեցին Միջագետքից դեպի հյուսիս շարժվող անգլիական զորքերին։

Իրանում սկսեց թագավորել անարխիան։ Օկուպանտներն զբաղվում էին թալանով։ Տեղացիներից նրանք վերցնում էին մթերք, զանազան ապրանքներ և փոխարենը տալիս ոչնչի չպարտավորեցնող ստորագրություններ։ Զարգացավ չտեսնված ավազակություն։ Երկրում սկսվեց սով։

Եվ ահա այս ծանր վիճակից Իրանը դուրս եկավ շնորհիվ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի։ Միայն Հոկտեմբերյան Ռևոլյուցիան Իրանի ժողովրդին բերեց ազատություն և ոգևորեց նրան պայքարելու հանուն իր ազատության ու անկախության։

Իր գոյության հենց առաջին օրվանից Սովետական իշխանությունը չեղյալ համարեց ցարական Ռուսաստանի և Իրանի միջև կնքված բոլոր անհավասար պայմանագրերը։

1917 թվի դեկտեմբերի 7-ին Լենինի և Ստալինի ստորագրությամբ հրապարակվեց ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի դիմումը՝ ուղղված Ռուսաստանի և Արևելքի մուսուլմաններին,

ուրի մեջ ասված էր. «Մենք հայտարարում ենք, որ Պարսկաստանի բաժանման մասին պայմանագիրը պատռված և ոչնչացված է: Հենց որ ռազմական գործողությունները դադարեն՝ զորքերը Պարսկաստանից դուրս կբերվեն և պարսիկների համար կապահովվի իրենց ճակատագրի ազատ տնօրինման իրավունքը»:

Ընդամենը 16 օրից հետո Սովետական իշխանությունն իր հայտարարությունը գործ դարձրեց։ Նույն դեկտեմբեր ամսին նա պարսիկների հետ սկսեց բանակցություններ վարել՝ ռուսական զորքերն Իրանից դուրս բերելու մասին։ Մի քանի օր հետո ռուսական զորքերը թողեցին Իրանը։

Սովետական իշխանության այս վերաբերմունքը ցնցեց ողջ աշխարհը։ Աշխարհի ժողովուրդները համոզվեցին, որ Ռուսաստանում ստեղծվել է ճնշված ժողովուրդների բարեկամ մի իշխանություն։

Միայն այսքանն անգլիացիներին մի քանի անգամ ավելի վտանգավոր թվաց, քան ցարական Ռուսաստանի մրցակցությունն էր իմպերիալիստական շուկայում։

Անգլիան շտապեց միջոցներ ձեռք առնել, որպեսզի Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի ազդեցությունը չտարածվի Արևելքի ժողովուրդների վրա։ Ավելին, նա ցանկացավ Իրանը դարձնել հենարան՝ Ռուսաստանում մանուկ ռևոլյուցիան խեղդելու համար։ Էլ չենք խոսում Անգլիայի վաղուցվա իղձերի մասին։ Ռուսական զորքերն Իրանից հանելուց հետո սկսել էր մի շատ հարմար ժամանակ, երբ անգլիացիները կարող էին փորձել տիրելու Իրանի հյուսիսի, դրա հետ նաև... Բաքվի նավթին։ Բայց սա ոչ միայն անգլիական կապիտալիստների երազանքն էր։ Ամերիկական իմպերիալիստները ևս վաղուց աչք ունեին Իրանի ու Բաքվի նավթի վրա։

Սրանք էլ թալանի գործում երբեք չեն ցանկացել ետ մնալ անգլիացիներից։

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Անգլիան Ռուսաստանում 85 միլիոն դոլլարի նավթի ակցիա ուներ։

Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի օրերին նավթի հետ կապված քիչ զավեշտական բաներ տեղի չունեցան։

Այդ օրերին իրենց երկրից լեղապատառ արտասահման էին փախչում նավթատերերը, ուր իմպերիալիստները նրանցից էժան գնով ձեռք էին բերում ակցիաներ։ Այսպիսով Դետերտինգը շուտով դարձավ Ռուսաստանի նավթի ամենամեծ բաժնետերը։

Ամերիկական «Ստանդարտ-Օյլ-կոմպանին» շտապեց գնել Նոբելի բոլոր ակցիաները։ Իսկ, ինչպես հայտնի է, Նոբելը Ռուսաստանում ամենահարուստ նավթատերերից մեկն էր։

Անգլիական և ամերիկական իմպերիալիստները կարծում էին, թե իրենց կհաջողվի արյան մեջ խեղդել Սովետական իշխանությունը և այն ժամանակ իրենք կլինեն Ռուսաստանի տերերը։ Դրա համար էլ նրանք հյուսիսից, հարավից և Հեռավոր Արևելքից զորքեր ուղարկեցին դեպի մեր երկիրը։

Այստեղ—Իրանում անգլիացիները երկիրն օկուպացնելուց հետո մոբիլիզացրին նաև ռուս կոնտրռևոլյուցիոն զորքերը և Բիչերախովի հրամանատարությամբ օգտագործեցին դեպի մեր երկիրը կատարվող արշավանքում։

Այդ ժամանակ, 1917 թվի Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայից հետո, Անդրկովկասում իշխանությունն անցավ հակառևոլյուցիոն պարտիաների՝ դաշնակների, մուսավաթականների և մենշևիկների ձեռքը։ Բայց Սոցիալիստական ռևոլյուցիայի ալիքները հասան և Անդրկովկաս։ Երբ Բաքվում կազմակերպվեց կոմունա, հակառևոլյուցիոն պարտիաները Իրանում գտնվող անգլիական զորքերին հրավիրեցին Բաքու։ Նրանց հրավիրելիս հակառևոլյուցիոն պարտիաները խաբում

ջին ժողովրդին, ասելով, թե անգլիացիներն իրենց հետ հաց կբերեն։ Հացի փոխարեն նրանք իրենց հետ գնդակներ բերին։ Առաջին հերթին անգլիացիների նպատակն էր գլխատել Բաքվի կոմունան, նրանք գնդակահարեցին 26 կոմունարներին՝ Ստ. Շահումյանին, Ալ. Ջափարիձեին, Մեշադի Ազիզբեկովին, Վանյա Ֆիոլետովին և մյուսներին։

Անգլիացիները Բաքվում մնացին մինչև 1920 թիվը։ Նրանց այդտեղից քշեցին քաջարի Կարմիր բանակի զորամասերը։ Փախչելով մեր երկրից, անգլիացիները թալանեցին այն ամենը, ինչ տեսնում էր նրանց աչքը։ Նրանք իրենց հետ Փեհլևի (Էնզելի) տարան բավական հարստություն և 15 սովետական նավ։

Բայց պանծալի ռազմածովային նավատորմիղի մարտիկները հայտնվեցին նաև այստեղ—Էնզելիում, ստիպեցին անգլիացիներին ստորագրել կապիտուլյացիայի պայմանագիր։ Մեր մարտիկները գրավեցին այստեղ քշված տասնհինգ նավը, 50 հրանոթ, 20 հազար արկ, 160 հազար փութ բամբակ, 8 հազար փութ պղինձ և ուրիշ հարստություններ։

Անգլիացիները գլուխ վերցրած փախան նաև Փեհլևիից։

Փեհլևին լուռ մի վկա էր պատմական այս դեպքերի և կարծես այժմ նա մեզ պետք է պատմեր կարմիր նավատորմիղի մարտիկների քաջագործությունների մասին։

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ «ՆՎԵՐԸ»

Անգլիական իմպերիալիստները դրանից հետո միշտ էլ ցանկացել են Փեհլևիում մի հենարան ունենալ, որպեսզի կարողանան լրտեսական աշխատանք տանել Սովետական Միության դեմ։ Յուրաքանչյուր չնչին առիթ նրանք օգտագործել են, իրենց հետախույզներին Փեհլևի ուղարկելու համար։

Ջեյնալովն ինքն անձամբ Փեհլևիում տեսել էր անգլիական հետախույզներին և հետևյալն էր պատմում.

— Լեհերին[1] ընդունելու համար մի ամբողջ խումբ էր եկել՝ հետախուզության փոխգնդապետի գլխավորությամբ: Մերոնք Անդերսի կողմնակիցներին հանձնում էին, իսկ նրանք՝ ուրախությամբ ընդունում: Այդ անգլիական փոխգնդապետը բարձրահասակ էր, խորամանկ աչքերով, երկար դնչով: Նա ձևացնում էր իրեն կատակասերի մեկը: Փոխգնդապետը մի հրահան ուներ, որից կրակ ստանալու գաղտնիքը միայն ինքը գիտեր: Երբ մեկն ու մեկը նրա մոտ ծխախոտ էր հանում, փոխգնդապետն շտապում էր նրա ձեռքը տալ իր հրահանը, որ ծխողը չկարողանա վառել, իսկ ինքը ծիծաղի: Ծխել ցանկացողներն ստիպված վերադարձնում էին նրա հրահանը՝ մեղավորի պես ժպտալով: Փոխգնդապետը քահ-քահ ծիծաղում էր: Մի օր էլ լեհերին բերող մեր մի քանի սպա ափ իջան: Անգլիացիների և մերոնց մեջ զրույց ծագեց: Մեր մայորներից մեկը ծխախոտ հանեց, որ ծխի: Անգլիացի փոխգնդապետը, իբր թե քաղաքավարությունից դրդված, ընկերներին աչքով անելով, շտապ հանեց իր հրահանը և մեկնեց մեր մայորին: Մեր մայորը վերցրեց հրահանը, բայց ծխախոտն իսկույն չվառեց, մի երկու րոպե խոսակցությամբ տարվեց՝ անգլիացու հրահանն աննկատելի կերպով շոշափելով ձեռքում: Եվ այն պահին, երբ նա ըստ երևույթին պարզել էր գաղտնիքը, ծխախոտը բերնում ուղղեց և անգլիացու հրահանով վառեց: Անգլիացի փոխգնդապետի հոնքերը մի պահ կիտվեցին և նա երևի լռեր, եթե ընկերներն իրենց ծիծաղով չմատնեին նրան:

---

1 Դրանք այն լեհերն էին, որոնք չէին ուզում կռվել գերմանական ֆաշիստների դեմ: Սովետական Միությունում նստած նրանք ուտում էին, հանգիստ քնում և սպասում, որ ուրիշները արյուն թափեն, ազատեն Լեհաստանը, որպեսզի նոր միայն իրենք գնան, նստեն այնտեղ տիրություն անեն: Պարզ է, որ լեհ ժողովրդի թշնամիներին, որոնց շարքերում էր նաև Անդերսի բանակը, Սովետական Միությունն իր մոտ պահպանել չէր կարող, ուստի առաջարկեց նրանց թողնել մեր երկիրը:

Երբ նրանք ծիծաղեցին, մեր մայրը հարցրեց.

— Ի՞նչ է պատահել։

Անգլիացի փոխգնդապետը ստիպված էր բացատրություն տալ.

— Այս հրահանը ես նվեր եմ ստացել ամերիկացի իմ մի բարեկամից։ Ոչ ոք ինձնից բացի, սրանով ծխախոտ վառել չի կարողանում։ Դուք առաջին մարդն եք, որ վառեցիք։ Եվ եթե նվեր չլիներ, ես մեծ ուրախությամբ կնվիրեի ձեզ։

— Շնորհակալ եմ,—ասաց մեր մայրը, նոր միայն ուշադիր կերպով նայելով հրահանին։—Ես նվերներ ընդունել չեմ սիրում և բացի դրանից այստեղ մի առանձին բարդ բան չկա, ի՞նչու են դժվարանում վառել։

Փոխգնդապետը բարակ շուրթերը լիզելով ցանկացավ ինչ որ բան ասել, բայց ոչինչ չասաց.

Մայրի ասածն սպանիչ էր։

Հետո չգիտեմ ինչպես էր, որ այս փոքրիկ դեպքի մասին քաղաքում սկսեցին խոսել։ Ընդհանրապես այսպիսի բաները շուտ են տարածվում։ Փոքրիկ քաղաք է, այստեղ խոսում ես, մյուս ծայրում լսում են։

Ճիշտ էր ասում մեր զրուցակիցը։ Փոքրիկ այդ քաղաքում դժվար չէր տեսնել, թե ով ինչով է զբաղվում, մանավանդ երբ խոսքը վերաբերում էր դրսից եկածներին։ Դրսից եկած ամեն մի մարդու արածն այստեղ իսկույն աչքի էր ընկնում։ Այդ պատճառով էլ բավական տարօրինակ էր թվում անգլիացիների երևալն այս քաղաքում, ուր նրանք որևէ անելիք չունեին։ Այս անգամ, երբ նրանք եկել էին լեհական ռեակցիային դիմավորելու, նրանց երևալը հասկանալի էր։ Քիչ չի պատահում, երբ բարեկամներն իրար տեսնելու համար ծովեր և օվկիանոսներ են կտրում։ Այստեղ նրանք պետք է դիմավորեին ոչ միայն իրենց բարեկամներին, այլև զինակիցներին։ Դրանք Չերչիլի համար շատ հարկավոր մարդիկ էին։ Իսկական ռեակցիոներների հանդիպելու համար նա ինքը հետագայում ծովեր, օվկիանոսներ կտրեց, հա-

սալ Ցուլտոն։ Իսկ երբ լեհական դեմոկրատիայի ռեսերվ թշնամիները ցանկություն էին հայտնել նրա մոտ գնալու, մի՞թե նա կարող էր դրկարաց չընդունել նրանց, որպեսզի հետագայում կատաղած շների պես բաց թողնի նրանց ազատագրված լեհ ժողովրդի վրա։

Ասում ենք, որ այդ անգամ անգլիացիների երևալը Փեհլևիում տարօրինակ չէր։ Սակայն տարօրինակը նրանց մինչ այդ և դրանից հետո երևալն էր։ Անգլիացիները Պարսից ծոցից հասել էին Կասպից ծովափ և այստեղ կառուցել բենզինալիցքի կետ։ Ինչպես պարզվեց հետագայում, այսպիսի կետեր նրանք կառուցել էին ուրիշ շատ քաղաքներում ու ավաններում։ Անգլիական իմպերիալիստները շատ լավ հասկացել են իրենց արածի իմաստը։ Արտաքուստ կարծես նրանք հոգ են տարել, որպեսզի Իրանի ավտոտրանսպորտն ամեն տեղ ապահովված լինի վառելիքով, մինչդեռ հիմնական նպատակն է եղել ամրապնդել իրենց դիրքերը երկրում և Իրանի ողջ տրանսպորտն իրենցից կախված վիճակում պահել։ Այդ դեպքում արի ու բողոքիր Աբադանի նավթային կոնցեսիաների դեմ, արի դեմ խոսիր նավթային կոնցեսիաներում տիրող ստրկական աշխատանքի դեմ։ Խոսողները կարող են և խոսել, իսկ երկրի գործարար խավը, Լալեզարի, Թեհրանի փակ շուկայի ոտքով ու ձեռքով կապկպված տերերը խոսել չէին կարող։ Իրենց ապրանքները մի տեղից մյուսը տեղափոխելու համար ավտոտրանսպորտը նրանց հարկավոր էր ինչպես օդը։ Այդ «օդի» հոսանքն էլ անգլիական իմպերիալիստներն իրենց ձեռքն էին առել ոչ միայն երկրի հարավում, այլև ծայրագույն հյուսիսում։ Մի քանի տեղ, ինչպես օրինակ Փեհլևիում, բենզինը բաց են թողնում իրանցիները և հետևապես անգլիացիների մուտքն այդտեղ ավելորդ էր։

Փեհլևի գալու, այստեղ իրենց կործանարար քաղաքականությունը տանելու համար նրանք այլ պատճառներ էին գտնում։

Ինչ որ ժամանակ Փեհլևի-Ռեշտ ավտոճանապարհը նո-

բոգելու համար անգլիացիները ճանապարհային մի Հարբին մեքենա էին տվել։ Դա էլ իր կարգի «նվեր» էր հաշվում։ Նորոգելուց հետո նրանք մեքենան թողել էին Փեհլևիում և ահա տասն օրը մեկ Ղազվինից անգլիական «ներկայացուցիչը» գալիս էր «ստուգելու» Հարբին մեքենայի վիճակը։ Կասկածից դուրս էր, որ այդ մեքենային ձեռք չէին տա և մանավանդ չէին գողանա։ Փեհլևիի ոչ մի բակով այդ Հարբինը ներս չէր մտնի։ Եվ հետո ո՞ր հիմարի գլխով կանցներ իր բակը քաշել մի մետր լայնություն ունեցող երկաթե անիվներով այդ մեքենան։ Թող թեկուզ հիսուն տարի ընկած լիներ այն Փեհլևիի ամենաաղքատ մարդկանց աչքի առաջ, դարձյալ չէր գտնվի մեկը, որ մտածեր նրանից որևէ օգուտ քաղելու մասին։

Բայց անգլիացիները նրա վիճակով շատ էին մտահոգված. տասն օրը մեկ նրանք մարդ էին ուղարկում «մեքենայի վիճակն ստուգելու»։ Հարբինն ստուգողը մի քանի օր կանգ էր առնում հյուրանոցում, հյուր գնում տեղացիներից մի քանիսի տները, մի քանիսի հետ հանդիպում փողոցում, ճաշարաններում, հյուրանոցում և նոր միայն վերադառնում։

Իհարկե, շատերի համար միանգամայն հասկանալի էին անգլիացու այցելությունների իսկական նպատակը։ Նրան բնավ չէր հետաքրքրում Հարբին մեքենայի վիճակը. նա պարզապես գալիս էր լրտեսական նպատակներով։

Իրանական ոստիկանությունը, դատական օրգանները բնավ չէին հետաքրքրվում անգլիական լրտեսների գործունեությամբ։ Ավելին, նրանք, ինչպես հետագայում իմացա, աշխատում էին ձեռք-ձեռքի տված։

ԹՈՒԴԵ ՊԱՐՏԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Այդ օրերին Թեհրանից Փեհլևի էր եկել Թուդե (ժողովրդական) պարտիայի կենտկոմի անդամ Ա.-ն։ Նա ամբողջ երկրում, մանավանդ երկրի հյուսիսային մարզերում, մեծ

հեղինակություն էր վայելում։ Ռեզա շահի դիկտատուրայի օրոք կենտրոնի այդ անդամը տասը տարի բանտ էր նստել, իր ուսերի վրա կրել ոստիկանության կամայականությունները, մասնակցել բազմաթիվ հացադուլների, անձամբ տեսել իրանական դեմոկրատական շարժման ղեկավար դոկտոր Էրանու եղեռնական մահը։ Թեհրանի «Ղասր-Ղաջար» բանտում կրած անասելի զրկանքներից, դժոխային հալածանքներից հետո էլ նա մնացել էր իրանական ժողովրդի ազատագրական պայքարի հավատարիմ մարտիկը։ Բանտից ազատվելուց հետո նա ավելի մեծ եռանդով էր պայքարում ռեակցիայի, իմպերիալիստական գործակալների դեմ՝ համարյա ամեն օր ելույթ ունենալով ժողովրդի առաջ, մամուլում։

Պարզ է, որ այդպիսի մի մարդու ժամանումը Փեհլևի աննկատելի չէր մնա։

Այդ փաստը շատերին ոգևորել էր։ Առանձնապես ոգևորված էին մեր ծանոթ երիտասարդ դեմոկրատները։ Նրանք խնդրել էին Ա.-ին ելույթ ունենալ փեհլևցիների համար և, ստանալով նրա համաձայնությունը, շրջում էին արհեստանոցները, նավամատույցը, բանվորներին հայտնում տեղի ունենալիք հանդիպման մասին։

— Մուտքն ազա՞տ է լինելու,— հարցրի նրան, որ ռուսերեն խոսելու համար բանտարկվել էր։

— Այո։ Այնքան մարդ կլինի, որ չգիտեմ որտեղ պետք է նստեն։

Հանդիպումը տեղի էր ունենալու քաղաքի կինոթատրոնի շենքում։

Երեկոյան դեմ, երբ արդեն զովն ընկել էր, կինոթատրոնի առաջ մեծ բազմություն էր խռնված։ Դրանց մեջ կարելի էր տեսնել բանվորների, ծառայողների, մանր առևտրականների։

Պակաս չէին նաև ոստիկանները։ Նրանց ներկայությունը շատ տարօրինակ էր։ Ոչ ոք նրանց չէր հրավիրել այդ ժողովին, բայց և այնպես քաղաքի ոստիկանապետը հոգ էր տարել, որպեսզի ոստիկանները կինոթատրոնի մուտքի մոտ

երևան հենց ժողովի սկզբից։ Ժողովի եկողները, չքաշվելով դրանց ներկայությունից, լուռ ու մունջ մտնում էին դահլիճ։

Դահլիճում ուշագրավ էր մի բան։ Օթյակները, որ կինոնկարների ցուցադրման ժամանակ զբաղեցնում էին հարուստները, այժմ թափուր էին։

Բայց այն պահին, երբ արդեն ժողովը պետք է սկսեր, դրանցից մեկում երևաց կիսազինվորական հագուստով, միջահասակ, կիսաճաղատ, ասես ուռած այտերով մի մարդ։ Մինչ նստելը նա մի պահ կանգնեց, ուշադիր նայեց ծայրեծայր լիքը դահլիճը, նոր միայն ընկղմվեց փափուկ աթոռի մեջ։

Ժողովը բացեց Թուդե պարտիայի տեղական կազմակերպության ղեկավարը և ձայն տվեց Ա.-ին։

Սա լայն ճակատով, խոր ընկած աչքերով, բարակ շուրթերով մի մարդ էր։ Մոտենալով ամբիոնին, նա սկսեց պատմել ռեակցիայի դավադրությունների մասին։ Իր խոսքը նա հեռվից սկսեց։ Հավաքվածներին նա հիշեցրեց, թե ինչպես Ռզա շահը երկիրը փաստորեն դարձրել էր ֆաշիստների գաղութ։ Երկիրը լցված ֆաշիստական գործակալներն ամեն ինչ անում էին, և մնում անպատիժ։ Կառավարությունը ոչ միայն նրանց դեմ միջոցներ չէր ձեռք առնում, այլև օժանդակում էր նրանց։

— Այժմ ևս ռեակցիան նույն քաղաքականությունն է վարում։ Ահա այն պարոնը, որ նստած է օթյակում, ինձ հետևում է Թեհրանից և ամեն տեղ ականջները սրած լսում իմ ասածները...

Դահլիճում նստածները աթոռները շարժելով շրջվեցին, որպեսզի տեսնեն օթյակում նստած պարոնին, որն այդ պահին թաշկինակը հանած ճակատն էր սրբում։

— Այսօր առաջին հերթին պետք է ասեմ,— շարունակեց Ա.-ն,— որ դրանց հետապնդումից բնավ չեմ վախենում։ Սրան այստեղ ուղարկող պարոնները սոսկում են ժողովրդից, հաստատ համոզված լինելով, որ ժողովուրդը մի օր կպատռի դրանց դիմակը։ Ես ամեն տեղ հայտարարում եմ և այս-

տեղ էլ կհայտարարեմ, որ եթե ես նկած լինեի Իրանն ամերիկացիներին կամ անգլիացիներին ծախելու օգտին խոսելու, ապա ինձ ոչ ոք չէր հետապնդի։ Իսկ որովհետև ես խոսում եմ իրանական ժողովրդին ճորտության ավողների դեմ, ոստիկանությունն ինձ հետևում է...

Այս բառերից հետո դահլիճի այս ու այն անկյունից լսվեցին.

— Դուրս ռեակցիոներներին։

— Դուրս լրտեսին։

— Դուրս...

Դահլիճն ալեկոծվում էր։

Բայց մի՞թե նման փոթորկալից դեպքեր տեղի էին ունենում միայն Փեհլևիում։ Դրանք տեղի ունեին ամենուր և դժվար է բոլորի մասին մեկ առ մեկ պատմել։

ԻՆՁԻ ՄԱՍԻՆ Է ՊԱՏՄՈՒՄ ՀՈՂԸ

Մենք Ռեշտ էինք գնում։ Շատ բան էինք լսել այդ քաղաքի մասին։ Մեզ ասել էին, որ դա Իրանի հին և գեղեցիկ քաղաքներից մեկն է, մի ամբողջ մարզի՝ Գիլանի վարչական կենտրոնը։ Իրանի որ մասում էլ ոտք դնես՝ անշուշտ կլսես այդ քաղաքի անունը։ Բազմաթիվ կապերով նա կապված է Աստարայի, Փեհլևիի, Թեհրանի, Սպահանի, Աբադանի, Ղազվինի, Թավրիզի և դեռ ուրիշ շատ քաղաքների հետ։

Տարվա բոլոր եղանակներին Գիլանի տարբեր տեղերից դեպի Ռեշտ են շտապում ուղտերի, ջորիների քարավաններ՝ բեռնված բրնձով, ածուխով, ոսպով, քուսպով, կանաչեղենով, աղով...

Փույթ չէ, որ շատերն այնտեղից վերադառնում էին հուսախաբված, ձեռնունայն, ուղղակի խաբված։ Ռեշտը մարզի ամենամեծ և ամենահարուստ քաղաքն է, ուստի շատերն իրենց ապրանքն այնտեղ էին տանում ծախելու, այնտեղից էին ուզում որևէ անհրաժեշտ բան գնել։

Փեհլևուց այն հեռու չէ։ Ընդամենը 37 կիլոմետր ճանապարհ պետք է կտրել Ռեշտ հասնելու համար։ Ճանապարհն անցնում է հարթ դաշտավայրով և ծովի մակերևույթից երբեք չի բարձրանում։ Չէ՞ որ անցյալում,—շատ հնում, Ռեշտը ևս Կասպից ծովափին է գտնվել, սակայն ծովը՝ աստիճանաբար նահանջելով նրանից, 37 կիլոմետր հեռացել է։ Այժմ այդ 37 կիլոմետրի վրա առաջին հայացքից դժվար է որևէ հետք գտնել, որով ապացուցվեր, որ իսկապես ծովն այդքան տեղ նահանջել է։ Ի՞նչով ապացուցել։ Ուր էլ նայես՝ շուրջդ կանաչ տարածություններ են՝ բրնձի արտերի համար ծառերից, վայրի թփուտներից մաքրված հողակտորներով։ Դրանց արանքներում որպես սահման ծառայում են բարձր, մերկիրան բարդիներ, որոնք կարծես ամբողջ շրջապատի պահապաններ են կարգված։

Նրանց ոչ մի շյուղը չէր շարժվում։ Լազուր երկնակամարը թվում էր մեծ կտավ, որի վրա անհայտ մի նկարիչ շարքով բարդենիների կանաչ կատարներ էր նկարել, ցանկանալով ցույց տալ, թե ինչպես են լինում դրանք գարնան արբունքի պահին։ Երբեմն միայն, ծանրորեն ճախրելով, բարդիների կանաչ ճյուղերին նստում էին ճերմակ արագիլները։ Նրանց տեսնելուց զգում էիր, որ տեսածդ նկար չէ, այլ իրական պատկեր։

Գարնան շունչն զգացվում էր ամենուր։

Փեհլևիի աերոդրոմը փշալարերով ցանկապատած կանաչ մարգագետնի էր նման։ Այնտեղ այդ պահին ոչ մի սավառնակ չկար և հայտնի չէր, թե երբ է լինում։ Անփորձ օդաչուն կարող էր անցնել աերոդրոմի վրայով, շփոթվելով այն հախուռն բարձրացած արտի հետ։

Ճանապարհի երկու կողքին իրենց գլխարկներն էին բարձրացրել կապույտ, դեղին, ճերմակ, ալ ծաղիկները։

Օդը հագեցված էր ծաղիկների, կանաչի, արևի տակ անփութորեն մեկնված ղառամյալ հողի բուրմունքով։ Ակամայից ձեռքդ դնում էր դեպի օձիքդ։ Ուզում էիր կրծքով ագահ շնչել, զգալ գարնան ջերմությունը։ Մյուս կողմից,

Ինչպես և ամեն մի ճանապարհորդ, մենք կուզենայինք իմանալ, թե ինչ կա մեր աջ ու ձախ կողմերում։ Դա այնքան էլ հեշտ բան չէր։ Հիմնական խճուղուց ոչ մի ավտոճանապարհ դեպի աջ կամ ձախ չէր բաժանվում։ Ուրեմն՝ այդտեղ գտնըվող գյուղերը կարելի էր գնալ ոտքով կամ գրաստով։ Եվ եթե չլիներ այս հիմնական ճանապարհը, հազիվ թե երբևէ ժամանակակից ավտոն մուտք գործեր Գիլանի մարզի այդ մասը, ուր տեղ-տեղ բրնձադաշտերում ջուրը լճացած կանգնած էր, իսկ տեղ-տեղ էլ անցյալ տարվա ցեխի գունձերը չորացել էին, խեղդել արանքում գետնի տակից հազիվ ելած բույսերը։ Բայց այժմ էլ դժվար էր ասել, թե ժամանակակից ավտոն մուտք է գործել մեր շրջապատի գյուղերը։ Ավտոներըն արագընթաց էքսպրեսների նման անցնում էին հիմնական ճանապարհով՝ մի կողմ թողնելով ծառերի տակ պատսպարված գյուղերը։ Չլինեին ճանապարհի վրա երբեմն երևացող գյուղացիները, անփորձ մարդը կարող էր ենթադրել, թե շրջապատի տարածությունը բնակեցված չէ։ Մինչդեռ հողն այստեղ շատ բան էր պատմում։ Չնայած ճանապարհի աջ ու ձախ կողմերում ընկած ճահճուտներին, ամենուր երևվում էին ջրանցքները։ Զարմանալի էր թվում ջրերի այդպիսի առատության պայմաններում ջրանցքների առկայությունը։

Ահա հենց ճանապարհին մենք հանդիպում ենք ջրանցքի վրա աշխատող մի խումբ գյուղացիների։ Նրանք, ովքեր ջրանցքի մեջ էին՝ չէին երևում։ Նրանք գետինը փորում էին բավական խոր, մոտավորապես երկու մետր խորությամբ։ Բայց դարձյալ նույն հարցն էր ծագում—ի՞նչու, երբ ահա շուրջը ճահիճներ են։ Բրնձի վարատեղերում ջուրը պարզվել էր, տակը թողել տիղմը, անցյալ տարվանից մնացած բույսերն ու հանգիստ կանգնել։ Ու՞ր պետք է հոսեր այդքան ջուրը։

— Ոչ մի տեղ։

Վարատեղերում լճացած ջուրը հոսելու տեղ չուներ։

Եղանակները տաքանալուն պես այն պետք է գոլոր-

չիանալ՝ թողնելով բռնձի դաշտերն անջուր։ Իսկ այստեղ գյուղացու հույսը բրինձն է։ Այդ պատճառով էլ նա գարնանից էր պատրաստում ջրանցքները, որպեսզի տեղական պղտոր գետակի ջրերը ամառը շոգին հասնեն բրնձի արտերին ու կյանք տան նրանց։

Մի տեղ չէ, որ հողը փորփրված էր կանալների համար։

Հողը, ասես լեզու առած, պատմում էր հնադարյան մի ժողովրդի դարավոր աշխատանքի մասին։ Ահա, հենց այստեղ ինչ որ ժամանակ մարդիկ փորել են ուրիշ ջրանցք։ Ո՞վ գիտե երբ է այն փորվել և ինչքան ժամանակ է նա ծառայել։ Տարիներ շարունակ այն խորացվել է, ապա ինչ որ հեղեղ շուռ է տվել մոտակա պղտոր գետակի ընթացքը։ Գետակը դարեր շարունակ քերել է իր հունը, խորացել, կտրատել իր ափերը և այդտեղից սկիզբ առնող առուները։ Ծարավ, պապակված առուներն այժմ կիսաբաց երախով վերևից կարոտով նայում են խորքով հոսող ջրերին։

Իրանում հնամենի բերդերի, քաղաքների, ավանների մոտ, հաճախ լեռների ու ժայռերի լանջերով ձգված ջրանցքներ կարող եք տեսնել, որոնք վաղուց, շատ վաղուց դուրս են եկել շարքից, բայց մնացել են, որպեսզի այսօրվա դիտողին զարմացնեն և ստիպեն նրան մտածել, թե ինչպես են կառուցել այդպիսի ջրանցքներ և ինչպես են ջուրը անդնդախոր ձորերից հանել բարձր լեռների, սարերի լանջերը, ուր այժմ կյանքի հետք անգամ չկա։ Հուշարձաններ են դրանք, որոնք պատմում են ստրուկների ու ճորտերի աշխատանքի, նրանց կրած անլուր տանջանքների մասին։

Ամեն խան, ամեն մելիք ցանկացել է առավել չափով օգտագործել իր հողերը և դրա համար էլ չի խնայել իր ձեռքի տակ եղած ազատազուրկ մարդկանց ուժը։

Որոշ տեղեր այդ ջրանցքներից այժմ էլ մի քանիսը մնում են, գործում, կենդանություն ու կյանք տալիս գետերի ու գետակների հունից բավական բարձր ընկած հողերին։ Իսկ Ռեշտի դաշտավայրում ընկած ջրանցքներն ամեն տարի պարտադիր կերպով մաքրվում են տիղմից։ Ամենուր

աշխատանքը կատարում են գյուղացիները, չնայած հողը պատկանում է տերերին՝ մեծ մասամբ կալվածատեր միլիոնատերերին։

Հին ջրանցքները, հուշարձանները, բերդերն ու քաղաքները և վերջապես աշխարհին ժառանգություն մնացած պարսկական կլասիկ գրականությունն ասում են, որ Իրանը հեռավոր անցյալում եղել է առաջավոր կուլտուրայի երկիր, սակայն երկրում մնացած ֆեոդալական հարաբերություններին և մի շարք ուրիշ պատճառների շնորհիվ այն ետ է մնացել ուրիշ երկրներից։ Իմպերիալիստական գործակալներն ամեն կերպ խանգարում են Իրանին ազատվել միջնադարյան կապանքներից, դառնալ իր հողի, իր աշխատանքի տերը, կուլտուրապես առաջադիմել։ Հենց այդ պատճառով էլ այսօրվա գյուղացին չարչարվում է այնպես, ինչպես չարչարվել են նրա պապերը և նախապապերը։

Ռեշտի ճանապարհին պատահած գյուղացիներին տեսնելիս ինձ թվաց, թե ես ինչ որ հրաշքով մի երկու-երեք դար ետ եմ գնացել։ Դրա պատճառը գյուղացիների արտաքին տեսքն էր։ Վատ հագնված, ոտաբոբիկ լինելուց բացի նրանցից շատերը սափրված չէին։ Մի երկու երիտասարդի դեմքերին ածելին բնավ չէր կպել, մինչդեռ նրանք վաղուց պետք է սափրված լինեին։ Իրենց մազմզոտ դեմքերով, արևից սևացած վզներով, շապիկի տակից երևացող մազմզոտ և կամ անմազ, բայց նույնպես արևից սևացած կրծքներով, արևելցիներին հատուկ վառվռուն աչքերով նրանք հիշեցնում էին անցյալ դարերի գյուղացիներին, որոնց մասին մենք կարդալով միայն գիտենք։

Չի կարելի անցնել հողի, սև աշխատանքի հետ կապված այդ մարդկանց մոտով և զրույցի չբռնվել։

Նրանք մեծ մասամբ պարզ ու շիտակ են, մի քիչ ամոթխած, հետաքրքրասեր և զգույշ՝ թե չլինի որևէ բանով վիրավորեն կամ նեղեն քեզ։ Նրանք հարգանքով են վերաբերվում, երբ ինքդ նրանց նկատմամբ հարգանք ես տածում։ Մենք մոտեցանք և բարձր ձայնով բարևեցինք նրանց։

— Սալամ։

Մինչ այդ, քանի դեռ այդ մի հատիկ բառը չէինք ասել, նրանք սպասողական դիրքով և մի տեսակ զգուշացած նայում էին մեզ և ըստ երևույթին չէին հասկանում, թե ինչու ենք մոտենում իրենց։ Իսկ մենք որևէ նպատակ չունեինք, նորոգվող ջրանցքը տեսնելուց բացի։

Սրտից թռած, բարեկամական մեր «սալամը» իսկույն փոխեց նրանց բոլորի տրամադրությունը։ Հողաթմբերին նստած մորուքավոր, տարեց մարդը բարձրացավ տեղից, շփեց մորուքն ու լայն ժպտաց։

— Ալեքում սալամ,—պատասխանեցին մի քանի հոգի, դադարելով աշխատելուց։

Ջրանցքի մեջ գտնվողները ևս վիզները երկարացրին, մեզ տեսնելու համար։

Երկու երիտասարդները որ մինչև ծնկները խրված էին ջրանցքից դուրս թափած ցեխի մեջ, բահերը մի կողմ դրին և մի քանի քայլ առաջացան։

— Բրնձի արտերի համա՞ր է այս ջրանցքը,—հարցրի նրանց։

— Հա, աղա, բրնձի արտերի համար է,—պատասխանեց տարեց մարդը, իսկ մյուսները գլուխները դրականորեն շարժեցին։

— Բոլորդ մի գյուղի՞ց եք։

Դարձյալ նույն տարեց մարդը պատասխանեց.

— Չէ, երեք հոգին այս գյուղից են,—և նա մատով ցույց տվեց մեզնից ոչ այնքան հեռու ճահճուտի ափին գտնվող մի քանի խղճուկ հյուղակներ,—իսկ մենք ուրիշ տեղից ենք։

— Ուրեմն օգնո՞ւմ եք ձեր հարևաններին։

— Արբաբի համար ենք աշխատում։ Մենք քոչվորներ ենք։ Գարնանը վարում ենք, ցանում, ամառը սարը բարձրանում, աշնան մոտերքը գալիս հունձն անում։

— Իսկ ո՞ւր է ձեր արբաբը։

Ճաղատ գլխով, ծաղկատար դեմքով մի գյուղացի ասաց.

— Արբաբը Ռեշտում է լինում։

Այստեղ էլ նույնն էր, ինչ և Հաշպարում։ Հողը պատկանում էր կալվածատիրոջը։ Գյուղացիներին գործի դնելու, նրանց հետ բանակցություններ վարելու համար Ռեշտից գալիս էր գործակատարը։

Քոչվոր գյուղացիներն էժան բանվորական ուժ էին ներկայացնում։ Նրանք, քանի դեռ դաշտավայրի սոսկալի շոգից ու մոծակներից չէին փախել սարերը, պատրաստ էին, ինչ գնով էլ լինի դրամ վաստակել՝ ամառվա իրենց համեստ պահանջները բավարարելու համար։ Բատրակությունից բացի դրամ վաստակելու ուրիշ միջոց չկար, ուստի նրանք էլ ընտրում էին միակ այդ ճանապարհը։

— Դուք եթե ուզում եք մեր արբաբին,—ասաց նույն ծաղկատար դեմքով գյուղացին,—ես կարող եմ ասել, թե որտեղ է ապրում նա Ռեշտում։

— Ոչինչ, մենք նրան կտեսնենք,—պատասխանեցինք նրան և բոլորին հրաժեշտ տալով հեռացանք։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ռ Ե Շ Տ

Քիչ հետո մենք պետք է լինեինք Ռեշտում։

Ճանապարհի երկու կողմերին երևացին հավասար հեռավորությամբ իրարից հեռու տնկված բարդիների շարքեր։ Դժվար էր ասել, թե ինչի համար են դրանք՝ ճանապարհին գեղեցկությո՞ւն տալու, թե՞ գիշեր ժամանակ շոֆերներին աջ ու ձախ կողմերի ճահճուտների մեջ ընկնելուց նախազգուշացնելու համար։ Ինչի համար էլ լինեին՝ վատ չէին՝ բարդիները գեղեցկացնում էին ճանապարհը։

Ահա բարդիներն էլ վերջացան, երևացին մի՛ քանի հյու-

դակներ, ապա աջ կողմում պարսպապատ, այգու մեջ թաղված նորաշեն մի շենք։ Դրսից այն բավական գեղեցիկ էր, միայն հետո, բավական հետո տեսանք նրա ներսի ահավոր պատկերը, որի մասին դեռ կպատմեմ։

Նորից ճանապարհը ծռվեց, նորից երևացին խղճուկ հյուղակներ և ահա դուրս եկանք մի փոքրիկ, կլոր հրապարակ։

Մենք մտանք Ռեշտ՝ Գիլանի կենտրոնը, իրանական գեղեցիկ քաղաքներից մեկը, ուր ապրում են միլիոնատերեր ու մուրացկաններ, վաճառականներ ու բանվորներ, արհեստավորներ, բժիշկներ, պետական գործիչներ, ժանդարմներ ու ոստիկաններ՝ իրենց առանձին վարչություններով, իրենց պետերով... Ապրում են նրանք կողք-կողքի, հաճախ իրար հետ գործ են ունենում, իրար տեսնում։

Մեզ էլ վիճակված էր այդտեղ երկար մնալ, հետևապես չէինք կարող նրանց չտեսնել, նրանց հետ գործ չունենալ։ Ես էլ իմ տեսածների մասին կցանկանայի մանրամասն պատմել։

Ինչո՞ւ շտապենք։ Չէ որ նա, ով ծանոթանա Ռեշտին, շատ լավ կիմանա և Իրանը, և, ընդհանրապես աշխարհի այն երկրները, ուր մեկին ասում են միլիոնատեր, իսկ մյուսին՝ աղքատ, մեկի հետ խոսելիս անպատճառ պետք է ասել արբաբ, իսկ մյուսի համար կարծես ալլահն էլ մոռացել է որևէ բան հնարելու։

Ի՞նչ պետք է ասել հասարակ մարդուն։

Երբ ջրկիրը ռեշտցիների համար հեռու աղբյուրից էշով խմելու ջուր է բերում, նրան դեռ կարելի է ջրկիր անվանել, թելեր, կտորեղեն ներկողին, պղնձի ամաններ անագողին կարելի է վարպետ անվանել, իսկ ի՞նչ անուն տալ նրանց, ովքեր ոչ խանութ ունեն, ոչ արհեստ, որոնք այսօր ֆաբրիկայում են, իսկ վաղը փողոցում՝ մի կտոր հացի կարոտ։ Ամեն ինչի համար Իրանում որևէ ածական գտնում են։ Երբ Հաբիբը գրպանում փող ունի, նրան ասում են՝ աղայե Հաբիբ։ Ուսադիրներ ունեցողին այլ կերպ չեն ասի, քան՝ ջանաբե սարվան, ջանաբե սարգորդ... խանութպանին, մի բան

ունեցողին ասում են արքաք, դրսից եկածին՝ միսխո այսինչ։ Իսկ ով ոչ դրամ ունի, ոչ ուսադիրներ և ոչ էլ որևէ ունեցվածք, նրա համար դժվար են ածական գտնում։

Ռեշտում ամեն տեսակի մարդիկ կան։

Բայց սկզբում մենք դիտում ենք քաղաքը։

Փոքրիկ հրապարակից, ուր մենք մտանք, սկսվում էր լայն մի պողոտա՝ երկու կողմերից ջահակիր սյուներով զարդարված։ Սյուների հավասար շարքերը գնում, հասնում էին պողոտան փակող չորս հարկանի մի տան։ Տունը կառուցված է գոթական ոճով։ Կտրի աշտարակում ամփոփված է քաղաքային ժամացույցը։ Մինչ այդտեղ պողոտային են նայում տարբեր մեծության, տարբեր ոճի և, ըստ երևույթին, տարբեր ժամանակ կառուցած մեկ, երկհարկանի տներ։ Առաջին հայացքից, երբ դեմդ բացվում է լայն, ասֆալտապատ պողոտան՝ իր ջահակիր սյուներով, էլեկտրական լարերով ու ծառաշարքով, թվում է, թե մտնում ես ժամանակակից, ավետական տիպի նորակառույց մի քաղաք։

Պողոտայով անցնելիս պատկերը փոխվում է։ Աջ ու ձախ կողմերում երկհարկանի, դրսից ներկած տների կողքին ծվարած երևում են փոքրիկ, շատ փոքրիկ տնակներ, որոնց մեջ կարող է տեղավորվել միայն մեկ ընտանիք։ Այդ տիպի տները հաճախ ապրելու համար չեն կառուցված, այլ լայն, երկու կողմ բացվող դռներով խանութների համար։ Տների շարքն այս ու այնտեղ կտրում են նեղ փողոցներ, որոնցով, երբ կառք է անցնում, մարդիկ պետք է կպչեն պատերին։ Ո՞ւր են տանում այդ նեղլիկ, կեղտոտ փողոցները, դժվար էր ասել։ Երևում էր միայն, որ նրանք բանուկ, բազմամարդ են։ Դեպի նեղլիկ փողոցներն էին ծավալում կրկնակոշիկներ հագած և ոտաբոբիկ, թաղիքե գլխարկներով և լայնեզր գլխարկներով մարդիկ, մերկասրունք երեխաներ, չադրայի տակ ծածկված կանայք և աղջիկներ, ապա ածուխով, փայտով, հարդով ու խոտով բեռնված գրաստներ։

Մենք հասանք պողոտան փակող աշտարակավոր տանը և նրա առաջ փռված հրապարակին։

Սա Ռեշտի սիրտն է, կենտրոնը։

Այս հրապարակին են նայում քաղաքային վարչության աշտարակավոր շենքը՝ հյուրանոցը, գավառապետի, ոստիկանության վարչության, կինոթատրոնի շենքերը։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Շենքերից ամենից ուշագրավը քաղաքային վարչության շենքն է՝ ամբողջ քաղաքին հայտնի ժամացույցով և դրա կողքից կախած մեծ զանգով, որով հրդեհաշեջները քաղաքին ազդարարում էին այս կամ այնտեղ բռնկված հրդեհների մասին։ (Ռեշտում տների զգալի մասը փայտից է պատրաստած. այդ պատճառով էլ հրդեհներ հաճախ են պատահում)։

Ասում ենք ամբողջ քաղաքին հայտնի ժամացույցով, որովհետև բոլորը գիտեն, թե ինչպես մի անգամ այդ ժամացույցը կանգնեց, բայց քաղաքում նորոգող վարպետ չգտնըվեց։ Ստիպված կանչեցին Թեհրանից։ Դրանից հետո ժամացույցի հետ պատահեց երկրորդ դժբախտ դեպքը,—կոտրվեց ապակին։ Քաղաքային վարչությունն անշուշտ պարտավոր էր նոր ապակի գնել։ Բայց ո՞վ ցավն էր կորվել։ Ժամացույցը մնաց առանց ապակու։ Ձմեռը ձյունի փաթիլները չգիտես ինչու նստում էին ժամացույցի սլաքների վրա, խանգարում, իսկ հետո էլ կանգնեցնում նրանց ընթացքը։ Դա գուցե և ռեշտցիների կատակի առարկա չդառնար, եթե նրանք ամեն օր շտապելու որևէ տեղ ունենային։ Ո՞ւր պետք է շտապեին։ Քաղաքում տրամվայ, ավտոբուս և կամ երկաթուղի չկա, որպեսզի մարդիկ շտապեն։

Ճիշտ է, Ռեշտում երկաթուղի չկա, իսկ Երկաթգծի պողոտա կա։ Այն սկիզբ է առնում հենց այս կենտրոնական հրապարակից։ Դա մյուսների նման ասֆալտապատ չէ։ Պողոտայի վերջին մասում այնպիսի փոսեր կան, որ ավտոյով գնալ անհնարին է։ Այդպիսի փողոցներ Ռեշտում քիչ չկան։

Բայց այս մեկը կոչվում էր Երկաթգծի պողոտա։

Զարմանալի էր. երկաթգիծ չկա, իսկ պողոտա կա։

Տեղացիները դրա գաղտնիքը պարզեցին։

Մոտ 15 տարի առաջ իսկապես երկաթգիծ եղել է՝ Ռեշտից մինչև Փիրբազար։ Դա Փեհլևուց մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող փոքրիկ բնակելի կետ է։ Այստեղից արդեն հեշտությամբ բեռները կարելի էր ջրով փոխադրել Փեհլևի։ Ճիշտ այդպես էլ արել են տեղացիները։ Նրանք քիչ չեն օգտվել երկաթուղուց։ Ռեշտցիները նրանից գուցե և մինչև օրս օգտվեին, եթե մի դեպք չխանգարեր։ Բանն այն է։ որ երկաթուղու տերը մեռավ, իսկ նրա ժառանգորդները երկաթգիծը հավաքեցին։

Ի՞նչ կարող էին անել տեղացիները։

Քաղաքի կենտրոնում էլ երբեմն պատահում է, որ տերը խանութը ծախծխում է ու փակում։ Արի նրան ստիպիր, թող քեզ համար բաց պահի խանութը։ Ո՞վ ունի իրավունք։ Խանութն իրենն է—փակեց, վերջացավ։

Ճիշտ նույն կերպ վարվեց Ռեշտ-Փիրբազար երկաթուղու տերը։

Այժմ նրանից միայն հիշողություն է մնացել—փողոցի անունը—Խիաբանե Խայթթահե, ասել է թե՝ Երկաթգծի պողոտա։ Իսկ երկաթգծի հետքերն անգամ չեք գտնի։ Ինչ փույթ, թե Ռեշտի և նրա շրջակայքի մոտ 75 հազար բնակչությանը երկաթուղին, եթե ոչ հաճախ, գոնե երբեմն կարող էր ծառայել։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴԻՐԵԿՏՈՐԸ ԵՎ ԱՅԼ ՀԱՃԱԽԱԳՅՈՒՏ ԲԱՆԵՐ

Եվ այսպես, քաղաքի այդ հրապարակում կանգնած, դուք կարող եք տեսնել բոլոր կենտրոնական փողոցները կամ, ինչպես տեղում ասում են, պողոտաները։ Դրանք շատ չեն և բոլորն էլ սկիզբ են առնում կենտրոնական հրապարակից։ Ասենք փաստորեն կա երկու հիմնական պողոտա,

որոնք Հրապարակում խաչաձևում են իրար և չորս տարբեր անուններ կրում: Երկաթգծի պողոտայի հակառակ ուղղությամբ ձգվում է մոտ մի կիլոմետր երկարություն ունեցող փողոցը՝ Շահփուրի պողոտան: Հրապարակի մոտերքում այն աշխույժ ու բազմամարդ է: Կան դեղատներ, կոշկակարների, դերձակների, վարսավիրների արհեստանոց-խանութներ, կաշվի, գորգերի, ծխախոտի, արդուզարդի խանութներ, տժվժիկանոցներ... մի կինոթատրոն, որ հարևան երկու կինոթատրոնի շենքերից 50—60 քայլի վրա է գտնվում:

Շահփուր պողոտայով քանի գնում ես դեպի քաղաքի ծայրը, այնքան քչանում են խանութները. իսկ կեսում, այնտեղ, ուր անգլիացիները բենզինալիցքի կետ են կառուցել, վերջանում:

Մինչ այդտեղ, և դրանից հետո էլ, տները մեկ երկու հարկանի են, փոքրիկ: Պողոտայի ծայրում մի կողմից քաղաքի արական դպրոցն է, իսկ մյուս կողմից՝ քանդների գործարանը: Հետո սկսվում է բաց կանաչ տարածություն: Քաղաքի այս մասում ապրողներն իրենց անասուններին այդտեղ են քշում արածացնելու: Բաց տարածության վրա է գտնվում նաև բազմաթիվ բրուտանոցներից մեկը և դրա արտաքինից բավական խորհրդավոր մի շենք՝ այգու մեջ: Դրան՝ այդ խորհրդավոր շենքին մենք դեռ կվերադառնանք: Առայժմ չմոռանանք ասել, որ այս պողոտայի վրա ուշագրավ ոչինչ չկար: Ամենից ուշագրավը թերևս քանդների ֆաբրիկան էր և մեկ էլ այն, որ այդտեղ էր ապրում անգլիական բանկի դիրեկտորը: Երբեմն նրան կարելի էր տեսնել երեկոյան ժամի 8-ից հետո պողոտայով քայլելիս: Բարձրահասակ, կոկիկ հագնված, սափրված, խնամված այդ պարոնը քայլում էր գլուխը բարձր պահած և կարծես շուրջը մարդ չէր տեսնում: Անգամ գավառապետը կամ քաղաքագլուխը նրա հպարտությունը չունեին: Ասենք տեղի իշխանավորներից ոչ մեկը ձեռքի տակ մի այնպիսի հզոր միջոց չուներ այս կամ այն հարստին հնազանդեցնելու համար, ինչպիսին ուներ անգլիական բանկի դիրեկտորը:

Կապիտալիստական աշխարհի ամենահզոր աստվածը՝ կապիտալը նրա ձեռքին էր։ Բանկի միջոցով անգլիացիները ձգտում էին տեղի իշխանությունները պահել իրենց ազդեցության տակ։

Դա այնքան էլ դժվար գործ չէր։

Հարուստներից քչերը չէին դիմում այդ բանկի օգնությանը։ Որևէ խոշոր գործ սկսելիս, մեծ շենք կառուցելու, կապալով հողամասեր գնելու, մեծ քանակությամբ ապրանք գնելու դեպքում նրանք ստիպված պարտք էին վերցնում անգլիական բանկից։ Բանկը տալիս էր նրանց անհրաժեշտ գումարը, բայց և միաժամանակ պահանջում էր այդ պարոններից... գիտակցել, թե ով է նրանց օգնողը։ Թող մեկն ու մեկը փորձեր անգլիացիներին դեմ թեկուզ մի բառ ասել և ապա դիմել բանկի օգնությանը։ Պարզ է, որ ոչ մի կոպեկ չէր ստանա։ Բայց որպեսզի բանկի կառավարիչը կարողանար պարզել, թե ով է թշնամի և ով բարեկամ, նա ձեռքի տակ պետք է ունենար լրտեսների խմբակ։ Տեղացիներն ասում էին, որ նա այդպիսի խմբակ ունի։

Նրան նաև օգնում էին տեղական ժանդարմերիան և ոստիկանության մի շարք պաշտոնյաներ։

Բայց այդ մասին հետո։

Մենք ուզում ենք ծանոթանալ քաղաքի հիմնական փողոցներին։ Մեկը դրանցից Փեհլևիի պողոտան էր, որով մենք հասանք կենտրոնական հրապարակին, մյուսը Երկաթգծի պողոտան, երրորդը նրա հակառակ ուղղությամբ ձգվող Շահփուրի պողոտան։ Մնաց ահա վերջին կենտրոնական փողոցը, որ շուկայից ձգվում է դեպի քաղաքային այգին։ Դրա վրա են գտնվում Ռեշտի հիմնական բաղնիքները, հարուստ ճաշարանները, սրճարան—ռեստորանները, բիլիարդանոցները, ծաղկի, պաղպաղակի, զովացուցիչ ջրերի, ամանեղենի, ակնեղենի, խմիչքեղենի մի քանի խանութներ։

Ահա և վերջացան քաղաքի հիմնական փողոցները։ Կենտրոնական մասում նրանք որոշ տեղ նույնիսկ ասֆալ-

տապատ են։ Այլևս ոչ մի տեղ մի մետր ասֆալտ չեք գտնի։ Հիմնական այդ պողոտաներից սկիզբ են առնում նեղլիկ, կեղտոտ փողոցներ, գնում, խորանում ցածրիկ, փոքր, իրար վրա հենված, բայց իրարից բարձր պատերով բաժանված տների արանքներում։ Անթիվ, անհամար են թվում այդ փոքրիկ տները և լաբիրինթոսի նման երկար փողոցները։ Կողմնացույց ունեցողն անգամ կդժվարանա կողմնորոշվել այդ փողոցներում։ Դրանք մեկ ծռվում են դեպի աջ, ապա դեպի ձախ, նորից աջ ու ձախ, ետ դարձնում քեզ, կարծես տանում են այնտեղ, ուր քիչ առաջ եղել ես, բայց դուրս են բերում նոր փողոցների խաչաձևման տեղ, փոքրիկ աղմկոտ կամ լուռ հրապարակներ, կեղտոտ նրբանցքներ, որտեղից ավտոմեքենա կամ կառք անցնել չի կարող։

Ռեշտի բնակչության բացարձակ մեծամասնությունն ապրում է այսպիսի փողոցներում։ Դրանցից շատերը շաբաթներով արևի երես չեն տեսնում։ Արևի պակասության պատճառով տարվա բոլոր եղանակներին չի վերանում ցեխը փողոցներից, տների պատերը մնում են բորբոսնած, խոնավացած։ Անգամ ամառվա խիստ շոգերին առաջին հարկերում երկաթը ժանգոտում է, տեղաշորերը, տան կահկարասիքը բորբոսնում են։

Քաղաքի շուրջը գտնվող լճերից, Կասպից ծովից երկինք բարձրացած գոլորշիները խտանալով տարին բոլոր թափվում են Ռեշտի գլխին կամ մառախուղի ձևով իջնում, ծածկում քաղաքը։

Խոնավության և ուրիշ շատ պատճառներով ազգաբնակչության մեջ տարածված են բազմաթիվ հիվանդություններ, որոնցից ամենից տարածվածը թոքախտն է։

Ահա թե ինչու հարուստներից ոչ ոք առաջին հարկում չի ապրում։ Հարուստների տների առաջին հարկերը կամ խանութներ են կամ պահեստներ։

Առաջին հարկերի բորբոսնած, խոնավ սենյակներում ապրում են չքավորները, որոնցից շատերը տառապում են

թոքախտով, ռևմատիզմով և զանազան այլ հիվանդություններով: Ամենքի դեմքին գրված է ծանր կյանքի անջնջելի դրոշմը:

Թ Շ Վ Ա Ռ Ն Ե Ր

Թերևս դա է պատճառը, որ քաղաքում չափից դուրս շատ են հաշմանդամները, մուրացիկները: Նրանք նստած են քաղաքի կենտրոնական և երկրորդական փողոցներում, տների պատերի տակ, մզկիթների, բաղնիքների, խանութների առաջ: Դրանց մեջ կան տարբեր հասակի տղամարդիկ, կանայք, երեխաներ:

Հետագայում մի առիթով իմ և Ռեշտի քաղաքագլխի միջև խոսք ծագեց այդ թշվառ մարդկանց մասին:

Քաղաքագլուխը, որ շատ մեծ կարծիքի էր Իրանի կառավարության ձեռք առած միջոցների մասին ասաց.

— Օ՜, մեր մեջլիսն այժմ միջոցներ է ձեռք առնում նրանց օգնելու համար: Մենք այստեղ մի տուն ունենք, ուր նրանց անհրաժեշտ օգնություն է ցույց տրվում:

Հետևյալ օրը ես գնացի այդ տունը տեսնելու, որ գտնվում էր քաղաքից դուրս, Փեհլևիի պողոտայի վրա, հոգեկան հիվանդների նախկին հիվանդանոցի շենքում:

Պետք է ասել, որ դա իսկապես թշվառների տուն էր: Այստեղ կային երկու սեռի պատկանող խելագարներ, ընկնավորներ, սիֆիլիտիկներ, կույրեր, ուռուցքներով, տրախոմայով հիվանդներ և ամեն տեսակի խեղանդամ մարդիկ, որոնց և ոչ մի բառով չես նկարագրի:

Դժվար է նկարագրել ուռած վզերով, դուրս ընկած կոնքերով, ծաղկատար աչքերով, ջարդված ոտքերով կիսամերկ այդ արարածներին, որոնց մեջ կային կանայք, տղամարդիկ և, որ ամենասոսկալին էր, նաև երեխաներ: Նրանք կեղտոտ էին, գզգզված մազերով: Տեղաշորերին փոխարինում

էին ինչ որ լաթեր։ Պառկում էին խոնավ, կեղտոտ հատակի վրա՝ կողք-կողքի։

Դրսի թարմ օդից եկած մարդն անկարող էր դիմանալ այս տան ծանր, նեխած, ճնշող և, ես կասեի կենդանի դիակներից փչող հոտին։ Այո, կենդանի դիակներ էին դրանք, որոնք սակայն ապրել էին ցանկանում և այստեղ էին հավաքվել իրենց գոյությունը քարշ տալու համար։

Խեղանդամ այդ մարդկանց հետ ապրում էին նաև ֆիզիկապես առողջ, բայց որբ ու անտեր երեխաներ։ Ձմեռվա ցրտերին փողոցում սովից չմեռնելու համար նրանք գալիս էին բարեգործական այդ տունը, ուր նրանց եփած բրնձից բացի ոչինչ չէին տալիս։

Եղանակները տաքանալուն պես նրանց մի մասը թողնում էր այդ տունը, գնում թափառում և ձմեռը նորից վերադառնում։ Մնում էին նրանք, ովքեր դժվար էին շարժվում տեղներից։

Այդ «բարեգործական» հիմնարկում դժվար էր երկար մնալ։ Մարդ ուզում էր որքան կարելի է շուտ դուրս գալ փողոց, ազատ շնչել, ազատ նայել լայն ու խորունկ երկնակամարին։

Մինչդեռ, ինչպես ասացի, նրանց նմանները քիչ չէին նաև քաղաքի փողոցներում։

Առևտրով զբաղված Ռեշտը կարծես չէր նկատում նրանց։ Կենտրոնական փողոցներում հարուստ խանութներն իրենց ապրանքը ռեկլամի ենթարկելու համար մեծ գորգերի վրա շարում էին տարբեր ապրանքների նմուշներ։ Կարծես ինչ որ արտակարգ տոնավաճառ էր։

Իրանը վերջին տարիներս լայն սպառման առարկաների առանձնապես մեծ պակաս չի քաշել։ Մինչև պատերազմը նրա շուկաները հեղեղել են գերմանացիները, իսկ պատերազմի տարիներին և հետո՝ ամերիկացիները և անգլիացիները։

Հենց այդ պատճառով էլ Ռեշտի խանութները լիքն էին ապրանքներով։

Կտորեղենի խանութներում այդ ժամանակ հակերով դարսված էին կրեպ-դեշինը, կրեպ-ժորժետը, մահուդը, սատինը, մալուսկինը և զանազան կտավեղեն։

Արգուզարդի խանութներում մատ դնելու տեղ չկար։ Դրանք ևս լիքն էին աշխարհի բոլոր երկրներից գնված ու բերված ապրանքներով՝ շվեյցարական, գերմանական, ամերիկական, ֆրանսիական գուլպաներով, կոճակներով, օդեկոլոնով, դուխով, խաղալիքներով, ձեռքի օճառով, թել ու ասեղով, գնդասեղով։ Ուր էլ հայացքդ ուղղեիր՝ պսպղում իրեր էին՝ մետաղից, գուտաբերճից, պլաստմասսայից, արհեստական մետաքսից...։

Ամեն ինչ կար, ամեն ինչ տարիներով դարսված մնում էր ու փտում, որովհետև... նրանց իսկական գնորդները հազվագյուտ դեպքում էին շուկա գալիս։

Այո, երկրի իսկական սպառողներին տեսնելու համար Ռեշտի, Թեհրանի, Աբադանի կամ Սպահանի շուկաները չպետք է գնալ։

Նրանց մենք դեռ կտեսնենք։ Եվ երբ տեսնենք այդ սպառողներին, մեզ համար պարզ կլինի, թե ինչու Իրանի քաղաքների խանութները լիքն են ապրանքներով։

Դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ ժողովրդի գնողական ունակությունը շատ ցածր էր։ Դրամ ունեցողը նույնիսկ ձմեռվա ամիսներին կարող է գնել ձմերուկ, սեխ, խաղող։ Մրգեղենի խանութներում նրանք կախված են։ Սակայն չեն ծախվում, թանկ է, դարձյալ դրամ չկա։ Իսկ ո՞ւմ մոտ է դրամը։ Քաղաքում երկու-երեք տասնյակ մարդիկ կան, որոնց մոտ և գանվում է դրամը։

ԹՐՔԱԿԱՆ ԼՐՏԵՍ ՖԱԲՐԻԿԱՆՏՆ ՈՒ ՁՈՐՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Մեկը դրանցից մետաքսագործարանի տեր պարոն Ղոնչիանն էր, որի մոտ շերամի մշակման թունդ պահին մինչև հազար մարդ էր աշխատում։ Ինքը պարոն Ղոնչիանը մեն-

մենակ էր։ Իր պատմելով նա աշխարհը ոտքի տակ էր տվել և անհայտ էր, թե որտեղ էր թողել իր ընտանիքը։ Այստեղ նա ապրում էր իր ֆաբրիկայի ներսում և դուրս էր գալիս քաղաք ուշ երեկոյան, հանդիպում ինչ որ կասկածելի մարդկանց հետ։ Տեղացիները բացեիբաց ասում էին, որ նա թըրքական լրտես է և ատում էին նրան։ Նա սոսկալի ռեակցիոներ էր. ֆաբրիկայի ներսում ուներ իր լրտեսները, որոնք նրան հայտնում էին առանձին բանվորների տրամադրությունների մասին։ Պրոֆմիության համակրողներին, բանվորների արդարացի պահանջները պաշտպանողներին նա անմիջապես դուրս էր շպրտում ֆաբրիկայից։ Աշխատանքի ընդունելիս գերադասում էր կանանց։ Նրա մասին ասում էին, թե ֆաբրիկայում իր համար հարեմ ունի։

Ամառային ճերմակ կոստյումի կտոր էր հարկավոր։ Ընկերոջս հետ գնացինք նրա մոտ մեզ հարկավոր կտորը գնելու։ (Նա ֆաբրիկայի ներսում խանութ ուներ)։ Ֆաբրիկան տեղավորված էր լայն, ցանկապատած բակում՝ քաղկների ֆաբրիկայից մոտ 300 քայլի վրա։ Արտաքինից դա նման էր քաղաքից առանձնացած հիվանդանոցի։

Պարիսպների ներսից երկինք էին սլանում բարդիներ, ակացիներ…

Դարչնագույն, մեծ դարպասը փակված էր, կարելի էր ներս մտնել մուրճիկով այն ծեծելուց հետո։

Պահապանը մեզ տեսնելուն պես շփոթվեց, բայց և կարծեմ գոհունակությամբ ներս թողեց։ Ներսում միայն իսկույն զգացինք, որ սա իսկապես ֆաբրիկա է և ոչ թե քաղաքից առանձնացված հիվանդանոց կամ նման մի բան։ Ծառուղիներում քսան-երեսուն մետր երկարությամբ մետաքսե թելեր էին հինել չորացնելու համար։ Բակի մի կողմում, հասարակ սրահի տակ եռացող կաթսաներից գոլորշի էր բարձրանում։ Սրահի տակ և դրսում գետնի վրա լճացած էր կեղտոտ, սև ջուր։ Այդտեղից փչում էր անտանելի ծանր հոտ։ Մի քանի երեխաներ բոբիկ ոտքերով կանգնած էին ցեխի ու կեղտոտ ջրի մեջ ու թել էին քաշում։ Բանվորուհիներից մեկը—չոր,

սմքած կրծքով, անկենդան հայացքով երիտասարդ մի կին, փայտով խառնում էր կաթսան, որի մեջ բոժոժներ էին եփվում: Չորս տարեկան գզգզված մազերով մի աղջիկ անընդհատ քաշում էր նրա փեշը և ըստ երևույթին ինչ որ բան խնդրում: Մայրը բարկացավ աղջկա վրա: Աղջկա թշերն ուռան, աչքերից արցունքի կաթիլներ կախվեցին:

Հարևան բանվորուհիները չգիտես ինչու աղմուկ բարձրացրին մեզ տեսնելիս: Երևում էր, նրանք ամաչում էին, որովհետև ոմանք ցնցոտիների մեջ էին:

— Իսկ այդ ի՞նչ երեխաներ են,—հարցրի ես մոտեցած մի բանվորի: Նրա համար ըստ երևույթին սովորական բան էր կանանց աղմուկ-աղաղակը, թշշացող կաթսաներից բարձրացող գոլորշին, շրջապատի ցեխը և սոսկալի այս հոտը, որից թվում էր, թե կարելի է ուշագնաց լինել:

— Դրանք մեր՝ այս կանանց, իմ, ուրիշների երեխաներն են:

— Իսկ ի՞նչու տանը չեք թողնում:

Նա մի տեսակ զարմացած նայեց ինձ:

— Նրանք էլ մեզ հետ աշխատում են, ի՞նչպես թողնենք:

Այստեղ արդեն ես չկարողացա թաքցնել իմ զարմանքը.

— Այն փոքրիկ ուլի՞կն էլ է աշխատո՞ւմ,—մատով չորս տարեկան գզգզված մազերով աղջկան ցույց տալով հարցրի ես:

— Այո, աղա,—պատասխանեց բանվորը,—օրական մի ղրան աշխատավարձ է ստանում:

— Իսկ մայրը ի՞նչքան է ստանում:

— Մայրը հինգ ղրան, հայրը մի թուման: Օրական տասնվեց ղրան վարձ են ստանում:

Շուկայում շաքարն արժեր յոթանասուն ղրան, յուղը տասը թուման, կամ հարյուր ղրան, մեղրը ութ թուման, մանկան կոշիկը քսան-երեսուն թուման: Բայց ինձ զարմացնողն այդ չէր, այլ այն, թե այդ փոքրիկն ինչպես է այստեղ դիմանում առավոտյան ժամի 6-ից մինչև երեկոյան նույն

ժամը։ Չէ՞ որ ֆաբրիկայում աշխատում էին տասներկու ժամ, իսկ պրոֆմիությունները չէին կարողանում մուտք գործել այդ ֆաբրիկան և պաշտպանել բանվորների շահերը։

Այդ իմանալուց հետո այլևս ծանր էր նայել այդ մարդկանց, որոնք կոպեկների համար իրենց կյանքը մաշում էին այս դժոխքում, օրնիբուն աշխատում մի ինչ որ տզրուկի համար։

Մեր կողքին կանգնած բանվորը մեզ առաջնորդեց գրասենյակը, որ տեղավորված էր մի հարկանի շենքում։ Այստեղ սկզբում մենք մտանք ինչ որ միջանցք, ուր մետաքսագործական պրիմիտիվ, պապենական դազգահներ էին դրված։

Դազգահը կանգնած էր։ Տարեց մի մարդ կռացած դազգահի ինչ որ մասն էր սարքում։

— Արբաբն ո՞ւր է,—հարցրեց ընկերս։

Խիտ հոնքերով, խորամանկ աչքերով մարդն ուղղվեց տեղում, փորձող հայացքով նայելով մեզ և արևելյան շողոքորթությամբ ասաց.

— Ա՜, սալամ, սալա՜մ, համեցեք, համեցե՜ք...

— Արբաբը դո՞ւք եք։—Հարցրի նրան, մի տեսակ զարմացած, որ նա իր ձեռքով մեքենայի մասն է սարքում։

— Ձեր խոնարհ ծառան եմ, հրամայեցեք ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

— Այդ ի՞նչ է, դուք ինքներդ եք նորոգում։

Նա իր դեմքի կեղծ ժպիտն ավելի քաղցրացնելով ասաց.

— Դե ինչ արած, մեր աշխատանքն է, պետք է չարչարվենք։

Նա հագել էր իր ֆաբրիկայի արտադրանքից կարած ճերմակ կոստյում, որի վրա մի սև բիծ անգամ չկար, որից երևար նրա չարչարվելը։ Նա դազգահի փայտի մի մասը տեղն էր դրել։ Այդ էլ համարում էր չարչարանք։ Ես անկարող էի զսպել ինձ և հեգնախառն չժպտալ նրա կեղծավորության վրա։ Ընկերս դրությունը փրկեց.

— Ապա մի ցույց տուր կտորեղենդ, ուզում ենք մի-մի կոստյումացու գնել։

— Համեցե՛ք, խնդրե՛մ։

Եվ նա մեզ առաջնորդեց հարևան սենյակը, որի չորս պատերի դարակներում դարսված էին ճերմակ, վարդագույն, կանաչ, սև, զույնզգույն կտորեղենի հակեր։ Սենյակում մարդ չկար։ Տերը նայեց դեպի կողքի դուռը և ծափ տվեց։ Հարևան սենյակից դուրս եկավ մոտ քսաներեք տարեկան, գեղեցիկ, լիքը կրծքով, տակավին վարդագույն այտերով, սև աչք ունեցող, բարձրահասակ մի պարսկուհի՝ ամառային թեթև շրջազգեստով։ Նրա հետևից հարևան սենյակի դուռը մնաց բաց և ես ակամայից այնտեղ նայեցի։ Դա զարդածածկ մի սենյակ էր, որի կենտրոնում գտնվող սեղանին ճաշի պարագաներ էին դրված։ Ճերմակ մատուցարանում բրնձի վրա դրված էր տապակած հավ, մեծ, կլոր ձմերուկի մեջ խրված էր արծաթե կոթով դանակ, դրաֆինի կեսից ավելին լցված էր տեղական «շահանի» գինի, որ բերվում է Ղազվինից։

Պարսկուհին կիսահրամայական, կիսահեգնական տոնով գիմեց տարիքոտ իր արբաբին և կարծես ոչինչ չհասկանալով հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում։

— Կտոր են ուզում, ցույց տուր,—կարճ պատասխանեց արբաբը։

Պարսկուհին դարձավ մեզ, ցանկասեր հայացքով նայեց, ապա նազանքով ու մի շարժումով, որ անպայման ցնցվի ամողջ կուրծքը, մոտեցավ առևտրասեղանին։ Ոտքի տակ աթոռ դնելով նա մեկը մյուսի հետևից կտորների հակեր էր հանում, ապա կռանում ու դրանք դնում սեղանին։ Եվ այնպես էր նա կռանում, որպեսզի իր մերկ ազդրերը ցույց տա։

— Մեզ այդ բոլորը չի հարկավոր,—ասաց ընկերս։— Միայն ճերմակը ցույց տվեք։

Արբաբն էլ նրան նույնն ասաց, սակայն նրա խոսքից

պարսկուհու հայացքում նորից երևաց հեգնական արտահայտություն։

Արդեն պարզ էր, որ այդ երիտասարդ, կենսունակ կինը ծեր ֆաբրիկանտի հարճն էր, որը մի կտոր հացի համար իրեն հանձնել էր ծերուկին, հետո կշտացել թե նրա հացից և թե նրանից։ Եվ այժմ նա կարծես ասում էր մեզ. «Տեսնո՞ւմ եք ինչպիսին եմ ես, բայց բաժին եմ ընկել սրան»։

. Ի՞նչ արած, մենք անկարող էինք ասել, թե ինչու դժբախտ է կրակոտ այդ պարսկուհին և առավել նրանք, ովքեր աշխատում էին եռացող կաթսաների առաջ, դազգահների վրա։ Ինձ միայն հետաքրքրում էր, թե այդ ծերուկի ինչին է հարկավոր այդքան ունեցվածքը, այդքան եկամուտը։ Երբ այդ մասին հարցրի նրան, նա ասաց.

— Տեսնո՞ւմ եք, ինչքան ժողովուրդ եմ պահում։

Այդ ասելիս նա ցինիկորեն ժպտում էր և, ինչպես երևում էր, բնավ չէր ամաչում։ Անամոթաբար նա իրեն համարում էր բարերար, որը հարյուրավոր մարդկանց աշխատանք է տալիս և ոչ թե ծծում նրանց արյունը։

Պարոն Ղոնչիանն այնքան բարի էր, որ ֆաբրիկայից դուրս էր վռնդում նրանց, ովքեր փորձ էին անում բանվորներին ընդգրկելու պրոֆմիութենական կազմակերպության մեջ, ովքեր այդ կիսաստրուկներին փորձում էին հասկացնել, որ նրանք ևս որոշ իրավունքներ ունեն և չպետք է դառնան ազրուկ-ֆաբրիկանտի հլու հպատակները։

Դրա համար նրան ոչ ոք պատասխանատվության չէր ենթարկում։ Ոչ ոք տեղական իշխանավորներից երբեք չէր հարցնում ինքնիրեն, թե որքանով արդարացի է, երբ թուրքական անձնագիրը գրպանում դրած պարոն Ղոնչիանն այստեղ աղայություն էր անում, ինչպես իր տանը։ Սովորական երևույթ էր։ Ո՞ր երկրի իմպերիալիստները չեն աղայություն անում Իրանում. երկրի ամեն մի անկյունում կան նրանցից։

ՊԱՐՈՆ ՎԻԼՍՈՆԸ

Այս ֆաբրիկայից ընդամենը մի քանի հարյուր քայլի վրա էր գտնվում քսակների ֆաբրիկան, որի բաժնետերը՝ անգլիացի պ. Վիլսոնն էր։ Կարծես պ. Վիլսոնը բրիտանական մեծ կայսրության գաղութներում քսակների ֆաբրիկա բանալու տեղ չէր գտել և ստիպված եկել, այստեղ էր բացել։

Ռեշտցիները բնավ չէին զարմանում։ Մի՞թե շատերն էին հարցնում, թե այդ ինչպես է եղել, որ պ. Վիլսոնը ծովերով, տարբեր երկրներով կտրված բրիտանական կղզիներից ընկել է այստեղ։ Նրանք գիտեին միայն, որ այդ պարոն Վիլսոնն այստեղ վատ չէր ապրում. ուներ իր սեփական տունը, ավտոմեքենան։ Նստում, վեր էր կենում քաղաքի հարուստների հետ և չէր սիրում, երբ բանվորներն առանց որևէ ածականի իրեն ուղղակի Վիլսոն էին անվանում։ Նա բանվորներից պահանջում էր, որպեսզի նրանք իրեն արբաբ անվանեն։

Այո, միայն արբաբ։

Պարոն Վիլսոնին դա շատ ձեռնտու էր, որովհետև կմերվեր մյուս արբաբներին, Վիլսոն անունը մտահոգության առարկա չէր դառնա։ Այդպես ոմանք կամա-ակամա մտածում էին նրա՝ այստեղ գալու նպատակների և հանգամանքների մասին։ Իսկ նրա նպատակները, որքան էլ սքողված էին, այնուամենայնիվ բոլորովին ծածկել նրան չէր հաջողվում։

Ռեշտում պատահած մի դեպքից հետո պարոն Վիլսոնի դեմքը լիովին պարզվեց։

Կինոթատրոններից մեկի տերը Թեհրանից բերեց «Լենինը Հոկտեմբերին» կինոնկարը։ Նկարը ցուցադրելու օրվա մասին փակցրին աֆիշաներ, ինչպես սովորաբար արվում է։ Քանի դեռ նկարը չէին ցուցադրել, քաղաքում առանձին բան տեղի չունեցավ։ Միայն թե նոր կինոնկարի աֆիշաների առաջ սովորականից շատ մարդիկ էին հավաքվում, չգիտես

մինչ՛և դանդաղ, շատ դանդաղ կարդում էին այն մի քանի բառը, որ գրված էր աֆիշայի վրա։ Ահա կինո թատրոնի առաջ մի խումբ մարդիկ կանգնած նայում էին աֆիշային։ Հասարակ հագուստով, դեղնադեմ մի մարդ, որ երկար ժամանակ աչքերը հառել էր աֆիշային, դարձավ հետևը կանգնած կարճահասակ, դուրս ընկած այտոսկրներով մարդուն ու հարցրեց.

— Տեսնես Լենինն ի՞նքն է լինելու, թե դերասան է խաղալու։

Կարճահասակ մարդը մանրիկ աչքերը ճպճպացնելով պատասխանեց.

— Ասում են հենց ինքը Լենինն է։

Հասարակ զգեստով մարդն աչքերը չռեց։

— Հենց ինքը՝ Լենի՞նը։

Նրանց կողքին կանգնածները ևս մի անհանգիստ շարժում կատարեցին։ Լայնեզր, բայց մաշված ու խունացած գլխարկով մի պարոն աֆիշան նայելիս անհագ ծծում էր բերնի սիգարը. նա ընկերոջը բոթեց, ասելով.

— Ինչ էլ լինի՝ ես այսօր Փեհլևի գնացողը չեմ, պիտի մնամ, այս նկարը նայեմ։

— Իսկ Խալիլը կթողնի, կգնա։

— Ուր ուզում է գնա, ես այս նկարը պիտի տեսնեմ։

Նա ընկերոջ թևը քաշելով տարավ դեպի կինոթատրոնի դրամարկղը։

Կինոթատրոնի մուտքի մոտ հավաքվածների շուրջը անընդհատ պտտվում էին երկու ոստիկան և ունկնդրում մարդկանց խոսակցությունը։ Իզուր էր նրանց զգուշությունը, այդտեղ ոչինչ վատ բան չպատահեց։ Ինչպես միշտ, այս անգամ ևս հանդիսատեսները գալիս էին, տոմսեր գնում և սովորականի պես մեկ-մեկ, երկու-երկու և կամ խումբ-խումբ ներս մտնում դահլիճ։ Տարբերությունն այդ օրվա և ուրիշ օրերի մեջ այն էր, որ կինոնկարի ցուցադրումից կես ժամ առաջ դահլիճն արդեն լեփ-լեցուն էր։ Ոմանք, տեղ չունենալով, կանգնած էին պատերի տակ։

Ահա մարեցին լույսերը։

Էկրանի վրա երևացին կինոժուռնալի կադրերը։ Բոլորը լուռ դիտեցին։ Երբ վերջացավ կինոժուռնալը և էկրանին երևաց Լենինը, դահլիճը միահամուռ ծափահարեց.

— Լենինն է, Լենինն է,—լսվեցին այս ու այն կողմից։

Այնուհետև դահլիճը քարացած հետևում էր Լենինի շարժումներին։ Միայն տեքստի պարսկերեն թարգմանությունը կարդալու ժամանակ բարձրաձայն կարդացողների ձայները մի քանի իրար էին խառնվում և խլույն էլ կտրվում, երբ էկրանին նոր կադրեր էին երևում։ Դահլիճն էլեկտրացած հետևում էր Լենինին։ Հանդիսատեսներից շատերը թեպետ և լսել էին Լենինի մասին, բայց չէին տեսել, թե ինչպես է նա ղեկավարել մասսաներին նրանց ազատագրական պայքարում, ինչպես է նա ստեղծել մի հասարակարգ, ուր շահագործողներ — տերեր, բուրժուաներ, կալվածատերեր չկան, ուր բոլոր մարդիկ իրար հավասար են։ Իսկ այժմ նրանք այդ տեսնում էին իրենց սեփական աչքերով։

Ինձ համար այդ նկարի ցուցադրումը մի դահլիճում, ուր աշխատավոր մարդկանցից բացի կային նաև մի քանի տղրուկներ, չտեսնված բան էր։ Ի՜նչ էին մտածում կիտած հոնքերով, խոժոռած դեմքերով այդ պարոնները՝ դժվար էր ասել։

Միայն երկու օր հետո պարզվեց նրանց միտքը։

Երկու օր հետո կինոթատրոնի տիրոջը ներկայացավ քաղաքի ոստիկանապետը և ասաց.

— Այդ նկարը պետք է հանել։

Կինոթատրոնի տիրոջն այդ կարգադրությունը չէր կարող չզարմացնել։

— Ի՞նչու պետք է հանեմ,—հարցրեց նա ոստիկանապետին։

— Քաղաքի ֆաբրիկայում բանվորները «շուլուղ» են անում։

— Բայց նկարը ցուցադրելու համար Թեհրանից պաշ-

պորտ անեմ,— ցանկացավ արդարանալ կինոթատրոնի տերը։

— Միևնույնն է։ Քաղաքում լուրջ դեպքեր կլինեն, քեզ պատասխանատվության կկանչենք։ Ավելի լավ է հանիր նկարը։ Բաակի ֆաբրիկայում եղածը վատ նշան է...

Բաակի ֆաբրիկայում ոչ մի «շուլուղ» չէր եղել։ Բանվորները մի քանի պահանջներ էին ներկայացրել՝ իրենց աշխատանքի վիճակը բարելավելու մասին, իսկ ֆաբրիկայի տերերը շտապել էին վերագրել դա «Լենինը Հոկտեմբերին» կինոնկարին։

Պարոն Վիլսոնը գիտեր, թե ինչ էր անում։

Նա, ոստիկանությունը, բանկի դիրեկտորը և մի քանի միլիոնատերեր աշխատում էին ձեռք-ձեռքի տված։

Միթե՞ այդ նրանք չէին, որ մեջլիսի ընտրությունների ժամանակ ժողովրդական պարտիայի կողմից առաջադրված դեպուտատության թեկնածուի դեմ խուլիգանական հարձակում կազմակերպեցին Ռեշտի շրջաններից մեկում՝ Փոմենում։

Ոզա շահի տապալումից հետո Իրանը հայտարարվեց «դեմոկրատական» երկիր։ Նոր կարգերում պետք է լիներ խոսքի, խղճի ազատություն։ Սակայն ի՞նչ ազատության մասին խոսք կարող էր լինել, երբ ռեակցիան ամեն կերպ արգելակում էր ժողովրդին բաց անել աչքերը, ինքնագիտակցության գալ։ Խոսում էին դեմոկրատական կարգերի մասին, իսկ ժողովրդին արգելում էին նայել մի կինոնկար, ուր ցուցադրված էր աշխարհի բոլոր ճնշվածների առաջնորդ Լենինի պայքարը շահագործողների դեմ։

Զարմանալու ոչինչ չկա։ Բուրժուական երկրներում ազատության մասին եղած բոլոր տեսակի խոսակցությունները լոկ կեղծիք են։

ՆՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐ

Մեր մի զորամասը տուն վարձեց շուկա տանող փողոցի ...ա։ Երկհարկանի այդ տունը պատկանում էր տեղի՝ հա-

բուստներից մեկին։ Նման տներ նա ուներ մի քանի տեղ, ինչպես նաև Թեհրանում։ Դրանք նա վարձով տալիս էր և փող վաստակում։ Ճիշտ է, եղածների մեջ մեր վարձածն ամենից հարմարն էր. ուներ բակ, ուր երկու թթենու, մի սալորենու, երկու նռնենու տակ ավազան կար՝ գեղեցիկ, գույնզգույն ալյուսներով զարդարված, սակայն ցամաք։

Բակի չորս կողմի պատերն այնքան բարձր էին, որ հարևան տները և ընդհանրապես դրսի աշխարհը չէր երևում։

Երևում էր միայն երկինքը։

Այդտեղ ապրելու համար սակայն, հարկավոր էր վերանորոգում կատարել։ Բակը, սենյակները կեղտոտ էին, հորի ջուրը բորբոսնած էր, խոհանոցի համար տեղ չկար։

Տնատերը շահեց։

Ընդամենը մի քանի օրվա ընթացքում սենյակները նորոգվեցին, բակից դուրս տարվեց տարիներով կուտակված կեղտը։ Բակի մի մասը հատկացվեց վոլեյբոլի խաղադաշտին, մյուս մասում կառուցվեց ճաշարան՝ իր խոհանոցով։ Ջրհորը մաքրվեց հենց առաջին օրը, դեզինֆեկցիայի ենթարկվեց, ավազանը լցվեց ջրով։ Խոհանոցում աշխատող աղջիկներն անհայտ է որտեղից ոսկե ձկնիկներ գտան, բերին բաց թողին ավազանի մեջ։ Դրանք՝ ոսկե ձկնիկները մի քանի օր բոլորի հիացմունքի առարկան էին։

Աղջիկ և տղա մարտիկներ հավաքվում էին ավազանի շուրջը, հացի փշրանքներ գցում ջրի մեջ և երբ ձկնիկներից երկուսն ընդհարվում էին փշրանքը կուլ տալու համար, բոլորը ծիծաղում էին։

Ինչ խոսք, որ նոր բնակիչների հայտնվելը Ռեշտի այդ թաղում, շարժում էր հարևանների հետաքրքրությունը։ Նրանք մինչ այդ տեսել էին մեր զինվորականներին փողոցում, սակայն նրանց մոտիկից չէին ճանաչում։ Տեղացիներին երևի զարմացնում էր և այն հանգամանքը, որ մեր զորամասում աղջիկներ ու կանայք կային, որոնք միշտ ինչ որ

բանով զբաղված էին, գործ էին կատարում և նույնիսկ հրա-
ցան առած մուտքի մոտ պահակ կանգնում:

Դա առանձնապես հետաքրքրում էր իրանցի կանանց: Առաջին շաբաթները խառն ամբոխը խռնված մեր շենքի առաջ, հետևում էր զորամասի կյանքին:

Այդ օրերին մի անգամ պահակ էր կանգնած տուլայեցի մարտիկ Իրան: Ընդամենը 22 տարեկան այդ աղջիկն ուղղակի գեղեցկուհի էր: Նա ուներ նուրբ դիմագծեր, գեղեցիկ աչքեր, բալի պես կարմիր շուրթեր, ձյունի պես ճերմակ ատամներ, փոքրիկ ծնոտ: Խոսելիս շիկնում էր մանկան պես:

Նրանից տասը-քսան քայլի վրա խմբվել էին մարդիկ և նայում էին նրան: Նման դիտողներին անսովոր աղջիկը կիսագանգատով դիմեց փոխգնդապետ Ալերյանովին.

— Ընկեր փոխգնդապետ, դե դրանք ինչ են հավաքվել ու նայում են անվերջ:

Ալերյանովն իր սովորության համաձայն լիաթոք ծիծաղեց և ապա ասաց.

— Ի՞նչպես չնայեն. ապա ինքդ նայիր քեզ: Իսկական կուկլա ես, բայց հրացանը ձեռիդ:

— Է, ընկեր փոխգնդապետ, դուք էլի կատակում եք:

— Ապա ի՞նչ անեմ. ուղարկեմ Պրիշիբեևի նման արգելե՞մ մարդկանց նայել: Եվ քեզ ի՞նչ կարող են անել նայելով, թող ինչքան կուզեն նայեն: Վաղը ես դեռ դրանց համար համերգ կկազմակերպեմ:

Դրա հետևյալ օրը փոխգնդապետ Ալերյանովն իր առանձնասենյակի պատուհանում դրեց «Պիոներ» ռադիոընդունիչ և այն միացրեց Բաքվին, որտեղից ամեն օր համերգներ էին հաղորդում: Շենքի դիմաց խմբվողների թիվը բազմապատկվեց: Ադրբեջանական երաժշտությունը նրանց շատ էր դուր գալիս: Դա առանձնապես պարզ երևաց այն ժամանակ, երբ Ռեշտ եկավ ադրբեջանական երգի ու պարի անսամբլը: Տեղացիները նույն ոգևորությամբ ընդունեցին նաև Հայֆիլհարմոնիայի երգի ու պարի անսամբլը՝ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ: Նրանց համար անսամբլը

ելույթ ունեցավ Սերգեևի կինոթատրոնի շենքում, ուր դահլիճը ծայրեծայր լիքն էր։

Բայց այդ ամենը հետո էր։

Այն օրերին, երբ մենք շենք վարձեցինք Ռեշտի հեռամնաց այդ թաղում, շատերի համար Բաքվից լսվող համերգներն էլ չտեսնված նորություն էին։

Այդտեղ մեր տան շքադուռը բացվում էր փոքրիկ, կեղտոտ հրապարակի վրա։ Դեմը գտնվում էր Ռեշտի 40-ից ավելի մեչիդներից մեկը՝ իր առջևի փոքրիկ ավազանով։ Դեպի աջ ցածրիկ, կոյուղու լճացած ջրերով շրջապատված հյուղակներ էին։ Դրանց առաջ, հենց ուղղակի հրապարակի վրա աղբի մեծ դեզ էր կուտակվել։ Բնակիչներն աղբը հեռու չէին տանում, հենց այդտեղ էլ թափում էին։ Ամառը նոր միայն սկսվել էր, իսկ այդտեղով անցնել չէր լինի. աղբակույտից անտանելի հոտ էր փչում, մոտ գտնվող մեչիդի, խրճիթների, մեր շենքի պատերը սևանում էին ճանճերից։

Թողնել հրապարակը նույն վիճակում մենք չէինք կարող։ Զորամասի հրամանատարը կարգադրեց անմիջապես մաքրել այն աղբից։ Բերին ավտոմեքենաներ, հարթիչ մեքենաներ, մեր լեյտենանտներից մեկի ղեկավարությամբ սկսեցին հրապարակը կարգի բերել։ Ինչ խոսք, որ մեր հարևանները բավական ուրախ էին դարավոր այդ կեղտը մաքրելու համար, որի մասին տեղական իշխանությունները երբեք չէին մտածել և հաղիվ թե մտածեին։ Նրանք առավոտից մինչև երեկո կանգնած նայում էին հարթիչ մեքենայի աշխատանքին։

Բայց ահա թե ինչ պատահեց այդ ժամանակ։

Աղբակույտի տակ, երբ բավական փորել էին գետինը, հայտնաբերվեց հնամենի գերեզմանոց։ Մինչ այդ, քանի աղբը էին մաքրում, խոսող չկար, հենց որ աղբի տակից հայտնաբերվեց առաջին գերեզմանը, այդտեղ եկավ դիմացի մեչիդի մոլլան։ Նա ծեր էր, կնճռոտ դեմք, պղտոր ու չար աչքեր,ցանցառ միրուք ուներ։ Գլխին կապում էր մեծ չալմա, ձեռքին շարունակ սև հատիկներով համրիչ էր պահում։

Այս անգամ, որպես բացառություն, ձեռքերը գոտու տակ խոթած, նայեց գերեզմանոցին, ինչ որ բան մրթմրթաց։

— Ի՞նչ է ասում,—հարցրեց մեր լեյտենանտը։

— Մոլլան ասում է սա սուրբ տեղ է,—թարգմանեց տեղացիներից մեկը։

— Մենք այդպես էլ գիտեինք,—կատակեց կապիտան Զուլիմովը,—դրա համար էլ անմիջապես սկսեցինք մաքրել աղբից։ Ի՞նչպես կարելի է գերեզմանոցը թողնել աղբի տակ։

Մոլլան, որ եկել էր բողոքելու, խոսք չգտավ ասելու։ Նա գնաց, վերադառնալով ավելի մեծ կոչում ունեցող հոգևորականի հետ։ Երկսով նորից նայեցին, նորից ասացին, որ գերեզմանոցին չպետք է ձեռք տվեր։

— Իսկ դուք գիտեի՞ք, որ այստեղ գերեզմանոց է։

Ավագ մոլլան, ըստ երևույթին ունկնդիրների միտքը պղտորելու նպատակով ասաց.

— Իհարկե, լսել էինք։

— Լսել էիք և թողել աղբի տակ. հոգու մեղք եք կատարել,—ասաց Զուլիմովը խռպոտ ձայնով։ Երբ նրա ասածը թարգմանեցին, մեր շուրջը խմբված տեղացիներն անկարող էին զսպել իրենց ծիծաղը։

Աղբակույտը մաքրելուց հետո մեր հրամանատարի կարգադրությամբ նույն այդ տեղը ցանկապատվեց, ապա բերին զանազան ծաղիկներ ցանեցին։

Դա չտեսնված ապտակ էր մեր դիմացի մեչիթում ծառայող մոլլաներին։

Այդ մեչիթը պատկանում էր մահմեդական կրոնի ինչ որ աղանդի։ Ամեն օր, երեկոյան ժամի 6-ից մեչիթում կրոնական արարողություն էր լինում։ Աղոթողները մեչիթ մտնելու համար մուտքի մոտ գտնվող ավազանում լվանում էին իրենց ոտքերը, ձեռքերը, երեսները, ոմանք էլ նույն ջրով բերաններն էին ողողում։ Հաճախ մեկը փոքրիկ ավազանի մեջ ոտքերն էր լվանում, իսկ մյուսը մոտենում էր, ձեռքով ջրի երեսի կեղտը դեն անում, ապա բերանի խոռոչը ողողում։

Մի անգամ համբերել չկարողացա և մեկին ասացի.

— Ինչու եք այդպես անում, չէ՞ որ դա առողջության համար վտանգավոր է։

Նա պատասխանեց.

— Ջուրը կեղտ չի վերցնում։

Այդ ահավոր միտքը նրանց անշուշտ ներշնչել էին տվյալ հոգևորականները, մեչիդը։ Դրանից հետո բնավ զարմանալի չէր, երբ մեչիդի առաջ բազմաթիվ հաշմանդամներ կային, որոնց նմաններն աշխարհի այլ անկյուններում հազիվ թե գտնվեին։

Որպեսզի մի ավելորդ անգամ ես համոզվենք, թե կրոնն ինչպես է այլանդակում մարդկանց, բավական է գեթ մի անգամ տեսնել «Շախսեյ-վախսեյի» տոնը։

Նույն տարվա դեկտեմբերի 12-ին մի ահավոր աղմուկ ակամա ինձ դուրս մղեց տնից։ Փողոցում հանդիպեցի փոխ-դեսպաններ Ավերյանովին և Սորոկինին։ Նրանք էլ պակաս չէին զարմացած։

Աղմուկը լսվում էր մեչիդից։

— Ի՞նչ է պատահել,—հարցրին նրանք, բայց ինքս էլ չգիտեի, թե ինչ աղմուկ է դա։

Մեչիդում լույսը մերթ մարում էր, մերթ վառվում։ Երբ մարում էր, ներսում հավաքված հավատացյալները միաբերան կանչում էին.

— Վայ ՛ալլա՞հ։

Դրսում կանգնած մի իրանցու հարցրի.

— Այս ի՞նչու են այդպես անում։

— Սուրբ Հուսեինի մահվան ազատոնն է,—բացատրեց նա,—հիմա դեռ առաջվա նման չէ։ Առաջ հավատացյալները դաշույնով զարկում էին իրենց գլխին։ Հիմա այդպես չէ։ Հիմա մոլլան սև շոր է հագնում, պատմում Հուսեինի սպանության մանրամասնությունները։ Հավատացյալներն էլ բաց են անում իրենց կուրծքը, ծեծելով կանչում. «Վայ, ալլա՞հ»... Երբ վերջանում է կուրծքը ծեծելը, լույսը վառում են։

— Իսկ դու ի՞նչու այնտեղ չես,— հարցրեց Սորոկինը մեզ բացատրություն տվողին։

— Ես բանվոր մարդ եմ, վաղը շուտ գործի պիտի գնամ, այնտեղ ի՞նչ գործ ունեմ։

Մենք հեռացանք այդտեղից, զրուցելով քրիստոնեական և մահմեդական կրոնների տարբերության մասին։

— Է, բարեկամներս, — բացագանչեց փոխգնդապետ Ավերյանովը,— աշխարհում հիմար բաներ շատ կան։ Եթե իմանաք, թե ինչպես ինձ կնքեցին։ Երեք անգամ խոթեցին ավազանի սառը ջրի մեջ· քիչ էր մնում խեղդվեի։

Նա ինքն էլ սկսեց քահ-քահ ծիծաղել իր սուտի վրա։ Եվ, ընդհանրապես, Ավերյանովը ե՞րբ չէր ծիծաղում։ Ամենուր, ամեն տեսակի խոսակցության մեջ ծիծաղելի մի բա՛ն գտնում էր։

«ՎՈԼԳԱ-ՎՈԼԳԱՆ» ԵՎ ՄՈԼԼԱՆ

Ինձ թվում էր, թե մեր շենքի դիմացը գտնվող աղբանոցը ծաղկանոց դարձնելուց հետո մոլլայի հետ մենք խոսելու առիթ չենք ունենա։

Սակայն այդ առիթն ինքն իրեն ստեղծվեց։

Արդեն մի քանի շաբաթ էր, ինչ մենք գտնվում էինք նոր շենքում և ոչ մի կինոնկար չէինք դիտել։ Իրանական կինոթատրոններում ցուցադրում էին մեր անձնակազմի համար անհետաքրքիր և անհասկանալի նկարներ։ Մենք ինքներս կինոնկարներ ստանում էինք, սակայն ցուցադրելու տեղ չունեինք։

Նոր շենքի բակն արդեն այնպես էին զբաղեցրել, որ ողջ անձնակազմը ոչ մի կերպ չէր տեղավորվի այնտեղ։

Չգիտեմ, թե ում գլխում ծագեց հենց փողոցում կինոնկարներ ցուցադրելու միտքը։ Չէ՞ որ մեր շենքի առաջ բավական ազատ տեղ կար։

Դրսից մեր շենքի ճակատին ճերմակ քաթան փակցրին, ապա երկար նստարաններ շարեցին։

Երեկոյան դեմ եկավ շարժական կինոն, կանգ առավ հենց մեջտեղի դեմ։

Կինոմեխանիկը նոր սկսել էր փորձել, տեղը հարմարեցնել, երբ հարևան տներից, նեղլիկ փողոցներից դուրս թափվեցին երեխաներ, կանայք, տղամարդիկ և լցվեցին հրապարակը։ Բայց ոչ ոք չէր ենթադրում, թե տեղացիներն այդպես կհետաքրքրվեն կինոյով։ Գալիս էին երիտասարդ կանայք՝ ծծկեր երեխաներին գրկած, ծերերը։ Շուտով ամբողջ հրապարակը ծայրեծայր լիքն էր հանդիսականներով, որոնցից շատերն ըստ երևույթին իրենց կյանքում առաջին անգամն էին կինոնկար տեսնում։ Հրապարակում տեղն այնքան նեղացավ, որ հանդիսատեսներն սկսեցին իրար բոթել, իրենց համար տեղ անել։ Բազմաթիվ մարդիկ բարձրացել էին կտուրները։

Այդ պահին ինչ որ տեղից ավտոներ եկան, բայց որովհետև ամեն օրվա պես հրապարակով անցնել չէին կարող, ուստի ստիպված շուռ եկան և ետ գնացին։

Քանի դեռ չէին սկսել նկարը ցուցադրել, հրապարակում աղմկում էին, կանչում իրար, սաստում այս ու այն կողմ շարժվել ցանկացողներին։

Բայց ահա կինոն սկսվեց և հրապարակում տիրեց մեռելային լռություն։

Ցուցադրում էին «Վոլգա—Վոլգա» նկարը։

Ինչ խոսք, որ «Վոլգա—Վոլգա»-ն առանց ծիծաղի դիտել անհնարին է։ Սովորաբար խաղաղ այդ թաղում հարյուրավոր մարդկանց ծիծաղը հնչում էր շատ բարձր և ըստ երևույթին քաշում, այդտեղ բերում բազմաթիվ նոր հանդիսատեսների։

Մեր թաղի բնակիչները երբեք երբեք այդպես չէին ուրախացել։

Կինո նկարը վերջանալուց հետո շատերը դեռ կանգնած շարունակում էին նայել։

Իհարկե, շատ լավ էր։ Ո՞մ մտքով կանցներ նրանց ձրի կինոնկար ցույց տալ։

Բայց արի տես, որ բոլորն էլ մոռացել էին շատ կարևոր մի բան։

Կինոնկարի ցուցադրումն սկսվել էր երեկոյան ժամի ութն անց 30 րոպեին։ Եթե հաշվի չառնենք, որ ժողովրդի շատության պատճառով մեջիդ մտնելն ու դուրս գալը անհնարին էր դարձել, ապա չէր կարելի անտեսել այն հանգամանքը, որ հանդիսատեսների ծխածն ուղղակի անհնարին էր դարձրել կրոնական արարողությունը։ Սակայն և՛ առաջին և՛ երկրորդ դեպքում մենք ոչնչով մեղավոր չէինք։ Մեր զորամասի անձնակազմի թիվն այնքան էլ մեծ չէր։ Մերոնք բոլորը տեղավորվում էին նստարանների վրա, որ զբաղեցնում էր հրապարակի չնչին մասը։ Մեր հետևը ահագին բաց տեղ էր մնում, որտեղով ոչ միայն մարդիկ, այլ և բեռնատար ավտոներ կարող էի անցնել։ Այդքան տեղն զբաղեցնում էին իրենք՝ իրանցիները։

Հետևապես, ի՞նչ մեղք ունեինք մենք, երբ հետևյալ օրը մեզ մոտ եկավ մոլլան և ասաց.

— Ձեր նկարը երեկ մեզ խանգարեց. այնքան ժողովուրդ էր հավաքվել, որ ոչ մեջիդ կարելի էր մտնել և ոչ էլ մեջիդից դուրս գալ։

— Մենք նրանց չենք հրավիրել. նկարը մեր զինվորների համար է, իսկ ձերոնք թող չգան,—ասացինք մեր հարևան մոլլային։

— Ախր գալիս են։

— Դուք էլ ասեցեք, թող չգան։ Մենք ոչ մեկին չենք հրավիրում, հրավիրատոմս չենք ուղարկում։

Մինչ մեզ դիմելը մոլլան լավ չէր մտածել և ամենայն հավանականությամբ այդպիսի պատասխանի չէր սպասում։

Եվ, իսկապես, մենք ի՞նչ իրավունք ունեինք արգելելու մարդկանց, որպեսզի նրանք կանգնեն հրապարակում,

բարձրանան իրենց տան կտուրները։ Ուրիշ բան է, եթե նրանք մեզ խանգարեին։ Սակայն նրանք մեզ բնավ չէին խանգարում։ Մեծ ուշադրությամբ դիտում էին նկարը, մեզ հետ ծիծաղում, մեզ հետ ծափ տալիս։ Եվ վերջապես մեչիդին էլ ոչ ոք չէր խանգարում։ Մեչիդի դուռը բաց էր նրանց առաջ. նրանք կարող էին ուղղակի ներս մտնել, աղոթել ալլահին, ինչպես արել են տարիներ շարունակ։ Մենք ի՞նչ մեղք ունեինք, որ նրանք կանգնում էին, նկարը նայում։

— Մենք նրանց վրա ոչ մի իշխանություն չունեինք. ձեր քաղաքացիներն են, ինքներդ վարվեցեք նրանց հետ ինչպես կցանկանաք,—ասացինք ու ճանապարհ դրինք մոլլային։

Ամեն անգամ, երբ մեր շարժիչ կինոն երևում էր այդ հրապարակում, կարծես ամենից շատ տխրում էր մի մարդ՝ մոլլան։

Իսկ մեր հարևանները շատ ուրախ էին։

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՐՏԵՍԸ

Մեչիդի կողքին, հենց ուղիղ մեր տան դիմաց, իր խանութում աշխատում էր մի ծեր թիթեղագործ։ Բավական հետաքրքրական անձնավորություն էր այդ ծերուկը։ Երբ նա ծալապատիկ նստում էր ջարդված բանկաների, դույլերի, թիթեղի կտորտանքների արանքում, դժվար էր ասել որևէ բան ինքը պատրաստու՞մ է, թե ջարդում, փչացնում։ Նա ինքը նստած տեղը շատ նման էր ջարդված, ճխլտած դույլի։ Նայելով նրան, դժվար էր ասել, թե քանի՞ տարի առաջ է սափրվել, քանի՞ տարի առաջ վերջին անգամ երեսը լվացել, որովհետև աչքերի տակ թվում էր, թե տարիներ ճպուռն է նստած։ Նրա գլուխը ճաղատ էր. վզին մոտ մնացած հատ ու կենտ մազերը ճերմակ էին, մաշկը չոր։ Չոր էին նաև նրա ձեռքերը։ Կարելի էր զարմանալ, թե ինչ հրաշքով է նա շարժում ուժասպառ այդ ձեռքերը։ Նրա հաճա-

խորղները մեծ մասամբ կանայք էին։ Նրանք ծերուկին պատվիրում էին ճրագներ, փոքրիկ ջրամաններ, թիթեղյա ռաժակներ և կամ նման բաներ էին բերում, որ նա նորոգի։ Իր հաճախորդների հետ ծերուկը խոսում էր խզված ձայնով, դժգոհությամբ, երբեմն նույնիկ կռվելով։ Մերթ գինը չէր նրան դուր գալիս, մերթ հաճախորդների պահանջները։

— Ի՞նչ եք ուզում, երեք ղրանով ոսկեջրած ճրագ եմ տալիս,—ասում էր նա, ցույց տալով կոնսերվի թիթեղից պատրաստած ճրագը։

Եվ չնայած նրա կռվին, չնայած շատ-շատերի դժգոհությանը, ծերուկը շարունակ հաճախորդներ ունենում էր։ Ի՞նչպես չունենար, ո՞վ կհամաձայնվեր նրա նման էժան ամաններեն պատրաստել։ Այս թաղի համար ծեր թիթեղագործն ուղղակի գյուտ էր։

Բայց ահա թե ինչ դժբախտություն պատահեց այդ ծերուկի հետ։

Մեր այդտեղ գալուց մի քանի օր հետո ոստիկանությունը կարգադրեց ծերուկին փակել իր խանութը, փոխադրվել ուրիշ տեղ։ Պատճառը նրան չասացին և այդ էլ զայրացրեց նրան։ Երեսուն տարի նա նստել էր այդ խանութում, ոչ ոք ոչինչ չէր ասել, իսկ այսօր, չգիտես ինչու, կարգադրում էին փակել խանութը։

Նա շատ մեծ սխալ կատարեց։ Կանգնեց իր խանութի առաջ և որքան ձույլ էին տալիս նրա ուժերը, բղավեց.

— Ինչի փակեմ, ախր ո՞ւմ եմ մի վնաս տվել, ո՞վ ա կանգատավոր...

Ծերուկին տարան ոստիկանատուն, տասներկու օր պահեցին և երբ բաց թողեցին, նրա խանութում նստած էր մի ուրիշ մարդ։

Սա արդեն ծեր չէր, այլ մոտ երեսուն տարեկան, առողջ, բավական գեղեցիկ մի երիտասարդ էր։ Նրա խանութը շատ բանով էր տարբերվում հարևանների խանութից։

Հարևանները ածուխի, նավթի, նոր թխած հացի հետ գոնե ծախում էին կոճակ ու ասեղ, օճառ ու հինա, սխտոր ու թելավել ու պանիր, խուրմա ու մածուն, իսկ այս խանութպանը վաճառասեղանին դրեց մի քիչ սոխ, սիսեռ, ածուխ և որովհետև գնորդներ չուներ, առավոտից մինչև երեկո սկսեց հետևել մեզ: Երբեմն նա ձևացնում էր, թե քնած է. բայց բավական էր մեզնից մեկն ու մեկը դուրս գար շքադռնից կամ մոտենար շքադռանը, որպեսզի նա տեղից վեր թռչեր և հետևեր, թե ուր ենք գնում մենք, ում հետ ենք խոսում:

Այսպիսով այստեղ գալու հենց առաջին օրերը մեզ համար միանգամայն պարզ էր, որ մենք գտնվում ենք գաղտնի հսկողության տակ: Նոր «խանութպանը», չնայած իր ապրանքների ասորտիմենտի սահմանափակությանը, իր խանութը բաց էր անում ամենից շուտ՝ առավոտյան ժամի 6-ին և փակում էր ամենից ուշ, երբեմն նույնիսկ գիշերվա ժամի 2-ին: Իսկ նրա հարևանները իրենց խանութները սովորաբար փակում էին երեկոյան ժամը 10-ին:

Դրանից հետո կյանքը ետ ընկած, կեղտոտ, մարդաքիչ հրապարակի շուրջը—կոյուղու, սապոնաջրով ու կեղտով շրջապատված փոքրիկ տնակներում քուն էր մտնում: Անքուն էր մնում միայն երիտասարդ խանութպանը: Նրա խանութի առջևից կախված փոքրիկ, ծխացող լամպը նման էր տրախոմայով հիվանդ, անընդհատ ճպացող աչքի: Երբ մենք մեր սենյակներում լույսը մարելով պառկում էինք քնելու, նոր միայն «խանութպանը» ծուլորեն ելնում էր տեղից, խանութի առաջ դրած մի քանի դդումը, կամ ընկույզի պես մանրիկ կարտոֆիլը ներս տանում, ապա մեկ ավելորդ անգամ նայում դես ու դեն ու գնում: Ըստ երևույթին նա շատ գոհ էր լինում, երբ մերոնք դրսում չէին ուշանում, ժամանակին գալիս էին տուն: Իսկ երբ պատահում էր, որ բավական ուշանում էին, նա ստիպված երկար էր նստում: Դա դեռ քիչ էր, իմ ընկերը որոշեց նրան ձեռք առնել: Մի երկու անգամ խանութը փակելուց հետո նա մեր սենյակում լույսը վառեց: «Խանութպանն» իր համար անսպասելի այս

բանը նկատելով, չիմացավ ինչպես վարվել։ Համենայն դեպս նա չուզեց նորից խանութը բանալ. կանգնեց նեղ նրբանցքի անկյունում, հետևեց, թե չլինի մենք դուրս ենք գալիս տնից կամ մեզ մոտ որևէ մարդ է գալիս։ Ո՞վ կարող էր գալ մեզ մոտ, ինչի համար պիտի գային։ Չէ որ ոստիկանապետն ինքն էլ այդ պետք է լավ հասկանար, բայց չգիտես ինչու իզուր փող էր ծախսում, լրտես վարձում մեզ հետևելու համար։ Դա ջղայնացնում էր մեր ընկերներից մեկին և նա շարունակ ասում էր.

— Պետք է ասել ոստիկանապետին, որպեսզի դրան այստեղից վերցնի։

Նրա հետ չէին համաձայնում.

— Դրան կվերցնի, մեկ ուրիշին կդնի, իզուր ինչու ասենք։ Հետաքրքրական է իմանալ, թե ինչքան ռոճիկ է ստանում սա։

— Ես հենց վաղը կհարցնեմ նրան։

— Դու այդպիսի բան մի արա,— ասացի ընկերոջս,— նա կվիրավորվի։

— Ես հո նրան չպիտի հայհոյեմ, որպեսզի նա վիրավորվի։ Կմոտենամ, շատ քաղաքավարի կհարցնեմ, «ի՞նչքան ռոճիկ ես ստանում ոստիկանապետից»։

— Չէ, ավելի լավ է արի մենք փորձենք դրանց. պետք է մի տուն ևս վարձել, այն ժամանակ տեսնենք ի՞նչ կանեն սրանք։ Առանց այդ էլ մեր տեղը բավական նեղ էր, հարկավոր էր նոր տուն վարձել։

Մի քանի օր հետո մենք տուն վարձեցինք նույն փողոցի վրա՝ շուկային շատ մոտ։ Այս անգամ ևս մեր տունը երկհարկանի էր։ Երկրորդ հարկը բաղկացած էր ընդամենը երկու սենյակից։ Ներքին հարկի երեք սենյակում ապրել չէր լինի. դրանք խոնավ էին, բորբոսնած։ Բակը շատ նեղ էր՝ խեղդված բարձր պատերի արանքում։ Բակում կանգնողը կարող էր տեսնել մի կտոր երկինք և ուրիշ ոչինչ։ Միակ ակացին արևի կարոտից կարծես կծկվել էր, խեղճացել։ Ավազանի և դրա կողքի հորի ջուրը կեղտոտ էր, բորբոսնած։

Տան դիմաց կար պայտարի մի խանութ։ Նրա կողքին կարճահասակ, նիհար մանրավաճառի և կլոր ու ճաղատ գըլխով պղնձագործի խանութներն էին։

Շուկայի աղմկոտ փողոցի վրա էր գտնվում մեր նոր բնակարանը։

Հին էին տները, մզկիթները, հին էր և փողոցը՝ իր մարդկային անվերջ հոսանքով և թվում էր, թե դարերով այդտեղ ոչինչ չի փոխվել։ Ամեն օր, ժամը ուղիղ 12-ին մեր հարևան, կիսակույր, հինայած մորուքով բրինձ, ոսպ, սիսեռ ծախող խանութպանը բարձրաձայն աղոթք էր անում։ Նրա երգի մելամաղձոտ, միօրինակ հնչյունները լսվում էին մոտ կես կիլոմետր հեռավորության վրա։ Առաջին պահ թվում էր, թե ինչ որ մեկը բարձրաձայն ողբում է իր հարազատի կորուստը։ Ջերմեռանդ հավատացյալը ծալապատիկ նստում էր խսրի վրա, ձեռքերը դնում ծնկներին և գլուխը ամբամբացնելով երգում։ Նրա երգի ձայնն ասես հնչում էր դարերի խորքից։

Շուտով մենք ականատես եղանք մեր փողոցում շատ արագ կերպով տեղի ունեցող մի փոփոխության։

Նոր բնակարան փոխադրվելու հենց երկրորդ օրը մեր տան դիմացը գտնվող պայտարի խանութը փակվեց։ Պայտարը ճիշտ է, տարեց մարդ էր, բայց այնքան էլ թուլակազմ չէր ,որպեսզի խկույն հիվանդանար։ Մինչ այդ, ամեն անգամ այդտեղով անցնելիս, մենք նրան տեսնում էինք իր փոքրիկ զնդանի մոտ՝ թաղիքի կտորի վրա նստած։ Իր մեխերի գլխիկները ծեծելիս մեկն էլ ասես աներևույթ ձեռքով նրա գլուխն էր ծեծում, որի պատճառով նա չէր կարողանում գեթ մեկ անգամ գլուխը բարձրացնել, նայել փուքս փչող, տաբոբիկ, մրոտ դեմքով տղային։ Հաճախորդ լինելու դեպքում միայն—երբ գյուղացիներն իրենց ջորիները, էշերը և կամ, հազվադեպ դեպքում, ձիերը կապում էին նրա խանութի առջևի սյունից, պայտարը բարձրանում էր տեղից, կուզեկուզ իջնում խանութի երկու աստիճանից և դրաստների սմբակները մեկ-մեկ նայելուց հետո անցնում գործի։

Ինչպես երևում էր նա հարևանների հետ քիչ էր շփ-

վում և իր հարևան համետագործի պես զրույցի մարդ չէր։ Բայց նրա խանութի դուռը նայում էր ուղիղ մեր շքադռանը՝ և հենց այդ պատճառով էլ նրա խանութը փակեցին։ Իսկ երկու օրից հետո այդտեղ փոխադրվեց մեր ծանոթ երիտասարդ «խանութպանը»։

Մեզ մնում էր միայն ծիծաղել ոստիկանապետի «հնարագիտության» վրա։ Գոնե մի լրտեսին փոխարինեին ուրիշով, որպեսզի մենք չհասկանայինք։ Բայց ըստ երևույթին հսկողությունը մեր վրա գաղտնի չէր։

Մեր «խանութպանն» էլ, ինչպես պատմեց բակը սրբող տղան, երբեք խանութպան չէր եղել. սովորել էր Թեհրանում, մինչ մեր այդտեղ գալը ծառայել էր Թեհրանի ժանդարմական վարչությունում։

Արդեն պարզ էր՝ տղան գաղտնի ոստիկանության ծառայող էր և այժմ իր ծառայության առաջին փորձերն էր կատարում։ Նրան այստեղ ուղարկողները կատարել էին ամերիկական իրենց խորհրդատուների հրամանը։ Արդեն բոլորին էր հայտնի, որ իրանական ժանդարմերիայի ղեկավարությունը կամաց-կամաց անցնում էր ամերիկացիների ձեռքը։ Նրանք՝ ամերիկացիները, Գիլանում կատարելու գործ չունեին, այլապես կլցվեին բոլոր քաղաքները։ Այստեղ նրանց փոխարինում էր գաղտնի ոստիկանությունը և ժանդարմերիան։

Մեր հսկիչը, ինչպես երևում էր, իր աշխատանքից բնավ չէր ամաչում։ Մեկ-մեկ նա ուղղակի ուզում էր ցույց տալ, որ իրեն հանձնարարված է մեզ հսկելու գործը։ Երբ մենք տնից դուրս էինք գալիս, նա կանգնում էր փողոցի մեջտեղը և երկար ժամանակ հետևում էր, թե ո՞ր կողմը կծռվենք մենք, ո՞ւր կգնանք։

Մի անգամ վճռեցինք նրա հետ ծանոթանալ։ Եթե ոչ որպես հարևան, գոնե որպես մեր «հսկիչը» նա արժանի էր դրան։

Ընկերոջս հետ պայմանավորվելով մոտեցանք նրա խանութին։ Ես սկսեցի նրան հարց ու փորձ անել։

— Անունդ ի՞նչ է։

— Սուրխայ։

— Իսկ խնկական անո՞ւնդ։

Նա քիչ շփոթվեց, բայց և այնպես իրեն չկորցրեց։

— Այդպես է անունս, աղա։

— Իսկ քանի՞ թուման ռոճիկ ես ստանում։

— Դե, տեսնում եք էլի, առևտուրս այնքան էլ հաջող չի։

— Իսկ ոստիկանապետը որքա՞ն է տալիս։

Նա հանցանքում բռնվածի պես խիլույն կարմրեց մինչև ականջների ծայրերը, շուրջը նայեց որ տեսնի չլինի՞ իմ ասածն ուրիշները լսեցին։ Դժբախտաբար մեզ մոտ ուրիշ մարդիկ չկային։ Միակ վկան ընկերս էր, որը հրճվանքով ժպտում էր։ Մեր խոսակցությունը նրա սրտովն էր։

— Ամեն ինչ ասա, ասա դրան, միևնույնն է, կվախենա, պետին ոչինչ չի ասի, եթե ասի՝ պաշտոնից կզրկվի,— ասում էր ընկերս թևս քաշելով։

— Լսիր, պարոն Սուրխայ,— ասացի ես, ընկերոջս ցանկությունը կատարելու համար,— քո պետին պիտի ասեմ, որ խանութդ փակի։ Ինչու իզուր ժամանակ ես կորցնում մեզ վրա։

Նրան ասմակեհի ավելի լավ կլիներ։ Խեղճն իր կյանքում երևի այդպիսի վիճակում չէր եղել։ Իր բոլոր գաղտնիքները մենք կես կատակով, կես լուրջ բաց արինք։ Դժվար չէր նկատել նրա հոգում տեղի ունեցածը։ Մեր խոսակցության մասին նա որևէ մեկին ասել չէր կարող—կխայտառակվեր։ Մնում էր լռել և այնպես ապուշ ձևանալ, ինչպես այժմ նա ձևանում էր՝ մեր առաջ կանգնած, հավասար, դեղեցիկ ատամները բացած, անիմաստ հայացքը մեր հայացքից դես ու դեն փախցնելով։ Նա, այդ ծախու հոգին, այնքան խեղճացած էր, որ խոսք չէր գտնում ասելու։

Մի քանի օր հետո այդ խանութը փակվեց, իսկ երիտասարդ խանութպանն անհայտ է ուր չքացավ։

ՌԵՇՏԻ ՇՈՒԿԱՆ

Քաղաքի կենտրոնից մեր տունը գնալու համար պետք էր անցնել շուկայով՝ Ռեշտի ամենամարդաշատ վայրով։

Մոտ մի կիլոմետր երկարություն ունեցող փողոցի երկու կողմերում կողք-կողքի խանութներ են։ Մինչև հիմնական շուկան մտնելը նեղ փողոցի երկու կողմից կոշկեղենի, կտորեղենի, արդուզարդի, գլխարկների, կարած շորերի, ակնեղենի, գորգերի, ժամացույցների խանութներ են—շատերն այնքան փոքր ու նեղ, որ նրանցում տերը հազիվ էր կանգնում։ Այդ փողոցով քայլելիս ամեն քայլափոխում լսում ես.

— Համեցեք գլխարկ տամ։

— Ամերիկական մատտակ...

— Շվեցարական նոր տեսակի գուլպաներ...

— Պաղպաղակ...

— Մատտակ...

— Ցրանսիական կրեպդիշին, տիկին...

Հրավիրողները խանութպանները և կամ նրանց օգնականներն են։ Շատ կանչելուց, շատ խոսելուց նրանց ձայնը խզվում է, բայց ո՞վ է դրան ուշադրություն դարձնողը։ Ի՞նչ մեծ բան է մարդու ձայնը դեղին ոսկու ընդոցի համեմատությամբ։ Թող հնչի ոսկին, թող շատ լինի այն և խանութպաններից շատերը կհամաձայնվեն զրկվել սեփական ձայնից։

Շնչափողի պես նեղ, աղմկոտ փողոցն առաջ գնալով ճյուղավորվում է։ Չորս-հինգ քայլ լայնքով փողոցներ են սկսվում՝ դարձյալ փոքրիկ ու մեծ խանութներով։ Այստեղ արդեն խանութները դասավորված են ըստ ապրանքների տեսակների։

Ահա ոսկեղենի, ակնեղենի կրպակների շարքը։ Նրանց տերերն իրենց փոքրիկ արկղիկներով, որոնց մեջ ամփոփված է նրանց հարստությունը, հազիվ էին տեղավորվում այդ կրպակներում։ Գլխահակ նստած՝ նրանք ջանասիրությամբ պատրաստում են մատանիներ, օղեր, ապարանջաններ, շըղ-

թաներ, կրծքանշաններ, հերակալներ, թանկագին քարեր են հղկում, հասարակ մետաղը շողշողուն ոսկի դարձնում, հասարակ ապակին՝ փիրուզ ու սուտակ, հասարակ խեցին՝ մարգարիտ... Նաշատրի, փոքրիկ մանղալների վրա ձուլվող մետաղի հոտն է զգացվում ամեն քայլափոխում: Թվում է, թե դա ոսկու հոտն է, որից մարդիկ արբել են, գլուխները կախել ու ննջում են, անվերջ ննջում՝ ինչպես հաշիշով հարբածները:

Այդ նեղլիկ փողոցին զուգահեռ ձգվում է գորգերի, կտորեղենի խանութների փողոցը: Սպահանի, Համադանի, Արդաբիլի, Ղազվինի գորգերը փռված են պատերի տակ, խանութների ներսում, դրանց տերերն ամենքից քիչ հաճախորդներ ունեն: Այստեղ արդեն ձանձրույթը, նիրհն ափաշկարա հաղթահարել է տերերին և ինչպես երևում է՝ չեն օգնել նաև տարբեր գույնի, տարբեր տեսակի՝ մանրահատիկ, խոշորահատիկ, դեղին և կամ սև համրիչների չխչխկոցները:

Ամենից ծերերն ու գործունյաները մանրուքի խանութների տերերն են: Նրանց հաճախորդներն համեմատաբար շատ են: Ներս են մտնում կանայք, աղջիկներ, տղամարդիկ և հազար ու մի տեսակ մանրուք՝ կոճակ, ժապավեն, ժանյակ, մետաքսե թելեր, ֆրանսիական-ամերիկական, անգլիական մարկաներով պուդրա, օդեկոլոն, ծծակ, ասեղ ու գնդասեղ են ուզում տեսնել, սակարկել՝ անգամ երբ խոսքը վերաբերվում է ասեղի գնին:

Խանութպանները մի ասեղ ծախելու համար լեզու են թափում, գովում՝ որքան կարող են, որքան շնորհք ունեն:

Վերջանում է այդ շարքը, կեղտոտ, տեղ-տեղ լճացած ջրերով փողոցը ձեզ տանում է դեպի մսագործների, մթերեղենի, չայխանաների, մրգեղենի, ղեյլան ծխողների խանութների շարքը: Այստեղ ևս, ինչպես և ամենուր, բրինձն ու օճառը, ոսպն ու մոմը, չամիչն ու ծծումբը դրված են կողք-կողքի:

Այս ու այնտեղ, հենց փողոցում շարժական խոհանոց-

ները տժվժիկ են պատրաստում։ Մսի հոտը, տաք գոլորշին երկինք է բարձրանում։

Փողոցում լճացած ջրերից կոյուղու հոտ է փչում, օդում վխտում են անհամար ճանճեր, որ պաշարում են կախած մսերը, քասիկներում դրված շաքարը, նստում տժվժիկ ծախողի բաց, ածիլված և զրաղված գլխին և սևացնում այն։ Նրանք ձեռք չեն քաշում արկղներով դրված չամիչից, թուզից, սև, ջարդված, կեղտի ու փոշու հետ ձուլված խուրմայից, փողոցներում դրված լաբլաբուց։ Նրանք ցանկանում են պաշարել նաև խաշ ծախողի գլխին դրած մեծ թաբաղն, սակայն վախեցած ետ են փախչում, որովհետև թաբաղային վրա դրած մանղալում կրակ կա, իսկ կրակի վրա, կաթսայում եռում է խաշը։ Այդպես մի ամբողջ խոհանոց գլխին դրած, խաշը գլխի վրա եռացնելով, մարդիկ առաջ են շարժվում՝ ծանրությունից ուռած աչքերով, փքված ու կարմրած վիզները ծռմռելով՝ ինչպես կրկեսում վարժեցրած ծովացուլեր, որ դունչերի վրա գնդակ են խաղացնում։ Խռնված ամբոխը ճեղքելով, անգամ չվախենալով մարդկանց հրմշտոցից, նրանք առաջանում են ու խռպոտ ձայնով կանչում.

— Խաշ, խաշ...

Ապա գալիս են հալվա, բաղրիջան, պոմիդոր ծախողներ, նույնպես մեծ թաբաղները գլխներին դրած։ Նրանք բոլորը կարծես իրար հետ մրցելով, ճարպկորեն անցնում են մարդկանց, հարդով, ածուխով, կանաչեղենով բեռնած էշերի, ջորիների կողքով, իրար հետ մրցելով գովում են իրենց ապրանքը։ Նրանց ձայնը միախառնվում է հարևան շարքի թիթեղագործների, պղնձագործների մուրճերի ձայներին, ուրիշ առևտրականների, գյուղացիների, գնորդների բացագանչություններին ու ստեղծում մի ժխոր, որ կարող է լինել միայն արևելյան շուկայում։

Մսագործների, ներկարարների խանութներից, բաղնիքներից, փողոցում լճացած պղտոր ջրից, սև ու սպիտակ թոքերից տժվժիկ պատրաստողների կաթսաներից բարձրացած հոտը, միախառնվելով անցնող բեռնակիր անասունների աղ-

րի հոտի հետ, թանձրացնում է օդը։ Անծանոթ մարդը կդժվարանա ասել, թե ինչի հոտն է գերակշռում օդում։

Շուկայից ոչ հեռու, հենց այդ նույն փողոցի վրա գտնըվում են մի շարք մզկիթներ՝ տարբեր ոճի, տարբեր ժամանակ կառուցված։ Դրանց ցանցապատ, երկաթակուռ դռներին կամ պատուհաններին կարելի է տեսնել հարյուրավոր փակ կողպեքներ։ Դրանք մուրազ ունեցողներն են կախել, բանալիները հետները տարել, որ մի օր գան տեսնեն իրենց կողպեքն ինչ-ինչ հրաշքով բացված։ Երբ այդպես լինի՝ ուրեմն կախողի ցանկությունը կկատարվի։

Անցորդները կանգ են առնում մեչիդների պատերի տակ, աղոթքներ մրմնջում, նոր միայն շարունակում իրենց ճանապարհը։ Ահա գալիս են երկու պառավ կին՝ սև չադրաներում պարուրված։ Երկուսով կանգ են առնում, աղոթում, ջերմ համբուրում մեչիդի սևացած պատը, նոր միայն շարունակում ճանապարհը։ Նույնն են անում լայնեզր գլխարկ դրած, ժամացույցի շղթան ժիլետի գրպանից թողած մի պարոն, ապա երիտասարդ մի աղջիկ... Իսկ ահա գնում է մշակը՝ ծանր բեռան տակ տնքալով։ Պարկի ծանրությունից նա այնքան է կքվել, որ թվում է ահա ուր որ է պետք է ընկնի։ Նրա պատառոտված շալվարի տակից երևում են մերկ սրունքները, որ ասես ուռել են, փքվել։ Մշակը նայում է միայն գետնին, իր ոտքերի տակ և նրան չի էլ հետաքրքրում, թե ինչեր կան իր աջ ու ձախ կողմերում։ Նա անցնում է՝ մեչիդի առաջ կանգ չառնելով։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ՈՒ ԺԱՆԴԱՐՄՆԵՐ

Սովետական հեռախոսային կապի լարերը մի քանի անգամ գողացել էին Ռեշտ-Ռուդբար ճանապարհին։

Մեզ հանձնարարվեց իմանալ ովքեր են այդ գողերը և ինչու ոստիկանությունը նրանց դեմ միջոցներ ձեռք չի առնում։

Այս գործով փաստորեն պետք է զբաղվեր Գիլանի ժանդարմապետը։ Չէ՞ որ դեպքը տեղի էր ունեցել քաղաքից դուրս՝ գյուղական շրջանում։

Ժանդարմերիայի գործը միայն գյուղի հետ էր։ Այստեղ գտնվում էր միայն նրա վարչությունը, որը քաղաքում տեղի ունեցած դեպքերին խառնվելու իրավունք չուներ։ Ժանդարմերիայի պետը նոր նշանակված, երիտասարդ ավագ լեյտենանտ աղայե Պիրին էր։ Այդ դեպքի առիթով՝ բանտարկվել էին չորս խանութպաններ և մի քեդխուդա։

Հեռախոսային կապի լարերը գտնվել էին խանութների կտուրներին, իսկ գյուղական քեդխուդան բռնվել էր գողության պահին։

Գործը լուրջ բնույթ էր ստացել և այն ոչ միայն չէին կարող հանձնարարել երիտասարդ ժանդարմապետին, այլև Ռեշտի ոստիկանապետ գնդապետ Շոլքաթին չէին վստահել։ Հատուկ մարդիկ էին ժամանել Թեհրանից. մեկը մի փոխգնդապետ էր՝ ժանդարմական վարչությունից, իսկ մյուսը՝ մի գնդապետ՝ բանակի գլխավոր շտաբի հետախուզական բաժնից։

Գիլանի ժանդարմապետը միշտ ընդհարման մեջ էր լինում ոստիկանապետի հետ, ուստի այժմ շատ դժգոհ էր, որ «իր կալանավորների» գործը քննվում է քաղաքի ոստիկանապետի մոտ։ Իր դժգոհությունը նա չէր կարողանում թաքցնել։ Գնդապետ Շոլքաթի հետ խոսելիս նրա գեղեցիկ, ճերմակ մորթով դեմքին կնճիռներ էին գոյանում, շուրթերը կծկվում էին, իսկ սև, խոշոր աչքերը մի տեսակ կարմրում։ Բայց ի՞նչ կարող էր անել, երբ բարձրաստիճան պետերը այդպես էին կարգադրել։

Թեհրանից ժամանած ժանդարմերիայի փոխգնդապետի մոտ ավագ լեյտենանտը խեղճացել, ճուտ էր դարձել։

Այդ ամենը մենք նկատեցինք հետաքննության ժամանակ։

Մենք կես ժամ ուշ գնացինք ոստիկանատուն։

Երբ մեր ավտոմեքենան կանգ առավ ոստիկանության շենքի առաջ և մենք իջանք, մուտքի մոտ կանգնած երկու ոստիկանը ձգվեցին։

Հերթապահ ոստիկանը մեզ առաջնորդեց պետի առանձնասենյակը։ Այն գտնվում էր երկրորդ հարկում։ Նախասենյակում, հանդերձանքի կախարանի մոտ, կանգնած էր մեկ ուրիշ ոստիկան։ Հերթապահը բարձր ձայնով կարգադրեց նրան.

— Աղաների գլխարկներն ընդունիր։

Դիտմամբ նա բարձր կարգադրեց, որպեսզի մենք լսենք։

Մեր գլխարկները ոստիկանին նետելով, ներս մտանք ոստիկանապետի առանձնասենյակը։ Դա գորգածածկ հատակով հսկայական մի դահլիճ էր, որի խորքում դրված էր սովորական գրասեղաններից երկու անգամ մեծ գրասեղան։ Գրասեղանի վրա շարված իրերն էլ՝ թանաքամանի սարքը, ծծանը, գրչակոթները սովորականից մեծ էին։

Հիսունից անց տարիքով, ճերմակահեր, մաքուր սափրված, փոքրամարմին ոստիկանապետը նստած էր Ռզա շահ Փեհլևիի պատկերի տակ։ Ամբողջ երկրում այդ օրերին դատափետում էին Ռզա շահին՝ երկիրն իմպերիալիստներին ծախելու, ժողովրդի իրավունքները ոտնահարելու համար, իսկ ոստիկանապետը նրա նկարը պահում էր իր գլխավերևը։ Նրա համար ոչինչ չէր փոխվել։ Եվ ի՞նչ կարող էր փոխվել։

Ռզա շահին փոխարինել էին ռեակցիոներները։ Նրանք էլ շարունակում էին իրենց նախկին տիրոջ քաղաքականությունը։ Երկիրն այժմ ծախվում էր ամերիկացիներին և անգլիացիներին։ Ոստիկանությունը, ժանդարմերիան ամերիկական և անգլիական իմպերիալիստների ձեռքի գործիքն էր Իրանում։ Գիլանում դա ստիպված էին աքողել։

Մեր՝ գնդապետ Շովքաթի առանձնասենյակը մտնելիս այդտեղ գտնվողները ոտքի կանգնեցին, իսկ ինքը Շովքաթը շուրջանցելով իր սեղանը, իր հասակին անհամապատասխան առույգ քայլվածքով եկավ մինչև դուռը, որպեսզի մեր ձեռքը

սեղմի։ Արևելյան շողոքորթությամբ նա մի քանի անգամ գլուխ տվեց, ասելով.

— Սալա՜մ, սալա՜մ…

Նույնն արեցին և ձախ կողմ—կլոր սեղանի շուրջը նըստած ընդապետը, ժանդարմերիայի փոխգնդապետը, տեղական ժանդարմերիայի պետը և քաղաքացիական հագուստով մի մարդ։

Նրանք մեզ առաջարկեցին աթոռներ։ Մեր նստելուց հետո իրենք էլ նստեցին՝ անհասկանալի բացագանչությամբ։

Առաջին պահ իմ միտքն զբաղված էր նրանով, թե ինչ կարող է զգալ կալանավորը՝ այս դահլիճի դռնով ներս մտնելիս։ Այս միտքն ինքն իրեն գլուխս եկավ. ոչ մի րոպե չէի կարողանում մոռանալ, որ մենք ներս ենք մտել ոստիկանատուն։ Ճիշտ է, առաջին պահ դա հեքիաթի նման մի բան էր թվում։ Ոստիկանության, ոստիկանատների մասին մանուկ հասակից ես միայն կարդացել էի և կյանքումս կենդանի ոստիկան չէի տեսել։ Այժմ իմ տեսածը ոչ թե հեքիաթ, այլ իրականություն էր։ Իմ աչքի առաջ նստած էին դաժան ոստիկանության գործիչները։ Ես գիտեի, թե որքան ազատախոհ մարտիկների նրանք կալանավորել են, տանջել զնդաններում, երբեմն խեղդել, թունավորել, գնդակահարել, կախաղան բարձրացրել։

Այդ ամենը կատարվել էր սրանց պես խնամքով հագնըված, խնամքով ածիլված, ուսադիրներով մարդկանց ձեռքով։ Նրանց ոչ ժպիտները, ոչ չափից դուրս քաղաքավարությունը և ոչ էլ կուլտուրական արտաքինը չէին կարող դուրս վանել այդ մտքերն իմ գլխից։

Թեհրանից ժամանած ժանդարմերիայի փոխգնդապետին նայելիս ինձ թվում էր, թե նա նոր միայն լվացել է ձեռքերի արյունը և այժմ ուժ է գործադրում վատ տպավորությունը մոռանալու համար։ Նրա ձայնը խուլ էր հնչում. ատեպատեպ չպացնում էր հաստ շուրթերը՝ բացելով դեղնավուն ատամները։ Նա անվերջ թարթում էր իր, հարբած մարդու աչքերի պես ուռած և հիվանդագին, աչքերը, տեղում ան-

հանգիստ շարժումներ անում, ասես ախտանելով, որ մարդկանց հետ խոսում է լեզվով և ոչ բռունցքներով կամ դագանակով։

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԻՐԱՆՈՒՄ ՀԱՐՑԱՔՆՆՈՒՄ

Նախ բերին մեկին։

Նրանց բոլորի համար անսովոր բան էր մեզ նման հյուրեր ունենալը և դա խիկույն զգացվում էր։ Նրանք բոլորը ցանկանում էին սովորականից ավելի քաղաքավարի լինել, սակայն այդ բանը ժանդարմերիայի փոխգնդապետին չէր հաջողվում։ Մի քանի րոպե մառներով սեղանը ոտկոտցնելուց հետո նա կարգադրեց ներս կանչել կալանավորներին։

Դա, ինչպես երևում էր, բանտարկության պահին հագին կարգին շոր չէր ունեցել։ Անհարմար գտնելով նրան պետի մոտ բերել գզգզված շորերով, կալանավորին հագցրել էին միայն մի անդրավարտիք, իսկ ոտքերին՝ բոբիկ գուլպաներ։ Փոխգնդապետը, որ հագին ուներ անգլիական ոստիկանության համազգեստ և զինվորական կիտելի տակից կապել էր սև փողկապ, կալանավորին տեսնելիս ճիշտ այնպիսի շարժումներ արեց, ինչպիսի շարժումներ կարող է անել վանդակի մեջ փակված վագրը՝ մսի տեսնելիս։ Նա դուրս ընկած ծնոտները կափկափելով ավելի մռնչաց, քան ասաց.

— Այսօր դու ճշմարտությունն ասելո՞ւ ես։

Կալանավորը խեղճ-խեղճ նայեց փոխգնդապետին և չկարողանալով տանել նրա սուր հայացքը, գլուխը կախեց ու լռեց։

Կամաց-կամաց մեզ համար շատ բան էր պարզվում ։

Իսկական գողերը դրսումն էին։

Ոստիկանությունը ձևի համար բանտարկել էր այնպիսի մարդկանց, որոնց հանցանքը թերևս ճանապարհին մոտ խանութներ ունենալու մեջ էր։ Իսկական գողերը գողությունը կատարել էին քաղաքական նկատառումով։ Ժանդարմերիան և ոստիկանությունը նրանց երբեք չէին ձերբակալի։

Ջեմնաու չէր։ Բայց որպեսզի նրանք մնան ստվերում, այս կալանավորներին հարկավոր էր ստիպել, իրենց հանցավոր համարել։ Այս ևս դժվար գործ էր։ Մարդիկ չէին ուզում կործանվել, չէին ուզում իզուր տեղը գնալ, կորչել։ Իսկ դա համբերությունից հանում էր հարցաքննողներին։

Մինչ այդ վերին աստիճանի քաղաքավարի, միշտ ժպիտը դեմքին ոստիկանապետը, համբերությունից դուրս գալով, վեր թռավ տեղից, մոտեցավ կալանավորին և նրա քթի տակ մատը թափ տվեց։

— Չեմ խմանում, աղայն դատավոր, չեմ խմանում։

Փոխդոդապետը ձեռքերը լայն տարածելով ձևացրեց, թե զարմանում է։

— Այ մարդ, ի՞նչպես թե չեմ խմանում։ Քեզ հարցնում եմ, այսօր ճի՞շտ ես խոսելու, թե երեկվա նման գլուխներս տանելու ես։

Բանտարկյալը մոտ քառասուն տարեկան էր, կիսաճաղատ, ծաղկատար դեմքով, ծուռ քթով, շեղ աչքով։ Երբ նա նայում էր փոխդոդապետին, ոստիկանապետին թվում էր, թե կալանավորն իր հետ է խոսում, ուստի մեկ-մեկ ձեռքով զնդապետին ցույց տալով ասում էր.

— Նրան պատասխանիր, նրան պատասխանիր...

— Հը, ի՞նչ ես լռում, հարցնում եմ ճի՞շտ ես խոսելու թե չէ։

— Աստված սիրեք, դատավորներ, մեղք եմ։ Հիմա ով գիտե երեխաներս, կինս ինչ հալի են։ Ոչ եղբայր ունեմ, ոչ բարեկամ, որ բան է օգնեն։ Աշխարհումս մեն-մենակ եմ։ Ես իմ գլխից ձեռ եմ քաշե՞լ, որ գնամ ուրիշի ապրանքը գողանամ։ Էն էլ ինչ ապրանք՝ սովետական զորքի ապրանք։ Բա ես անասուն եմ, գլխիս ձի է քացի տվել, խելքս հացի հետ կերել եմ։ Զինված մարդուց իմ կյանքում միշտ վախեցել եմ։ Ախր ի՞նչ գործ ունեմ։ Ես մենակ մարդ...

— Էլի դու սկսեցի՞ր։ Անասունի գլուխ, քեզ ասում եմ խոստացիր. ի՞նչպես էր, որ գողացար այդ լարերը։

— Ախր ես լար եք ասում, ինչ, հա, դրանից բան չեմ հասկանում։

— Բա որ չես հասկանում, ինչու էիր դրել խանութիդ կտրին։

— Դրել չեմ, ալլահով, սուրբ խմամով եմ երդվում, դրել չեմ. կտրված ձեռս լար չի տեսել. ես էլ չեմ տեսել։

— Հիմա տես ինչպես է ստում։

Փոխգնդապետը բարկացած դարձավ, քարտուղարին ասաց.

— Մի երեկվա արձանագրությունը կարդա։

Քարտուղարն արձանագրությունների թղթապանակը բաց անելով կարդաց մի քանի տող։

— Հասկացա՞ր,—հարցրեց փոխգնդապետը։

— Չէ։

— Զոռ, զահար։ Երեկ էլ մատդ դրել ես վրան, չհասկացա՞ր։

— Մատս դրել եմ, հասկացա։

— Հասկացա՞ր։

—Չէ, աղայե դատավոր, մատս դրել եմ, չհասկացա։

— Վա՛հ, այ մարդ, հայվա՞ն ես ինչ ես։ Դու ինքդ ես ասել, թե եկար խանութը, տեսար լարերի կապոցը, բարձրացար վերցնես, որպեսզի տանես թաղես։

— Վայ, ե՛ս ինձ թաղեմ, ուրիշի լարի հետ ի՞նչ գործ ունեմ, աղա, բա ես մենակ մարդ, աշխարհում ոչ բարեկամ ունեմ, ոչ ազգական, ի՞նչպես կարող եմ մենակ...

Էլի իրա երգն սկսեց։

Այստեղ հարցաքննությանը խառնվեց գնդապետը.

— Քո խանութում մինչ այդ սատանա եղե՞լ է։

— Աչքովս չեմ տեսել, պարոն դատավոր։

— Բա ո՞վ բերեց լարը քեզ մոտ։

— Չեմ իմանում, ով գիտի, մենակ մարդ եմ, դուրս եմ գալիս...

— Սպասիր, սպասիր,—նորից ընդհատեց փոխգնդապետը,—որպեսզի մենակ չլինես, ես քեզ ընկերներիդ հետ կըթաղեմ։ Դու երեկ ուրիշ երգ էիր երգում, էսօր ուրիշ, դրա համար չես իմանում, թե ինչ կանեմ...

Փոխգնդապետի սպառնալիքից վախեցած կալանավորն սկսեց լաց լինել, արցունքի միջից ասելով.

— Ես մի խեղճ մարդ եմ... ուրիշի հետ գործ չունեմ...

— Լռի՛ր,—սաստեց գնդապետը։

— Այստեղ հյուրեր կան,—լրացրեց փոխգնդապետը։— Ավելի լավ է միանգամից խոստացիր մեղքդ ու վերջանա։

— Ախր ի՞նչ խոստանամ։

— Դու լարի փաթեթը տեսա՞ր։

— Տեսա։

— Գրի՛ր,—քարտուղարին դիմեց փոխգնդապետը։

— Քո կտրի՞ն էր։

— Հա։

— Գրի՛ր։

— Ոստիկաններին ի՞նքդ տվեցի՞ր...

— Հա։

— Գրի՛ր։

— Քո խանութում եղած ապրանքի տերը դո՞ւ ես։

— Հա։

— Գրի՛ր։

— Լարն էլ քո խանութում էր. տերը դո՞ւ ես։

— Ախր դրա մասին ես բան չեմ իմանում...

— Ես քեզ երեկ ասացի, որ լեզուդ կկտրեմ սուտ ասելու համար։

Կալանավորը հոգնած, ճնշված գլուխը կախեց։

— Կաշիդ կքերթեմ, շան լակոտ, եթե չխոստովանես։

Այդ ասելիս նա մի ձեռքը դրել էր կողքին, մեջքից կորացել։ Զինվորական կիտելի վրա բոլոր կոճակները փայլում էին տիրոջ սառը, չարությամբ լի աչքերի պես։ Մատը թափահարելիս ցնցվում էր նաև նրա կողքից կախած ատրճանակը, իսկ հավաքօձիքի մեջ վիզը կարմրում էր, ասես ուռչում՝ երևան հանելով կապտավուն երակները։

Թեհրանից ժամանած գնդապետի ճակատին կնճիռներ էին գոյանում, համարյա սև թվացող շուրթերը գունատվում

էին։ Բարձրահասակ սևամորթ աչք ունքով, ալեծածան, փարթամ մազերով այդ մարդը ևս հանգիստ չէր կարողանում նստել։ Նրա ջղայնությունն արտահայտվում էր ուսերը կշեռքի նժարի պես վար ու վեր անելով։ Նա մերթ իջեցնում էր ձախ, մերթ աջ ուսը՝ փայլեցնելով մերթ մեկ, մերթ մյուս ուսադիրների երեք ոսկեհուռ աստղը։

Տեղական ժանդարմապետն իր գեղեցիկ արտաքինով և ծիրանագույն համազգեստով նման էր պիեսի ավյալ պատկերում խոսք չունեցող դերասանի։ Նա գլխով համաձայնության նշաններ էր անում մեկ ժանդարմերիայի փոխգնդապետին, մեկ գնդապետին և ըստ երևույթին խուսափում էր ոստիկանապետի կողմը նայելուց, նույն ծառայությունը նրան ևս ցույց տալուց։

Սրանցից բացի ներկա էր նաև քարտուղարը։ Նրա պարտականությունն էր գրի առնել մեղադրյալին տրված հարցերը և նրա պատասխանները։ Ուրիշ անելիք նա չուներ։ Մեկ-մեկ հարցաքննողները դիմում էին նրան, պահանջում կարդալ մեղադրյալի նախորդ պատասխանները։ Նա շտապ բաց էր անում հարկավոր էջը, գերագույն քաղաքավարությամբ մեկնում պահանջողին՝ զգալիորեն դողացնելով ցուցամատը և սպասելով նոր մի կարգադրության։

Մեղադրյալն իր վրա այդքան մարդկանց հայացքներն ունենալով, շփոթվում էր, նեղվում, հազում, աղերսագին խնդրում, որ իրեն հավատան։ Ի՞նչպես հավատային։ Նա ճշմարտությունն էր ասում, իսկ դատավորներին ճշմարտությունը պետք չէր։

Ոստիկանապետը զանգ տվեց, ներս մտավ հերթապահ ոստիկանը, կալանավորին դուրս տարավ։

ՏԱՐԱԿՈՒՍԵԼԻ ԳՈՂԵՐ ԵՎ ԱՆՏԱՐԱԿՈՒՍԵԼԻ ԱՎԱԶԱԿՆԵՐ

Մինչև մյուսի հարցաքննությունը, հայտարարվեց ընդմիջում։ Գնդապետը մեր ընկերներից մեկին առաջարկեց սի-

գարեթ, իսկ սա գրպանից հանեց «Լյուկս» ծխախոտ, հյուրասիրեց բոլորին։ Նրանց դուր եկավ մեր ծխախոտը. այն կարելի էր ծխել առանց մունդշտուկի։ Գնդապետը գլանակը ձեռքում պահած բարձր ասաց.

— Լավ է պատրաստած, ռուսակա՞ն է։

— Այո, սովետական է,— պատասխանեց մեր ընկերը։— Բայց սա ամենից լավը չէ։ Կան ավելի լավերը։

Գնդապետը մի տեսակ զարմացած բացագանչեց.

— Ես այդ չգիտեի։

— Միթե՞ այդքան քիչ բան գիտեք մեր երկրի մասին։

— Երևակայեցեք, այո։

— Իսկ բացի Իրանից ո՞ր երկիրը լավ գիտեք,— հարցրինք նրան։

— Ամենից լավ գիտեմ Ֆրանսիան։ Ես Փարիզում եմ կրթություն ստացել։

Նա չասաց «զինվորական կրթություն», իսկ մենք քիչ հետո պարզեցինք. նա Փարիզում զինվորական կրթություն էր ստացել։

— Եվ երևի շատ լավ գիտեք ֆրանսերեն լեզուն, գրականությունը։

— Իհարկե, իհարկե,— ինքնագոհ ժպիտը դեմքին պատասխանեց գնդապետը։

Քիչ հետո պարզվեցին տհաճ բաներ. նա ֆրանսիական գրողներից ոչ մեկին չէր հիշում։ Ավելին, նա շատ վատ գիտեր նաև հայրենի—պարսկական կլասիկ գրականությունը։

— Գիտեք ինչ,—միամտորեն և առանց ամաչելու ասաց նա, երբ խոսք էր եղել պարսկական կլասիկ գրականության մասին,—գրականությամբ ավելի շատ զբաղվում է իմ տիկինը. Նա նույնիսկ անգիր կտորներ գիտե ֆրանսիական գրականությունից։

Զարմանալին այն էր, թե ինչու այդ մարդը նման դեպքերում իր տիկնոջը հետը ման չէր ածում, որպեսզի մարդիկ նրա հետ զրուցեին։ Գոնե ամուսնուն կփրկեր։

Ամենից խորամանկը ոստիկանապետն էր։ Քաղաքում նրա քաղաքական համոզմունքների մասին ոչ ոք ոչինչ չգի-

ռեր։ Մեզ հրավիրելով իր մոտ, նա ցանկանում էր ցույց տալ, թե որքան լոյալ է դեպի մեր երկիրը։ Հին աղվեսը խորամանկ խաղ էր խաղում՝ հույս ունենալով կապել մեր աչքերը, իսկական հանցավորներին թողնել, որ շարունակեն իրենց գործը, իսկ երկրորդական մարդկանց վրա ճնշում գործ դնելով բանտարկել, գործի հետքերը թաքցնել։

Մեր վկայությունը սակայն ավելորդ բան էր և հենց դրա պատճառով էլ մենք հրաժարվեցինք հետագայում ներկա լինել նրանց հարցաքննությանը՝ որովհետև խղճի դեմ էր անվերջ հարցաքննել մարդկանց, որոնք ոչ մի հանցանք չունեին։ Միակ հանցավորը դրանց մեջ թերևս գյուղական քեղխուդան էր։ Մինչ գողության դեպքերը նա եղել էր Ռուդբարի գավառապետի մոտ։ Թե ինչո՞ւ էր կանչել նրան գավառապետը, կամ ինչո՞ւ էր ինքը գնացել նրա մոտ, նա չէր ասում, կամ ավելի ճիշտ ասում էր, որ գանգատ է ունեցել։ Սակայն դրան էլ մի երկու օր հետո ազատեցին։ Մնացին այն խանութպանները, որոնցից մեկին ձերբակալել էին իր հարսանիքի երկրորդ օրը։ Խեղճը լաց էր լինում, աղաչում, որ բաց թողնեն։ Սակայն մի՞թե հեշտ էր ոստիկանության ձեռքից ազատվել մանավանդ այն բանից հետո, երբ այդ մարդը պարզ ասել էր, թե ինքը ռուսների դեմ ոչ մի բան չունի։ Ոստիկանապետը դեմքը ծամածռելով բարկանում էր նրա վրա.

— Սուտ մի ասի, լակոտ, սուտ մի ասի։

Մինչդեռ դա հնչում էր այլ կերպ. «Ռուսների դեմ ոչինչ չունե՞ս, դե, մի ունեցիր, լակոտ, այ, տես ինչպես ունեցար»։ Դժվար էր նրան ասել, որ պրովոկատոր է, բայց փաստորեն այդպես էր։

Մենք գործ ունենք մի խումբ պրովոկատորների հետ։

Հետևապես մեր ներկայությունն այդտեղ այլևս ավելորդ էր։ Ամեն ինչ պարզ էր արդեն։

Մեղավորների նստարանին նստած էին անմեղ մարդիկ, իսկ իսկական գող-ավազակներն ազատության մեջ

չէին։ Նրանց իրանական ժանդարմերիան և ոստիկանությունը երբեք չէին ձերբակալի։

ԱՅԳԵՊԱՆ ԱԼԼԱՀՎԵՐԴԻՆ

Գարնան շունչը Ռեշտում շատ վաղ է զգացվում։ Օրեցօր դադարում են անձրևները, չքանում է մառախուղը։

Այգիներում խոնավությամբ հագեցած հողը գոլորշի է արձակում, ամբողջ ձմեռը կանաչ մնացած թփերի ցողաթաթախ սաղարթները դալարվում են, ուղղվում, ջերմ արևին գիմավորում ցնծալից արցունքներով։

Ապրիլին, երբ Մոսկվայում դեռ ցուրտ է լինում, այստեղ այգիներում գարնան հանդես են բացում ալ ու ճերմակ վարդերը, ուրախ երգում են սոխակները, ծլվլում են ճնճղուկներն ու ծիծեռնակները։

Մարդ ուզում է թողնել սովերոտ ու նեղլիկ, կեղտոտ փողոցները, շրջապատի մամռակալած, բորբոսնած պատերի կղմինդրները և ելնել բնության գիրկը, այնտեղ՝ նորածիլ կանաչի շրջապատում զգալ գարնան ջերմ շունչը։

Բայց ո՞ւր գնային ռեշտցիներից նրանք, ովքեր սեփական այգիներ, բոստաններ չունեին։ Քաղաքային միակ զբոսավայրը՝ ցածրիկ տներով, խանութներով շրջապատված այգին՝ ոչինչ գրավիչ չուներ։ Սենք այգիներն այստեղ այնքան էլ գրավիչ չէին։ Այգեգործությամբ զբաղվողները քիչ էին։ Քաղաքում լավ այգեգործի համբավ ուներ ծերուկ Ալլահվերդին։ Նրան շատերն էին ճանաչում։ Առաջին կեռասն ու թութը, ձմերուկն ու սեխը հայտնվում էր Ալլահվերդու խանութում, իսկ ծաղիկներ տարվա բոլոր եղանակներին նրա մոտ միայն կարելի էր գտնել

Ալլահվերդու այգին «ընտանիքավորների զբոսավայր» էր կոչվում։ Նրա մոտ մեծ մասամբ գնում էին ամուսնացած զույգեր, ընտանիքներ՝ իրենց երեխաներով—եթե միայն փող ունեն իրենց գրպանում։

Լսելով «ընտանիքավորների այգու» մասին, մենք ցանկացանք տեսնել այն։

Դրա համար պետք էր անցնել մի քանի ծուռ ու մութ փողոց, ապա դուրս գալ քաղաքի հյուսիս-արևմտյան կողմը։

Այգին ամեն կողմից ցանկապատած էր։ Մուտքի մոտ, դարպասի կողքին կառուցած էր գյուղական տիպի երկհարկանի տուն։ Վիթխարի թթենու լայն փռված ճյուղերի տակ անշարժ սեղաններ ու նստարաններ էին դրված։ Տան սանդուղքի մոտ երևում էին պաղպաղակի մի տակառ և գունավոր ջրերի ապակե անոթներ։

Նստարանների վրա, գետնին ամրացրած սեղանների շուրջը նստած հաճախորդներից ոմանք ախորժակով ճաշակում էին հյութալի մորին, իսկ մյուսներն սպասում էին մինչև ծերուկ այգեպանը նրանց ևս մատուցի։

Իսկ այգեպանը դեռ չէր երևում։ Նա գնացել էր այգու խորքերը՝ հաճախորդների համար մորի քաղելու։

Քիչ հետո խիտ ծառերի արանքից նա հայտնվեց՝ սկուտեղի վրա մորով լիքն ափսեներ շարած։

Դա կարճահասակ, թիկնեղ, տակավին առույգ, արծվաքիթ ադրբեջանցի մի ծերուկ էր՝ երկար բեղերով, աշխույժ, կենդանի աչքերով։ Նա հագին ուներ էժանագին մահուդից արխալուղ, իսկ գլխին դրել էր իրանական ֆես, որ միշտ գլխարկի տակից են կրում։

Մեզ տեսնելով նա վաղեմի ծանոթի պես բարևեց, ապա ձեռքի ափսեները սեղաններին դնելով մոտեցավ, նորից բարևեց, այս անգամ արդեն ավելի սրտառուչ։

— Եկել ենք այգին տեսնելու, ամի,— ասացի նրան։

— Այգին ձեզ փեշքեշ, ղուրբան, տեսեք ինչքան քեֆներդ կուզի։ Ձեզ նման հյուրերի համար այգուս դռները միշտ բաց են։ Եկեք, եկեք տանեմ ցույց տամ։

Նա իսկույն կռահեց, որ մենք հեռու տեղից եկած հյուր ենք, ուստի անձամբ առաջնորդեց դեպի այգու խորքերը։

Առաջացանք նեղ, կանաչապատ ծառուղիով, որն աջից ու ձախից զարդարված էր կարմիր ու ճերմակ վարդի թփերով, մարգարտածաղիկներով, արևադարձային լայնասաղարթ

բույսերով և ապա նորից գույնզգույն ծաղիկներով։ Ծառուղու երկու կողմերում փարթամորեն աճել էին տանձի, խնձորի, սալորի, նարնջի, կիտրոնի... ծառեր։ Այգեպանը չէր հոգացել, որպեսզի յուրաքանչյուր մրգատու ծառ իր շարքն ունենա։ Նա կարծես զուտ փորձի համար մրգատու ծառերը տնկել էր աչքը տեսած տեղը։ Եվ այժմ Բաթումի նարնջենու կողքին աճել էր Թեհրանի թթենին, Սոչիի սև սալորենու կողքին՝ Ապշերոնի թզենին, Գորիի խնձորենու կողքին՝ Ղազվինի խաղողի որթերը, նուռի թփերը։ Այդ բոլոր ծաղիկների, մրգատու ծառերի սերմերը և շյուղերը Ալլահվերդին ինքն անձամբ էր բերել տարբեր տեղերից։

Իր ութսուն երկու տարվա ընթացքում նա շատ տեղեր էր ման եկել։ Եղել էր նաև մեզ մոտ՝ Սև ծովի ափերին՝ Բաթումում, Սոչիում, Օդեսայում, Թբիլիսիում, Բաքվում։ Եվ ամեն տեղից իր հետ բերել էր մի սերմ, մի արմատ ու շյուղ, աճեցրել իր այգում։

Այժմ նա ցավով էր հիշում, որ ոչ մի կերպ չկարողացավ աճեցնել շագանակը։ Դա կամակոր դուրս եկավ։

— Աշխարհի բոլոր բույսերն այսպիսի մի փոքրիկ այգում աճեցնել հնարավոր չէ,—ասացի նրան, երբ նա ափսոսանքով գլուխը տարուբերում էր։

Եվ իսկապես, նրա այգին հազիվ լիներ մի հեկտար։ Ծաղկի, բույսի սիրահար ծերուկը ցանկացել էր այդքան տարածության վրա ամեն ինչ փորձել։ Տասնյակ տեսակի սերմեր էր ցանել, հետո սկսել էր պատվաստներ կատարել։ Երկար տարիների ընթացքում նա ահագին փորձեր էր կուտակել։ Բայց ո՞վ էր հետաքրքրվում նրա փորձով, ո՞մ ինչ գործն էր, թե ինչ է կատարում այդ ծերուկը քաղաքի ծայրամասում ընկած իր այգում։ Ինչ կուզի՝ թող անի։ Հաճախորդները բնավ չէին էլ հետաքրքրվում ծեր այգեպանի փորձով։ Նրանք միայն գիտեին, որ այստեղ ուտելու լավ մրգի, թութ, կեռաս ու բալ կա։ Մի քանի ղրանով կարելի է հենց այգում մի բաժին թարմ միրգ գնել, ուտել, շնչել ծաղիկների բուրմունքը և դեռ մութը չընկած գնալ տուն։

Տեր այգեպանը իր փորձով, գլուխբյամբ չէր կարող ծառայել ժողովրդին։ Նա ստիպված իր այգին դարձրել էր խանութի նման մի բան։

ՈՒՍՈՒՑԻՉ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԸ

Ես նրա՝ ալեհեր գործակատարի հետ ծանոթացա հենց խանութում, ուր ծախվում էր գործվածքեղեն, խմիչքեղեն, երշիկ, ապխտած միս, տարբեր տեսակի կոճակներ, հովանոցներ, գրպանի գրքույկներ, ծայրեր և մանկական խաղալիքներ։ Ներս մտա խանութ՝ Մ. Գորկու մի հատորյակը թևիս տակ, որի վրա մեծ տառերով գրված էր հեղինակի անունը։

— Ինձ հարկավոր է մի զույգ գուլպա,—ասացի՝ նրան բնավ չնայելով։

— Խնդրեմ, խնդրեմ։

Եվ նա դարակից վերցնելով իմ առաջ դրեց երեք գույնի գուլպաներ։ Մեր մեջ տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը։

— Ի՞նչ արժե զույգը։

— Չորս թուման։

— Ինչ թանկ եք ծախում։

— Այո, էժան չէ և որակն էլ մի բան չէ։

— Հետաքրքիր է. դուք առաջին ճշմարտախոս առևտրականն եք։

— Ես առևտրական չեմ,—խեղճ ասաց նա՝ մինչև ականջների ծայրը շիկնալով։

— Այսպիսի խանութի տերն էլ կասի ինքը առևտրական չէ՞։

— Ուր է, որ այս խանութը իմը լիներ։ Ես այստեղ ծառայող եմ։

— Ծառայո՞ղ։

— Այո, ի՞նչու եք զարմանում։ Այդ հարգելի հեղինակը քչերի՞ մոտ է ծառայել։

Եվ նա մատով ցույց տվեց թևիս տակ պահած գիրքը։

Ես ապշած նրան նայեցի։

— Ո՞ւմ մասին է ձեր խոսքը։

— Մաքսիմ Գորկու, որի գրվածքները դուք կարդում եք։

— Դուք գիտե՞ք Գորկուն։

Ծեր մարդու աչքերը փայլեցին։

— Իհարկե գիտեմ։

— Եվ ի՞նչ լեզվով եք կարդացել։

— Հայերեն և ֆրանսերեն, ես հայ եմ,—ասաց նա։

Նա մի քանի խոսքով պատմեց այն, որ ինքը դասատու է եղել, դպրոցը փակելու պատճառով հանձն է առել այդ գործը։ Եվ նորից վերադառնալով մեր զրույցի թեմային, նա և ուրիշ հեղինակներից մեկ-մեկ թվեց իր կարդացած երկերը։

— Ես միշտ էլ սիրել եմ ռուս գրականությունը, բայց դժբախտաբար քիչ եմ կարողացել ձեռք բերել։

— Իսկ ֆրանսերեն գրականություն կարողացե՞լ եք գտնե՞լ։

— Ինչ որ հնարավոր է եղել՝ գտել եմ։ Համենայն դեպս ֆրանսիական գրողներին շատ ավելի եմ կարդացել, քան նույնիսկ հայկական։ Հիմա է, որ ոչինչ չեմ կարողանում կարդալ։ Առավոտյան ժամի 10-ից մինչև գիշերվա ժամի 11-ը այստեղ եմ. առևտուր եմ անում,—քմծիծաղելով ասաց նա։

— Ուրիշի համա՞ր։

— Այո, ուրիշի համար։ Տերն ինձ աշխատավարձ է տալիս։

— Իսկ ի՞նչու ինքը չի կանգնում խանութում։

— Նա Թեհրանում է լինում։ Այս նրա խանութի բաժանմունքն է։ Ապրանքը բերում է, վաճառվածի փողը վերցնում ու գնում։ Այդ ամենը ոչինչ, բայց ցավում եմ, որ ուրիշ քաղաք փոխադրվել չեմ կարող. ընտանիքս շատ մեծ է։ Այստեղ իմ նախկին աշակերտներին տեսնելիս սիրտս ցավում

է։ Ախր մեղք են, մի բան չեն սովորում, իսկ տարիներն անց-նում են։

Այս ասելիս ծեր ուսուցչի ձայնը ցածրացավ. ասես ներքին ցավից դժվարանում էր խոսել։ Նրա խիտ, ճերմակ հոնքերը հուզմունքից բարձրանում իջնում էին, իսկ աչքերի մեջ շարունակ շողում էր կաթելու պատրաստ արցունքը։ Բավական էր մի քիչ էլ ավելի քրքրել նրա սիրտը, որպեսզի ալեհեր ուսուցիչը լաց լիներ։

— Տխուր է։

Ես ուզում էի նրան որևէ բանով սփոփել, բայց ի՞նչով կարող էի։ Սփոփանքի համար խոսք չէի գտնում։ Ինձ զարմացնում էր այն, ինչի մասին շատ էի լսել, կարդացել, բայց երբեք չէի տեսել։ Միթե՞ քիչ է գրված անգործ բժիշկների, ինժեներների, գիտնականների մասին, որոնք կապիտալի աշխարհում կարիքից ստիպված ռեստորաններում մատուցողի աշխատանք են կատարում, ստիպված դառնում են շվեյցարներ, կառապաններ և ով գիտե ինչեր։

Իսկ Իրանում գիտությունն առանձնապես չէր գնահատվում։ Եթե թանկ գնահատվեր գիտությունը, Ռեշտում դպրոցներից մի քանիսը չէին փակվի... աշակերտների պակասության պատճառով։

Մեր այդտեղ գտնվելու ժամանակ պարսկական գրող Ղանիի անվան և Թարբիաթ (դաստիարակություն) դպրոցներն աշակերտներ չունենալու պատճառով միացան, կազմեցին մի դպրոց։ Եղած դպրոցներում էլ բոլորը չէին կարող սովորել։

Ուսումը վարձով է՝ առաջին խմբից սկսած։ Առաջին տարվա վարձը ավելի քիչ է, քան հետագա տարիներինը։ Ամեն մեկն ուսման վարձի հետ մեկտեղ պետք է տա նաև վառելիքի վարձ։

Միջնակարգ դպրոցն ավարտելու համար պետք է սովորել տասնմեկ տարի։ Պարզ է, որ բանվորը, գյուղացին, արհեստավորն իրենց երեխաներին այդքան տարի վարձով ուսում տալ չեն կարող։

Դպրոցներում ուսման որակն այնքան էլ բարձր չէ։ Հարուստների, կարևոր պաշտոնյաների զավակները շաբաթներով կարող են դասի չգնալ և ուսուցչի ոչ մի հարցին չպատասխանել, իսկ քննությունների ժամանակ գերազանց գնահատական ստանալ։ Ի դեպ գերազանցը նրանց մոտ նշանակում է 20 թվանշանը։ Գնահատականներն սկսվում են մեկ թվանշանից և բարձրանում մինչև քսանը։ Վարչական մարմինները դպրոցական կյանքով առանձնապես չեն զբաղվում։

Քաղաքում իշխանությունը փաստորեն գտնվում էր այնպիսի միլիոնատերերի ձեռքին, ինչպիսիք էին ծխախոտի տեղական արքա պարոն Սիգարին, անգլիական իմպերիալիստների կամակատար, հեռախոսացանցի տեր Քուչեյ Սպահանին՝ իր եղբայրներով, կալվածատեր, վաճառական Նուրբախանը և ուրիշները։ Նրանք էլ հնարավորություն ունեին իրենց զավակներին ուսում տալու Թեհրանում, արտասահմանում։

Ժողովրդի լուսավորության գործում առանձնապես պարզ երևում էր կառավարության հետադիմական քաղաքականությունը։ Այս հարցի առթիվ մի անգամ առիթ եղավ խոսելու Իրանի արտաքին գործերի մինիստրության պատասխանատու աշխատակիցներից մեկի հետ։ Նրա ասածները սովետական մարդուն միայն կարող էին ապշեցնել։

ՆՈՎՐՈՒԶ

Գարնան սկիզբն էր, նոր տարեմուտի—1323 թվի էսֆանդի 1-ի (1944 թվի մարտի 21-ի) տոնակատարությունը[1]։ Քաղաքի յուրաքանչյուր հիմնարկի, յուրաքանչյուր խանութի, մզկիթի ճակատից կախված էին իրանական եռագույն դրոշներ։ Հիմնարկությունները փակվել էին հինգ օրով։

1 Մահմեդական տարեթիվը 621 տարի հետո է սկսվում։

Թեհրանից ժամանած ավիացիայի մի գեներալ և արտաքին գործերի պատասխանատու մի աշխատակից հրավիրեցին մեզ քաղաքից դուրս տեղի ունենալիք զբոսանքին մասնակցելու։

Նշանակված ժամին հավաքվեցինք հյուրանոցի առաջ, նստեցինք ավտոմեքենաները և դուրս եկանք քաղաքից։ (Ըստ տեղական սովորության այդ օրը բոլորն աշխատում են թողնել իրենց տները, որպեսզի անցյալ տարվա շունչը տներից չքանա)։ Այդ այդպես սավում էր, իսկ շատերը քաղաքից դուրս չէին գնում։

Մենք մեզ հյուր կանչողների հետ եղանք ինը հոգի։

Երբ մեքենա մեկը մյուսի հետևից տարան մեզ ծառուտից, նեղլիկ փողոցներով, ապա դուրս բերին Փասխան գետակի ափը, ուր մի քանի խմբեր, բնակչության ավելի ապահովված խավից, զվարճանում էին, զուռնա-դհոլ, թառ ու դուդուկ նվագում... հավաքվածների մեջ կային նաև կանայք և աղջիկներ՝ չադրաներով և առանց չադրաների։ Չադրաներով կանայք նման էին ծվարած կամ թևատած թռչունների։ Նրանք երբեմն միայն չադրաների արանքից մի աչքով նայում էին ուրախացողներին։ Իսկ հասուն, կենսալից աղջիկները երբեմն չադրաներն ուղղելու պատրվակով մի վայրկյանով բաց էին անում իրենց դեմքերը և իսկույն ծածկում։ Երկար ժամանակ դեմքը բաց պահելն անվայել բան էր համարվում նրանց համար։ Իսկ նրանք, ինչպես երևում էր, մի գեղեցիկ երիտասարդ տեսնելիս ցանկանում էին ցույց տալ իրենց գեղեցկությունը, որ հետամնաց սովորության պատճառով պետք է շարունակ փակված լիներ քողի տակ։

Ուրիշ ժամանակ դա գուցե և ավելի հեշտ տանելի էր, քան Նովրուզ բայրամի այդ օրը։ Պայծառ, հիասքանչ օր էր։

Գետափի ընդարձակ տարածությունը ծայրեծայր կանաչով էր պատած։ Անգամ մանր-կապտավուն քարերի և ավազի արանքը ճեղքելով գետնի տակից դուրս էին եկել կուժկոտրուկի պես դեղին, յասամանագույն, կապույտ, բաց վար-

դադուլն ծաղիկներ, աշխարհի առաջ բացել իրենց գեղեցկու-թյունը և ասես մարդկանց պես գարնան երգն էին երգում։

Գարնան երգն էին երգում և երկնքում սավառնող թռչունները՝ հավերժ ծլվլացող ծիծեռնակները, ճնճղուկները և հատ ու կենտ արտուտները։ Կամրջի մոտ, ինչ որ տնակի առաջ, գետակի ջրերում ճերմակ առագաստների պես շարվել էին մոտ տասը սագ։ Երբեմն նրանք թափահարում էին իրենց թևերը, գլուխները սուզում ջրի մեջ, ապա բարձրացնելով նայում իրենց զույգերին…

Մենք ավտոները թողնելով կամրջի մոտ, մի խումբ կազմած քայլում էինք ոտքով։ Տեսնելով շրջապատի տոնախմբությունը, ես ինձ հետ քայլող արտաքին գործերի մինիստրության աշխատակցին՝ մոտ քառասուն տարեկան, տակավին սև մազերով և գեղեցիկ արտաքինով այդ մարդուն ասացի.

— Տեսնո՞ւմ եք, ինչ որ ժողովրդական է՝ լավ է, գեղեցիկ։ Այդպես է և արվեստի, գրականության մեջ։

Նա միշտ դյուրությամբ էր արձագանքում իմ ասածներին։ Այս անգամ էլ առանց երկար մտածելու անկեղծորեն պատասխանեց.

— Այս երգերը, պարերը բոլորը գռեհիկ են, հանարակ։

Ես կանգ առնելով նայեցի նրա գեղեցիկ աչքերի մեջ, որոնք ինձ այդ պահին թվացին դատարկ և իմաստազուրկ։ Նա շարունակեց։

— Դրանք ինձ չեն ոգևորում, երևի շարունակ լսելուց է։

— Ներեցեք, դուք ի՞նչ կրթություն ունեք,—հարցրի նրան։

— Իրավաբանական։

— Թեհրանում ե՞ք ավարտել։

— Ոչ, Փարիզում։

«Սա էլ Փարիզում է ավարտել» ասացի ինքս ինձ։ Մի ժամանակ, ինչպես երևում է, այստեղ մոդա է եղել Փարի-

ղում կրթություն ստանալը։ Այս պարոնը հետո գործով եղել էր նաև Թյուրքիայում։

— Երևի հայրենի արվեստով, գրականությամբ քիչ եք զբաղվել,—նրան չվիրավորելու համար մեղմ նկատեցի ես։

— Ո՛չ, ինչո՞ւ,—արդարացավ նա,—ես շատ լավ գիտեմ մեր կլասիկ արվեստն էլ, գրականությունն էլ։

Նա թվեց իրենց կլասիկ գրողների, նրանց երկերի անունները, ամեն մի գրողի մասին ասելով. «Աշխարհում միակն է»։

— Ասացեք խնդրեմ, ի՞նչով բացատրել մի կարևոր բան,—հարցրի նրան,—հեռավոր անցյալում Իրանն աշխարհին տվել է այնպիսի հանճարներ, ինչպիսիք են ձեր թված գրողները՝ Խայամը, Սաադին, իսկ հետագայում, թեկուզ վերջին տասնամյակներում, մի շատ թե քիչ հայտնի գրող չի տվել։ Խոսքս Իրանից դուրս հայտնի լինելու մասին է. ի՞նչու իրանական գրականությունն այդպես վատ է զարգանում։

Զրուցակիցս դարձյալ մեծ անկեղծությամբ պատասխանեց.

— Մեր հին գրականությունը բավական է, որպեսզի նրանով հարյուրավոր սերունդներ դաստիարակվեն։ Նոր գրականությունն ի՞նչ նոր բան կարող է ասել. միևնույնն է, այն երբեք չի գերազանցի եղածին։ Բացի դրանից եվրոպական գրականությունն էլ շատ հարուստ է։

Պարզ էր։ Երբ իշխանության գլուխ կանգնած մարդիկ այդպես էին մտածում, ի՞նչ կարող էին նրանք ձեռնարկել հայրենի կուլտուրայի, արվեստի, գրականության զարգացման համար։

Մեր խոսակցությամբ ավիացիայի գեներալը միայն մի անգամ հետաքրքրվեց։ Նա ավելի զրուցում էր մեր ընկերների հետ, շարունակ ծիծաղում՝ լայն ուսերը ցնցելով։ Լսելով մեր խոսակցությունը գրականության մասին, նա հաստ վիզը մեր կողմը ծռեց ու ծիծաղելով ասաց.

— Լավը դուք եք անում, պատերազմից հեռու թեմաներից եք խոսում։

— Այնքան էլ հեռու չէ,—ասացի նրան։— Գրականությունն էլ զենք է։

Նա ծիծաղելով ասաց.

— Թղթից պատրաստած զենք։

Կարի՞ք կար գեներալի հետ վիճելու։ Կհասկանա՞ր նա, եթե հակառակն ապացուցվեր։ Հազիվ թե։ Նա սիրում էր պատմել իր թռիչքների մասին, բնավ չիմանալով, որ մեր մեջ ևս կար մեկը, որն անցյալում նրանից քիչ թռիչքներ չէր ունեցել, սակայն լռում էր, ոչինչ չէր ասում իր մասին։ Նա զրուցելով հաստատուն քայլերով մեզ առաջ էր տանում։

ՆԱԽԿԻՆ ԶԻՆՎՈՐԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ահա մի տեղ Ռեշտի շոֆերների մի խումբ ոտքի վրա քեֆ էր անում։ Կանաչի վրա դրել էին պատեֆոն, իրենք էլ մի-մի բաժակ ձեռքներին խմում էին։ Նրանցից քիչ հեռու կանգնած էր քաղաքում շատերին հայտնի փոքրիկ մարդատար ավտոմեքենան։

Ասում եմ քաղաքում հայտնի, որովհետև այդ մեքենան իր պատմությունն ուներ։ Դա շոֆերների և մեխանիկների սեփականությունն էր։ Մոտորը, հիմքը, անիվները գնել էին, իսկ ավտոյի վերնամասը ամեն անգամ նախքան գարաժից դուրս բերելը փոխում էին։ Այսօր նրանց մեքենայի վերնամասը 44-րդ անգամն էր փոխված։ Ամեն անգամ ավտոն փոխելուց հետո նրանք խմբով լցվում էին մեջը և երգով, աղմուկ, աղաղակով, անցորդ կանանց վիրավորելով, դուրս գալիս քաղաքից, գնում զբոսնելու, գետում կամ ծովում լողանալու։

Մեզ տեսնելով նրանցից մեկը գինու շիշն ու բաժակը ձեռքին մոտեցավ և դիմեց գեներալին.

— Հիշո՞ւմ եք ինձ։

Գեներալը նկատի ունենալով սովետական սպաների շրջանում գտնվելը կեղծ ժպիտով ասաց.

— Երևի իմ զինվորներից ես եղել։

Գինովցած շոֆերը դարձավ իր ընկերներին և պարծանքով բացագանչեց.

— Տեսնո՞ւմ եք, հիշում է...

Հետո նա գլուխը տարուբերելով նորից դիմեց գեներալին.

— Նրանք ասում էին, թե դուք ինձ մոռացած կլինեք։

— Վա՜հ, այսպիսի տղաներին կարելի՞ է մոռանալ— ավելի ուրախացավ գեներալը, մեզ նայելով։—Լավ տղաներ են։

— Սրանք էլ լավ տղաներ են,—ասաց շոֆերը,—հոգի տղաներ են։ Դրա համար էլ երեք տարի առաջ մեզնից ոչ ոք չուզեց սրանց դեմ կռվել։ Ես էլ, ճիշտ եմ ասում, չէի ուզում կռվել։ Մեջտեղ բաժանելու բան չկար։ Լավ մարդկանց հետ ի՞նչու կռվես։ Այ, հիմա տեսեք. անգլիացին որպեսզի հետդ խոսի՝ կարծես թե վարկ պիտի տաս, ամերիկացին, որ խոսում է—ասես ինքը մեչիդի գլխին է կանգնած, իսկ դու ցածրում, իսկ այս սովետական երկրից եկածներն եղբոր պես են, խմենք մեր Թանկագին հյուրերի կենացը...

Ես հետևում էի գեներալի դեմքի արտահայտությանը։ Նա այժմ ճիգ էր գործ դնում ծիծաղելու, բայց այդ նրան չէր հաջողվում։

Նախկին զինվորն իր շաղակրատանքով ոչ հաճելի դեպքեր էր հիշեցնում։ Իմպերիալիստների ոստայնի մեջ մոլորված ռեակցիոներները 1941 թվի օգոստոսին փորձ արեցին իրանական բանակը հանել մեր դեմ։ Այն ժամանակ Իրան էին մտել նաև անգլիական զորքերը, սակայն գլխավոր հրամանատարությունն զբաղված էր միայն սովետական զորքերի ընթացքը կասեցնելու խնդրով։ Իզուր էին գլխավոր հրամանատարության ջանքերը։ Իրանական բանակն իսկույն զենքը ցած դրեց։ Դրա պատճառը մեր բանակի հզոր ուժն էր։ Ճիշտ

է. բնավ կռվել չցանկացողներ էլ եղել են։ Այդ մասին գուցե և չպետք է խոսվեր, բայց ռուսական առածն ասում է. «Այն, ինչ զգաստ մարդու մտքումն է, հարբածի շրթունքի վրա է»։

Գեներալը, որ մինչ այդ մտադիր էր միանալ այդ խմբին, այժմ միտքը փոխեց, իր նախկին զինվորին հրաժեշտ տալով առաջ անցավ։

Մեր ավագ ընկերը խմբի հյուրասիրության գործն իր վրա վերցրեց։ Նա տղաներից մեկին ավտոյով ուղարկեց քաղաք. ուտելեղեն և խմիչք բերելու։

Քիչ հետո ավտոն վերադարձավ։

Կանաչ խոտը դարձրինք սփռոց։ Բաժակները բարձրացրինք։ Գեներալն իմ աչքին հանկարծ փոխվեց։ Նորից աչխուժանալով նա ասաց.

— Ես առաջարկում եմ խմել Սովետական քաջ Բանակի կենացը։ Միայն զինվորականը կարող է պատկերացնել ձեր բանակի հզոր ուժը և նրա գլխավոր հրամանատար մարշալ Ստալինի հեռատեսությունը։ Ձեր բանակի, մարշալ Ստալինի կենացը։

Բոլորս կանգնած խմեցինք այդ բաժակը։

Խմիչքով քիչ տաքանալուց հետո գեներալը գաղտնիք հաղորդողի ձևով ասաց.

— Նախկին իմ այն զինվորը խելոք բաներ էր ասում։ Ամերիկական զինվորականներից ոմանք Թեհրանում իրենց անվայել կերպով են պահում, աղջիկներին են վիրավորում, կռիվներ են սարքում փողոցներում։ Իսկ ձերոնք իսկական հյուրեր են—քաղաքավարի, մի քիչ էլ ամոթխած...

Մյուս իրանցիները գլխով համաձայնության նշաններ էին անում։ Այլ բան նրանք ասել չէին կարող ոչ թե մեր ներկայությունից քաշվելով, այլ որովհետև Սովետական Բանակն իր ռևոլյուցիոն կարգապահությամբ արժանացել էր տեղացիների սիրուն։ Մենք այդ զգում էինք յուրաքանչյուր քայլափոխում և հպարտանում սովետական քաղաքացու, սովետական մարդու կոչումով։ Անգամ ամենախուլ և հեռավոր

անկյուններում մի փոքրիկ, մի չնչին բանից պարզվում էր, որ այստեղ բնակիչներն ուրախ են սովետական մարդ տեսնելու համար։ Նրանք իրենց ուրախությունն արտահայտում էին ամենաբազմազան ձևերով։

ԱՐԹՆԱՑՈՂ ԳՅՈՒՂԸ

Մի անգամ ինձ վիճակվեց գնալ Գիլանի խորքում, մեծ ճանապարհներից հեռու ընկած Ցոմեն գյուղը։ Դա շրջանի կենտրոն է հաշվվում և ընկած է Ռեշտից մոտ հիսուն կիլոմետր հեռու—դեպի հյուսիս արևմուտք։ Ռեշտից դուրս եկանք ճաշից հետո, երբ արդեն արևը թեքվել էր։ Հենց քաղաքի մոտ անցանք Փասիխան գետով ձգված խարխուլ կամուրջը և դուրս եկանք մի դաշտավայր, ուր շուրջը ճահճուտներ ու բրնձի արտեր էին։ Այս ու այնտեղ արևի թեք շողերի տակ ասես արծաթի ձուլվածքով լի պլպլում էին վճիտ լճակներ։ Մեկը դրանցից, եղեգնուտով շրջապատված, ընկած էր ճանապարհի կողքին։ Լճափին երեք կիսամերկ երեխաներ փայտերով գլորում էին ջրից հանած կրիային և ուրախանում։ Փորի վրա ընկնելով կրիան սատմեռուկի էր տալիս, ապա զգուշությամբ գլուխը հանում, ուղղվում դեպի լիճը։ Երեխաները նորից աղմուկ էին բարձրացնում, նորից փայտերով շուռ տալիս նրան։

Հակառակ ափի եղեգնուտի մոտ վայրի բադերի մի երամ էր լողում։ Երեխաներից մեկը վերցրեց քարը և բարձր գոռալով՝ նետեց նրանց կողմը։ Բադերի երամը ջրից կտրըվեց, սրընթաց թռավ որոշ տեղ, ապա իջավ լճի մյուս ափին։

Թռչունների առատությունը ցույց էր տալիս, որ այստեղ շատ քիչ են զբաղվում որսորդությամբ։ Քիչ էին զբաղվում նաև ձկնորսությամբ։ Գիլանում ձկների բոլոր տեսակները չեն ուտում։ Փասիխան գետի ափին երկու ձկնորս պայթուցիկ նյութով ձկներ էին խլացրել։ Ջրի երեսն էին

դուրս եկել խլացած վիթխարի լոքոներ (սոմ)։ Նրանցից մի քանիսը քառասուն-հիսուն կիլոգրամ կշիռ ունեին։ Սակայն իրանցիները դրանց մոտենալ անգամ չեն ցանկանում։ Հենց այդ պատճառով էլ Փասիխան գետը հարուստ է այդ ձկնով։ Ջրապտույտներում, գետի խոր, դանդաղահոս վայրերում թոռ ձգելու ժամանակ անպատճառ գտնվում են խոշոր լոքոներ, որոնց ջրից հանելու համար հարկավոր են մի քանի հոգի։ Խոշոր լոքոները բավական ուժեղ են, ճարպիկ և երկար դիմադրում են ջրից դուրս հանելիս։

Փասիխան գետը մի կողմ թողնելով, մենք առաջացանք նեղ, խորդուբորդ ճանապարհով։ Մեր բախտից եղանակը տաք էր, ճանապարհները չորացած էին։ Անձրևային եղանակների ժամանակ այդպիսի ճանապարհով ոչ մի ավտոմեքենա չէր դնա։ Ճանապարհի վրա աջից ու ձախից խոնարհվել էին մոշի, մասուրի թփեր։ Դաշտերում, ցածրիկ, ծղոտածածկ խրճիթների առաջ խոնարհվել էին միայնակ ուռենիներ։ Տեղ-տեղ պատահում էին նեղլիկ ջրանցքներ, որոնցով հոսում էր Փասիխանի պղտոր ջուրը։

Անծանոթ ճանապարհը, մանավանդ երբ երթևեկողները քիչ են, միշտ երկար է թվում։ Այս ճանապարհի վրա երթևեկողներ համարյա թե չկային։ Ամբողջ ճանապարհին մեզ հանդիպեց միայն մի բեռնատար ավտոմեքենա՝ հավերով բեռնված։ Դժվար էր ասել, թե քանի՞ հավ են տեղավորել իրար վրա դարսած արկղներում։ Ավտոն իր հավասարակշռությունը հազիվ էր պահպանում։ Գնալիս նա այնպես էր թեքվում, որ վերնամասում դարսված արկղներում հավերը թփրտում էին՝ թողնելով օդում բազմաթիվ փետուրներ։ Մեր տեսածը միայն դա էր։ Ապա մի կածանից լայն ճանապարհը ելան երեք գյուղացի, տարբեր նշաններով խնդրեցին, որ մենք կանգնեցնենք ավտոն.

— Ի՞նչ է պատահել,— հարցրի նրանց։

Նրանք քրտնած էին, հոգնած. ինչպես երևում էր հեռվից էին գալիս։

— Գնում ենք Ցոմեն, որը մոտնում է, խնդրում ենք մեզ էլ վերցնեք։

Մեկը դրանցից մոտ քառասուն տարեկան էր՝ կարճահասակ, լայն ճակատով, սև աչք ունքով, խուրջինն ուսով գցած։ Երկրորդն ավելի երիտասարդ էր՝ թաղիքե գլխարկով, տանը գործած կտորից կարած դարչնագույն չուխայով, իսկ երրորդը՝ մոտ քսան տարեկան նիհար, գունատ դեմքով պատանի էր։ Նա տրեխները թելով կապել էր միմյանց և ուսովը գցել։

— Իսկ ի՞նչ գործով եք գնում Ցոմեն,—հարցրի հասակավորին։

— Եղբորս բանտարկել են, ուտելիք ենք տանում։

Խեղճ մարդիկ էին, բայց օգնել չէինք կարող. մեր ավտոյում երեք հոգու համար տեղ չկար։ Մինչև կճանապարհվեինք՝ ընկերս սկսեց զրուցել նրանց հետ.

— Իսկ ինչո՞ւ են բանտարկել եղբորդ։

Գյուղացին, ինչպես կարող էր, պատմեց եղբոր բանտարկության պատճառները։ Շրջանում վերջերս մեջլիսի դեպուտատների ընտրություններ էին եղել։ Տեղի կալվածատերը կարգադրել էր ձայն չտալ ժողովրդական պարտիայի թեկնածուին և քաղաքի իր հարուստ բարեկամների հրամանով մարդիկ էր նախապատրաստել ժողովրդական պարտիայի թեկնածուին գյուղից դուրս վռնդելու՝ հենց որ նա համարձակվեր երևալ այս կողմերում։ Դեպուտատության թեկնածուն գալիս է, գյուղացիներից շատերը թույլ չեն տալիս, որպեսզի ավազակները նրա վրա հարձակվեն։ Դրանց թվում է լինում և մեզ հետ զրուցող գյուղացու եղբայրը։ Հետո կալվածատերն սկսում է մեկ-մեկ վրեժխնդիր լինել ըմբոստ գյուղացիներից։ Նա սրան— նրան կանչում է, հարցաքննում, ոմանց տուգանում է ծանր հարկերով, իսկ ոմանց բանտարկել է տալիս։ Այսպիսով տեղական մելիքը կատարում է Ռեշտում նստած իր տերերի կամքը, իսկ սրանք իրենց հերթին՝ Թեհրանի իրենց տերերի —ամերիկացիների ձեռքին հլու հնազանդ ռեակցիոներների կամքը։ Ռեակցիան ցանկանում է մեջլիսում ունենալ բացարձակ մեծամասնություն, իսկ դրա համար ձեռք է առ-

նում բոլոր միջոցները, որպեսզի ժողովրդի իսկական ներկայացուցիչները մեջլիսի դեպուտատ չընտրվեն։

Ամեն տեղ այդպիսի մեքենայություններ էին տեղի ունենում։ Թավրիզեցի մի դեմոկրատ պատմում էր։

«Ընտրությունների ժամանակ պայքարը դեմոկրատիայի և ռեակցիայի միջև ավելի սրվեց։

Շատ տեղերում գյուղացիներին շրջապատում էին և նրանց ստիպում քվեարկել ռեակցիայի թեկնածուների օգտին։ Կալվածատեր Վահաբ-Զադեն իր գյուղացիներին կանչում է և պահանջում, որ իրեն ձայն տան։ Ուջան—Սրաբի շրջանում Զրասխան գյուղից մի խումբ գյուղացիներ քվեարկելու համար հպարտորեն մոտենում են քվեատուփին։ Այդ շրջանի բաշխդարը հարցնում է գյուղացիներին. «ու՞մն եք ձայն տալիս»։ Նրանք պատասխանում են. «Թուդեին»։ Բաշխդարը քրքջալով ասում է։ «Ուրեմն դանակով խոսենք»։ Ժողովրդական պարտիան՝ Թուդեն ընտրություններին հսկելու համար երկու մարդ է ուղարկում Կուրու-չայ գյուղը։ Կալվածատերերը դեմոկրատների հաղթանակը տեսնելով գազազում են և 300 ձիավորի գլուխ անցած հարձակվում անզեն գյուղացիների վրա։ Պայքարն խիստ բնույթ է ստանում։Թշնամիները, վրիժառությամբ լցված՝ սկսում են Թուդեի օգտին ձայն տված գյուղացիներին հալածել, չարչարել։ Իհարկե, այդ բոլորը մենք գիտեինք և աշխատում էինք պաշտպանել գյուղացիներին...

Ընտրությունների ժամանակ ժողովրդական պարտիայի հասցեին նետված զրպարտությունները շատացան։ Հակառակորդներն այդ ստոր զենքին դիմեցին երևի մեզ՝ դեմոկրատներիս անակնկալի բերելու դիտավորությամբ։ Սակայն մեզ այդքան էլ հեշտ չէ ընկճել։ Պայքարում, այն էլ նման կարևոր պայքարում, նման դեպքեր շատ կլինեն։ Քաղաքական այս պայքարում ռեակցիան վաղ թե ուշ պետք է ջախջախվի»...

Այժմ մեր զրուցակցի պատմածից երևում էր, որ նույնպիսի քաղաքական սուր պայքար է տեղի ունեցել Գիլանի

շրջանում։ Այստեղ ևս ռեակցիան գործ էր դնել բոլոր միջոցները՝ դեմոկրատիայի թեկնածուներին տապալելու համար։

Սակայն Թավրիզի մարզում ռեակցիան այն ժամանակ հաղթանակել չէր կարող։ Այնտեղ ժողովրդական պարտիան բավական աշխատանք էր տարել՝ միշտ հալածված, աղքատության ճիրաններում տանջվող գյուղացիության հետ։ Գյուղացիության զգալի մասը հասկացել էր, որ իր ազատությունը նա ձեռք կբերի ժողովրդական պարտիայի օգնությամբ և դրա համար էլ պատրաստ էր ամեն ինչով օգնել այդ պարտիային։

Գիլանում նույնպես ժողովրդական պարտիան գյուղացիության մեջ բացատրական աշխատանք էր տանում, որի հետևանքով գյուղն արթնանում, ոտքի էր կանգնում խոշոր հողատերերի, ռեակցիայի դեմ։

Մեզ հետ զրուցող գյուղացիները ժողովրդական պարտիայի մասին ոչ մի հասկացողություն չունեին։ Բայց նրանք պատրաստ էին ամեն ինչով օգնելու նրանց, ովքեր պայքարում էին կալվածատերերի դեմ։

— Իսկ ի՞նչ անենք, որ մեքենայում տեղ չկա,—հարցրեցի ես, երբ այլևս խոսելու բան չմնաց։—Ձեզնից մեկին ու մեկին կարող ենք տանել. ո՞վ է ցանկանում։

Երիտասարդները հորդորեցին իրենցից ավագին նստել մեքենա։

— Մենք ոտքով կգնանք։

Խուրջինով գյուղացին մի րոպե տատանվելուց հետո համաձայնեց գալ մեզ հետ և նստեց շոֆերի մոտ։

Նա կյանքում առաջին անգամն էր ավտո նստում, ուստի շատ հուզված էր։ Ցոմեն հասնելուց հետո նա բառեր չէր գտնում մեզ շնորհակալություն հայտնելու համար։

ԱՆՊԱՏԻԺ ԴԵՂԱԳՈՐԾԸ

Ցոմենում ուշագրավ ոչինչ չկար։ Դա մեծ գյուղ է՝ մի լայն հրապարակով, որից նեղ փողոցներ են ձգվում

այս ու այն կողմ։ Տները միհարկանի են, գյուղական տիպի՝ ծղոտածածկ կամ հարթ կտուրներով, բարձր պարիսպներով։

Շրջանում զբաղվում էին բրնձի, ծխախոտի, հացահատիկների մշակությամբ, անասնապահությամբ, շերամապահությամբ և մեղվաբուծությամբ։ Վերջին տարիները սկսել էին նաև թեյ մշակել։

Գյուղամիջի հրապարակի վրա կար մի դեղատուն։ Դրա առջև էլ կանգ էր առել մեր ավտոն։ Ավտոյից ելնելու պես չէինք կարող ուշադրություն չդարձնել այդ կարևոր հիմնարկությանը, որ կոչված էր ծառայելու մոտ 5400 ընտանիքի։

— Համեցեք, համեցեք,—դեղատան խորքից դեպի դուռը գալով կանչեց երիտասարդ դեղագործը՝ խոստումնալից ժպտալով։

— Այդպես ջերմ հրավիրում եք, իսկ ի՞նչ կարող եք առաջարկել։

— Ինչ որ կամենաք։

Ընդարձակ սենյակի մեջ դրված էին երեք թե չորս պահարաններ, փոքրիկ արկղներով։ Դրանցից յուրաքանչյուրի վրա գրված էին դեղերի լատիներեն անունները։ Բացի դրանից դարակներում շարված էին ապակե մեծ ու փոքր անոթներ։ Ամեն մեկի մեջ լցված էր որևէ հեղուկ, աղ, փոշի։ Մի խոսքով ներս մտնողը, եթե հաշվի չառներ պահարանների, անոթների, փոքրիկ գրասեղանի վրա նստած փոշին ու կեղտը, կավածեփ հատակը՝ դեղատան տպավորություն կստանար։

— Իսկ դեղագործն ո՞ւր է,—հարցրի երիտասարդին։

— Դեղագործը ես եմ։

Իր արտաքինով նա ավելի կանաչեղեն ծախողի էր նման, քան դեղագործի։

— Իսկ դպրոցում ձեզ չեն ասել, որ դեղատանը միշտ պետք է խալաթով լինել։

— Ես դպրոցում չեմ սովորել։

— Ի՞նչպես, ապա որտե՞ղ եք սովորել։

— Աշխատել եմ դեղագործի մոտ։

— Առանց կրթություն ստանալո՞։

— Կրթություն ես որտեղի՞ց կարող էի ստանալ, երբ փոքրիկ հասակից որբ եմ եղել։ Կարիքից դրդված ծառայություն էի անում սրա նրա տանը։ Վերջին տարիները ծառայում էի մի դեղագործի մոտ. նա շատ բարի մարդ էր, գործի արանքում սովորեցնում էր...

Հենց այդ պահին դեղատան դուռը երևացին ցնցոտիներ հագած երկու գյուղացի։ Նրանցից մեկը երկու ձեռքով հենվել էր ձեռնափայտին, իսկ մյուսը՝ ձախ ոտքն էր կախել։

— Հը, ի՞նչ եք ուզում,—բարկացկոտ հարցրեց դեղագործը,—տեսնում եք զբաղված եմ։

Ոտքը կախած գյուղացու դեմքն այնքան տանջահար էր, որ մեր կողմից հանցագործություն կլիներ նրան այդ վիճակում երկար պահել։

— Ի՞նչ է ուզում նա։

— Դե ներս եկեք տեսնեմ ինչ եք ուզում։

Դրսից մինչև խանութի ներսը, ընդամենը երեք—չորս քայլ, գյուղացին առաջացավ տնքալով, ցավից դեմքի մկանները կծկած։

— Աղայե հաքիմ,—ներս գալով ասաց գյուղացին,— ոտքս ինձ սպանում է, մի ճար արա։

— Ի՞նչ է պատահել, մի բաց արա տեսնեմ։

Գյուղացին, մեջքը պատին հենելով, վեր քաշեց շալվարի մի քանի տեղից կարկատած փոխկը։ Նրա կեղտոտ, շատ վաղուց ջուր չտեսած սրունքի վրա թարախակալած մի ուռուցք կար։ Դրա շուրջը կարմրել էր. ուռուցքը տարածվում էր։

— Այդ ի՞նչից է այդպես եղել,—հոնքերը խոժոռելով հարցրեց դեղագործը։

— Չգիտեմ, աղայե հաքիմ, ինքն իրեն ուռել է, հիմա էլ ցավն ինձ սպանում է։

— Հա. շատ է ուռել։

Հենց դրասեղանի ծայրին դրած կար ծծմբագույն մի

դեղ։ Երիտասարդ դեղագործը առանց երկար մտածելու վերցրեց այն, տաշած փայտի ծայրով քսեց գյուղացու ժահրոտ վերքին, ապա ձեռքերը սրբեց թղթի մի կտորով։

Գյուղացին ձեռքը տարավ ծոցը։ Երկար ժամանակ ցնցոտիների մեջ նա որոնում էր գրպանը։ Թել-թել կախված հագուստի ծալքերում նա վերջապես գտավ գրպանը, այնտեղից հանեց հինգ ղրանանոց թղթե դրամ, տվեց դեղագործին, որն այն խնամքով ծալելով տեղավորեց իր թղթապանակում։ Այն պահին, երբ նա ձեռքը մեկնել էր գյուղացուց փողն ընդունելու, քիչ էր մնում ես այն բռնեի և ասեի. «Չե՞ս ամաչում»։ Բայց իմ ի՞նչ գործն էր։ Չէ՞ որ ես այդտեղ հյուր էի, ընդամենը կես ժամ, կամ մի ժամ պետք է մնայի։ Զսպելով իմ զայրույթը, դեղագործին հարցրի.

— Մի՞թե այստեղ բժիշկ չկա։

— Կա մի հոգի, բայց շատերը մեզ են դիմում։

— Դու նույնիսկ չիմացար, թե ինչից է այդ հիվանդությունը, ինչպես է այն կոչվում, ինչպես պետք է բժշկել։

Նա բառացիորեն ասաց հետևյալը։

— Բախտից է կախված։

Հետո, երևի հասկանալով իր ասածի անիմաստությունը, արդարացավ։

— Դե ի՞նչ ասես. մութ մարդիկ են, գալիս են, դիմում, չես օգնում՝ վիրավորվում են։ Չեն հասկանում։ Այ մի անգամ ինձ մոտ եկավ մեկը, թե լվի դեղ տուր, մեռանք, այդ անտերը մեզ կերավ։ Վերցրի դրան մի փոշի տվի։ «Իսկ սա ի՞նչպես պետք է օգտագործեմ, աղա» հարցրեց նա։ Ես էլ դրան ասացի. «Լուն կբռնես, այս փոշուց մի քիչ աչքերի մեջ կածես»։ Նա ոչինչ չասաց, գնաց։ Մի կես ժամ հետո մեկ էլ ներս մտավ դեղատուն, թե. «Աղա, քո դեղն էլ ի՞նչիս է պետք. լուն որ բռնեմ, կսպանեմ, էլ ի՞նչու իզուր տեղը փող ծախսեմ»։ Նոր մարդուն գլխի գցեցի։

Մյուս անգամ էլ ճիշտ և ճիշտ այսպիսի մեկը եկավ, երկու ղրան փող մեկնեց թե. «Աղա, թոքախտից մեռնում եմ, շատ եմ խնդրում մի դեղ տուր»։ Ես ետ տվի դրա փողը, ասելով. «Տար սոխի տուր, կեր»։ Երկու տարի հետո մեկ էլ

տեսնեմ նույն այդ գյուղացին միանգամայն առողջ, մի ոչխար առաջն արած մտավ դեղատուն, թե. «Այս ոչխարը քեզ փեշքեշ եմ բերել, աղա։ Քո դեղն ինձ փրկեց։ Այն օրվանից ամեն օր սոխ էի ուտում, վերջն առողջացա...»։

Այս անեկդոտները նա այնպես էր պատմում, որ կարծես դեպքն իր հետ էր տեղի ունեցել։ Նրա պատմածը չէր կարող ցրել այն ծանր տպավորությունը, որ ստացել էի, երբ դեղագործը գյուղացուց ընդունում էր հինգ ղրանանոցը։ Մինչ օրս էլ աչքիս առաջ երևում է գյուղացու կեղտոտ, սևս խանձված, երկար եղունգներով դողդոջուն մատներով ձեռքը։ Չեմ մոռանում, թե ինչպես նա ցնցոտիների տակ որոնեց դրպանը, ապա երևի իր ողջ հարստությունը հանելով, տվեց անգրագետ դեղագործին։

Մի փոքրիկ պտույտ կատարելուց հետո արդեն ուզում էինք վերադառնալ, երբ մեզ մոտեցավ մոտ 30 տարեկան մի տղամարդ, քաղաքավարությամբ բարևեց և ասաց.

— Այն մարդը, որին դուք բերել եք, իմ բարեկամն է։ Ես խնդրում եմ չմերժեք և իմ տանը հյուր գաք։ Մի անգամ էլ ձեր շոֆերներից մեկը ինձ Ռուզմարից Ռեշտ է բերել և ոչ մի կոպեկ չի վերցրել։ Մինչև հիմա միշտ ցանկացել եմ ձեզնից մեկին ու մեկին տեսնել, ձեր լավության տակից դուրս գալ։ Հիմա հայրս, մայրս ինձ ուղարկեցին, որ ձեզ անպատճառ մեր տուն տանեմ։

— Մենք ոչ մի լավություն ձեր բարեկամին չենք արել,— ասացի ես,—մարդն ուզում էր գալ այստեղ, հոգնած էր, խնդրեց որ վերցնենք մեզ հետ, մենք էլ չմերժեցինք։ Իսկ ձեր հրավերի համար չափազանց շնորհակալ ենք։ Դժբախտաբար այժմ մենք ժամանակ չունենք։ Հետևյալ անգամ այստեղ գալուց կաշխատենք ձեզ մոտ հյուր լինել։

Մարդը սրտանց տխրեց։

Նույն երեկոյան մենք Ռեշտում գործ ունեինք և այնտեղ ուշանալ չէինք կարող։ Ստիպված էինք հրաժարվել բարի ֆոմենցու հյուրասիրությունից։ Իզուր էլ նա դրանից հետո երկար խնդրում էր։

— Մյուս անգամ, մյուս անգամ,—ասացի նրան։
— Ոչ, ես սպասելու եմ։
Հետո այլևս ոչ մի առիթ չեղավ Ֆոմեն գնալու։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԵՐ

Իրանի համարյա բոլոր անկյուններում կարելի է հանդիպել հայերի։ Նրանք մեծ մասամբ բանվորներ, գյուղացիներ, արհեստավորներ, մասնագետներ, առևտրականներ են։ Կան հարուստներ ու աղքատներ, բնիկներ ու դրսից՝ տարբեր տեղերից, տարբեր ժամանակ եկածներ։

Հայեր կան նաև Ռեշտում։

Քաղաքում եղել էր հայկական մի դպրոց, մի եկեղեցի, Գիլանի հայությանն սպասարկող մի թերթ ու մի տպարան։

Ռզա շահի օրոք հայկական դպրոցը փակել էին և մայրենի լեզվով կրթությունը արգելել։ Բոլոր հայերն իրենց երեխաներին ստիպված տվել էին պարսկական դպրոցները։ Հետո ինչ-ինչ պատճառով հրդեհվել էր հայկական եկեղեցին, թերթերն ու տպարանն մնացել էին անգործ։ Մնացել էր հայկական մի ակումբ։ Այդտեղ պատանիները երբեմն ներկայացումներ, երեկոներ էին կազմակերպում, իսկ կիրակի օրերը ժամերգություն էր տեղի ունենում, որին ներկա էին լինում պառավներն ու ծերերը։

Ահա այն ամենը, ինչ ունեին հայերը։ Ռզա շահի օրոք նրանք իրենց երեխաներին մայրենի լեզվով գրել կարդալ սովորեցրել էին գաղտնի կերպով։ Ռզա շահից հետո, երբ երկրում հայտարարվել էին «դեմոկրատական» կարգեր, հայերին դարձյալ թույլ չէին տալիս մայրենի լեզվով դպրոցներ ունենալ։

Դեմոկրատական թերթերը գրում էին.

«Հայությունն ութ տարի է, զրկված է մայրենի դպրոցից։ Դա նշանակում է մեր նոր սերունդը ութ տարի թափառական ու անդաստիարակ կյանք է վարել։ Նա այսօր գտնվում է խղճալի դրության մեջ—զուրկ տարրական գիտելիքներից։ Այս հետամնացությունից առաջացած չարիքը դարմանելու համար, մեզանից մեծ ջանք ու եռանդ է պահանջվում»։

Տարագիր հայերի ներկայացուցիչները շարունակ դիմում էին կենտրոնական կառավարությանը հայկական դպրոցներ բանալու թույլտվություն ստանալու համար, բայց այդ նրանց չէր հաջողվում։

Այս առթիվ Թավրիզի «Հակաֆաշիստ» հայերեն թերթը տպագրեց հետևյալ տեղեկությունը թե.

Հյուսիսային Իրանի հայության ներկայացուցիչ Թուդե պարտիայի պատգամավոր Արտաշես Հովհաննիսյանը, Թուդե պարտիայի մեջլիսի պատգամավորի հետ միասին, մի շարք հայկական կրթական հարցերի լուծման համար և հատկապես Թավրիզի Արամյան թատրոնը և դպրոցները հայերին վերադարձնելու հարցերի կապակցությամբ լուսավորության նախարարի փոխանորդի հետ տեսակցություն ունեցան։ Պ. Արտաշես Հովհաննիսյանն իր խոսակցության ընթացքում ասաց։

«Իհարկե, մեր պաշտոնական լեզուն Իրանում ֆարսերենն է և անհրաժեշտ է, որ այդ լեզուն հայերն էլ սովորեն, բայց այդ լեզվի ուսուցումը դպրոցներում չպետք է արգելք լինի հայոց լեզվի կանոնավոր դասավանդմանը՝ հատկապես տարրական դպրոցներում։ Ռզա շահը բանի կերպով այդ լեզուն արգելեց և ներկայումս նույն սխալ դրությունը դեռ շարունակվում է, որը ոչ մի կերպ չի համապատասխանում երկրիս դեմոկրատիկ սկզբունքներին։ Թեկուզ լուսավորության նախարարությունը Ադրբեջանի Առաջնորդին հայտարարել է, որ օրական երկու ժամ հայերենի դասավանդությունը դպրոցներում ազատ է, նախ՝ այդ թույլտվությունը

գործնականում չի իրագործվել և երկրորդ՝ մայրենի լեզվի դասավանդությունը դպրոցական ժամերից դուրս՝ անգործնական է, ուստի հարկավոր է, որ այդ ժամերը պաշտոնական ծրագրի մասը կազմեն»։

Ռզա շահի ռեակցիոն կառավարությունը խլել էր հայկական դպրոցների շենքերը։ Այժմ դեմոկրատները պահանջում էին այդ շենքերը ժողովրդին վերադարձնել։ Նույն այդ հոդվածում գրված էր.

«Դպրոցների շենքերի խնդրի առթիվ պ. Արտաշես Հովհաննիսյանը հայտնեց, որ այդ դպրոցական շենքերը իրոք պատկանում են հայ ժողովրդին և հայ ազգային դրամով ստեղծված հաստատություններ են և չի կարելի այդ հաստատությունները նրանցից խլել։ Լուսավորության մինիստրությունը կարող է այդ հաստատությունների համար ծրագիր մշակել և կրթական գործն իր հսկողության տակ պահել, բայց նման հաստատությունների օրինական տերը հայ ժողովուրդն է և ժողովրդի սեփականությունն էլ պետք է մնա։

«Բացի այդ, Արամյան թատրոնը մի հանրօգուտ հաստատություն է, որը հայ ժողովուրդը կառուցել և մեծ գումարներ է նրա համար հանգանակել ու պատրաստ է հանգանակելու, որպեսզի պատվավոր կերպով հանրային մտքի զարգացման համար օգտակար հանդիսանա։ Այնուամենայնիվ այդ թատրոնը չօգտագործելը լուսավորությունը խեղդելու մի քայլ է և նման է նույն ընթացքին, որ կիրառվել է Շիր-օ-խուրշիդ թատրոնի վերաբերմամբ։ Այդ թատերասրահի վարձը մեկ տարվա ընթացքում հինգ անգամ ավելացրել են, որպեսզի ժողովրդին դրանից օգտվելու հնարավորությունից զրկեն։ Հայկական թատրոնը պետք է Թավրիզի հայությանը վերադարձվի, որպեսզի Թավրիզի ամբողջ հասարակությունն այդ հաստատությունից կարողանա օգտվել»։

«Թուդե պարտիայի պատգամավորը հաստատություն պ. Արտաշես Հովհաննիսյանի արած հայտարարությունների, որոշ խնդիրներ արծարծեց և հատկապես շեշտեց, որ

Իրանի ժողովրդական պարտիան գնահատում է Իրանի Սահմանադրության ճանապարհին հայ ժողովրդի կատարած անձնազոհությունները և լուրջ կերպով կողմնակից է, որ սահմանադրության և դեմոկրատիայի ազատամիտ օրենքները հայ փոքրամասնության վերաբերմամբ բաւիս լայն իմաստով գործադրվեն»։

Թավրիզում դեմոկրատական պարտիայի տարած հետևողական պայքարի շնորհիվ հայերին հաջողվեց մայրենի լեզվով դպրոցներ բանալու իրավունք ձեռք բերել։

Ռեշտում այդ էլ չկարողացան անել։ Հայկական դպրոցն այդպես էլ չբացվեց, երեխաները շարունակում էին հաճախել պարսկական դպրոցները։

Ռեշտցի հայերից շատերն անհունորեն կարոտում էին իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։ Նրանք ամեն հարմար առիթով պատմում էին հայրենիքի նկատմամբ տածած իրենց սիրո և այնտեղ գնալու երազանքների մասին։

Դժվար է, դժվար տարագրության մեջ երկար ապրել։

Եվ ի՞նչ ասել է ապրել։ Միթե՞ բոլորն իրավունք ունեին ասելու, թե իրենք ապրում են։

ԿՈՇԿԱԿԱՐ ԱՎԱԳՆ ՈՒ ՆՐԱ ՈՐԴԻՆ

Երբ ես խոսում էի կոշկակար Ավագի հետ, այդտեղ եկավ Ռեշտի տիրացուն։ Նա հաճախ գալիս էր պարապության-թախիծը մեղմելու։ Եկավ, լսեց մեր խոսակցությունը հայերի մոտալուտ ներգաղթի մասին և ասաց.

— Դե ո՞ւր է, ուր է, եղբայր, շուտ անեին. մեռանք սպասելով։

Չգիտեմ ինչու բոլորը նրա հետ մի տեսակ հեգնանքով էին խոսում։ Նույն տոնով էր խոսում նաև կոշկակարի երիտասարդ որդին։ Մասամբ դա հասկանալի էր, տիրացուն, ինչպես հետո իմացա, հազիվ գրաճանաչ էր և գիրք-գրականություն չէր սիրում։ Անհրաժեշտ դեպքում տերտերի

հետ շրջում էր տները, ժամասացությանն էր մասնակցում, իսկ ազատ ժամանակ անասնապահությամբ էր զբաղվում— գնում էր գառներ, խոճկորներ պահում աճեցնում և ծախում։

— Այդ դեպքում ի՞նչու չես գնում գյուղում ապրելու,— հարցրի նրան։

— Գնամ գյուղում սովից մեռնե՞մ։

— Գյուղում սովա՞ծ են։

— Սոված են, տկլոր են, բոբիկ են...

— Բոբիկ են,—մեքենայորեն կրկնեցի նրա վերջին բառը, իսկ նրան թվաց, թե իրեն չեմ հավատում և երդվեց։

— Երդվում եմ ինչով կուզեք. Սպահանում, հենց մեր գյուղում, մարդիկ են եղել և կան, որ ինչպես մորից ծնվում են բոբիկ, այնպես էլ բոբիկ ապրում են մինչև իրենց կյանքի վերջը, գերեզման մտնում՝ չիմանալով ինչ ասել է կոշիկ կամ նույնիսկ տրեխ։ Դա հո ապրել չի, մեռնել է։ Ես քիչ պարսիկ ընտանիքներ չգիտեմ՝ վեց-յոթ հոգուց բաղկացած։ Առավոտից իրիկուն նրանք ապրում են մի լավաշով։ Մի լավաշը բաժանում են վեց-յոթ մասի, առավոտյան ամեն մեկը վերցնում է իր բաժինը և վերջացավ։ Դա ապրե՞լ է։ Մեր գյուղում տներ կան կիսաքանդ, անձրևը գալիս է, տեղաշորերը թրջում։ Հարցնում եմ տերերին. «Ինչո՞ւ չեք նորոգում», պատասխանում են. «Ինչի՞ նորոգենք, շուտով գնալու ենք հայրենիք»։

Տիրացուն այդ ամենն ասում էր բարձրաձայն, վեց հոգու ներկայությամբ։ Նրան չհավատալու հիմք չունեի։ Կոշկակար Ավագը լսելով տիրացուին, խորը հառաչեց, ասելով.

— Է, թող գոնե շուտ թողնեն գնանք, ազատվենք։ Հայրենիքից քաղցր բան չկա։ Ես մի ծանոթ ոսկերիչ ունեմ Թեհրանում. ոսկու, արծաթի վրա նկարներ է անում, որ նայես քեֆդ կգա, վերցնես ձեռքդ՝ ժամերով կնայես՝ չես կշտանա։ Թեհրանում, կարող եմ ասել, նրա նման նկարող չկա։ Մի անգամ Թուրքիայի դեսպանը դրան կանչում է, մեծ գումարով պատվիրում է նկարել Թուրքիայի քարտեզը՝

ոսկե ծխախոտատուփի վրա։ Սա վիզ է առնում, դնում է քանդակում քարտեզը և բերում։ Դեսպանը վերցնում է, նայում և քարտեզի վրա մի քանի վիլայեթներ չի գտնում։ «Իսկ ո՞ւր են Ղարսը, Էրզրումը, Վանը», հարցնում է նա։ Ոսկերիչը պատասխանում է. «էֆենդի, ինչ աչքս բացել եմ, մեզ սովորեցրել են, որ Ղարսը, Վանը, Էրզրումը Հայաստանի մեջ են մտնում։ Իսկ դուք ինձ պատվիրել եք Թուրքիայի քարտեզը»։ Դեսպանն ասում է, որ նա իր վճարը չի ստանա, մինչև քարտեզը չլրացնի։ Ոսկերիչը հրաժարվում է վարձից, հրաժարվում է այդ քաղաքները Թուրքիայի քարտեզի մեջ մտցնելուց։ Տեսնո՞ւմ եք ինչ ասել է հայրենիք։ Թող քեզ ոսկու մեջ դնեն, բայց որ հայրենի հողը ոտքիդ տակ չկա՝ ինչ օգուտ...

Լավ մարդիկ են այդ արհեստավորները։ Այնպես քաղցր խոսել գիտեն, որ եթե ժամանակ ունենաս՝ ժամերով կարելի է նստել, ունկնդրել նրանց անկեղծ, սրտաբուխ զրույցները։ Խոսելիս Ավագը վերցնում էր մերթ խրոմը, մերթ շևրոն, մերթ կանադական լաքած կաշին, չափում դրանք, սուր դանակով կտրում, ձևում։ Նա աշխատում էր իր երկու տղաների հետ։ Առավոտից իրիկուն նրանց կյանքն անցնում էր այդ խանութում, առավոտից իրիկուն նրանց ձեռքին էին մուրճիկը, կաղապարները, մոմն ու թելը, շրեշը, մանրիկ մեխերը... Եվ երբ զրուցասեր մարդ էր ներս մտնում խանութ, նրանք սիրով ընդունում էին, զրուցում, ավելի մըշտանում, կարեկցում, որովհետև նրանց հաճախորդներից շատերն էին տիրացուի պես տխուր պատմություններ անում... Վարպետ Ավագը չէր բաժանում իր որդիների թշնամանքը տիրացուի նկատմամբ։ Նրա ավագ որդին՝ Վազգենը գործից չկտրվելով պատմում էր տիրացուի ժլատության մասին.

— Ա, թող կորչի է, դա մարդ է՞։ Ինչպես է խոսում գյուղացիների մասին, ասես սիրտը ցավում է։ Մոտը որ մարդ սովից մեռնի, մի կոպեկ չի տա։ Էդքան հավաքում է չէ՞, բայց էլի էս ու էնտեղ կանգնած լաց է լինում։ Ախպեր, փող չունես, տար խոզերից մեկը ծախիր։ Էլ ի՞նչ ես լաց լինում։

— Ի՞նչ գործ ունես, ախր, մարդ է, թող իրա համար

ինչպես ուզում է ապրի։ Երա պաշտը դո՞ւ ես,—միջամտում էր վարպետ Ավագը ժպտալով։ Նա ընդհանրապես բարկանալու սովորություն չուներ։ Հաճախորդներին ընդունում, ճանապարհ էր դնում ժպտալով, իր տղաներին կարգադրություն էր անում նույնպես ժպտալով։ Իսկ տղաներն նրան անչափ սիրում էին։ Նա հայր էր և լավ ընկեր։ Անծանոթ մարդը երբեք չէր էլ ասի, որ վարպետ Ավագի խանութում աշխատողները նրա որդիներն են։ Նա եթե ոչ խոսքով, գոնե ներքուստ հպարտ էր իր տղաներով և աշխատում էր նրանց որևէ կերպ չխանգարել։ Իր կյանքում նա ոչ մի պարտիայի մեջ չէր եղել, սակայն երբ որդին մտել էր Թուդե պարտիայի մեջ, ոչնչով նրան չէր խանգարել։

Նրանց ընտանիքում դա մի մինչ այդ չտեսնված երևույթ էր։ Երբ Վազգենն ասաց, թե ընդունվել է պարտիայի մեջ, վարպետ Ավագը ժպտացող աչքերով նայեց որդուն ու հարցրեց.

— Հիմա ի՞նչ ես անելու։

— Ուրիշներն ի՞նչ են անում, ես էլ նրանց նման։

— Բա ուրիշները գործ են անում, ժողովում խոսում են, դու կարո՞ղ ես։

Որդին լուրջ նայեց հոր բարի աչքերի մեջ և կարծես նոր միայն սկսեց մտածել իր անելիքների մասին։ Իսկապես, ի՞նչ պետք է անի ինքը պարտիայի մեջ մտնելուց հետո։ Կասկած չկար, որ ինքը պետք է շարունակեր աշխատանքը հոր խանութում։ Բայց դրա հետ ինչ որ բան էլ հարկավոր էր անել պարտիայի համար։ Իսկ նա շատ բան կարող էր անել. երիտասարդ էր, եռանդոտ, գրագետ (սովորել էր մինչև յոթերորդ դասարանը), զարմանալի հիշողության տեր։ Նա հիշում էր թե սովետական որ հրամանատարին երբ են մարշալի կոչում շնորհել, հիշում էր սովետական աչքի ընկնող քաղաքների ազատագրման տարեթվերը և այն զորավարների ազգանունները, որոնց հրամանատարությամբ ազատագրվել էին այդ քաղաքները։ Այդ բոլոր տեղեկությունները նա իր համար քաղում էր ռադիոյից և թերթերից։ Նրա սիրած զո-

րավարներից մեկն էլ Բաղրամյանն էր, որի նկարը նա կախել էր պատից։ Վազգենը գիտեր, թե Բաղրամյանը քանի անգամ է արժանացել Գերագույն գլխավոր հրամանատար մեծ Ստալինի շնորհակալությանը և ինչի համար։ Բացի այդ բոլորից նա շարունակ հետևում էր միջազգային դրությանը և գիտեր, թե որտեղ ինչ է կատարվում։ Նրա քաղաքական եզրակացությունները, տեսակետները հայրն ընդունում էր անվերապահորեն։ Այդ կարելի էր զգալ նրանց խոսակցությունից։ Երբ Վազգենն սկսում էր խոսել որևէ քաղաքական հարցի մասին, հայրը մի պահ դադարում էր աշխատելուց, ունկնդրում նրան, ապա կարծես հիացած, շարունակում աշխատանքը։ Բայց ահա հայրը նրան մի հարցով ծանր վիճակի մեջ դրեց։ Բանից պարզվեց, որ Վազգենը ժողովրդական պարտիայի մեջ էր մտել, ինչպես հարկն է չիմանալով իր անելիքները, որովհետև ինչպես վարպետն էր ենթադրում, Վազգենը շատ փոքր էր, որպեսզի ուրիշների նման ժողովներում կարողանար խոսել։

— Էնտեղ խոսելը հաշիվ չէ,—ասաց նա որդուն,—էնտեղ խոսելն ուրիշ է։ Դու կարո՞ղ ես էնտեղ խոսել։

— Դու էլ խոսելուց ես բռնել,—պատասխանեց որդին,—ամեն օր մեր ակումբում հարյուր մարդուց ավելի է լինում, բոլորը որ խոսեն, ի՞նչ դուրս կգա։ Մեկը-երկուսը, թող մի տասը խոսեն, մենք էլ կլսենք, ձեռք կբարձրացնենք։

— Է, որ ձեռք բարձրացնելով լինի, ես էլ կարող եմ ձեռք բարձրացնել։ Դուք գործ արեք, գործ...

Վազգենը, կռահելով հոր միտքը, նկատեց.

— Քո ասած գործը հալվա չէ, որ միանգամից վերցնես, բերնումդ դնես։ Հեշտ չի է՞, մի նայիր տես ինչ մարդիկ կան քո շրջապատում։ Չեմ իմանում վարժապետ Նազարը որտեղից է իմացել, որ մտել եմ պարտիայի մեջ։ Էսօր առավոտյան բազարից գալիս տեսավ ինձ, բարև չտվեց։

— Հերն էլ անիծած, թող բարև չտա, որ տրաքի էլ, ի՞նչ կարող է անել։ Նազարի ժամանակն անցավ, ատամները փտել են, էլ չի կարող կծել։

Եվ այսպես վարպետ Ավագը բնավ չկշտամբեց որդուն ժողովրդական պարտիայի մեջ մտնելու համար։ Ավելին, նա ցանկանում էր, որպեսզի որդին գիտակցի իր արածը, ավելի լուրջ լինի և, ինչպես ինքն էր ասում, գործ անի։ Նա շատ լավ գիտեր, որ այդ «գործ անելը» վտանգավոր բան է. որդուն կարող են նեղել, բանտարկել... բայց նա մի անգամ ինքն իր լեզվով ասաց.

— Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղա։ Մեկն ու մեկը պետք է լինի—որ ժողովրդի մասին մտածի։

Նրա մեծահոգության մասին գիտեին շատ-շատերը և դրա համար էլ սիրում էին նրան։ Կիրակի օրերը, երեկոյան հովին, նա ընտանիքի բոլոր անդամների հետ դուրս էր գալիս զբոսանքի։ Բարձրահասակ, լայն, գեղեցիկ ճակատով, գեղեցիկ աչք ունքով վարպետն իսկույն տարբերվում էր զբոսնողների մեջ։

Նրա մի կողմից քայլում էր կրտսեր, իսկ մյուս կողմից ավագ որդին։ Ամենքը տեսնելով նրան ասում էին.

— Բարի երեկո, ուստա Ավագ։

— Բարի երեկո, բարի երեկո,—ուրախ, ժպտադեմ բացագանչում էր վարպետ Ավագը և առաջ անցնում։ Նրա ձայնը հնչեղ էր, հստակ, զուրեկան։ Ոչ մեկին վարպետը չէր շողոքորթում, ոչ մեկին որևէ քաղցր խոսք չէր ասում, բայց և այնպես նրան սիրում էին, որովհետև գիտեին, որ վարպետի կրծքում բաբախում է ազնիվ սիրտ։

Ռեշտում բոլոր, համարյա բոլոր հայերն իրար շատ լավ ճանաչում էին և գիտեին, թե ով ինչ է ներկայացնում իրենից։

ԻՐ ԿՅԱՆՔՈՒՄ ՄԻ ԱՆԳԱՄ ԿՐԱԿԱԾ ՈՐՍԿԱՆԸ

Դե ի՞նչպես չճանաչեին դեղագործ Հարությունին։ Նա իր դեղատունը բաց էր անում առավոտյան ժամի ութին և փակում երեկոյան 10-ին։ Օրվա ընթացքում նրա դեղատունն էին

մտնում հարյուրավոր մարդիկ, դեղ պատվիրում, օճառ, ատամի փոշի, խոզանակ կամ օդեկոլոն գնում։

Դեղատանը կլոր սեղան, բազկաթոռներ կային։ Կարելի էր գնալ, նստել այդտեղ, թերթ կարդալ, հարեւան թեյարանից թեյ բերել տալ, խոսել ինչի մասին ցանկանում ես, բայց ոչ իր՝ դեղատան տիրոջ հետ։ Նախ՝ նա ժամանակ չուներ խոսելու եւ երկրորդ՝ բոլոր հարցերի մասին չէ, որ խոսում էր։

Կանգնած առեւտրասեղանի հետեւ նա անվերջ գրում էր կամ փաշիներ խառնում իրար, մենզուրկայով չափում։ Հաճախորդների հետ Հարությունը երկար լեզու չէր թափում։ Մեղմ, դուրեկան ձայնով ու հեզությամբ պատասխանում էր իրեն ուղղված հարցերին՝ անկախ նրանից, թե ովքեր են հարց տվողները՝ շլյապաներ դրած, մաքուր հագնված ու սափրված կարեւոր պարոննե՞ր, թե՞ ցնցոտիներ հագած, իրենց մերկությունը մի կերպ ծածկած թշվառներ։ Մարդիկ նրա համար գնողներ էին։ Հաճախ նրա մոտ լինում էին շատ թշվառ, ծանր հիվանդությամբ տառապող հաճախորդներ եւ առանց դեղատոմսի դեղ էին խնդրում։ Նա լսում էր հաճախորդի երկար պատմությունն իր հիվանդության մասին՝ առանց որեւէ կարեկցանքի կամ դժգոհության եւ վերջում, եթե ինքն անկարող էր համապատասխան դեղ տալ, ասում էր.

— Գնա, թող բժիշկը դեղատոմս տա։

Հաճախ նա ինքը, առանց դեղատոմսի, բավարարում էր հաճախորդին եւ շարունակում իր աշխատանքը։ Նրան ասես ոչինչ չէր հուզում։

Թեչտում նստած նա կարողացել էր տիրապետել ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն լեզուներին։ Էլ չենք խոսում պարսկերեն, ադրբեջաներեն լեզուների մասին, որոնց նա տիրապետում էր, ինչպես մայրենի լեզվին եւ բոլոր լեզուներով, երբ անհրաժեշտ էր, խոսում էր միեւնույն մեղմությամբ ու հեզությամբ։ Մնում էր միայն զարմանալ, թե ինչպես է նա կարողացել այդ լեզուներին տիրա-

պետոնել, երբ տարիներ շարունակ դուրս չի եկել իր դեղատնից: Չէ՞ որ նա ամեն օր, առավոտյան ժամի ութից մինչև երեկոյան ժամի տասը, գտնվում էր այդտեղ: Ամսվա մեջ նա հանգստանում էր երեք օր միայն, իսկ մի ուրբաթը, ըստ ոստիկանության սահմանած կարգի, նրա դեղատունը պետք է բաց լիներ, որպես հերթապահ դեղատուն: Իր գործում նա շատ ճշտապահ էր: Եթե երեկոյան Հարությունին տեսնեիր դեղատունը փակելիս, ապա առանց ժամացույցի նայելու կարող էիր ասել, որ ժամի տասն է, եթե ցերեկը հանկարծ մտնեիր դեղատուն և տեսնեիր, որ Հարությունը նստած ճաշում է, իսկ տղաներից մեկն ու մեկը փոխարինում է նրան, ապա ուրեմն ցերեկվա ժամի 2-ն էր: Իր քչախոսությամբ հանդերձ չէր կարելի ասել, թե նա իր սիրտը փակել է աշխարհի առաջ, դարձել մի մեքենա, որն առավոտից մինչև երեկո կարող է միայն պտտվել: Նա, ինչպես և ամեն մի մարդ, ուներ իր երազանքները, ցանկությունները, ներքին աշխարհը, որի մեջ շատերը չէին կարող թափանցել: Իր ասելով նա ընդամենը երեք տարի էր, ինչ ազատվել էր ծանր հոգսերից, որովհետև դեղատունը ձեռք էր բերել պարտքով: Տարիներ շարունակ նրան մտահոգել էր պարտքից ազատվելու խնդիրը: Վերջապես այդ ծանր բեռից նա մի կերպ ազատվել էր: Դրանից հետո միայն նա հնարավորություն էր ունեցել տան համար որոշ գնումներ կատարել:

Կնոջ հետ խորհրդակցելով վճռել էին տան կահկարասի գնել և գնել էին մահճակալներ, գեղեցիկ գորգեր: Հետո վճռել էր ձեռք բերել այգի: Այդ էլ գնել էր: Ամեն ինչ գնելուց, ամեն ինչով ապահովվելուց հետո նրանց խաղաղ ընտանիքում հանկարծ բացվել էր մի ճեղքվածք: Երկու արու զավակից ոչ մեկը չէր ցանկացել փոխարինել հորը: Ավագը՝ Սուրենն իրեն նվիրել էր երաժշտության, իսկ կրտսերը՝ Վահանը ցանկանում էր նկարիչ դառնալ: Ուղղակի ցնորվել կարելի էր: Ի՞նչպես կարող էին ապրել նրանք իրենց այդ «դատարկ» մասնագիտությամբ, եթե հանկարծ հայրը մեռներ: Ուրեմն, իր մահվանից հետո նրանք պետք է ծախեն դեղատունը, զբաղվեն իրենց «անիծված» արհեստներով: Իսկ Իրա-

նում այն ո՞ր հայ երաժիշտը կամ նկարիչն է կարողանում մարդավարի ապրել։ Երկար ժամանակ Հարությունն այդ մասին ինքն իրեն մտածում էր և զավակներին ոչինչ չէր ասում։ Բայց ահա մի օր նրա մոտ եկավ «դուդուկչի» Նիկարը և ասաց.

— Հարություն, հույսս քեզ եմ դրել, եկել։ Մի ամիս կլինի, որ գործ չի պատահում։ Տանը ծոմ ենք պահում։ Մի երեսուն թուման տուր, մինչև տեսնենք ինչ կլինի մեր հալը...

Հարությունը քիչ մտածելուց հետո պատասխանեց.

— Հիմա չեմ կարող, Նիկար, երեկոյան Սուրենին կտամ կբերի ձեր տուն։

Երեկոյան, տուն գալով, նա Սուրենին տվեց երեսուն թումանը և ասաց.

— Սա տար Նիկարին տուր, համ էլ հարցրու տես ուրիշ տեղից էլ ստանալիք ունի՞, թե հենց էս է։ Ես նրան հարցրի, ինձ բան չասաց։

Սուրենը գնաց եկավ և խեղճուկ ցույց տվեց, որ հոր միտքը լրիվ հասկացել է։

— Հը, կուզե՞ս մի քսան թուման էլ քեզ տամ, հիմիկվանից պահիր մի այդպիսի օրվա համար։

Այս դասն էլ չօգնեց։ Սուրենը հայտարարեց, որ պատերազմից հետո ինքը Ռեշտում չի մնա, անպատճառ կգնա Սովետական Հայաստան։ Նրան միացավ և Վահանը։ Կինն էլ հայտարարեց իր վճիռը. երեխաներին մենակ թողնել չի կարող։ Ուր էլ գնան նրանք, ինքը պետք է նրանց հետ լինի։ Տնեցիները շուտով խոսքից անցան գործի, գնացին, սովետական կոնսուլին դիմում ներկայացրին հայրենիք՝ Սովետական Հայաստան գնալու մասին։ Սկզբում Հարությունը լուռ էր, իսկ հետո երբ գործը լուրջ ընթացք ստացավ, ասաց.

— Լավ, գնում եք Հայաստան, բայց երկուսդ էլ հայերեն գրել չգիտեք։ Գնաք այնտեղ, անգրագետ կլինեք։ Մինչև գնալը գոնե հայերեն մի քիչ սովորեցեք։ Էգուցվանից գնացեք վարժապետ Նազարի մոտ դասեր առեք։

Նրա այդ առաջարկը կնոջը խիստ բարկացրեց.

— Մատներս էլ կտրես՝ Նազարի մոտ երեխա չեմ ուղարկի սովորելու։ Հայաստան գնացողների արյունը որ տաս նա կխմի, դու ուզում ես սրանց նրա մոտ ուղարկե՞լ։

— Ինչի՞ պիտի խմի,—հետաքրքրվեց ամուսինը։

— Էնպես ես խոսում, ասես աշխարհից կտրված լինես։ Մոռացե՞լ ես նրա ասածները Հայաստանի մասին։ Էդ հիմա է, որ ռուսական զորքերն էստեղ են, պոչը տակն է քաշել, նստել։ Բա որ էն ժամանակ լրտեսություն արեց, Ամբատին բանտը գցեց, թե ինչ է կոմունիստ է, որ եկեղեցում ասում էր. «Լաց եղեք, այ հայեր, ձեր դժբախտ հայրենիքը բոլշևիկները մոխիր են դարձրել...» մոռացե՞լ ես։

Հարությունը կնոջ՝ Վարդուհու պես «հիշաչար» չէր։ Նա մտածում էր. «Մարդ է, կարող է հիմա Սովետների մասին ուրիշ կարծիքի է, ի՞նչ իմանաս»։ Հետո, ճիշտ է, այն ժամանակ Նազարն ասում էր, ուրիշներն էլ ասում էին, բայց ո՞վ էր հավատում նրանց։ Նրանք այդպես էին ասում, իսկ երեկոյան ռադիոհաղորդումն այլ բան էր հաղորդում։ Երևանում կառուցվում է այս ինչ գործարանը, Կիրովականում այս ինչը, պղնձագործներն այսքան պղինձ հանեցին, էս ինչ գյուղում տրակտորիստներն այսքան հերկեցին, այսքան վարեցին... Ծիծաղելի էր չէ՞ Նազարի ասածը։ Դե ինքն էլ ծիծաղում էր։ Եվ ոչ միայն ծիծաղում։

— Այդ ինչի՞ էդպես շուտ կարծիքդ փոխեցիր։ Էն դու չէի՞ր, որ մի անգամ ասացիր. «Էս սրիկա դաշնակների հետ նիզակի լեզվով պետք է խոսես»։ Հը, մոռացե՞լ ես։

Հարությունը կյանքում շատ քիչ բան էր մոռանում, այդ էլ չէր մոռացել։ Այն ժամանակ դաշնակները ինչ որ հանցանակություն էին անցկացնում, ինքը հրաժարվեց դրան մասնակցելուց, որովհետև փող չուներ, իսկ իրեն ասացին «ազգի դավաճան»։ Իրեն՝ Հարությունին այդպես ասացի։ Ախր ինքը ե՞րբ էր դավաճան եղել, ո՞ւմ էր դավաճանել։ Դրա համար էլ բարկացավ ու ասաց։ Հետո այլևս իրեն ձեռք չտվին և ինքն էլ խաղաղվեց։ Էլ ի՞նչ կարիք կար, որ կինը դա նորից հիշեցնում էր։

— Ուրեմն չհիշեցնե՞մ, հիմա էլ անցել ես դաշնակների կո՞ղմը։

Վա՜հ, ինչ տարօրինակ մարդ է դարձել այդ Վարդուհին։

— Ես ե՞րբ եմ մեկն ու մեկի կողմը եղել,— մի տեսակ զարմացած ու վախեցած հարցրեց նա։

Եվ իսկապես, ճիշտ էր ասում Հարությունը։ Ինքը երբեք ու մի դեպքում որևէ կողմ չէր անցել։ Նա դաշնակներից այնքան էր հեռու եղել, ինչքան և կոմունիստներից։ Մի կողմ, որի վրա նա հաստատ կանգնած էր եղել, դա իր կողմն էր։ Այժմ էլ, երբ զավակներն ու կինը հաստատ վճռել էին գնալ Սովետական Հայաստան, նա ոչ թեր էր խոսում, ոչ դեմ։ Իհարկե, ինքն իր ընտանիքից չէր բաժանվի։ Դա պարզ էր։ Բայց ներքուստ նա չէր հավատում, որ իր տնեցիների երազանքը կկատարվի։ Երբեմն մարդիկ շատ գրավիչ ցանկություններ են ունենում, սակայն միշտ չէ, որ այդ ցանկությունները կատարվում են։ Այ, վերցրեք թեկուզ իրեն՝ Հարությունին։ Քաղաքում ոչ ոք դեպի որսն այնպիսի սեր չէր տածում, ինչպես նա։ Հինգ թե վեց տարի առաջ մի անգամ դուրս եկավ որսի, հաջողությամբ սպանեց չորս բադ ու հետը բերեց տուն, հայտարարելով, որ եթե հրացանը լավը լիներ, անշուշտ ավելին կսպաներ։ Նրան հարկավոր էր լավ հրացան։ Իրանում այնքան էլ հեշտ չէ որսի լավ հրացան գտնել։ Նա երկար աչք ածեց, հարցրեց ծանոթներին, խնդրեց որսի հրացան լինելու դեպքում ուղարկել իր մոտ։ Մի օր էլ ծանոթներից մեկը՝ խանութպան Պետրոսը մի հատ ուղարկեց։ Դա իր ունեցած հրացանից լավն էր, բայց եղած հրացանների մեջ ամենից լավը չէր։ Ճերմակ խալաթը հագին, դեղատան առևտրասեղանի հետև կանգնած, նա ձեռքը վերցրեց հրացանը, շուռ ու մուռ ավեց, աչքի մեկը փակելով նշան բռնեց ու գնեց։

— Իսկ պատրոնտաշը և փամփուշտները չե՞ս գնի,— հարցրեց նրան ծախողը։

— Տուր մի տեսնեմ։

Փամփշտակալը և փամփուշտներն էլ Հարությունին դուր եկան։ Իր ունեցածները բանի նման չէին։ Առանց երկար

լեզու թակելու դրանք էլ գնեց։ Հարությանի «որսի ընկերը» ձիթապտղի մշակույթով զբաղվող պարոն Պոուղյանն էր։ Տարվա մեծ մասն անգործ լինելով, նա հաճախ էր գալիս Հարությունի դեղատունը, համբերությամբ սպասում, մինչև ընկերը գործից ազատվի և իրենք կարողանան զրուցել։ Որքան էլ զարմանալի լինի, զրույցն սկսում էր ինքը՝ Հարությունը։ Խելոք, աղնիվ հայացքը ձգելով ընկերոջ վրա, մեղմ հարցնում էր.

— Ի՞նչ նորություններ կան։

Պոուղյանը միշտ էլ որևէ նորություն էր ունենում նրան հայտնելու, որովհետև պտտում էր քաղաքի բոլոր խանութները, արհեստանոցները և ամեն տեղ զրուցում մարդկանց հետ։ Ինչի մասին էլ խոսելու լինեին, խոսքն աննկատելի կերպով փոխվում էր որսի վրա։

— Սարգիսն ու Վաչագանը երեկ որսի գնացին,— հայտնում էր Պոուղյանը։

— Հա՞, ինչով գնացին։

— Ձի էին վարձել։ Հիմա որսի լավ ժամանակն է։ Անցյալ անգամ Վաչագանը մենակ էր գնացել, հետը բերեց մի ջեյրան, երկու աղվես, յոթ հատ կաքավ։

— Ուրեմն Ռուղբարի կողմերն են գնացել։

— Հա, էն կողմն է գնացել։

— Էս ուրբաթ արի դուրս գանք։ Նոր փամփուշտներ եմ պատրաստել։

— Հա, արի դուրս գանք։

Ուրբաթ օրը կամ Պոուղյանը չէր հայտնվում, կամ Հարությանն էր իր գործով զբաղվում և որսը հետաձգվում էր շաբաթից-շաբաթ, ամսից-ամիս, ապա սեզոնից սեզոն։ Բայց նրանք, երկու ընկերով, այնքան էին խոսում որսի մասին, որ նրանց մեջ վաղուց արմատավորվել էր այն միտքը, թե իրենք իսկական որսորդներ են։ Իր երկրորդ հրացանից Հարությունը չորս տարի ոչ մի անգամ չէր կրակել։ Բայց ահա մի օր էլի նա Պոուղյանին ասաց.

— Պետրոսի ուղարկած հրացանն սկի մի բան չի։

Աչքս Տուղայի հրացանի վրա է։ Երկու փող ունի։ Թռչող երամի վրա էլ որ կրակես, էլի մի հինգ թռչուն կսպանես։

— Տուղայի հրացան որտեղի՞ց կգտնես։

— Կգտնվի։ Ասում են մեկը ունեցել է, չգիտեմ ում է ծախել։ Բախտս չի բերել, թե չէ էս կողմերը կգար։

Նա իսկապես ցավում էր երկփողանի հրացանը ձեռք չբերելու համար և այդ ցավը Պողոսյանի մոտ ոչ մի հեգնանք չէր առաջացնում։ Ընդհակառակը, ընկերոջ ցավը նրան էլ էր համակում։ Նա, որպեսզի Հարությունին ավելի սփոփացնի, ասաց.

— Աչք ածենք, գուցե մի հատ գտնենք։ Իհարկե, որսի համար երկու փող ունեցող հրացանն ավելի լավ է։ Մի փողից դուրս եկած կոտորակը չկպչի՝ մյուս փողից դուրս եկածն անպատճառ կկպչի։ Հիմա էլ որսի լավ ժամանակն է։ Փասխանի կողմերն ասում են էնքան թռչուններ կան, որ պարսատիկով էլ կարող ես սպանել։

— Հա, ասում են։ Արի այս ուրբաթ մի դուրս գանք։ Ամեն ինչ պատրաստ է։ Պատրոնտաշը լիքը փամփուշտ է, երեք օր առաջ էլ որսի մի լավ դանակ եմ գնել։ Շատ լավն է. դրանով համ որսի գլուխը կկտրես, համ էլ խարույկի համար ծառի ճյուղեր։ Հետո էլ պիտի վերցնեմ մի քիչ պղպեղ, նուռ, նառշարաբ, որպեսզի հենց տեղն ու տեղը խորոված անենք։ Շատ լավ է դաշտի խորովածը։

— Շատ լավ կլինի։ Ես էլ գնամ մի քիչ գործեր ունեմ, վերջացնեմ, որ ուրբաթ գնանք։

Այդ ուրբաթ էլ Պողոսյանը գործերը չկարողացավ վերջացնել։ Ասենք ինքն էլ տնից դուրս գալու ցանկություն չուներ։ Նրանք հանդիպեցին՝ տասնվեց օր հետո։

Պողոսյանի անճշտապահությունը Հարությունին բնավ չէր վիրավորել։ Առաջին անգամը հո չէր։ Առանց կշտամբանքի, խաղաղ, ինչպես միշտ, նա ասաց.

— Ուրբաթ չեկար, որ գնանք որսի։

— Ուղբարում գործ ունեի։ Գնացի, էլ չկարողացա գալ։

— Հրացանի մասին բան չիմացա՞ր։

— Հարցրի, բան չկա։

Այնուհետ մի ամբողջ տարի նրանց հոգսը երկփողանի հրացան ձեռք բերելն էր։

Մի օր էլ ահա եկավ Պողոսյանը և Արքիմեդի պես ոգեվորված ասաց.

— Գտել եմ, գտել եմ։

Հարությունը նրան իսկույն հասկացավ։

— Հա՞, որտեղից։

— էն նույն մարդուց։ Էսօր պատահաբար ծանոթացա, գյուղն արի հետը։ Բանից պարզվեց, որ նա իր հրացանը չի ծախել։ Եգուց բերելու է էստեղ։

Հարությունն էլ պակաս չոգևորվեց։

Երկու օր հետո նրա գեղատան անկյունում դրված էր որսի երեք հրացան։

Այժմ մնում էր որսի դուրս գալ։

— Արի էս ուրբաթ դուրս գանք,— առաջարկեց նա Պողոսյանին։

— Հա, դուրս գանք։ Էս ուրբաթ մի առանձին գործ էլ չունեմ, դուրս գանք։

Իհարկե, այդ ուրբաթ օրն էլ նրանք բազմաթիվ ուրիշ ուրբաթների նման որսի դուրս չեկան և անհայտ էր, թե երբ դուրս կգան։ Համենայն դեպս նրանք իրենք իրենց որսկաններ էին համարում և դրա համար երբեք իրար ձեռք չէին առնում։ Չէ՞ որ որսի դուրս գալու համար բավական լուրջ քայլեր էին անում։ Որսկաններ կան, մի հրացան էլ չունեն, իսկ պարոն Հարությունը երեքն ուներ։ Ի՞նչ արած, որ մեկից կրակել էր ընդամենը մեկ անգամ, իսկ երկսից ոչ մի անգամ չէր կրակել։ Ու՞մ էր վնաս տվել։ Չէ, վնասի մասին չըխոսենք։ Պարոն Հարությունն իր կյանքում ոչ մեկին վնաս չէր տվել,օգուտից բացի։ Բայց իր արած լավությունների մասին նա ոչ մեկին, նույնիսկ կնոջը չէր ասի։ Ի՞նչ ասեր։ Առանց այն էլ մարդիկ շատ լավ տեսնում էին, թե ինչ-

պիսին է ինքը։ Նա երբեք չէր էլ հետաքրքրվի, թե ով ինչ կարծիքի է իր մասին։ Ինքը՝ պարոն Հարությունն այն էր, ինչ որ կար. իսկ ուրիշները թող մտածեն իր մասին ինչպես կարող են, ինչպես քեֆները տալիս է։

Չէ՞ որ նա ինքն էլ հաճախ իր կարծիքը շատ բաների մասին ուրիշներին չէր ասում։ Ճիշտ այդպես վարվեց նա այն օրերին, երբ Երևանից Ռեշտ եկավ Հայֆիլհարմոնիայի պարի և երգի անսամբլը՝ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ։ Նա գնաց, տեսավ խումբը և կնոջը հարցրեց.

— Այն ղեկավարը շքանշա՞ն ուներ։

— Բա չտեսա՞ր,—պատասխանեց կինը։

— Տեսա։ Միայն չգիտեմ ա՞յդ գործի համար է ստացել շքանշանը։

— Մենակ նա չուներ, երգողներից ուրիշներն էլ ունեին։

«Ինչ լավ երկիր է Սովետական երկիրը,—մտածեց պ. Հարությունը,—պարողին էլ, երգողին էլ, նվագողին էլ շքանշան են տալիս։ Երևի դեղագործներին էլ են տալիս»։ Եվ լսածից և մտածածից ուրախացած, նա ժպտաց, բայց ոչ մի խոսք չասաց։ Դրանից հետո նա միշտ ժպտում էր, երբ Վահանը խոսում էր Սովետական Հայաստան գնալու մասին։

ՌԵՇՏԻ ՑԻՑԵՐՈՆԸ

Այ, պարոն Մելքոնը բոլորովին այլ մարդ էր։ Նախօրոք ասենք, որ նա իր կյանքում ոչ մի օր փաստաբան չէր եղել։ Զարմանալի մարդիկ են այդ ռեշտցի հայերը. ամեն մեկին մի ածական կպցնում են։ Մարդիկ ապրում են կարծելով, թե իրենք մեկ անուն ունեն։ Բայց արի տես, որ այդ անվանը կցվում է և մեկ ուրիշը։ Ճիշտ նույնպես էին վարվել և բժիշկ Մելքոն Աճեմյանի հետ։

Ռեշտի Ցիցերոն, այդպես էին նրան անվանում։

Եվ ի՞նչու։ Կարծում եք նրանց երկուսի արտաքին նմանությա՞ն պատճառով։ Ոչ իհարկե։ Ռեշտում ո՞վ գիտեր,

թե ինչպիսի արտաքին է ունեցել Ցիցերոնը։ Եթե հարկավոր լիներ փնտրել մեկին, որ իր արտաքինով նմանվեր պ. Մելքոնին, թերևս ամենից հարմարը Երշիկ Արշակն էր։ Սրանք խսկապես նման էին իրար։ Երկուսն էլ բավական կարճահասակ էին, ունեին միատեսակ խաժ աչքեր, մի քիչ դեպի աջ ծռված քթեր, եռանկյունի մորուքներ և ծխախոտից դեղնած բեխեր։ Բայց իրենց արհեստներով նրանք բավական շատ տարբերվում էին իրարից։ Երշիկ Արշակը խոզի մսից երշիկ էր պատրաստում, ծախում, դրանով էլ ապրում, իսկ պ. Մելքոնը ներքին, կաշվի ու վեներական հիվանդությունների, քթի ու կոկորդի, նաև կանացի հիվանդությունների բժիշկ էր։ Այո։ Եվ երբ պարոն Մելքոնը այս ու այնտեղ խոսում էր վարժապետ Նազարի մասին, թվում էր, թե նա նոր միայն բերթոլետյան աղի լուծույթ էր խմել, որից և նրա դեմքն այդպես աղճատվում էր, աչքերը կկոցվում էին, դեմքի կնճիռները բազմապատկվում,բերանը ծռվում էր, որի պատճառով և թուքը պահել չէր կարողանում։ Թքի ցայթքի հետ նրա բերանից դուրս էին թափվում և բավական ընտիր. ճռռոմ բառեր, որոնց նպատակն էր ապացուցել, որ ինքը՝ պարոն Մելքոնը, բավական ծառայություններ ունի «սոցիալական բարեփոխությունների գործում»։ Այդ ծառայությունները, ինչպես պատմում էր նա, փոքր բաներ չէին։ Աշխարհում ո՞վ է պարոն Մելքոնից ավելի շատ պայքարել սոցիալական կարգերը վերափոխելու համար։ Ի՜նչ ոչ ոք։

— Մի անբեղ պատանի էի, երբ ինձ հանձնեցի անարդարության դեմ տարվող պայքարի ալիքներին,—պատմեց նա, նստած Հարությունի դեղատանը։—Այն ժամանակ ո՞վ կհամարձակվեր «Մուրճ» թերթում շահագործման մասին խոսք ասել. մարդիկ չէին համարձակվում ճակատ առ ճակատ լինել շահագործող դասակարգի դեմ։ Ինձ միշտ զգուշացնում էին, վախեցնում, որպեսզի ետ պահեն վտանգներից, իսկ ես այնպես էի գերված մեր պայքարով, որ կրակի վրա գնացող թիթեռի պես հանդուգն էի ու խենթ։ Բայց ես պարտավոր էի ազատությունն ուսած, Քրիստոսի համբերու-

թյամբ, այն հասցնել գագաթը և այնտեղից լույսի ճառագայթների պես նվեր տալ աշխարհին…

Բանաստեղծներն էլ այնպիսի ընտիր բառեր չէին գործածի, ինչպիսին գործածում էր պարոն Մելքոնը։ Իր ճարտասանությամբ նա կարող էր ճերմակ դարձնել և ընդհակառակը։ Միթե՞ այդպես չարեց հայոց նախկին դպրոցում երկու տարի առաջ կազմակերպված խնջույքի ժամանակ արտասանած իր ճառում։ Ճիշտ է, այդ ճառի ժամանակ նա մի քիչ հազում էր, բայց դա ծերունական հազ էր և պետք է ասել, շատ տեղին էր, կետադրական նշանների դեր էր կատարում։ Չէ՞ որ պարոն Մելքոնը խոսելիս երբեմն մոռանում էր կետադրական նշանները։ Այդ օրը հազը նրան փրկեց, սակայն չզրկեց ճարտասանությունից։ Նա ասաց.

— Ամեն մի պանդուխտ հայի սիրտ, ըհը, մղկտում է հայրենիքի անունը լսելիս, ըհը, ուր կոհակ-կոհակ հոսում են Արաքսի ղուլալ, պարզ, հավիտենական վճիտ ջրերը, ըհը տեղեկություն տալիս գեղատեսիլ իր ափերին, մեր սարերին, ձորերին ըհը, ըհը… Տարիներ շարունակ այդ պատկերը հիշելիս ես լաց եմ եղել հոնգուր-հոնգուր… ըհը…

Եվ լավ է, որ այդ օրը պարոն Մելքոնը լաց չեղավ, որովհետև շատերի ծիծաղը կշարժեր։ Առանց այն էլ խոսելիս նա բավական ծիծաղելի շարժումներ էր անում. գլուխը ետ էր գցում, հայացքն ուղղում համարյա առաստաղին կպած օթյակում նստած տերտերին, իսկ դահլիճում նստածներն այդ պահին կարող էին տեսնել միայն նրա եռանկյունի մորուքը։ Այն այնպես էր շարժվում, որ կարծես խոսողը ոչ թե պարոն Մելքոնն էր, այլ նրա մորուքը։ Ինչ էլ լիներ, պարոն Մելքոնը խոսել գիտեր։ Իզուր էլ տեղական բանաստեղծ Լևոն Ծաղիկյանը ճառից հետո մոտեցավ պարոն Մելքոնին և ասաց.

— Պարոն Մելքոն, այնպես ստացվեց, թե Արաքսի ջրերը վճիտ են ու պարզ։ Մի տաս անգամ նայել եմ Արաքսի ջրերին, միշտ պղտոր եմ տեսել։

— Պղտոր սցտով ես նայել, երիտասարդ,—առանց երկար մտածելու պատասխանեց պ. Մելքոնը:— Այդ ջրերը տարիներով խորհրդանիշի դեր են կատարել, իսկ խորհրդանիշը պետք է լինի այնպիսին, ինչպիսին որ ցանկանում է մարդու սիրտը: Դու դեռ երիտասարդ ես, չես հասկանա այդ: Մի քիչ որ մտածես, իմ ասածները հասկանալի կլինեն: Ուրեմն իմ ճառը քեզ դու՞ր չեկավ:

— Ցիցերոնն էլ այդպես ճարտար չէր կարող խոսել, պարոն Մելքոն, բայց այ, պարզ ու զուլալ ջրերը գլուխս չեն մտնում:

Այնքան էլ միամիտ չէր այդ Ծաղիկյանը: Նա գիտեր, որ երբ մեկն ու մեկը պ. Մելքոնին համեմատում է Ցիցերոնի հետ, ծերուկի ուրախությանը չափ ու սահման չի լինում, Ցիցերոնին նմանվելու իր հատկությամբ նա պարծենում էր: Դրանից ի՞նչ վնաս ուներ նա, օգուտից բացի: Մի տարի առաջ տնատերը ցանկանում էր պ. Մելքոնին դուրս անել բնակարանից: Հեշտ բան չէր տասներկու տարի ապրելուց հետո թողնել բնակարանը, որին արդեն սովորել ես, ու հեռանալ: Նա հրաժարվեց: Բարդություններ ստեղծվեցին, գործը պետք է հասներ դատարան: Բայց այստեղ արդեն տանտիրոջ բարեկամները խորհուրդ չավին:

— Նա մի լեզու ունի, որ քարի տակից օձ կհանի,— ասացին նրանք,—ի՞նչու ես գլուխդ ցավեցնում:

Այդ լեզվի պատճառով էլ տանտերը գործը դատարան տալու մտքից հրաժարվեց: Հետո նրանք իրար հետ հաշտվեցին: Ասում էին, թե հաշտությունը գլուխ է բերել նրա ավագ որդին, որ աշխատում էր Թեհրանի անգլիական զորամասում և հատկապես այդ գործի համար ժամանել էր Ռեշտ:

Ինքը պ. Մելքոնը դա մեծ հաղթանակ էր համարում և ամեն տեղ ասում էր, թե շահագործողների դեմ մի հաղթանակ էլ տարավ:

— Երևի կարծում են, թե ազատության համար տարած պայքարում հյուծվել եմ, ուժասպառ եղել: Բոլորովին: Մինչև վերջին շունչս պետք է պայքարեմ հարուստ դասակարգի դեմ, ընդ: Բավական է, որքան դրանք ծծեցին

ժողովրդի արյունը, ըհը,—մի օր ասաց նա բժշկուհի օրիորդ Սաթենիկին, որի մազերի մեջ արդեն ճերմակն էր հայտնվել։

Շահագործողների դեմ պ. Մելքոնը շատ մեծ ատելությամբ էր խոսում։ Նրան լսելով կարելի էր կարծել, թե ողջ քաղաքում նրա պես ռևոլյուցիոներ չկա, որը սակայն ակտիվ աշխատանք չի տանում միայն իր ծերության պատճառով։ Այո, դժվար է ծերությունը համատեղել եռանդուն գործունեության հետ։ Իսկ պ. Մելքոնը, անհայտ է քանի տարեկանից էր հրաժարվել իր գաղափարների համար գործնական պայքար մղելուց։

Այս բոլորի հետ ռեշտցիները վաղուց հաշտվել էին։ Շատերն լուրջ կերպով համոզված էին, որ պ. Մելքոնն իսկապես մեծ անցյալի տեր մարդ է, համոզված ռևոլյուցիոներ։ Բայց ահա մի դեպք ջուրը գցեց պ. Մելքոնի հեղինակությունը և լուրջ կասկածի տակ դրեց նրա ողջ գործունեությունը։ Սակայն որպեսզի իմանանք, թե այդ ինչպես պատահեց, պետք է ծանոթանանք պ. Մելքոնի կրտսեր աղջկա հետ։ Երկու ավագ աղջիկների հետ ես ձեզ չեմ ծանոթացնի, որովհետև դա առանձին հետաքրքրություն չի ներկայացնում։ Իսկ ինչ վերաբերվում է կրտսերին...

ՌԵՇՏԻ «ԱՍՏՂԸ»

Նրա անունը Աստղիկ էր։

Եվ, պետք է ասել, որ այդ անունը նրան շատ էր սազում։ Նա իսկական աստղիկ էր, գեղեցիկ, գրավիչ ու անբիծ։ Նրա տասնինը տարին նոր էր լրացել։ Միթե՞ պարզ չէ, թե ի՞նչ տպավորություն կթողնի իր շրջապատի վրա տասնինը տարեկան աղջիկը, երբ նա գեղեցիկ է, կենսաթրթիռ, երբ նա ունի վայելչակազմ հասակ, խոշոր աչքեր, սովորականից երկար թերթերունքներ, ալիքաձև, փարթամ մազեր և այդ ամենի հետ մի քայլվածք, որը հատուկ է միայն իրենց գեղեցկությունը գիտակցող աղջիկներին։ Երբ նա անցնում

էր փողոցով մարդիկ կամա-ակամա շրջվում էին, նայում նրան այնքան ժամանակ, մինչև նա կչքանար աչքից։ Աստղիկն ինքը շատ լավ հասկանում էր, որ մարդիկ իրեն են նայում և չեն կարող չնայել, որովհետև ինքը քաղաքի ամենագեղեցիկ աղջիկն է, «Ռեշտի աստղը» ինչպես նրա մասին ասել էր բանաստեղծ Ծաղիկյանն իր ընկերներին՝ բրնձի առևտրով զբաղվող Վաղինակ Սաղյանին և խմիչքեղենի խանութպան կոմիկ «դերասան» Տաճատ Մխչյանին։ Ընկերները բանաստեղծին չէին առարկել, որովհետև դա իսկապես այդպես էր. ամեն անգամ, երբ պ. Մելքոնի աղջիկը հայտնվում էր փողոցում, թվում էր, թե նա ուրիշ մոլորակից է ընկել, որովհետև շրջապատի աղջիկներից ոչ ոք նրա հմայքը չուներ։ Այդ գեղեցկությամբ հանդերձ Աստղիկը բնավ մեծամիտ չէր։ Բնավորությամբ նա մեղմ էր, բայց խորամանկ, գիտեր, թե ումից ինչ օգուտ ունի ինքը, ինչպես պետք է պահի իրեն այս կամ այն ընկերուհու հետ։ Իսկ ընկերուհիներ նա շատ ուներ, ինչպես հայ աղջիկներից, այնպես և պարսկուհիներից, որոնց հետ նա սովորում էր դպրոցում։ Աստղիկը չէր խուսափում նաև տղամարդկանց ընկերությունից։ Հասակակից տղաները պտտվում էին նրա շուրջը, իրենց քույրերի հետ հաճախ լինում նրանց տանը, ուր պարում էին, երգում, կատակում, պրեֆերանս խաղում, զուշակում, ունկնդրում գործարանատեր Վարուժան Սուփչմաղյանի կատակները։ Վերջինս իր տրամադրությամբ երբեք չէր հասնի «դերասան» Տաճատ Մխչյանին, բայց և այնպես երիտասարդների մեջ կատակասերի համբավ ուներ։

Վարուժան Սուփչմաղյանը շարունակ իրեն ձգելով երիտասարդների շրջանը թերևս ցանկանում էր երիտասարդի տպավորություն թողնել։ Բայց դա այնքան էլ հեշտ չէր։ Երիտասարդների խմբում նա միշտ էլ տարբերվում էր իր գեր, անճոռնի մարմնով, մեծ գլխով և դեմքին քառասուն տարվա թողած դրոշմով։ Սուփչմաղյանը գործարանատեր էր, կաշեգործ և Ռեշտում իրեն մրցակից չուներ։ Նրա գործարանում աշխատում էին հարյուրավոր հայ և պարսիկ բանվորներ, որոնց զգալի մասը կանայք և աղջիկներ էին։ Ռեշտում ոչ

մի հարազատ չունենալով, նա ապրում էր հենց գործարանում: Տանը նրան սպասարկում էր բավական գեղեցիկ մի պարսկուհի, որի մասին ոմանք ասում էին, թե Սուփչմաջյանի ապօրինի կինն է: Ճիշտ ասած դժվար էր ասել, թե որքանով էր դա համապատասխանում իրականությանը: Համենայն դեպս պարզ էր մի բան՝ Սուփչմաջյանն ամուսնացած չէր և տարիներ շարունակ չէր ենթարկվում Փարիզում ապրող մեր հորդորներին՝ անպայման ամուսնանալ: Աբադանից երբեմն հյուր եկող եղբայրն էլ շարունակ ակնարկում էր նրան ամուսնանալ, սակայն Սուփչմաջյանն անուշադրության էր մատնում նաև եղբոր ակնարկները: Առանց ամուսնանալու էլ նա վատ չէր ապրում: Ընդհանրապես նրա մասին տեղական հայերն այն կարծիքն ունեին, որ նա երբեք չի ամուսնանա, որովհետև «հասակն անցել էր»: Ըստ բոլոր տվյալների Սուփչմաջյանի հետաքրքրության առարկան միայն փողն էր: Բացի իր անշարժ գույքից՝ գործարանից, ուր բավական թվով դազգահներ կային, անգլիական բանկում նա մի պատկառելի գումար ուներ: Եվ, չնայած դրան, նա չափից դուրս ժլատ էր: Սովորական աշխատանքային օրերին նա հագնում էր վաղուց մաշված մի կոստյում, որի օձիքը փոշուց ու կեղտից սևացած էր: Միայն ուրբաթ օրերն էր նա հագնում մուգ կապտավուն իր կոստյումը, դուրս գալիս քաղաք, գնում միայն ամերիկական կինոնկարներ ցուցադրող կինո-թատրոն, իբրև հանդիսատես մասնակցում ֆիզկուլտուրնիկների կողմից կազմակերպված մրցություններին: Ի դեպ քաղաքում նա մենակ չէր շրջում: Ուր էլ գնար՝ նրա հետ համարյա միշտ լինում էին երկու-երեք հայ աղջիկներ ու տղաներ, որոնք ըստ երևույթին երկրպագում էին նրան, օգտվում նրա բարությունից, որը հազվադեպ դեպքում էր դրսևորվում: Դրանց՝ այդ երկրպագուների մեջ էր լինում նաև պ. Մելքոնի աղջիկը՝ Աստղիկը, որը սիրում էր ամեն տեսակի հանդեսներ, մրցություններ, տոնախմբություններ և համարյա ամեն տեղ լինում էր: Բացի դրանից Աստղիկն ինքը ևս մասնակցում էր աղջիկ վոլեյբոլիստների

քաղաքային թիմին։ Երբ այդ թիմը խաղում էր ահագին բազմություն էր հավաքվում ոչ այնքան նրանց խաղը, որքան ֆիզկուլտուրնիկների զգեստ՝ անթև մայկա և կարճ տրուսիկներ հագած աղջիկներին նայելու։ Այդ հագուստի մեջ Աստղիկը ավելի չքնաղ էր երևում։ Սուխշմաղյանն նստում էր հանդիսատեսների առաջին շարքում և մեկ-մեկ բացագանչում.

— Կեցցես, Աստղիկ, կեցցես…

Աստղիկը նայում էր նրան ու ժպտում, որը սակայն դուր չէր գալիս քսանվեց տարեկան, գեղեցիկ, կանդրահեր նկարիչ Արսեն Մամյանին։ Ամբողջ քաղաքը գիտեր, որ Արսեն Մամյանը մինչև մազերի ծայրը սիրահարված է Աստղիկին։ Նա առաջարկություն չէր անում միայն մի պատճառով՝ առայժմ ապրելու միջոց չուներ։ Անցյալ տարի Թեհրանում բացած ցուցահանդեսը նրան համարյա ոչինչ չէր տվել։ Նրան հաջողվել էր ծախել միայն երկու գործ՝ Մարիամ աստվածածնի և «Առաջին համբույրը» նկարները։ Մնացածները ետ բերելու համար փող չունենալով, թողել էր բարեկամներից մեկի նկուղում։ Պարզ է, որ տնտեսական այդ վիճակում երիտասարդ, տաղանդավոր նկարիչը պ. Մելքոնի աղջկան առաջարկություն անել չէր կարող։ Նա շարունակ հետևում էր Սուխշմաղյանի ու Աստղիկի փոխհարաբերություններին և ըստ երևույթին ուրախանում էր, երբ այդ փոխհարաբերությունները այս կամ այն չափով վատանում էին։ Մի անգամ այսպիսի մի դեպք պատահեց։ Վոլեյբոլիստների այն թիմը, որի մեջ մտնում էր Աստղիկը, պետք է խաղար սովետական ծառայողների կանանցից կազմված վոլեյբոլիստների թիմի հետ։ Խաղը դիտելու համար բավական բազմություն էր հավաքվել։ Սուխշմաղյանը տեղ էր գրավել նահանգապետի կողքին։ Մինչ խաղն սկսելը նա հանդիպեց տեղական թիմի անդամներին և ասաց.

— Եթե տարաք՝ ահա ձեզ յուրաքանչյուրիդ քսան թուման։ Փողն էլ ինձ մոտ չեմ պահում, որ ասեք ստում եմ, տալիս եմ աղայի Իսֆանդարին։ Կապալառու Իսֆանդարին իր ընկերոջից ետ չմնալու համար ասաց.

— Իմ կողմից էլ ամեն մեկին քսան թուման եմ ավելացնում։

Նահանգապետի մյուս կողքին նստած ակնոցավոր մի մարդ էլ գրպանից թղթադրամներ հանելով ավելացրեց.

— Ես էլ եմ խոստանում։

Այսպիսով պարզվեց, որ թիմի անդամներից յուրաքանչյուրը խաղը հաղթանակով ավարտվելուց հետո պետք է ստանա 60 թուման։ Մի խաղի համար դա փոքր գումար չէր։

Սակայն սովետական կանայք իրենց «հակառակորդներին» զրկեցին այդ գումարից։ Խաղն ավարտվեց 13 : 3 հարաբերությամբ՝ հօգուտ սովետական կանանց թիմի։ Սուխչմաղյանը, չքաշվելով մյուսների ներկայությունից, տեղական վոլեյբոլիստներին ասաց.

— Փայտեր եք, փայտեր։

Այդ ասելիս նա նայում էր Աստղիկին։ Աստղիկը խիստ վիրավորվեց դրանից։

— Ի՞նչ անենք, որ նրանք մեզնից լավ են խաղում,— արդարացավ նա։

Դրանից հետո մի քանի շաբաթ շարունակ նա Սուխչմաղյանի հետ քաղաքում չէր երևում։ Հետո նրանք նորից հայտնվեցին և մի օր էլ ահա քաղաքում լուր տարածվեց, որ գործարանատեր Սուխչմաղյանը նշանվել է պ. Մելքոնի աղջկա հետ։ Դա իհարկե, սուտ չէր։ Ռեշտի «աստղը» այնուհետև փողոցում հայտնվում էր նշանդրեքի թանկարժեք մատանիով։ Մնում էր միայն զարմանալ, թե նրա ծնողները ինչպես էին համաձայնվել նշանել իրենց աղջկան մի մարդու հետ, որը նրանից քսանմեկ տարով մեծ էր։

Դա չէր զարմացնում միայն նրանց, ովքեր գիտեին, որ Սուխչմաղյանն անգլիական բանկում պատկառելի մի գումար ուներ։ Իզուր էլ ոմանք կարծում էին, թե այդ ամուսնությունը գլուխ չի գա։ Ճիշտ է, այն մի անգամ խանգարվեց։ Հարսանիքը նշանակված էր սեպտեմբերի վերջին, սակայն այդ օրերին Սուխչմաղյանի գործարանում մինչ այդ չտեսնըված գործադուլ եղավ։ Բանվորները, որ չնչին կոպեկներ էին

կտանում, պահանջեցին բարելավել իրենց դրությունը, բարձրացնել աշխատավարձը։ Սուփշմաղյանն ստիպված էր խիստ միջոցներ ձեռք առնել։ Նա գործադուլը նախաձեռնողներին դուրս վռնդեց գործարանից, ոստիկանապետից խընդրեց հսկողության տակ առնել իր գործարանը, մինչև ամեն ինչ խաղաղվի։

Գործադուլը ճնշելուց հետո Սուփշմաղյանն ամուսնացավ։ Թեշտի «աստղին» նա իր նախկին բնակարանը չտարավ. քաղաքի կենտրոնում գնեց գեղեցիկ մի տուն, փոխադրվեց այդտեղ։

Ասում են թե պ. Մելքոնը այդ օրերին իրեն շատ երջանիկ էր զգում։

Իր երեք աղջիկներից ոչ մեկին Աստղիկի բախտը չէր վիճակվել։ Մեկն ամուսնացել էր լուսանկարչի, մյուսն ատամնաբույժի հետ, որոնց եկամուտը հազիվ էր բավարարում իրենց ընտանիքներին։ Մեջտեղը ինքը որևէ օգուտ չուներ։ Իսկ Աստղիկը՝ երջանկացրեց իր ծնողներին, նրանց հուսահատության վերջ դրեց։

Պարոն Մելքոնն օգտաբեր այդ գործարքն կատարելուց հետո ավելի աշխուժացավ։ Այժմ նա ավելի շատ էր խոսում և երբեք չէր մոռանում հիշատակել «սոցիալական ռեֆորմների գործում» իր մատուցած ծառայությունների մասին։

Թեշտում իմ ամենալավ ծանոթներից մեկը՝ Ծաղիկյանը, որ անգործության պատճառով միշտ էլ գրպանում փող չէր ունենում, մի օր ասաց.

— Այ թե գեղեցկուհի էր հա՜, կորավ գնաց։ Մեր հիմար Ցիցերոնն էժան ծախեց։ Ի՞նչ մեծ բան է մի կաշվի գործարանը։ Էգուց մեկ էլ տեսար մի ռեֆորմ եղավ և Սուփշմաղյանի գործարանը ժողովրդինը դարձավ։ Ի՞նչ պիտի անի մեր Աստղիկը։ Ցիցերոնի մասին չեմ ասում, որովհետև էսօր վաղը կմեռնի։ Չէ, թանկարժեք ապրանք էր, բայց էժան ծախեց։

Այս ասելուց հետո Ծաղիկյանն ափսոսանքով նկատեց.

— Ափսոս Աստղիկ, որ պիտի մնա այստեղ։

— Իսկ ո՞ւր պետք է գնար,—հարցրի նրան։

— Ուզում էր մեզ հետ Սովետական Հայաստան գնալ։ Սրանից հետո էլ չի գնա։ Սուխշմաղյանը ցանկանում է հայրենիք վերադառնալ մի պայմանով՝ թողնեն իր գործարանը հետը փոխադրի այնտեղ։

— Եվ ինքն էլ տե՞րը լինի,—հարցրի նրան։

— Իհարկե։

Մենք կուշտ ծիծաղեցինք։

— Իսկ նահանգապետին, ոստիկանապետին չի՞ ցանկանում հետը տանել,—հարցրի Ծաղիկյանին։

— Ախր նրանք հայեր չեն, եթե հայ նահանգապետ ու ոստիկանապետ գտներ, գուցե և հետը վերցներ,—կատակեց Ծաղիկյանը։

Բավական հետաքրքրական մարդ էր այդ Ծաղիկյանը։ Նա Ռեշտի բոլոր հայերին ճանաչում էր և գիտեր, թե որ հարկի տակ ինչ են անում, ինչ են մտածում։ Մի անգամ, հանդիպելով ինձ փողոցում, ասաց.

— Գիշերս Սուխշմաղյանի տանը «ներկայացում» է եղել։

— Ի՞նչ ներկայացում,—հետաքրքրվեցի ես։

— Բա չգիտե՞ք, որ Թեհրանից ժամանել է դերասան պարոն Նահապետն իր տիկնոջ՝ Սոֆիկի հետ։

— Ինչ Նահապետ է դա։

Եվ պարզվեց, որ պարոն Նահապետն Անդրկովկասից դաշնակների հետ փախել է 1921 թվին։ Չգիտեմ որտեղից թալանած գումարներով Թեհրանում հայկական թատրոն է բացել, հետո թատրոնը ծախել է և գարեջրի գործարան գնել։ Հիմա էլ մայրաքաղաքի հայտնի հարուստներից մեկն է։ Վաղուց է, որ դերասանությամբ չի զբաղվում, սակայն երեկ «Համլետ»-ից կտորներ է կատարել։

— Իսկ ի՞նչի համար է եկել,—հետաքրքրվեցի ես։

— Ինքն ասում է իբր թե Ռամսարի հանքային ջրերն է գնում։

— Է լավ, էլ ի՞նչու էր ճանապարհը երկու անգամ երկարացնում։ Կարող էր Քերեջով ուղիղ գնալ։

— Պատճառ կա,—ձայնին խորհրդավոր տոն տալով

ասաց Ծաղիկյանը։—Այստեղ ձեզ մոտ բանտարկված է դաշնակցության կենտրոնի անդամ Ջ.-ը, որը մինչև ձեր զորքերի գալը նույն այդ կենտրոնի ներկայացուցիչն էր Իրանում։ Քանի ձեր զորքերն Իրան չէին եկել, նա գործում էր Հիտլերի գործակալների հետ ձեռք-ձեռքի տված։ Իսկ հետո ձերոնք եկան ու ձերբակալեցին։

Ծաղիկյանը, ինչպես երևում էր նրա պատմածներից, դաշնակցության կենտրոնի անդամ Ջ.-ի մասին ավելի քիչ գիտեր, քան կարելի էր իմանալ։ Նա չգիտեր, որ Սովետական զորքերը Թեհրան մանելուց հետո դաշնակցության ընդհատակյա կազմակերպության տականքները իրենց կենտրոնի հետ սկսել էին կապ պահպանել անգլիական դեսպանության միջոցով։ Դաշնակցության կենտրոնին հասցեագրված նամակները պարոն Ջ.-ը հանձնում էր անգլիական դեսպանին, որպեսզի նա անվտանգ տեղ հասցնի։ Անգլիացիները շատ լավ գիտեին, որ մինչ այդ դաշնակցականները Հիտլերի գործակալների օգնականներն են եղել Իրանում, ամեն ինչ արել են, որպեսզի ֆաշիստները հաղթանակ տանեն։ Սակայն նրանց հայտնի էր նաև այն, որ դաշնակցությունը Սովետական Միության կատաղի թշնամիներից մեկն է։ Հետևապես ինչու չօգնել նրան հակասովետական գործունեության ասպարեզում։ Բայց Սովետական Բանակը չէր կարող լռությամբ տանել դաշնակցության տականքների հակասովետական հերյուրանքները։ Նա ձերբակալեց Հիտլերի ակտիվ գործակիցներին, որոնց թվում և դաշնակցության կենտրոնի անդամին։ Պարզ է, որ Բեյրութում գտնվող կենտրոնը ցանկանում էր որոշ բան իմանալ իր անդամի մասին և թերևս դրա համար Ռեշտ էր ուղարկել նախկին դերասան պ. Նահապետին, որը քանիցս տարվա ընդմիջումից հետո հանկարծ որոշել էր «ներկայացումներ» տալ հարուստների ընտանեկան շրջաններում։ Դաշնակցականները լրտեսի դեր էին հանձնարարել մեկին, որը վերջերս դաշնակցությունից իբր թե հրաժարվել էր, հայտարարելով, թե դաշնակցությունն այլևս գոյություն չունի Իրանում։ Պարոն Նահապետի նման մարդիկ Իրանում դեռ կային։ Նրանք առելությամբ էին խո-

սում այն մարդկանց մասին, որոնք մտածում և ամեն կերպ աշխատում էին Սովետական Հայաստան գալ։ Իսկ այդպես մտածողները միայն աշխատավոր մարդիկ էին։ Մի նախկին բաքվեցի հայ բանվոր մի անգամ պատմեց, թե ինչ սոսկալի վիճակ էր ստեղծվել իրենց համար՝ Բաքվից Ռեշտ գալուց հետո։ Այդպիսիներին, նույնիսկ անկախ նրանց ազգային պատկանելությունից, աշխատանք չէին տալիս։ Ոստիկանությունը նրանց կարգադրել էր շաբաթը մեկ անգամ ներկայանալ ոստիկանատուն և գրանցվել։ Այդ բանվորը Ռզա շահի ինքնակալությունը տապալվելուց հետո էլ կարգին չէր կարողանում ապրել։ Նրա կինը ծանր հիվանդ էր։ Իր աշխատավարձի զգալի մասը նա ստիպված էր ծախսել կնոջը բուժելու համար։ Երեխաները հագնելու բան չունեին։ Դպրոց տալու համար զգալի միջոցներ էին հարկավոր, իսկ ինքը զուրկ էր ամեն ինչից։ Նա կարոտով էր հիշում Բաքվում անցկացրած տարիները և ամեն անգամ ասում էր.

— Երանի էն օրին, երբ կթողնեն վերադառնանք Սովետական Միություն։

Սակայն տնտեսական ծանր վիճակում ապրում էին ոչ միայն հայ աշխատավորները։ Ծանր, անտանելի ծանր վիճակում էին ապրում նաև պարսիկ միլիոնավոր աշխատավորները։

ԶՈՀԸ

Մի անգամ գլխահակ գնում էի մեր փողոցով, երբ հանկարծ լսեցի բազմաթիվ մարդկանց միահամուռ, սրտաճմլիկ աղաղակներ։ Առաջին անգամ այդ աղաղակները լսելիս ինձ թվաց, թե քաղաքում չտեսնված մի աղետ՝ հրդեհ, հեղեղ է պատահել։ Մինչդեռ շատ սովորական հուղարկավորություն էր։ Թափորը հետևում էր դիակառքի վրա դրած դագաղին։ Առաջին շարքում գնում էին երկու մոլլա, հետո տղամարդիկ ու կանայք։ Դիակառքի հետևից գնացողներից մեկը բարձրաձայն ողբում էր, իսկ թափորը միաբերան աղաղակով արձագանքում էր նրան.

— Վա՜յ, ա՜յ, վա՜յ...

Մեր նեղ փողոցում դա հնչում էր որոտի պես։ Մարմինս փշաքաղվում էր՝ դիակառքի հետևից գնացող մարդկանց ողբոցոզմ աղաղակը լսելիս, որ տևում էր մի քանի վայրկյան, հետո ընդհատվում, որպեսզի առաջից գնացող վարձու լալկանը կրկին ու կրկին բարձրաձայն լաց լինի։ Կարծես մեռածը Թափորում գտնվող մարդկանցից յուրաքանչյուրի սրտակից բարեկամն էր, որովհետև յուրաքանչյուրը «վայ» էր տալիս՝ որքան ուժերը ներում էին։

Նույն բանը մեր փողոցում կրկնվում էր շաբաթական երեք-չորս անգամ։

Մեծ էր մեռնողների թիվը։

Այս անգամ հուղարկավորների աղաղակն ավելի հուժկու և ազդեցիկ էր։ Դա աղաղակ չէր, այլ բազմաթիվ մարդկանց ցասումնալից բողոք ինչ որ անարդարության դեմ։

Ո՞ւմ էին տանում թաղելու։

Քայլերս արագացրի, որ հասնեմ թափորին։ Հասնելը հասա, իսկ թափորի գլուխը տեսնել չկարողացա։ Փողոցում տեղ չկար անցնելու։ Գնացողները հուզված ու վրդովված էին։

— Ո՞վ է մեռել,—հարցրի բարի դեմքով, էժանագին կապույտ բաճկոն հագած տարեց մի մարդու։

— Ֆաբրիկայից մի բանվոր է. չի մեռել, ասում են սպանել են։

— Իսկ ի՞նչու են սպանել։

— Բանվորներին կոչ է արել գործադուլ հայտարարել։

— Եվ բռնե՞լ են սպանողին։

— Չէ, չեն իմանում թե ով կարող էր...

Նորից թափորն աղաղակեց՝ խլացնելով իմ զրուցակցի ձայնը։

Մարդկային հոսանքն ինձ հեռու պիտի տաներ, եթե շարունակեի նրա մեջ մնալ։ Ստիպված կանգնեցի պատի տակ՝ մտածելով թե ինչպես ուժեղանում է պայքարը դեմոկրատիայի և ռեակցիայի միջև։ Վերջինս ոչինչ չէր խնայում ժողովրդի պայքարը ճնշելու համար։ Այնտեղ, որտեղ խաբեու-

թյունը, խորամանկությունը չէին օգնում, հանդես էին գալիս դաշույնը, թույնը, գնդակն ու ձողանը։

Առաջին հայացքից դժվար էր նկատել, թե ով ինչ է անում անձրևաշատ Ռեշտում՝ Գիլանի վարչական, քաղաքական այդ կենտրոնում, ուր տարվա մեծ մասը թանձր մշուշն է իջնում, պատում տները, նեղ փողոցները, ուր միլիոնատերերն ապրում են շքեղ վերնահարկերում, իսկ աղքատները՝ փտում խղճուկ, խոնավությունից բորբոսնած հյուղակներում։

Այո, փտում են։

Ձմեռը տեսնում ես կիսամերկ, գլխաբաց մանուկներ՝ ձյան վրայով ոտաբոբիկ վազելիս. այդ երեխաներից ոմանք հագնում են փայտե մաշիկներ, հագիվ իրենց հետևից քարշ տալով դրանք։ Փայտե մաշիկներ են հագնում և նրանց ծնողները, գնում մեչիդ, աղոթում, ծեծում իրենց կուրծքը, դիմում ալլահին, խնդրում նրանից ո՞վ գիտի ինչեր և շարունակ մնում ձեռնունայն, կիսաքաղց՝ մերկ պատերի արանքում, խսիրների վրա կծկված, ուր ամառվա տապին իսկ արևի շողերն անզոր են գոլորշիացնելու խոնավությունը։

Ռեշտցիներից շատերը սովորել են դրան, սովորել են իրենց քաղաքի մշուշին, շուրջը տիրող անարդարությանը, ամառվա լպրծուն գոլորշիներին և կարծես չեն տեսնում, թե ինչ է կատարվում նրանց շուրջը։ Կարծես կյանքի հավերժական օրենք է դա, անխուսափելի ինչպես ամառվա կեսօրի տապը, ինչպես ձմեռվա թանձր մառախուղը։

Եվ միայն Ռեշտում չէ այդպես։

Տխուր է կյանքը շահի երկրում։ Եվ մե՛նք չենք միայն, որ ասում ենք այդ։

Հոգնած, տխրած տուն վերադառնալով ես նայեցի օրացույցին։ Փոքրիկ թղթի կտորի վրա բանաստեղծ Բաբա Թահիր Օրիանի միշտն ու թախիծն էր դրոշմված.

Մո՞ւթ, սևասքող գիշերն իջավ անապատում անսահման,
Ուղիս անվե՞րջ, լույսս աղո՞տ, չունեմ հույս ու
հանգրվան,

Կընկնե՞մ այս մուգ ավազներում, թե՞ կհասնեմ քեզ,
իմ տուն...

Երնեկ նրան, ով չի տանջվել, չի ճաշակել վշտի թույն...

Մեր շուրջը տիրող այդ տխրությունն ակամայից համակում էր և մեզ։

Ընկերս, նկատելով իմ թախիծը, երեկոյան առաջարկեց դուրս գալ քաղաք՝ զբոսանքի։ Դեմ չէի։ Տանը շատ էր ձանձրալի։

Դուրս եկանք փողոց այն ժամանակ, երբ արդեն լույսերը վառել էին, կենտրոնական փողոցները լիքն էին մարդկանցով։ Ոմանք զբոսնում էին, ոմանք էլ ոտքի վրա առևտուր էին անում։ Կենտրոնական հրապարակում կոշիկ սըրբողները խոզանակներով ամուր խփում էին իրենց արկղներին, անցորդներին հրավիրում կոշիկները մաքրելու։ Նրանցից ետ չէին մնում նաև պաղպաղակ, լաբլաբի, հալվա ծախողները։ Անցորդների մեջ կարելի էր տեսնել գորգ, կարպետ ծախողների, որոնք իրենց ապրանքն ուսերին դրած անընդհատ դես ու դեն էին գնում։

Այս ամենը մեզ արդեն ծանոթ էր և նույնպես ձանձրալի։ Ո՞ւր գնայինք, կինոթատրո՞ն։ Այնտեղ դարձյալ ամերիկական «Տարզան» կինոնկարը պետք է լիներ։

— Այսօր նոր կինոնկար են ցուցադրում,—ասաց ընկերս,—արի գնանք տեսնենք։

— Բայց արդեն ուշացել ենք,—առարկեցի ես։

— Շատ չենք ուշացել, գնանք։

Գնացինք։

Դահլիճ մտնելով նստեցինք պատահած առաջին ազատ աթոռներին։ (Իսկ դահլիճը կիսով չափ դատարկ էր)։

Մի քանի րոպե հետո, հասկանալի էր, թե ինչ նկար է դա։ Ամերիկացիները, այս վերջին պատերազմը դեռ չավարտված, պատկերում էին ապագա պատերազմը, որն արդեն տեղի ուներ երկու մոլորակների միջև։ Պատերազմող կողմերն օգտվում էին ռեակտիվ սավառնակներից։ Ֆանտաստիկ նկարի հերոսներն օդաչուներ էին և ինչ որ արքաներ, որոնք իրենց արտաքինով հիշեցնում էին աֆրիկա-

կան միջնադարյան ցեղապետներին։ Ուրիշ տեսակի զորքեր ու զենքեր պատերազմին չէին մասնակցում։ Դեպքերը տեղափոխվում էին մոլորակից մոլորակ, ըստ որում մեկում սովորական սահմանները, ձյունապատ սարերն ու լեռները խոչընդոտ էին հանդիսանում մյուս կողմի օդաչուների գործողություններին։ Նկարը բաղկացած էր մի քանի սերիայից։

Ամեն մի կադր նախատեսված էր դիտողին ահաբեկելու ապագա պատերազմի ուրվականով։ Դրա հեղինակներն ափաշկարա ասում էին. «Բանը երկրորդ համաշխարհային պատերազմով չի վերջանում։ Դեռ պետք է լինի պատերազմ՝ երկու «մոլորակների» միջև»։

Սա էր նկարի հրեշավոր իդեան։ Հրեշավոր, որովհետև այն պահին, երբ աշխարհի տառապյալ, արյունաքամ եղած ժողովուրդները փափագում էին խաղաղություն, ցանկանում էին մի անգամ ընդմիշտ վերջ դնել պատերազմներին, Ուոլ-ստրիտի միլիոնատերերը նախագծում էին մի նոր պատերազմ և նույնիսկ պատկերացնում, թե ինչպիսին պետք է լինի այն։ Ամեն մի հանցագործ՝ լինի նա մարդասպան, ավազակ, խաբեբա, կարող է իր համար շատ բան երևակայել ու հնարել ասենք՝ մարդ սպանելու, ոչնչացնելու, կախաղան բարձրացնելու, ծաղանելու նոր ձևեր։ Կարգին մարդիկ նման հանցագործին պետք է միայն ոչնչացնեն։ Իսկ կապիտալիստական աշխարհում գտնվում էին մարդիկ, որոնք գնում ու շուկա էին հանում այդ ավազակների «գյուտերը»։ Ճիշտ այդպես էին վարվել նաև ամերիկացիների իրանական գործակալները, որոնք չգիտես ինչ նպատակով գնել էին ամերիկական այդ նկարը և ցուցադրում էին իրենց մոտ։

Այսպիսով իրանական ռեակցիան ծովերի և օվկիանոսների վրայով կամուրջ էր ձգում Իրանի և Ամերիկայի միջև։ Սակայն քչերն էին համաձայնում ոտք դնել ավանտյուրիստների, իսկական ավազակների այդ կամուրջի վրա։ Այդ շատ պարզ կարելի էր տեսնել հենց Ռեշտում։

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

Ռեշտը համարվում է կամուրջների քաղաք։ Եվ իսկապես շատ են կամուրջներն այս քաղաքում։ Նրանք ձգված են տարբեր ջրանցքների վրայով։ Կան հին և նոր կամուրջներ, որոնք իրար են միացնում միատեսակ թաղեր՝ իրենց հյուղակներով, նեղլիկ, ծուռտիկ փողոցներով, խղճուկ ու հարուստ խանութներով... Որ ափն էլ անցնես այդ կամուրջներով՝ պատկերը միևնույնն է։

Սակայն կա մի կամուրջ, որ այսօր կառուցվում է Ռեշտում և երբ ավարտվի և ռեշտցիները քայլեն նրա վրայով, դուրս կգան լուսաճաճանչ ափ։

Դա ընդի ազատությունը տանող կամուրջն է։

Այն կառուցվում է, ճիշտ է, դանդաղ, բայց և այնպես կառուցվում է, ռեշտցի ազատատենչ մարտիկները ոչինչ չեն խնայում, որպեսզի մի օր ճնշված ժողովուրդը հաղթանակորեն անցնի ազատության վեհաշուք կամուրջով՝ իր հետև թողնելով միջնադարյան խավարը, ադիտությունը, խոնավ ու մթին ափերը։ Եվ ժողովուրդը կանցնի այդ կամուրջով։

Նա մի անգամ արդեն կանգնած է եղել այդ կամրջին, սակայն թշնամիները պայթեցրին այն։

Դա 1918—20 թվերին էր։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի ազդեցության տակ, այստեղ՝ Գիլանում, Մազանդարանում տեղացիները կազմակերպեցին պարտիզանական ջոկատներ։ Պարտիզանները, կամ ինչպես այստեղ ասում էին «ջենգելցիները» («ջենգել» պարսկերեն նշանակում է անտառ) նպատակ էին դրել զենքի ուժով դուրս վռնդել օտարերկրյա զավթիչներին և առաջին հերթին անգլիական ինտերվենտներին։ Նրանցից շատերն ուխտել էին չսափրվել՝ մինչև չհասնեն իրենց նպատակին։

Այն օրերին, երբ կարմիր նավատորմի պանծալի մարտիկները մտան Ենզելի (այժմ Փեհլևի), «ջենգելցիների» թիվը Գիլանում և Մազանդարանում հասնում էր տասը հազա-

րի։ Դրանց մի մասը թաքնված էր անտառներում, իսկ մյուս մասը գյուղերում սպասում էր ընդհանուր ելույթի ազդանշանին։

Օկուպանտների ուժի համեմատությամբ «ջենգելցիները» փոքր ուժ չէին, սակայն թշնամուց զգալիորեն քիչ էին։

Կարմիր նավատորմիղի մարտիկները հաղթանակը ոգևորեց «ջենգելցիներին»։ Նրանք ոտքի ելան անգլիացիների դեմ։

Անգլիական օկուպանտներն ստիպված էին թողնել ողջ Գիլանը։

Եվ նույն այս Ռեշտում, ուր այժմ գտնվում էինք մենք, ստեղծվեց ռևոլյուցիոն կառավարություն, որի գլուխ կանգնեց «ջենգելցիների» ղեկավար Քուչեկ խանը։

Ռևոլյուցիոն կառավարությունը Վլադիմիր Իլյիչ Լենինին հղեց հետևյալ հեռագիրը.

«Ողջունում ենք Ձեզ և Ձեր բոլոր ընկերներին՝ սոցիալիստական կարգի թշնամիների նկատմամբ ձեռք բերած մեծ հաջողության առթիվ։ Մենք, պարսկական ռևոլյուցիոներները, նույնպես վաղուց ենք հույս տածում այդ հաղթանակի նկատմամբ, երկար ժամանակ պայքարել ենք անգլիական և ռուսական չար ու ատելի հարստահարիչների դեմ։ Հասել է պարսկական սովետական ռեսպուբլիկա հայտարարելու շատ ցանկալի և պանծալի ժամը։ Պարսկական տերիտորիայում շատ հանցագործներ՝ պարսկական հարստահարիչներ, անգլիական կոմերսանտներ և դաշնակներ կան, որոնց օգնում են անգլիական զորքերը։ Քանի նրանք գտնվում են Իրանում, կառավարության խնդիրն է՝ ամբողջ երկրում հաստատել արդարացի կարգեր։ Հանուն մարդկության և բոլոր ազգերի հավասարության՝ Պարսկական Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկան խնդրում է Ձեզ և III Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ մտնող բոլոր սոցիալիստներին, օգնել մեզ և ուրիշ թույլ ու ճնշված ազգերին՝ ազատագրվելու պարսկական և անգլիական հարստահարիչների դաժան լծից։ Ի նկատի ունենալով այսօրվանից եղբայրական միություն հաստատելը և մեր մեջ եղած լրիվ համա-

խոհությունը, ազատ ռուս ժողովրդից սպասում ենք օգնություն, որ կարող է անհրաժեշտ լինել։

Ռեշտում հայտարարված Սովետական Կարմիր Ռեսպուբլիկայի կառավարության նախագահ՝ Մ. Քուչեկ։

1920 թվի հունիսի 22-ին տեղական կոմունիստական կազմակերպությունները գումարեցին Իրանի կոմպարտիայի առաջին համագումարը, ուր ընտրվեց կենտկոմ և մշակվեց ծրագիր՝ անգլիական իմպերիալիզմի դեմ պայքարելու համար։

Աշխարհը ցնցող այս երևույթներին անգլիական իմպերիալիստները չէին կարող հանգիստ սրտով նայել։

Ռևոլյուցիայի բոցը մոտենում էր Իրանում գտնվող սև ոսկու անգլիական գանձարաններին։ Ոտքի կանգնած ժողովուրդը կարող էր զրկել անգլիացիներին Իրանի նավթից։ Դա շատ լավ էին հասկանում անգլիացիները։ Դենստերվիլը սրտի ցավով գրում էր. «բոլշևիզմն արդեն աշխարհի այս մասի բոլոր ժողովուրդների արյան մեջ է մտել։ Պարսկաստանի այժմյան դեմոկրատական շարժումը հանդես է բերում նույն այն իդեաները, ինչ և բոլշևիզմը։ Միայն մինիստրները և ունևոր դասակարգերն են պահանջում, որպեսզի անգլիական զորքերը մնան Պարսկաստանում»։

Եվ պարզ է, թե ինչու անգլիացիները ձեռք էին առնում բոլոր միջոցները՝ պարսկական դեմոկրատական շարժումն արյան մեջ խեղդելու համար։ Դեմոկրատիայի դեմ պայքարելու գործում նրանք դիմում էին ամեն տեսակի քստմնելի միջոցների՝ դարերով փորձված մատնությունների, շանտաժի, կաշառքի։ Գործի էր դրվել Իրանում գտնվող լրտեսների, դավաճանների բանակը, գործի էին դրվել ծախու մինիստրները, ժողովրդի արյան քրտինքով ապրող տզրուկները։

Գիլանի ռևոլյուցիոն ռեսպուբլիկան հազիվ առաջին քայլերն էր կատարում։ Ռեսպուբլիկան նոր սկսել էր կազմակերպել իր կանոնավոր բանակը, նոր միայն կատարում էր առաջին ռևոլյուցիոն ձևափոխումները։ Հայտարարվել էր, որ գյուղացիները պետք է տուրք տան ըստ շարիաթի՝ եկամտի մեկ տասնորդականը։ Բայց հողը գյուղացիներին չբաժանվեց։ Ինքը Քուչեկ խանը դեմ էր դրան։

Անգլիական լրտեսներն օգտագործելով Քուչեկ խանի թույլ կողմերը, նրա մեջ կասկածանք առաջացրին կոմունիստների նկատմամբ։ Նրանք իրենց քայքայիչ աշխատանքն սկսեցին շատ նուրբ, մտածված ձևով։ Տակավին չէր ուժեղացել Գիլանի Ռեսպուբլիկան, դեռ բանակը չէր կազմակերպվել, երբ հանդես եկան մարդիկ, որոնք պահանջում էին անհապաղ արշավանք կազմակերպել դեպի Թեհրան, ուր կային լավ զինված զորամասեր։ Ապա նրանք սկսեցին վաճառականների ունեցվածքը խլել, պահանջել, որ անցկացվի չադրան հանելու ռեֆորմ, հողերի սոցիալիզացիա և նման բաներ, որոնք Իրանի նման հետամնաց երկրում միայն վնաս էին հասցնում դեմոկրատական շարժմանը, խեղաթյուրում նրա իմաստը։

Դավաճաններին, անգլիական իմպերիալիզմի գործակալներին այնուամենայնիվ հաջողվեց պառակտում մտցնել Գիլանի ռևոլյուցիոն ուժերի մեջ։ Քուչեկ խանը թողեց Ռեշտը, իր ուժերով հեռացավ անտառ, իսկ արիակամ, տոկուն կոմունիստ Հայդար խանը նրանից հետո որքան էլ ջանկացավ միացնել բոլոր ռևոլյուցիոն ուժերը, երկրում հաստատել կարգ ու կանոն, կազմակերպել մտածված, հետևողական ռևոլյուցիոն աշխատանք լայն մասսաների մեջ՝ չհաջողվեց։ Նրա ջանքերն իզուր անցան։

Դավաճաններն ինքնագլուխ արշավանք կազմակերպեցին դեպի Թեհրան և առաջին ընդհարման ժամանակ ջախջախեցին ռեսպուբլիկայի ուժերը։

Այսպես կոչված «Գիլանի ռևոլյուցիան» պարտվեց։

Նորից սև օրեր իջան Գիլանի, Ռեշտի վրա։ Բայց Ռեշտում այդ պատմությունը հիշողներ կան։ Եվ երբ իրանական ժողովուրդը նորից ոտքի ելնի հարստահարիչների դեմ, ապա, նա երբեք չի կրկնի անցյալի սխալները։

ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՑՈՒՅՑԵՐ

Այժմ իրանական աշխատավորության զգալի մասը գիտի, որ իր հաղթանակի գրավականը միասնության մեջ է։ Եվ նա ձգտում է այդ միասնության, օրեց-օր հզորացնում է իր շարքերը։

Ես դա զգացել եմ մանավանդ մայիսմեկյան ցույցերի ժամանակ։

Ընթերցողը երևի իր կյանքում մեկ անգամ չէ, որ մասնակցել է ցույցերի, ուստի տեսել է տոնական օրերին մեր քաղաքների փողոցները լցված ուրախ, ցնծացող ցուցարարների շարքերը, ունկնդրել է նրանց երգին, կոչերին, երաժշտական խմբերի նվագին։ Իսկ այնպիսի ցույց, ինչպիսին ես տեսա Ռեշտում, մայիսմեկյան տոների առթիվ, շատ քչերն են տեսել։ Գուցե մեզ մոտ էլ, նախկինում այդպիսի ցույցեր են եղել։ Մեր այսօրվա ցույցերը շատ քիչ բանով են նման իմ տեսածին։

Այդ օրը ցույցին մասնակցելու համար Ռեշտ էին եկել Փեհլևիի բանվորները, ծառայողները, Ռեշտի աշխատավորները, մանր արհեստավորները և շրջակայքի գյուղացիները։

Կենտրոնական հրապարակում ցույցի ղեկավարները ելույթ ունեցան։

Քիչ հետո խոսողներն իջան հրապարակում դրած սեղանի վրայից, ապա Փեհլևիի պողոտայով սկսվեց երթը։

Ցուցարարներն անցնում էին ոստիկանատան մոտով։ Չգիտեմ ինչու ոստիկանատան մուտքը փակ էր, իսկ քաղաքի բոլոր հեծյալ և հետիոտն ոստիկանները թափվել էին փողոցները։ Նրանք ընթանում էին ցուցարարների կողքով այնպես, կարծես պահապաններ էին կարգված կուռ շարքերով ընթացող մարդկանց։ Եվ այդ կուռ շարքերը ինձ չէին զարմացնում, այլ ցուցարարների լռությունը—իմ ողջ կյանքում չտեսած լռությունը։ Մարդ չէր ուզում հավատալ. մարդկանցից ոչ մեկը չէր խոսում։ Այո՛, չէին խոսում, լուռ էին։

Գալիս էին շարքերը շարքերի հետևից՝ անցնում միջա

այնպես ահ ազդող ոստիկանատան մոտով ու ոչ մի ձայն չէին հանում։ Նրանց վիթխարի, անընկճելի ուժն այդ լռության մեջ էր։ Ոչ մի երգ, ոչ մի նվագ, ոչ մի բացականչություն չէր լսվում շարքերից։ Քիչ հետո գույժ և երգերին, որևէ նվագախումբ ինչ որ տեղ գույժ և սկսեր նվագել ու խախտեր այդ քար լռությունը։

Գույժ։

Իսկ առայժմ նրանք՝ մարդկային կուռ շարքերը, տանում էին ճերմակ քաթանի վրա գրված լոզունգներ, եռագույն դրոշներ, տրանսպարանտներ ու լուռ էին։ Լսվում էին միայն նրանց ոտնաձայները։

Մարդիկ փողոց էին դուրս եկել իրենց վիթխարի, անհատնում ուժը ցուցադրելու։

Ուրախանալու համար նրանք պատճառ չունեին։

Ի՞նչով պետք է ուրախանային։

Տերերը քամում էին նրանց արյունը, աշխատավորի աշխատանքի պտուղները, ծախում հայրենիքը գիշատիչ իմպերիալիստներին, ճորտության շղթաներ կապում ժողովրդի ոտքերին, դաժանորեն ճնշում նրանց բողոքները։

Մի խումբ միլիոնատերեր խոսում էին ժողովրդի անունից, իսկ ողջ հոգով, իրենց ողջ էությամբ արհամարհում ժողովրդին, համարելով նրան անգրագետ, խավար մի զանգված, որը չի համարձակվի խոսել տերերի դեմ։

Չի համարձակվի։

Բայց ահա նա այսօր համարձակվում էր ավելի մեծ սխրագործություն կատարել։

Ժողովուրդը դուրս էր եկել փողոց, առանց գլուխը խոնարհելու ոստիկանության, ժանդարմերիայի, արքաների առաջ և քայլում էր հաստատուն, առնական քայլերով, ուշադրություն չդարձնելով աջից ու ձախից «ուղեկցող» ոստիկաններին։

Շարքերում քիչ չէին և բոբիկ, վատ հագնված գյուղացիներ։ Նրանք քայլում էին տրեխ, կոշիկ հագածների կողքից և նրանց յուրաքանչյուր քայլը մի սպառնալիք էր հղփացած տերերին։

Այո, ցուցարարների շարքերը լուռ էին։ Խոսքին փոխարինում էր նրանց աչքերում հուրհրատող բոցը։

Իրանի այժմյա տիրակալներն ամենայն հավանականությամբ վատ հիշողության տեր մարդիկ են։ Երևի նրանք մոռացել են ժողովրդի աչքերում բոցկլտացող կրակը և այնպես հեշտությամբ վաճառում են երկիրն ամերիկական իմպերիալիստներին։ Ըստ երևույթին նրանք չեն հասկանում, որ մի օր այդպես ոտքի կկանգնի ողջ իրանական ժողովուրդը և կասի միայն մի բառ.

— Բավական է։

Կասի, այդ բառը նա մի օր կասի՝ ամերիկյան իմպերիալիստների պնակալեզներին։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՕՁԱԳԱԼԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թողնելով Ռեշտը մշուշի մեջ, մենք ճանապարհվեցինք դեպի Թեհրան՝ արևելքի այդ մեծ քաղաքը, որի մասին աշխարհում բոլորը գիտեն։

Ի՞նչ է ներկայացնում Թեհրանն իրենից, ինչպիսի՞ն է նա՝ մենք այդ չգիտեինք։

Գիտեինք միայն, որ դա Իրանի մայրաքաղաքն է, ուր գտնվում են շահը, մեջլիսը, ստեպ-ստեպ փոփոխվող կառավարությունը... Այնտեղից էին ստացվում տարբեր տեսակի, տարբեր հոսանքի, տարբեր պարտիաների պատկանող թերթեր, ամսագրեր...

Ամեն օր ռադիոընդունիչը հաղորդում էր.

— Ինջա Թեհրան...

Դիկտորը հաղորդում էր վերջին լուրերը, ապա հնչում էր արևելյան տխուր մեղեդին և հանկարծ այն փոխվում արևմտյան վալսի, տանգոյի, ռումբայի...

Եվ այսքանից հետո ևս դժվար էր ասել, թե ինչ է ներկայացնում իրենից Թեհրանը։

Ռեշտից Թեհրան երկու ճանապարհով կարելի է գնալ։

Մեկը դրանցից անցնում է Կասպից ծովի հարավային գեղանիստ ափով՝ բրնձի դաշտերի, թեյի պլանտացիաների, ծովափնյա փոքրիկ կանաչապատ քաղաքների միջով և մոտ 200 կիլոմետրից հետո հասնում է Չալուս քաղաքին, հետո ելնում դեպի Ալբորզ լեռնաշղթայի կատարը, մոտ երեք հազար մետր բարձրանալուց հետո իջնում դեպի Թեհրանից 37 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Քերեջ ավանը։

Մյուս ճանապարհը նույնպես սկզբում անցնում է բրնձի արտերի միջով, 40 կիլոմետրից հետո ծռվում դեպի լեռները, անցնում Ռոստամաբադ, Ռուդբար ավանները, ապա հասնում Թեհրանից 137 կիլոմետրի վրա գտնվող Ղազվին քաղաքին։

Երկու դեպքում էլ դուք պետք է կտրեք և անցնեք բարձր լեռնաշղթաներ և ապա դուրս գաք մի հարթ, անծայրածիր թվացող դաշտավայր։ Այդտեղ են գտնվում Թեհրանը, Քերեջը, Ղազվինը։ Ծովի մակերևույթից 1300 մետր բարձրության վրա գտնվող այդ դաշտավայրը Կասպից ծովից անջատվում է լեռնաշղթաներով և հետևապես ծովի խոնավությունից մի կաթիլ անգամ չի ստանում։ Կասպից ծովն իր խոնավությունն առատորեն տալիս է իր ափերի դաշտավայրերին, սնում այդ տեղերի անտառները, փարթամ կանաչը։ Իր կանաչով, իր բերքով, վայրի անտառներով, հարուստ կենդանական աշխարհով Գիլանը և Մազանդարանը պարտական են Կասպից ծովին։

Առա ճանապարհը ելնում է Ռեշտից և ծռվելով մտնում բրնձի դաշտերի մեջ։ Դրանք իրարից բաժանված, փոքր ու մեծ հողամասեր են, ճիշտ այնպիսին, ինչպիսին մենք տեսանք Աստարա՝ Փեհլևի—Ռեշտ ճանապարհին։ Այս ու այնտեղ երևում են հատ ու կենտ խարխուլ, ծղոտածածկ կտուրներով խրճիթներ։ Աջ ու ձախ դարձյալ ճահճուտներ են։ Ճանապարհը շարունակ ծռվում է մեկ աջ, մեկ ձախ։ Հինգ րոպե մեքենան ուղիղ քշել չես կարող։ Նայում ես շուրջդ և

զարմանում՝ ճանապարհ կառուցող ինժեները երբեմն ծռել է այնտեղ, որտեղ ոչ մի խոչընդոտ, ոչ մի ճահճուտ չկա։ Ինչու, մտածում ես, մի՞թե չէր կարելի, եթե ոչ ուղիղ քանոնի գծով, գոնե համեմատաբար ուղիղ ճանապարհ կառուցել, որպեսզի շոֆերներն այժմ իրենց ղեկն այսքան աջ ու ձախ չշրջեին։ Մարդատար մեքենայում անգամ մարդ հոգնում էր դես ու դեն թեքվելուց, ապա ի՞նչ պետք է աներ ծանր, բեռնատար ավտոյի շոֆերը։

Լավ է, որ սովետական զորքերը բարեփոխել էին այդ ճանապարհը, կարգի բերել, ասֆալտապատել։ Հակառակ դեպքում անձրևային եղանակներին այստեղ ավտոն կխրվեր ինչպես էշը ցեխի մեջ։

Դեռ լեռներին չհասած, փոքրիկ մի ավանում, ուր բացօթյա շուկա կար և գետնին խոտի վրա փռել էին էժանագին կտորեղեն, կավե ամանեղեն, չոր մրգեր, բրինձ, կանաչեղեն և այլն, կանգ առանք։ Հետաքրքրական էր, այստեղ համարյա բոլորը որևէ բան ծախում էին, իսկ թե ով էր գնողը՝ հայտնի չէր։

Ճանապարհի վրա գտնվող խանութներից մեկում մի խումբ մարդիկ ծալապատիկ նստել էին թախտի վրա. մեկը չիբուխ էր ծխում, մյուսը՝ ղեյլան, մի երկու հոգի սև համրիչներն էին չխչխկացնում, իսկ դրսում եռում էր դեղին մեծ ինքնաեռը։ Երիտասարդ մի տղա լիքը դույլի մեջ բաժակներ էր լվանում ու ճարպկորեն սրբում կեղտից սևացած սրբիչով։

Ըստ երևույթին բոլորն էլ սպասում էին թեյի։

Մոտենալով խանութի դռանը, կատակի համար հարցրի.

— Դուք կակաո չունե՞ք։

Երիտասարդը մեղավորի պես ժպտալով ծնոտը մի քանի անգամ առաջ տվեց (բացասական պատասխանի դեպքում իրանցիները երբեք գլուխներն աջ ու ձախ չեն տարուբերում, ինչպես մեզ մոտ, այլ ծնոտն առաջ են տալիս, որ նշանակում է ոչ)։

— Ոչ, արբար, մերը թեյն է...

Եվրոպական տարազով մի մարդ, մեծ լուսանկարչական ապարատը խանութի առաջ եռոտանու վրա հարմարեցրած, հրավիրում էր անցորդներին նկարվելու։ Նրա մոտով, առանց կանգնելու, անցնում էին էշերի, ջորիների, ուղտերի վրա նստած և կամ դրանց վզներին կապած թոկերը ձեռքներին գյուղացիներ—թաղիքե, մորթե գլխարկներով, պատառոտված հագուստով, մեծ մասամբ ոտաբոբիկ և կամ տրեխներ հագած։ Երկու ջորի հասնելով լուսանկարչին՝ խրտնեցին և տերերի հետ միասին խեթ-խեթ նայելով հեռացան։ Ես չկարողացա հասկանալ, թե ինչից նրանք խրտնեցին. լայնեզր, փոշեծածկ գլխարկ ծածկած և վաղուց մաշված կոստյում հագած սև ակնոցներով լուսանկարչի՞ց, թե՞ կիսով չափ սևով ծածկված լուսանկարչական ապարատից։

— Ինչո՞ւ մի հարմար տեղ սենյակ չեք վարձում լուսանկարելու համար,—հարցրի նրան։

— Այդքան միջոց չունեմ, աղա,—պատասխանեց լուսանկարիչը։—Համ էլ մի տեղ չեմ մնում, շարունակ մի տեղից մի ուրիշն եմ գնում։ Եթե բազարի օրը գործ եղավ՝ լավ է, մյուս օրերը ոչինչ չի լինում։

— Եվ շարունակ այս ճանապարհի վրա՞ եք։

— Այո, տասը տարի է, ինչ այս ճանապարհի վրա եմ։

— Իսկ դուք չե՞ք ասի,-թե ինչու այս ճանապարհն այսպես ծուռումուռ են կառուցել։

Թափառական լուսանկարիչը ցուցամատը և բութ մատն իրար շփելով ասաց.

— Սա է պատճառը։ Տեսնո՞ւմ եք, ճանապարհը շարունակ անցնում է բրնձի արտերի միջով։ Ամեն մի հողատեր ցանկանում էր, որ իր հողամասից քիչ վերցնեն, ուստի կաշառում էր կառուցող ինժեներին։ Նա էլ ճանապարհը իժի պես ձեռքում խաղացնելով մեկ դեպի այս, մեկ դեպի մյուս հողատերն էր ուղղում։ Շատ կաշառք տվողը վանում էր իրենից այդ վտանգը։ Եվ այսպես ճանապարհն առաջ էր գնում օձի պես կեռ ու մեռ անելով։

Այդ կեռ ու մեռն էլ մեզ դուրս բերեց դեռ հեռվից երևա-

ցող անտառապատ լեռների ստորոտը։ Ճանապարհն այստեղ սկսեց բարձրանալ։ Ձախ կողմը լայն փռված մի ձոր էր՝ որով հոսում էր Սեֆեդռուդ գետը։ Երևում էր, որ գետը հանդիստ մի հունի մեջ չի մնում. շարունակ փոխում է իր հունը. հոսում է մերթ այս, մերթ այն ափով, մերթ ձորի միջով։ Այդ ժամանակ Սեֆեդռուդը ճյուղավորված էր։ Ձորում ընկած վիթխարի քարերը, ծառերն իրենց վիթխարի արմատներով ու գերաններն ասում էին, թե ինչպես է նա վարարում գարնանը՝ հորդ անձրևների ժամանակ։

Մենք գնում էինք գետի ձախ ափին ի վեր ձգված լեռների լանջերով, իսկ աջ ափին նույնպես անտառապատ լեռներ էին, որոնցից մեկի կնճռոտ կանաչազարդ կատարը թաղված էր կապույտ անհնության մեջ։ Կանաչ ծառերը լեռան ստորոտից սկսած մագլցել էին դեպի վեր և ասես հոգնած ու լեռան կատարի քերծերի կնճիռներից վախեցած՝ կանգ էին առել նրանից պատշաճ հեռավորության վրա։

ԱՄԽԻ ԽԱՆԸ

Սեֆեդռուդի աջ և ձախ ափերի անտառները մերթ թվում էին կանաչ, մերթ դեղին, մերթ էլ կարմրին էին տալիս։ Շրջապատի անտառներից այս ու այնտեղ երկինք էին ելնում ծխի փիրուզագույն սյուներ։ Կարելի էր կարծել, թե կապույտ երկինքն իր գույնը փոխ է առել ծխի այդ սյուներից։ Հեռավոր սարերում ծուխ չէր երևում և հազիվ թե մարդիկ երբևէ ոտք էին դրել այդ անառիկ, սեգ սարերում։

Այնտեղ, ուր ծուխ էր բարձրանում, չէին երևում ոչ խրճիթներ, ոչ գործարաններ։ Սակայն ի՞նչ ծուխ էր այդ։ Երկար սպասելու կարիք չկար, որպեսզի մենք այդ իմանայինք։ Հենց մեր ճանապարհի վրա շուտով սկսեցին երևալ աղքատիկ խրճիթներ, իսկ դրանց մոտ՝ ածխի հասարակ, փայտածածկ պահեստներ։ Իրանում դա ամենասիրված և տարածված վառելիքն է։ Դրանով են վառում մանղալները,

ինքնաեռները, դարբնոցների և պայտարների խանութների փոքրիկ հնոցները...

Պահեստներից մի քանիսում ածուխը քսակների մեջ լցված, դարսված էր։ Այստեղից ածուխ տանելու էին գալիս Թեհրանից, Ղազվինից, Ռեշտից։ Փոքրիկ պահեստներից մեկի մոտ կանգ առնելով ցանկացա իմանալ, թե քանիսով են վաճառում ածուխը։ Ջորապանկին գանվող պահեստում չորս հոգի կային՝ ոտքից մինչև գլուխը սևացած։ Դրանք բոլորն էլ երկարահասակ էին, բարակ ու ոսկրոտ։ Լայն սրահի տակ թափված ածուխը նրանք թիերով լցնում էին պարկերի մեջ։

— Ո՞վ է արբաբը,—հարցրի նրանց։

Ածխի պես սև մարդկանցից մեկը, առաջանալով դեպի դուռը, ցույց տվեց կից սենյակը, որի հատակի մի մասը կախված էր ձորի վրա և ասաց.

— Արբաբն այնտեղ է գտնվում։

Կից սենյակի դուռը բաց էր։ Հատակին փռված գորգին նստած էին երեք հոգի, բոլորն էլ լայնեզր գլխարկներ դրած, եվրոպական տարազով։ Գորգի մոտ թշշում էր փոքրիկ ինքնաեռը։ Մեզ տեսնելով, սենյակում գտնվողները ոտքի ելան, իսկ մեծ գլխով, պարարտ փորով, խոշոր, ոչխարի աչքերով մեկը առաջացավ դեպի դուռը, դրանով իսկ ցույց տալով, որ արբաբն ինքն է։

— Ածո՞ւխ եք ուզում գնել,—հարցրեց նա՝ հյութալի շուրթերը լեզվի ծայրով թրջելով։

— Ցանկանում ենք գինը իմանալ։

Նա հայտնեց գինը։

— Ավելի չունե՞ք։

— Ավելի կգտնվի, բայց թանկ եք ասում։

— Թանկ չէ, չարչարանքը շատ է. տեսնո՞ւմ եք որտեղից ենք բերում։

Նա ցույց տվեց վերի անտառապատ սարերը, ուր մի քանի տեղից ծուխը երկինք էր բարձրանում։

— Այնտեղից ածուխը, վառելուց հետո պետք է բերել այստեղ։ Ոչ սայլ կարող է աշխատել, ոչ գրաստ, ամեն ինչ մարդու ձեռքով պետք է արվի։

Նա այնպես էր այդ ասում, կարծես այդ ամենը կատարում էր սեփական ձեռքերով, իսկ մոտը կանգնած երկու հոգին, դեմքերին կիսաթախծալից արտահայտություն տված, գլխի շարժումներով հաստատում էին նրա ասածները։ Մեկը, ցանկանալով արքային ավելի օգտակար լինել, ավելացրեց.

— Եթե գնելու միտք ունեք, գնեցեք, ոչ ոք Յահյահ խանից էժան և լավ ածուխ չի տա ձեզ։

Այս անգամ պարարտ փորով մարդը—Յահյահ խանն ինքը հաստատեց նրա ասածները՝ իր մեծ գլխի շարժումներով։

— Իսկ ի՞նչու չեն տա,—հարցրի նրանց։

— Ուրիշները փայտը գնում են, իսկ Յահյահ խանը իր փայտից է ածուխ պատրաստում։

— Իր փայտի՞ց. այս անտառները ձե՞րն են,—դիմեցի Յահյահ խանին, ցույց տալով շրջապատի անտառապատ սարերն ու ձորերը։

— Իմն այս սարերն են և երկու գյուղը,—պատասխանեց խանը, մատը մեկնելով դեպի այն սարերը որտեղից ծուխ էր բարձրանում։

Հեռվից էլ երևում էր, թե ինչպես անխնա կերպով ոչնչացվում էին շրջապատի անտառները։ Մարդիկ արդեն ոչնչացրել էին ճանապարհի մոտ գտնվող ծառերը, թողնելով այդտեղ մատղաշ թփեր, որոնք ով գիտե քանի տարուց հետո միայն կարող էին ծառեր դառնալ։ Մի քանի լեռների լանջերը բոլորովին մերկացել էին. մատղաշ թփերը կարծես իրենց վերջին օրերն էին ապրում։ Եվ, ինչպես երևում էր, դա քչերին էր մտահոգում։ Մի երկիր, ուր շատ քիչ են կանաչապատ վայրեր, պետք է որ ավելի մեծ խնամք տանեն անտառները պահպանելու համար։ Մինչդեռ այստեղ մարդիկ ցեցերի պես մտել էին անտառների մեջ և հանուն ոսկու ոչնչացնում էին այն։

— Իսկ երբ անտառի ծառերը վերջացան, ի՞նչով պետք է զբաղվեք,—հարցրի Յահյահ խանին։

— Ծառերը այդքան շուտ չեն վերջանում. բացի դրանից իմ գործը հո ածուխ արտադրելը չէ։ Ոչխարի հոտեր, վարատեղեր ունեմ...

Պարզ էր. մեզ հետ խոսողը բավական հարուստ կալվածատեր էր. ճիշտ այդպիսի մեկին մենք տեսել էինք Աստարայից Փեհլևի գնալիս։ Այստեղ ածխի արտադրանքը բավական մեծ եկամուտ էր բերում նրան, դրա համար էլ նա օրվա մի մասը գտնվում էր ճանապարհի եզրին գտնվող իր «դրասենյակում», որի հատակը կիսով չափ կախված էր խոր ձորի վրա։

Յահյահ խանը կարծես նստած էր ոսկու մեջ։ Ոսկի էին բերում ծխող անտառները, նրա հոտերը և ասես ոսկի էր բերում խոր ձորում գալարվող, արագավազ Սեֆիդռուդը։ Ոսկին գալիս էր ինքնիրեն։ Խանի համար աշխատում էին նրա գյուղացիները՝ կոռի և բեգյարի դիմաց, իսկ շրջապատի անտառների համար հոգ էր տանում Կասպից ծովը։ Նա էր կանաչապատում լեռները, նա էր ամառվա տոթին փրկում կանաչը կորուստից, իսկ եկամուտն ստանում էին խանը և նրա նմանները։ Բայց ինչ արած, այդպես էր օրենքն այս երկրում։ Ո՞ւմ կշտամբեիր այդ անարդարացի օրենքի համար։

Մնում էր թողնել, շարունակել մեր ճանապարհը։

Քանի ավելի էինք բարձրանում, այնքան կանաչը լեռների վրա նոսրանում էր։ Ահա և վերջին անտառապատ լեռները։ Նրանց հետևում են ուրիշ, բայց միանգամայն մերկ, խիճածածկ լեռներ, որոնց ստորոտներում ասես փորձի համար ցանել էին գարի, որն անհայտ էր, թե ինչ արդյունք էր տվել, որովհետև դաշտում մնացած ցողուններն իրարից բավական հեռու էին ու լղարիկ։

Ռուստամաբադ ավանի մոտերքում կանաչը լեռներից փախել, պատսպարվել էր ձորերում և կամ այս, կամ այն սարի լանջին։ Մի քանի տեղ, գորշ լեռների, բլուրների լանջերին, ջրի հետք անգամ չկար, սակայն չգիտես ինչ հրաշքով այդտեղ աճել էին ծառեր։ Մարդ չէր հասկանում, թե ինչ-

պես են նրանք պաշտպանում իրենց գոյությունը քարքարոտ, խճճածածկ ու կանաչազուրկ սարերի ու բլուրների լանջերին։

Սակայն ի՞նչ ծառեր էին դրանք, ի՞նչպես էին տնկել այդտեղ և ի՞նչպիսի հրաշքով էին պահպանում իրենց գոյությունը։ Մենք այդ ասել չէինք կարող։

Տարիներ առաջ, երբ Մոսկվայի Տրետյակովյան թանգարանում դիտում էի նման տեսարաններ Մարտիրոս Սարյանի նկարներում, ինձ թվում էր, թե բնության մեջ դրանք չեն լինի, թվում էր, թե դա ֆանտազիա է, նկարչի հնարանքի արդյունք։ Մի՞թե հնարավոր է, որ մերկ, ասես ավազածածկ լեռների լանջերին, ուր արևը կրակ էր թափում երկնքից, ծառեր աճեն։ Սակայն այժմ ես չէի կարող չհավատալ մեծ նկարչին, որի վրձինի տակ շունչ էր առել արևելքի այս յուրատեսակ բնությունը՝ իր կիզիչ արևով...

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼՐՏԵՍԻ ՀԵՏ

Մոայլադեմ, կարծր քերծերի ու քարաժայռերի լանջերով ձգված ճանապարհը մեզ դուրս բերեց կանաչ մի օազիս, ուր գլուխ-գլխի տված աճում էին ձիթենիներ և փշատենիներ։ Արևից նեղված ուխտարների պես ծառերը կպել էին իրար. ասես վախենում էին չլինի՞ թե կիզիչ արևը խլի նրանցից մեկն ու մեկի կյանքը։

Քարքարոտ լեռներին կպած այդ կանաչ ավանը կոչվում է Ռուբբար։ Նրան կյանք տվողը ձիթենիներն են և մեկ էլ ավանով անցնող ավտոճանապարհը։ Ձիթենիները շատ են և խոշոր։ Սեֆիդռուդը դարեր շարունակ հափշտակել է ռուդբարցիների գետափնյա հողամասերը և դրանք հեղեղների երախը տված քշել դեպի ծովը և կամ ծածկել քարերով։ Խեղճ, վարարուն գետից նահանջելով մարդիկ կպել են քարքարոտ ժայռերին՝ գետափին հազիվ կարողանալով իրենց ձեռքին պահել թզաչափ հողամասեր։

Գետից շատ հեռանալու, փախչելու տեղ չի եղել և չկա։ Մարդիկ իրենց ավանով մնացել են ծվարած գետափին,

բայց ձիթենիները, փշատենիները բարձրացել են գետի հունից բավական վեր։ Նրանք ծառեր են տնկել այնպիսի տեղեր, ուր այծերն իսկ դժվարությամբ են անցնում։ Հեռու աղբյուրի ջուրը հանել են լեռների բարձրունքները։ Երբ ջուրը բաց են թողնում, կարծես վերևից քարեր են գլորվում, մինչդեռ հոսողը բարակ վտակ է։ Այնտեղ, ուր վտակի ջրերը չեն հասնում, թուփ անգամ չի աճում։

Ավանը բաժանված է երկու մասի. մի մասը կոչվում է նոր, իսկ մյուս մասը՝ հին Ռուդբար։ Բոլոր տները, բացառությամբ մեկի, որ պատկանում է գավառապետին, գյուղական տիպի են՝ կառուցված իրար վրա։ Մեկի կտուրը մյուսի բակն է համարվում։

Ավտոճանապարհի վրա գտնվող խրճիթները խանութներ են։ Ավանի կենտրոնում անգլիացիները բենզինալիցքի կետ են կառուցել և սպասարկում են անցնող ավտոներին։

Ռուդբարցիները վատ են ապրում։

Ձիթապտուղը շատ թանկ է գնահատվում։ Նրանից իրանցիները պատրաստում են ձեթ, որ գործ է ածվում ճաշի, սալաթի համար։ Այդ ձեթը գործադրվում է նաև որպես դեղորայք՝ ստամոքսի, լյարդի հիվանդության և սակավարյունության դեպքերում։ Ձիթապտղից նաև պատրաստում են օճառ։

Հենց այստեղ—Ռուդբարում կա մի գործարան, ուր մշակում են ձիթապտուղը։ Այն ընկած է ճանապարհի տակ, գետափին։ Ոչ սայլը և ոչ էլ ավտոն այնտեղ չեն հասնի։ Մարդիկ էլ գործարան գնալիս պետք է զգուշանան, որպեսզի ներքև չգլորվեն։

Մենք այնտեղ գնացինք, երբ դեռ ձիթապտղի բերքը չէին հավաքել։ Նեղ, ցեխոտ բակում թափված էին տակառներ, երկաթի ժանգոտած օղակներ, փտած տախտակի կտորտանքներ...

Ամբողջ գործարանը մի ցեխ ուներ, ուր կային ցեմենտից պատրաստած ավազաններ, երկու կաթսա։ Մի քանի դեռահասներ ծուլորեն ցեխից դուրս էին տանում քուսպի

նման ինչ-որ նյութ։ Ցեխից փչում էր խոնավության, ձեթի և օճառի անդուրեկան հոտ։

Գործարանի տերը բացակայում էր, իսկ այնտեղ գտնվողները անկարող էին մեզ որևէ բացատրություն տալ։

Ջիթապտղի հարուստ բերքը չէր բարելավի ռուդբարցիների խղճուկ վիճակը։ Ջիթենիներից շատերը նրանցը չէին։ Այստեղ հողամասեր ունեին ռեշտցի, ղազվինցի և նույնիսկ թեհրանցի հողատերերը, որոնք մարդ էին ուղարկում բերքը մշակելու և կամ ծախելու համար։ Ռուդբարցիներից շատերն զբաղվում էին անասնապահությամբ, ոչխար, տեղական մանր կովեր էին պահում և կամ նստած ճանապարհի վրա գտնվող ցածրիկ խանութներում առևտրով էին զբաղվում։ Որևէ ավտո անցնելու ժամանակ բարձրանում էր թանձր փոշի, ամպի նման ծածկում այդ խանութները, ճաշարանները, դրանցում դրված չամչի, սև խուրմայի արկղիկները, տժվժիկի կաթսաները...

Գյուղամիջում ճանապարհորդների համար կար մի քիչ թե շատ տանելի ճաշարան։ Ճաշարանի առաջ կանգնած էր մի «վիլիս»։ Մեր ավտոն էլ կանգ առավ դրա կողքին։

Ներս մտանք ճաշարանը։

Փոքրիկ սենյակում չորս թե հինգ սեղան էր դրված։ Աջ կողմից մի դուռ տանում էր դեպի ծխով լի խոհանոցը։ Այնտեղ միս էին խորովում։

Սեղաններից մեկի շուրջը նստած էին երեք հոգի։ Դրանցից մեկն իր արտաքինով՝ սև բեղերով, սև աչքունքով, դիմագծերով իրանցի էր՝ բավական կիրթ հագնված, բայց և փոշոտված։ Մյուսն իր հագուստով նման էր ճանապարհային ինժեների։ Ուշագրավ անձնավորությունը դրանցից երրորդն էր, որ նստած էր դեմքով դեպի դուռը։ Նա հագին ուներ անգլիական կիսազինվորական, կիսաքաղաքացիական հագուստ։ Դիմագծերով դժվար էր իսկույն ասել, թե նա ինչ ազգության է պատկանում։

Մեզ տեսնելուն պես նա տեղից վեր կացավ և մոտենալով ջերմ բարևեց մեր ընկերներից մեկին։ Նրա հետ բառ

երեվույթին մինչ այդ ծանոթ էր։ Նույն ջերմությամբ նա բարևեց նաև մեզ, չնայած իրար առաջին անգամն էինք տեսնում։

Նրա և մեր ընկերոջ միջև տեղի ունեցավ սովորական ընդհանուր հարց ու փորձ՝ առողջության, տրամադրության մասին։ Ապա մեր ընկերը հարցրեց.

— Ի՞նչ գործերով եք եկել մեր կողմերը։

Երկարահասակ, քաղցրախոս մարդը երկար չմտածեց պատասխանի համար.

— Գնում եմ Փեհլևի ճանապարհի մեքենան տեսնելու և մի քիչ էլ նարինջ գնելու։

— Ա՜,—խմաստալից բացականչեց մեր ընկերը։—Իսկ ձեզ մոտ՝ Ղազվինում նարինջ չկա՞, չի՞ն բերում ծախելու։

Կարծես չնկատելով մեր ընկերոջ հեգնանքը, նա շտապեց ասել.

— Մեզ մոտ կա, բայց լավերը չեն։ Խանութում երկար ժամանակ ընկած պահում են, հյութը գոլորշիանում է։

— Այդ վատ է, որ այդքան շատ է գոլորշիանում։ Իսկ դուք անցյալ կիրակի կարող էիք բավական քանակությամբ տանել, պահել մի սառը տեղ, որ չգոլորշիանա։ Թե չէ կհոգնեք այդպես շատ-շատ նարինջ գնելուց։

— Ոչինչ, օդափոխություն է։ Մի տեղ երկար մնալուց ձանձրանում եմ։

— Դուք ձանձրանու՞մ եք։

— Ձանձրույթը մարդկային է։ Դուք հակառա՞կ ուղղությամբ եք գնում։

— Այո, հակառակ ուղղությամբ, ցտեսություն,—շշտաված պատասխանեց մեր ընկերը և շրջվեց։

Անծանոթն իր զրուցակիցների հետ դուրս եկավ փողոց։

Ճաշարանում կարգին ոչինչ բան չկար, ուստի մենք էլ դուրս եկանք փողոց։

— Դուք գիտե՞ք ում հետ ծանոթացաք,—հարցրեց մեր ընկերը։— Դրա ազգանունը Հանիբալ է։ Պաշտոնով համարվում է անգլիական տրանսպորտային բաժանմունքի՝ Յուկ-

ռնսխի պետը Ղազվինում։ Այստեղ էլ ապրում է մոտ 15 տարի։ Նա ազգությամբ իրեն ռուս է համարում, բայց իրանահպատակ է։ Լավ գիտի անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն։ 1914 թվին իմպերիալիստական պատերազմի ժամանակ որպես սպա ծառայել է գեներալ Բարատովի կորպուսում։ Թուրքական ֆրոնտում դրան և դրա պետ գնդապետ Սեմյոնովին անգլիացիները հավաքագրում են, դարձնում իրենց ագենտները։ Այնուհետև գալով Իրան նա ամուսնանում է այստեղ մի իրանուհու հետ, շարունակում իր գործը սովետական երկրի սահմանակից քաղաքներում։ Այժմ Յուսուֆի «կտուրի տակ» անգլիական բանակի օգտին հետախուզական աշխատանք է տանում—տեղեկություններ է հավաքում սովետական զինված ուժերի, պաշտպանունակության մասին։ Նա շատ սերտ կապերով կապված է տեղի ռեակցիոն տարրերի հետ։

— Ահա թե ում հետ պատիվ ունեցանք ծանոթանալու,— բացագանչեց մեր ընկերներից մեկը։—Տեսնո՞ւմ եք ինչ պատճառ է հնարել Փեհլևի գնալու համար։

— Իսկ նա միշտ որևէ պատճառ գտնում է։ Ինչ էլ քաղցր խոսել գիտե։

Շատ կարևոր բան էր մեր ընկերոջ պատմածը։ Անգլիական իմպերիալիզմը ով գիտե ինչքան վարձու ագենտներ է պահում Իրանում, որպեսզի նրանց միջոցով կարողանա անցկացնել իր քաղաքականությունը։

— Շարժվենք, շարժվենք, օրը մթնում է,—առաջարկեց ընկերներիցս մեկը։

Մ Ե Ն Ջ Ի Լ

Ռուդբարից ճանապարհը գնալով բարձրանում էր և անցնում այնպիսի ահավոր ծերպերով, ուր մարդ վախենում էր ներքև նայել։ Սեֆիդռուդը խոր ձորի մեջ՝ կարծր ժայռերի արանքը նետված՝ ահավոր մռնչում էր։ Ճանապարհն

անընդհատ ծավալվում էր ժայռերի արանքում։ Հիսուն-վաթսուն մետր ուղիղ գնալ չէիր կարող։ Այստեղ, երկու ամիս առաջ, կաշվով բեռնված բեռնատար մի մեքենա շոֆերի հետ գլորվել էր ներքև։ Եվ երկու ամսվա ընթացքում ոչ ոք չէր համարձակվում մտնել այդ ձորը շոֆերի դիակն ու բեռը հանելու։ Ամերիկացիները ջրասուզներ էին բերել, բայց նրանք էլ ոչինչ չէին կարողացել անել։

Գետի այն և այս ափը հակառակ պատկեր էին ներկայացնում։ Աջ ափը ստվերոտ կողմն էր, ուստի այս ու այնտեղ լեռնալանջերը զարդարում էին կանաչ տարածություններ։ Իսկ ձախ ափը արևոտ կողմն էր, հետևապես և բուսականությունից միանգամայն զուրկ։

Ութ կիլոմետրից հետո մենք հասանք մի տեղ, ուր գետի վրայով երկար կամուրջ էր ձգված։ Կամուրջի հիմքը երկաթբետոն էր, իսկ վերևը ծածկված էր տախտակով։ Կամուրջն այդ միևնույն ժամանակ կարծես դարպաս էր երկու աշխարհի միջև։ Գետն ի վեր ձգվող լեռնաշղթաներն այստեղ այնքան էին նեղանում, որ կամուրջի աջ ոտքը հենվում էր մի լեռնաշղթայի վերջին բարձր սարի, իսկ ձախ ոտքը՝ մյուս լեռնաշղթայի նույնպես վերջին և երկնահաս սարի ստորոտին։ Դրանից հետո մեր աչքի առաջ բացվում էր լայն կաթսայանման մի տարածություն, անհարթ մի հովիտ։ Այս ու այնտեղ, մեկը մյուսին հենված, մեկը մյուսից հեռու բլուրներ էին բարձրանում։ Երևում էին ինչ որ դեղին, սաթի պես դեղին բարձրավանդակներ, մուգ կանաչով պատած ձորեր, քարքարոտ տեղեր։ Հետո հեռու հորիզոնում երկինք էր բարձրանում մեկ ուրիշ լեռնաշղթա՝ իր համարյա սև սարերով։ Եվ եթե մեկն ու մեկը փորձեր որոշ ժամանակ փակել գետի հոսանքը կամուրջի մոտ, ապա շատ կարճ ժամանակամիջոցում վերի մասում նորից կստեղծվեր վիթխարի մի լիճ՝ լեռներով շրջապատված։

Երկրաբանները ասում էին, թե վաղուց, շատ վաղուց այդպես էլ եղել է։ Կամուրջի տեղը երկու երկնահաս սարերի ճեղքվածքը դարերի գործ է։ Առաջ այդ ճեղքվածքի տեղը

երկու սարերն իրար հետ միացած են եղել և կազմել են այդ վիթխարի կաթսայի՝ մեծ լճի մի կողմը։

Սակայն ինչո՞ւ հենց այստեղ է պատռվել լճի ջուրը եղած լեռների պարիսպը։

Շատ ուրիշ պատճառների հետ մի պատճառն էլ, ինձ թվում է, այստեղի զարմանալի ուժեղ և երբեք չդադարող քամիներն են։ Հենց այդ քամիներով էլ Մենջիլի կամուրջը հայտնի է ամբողջ Իրանում։ Սովորություն է դարձել, շատ խոսողներին ասում են.

— Մենջիլի քամի չես, որ միշտ փչում ես։

Իսկ շրջապատի լեռներն այնքան մերկ են, քարքարոտ և օձաշատ, որ ասում են.

— Եթե Մենջիլի քամին չլինի՝ օձերը մարդկանց կուտեն։

Քամիներն իսկապես շատ ուժեղ են։ Կամուրջի վրայով անցնողն իր գլխարկի տերը չի լինի, եթե ձեռքով այն ամուր չպահի։ Գլխարկը կարող է թռցնել և սովորական քամին, իսկ այստեղ թվում է, թե մարդատար ավտոմեքենան ահա ուր որ է պետք է շրջվի ու նետվի վարարուն գետի մեջ։ Կամուրջի կողքերին քամին գետնից ավազի խոշոր հատիկներ և քարի կտորտանքներ է վերցնում ու զարկում մարդու դեմքին, ձեռներին՝ ասեղի պես ծակոտելով դրանք։ Կարծես մթնոլորտի ցուրտ և տաք հոսանքների խառնարանը հենց այստեղ է—Մենջիլի կամուրջի վրա, որից և առաջանում են այդ քամիները։

Եվ եթե այստեղ, Մենջիլի կամուրջից վերը, երբևէ եղել է մեծ լիճ, մի՞թե պարզ չէ, թե ինչպես այն կարող էր ճեղքվել։ Իսկ որ լիճը եղել է, դրանում կասկած չկա։ Այդ մասին են վկայում ամբողջ այդ կաթսայանման տարածության՝ հովտի շերտերում գտնվող բրածոները։

Քամիները դարեր շարունակ լճի ջրերը քշել են այս կողմը, պատռել լեռնաշղթան այսօրվա կամուրջի տեղում և այդպիսով դատարկել վիթխարի լիճը։ Այնուհետև լճի մեջ թափվող ջրերը հավաքելով կազմել են այսօրվա Սեֆեդռուդը։

Մենջիլ գյուղը, ուր մենք գնում էինք, գտնվում է կամուրջից մեկ ու կես—երկու կիլոմետր հեռավորության վրա։ Ճանապարհը գետից մինչև գյուղը զառիթափ է. բեռնատար ավտոները շարժվում են կրիայի ընթացքով՝ փնչալով, գոլորշի ու ծուխ արձակելով։

Ահա վերջապես և բարձրավանդակի վրա փռված գյուղը՝ ցածրիկ, գորշ խրճիթներով, նեղլիկ, իրար հյուսված փողոցներով։ Գյուղի մեջ աչքի է ընկնում մեչիդի շենքն իր կլոր գմբեթով։ Խրճիթները մեծ մասամբ շրջապատված են ձիթենիներով։ Շրջապատի գորշ ֆոնի վրա այդ կանաչը հաճելի է։

Կամուրջից դեպի հյուսիս-արևմուտք փռված հովիտն այստեղից երևում է իր ողջ մեծությամբ։ Այնքան լայնարձակ է այդ հովիտը, որ ոչ միայն սովորական աչքով, այլև հեռադիտակով չես տարբերում մերթ կապտավուն, մերթ ոսկեզօծ, մերթ գորշագույն, մերթ մուգ կանաչ հեռուներում փռված գյուղերն ու սարերը, ցանքադաշտերը, այգիները։ Մոտ տեղերում երևում են ձիթենիների մասիվները։ Շրջապատի մեջ նրանք տարբերվում են իրենց մուգ կանաչ գույնով։ Տեղ-տեղ, երբ ձիթենիները խառնված են փշատենիների հետ, կանաչին խառնվում է արծաթագույն երանգը, իսկ քամու ժամանակ այդ երանգը մերթ երևում է, մերթ չքանում։

Մենջիլի մոտ դեպի երկինք սլացող լեռներն անանցանելի պատնեշ են հանդիսանում Կասպից ծովի կողմերից փչող խոնավ քամիների առաջ։ Ինչպես Մենջիլը, այնպես և նրա առաջ փռված հովիտը կարոտ են խոնավ հոսանքների։ Գյուղն օգտվում է հորերի և լեռներից առատորեն հոսող վտակների ջրերից։ Այդ ջրերը հնարավորություն են տալիս տեղ-տեղ նույնիսկ գարու արտերը ջրել։

Մենջիլն ընկած է Ռեշտի և Ղազվինի կիսաճանապարհին, ուստի նման է մի կայարանի, ուր բոլոր ուղևորները հանգստանում են, թեյ խմում, ճաշում և շարունակում իրենց ճանապարհը ու կամ ուշ լինելու դեպքում գիշերում։ Հենց

այդ պատճառով էլ ճանապարհի վրա բացել են ճաշարաններ, թեյարաններ ու խանութներ։ Բայց միայն դրանով չէ հայտնի գյուղը։ Այստեղ կա ձեթի երկու գործարան։ Շրջակայքից գյուղացիներն այստեղ են բերում իրենց ձիթապտուղը։

Ձեթի գործարաններից մեկը պատկանում է թեհրանցի մի հարուստի։ Այն տեղավորված է իջևանատան լայն բակում։ Հեռու տեղերից եկած գյուղացիներն իրենց գրաստներով, ուղտերով գիշերը մնում են այդ բակում։ Ամբողջ բակը ծածկված է տրորված խոտով, հարդով, գոմաղբով։ Այս ու այնտեղ թափված են տակառներ, կարասներ։ Գործարանի տերը Թեհրանից այստեղ է գալիս բերքահավաքի նախօրյակին, որպեսզի կարողանա վերականգնել կապերը գյուղացիների հետ և նրանց հավաքած բերքն իր մոտ քաշի։ Ինչպես ամեն տեղ, այստեղ ևս գործարանատերերը մրցում են իրար հետ։ Բայց կա մի հանգամանք, որ գյուղացիներին կապում է այս կամ այն գործարանատիրոջ հետ և թույլ չի տալիս ուրիշին դիմելու։ Դա պարտքն է։ Պարտք ունեցող գյուղացին կամա-ակամա գալիս է իր պարտատիրոջ մոտ։

Մրցություն է գնում նաև արտադրանքը ծախելու ուղղությամբ։

Գործարանատերերը կաշառում են ճանապարհի վրա գտնվող խանութպաններին՝ գնորդներին իրենց մոտ ուղարկելու համար։

Մենք ուզում էինք գնել մի լիտր ձեթ։ Ճանապարհի վրա երկու խանութպանից հարցրինք, թե որ գործարանի ձեթն է ավելի լավ։ Երկուսն էլ տարբեր պատասխաններ տվին։ Մեկը նույնիսկ շշերի մեջ ուներ երկու գործարանի արտադրանքի նմուշները։

— Դուք տեսնո՞ւմ եք ո՛րքան պարզ ու հստակ է այս ձեթը՝ կարծես քահրբար լինի։ Իսկ մյուսը տեսեք՝ ինչքան պղտոր ու կանաչ է,— ասաց խանութպանը,— եթե շատ եք գնելու՝ սրանից գնեցեք։

Շատ քիչ պետք է գնեինք, բայց և այնպես մենք գնացինք այն գործարանը, ուր լավ ձեթ էին արտադրում։

Դուռը մեր առաջ բաց արեց գյուղացու կերպարանքով մի երիտասարդ.

— Աբբարն այստե՞ղ է։

— Այո՛, ա՛յ այս սենյակումն է։

Պատերից մեկի տակ մի քանի նիհար, դեղնած, վատ հագնված կին դույլերով ջուր էին լցնում տակառների մեջ։

Մեզ առաջնորդող գյուղացին կանգ առավ այն սենյակի դռան առաջ, ուր նրա ասելով գտնվում էր աբբարը։ Սենյակի դուռը բաց արեց հիսունն անց, բայց տակավին թարմ, կարմրավուն այտերով, յուղոտ շուրթերով մի մարդ և մեզ հրավիրեց ներս։ Դա նրա բնակարանն էր։ Սենյակի հատակը, պատերը, պատի տակ դրված թախտը գորգածածկ էին։ Թախտի դիմաց դրված էր գրասեղան, որն ըստ երևույթին ծառայում էր նաև որպես ճաշասեղան։ Այդ պահին նրա վրա դրված էին մի փոքրիկ թեյնիկ, կաթով լի բաժակ, դեղնավուն թխվածքի կտորտանքներ։ Աբբարն այստեղ մենակյացի կյանք էր վարում։

— Մենք նմուշի համար ուզում ենք ձեզնից մի լիտր յուղ գնել։

— Խնդրեմ, խնդրեմ, բայց ինչո՞ւ այդքան քիչ. կարող եք ավելին վերցնել։ Իմ ձեթի նմանն ուրիշ տեղ չեք գտնի։ Երեսուն տարի է, ինչ այս գործով եմ զբաղվում, իսկ ուրիշները պատրաստել չգիտեն. փչացնում են, երբ ձեթ են պատրաստում. վերցնում ես ձեռքդ՝ չգիտես սառնաջու՞ր է, թե ձեթ։ Աման ունե՞ք։

— Ոչ, աման չենք վերցրել։

— Այ դա վատ է։ Ինձ մոտ էլ շատ քիչ է մնացել։ Ամանեղեն էլ չի գտնվում, թանկ են վաճառում։

«Ամանի գինն էլ է ուզում», անցավ իմ մտքով։

— Մենք ամանի համար կվճարենք։

— Հա, ուրիշներն էլ գալիս են... Հիմա ասեմ բերեն։

Դուռը բանալով նա ձեռքով արեց դրսում աշխատող

կանանցից մեկին և երբ նա եկավ, տվեց նրան մի շիշ, ասելով.

— Սա լվա, հետո տուր թող ձեթ լցնեն։ Ասա զգույշ լցնեն, չկաթկթեցնեն։

Ինձ համար մի տեսակ տարօրինակ էր թվում այդքան հարուստ մարդու ծայր աստիճան ժլատությունը։ Գոնե ամաչեր հյուրերից և առաջին իսկ պահից չբանար իր նեղ հոգին։ Նա, ինչպես երևում էր ոսկեշար ատամներից, գորգերից, յուղոտ, առույգ դեմքից, ոսկու մեջ էր ապրում։ Բայց և այնպես խոսում էր ձեթի կաթիլների մասին։ Միևնույն ժամանակ իր խոսակցությամբ, ժպիտներով ցանկանում էր ցույց տալ իբր ինքը կարգին, բարի մարդ է։ Սրանում արդեն դժվար էր համոզվել։ Այդպիսիները միշտ էլ մարդու մեջ հենց առաջին վայրկյանից հակակրանք են առաջ բերում։ Մեր առաջ կանգնած էր կենդանի մի Գոբսեկ։

Վերցնելով զեյթունի ձեթը, մենք հեռացանք։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՌԵԱԿՑԻՈՆԵՐԸ ԵՎ ԴԵՄՈԿՐԱՏԸ

Նրանց հետ ծանոթացանք ճանապարհի վրա գտնվող թեյատան մոտ։ Առաջինը միջահասակ, դեմքի թխագույն մորթով, պղտոր աչքերով, սև մազերով մի գյուղատնտես էր՝ փողկապ կապած, անգլիական կիսազինվորական բաճկոն հագին։

Նա ինքը մեզ հետ զրուցելու ցանկություն հայտաբերեց՝ հարցնելով թե որտեղից ենք գալիս և ուր ենք գնում։

Մենջիլում ամեն տեսակի մարդիկ կային, ուստի և մենք չէինք կարող ամենի հետ խոսքի բռնվել։ Բայց նրա հետ չխոսել չէր կարելի. նա տեղի գյուղատնտեսն էր։ Մի բան ինձ համար հասկանալի չէր—ի՞նչ կարող է անել գյուղատնտեսը մի տեղ, ուր գյուղացիները նրա կարիքը բնավ չեն զգում. ձիթենիները, գարին, փշատենիներն աճում էին իրենք իրենց։ Անասնապահության ասպարեզում ես նոր ոչինչ

չկար։ Անասուններին պահում, աճեցնում էին ճիշտ այնպես, ինչպես իրենց նախապապերը՝ հարյուր-երկու հարյուր տարի առաջ։

Ուրեմն ո՞ւմն էր հարկավոր գյուղատնտեսը։

Բայց ահա թե ինչ։

Մենջիլի հովտում այգեգործությունից, անասնապահությունից բացի զբաղվում են նաև բամբակագործությամբ։ Հարևան գյուղում կար բամբակազտիչ գործարան, ուր նախնական մշակման էր ենթարկվում բամբակը։ Դրա արտադրանքը դարձյալ խոշոր հողատերերի ձեռքին էր։ Հենց մեկը դրանցից՝ խանի որբևայրի կինն ապրում էր Մենջիլում, ուներ մեծ քանակությամբ հողամասեր։ Ինքը գյուղատնտես և հողատեր էր։ Տեսնելով մեր ձեռքի ձեթը՝ զեյթունի յուղը, նա ասաց, որ ինքը դրանից էլ լավն է պատրաստում։ Մենք նրան առաջարկեցինք ցույց տալ իր ձեթը, իսկ նա մեզ հրավիրեց իր տունը։ Այն գտնվում էր ճանապարհի վրա, մոտ հարյուր քայլի վրա։

Գնացինք։ Նրա տունը երկհարկանի էր. երկրորդ հարկն ապրելու համար, իսկ ներքևի հարկը՝ տնտեսության։ Բակում վխտում էին հավեր, բադեր, հնդկահավեր... Տան պատերը զարդարված էին գունավոր՝ կապույտ կղմինդրներով։ Դա նշան էր, որ տունը կառուցողը գրպանում բավական փող էր ունեցել։ Լայն բակի մի կողմ, քամու տակ, ճոճվում էին ձիթենիները, ուռենիները և փշատենիները։ Դա թերևս տնամերձ այգու նման մի տեղ էր, սակայն այնտեղ ոչինչ կարգին չէր։ Երկու ուռենուն փաթաթված խաղողի որթերը ժամանակին չկտրելու պատճառով բավական չոր ճյուղեր էին տվել։ Դրանց տակի ծաղկանոցն ավերել էին թռչունները։ Մի խոսքով գյուղատնտեսական գիտությունն այստեղ մուտք չէր գործել։

Գյուղատնտեսը քարե աստիճաններով բարձրանալով երկրորդ հարկը՝ հետը բերեց մի շիշ զեյթունի ձեթ։ Դա թե՛ իր տեսքով, թե՛ համով և թե՛ հոտով անդուրեկան, կանաչավուն արջասպի գույնի հեղուկ էր։ Սակայն նա մեզ հավա-

տացնում էր, որ իր արտադրածն ավելի լավն է, քան մեր գնածը։ Մենք չէինք կարող վիճել, որովհետև նման ձեթ երբեք չէինք գործածել։ Այդ շիշը ես գնեցինք, որպեսզի մեր մի ընկերոջ միջոցով ուղարկենք Ռեշտ։ Ընկերներից մեկը նկատեց.

— Երևի Մենջիլի ամեն մի գյուղացու տան բավական քանակությամբ կա այս ձեթից։

— Ո՛չ տղաս,—շտապեց ժխտել գյուղատնտեսը,—շատերը տարին բոլոր կարոտ են դրան և իրենք են գնում ուրիշներից։

— Դա վատ է։ Ինչու բոլորը չպետք է ունենան։

— Գիտե՞ք ինչ, երիտասարդ,—ասաց գյուղատնտեսը,— բոլորը չեն կարող ունենալ։ Մեկն ունի, մյուսը՝ չունի։

— Ես էլ այդ եմ ասում, բոլորը պետք է ունենան։

— Երբեք այդպես չի եղել և չի լինի։ Աշխարհում միշտ էլ ունևորն ունևոր է եղել, իսկ աղքատը՝ աղքատ և այդպես էլ կլինի։ Ալլահն է կյանքն այդպես ստեղծել։

— Ինչքան անարդարացի է եղել ալլահը,—բացագանչեցի ես։

— Իսկ արդարացի՞ կլիներ, եթե բոլորին շահ դարձներ։ Այն ժամանակ բոլորս կլինեինք աղա, հապա մեր աղունն ո՞վ կաղար։

Գյուղատնտեսը չէր կարող չիմանալ մի բան. աշխարհում կար մի երկիր, ուր յոլա են գնում առանց աղաների, բայց նա իրենց մոտ այդ չէր հանդուրժում, որովհետև ինքն իսկական աղա էր. պետությունից ռոճիկ էր ստանում, ուներ իր հողամասերը, տղային էլ ուղարկել է Թեհրան սովորելու։ Էլ ի՞նչ էր հարկավոր, ինչո՞ւ ուրիշներն էլ ունենան այդ հնարավորությունը։ Խոսելով իր հայրենիքի՝ Իրանի հեռավոր անցյալի մասին, նա պատմական սահմաններ էր անցկացնում այնպիսի տեղերով, որոնք երբեք Իրանինը չեն եղել։ Նրա մեջ խոսում էր իրանական ռազմաշունչ ռեակցիայի ոգին։

Խոսելով մենք վերադարձել էինք մեր մեքենայի մոտ։ Մի քանի հետաքրքրասեր մարդիկ մոտ կանգնած լսում էին մեզ։ Գյուղատնտեսը վախվխելով նայում էր աջ ու ձախ և ըստ երևույթին մի առիթ փնտրում զրույցի թեման փոխելու համար։

Հենց այդ պահին գյուղացի մի տղա եկավ, հայտնեց, որ նրան կանչում են։

Մեզ հետ զրույցի բռնվեց երկարահասակ, նիհար, դալուկ դեմքով, խելացի աչքերով մի երիտասարդ։ Նա հաշվապահ էր բամբակազտիչ գործարանում և իր հայրենիքը պակաս չէր սիրում, քան գյուղատնտեսը։ Սակայն շատ մեծ էր տարբերությունը նրա և գյուղատնտեսի միջև։ Երիտասարդը շատ լավ գիտեր իրանական գրականությունը և կտորներ էր արտասանում Խայամից, Սաադու գրվածքներից։ Նա մի տեսակ զարմացած և հիացած էր, որ ես էլ եմ ծանոթ իրանական կլասիկ գրականությանը և խոսք չէր գտնում իր զգացմունքները հայտնելու համար։ Աշխարհին հայտնի հայրենի կլասիկ գրականությունը նա համարում էր որպես պատմական փաստ։ Այդ անցյալը նա գնահատում էր, բայց և այնպես ամենից շատ գերված էր իր հայրենիքի ներկայով և ապագայով։ Իրանի ներկա վիճակի մասին նա վշտով էր խոսում։

— Մեր երկիրը կառավարողները ցանկանում են երկիրը ճորտության տալ ամերիկացիներին և անգլիացիներին։ Նրանք օգտվում են ժողովրդի հետամնացությունից։ Մենք, դեմոկրատներս, ցանկանում ենք, որ մեր արտադրած բամբակը մշակվի հենց այստեղ՝ մեր ֆաբրիկաներում, մեր բանվորների ձեռքով։ Իսկ ռեակցիոներները, հաշվի չնստելով ժողովրդի ցանկությունների հետ, մեր հումքը տալիս են ամերիկացիներին։ Հենց այդ պատճառով էլ մենք չենք առաջադիմում, մնում ենք տեխնիկապես հետամնաց երկիր։ Սակայն, պետք է ասել, որ ժողովուրդն արդեն խելքի է

գալիս և կգա մի օր, երբ նա այլևս չի ցանկանա կապիտալիստների ձեռքին խաղալիք լինել և ինքը կսկսի իր բախտը տնօրինել։

Երիտասարդ դեմոկրատին առանձնապես վիշտ էր պատճառում ամերիկացիների և անգլիացիների միջամտությունն Իրանի ներքին գործերին։

— Նրանք մեր երկրում ուժեղացնում են ռեակցիայի լագերը, զենք են տալիս նրա ձեռքը, որպեսզի դրա օգնությամբ ռեակցիան կարողանա խեղդել ժողովրդական շարժումը, դեմոկրատական պարտիային։ Ճիշտ նույն կերպ էին վարվում նաև ֆաշիստները։ Նրանք էլ եկան մեր երկիրը, սկսեցին թելադրել իրենց կամքն ամեն մի գործում։ Ռեակցիան ուժեղացավ և այլևս ժողովուրդը չէր կարող որևէ պահանջ առաջադրել։ Ժողովրդի շահերի համար պայքարողներին բանտ էին նետում։ Կալվածատերերը գյուղացիների հետ վարվում էին ինչպես իրենք էին ցանկանում։ Հիմա էլ դեռ շատերը չեն հասկանում, որ ամերիկացիների միջամտությունը մեր երկրի գործերին՝ փաստորեն գյուղացիության և բանվորների ճորտություն է նշանակում։

Երիտասարդ դեմոկրատը գյուղում մենակ չէր։ Նրանք հաճախ ժողովներ էին ունենում, ուր քննարկում էին քաղաքական հարցեր։ Դեմոկրատների հետևից էր գնում գյուղացիության բացարձակ մեծամասնությունը։

Իրանական ռեակցիան կարող է ամերիկական իմպերիալիստների կամակատարը դառնալ, սակայն երբեք նրան չի հաջողվի գլխատել իրանական ժողովրդին, որն արդեն գիտե դեպի ազատություն և երջանկություն տանող ճամփան, գիտե իր թշնամիներին և չի ների նրանց դավաճանական քաղաքականությունը։

Իրանում շատ են խոսում շանսի մասին և հավատում են դրան։ Իմպերիալիստների կոշիկները լիզողներին, երկրի շահերն ամերիկյան դոլարով փոխարինողներին ոչ մի շանս չի օգնի՝ երբ նրանք կանգնեն իրանական ժողովրդի դատաս-

տանի առաջ։ Այս էր վկայում երիտասարդ դեմոկրատի խոսակցությունը՝ իր սիրելի հայրենիքի, իր ժողովրդի ներկա վիճակի մասին։ Երկարահասակ, բարակ, բոցեղեն աչքերով երիտասարդը նման էր խավարի մեջ լույս տվող ջահի։ Նրա նմանները Իրանում քիչ չեն։ Նրանք իրենց ընդունակությունները, եռանդը, սիրտը նվիրաբերել են ժողովրդի ազատության գործին։ Երկրի ապագան նրանցն է։

Զրույցից հետո նա ներողություն խնդրեց, մեզ երկար զբաղեցնելու համար, ապա մի քանի հոգու հետ գնաց իր գործին։

Նա քայլում էր կայտառ, հաստատուն քայլվածքով, ուրախ զրուցելով ընկերների հետ։ Ես չգիտեմ ինչու նայեցի նրա հետևից այնքան ժամանակ, մինչև նա անհետացավ գյուղի փողոցներից մեկում։ Ինձ թվաց, թե նա գնաց մեծ սխրագործություն կատարելու։ Եվ չեմ կասկածում՝ իրանական ողջ ժողովուրդը մի օր կխոսի իր այդ ազնիվ, քաջարի զավակների մասին։

ԹԵՅԱՐԱՆ

Մեր ավտոմեքենայի կողքին կանգնած էր ուրիշ ավտոների մի ամբողջ շարան։ Դրանք դեպի Ռեշտ և Ղազվին գնացող ավտոներ էին։ Շոֆերները, բեռների վրա տեղավորված ուղևորներն իջել հանգստանում էին, ճաշում, թեյ խմում։

Մենք էլ ցանկացանք մի-մի բաժակ թեյ խմել։

Թեյատան հենց դռան մոտ դրված էր մեծ, դեղին ինքնաեռը։ Նրա խողովակից կայծերի խուրձ էր ելնում։ Նույնպիսի մի ինքնաեռ դրված էր գյուղական տիպի մեծ սենյակի խորքում՝ ցածլիկ, չգիտես որ դարում կարմիր ներկած պահարանի վրա։ Երկարահասակ, ճաղատ գլխով, սուրքիթ մի մարդ շխշխկացնում էր բաժակներն ու ափսեները՝ րոպեն մեկ նայելով սեղանների շուրջը նստած երեք հոգուն՝ տեսնելու համար, թե ով վերջացրեց իր թեյը։

Որնք հոգի էլ ծալապատիկ նստած էին կարպետով ծածկված Թախտին՝ փոքրիկ հրաշեկ ածուխով լի մանղալի շուրջը։ Նրանք այնպես էին կծկվել մանղալի մոտ, որ ասես պիղ տոթին մրսում են։ Դրանցից մեկը նիհար, դեղին մորուքով, կնճռոտ ճակատով, հողագույն մորթով մի ծերուկ էր։ Նրա դեմ հանդիման նստած էր երեսունն անց մի մարդ, որին քիչ առաջ ես տեսել էի մեքենա վարելիս։ Այժմ նա ձեռքին ուներ ծխամորճ, ծխում էր որոշ ընդհատումներով և շուրթերը չմիացնելով։ Նույնն էր անում և նրա մոտ նըստած քառասունին մոտ, ակրիխինին ընդունածի պես դեղին դեմքով մարդը։ Առաջին պահ ինձ թվաց, թե մարդիկ երկար ճանապարհից հետո հանգստանում են Թախտին ծալապատիկ նստած՝ իրենց համար սովորական ծխամորճ ծխելով։ Մի պահ նայելուց հետո նկատելի էր դեղնամորուք ծերունի «հոգատարությունը» ծխամորճ ծխողների նկատմամբ։ Նա ունելիով կրակն էր շուռ ու մուռ անում, կրակ էր տալիս ծխողներին։

Չլիներ հաշիշի ծանր, անդուրեկան հոտը՝ դժվար կլիներ ասել, թե ինչ են ծխում շոֆերները։

Ծխելուց հետո նրանք պետք է շարունակեին իրենց ճանապարհը, պետք է անցնեին անդնդախոր ձորերի եզրերով, հազար ու մի վտանգավոր տեղերով։ Բայց առայժմ ինձ հետաքրքրում էր ուրիշ բան. ասում էին, իբր հաշիշ ծխելն օրենքով արգելվում է։ Ի՞նչու ապա այստեղ նրանք ծխում են։

Շոֆերներից մեկը ինձ բացատրեց.

— Ծխողներին տալիս են գրքույկ, դա նրանց իրավունք է տալիս ամեն տեղ ծխել։

— Իսկ ինձ ասել էին ծխելն ընդհանրապես արգելվում է։

— Ոչ, աղա, չեն կարող արգելել. ոսկի է բերում չէ՞, ո՞վ կհրաժարվի ոսկուց։

— Իսկ ի՞նչ արժե հաշիշի կիլոն։

— Կիլոյով չեն ծախում, այլ բարակ մոմերով։ Մի հատ ցույց տուր,— դիմեց նա ծերուկին,— տեսնո՞ւմ եք ինչքան բարակ է և արժե ութ թուման։

— Ութ թումա՞ն։ Իսկ օրական քանի՞ հատ կարելի է ծխել։

— Նայած ծխողին։ Մարդ կա շատ է ծխում, մարդ կա՝ քիչ։

— Այդ դեպքում ռռճիկդ միայն ծխելու պետք է տաս։ Շոֆերը ծիծաղեց.

— Երբեմն ռոճիկը չի հերիքում։

Նա բավական բարձր տրամադրության մեջ էր և ինձ հետ զրուցում էր մեծ հաճույքով՝ մերթ ընդ մերթ ընդհատելով զրույցը, որպեսզի ծխի ծխամորճը։ Ծխում էր ախորժակով, նույնիսկ ագահորեն՝ բութ մատը պահած ծխամորճի կրակի վրա։ Կյանքումս երբեք չէի տեսել իր դժբախտությունն այդպես ախորժակով ճաշակող մեկ ուրիշ մարդու։ Այդ շոֆերները դեռ երիտասարդ էին, դեռ կարողանում էին փող վաստակել։ Բայց կգար մի օր, երբ նրանք՝ հյուծված, թունավորված, ուժասպառ եղած, անընդունակ կլինեին որևէ աշխատանքի։

Ես Ռեշտում տեսել էի մի ծեր բժշկի։ Նա փողոցներում շրջում էր կծկված, ամեն օր փողոց դուրս գալուց առաջ ասես մի լավ ծեծված, խեղճ, շատ խեղճ հագնված։ Նա անհամարձակ, վախվխելով մտնում էր խանութները, ցամաքած աչքերով նայում առևտրասեղանների հետև կանգնած խանութպաններին։

Նա ողորմություն էր հայցում։

Մինչդեռ առաջ, որպես քաղաքի աչքի ընկնող բժիշկներից մեկը, վատ չէր ապրել։

Հաշիշը նրան հասցրել էր այդ օրին։

Եվ ո՞վ գիտե ինչ օրի պետք է հասցներ այս շոֆերներին։ Երկու ամիս առաջ Սեֆեդռուդի գետը գլորված շոֆերն

էլ նախ քան այդ նստել էր կապերտով ծածկված այս Թախտին, ղեկնամորուս այս ծերուկի առաջ։ Ծերուկը գերագույն սառնասրտությամբ և անտարբերությամբ թունավորում էր մարդկանց ու ոսկի վաստակում։

Թունավոր այդ մթնոլորտում նստել, թեյ ճաշակել չէր լինի։

— Շարժվենք, շարժվենք առաջ,—ասաց մեր ընկերներից մեկը և՛ զարմանալով, և՛ զզվելով իր տեսածից։—Ճանապարհին գուցե ուրիշ տեղ ավելի լավ թեյատուն գտնվի։

Մինչև Ղազվին որևէ տեղ կարգին թեյատուն լինել չէր կարող։

Մենջիլից հետո նորից սկսվում էին մերկ ու տոշոր լեռներ, կարմիր, դեղին, ճերմակ քարաժայռեր, քերծեր։

Կյանք գոյություն ուներ միայն գետերի ափերին։ Հենց որ երևում էր որևէ փոքրիկ գետակ, այնտեղ անպայման նաև մարդիկ էին հայտնվում։ Հեռվում, շրջապատի դորշ, անկենդան բնության մեջ, հանկարծ ձեր աչքի առաջ բացվում է մի փոքրիկ կանաչ տարածություն։ Մոտենում եք՝ բարդիներ են, բարակ, սլացիկ բարդիներ։ Իրանցիներն այս կողմերում սիրում են այդ ծառը և այնտեղ, ուր ջուր կա— տնկում են դրանցից։

Միշտ վեր ու վեր բարձրացող ճանապարհի կողքերին, մռայլադեմ քարքարոտ սարերի լանջերին երբեմն երևում էին խղճուկ գյուղեր՝ կավածածկ կտուրներով։ Նման գյուղերում, ուր խաշնարածներ են ապրում, խրճիթների պատերը շարած էին անտաշ քարերով։ Մի քանիսը ամբողջովին լքած էին, չգիտես ինչու կիսավեր, իսկ շատերը թափուր էին տոթի պատճառով։ Գյուղացիներն իրենց անասունների հետ երևի սարերն էին բարձրացել։

Այս ու այնտեղ պատահող ոչխարի հոտերի, խոշոր եղջյուրավոր անասունների մեծ մասը, չգիտես ինչու, սև էր։ Սև էին կովերը, գոմեշները, եզները, այծերը։ Սև գույնը

հատկանշական է այս կողմերի պնպառնների բացարձակ ճեծամասնության համար։

Մենջիլից հետո մինչև Ղազվին ճանապարհը պալարվելով սարերի, լեռների շուրջը, խոր ձորերում ու դրանց եզրերին՝ շարունակ վեր էր բարձրանում։

Մոտ ութսուն կիլոմետրից հետո մենք դուրս եկանք ծովի մակերևույթից 1320 մետր բարձրության վրա գտնվող Ղազվինի դաշտավայրը։

ՂԱԶՎԻՆ

Անմարդաբնակ, խուլ ձորերից, մռայլ ժայռերից ու քարծերից հետո հաճելի էր տեսնել կանաչի մեջ թաղված գյուղեր, որոնք հայտնի են իրենց այգիներով։ Մրգերով հարուստ է Ղազվինը. ա ստեղ աճում է խաղող, ծիրան, նուշ, ընկույզ ու ֆստան։ Ամբողջ Իրանում տարածված «Շահանի», «Շաքար շիրազի» գինիները, չամիչը պատրաստում են Ղազվինի խաղողից։

Մի քանի այդպիսի գյուղեր անցնելուց հետո ահա երևաց և ինքը Ղազվինը՝ հարթ տարածության վրա փռված, ցածրիկ, միհարկանի կամ երկհարկանի տներով։

Դժվար է ասել, թե ինչից է առաջացել այս քաղաքի անունը։ Ենթադրություն կա, որ քաղաքի հիմքը դրել է պարսկական թագավոր Շափուր առաջինը։ Հետագայում այն պարսպապատել է Հարուն Ալ Ռաշիդը։ Եվ հենց վերջինիս ժամանակ եղած պատերազմների հետևանքով մի քանի անգամ քաղաքն ավերվել ու կառուցվել է։ Ապա այստեղ արշավել են մոնղոլները, նորից հիմնահատակ արել քաղաքը։ Քաղաքի հնավոր անցյալից հիշատակ են մնացել պարսպի բեկորները, Ջամիի մեչիթը, որի մասին ասում են, իբր կառաջչաների ժամանակ է կառուցվել։ Մեչիտի գմբեթի ներսում կան արևելյան մանրանկարչության գեղեցիկ նմուշներ,

որոնց հետ սակայն շատ դաժան է եղել ժամանակը։ Դրանց մի մասը, ինչպես և ծակագրությունները ջնջվել են ժամանակի անողոք ձեռքով։

Անթիվ արշավանքներն ու կռիվներն այս հարթ տարածության վրա թերևս բնաջնջեին և Ղազվինը, եթե չլիներ մի շատ կարևոր հանգամանք։ Քաղաքը գտնվում է Գիլան, Զանջան, Ադրբեջան, Համադան տանող ճանապարհների խաչման տեղում։ Նա բոլոր այդ մհալներն իրար հետ կապող օղակն է։ Ահա սա է եղել պատճառը, որ Ղազվինը դիմացել է հեռավոր անցյալում եղած բոլոր արշավանքներին, փլատակների տակից բարձրացել և դարերով պահպանել է իր գոյությունը։

Մեր օրերում էլ այն տիպիկ գավառական առևտրական կենտրոն է։ Թեհրանի, Ադրբեջանի հետ կապող երկաթգիծն առանձնապես չի փոխել քաղաքի դեմքը, չի զարգացրել նրա արդյունաբերությունը։

Չի աճել նաև բնակչության թիվը։ Իր շրջանի գյուղերի հետ Ղազվինն ունի 60 հազար բնակիչ։ Այդ թվից քսան հազարը քոչվոր գյուղացիներ են։ Լայն դաշտավայրը, ուր փռված է քաղաքը, խիստ ցամաքային կլիմա ունի։ Ձմեռն այստեղ ցուրտ է լինում, իսկ ամառը՝ խիստ տոթ։ Սակավաջուր գյուղերում մարդիկ չեն դիմանում ամառվա տոթին և իրենց անասունների հետ յայլաղներ են գնում։ Քոչվորները մեծ մասամբ անասնապահությամբ են զբաղվում։ Առանձնապես հայտնի է Ղազվինի ուղտը, որի միսն ուտում են, իսկ փափուկ բրդից գործվածքներ պատրաստում։ Բացի դրանից ուղտը, որպես տոկուն կենդանի, մեծ օգուտ է բերում նաև տնտեսության մեջ։

Այգեգործությունը հիմնականում զարգացած է Ղազվինում և նրա մոտ գտնվող գյուղերում։ Սակայն այգեգործության զարգացմանը դարեր շարունակ խանգարել է և խանգարում է ջրի սակավությունը։ Բնակչությունն օգտվում է հորերի ջրերից։ Ջրին հասնելու համար գետինը բավական խոր պետք է փորել։

Մի քանի անհաջող փորձեր են եղել մոտիկ սարերից հոսող ջրերն ամբարելու, ապա ամառ ժամանակ օգտագործելու համար։ Գառնան հորդ անձրևներից գոյացած վտակներն ամառն խսպառ ցամաքում են։ Առանձնապես զգացվում է խմելու ջրի պակաս։

Սովետական զորքերն իրականացրին ղազվինցիների դարավոր իղձը։ Նրանք սարերում մի շարք աղբյուրներ փորելով խմելու ջուր բերին քաղաք։ Եվ այն օրը, երբ խմելու ջուրն առաջին անգամ բերվեց Ղազվին, տեսնել էր հարկավոր, թե ինչ ցնծության մեջ էին ղազվինցիները։ Նրանք բազմամարդ խմբերով հավաքվել էին սովետական զորքերի պարետության շենքի առաջ՝ իրենց խորին շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնելու։ Իրենց ջերմ զգացմունքները հայտնելու համար մարդիկ հուզմունքից խոսք չէին գտնում ասելու։ Նրանց համար քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող նվիրական Անքոլ աղբյուրը, ուր ամառվա տոթին ջուրը սառույց է կտրում, հրաշանքի նման մի բան էր եղել։ Բոլորը չէին կարող գնալ Անքոլ աղբյուրից ջուր բերել, իրենց ծարավը հագեցնել։ Իսկ ոչ ոք մինչ այդ չէր մտածել քաղաքի բնակչությանը խմելու ջրով ապահովելու մասին։ Խմելու ջուր բերելը կապված էր մեծ ծախսերի հետ։ Իսկ ո՞վ կհամաձայներ իր գրպանից մեծ գումար ծախսել... ուրիշների կարիքների համար։

Կալվածատերերն այդ չէին անի։ Ինչո՞ւ պետք է խոշոր կալվածատեր Իսա Գերվին այդպիսի մի մեծ ծախս կատարեր։ Չնայած նա պետք է կատարեր այդ ծախսը, որովհետև քաղաքի բնակելի շենքերի համարյա 2/3-ը պատկանում էր նրան։ Բայց նա, ինչպես ասում են, ձմեռը մարդու ձյուն չէր տա։ Հարյուրավոր գյուղացիներ նրան պարտք էին։ Միլիոնատերը չէր քաշվում տոկոսներով գյուղացիներին մանր գումարներ տալուց։ Սնանկացածները նույնիսկ տարածել էին, իբր նրա ձեռքը «շատ վատ է»,նրանից փող վերցնողի

գործերը թարսվում են, բայց և այնպես մարդիկ ստիպված էին դիմել նրան, որովհետև նրանից կախում ունեին։

Իսա Գերվլի պես էին և Ղազվինի մյուս տերերը։ Միթե՞ նրանք կարող էին մտածել քաղաքացիների բարօրության մասին։

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՂԱԶՎԻՆՈՒՄ

Ես սրտի ցավով էի նայում Ղազվինի՝ թշվառության մատնված կավածեփ, ցածրիկ տնակներին ու նեղլիկ փողոցներին։ Դժվար էր տեսնել այդ փողոցներում անհոգ, զվարթ մարդկանց։ Ամենքի դեմքին դրոշմված էր անջնջելի, խորը մի վիշտ։

Անհոգ էին սոսս միշտ հարբած ամերիկացիները։

Ղազվինի մոտ գտնվող նրանց զորամասերի վարքի մասին քաղաքում արդեն բոլորը գիտեին։

Շաբաթ երեկոյան այդ զորամասերից բոլոր զինվորներին և սպաներին արձակում էին քաղաք։ Նրանք լցվում էին ճաշարանները, խմիչքեղենի խանութները՝ խմում, հարբում և այդ վիճակում փողոցներում վիրավորում տեղացի կանանց ու աղջիկներին, գնում հասարակաց տներ։ Տեղացիները նրանցից վախենում էին, որովհետև ամերիկացիները փոքրիկ վեճն իսկույն վեր էին ածում բռնցքամարտի։

Ուշ երեկոյան քաղաք էին դուրս գալիս զինվորական այսպես կոչված «էմպիրալ» ավտոմեքենաները։ Դրանցում նստածներն իրենց թևերին կապած ունեին սև կտոր։ Դրանք հարբած զինվորներին ծեծելով քարշ էին տալիս, ուժով նստեցնում ավտոյի մեջ։ Զինվորները դիմադրում էին, աղմկում, գոռգոռում...

Նրանց չէին հանգստացնում նույնիսկ «էմպիրալցիների» բռնցքների խուլ հարվածները։

Բայց ամերիկացիներն իրենց սանձարձակ էին պահում ոչ միայն փողոցում։

Հասարակական վայր, կուլտուրական միջավայր կամ փողոց՝ նրանց համար միևնույնն էր։

Մի երկու անգամ ինձ հաջողվեց նստել ամերիկացիների հետ միևնույն սեղանի շուրջ և համոզվել դրա մեջ։

Ղազվինի նահանգապետի այգում տեղացիները բանկետ էին կազմակերպել, որին հրավիրել էին մեզ, ամերիկացիներին և քաղաքի անվանի մարդկանց։ Բանկետին ներկա էին բավական թվով կանայք՝ իրենց ամուսիններով, կրթված, կուլտուրական մարդիկ։ Ամերիկացիներից եկել էին բավական թվով սպաներ և շարքային զինվորներ։ Նրանք այստեղ իրենց ոչ թե հյուրի, այլ գոռոզ արքաների պես էին պահում և կարծես մեծ զիջում էին անում՝ տեղացիների հետ միևնույն սեղանի շուրջ նստելով։

Չնայած նրան, որ սեղանների վրա կար բավական քանակությամբ և՛ խմիչք և՛ ուտելիք, ամերիկացիներից մի քանիսն իրենց կողքից կախած ունեին մի-մի շիշ խմիչք։ Առանց քաշվելու մարդկանց և մանավանդ կանանց ներկայությունից, նրանք իրենց շշերը գլխներին էին քաշում ու խմում և ապա ձեռքից-ձեռք տալիս։

Այսպիսով կես ժամից հետո նրանք արդեն հարբած էին։ Այդ վիճակում զինվորները մոտենում էին տիկիններին, նրանց թևը բռնելով քաշում պարելու։

Ինձ համար միանգամայն պարզ էր,թե ինչու նրանք այդպես են վարվում։ Այդ կոպիտ վերաբերմունքի հիմքում ընկած էր արհամարհական վերաբերմունքը դեպի տեղացիները, որոնց ամերիկացիները համարում էին հետամնաց ասիացիներ։

Իհարկե, բոլոր ամերիկացիները չէ, որ այդպես արհամարհանքով էին վերաբերվում դեպի տեղացիները։ Նրանց մեջ կային և այնպիսիները—մեծ մասամբ շարքայիններից, որոնք ամաչում էին իրենց իսկ ընկերների արարքներից։

Մի անգամ տեղի հայերից մեկի ճաշարանում սեղանի շուրջը նստել էին մի խումբ ամերիկացիներ։ Ճաշարանի տերը պատերին փակցրել էր Ստալինի, Ռուզվելտի և

Չերչիլի նկարները։ Ամերիկացի զինվորները մեզ տեսնելով, բարձրացրին բաժակները, մատնացույց անելով Ստալինի և Ռուզվելտի նկարները և խմեցին բացագանչելով.

— Օկեյ։

Իսկ Չերչիլի նկարը ցույց տալով՝ բաժակները շրջված դրին սեղանին՝ դեմքերը զզվանքից կնճռոտելով։

Դրանք Ռուզվելտի երկրպագուներից էին և այն ժամանակ բնավ չէին էլ ենթադրում, որ մի օր ամբողջ աշխարհում իրենց պես միլիոնավոր մարդիկ հիշելով Ամերիկայի պրեզիդենտի՝ Տրումենի անունը, ոչ միայն կզզվեն, այլև կզայրանան։ Ի՞նչ իմանային նրանք, որ հեռատես Ռուզվելտին կփոխարինի հարեմի ամորձատված վերակացուի դեմքով Հարրի Տրումենը և կբարբաջի աշխարհն իրեն ենթարկելու մասին, կցանկանա վամպիրների կարգ սահմանել երկրագնդի վրա։

Ամերիկացի զինվորներից շատերի սանձարձակությունը պետք է բացատրել և նրանց ստացած դաստիարակությամբ։ Նեխած է բուրժուական կուլտուրան։

Սա լոկ հայտարարություն չէ։

Ղազվինի ամերիկական զորքերի հրամանատարը մեր գեներալ Երմաշկևիչին հրավիրել էր իրենց մոտ։ Գեներալին ուղեկցում էին մի քանի հոգի, որոնց թվում և ես։

Ամերիկացիները մեզ, որպես հյուրերի, ցույց տվին սպաների հանրակացարանը, ուր պատերին փակցված էին մերկ կանանց լուսանկարներ։ Սպաները կարծես իրար հետ մրցել էին ցինիկ, ամոթալի տեսքով նկարված կանանց նկարներ փակցնելիս։ Ամեն մի մահճակալի գլխավերևը միայն այդ կարգի նկարներ էին։

Հանրակացարանից մեզ տարան ճաշարանը ցույց տալու։ Ճաշարանում հյուրասիրելուց հետո հրավիրեցին սպայական ակումբը, ուր ելույթ պետք է ունենար զինվորական ինքնագործ խումբը։ Մեծ պահանջ ներկայացնել ինքնագործ խմբին՝ չէր կարելի։ Ինչ էլ լիներ, նրանք որակյալ գերազան-

ներ չէին։ Զարմանալին թերևս զինվորների՝ կանանց դերում հանդես գալը, շանսոնետկաների պես անճոռնի պարելն էր, սակայն դա ևս կարելի էր ներել։ Ի՞նչ արած, կանայք չկային և մի՞թե տղամարդկանց մազմզոտ ոտքերը պետք է արգելք լինեին կանանց դերեր խաղալուն։ Դա և անճոռնի պարերը դեռ տանելի էին։

Բայց ահա դրանից հետո հերթը հասավ ուրիշ տեղից ժամանած իսկական արտիստական խմբին և այստեղ արդեն մենք ամոթից կարմրում էինք։ Մենք լսել էինք ամերիկական կուլտուրայի նեխվածության մասին, բայց որ այդ «կուլտուրան» այդքան աղտոտված է, մենք չգիտեինք։ Դա ցույց տվեց մեզ ներկայացվող պիեսը։ Ըստ պիեսի սնանկացած բանկիրը վշտացած ընկած էր իր մահճակալին։ Եվ ահա նրա մոտ է գալիս սիրուհին՝ մի պարուհի։ Տեսնելով սիրածին վշտաբեկ պառկած, նա ամեն կերպ ցանկանում է դուրս բերել նրան այդ վիճակից։ Բոլոր փորձերն անհաջող են անցնում։ Նույնիսկ պարը, սիրած բալերինի պարը չի օգնում։ Պարուհին համառորեն ցանկանում է հասնել իր նպատակին, ինչ գնով էլ լինի հանել բանկիրին թմրած վիճակից։

Արդեն հուսահատության մոտ, նա հանեց իր վերնաշապիկը։ Իզուր, այդ ևս չօգնեց գործին։ Հետո պարուհին հանեց ներքին շապիկը, մերկ կրծքով շարունակեց պարը։ Այդ էլ չօգնեց։ Պարուհին մեկը մյուսի հետևից հանեց իր շորերը և միանգամայն մերկ շարունակեց ավելի թափով պտտվել բեմի վրա։

Դահլիճում նստածները բավականությամբ արձագանքում էին դերասանների խաղին, բացականչություններ անում, շվացնում, ոտքերով գետինը ծեծում։

Մերկ կնոջ խենթ պարը վերջապես ստիպեց բանկիրին զգաստանալ։

— Ահա մեր կյանքի իմաստը,— բացականչեց նա՝ պարուհուն ամուր գրկելով։

Դահլիճում բարձրացավ անասելի աղմուկ, աղաղակ, հնչեցին շվոցները...

Դրանից հետո ամերիկացիները մեզ ցույց տվին «ռեգբի» (матч в регби) խաղը։ Մի թիմը բաղկացած էր սպիտակամորթներից, իսկ մյուսը՝ նեգրերից։ Տեսնել էր հարկավոր, թե ինչ ցնծությամբ էին ընդունում հանդիսատեսները, երբ սպիտակամորթներից մեկն ու մեկին հաջողվում էր գետնին գլորել սևամորթին ու խլել նրանից գնդակը։

Խաղի ընթացքում երկու տուժած նեգրի և մի սպիտակամորթի կիսաշունչ վիճակում դուրս տարան խաղադաշտից։ Սևամորթներին դուրս տանելիս դիտողներն ուրախ ծիծաղում էին։ Մեր ներկայությամբ անգամ նրանք չէին կարողանում թաքցնել իրենց թշնամանքը նեգրերի նկատմամբ։

Ղազվինը թաղված էր խավարի մեջ, երբ մենք վերադարձանք։ Քաղաքացիները քաշվել էին իրենց տները, երևի մտել խոր քնի մեջ։ Հեռավոր փողոցներում կաղկանձում էին շները։

Հետևյալ օրը պետք է ճանապարհվեինք Թեհրան, ուստի հարկավոր էր մի քիչ քնել։

ԾԱՐԱՎ ՀԱՐԹԱՎԱՅՐ

Ղազվինից Թեհրան կարելի է գնալ և երկաթուղով։ Բայց մենք ունեինք ավտոմեքենա։ Էլ ի՞նչու կապվեինք երկաթուղու հետ, մանավանդ որ ճանապարհը մինչև Թեհրան այնքան էլ երկար չէր՝ ընդամենը 140 կիլոմետր։

Ինչքան էլ ցանկացանք Ղազվինից դուրս գալ վաղ առավոտյան, որպեսզի կիզիչ արևի տակ չընկնենք—չհաջողվեց։ Բավական ուշացանք. արևը բարձրացավ, սկսեց կրակ թափել երկնքից։

Քաղաքում և քաղաքից դուրս փոշին ծխի պես երկինք էր բարձրանում։ Կարծես շրջապատն այրվում էր արևի ճառագայթների տակ։

Ղազվինից դուրս գալուց հետո մի քանի րոպե գնացինք խաղողի անջրդի այգիների մոտով։

Բայց ահա այգիները մնացին մի կողմ, իսկ մեր առաջ բացվեց արևից խանձված, անապատ թվացող դաշտավայրը։ Օդի մեջ կանգնած էր փոշու մշուշ։

Ուղիղ գծով դեպի արևելք ձգվող ճանապարհին զուգահեռ, մեզնից դեպի աջ ու ձախ մոտ հարյուր, գուցե և հարյուրից ավելի կիլոմետրի վրա նշմարվում էին գորշ, կանաչագույն երկու լեռնաշղթա։ Դրանք ճամփորդին ուղեկցում են համարյա մինչև Թեհրան։ Չլինեին այդ լեռնաշղթաները՝ դաշտավայրը կթվար անծայրածիր, անկենդան անապատ, ուր երբեմն միայն, եռացող օդի և ասես նույնպես եռացող փոշու մեջ նշմարվում էին կանաչ բծեր և նույնիսկ ուրվագծվում էին սլացիկ բարդիներ։ Դժվար էր ասել՝ իսկական օազիսնե՞ր էին դրանք, թե՞ ուղևորի աչքին էին այդպես երևում։

Շրջապատում ջրի հետքեր անգամ չէին երևում։ Ամեն ինչ կար, ամեն ինչ՝ հող, արև, իսկ ջուր չկար։ Ճանապարհի եզրերին նկատվում էին տատասկներ՝ ուղտերի սիրելի կերը։ Ինչպես երևում էր այստեղ էլ մարդիկ գարնանը վաղահաս գարի ու ցորեն ցանելու փորձ էին արել։ Հողը փաղաքշանքով չէր վարվել իր գրկին հանձնած հունդի հետ. մեծ ժլատությամբ սնուցանելով նրանց՝ հազիվ բարձրացրել էր գետնից և ապա սպառնացել այրել ցողունի վրա։ Մարդիկ շտապ բերքը հավաքել էին և ասես փախել կրակից։ Ո՞ւր էին փախել նրանք, որտե՞ղ էին պատսպարվել՝ մեզ հայտնի չէր։ Մենք տեսնում էինք միայն մի բան՝ անմարդաբնակ դաշտավայրը։

Ղազվինցիների ասելով այդ դաշտավայրը հարուստ է վիթերով։ Այստեղ վիթերը վխտում են հոտերով։ Խմելու ջուր նրանք գտնում են հեռավոր սարերից բխող աղբյուրներում, ապա իջնում են դաշտավայր, կերակրվում հազվագյուտ, բայց ըստ երևույթին շատ համեղ խոտով։ Նրանց որսում էին երկու կերպ. մեկ՝ որսորդներն ավտոմեքենա նստած

դուրս էին գալիս այս հարթ դաշտավայրը և նկատելով վիթերի հոտեր՝ հետամտում նրանց ավտոմեքենայով և երկրորդ՝ սարերի հազվագյուտ աղբյուրների մոտ դարան մըտնելով։

Երկրորդ ձևն ամենից հարմարն էր, որովհետև քիչ ջանքեր էր պահանջում որսորդից, իսկ առաջին ձևով որսը կապված էր որոշ վտանգների և անհաջողությունների հետ. երբեմն ավտոն չէր կարողանում հասնել ասես թևեր առած, թռչող վիթերին, երբեմն նրանք, հեռվից նկատելով ավտոն, խուսափում էին. իսկ ոտքով աննկատելիորեն նրանց հետամտելը կապված էր օձերից խայթվելու վտանգի հետ։ Չէ՞ որ այստեղ շատ կային նաև թունավոր օձեր։

Աղբյուրների մոտ դարան մտնողը հանգիստ սպասում էր, մինչև վաղ առավոտյան վիթերը գան ջուր խմելու։

Այդ օրը մենք հանդիպեցինք բավական հաջող որս կատարած երեք որսկանի։ Նրանք սպանել էին տասներեք վիթ և ավտոմեքենայի մեջ լցրած տանում էին Ղազվին։

Մինչև Քերեջ, լայն, խիճածածկ ճանապարհին, բացի կարմիր, դեղին, ճերմակ և կանաչագույն ներկած ավտոմեքենաներից մենք ուրիշ հետաքրքրական բան չտեսանք։

Ամենից հետաքրքրականը թերևս այն էր, որ ավտոյի մասերին ձեռք տալ չէր կարելի. արևի տակ նրանք տաքացել էին ինչպես կրակի մեջ դրված երկաթը։ Եվ թեև մենք գնում էինք անչափ արագ, բայց քամին չէր զովացնում։ Մեր դեմքին խփում էր տաք հոսանք, որ ասես ելնում էր ավտոմեքենայի մոտորից։

Այստեղ՝ Թեհրանի մոտերքում առանձնապես զգում ես, թե որքան մոտ են անապատները։ Կարծես նրանք հենց այստեղ են՝ հրաշեկ ավազուտների և գորշ հորիզոնների հետևը։

Մոտենում ենք Թեհրանին։ Եվ դա ինձ քիչ չէ զարմացնում։ Մի՞թե, մտածում էի, Թեհրանը գտնվում է այսպիսի չոր, անհրապույր դաշտավայրում, ուր մարդու աչքը շոյող ոչինչ չկա։

Բայց ահա քիչ հետո մեր առաջ երևում են կանաչ ծա-

ների կատարները։ Սկզբում թվում է, թե մենք գործ ունենք միրաժի հետ։ Սակայն գնալով վեր խոյացած կանաչ ծառերն ավելի որոշակի են ուրվագծվում հարթ տարածության վրա, իսկ քիչ հետո պարզորոշ երևում են ցածրիկ տներ՝ ծվարած հաստաբուն ուռենիների և սոսիների տակ։

Լայն խճուղին առանց թեքվելու մտնում է մի խաղաղ ավան։ Սա էլ մյուս ավանների պես կենտրոնում ունի կլոր հրապարակ։ Փողոցներին, հրապարակին են նայում իրար կպած խանութներ։ Դրանք իրենց արտաքինով և բովանդակությամբ շատ նման են Ռեշտի, Փեհլևիի, Ղազվինի խանութներին։ Խանութպանները, բնակիչները քիչ են տարբերվում ուրիշ քաղաքների բնակիչներից և խանութպաններից։ Միայն մարդիկ այստեղ ավելի սև են, արևի տակ ավելի խանձված։

Երբ հետևից գալիս էին տարբեր տեսակի ավտոներ, ավանի կենտրոնում թեքվում աջ, ձախ և կամ ուղիղ շարունակում իրենց ճանապարհը դեպի Ղազվին։ Այստեղ զգացվում էր մեծ քաղաքի մոտիկությունը։

— Սա Քերեջն է,—ասացին մեզ,—մինչև Թեհրան մոտ 40 կիլոմետր է մնացել։

— Չդիտե՞նք Քերեջը,—հարցրեց ընկերս և շտապեց ավելացնել.—ասենք կարծես դիտելու առանձին բան էլ չկա։

— Ինչպես թե չկա, ապա նայիր տես ինչքան խոշոր ու հաստաբուն են սոսիներն ու ուռենիները։

— Հետաքրքրական է. այս չոր անապատում հանկարծ այդպիսի ծառեր։

Զարմանալի ոչինչ չկար։ Քերեջը կպել է Ալբորզ լեռնաշղթայի փեշին։ Լեռնաշղթայի կատարից սկիզբ է առնում մի գետակ, ճանապարհին հավաքում իր մեջ բազմաթիվ վտակներ և անթիվ ձորերում գալարվելուց պղտոր, փրփրած դուրս գալիս այս դաշտավայրը, ուր առաջին ավանը Քերեջն է։ Այնուհետև գետը, որոշ տեղ առաջանալով, կուլ է գնում անապատանման դաշտավայրին՝ չհասնելով ուրիշ որևէ ծովի։ Մինչդեռ Քերեջում գետը ջրառատ է և մարդիկ,

թեկուզ իրար ձեռքից բռնած, չեն կարող անցնել նրանով։ Այս արդեն մեկ ավելորդ անգամ ասում է, թե ինչքա՜ն կլի-վիչ է արևը Թեհրանի և Ղազվինի արանքում ընկած դաշտա-վայրում։ Թվում է, թե եթե տասն այդպիսի գետեր իրար հետ միացած դուրս գան այդ դաշտավայրը, դարձյալ չեն կարող հագեցնել նրա բազմադարյան ծարավը, չեն զիմանա կիզիչ արևին։ Իսկ Քերեջը պետք է որ երախտապարտ լիներ իր գետին։ Եվ ոչ միայն Քերեջը, Թեհրանը, դարերով ծա-րավ, ջրի կարոտ Թեհրանը ևս, ստիպված ջուր է տարել Քե-րեջից։ Այդ գետի շնորհիվ Քերեջում կան խաղողի, թթի, նուշի, փշատի այգիներ։ Գետի ջուրը խոր հունից հանվել է ավանի կենտրոնը։ Անտանելի փոշուց ազատվելու համար խանութպաններն այս ու այնտեղ ջուր էին ցողում իրենց խանութների առաջ։ Սակայն դրանով նրանք անկարող էին փոշու առաջն առնել։ Ամեն մի անցնող ավտոմեքենա իր հետևից փոշու ամպ էր բարձրացնում և երբ կլոր հրապարա-կում կանգնած ոստիկանը շրջվում էր ավտոմեքենաներին ուղղություն ցույց տալու, թվում էր, թե նա փոշու քուլանե-րից է երևաը շրջում։

Մեզ այստեղ հասցրած ճանապարհն այդ միակ հրա-պարակի վրա խաչաձևում էր նույնպիսի լայն ճանապարհով։ Դեպի ձախ Ալբորզ լեռնաշղթայի կատարը, ապա Կասպից ծովափը տանող ուղին էր։

Մենք վճռել էինք վերադարձին այդտեղով գնալ։

Իսկ առայժմ շտապում էինք որքան կարելի է շուտ հաս-նել Թեհրան։ Չէ՞ որ մեր անցած ճանապարհի համեմատու-թյամբ այն արդեն շատ մոտ էր. մի ժամ ևս և մենք ար-դեն կլինեինք ամբողջ աշխարհին հայտնի, արևելքի մեծ քա-ղաքում՝ Թեհրանում։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Թ Ե Հ Ր Ա Ն

Առայժմ ահա ճանապարհը Քերեջից մեզ դարձյալ հանում է Թեհրանի հարթավայրը։ Ետ են մնում Քերեջի ուռենիները, սոսիները, ետ է մնում Քերեջի պղտոր, արագավազ գետը։ Այժմ արդեն ավտոյի անիվների տակից փոշու ամպեր չեն բարձրանում, ասֆալտի վրայով ավտոն սլանում է ավելի արագ, իսկ երբեմն՝ կարծես թռչում է բաղնիքում տաքացած օդի միջով։ Հեռու հորիզոնում երևում են դիմացից եկող ավտոները։ Չի անցնում երկու-երեք րոպե և ահա մենք հավասարվում ենք, ապա արկի գնդակի պես թռչում իրար կողքով։ Այդ վազող ավտոներն իրենց ընթացքը չեն դանդաղեցնում նույնիսկ մեկը մյուսին հաջորդող, ցամաքած վտակների երկու ափերը միացնող կամուրջների վրա, որոնց ճաղաշարքը ներկած է կիրով։

Ձանձրույթս փարատելու համար շարունակ առաջ էի նայում և հեռու մշուշի մեջ որոնում Թեհրանը։

Սակայն այն դեռ չէր երևում։

Աջ և ձախ կողմից մեզ ուղեկցող լեռնաշղթային ավելացան և դեմից հորիզոնը փակող գորշ լեռներ։ Իսկ քիչ հետո, դրանցից ներքև, լայնանիստ հարթավայրում ուրվագծվեց կանաչի, գորշագույնի, ճերմակի և դեղինի ինչ որ տարօրինակ խառնուրդ հանդիսացող տարածություն։ Գնալով այդ խառնուրդից կանաչն առանձնանալով խտանում էր, ապա հեռվից հեռու ազդարարում մեծ քաղաքի մոտիկությունը։ Քիչ հետո նույնն են ազդարարում նաև երկինք խոյացած հաստ ու կենտ ֆաբրիկաների ծխնելույզները՝ իրենց դեղին, կաթնագույն և կամ սև ծխի քուլաներով։ Ապա երկինքը պատած փոշու և ծխի մշուշն անջատվում է գետնից, թողնելով մեզ հեռվից տեսնել մեծ քաղաքի պատկերը։ Առայժմ երևում են էտեռնիտով ծածկված կտուրներ, ճերմակ պատեր, մզկիթների գմբեթներ, իսկ կանաչն անջատվում է

քաղաքից, փակում նրա հարավային մասում։ Տների, գմբեթների արանքում երևում են միայն կանաչ բծեր՝ վեր սլացած բարդիների կատարները։ Սակայն դրանք կորչում են քաղաքի գորշ ֆոնի վրա։ Հիմնականում մնում ու թագավորում է գորշ գույնը։

Մեր առաջ փռված ասֆալտապատ խճուղին ձգվում է դեպի քաղաքի կենտրոնը՝ աջ և ձախ կողմերում թողնելով իրար վրա կուտակված մանր ու խոշոր շենքեր։

Քաղաքի ծայրամասում առայժմ երևում է մեկ ուրիշ «քաղաք», ուր մարդիկ ասես վճռել են սովորական տները փոխարինել ավտոմեքենաներով և նրանցում ապրել։ Ավտոները շատ են, շարված ինչպես ցուցահանդեսում։ Այստեղ տեղավորվել էր ամերիկական մի զորամաս։ Դիտմամբ էին նրանք այդքան ավտոներ շարել։ Դա պարզապես արվել էր անցորդների ուշադրությունը գրավելու, նրանց զարմացնելու համար։ Չէ՞ որ անցորդները չէին կարող չնայել «ավտոքաղաքին»։ Ինչքան էլ շատ լինեին ավտոներն այստեղ մեզ զարմացնել չէին կարող։ Ավելին. մենք նրանց տեսել էինք ոչ թե այդպես շարված, այլ ռազմաճակատում՝ թշնամու ռմբակոծության տակ դեպի արևմուտք շարժվելիս։

Ամերիկյան զորամասի կողքով առաջանալով մենք դուրս եկանք քաղաքի առաջին հրապարակը։ Այստեղ Ռզա շահն իրեն արձան էր կանգնեցրել՝ ձիու վրա նստած։

Հրապարակից սկիզբ է առնում Փեհլևի լայն, ծառազարդ պողոտան, որի երկարությամբ հին, ցածրիկ տների արանքում երևում են նոր կառուցված, երեք, նույնիսկ չորս հարկանի, գլխից ավաղած, դեղնավուն կամ ճերմակ բնակելի շենքեր։ Սակայն դրանք այնքան էլ շատ չեն։ Գերակշռողը մնում է հինը։ Հենց առաջին հայացքից էլ երևում են պողոտայից բաժանվող նեղ, կեղտոտ, վաղուց սալահատակված կամ խիճածածկ փողոցներ՝ իրենց խղճուկ տնակներով, փայտաշեն զուգարաններով։

Նորը բնավ չի կարողացել հաղթահարել հնին։ Դարերի խորքից եկող հինը հողի մեջ խոր արմատներ է ձգել և մնում է անսասան։

Նոր կառուցված տների առջևից փողոցն ի վար, ջուր է հոսում։ Մի տեղ կանայք լվացք են անում մերկ սրունքներով ջրի մեջ կանգնած, իսկ մի այլ տեղ մարդիկ պղղած լվացվում են։ Ի՞նչ անեն։

Ջրատար խողովակները հարուստների համար են։ Դարերի ընթացքում Թեհրանը ջրի կարոտ է եղել։ Իննսուն տարի շարունակ ծեծվել է քաղաքը ջրով ապահովելու հարցը։

Վերջապես Քերեջի ջուրը բերվել է, իսկ այն բնակելի շենքերն անցկացնելու համար կառավարությունը ոչ մի հոգս չի տարել։ Ամեն մի տնատեր պարտավոր էր ինքը հոգալ իր տան կարիքները։ Իսկ երբ տվյալ տնատերն ունի հինգ, վեց, տասը, նույնիսկ տասնհինգ և ավելի բնակելի շենք, մի՞թե նա կարող է մտածել անհագին ծախսերի գնով, ամեն մի տուն ջուր անցկացնելու, բնակիչների վիճակը թեթևացնելու մասին։ Եվ այն էլ ի՞նչ բնակիչներ։

Կանանց լվացքը շատ բան էր ասում նրանց կարողության մասին։ Նրանք լվանում էին կարկատած, դեղնած, կեղտից սևացած լաթեր, որոնց ձևից երևում էր, որ դրանք ծառայում են շապիկների, անդրավարտիքների տեղ։ Իսկ վերնազգեստի մասին չենք ասում։ Մարդ դժվարանում էր որոշել, թե ո՞րն է դրանց մեջ այն կտորը, որից սկզբում կարել են զգեստը։

Փողոցը քանի գնում, այնքան ավելի աղմկոտ է դառնում։ Փեհլևու պողոտայից կարելի է ծռվել, դուրս գալ Թեհրանի կենտրոնական փողոցները՝ Նադրին, Ստամբոլին, Լալեզարը և ուրիշները։ Սա արդեն միլիոնատերերի, հարուստների թաղն է։ Այստեղ է կուտակված Թեհրանի հարստության զգալի մասը՝ բանկը, ոսկեղենի, մորթեղենի, կտորեղենի, տարբեր տեսակի մանրունքի լեփլեցուն խանութները, ճաշարանները։ Մինչ այդ ուրիշ քաղաքներում մեր տեսած խանութները շատ խեղճ են թվում սրանց համեմատությամբ։ Դրանց մեջ մտնում ու դուրս են գալիս ավելի ապահովված, բարձր խավից, խնամքով հագնված, գունավոր ակնոցներ դրած գնորդներ, գանգրացրած մազերով տղամարդիկ ու կանայք։

Ահա մտնում ենք Թեհրանի ամենակենտրոնական Լալեզարի կոչված փողոցը։ Այստեղ՝ փողոցի մի ծայրից մինչև մյուսը, տարբեր տեսակի, հարուստ ու միջակ խանութներ, կաֆե-ռեստորաններ, կինո-թատրոններ կան. խանութների ցուցափեղկերը զարդարված են որքան կարելի է խնամքով։ Արևից պաշտպանվելու համար դրսից դրանք ծածկված են հովանոցներով։ Առավոտից մինչև երեկո փողոցում ժխոր է տիրում։ Բոլոր փողոցներից մարդիկ դիտմամբ գալիս են այս փողոցով անցնելու, ցուցափեղկերում դրված հարստությունները՝ կտորեղենը, կոշկեղենը, ոսկի-արծաթեղենը, մորթեղենը տեսնելու։ Այնքան շատ են երկու կողմի մայթերով ետ ու առաջ գնացողները, որ արագ քայլել հնարավոր չէ։ Դրա պատճառով էլ մարդատար ավտոները, կառքերը, մոտոցիկլներն ու հեծանիվները երթևեկում են միայն մի ուղղությամբ՝ շուկայի կողմից դեպի վեր։ Բեռնատար ավտոներին ընդհանրապես արգելվում է երթևեկել այս փողոցով։ Դրանց փոխարինում են ոտաբոբիկ, ծանրության տակ հազիվ քայլող մշակները։

Այդ օրերին Թեհրանը լի էր օտարերկրացիներով։ Ամեն քայլափոխում կարելի էր տեսնել ամերիկացիների, անգլիացիների, հնդկացիների, նեգրերի, ոտից մինչև գլուխ սև հագնված ինչ որ կին հոգևորականների։ Նրանք էլ մյուսների հետ մտնում էին խանութները, ճաշարանները և կամ ուղղակի զբոսնում էին։

Լալեզարի խանութպանների համար միևնույնն էր, թե ովքեր են նրանց գնորդները։ Ով էլ ուզում է լինի, միայն թե հետը փող բերի։ Չէ՞ որ ապրանքը դժվար էր ծախվում։

Քաղաքի ժխորի մեջ մարդիկ շարժվում էին կարծես իրենց անելիքները մոռացած, շփոթված։ Սակայն ի՞նչն էր դրա պատճառը։

Կիզիչ արևը, ավտոների աղմուկը, սուլոցը, այս ու այն պատերի տակ կանգնած թշվառ մուրացկանների բարձր ու շշնջաձայն, աղերսագին ու սրտաճմլիկ ձայները, ոտքի վրա առևտուր անող՝ սիգարեթ, հալվա, կանաչեղեն, խաղալիքներ,

թերթեր ծախող պատանիների աղմուկը սովորական երևույթ էր Թեհրանի համար։ Այդ աղմուկը թագավորում էր ամեն տեղ։ Դրանից մարդիկ չէին շփոթվի։ Կար մի ուրիշ պատճառ։

Հաճույքով կարելի է լինել, հատկապես կենտրոնական հրապարակը, այսպես կոչված Թոփխանեն։ Դա 200-ից ավելի մետր երկարությամբ, հարյուրից ավելի մետր լայնությամբ հրապարակ է՝ կենտրոնի փոքրիկ ծաղկանոցով։ Հրապարակին են նայում քաղաքային վարչության, փոստ-հեռագրատան, ոստիկանության, բանկի շենքերը։

Ծաղկանոցում, փոքրիկ ջրավազանի մոտ, կանգնեցված է Ռզա շահի արձանը՝ դարձյալ ձիու վրա նստած, ձեռքը կողքին դրած։

Շատ պատմություններ են կապված այս հրապարակի հետ. Թերթերի կրպակի մոտ մենք պատահականորեն ծանոթացանք մոտ քառասուն տարեկան մի մարդու հետ, որը մուգ դարչնագույն ապակիներով ակնոցներ էր կրում և ուներ խելացի ու թախծոտ աչքեր։ Մենք նրան մի քանի հարցեր տվեցինք, որոնց նա պատասխանեց ամոթխածությամբ։ Ապա նա սրտի ցավով սկսեց բաց անել իր հայրենիքի վերքերը։ Մենք նրան խնդրեցինք մի քիչ ուղեկցել մեզ ոտքով ու ծանոթացնել քաղաքին։ Եվ ահա մենք քայլում էինք միասին, իսկ նա պատմում էր Թեհրանի անցյալի և ներկայի մասին։

ԻՆՁԻ՞ ՄԱՍԻՆ ԿԱՐՈՂ Է ՊԱՏՄԵԼ ԹՈՓԽԱՆԵ ՀՐԱՊԱՐԱԿԸ

1905 թվի ռուսական ռևոլյուցիայի ազդեցության տակ Իրանի ազատասերները ևս պայքար են ծավալում շահական բռնապետության դեմ՝ ցանկանալով երկրում ստեղծել տանելի դեմոկրատական կարգեր։ Այդ ժամանակ այս հրապարակում ռեակցիան, Իրանի ժողովրդի դավաճան Սեյիդ-Զիա-էդ-Դինի հետ՝ Սեյիդ Ալի Յազդանի գլխավորությամբ, հա-

վարում է հարբած մի ամբոխ՝ ամեն տեսակի ավազակների, շահի ջորեպաններին և ժողով է գումարում։ Խանիճաղանձ այդ ամբոխը, մի ձեռքում պահած գինու կուժերը, իսկ մյուսում՝ ղուրանը, երդվում է մինչև վերջ պայքարել դեմոկրատիայի, սահմանադրության կողմնակիցների դեմ։ Սեյիդ Ջիա-էդ-Դինի հայրը, նստելով հրանոթներից մեկի մոտ, հրամայում է կրակ բաց անել «անաստված» ազատասերների՝ սահմանադրության կողմնակիցների վրա և անխնա ոչնչացնել նրանց։ Բայց ռեակցիան պարտվում է։ Ազատասերները բավական ուժեր էին կուտակել՝ որպեսզի հիմքից ցնցեին մի խումբ վամպիրների պալատները և սրտեին Մոզաֆֆեր-էդ-Դին շահին նրանց ներկայացուցիչներին Գուլիստանի պալատը հրավիրելու՝ բանակցությունների համար։

Հաղթանակած դեմոկրատական ուժերն անպատիժ չթողեցին Սեյիդ Ջիա-էդ-Դինի հորը՝ Սեիդ Ալի Յազդանին։ Նրան բռնեցին և աքսորեցին։

Բայց դա վերջնական հաղթանակ չէր։

Ժողովրդի պահանջով հրավիրված իրանական առաջին մեջլիսը (պառլամենտ) դեմոկրատիային շատ քիչ բան տվեց։ Մեջլիսում ընդունված առաջին սահմանադրությունը աշխատավորներին զրկում էր ընտրական իրավունքից։ Մեջլիսում ընտրվել կարող էին ունևորները միայն։ Իսկ դեմոկրատիան պայքարել էր իր իրավունքների համար։ Եվ հենց այդ պատճառով էլ նա չուզեց զենքը ցած դնել։

Այս ու այնտեղ, ինքնաբուխ կերպով առաջացան մասսայական-քաղաքական կազմակերպություններ՝ էնջումեններ։

Դրանցից ամենաուժեղն ադրբեջանական (Թավրիզի) էնջումենն էր։ Այստեղ՝ Հարավային Ադրբեջանում ռևոլյուցիոն շարժման գլուխ կանգնեց եղբայրական ադրբեջանական ժողովրդի հերոսական զավակ Սաթթար խանը։

Ղարադաղցի այդ գյուղացին, իր շուրջը համախմբած չքավոր գյուղացիներին՝ երկար ժամանակ ահի տակ էր պահում կալվածատերերին, իսկ հետագայում նրա ղեկավարությամբ Հարավային Ադրբեջանում կազմակերպվեցին ռևոլյուցիոն էն-

ջոմեններ, ստեղծվեցին մարտական ջոկատներ՝ «ֆիդայիններ»։

Սաթթար խանը դեմոկրատիայի իսկական ներկայացուցիչն էր, նրա անվեհեր առաջնորդը։ Նրա պայքարի հիմնական նպատակն էր՝ ընտրական իրավունք ապահովել աշխատավորության բոլոր խավերին, այդ թվում և չքավորներին, երկրից դուրս վռնդել օտարերկրյա կեղեքիչներին, հարազատ-ադրբեջանական ժողովրդին ազատել կրկնակի ու նաակի շահագործումից։ Մեծ ռևոլյուցիոների սիրտը չէր կարողանում տանել այն բոլոր վշտերը, որ դարեր ի վեր կրում էին ադրբեջանցիները պարսկական ինքնակալների, կալվածատերերի դաժան լծի տակ։

Սաթթար խանի պայքարը դա ադրբեջանական ժողովրդի պայքարն էր իր ազատագրության համար։ Նրա դրոշի տակ կանգնել էին քաղաքի և գյուղի աշխատավորները, զինվել և շարժվել Թեհրանի վրա ,որը համարվում էր հարստահարիչների, նենգ, ինքնահավան ու ինքնակամ շահերի, վեզիրների բույնը։

Սաթթար խանի և նրա նմանների պայքարն իզուր անցնել չէր կարող։ Մեջլիսը, որքան էլ չցանկանար կատարել աշխատավորների կամքը, այնուամենայնիվ ստիպված էր ընդունել մի շարք ռեֆորմներ, որոնցով կարգավորվում էր հարկահավաքը, ֆինանսների վիճակը, թուլացնում էր կալվածատերերի դիրքը։

Թեհրանի ռեակցիոն շրջաններն այն օրերին ահ ու դողի մեջ էին։ Մասսաների մեջ աճող ռևոլյուցիոն շարժումը կարող էր ավելի հեռուն տանել։ Իր մեռած հորը՝ Մոզաֆֆար էդ-Դինին փոխարինած Մոհամմեդ-Ալի շահը, չնայած երդվել էր հավատարիմ մնալ Սահմանադրությանը, շտապեց միջոցներ ձեռք առնել դեմոկրատիայի դեմ։

Նրան օգնության հասան անգլիական և ռուսական իմպերիալիստները, որոնց քիչ չէր անհանգստացնում պարսկական ժողովրդի ազատագրական շարժումը։ Շարունակ իրար հետ մրցող իմպերիալիստները շտապեցին համաձայնության

գալ, որպեսզի միահամուռ ուժերով ճնշեն ռևոլյուցիոն շարժումը Իրանում։

1907 թվին Անգլիան և ցարական Ռուսաստանը համաձայնություն կնքեցին, ըստ որի Իրանը վեր էր ածվում ազդեցության զոնաների։ Հյուսիսային զոնան մնում էր ռուսական իմպերիալիզմի, իսկ հարավային զոնան անգլիական իմպերիալիստների ազդեցության տակ։

Մոհամմեդ Ալին թևավորվեց։ Նա այժմ կարող էր հենվել օտարերկրյա իմպերիալիստների վրա և ճնշել դեմոկրատական շարժումն իր երկրում։

Այդպես էլ վարվեց նա։

1908 թվին նա քաղաքում ռազմական դրություն հայտարարեց, իշխանությունը հանձնեց կազակական բրիգադի հրամանատար գնդապետ Լյախովին, իսկ ինքը գնաց մերձքաղաքային իր ամառանոցը։

Լյախովը 1908 թվի հունիսի 22-ին դաժան հաշվեհարդար կատարեց իրանական դեմոկրատական շարժման կողմնակիցների հետ։ Հրանոթներից նա կրակ բաց արեց մեջլիսի վրա, արյունով ներկեց Թեհրանի փողոցները։

Այդ մեծ ոճրագործության դեմ իր բողոքի ձայնը բարձրացրեց համայն մարդկության առաջնորդ Վ. Ի. Լենինը։

Նա գրեց. «Պարսկաստանում տեղի ունեցավ կոնտրռևոլյուցիա, որը յուրահատուկ ձևով միացրեց Ռուսաստանյան Առաջին Դումայի ցրումը 1905 թվականի վերջին Ռուսաստանում տեղի ունեցած ապստամբության հետ։

Ռուսական ցարի զորքերը, որոնց խայտառակաբար ջախջախեցին ճապոնացիները, ռևանշ են կատարում, ջանալով ծառայել կոնտրռևոլյուցիային։

Ռուսաստանում տեղի ունեցած գնդակահարությունների, պատժիչ արշավախմբերի, կոտորածների և կողոպուտների ասպարեզում հանդես բերած սխրագործություններին հետևվում են կազակների սխրագործությունները՝ ռևոլյուցիան Պարսկաստանում ճնշելու գործում։ Որ Նիկոլայ Ռոմանովը սևհարյուրյակայինների, կալվածատերերի և գործադուլներից

ու քաղաքացիական կռվից սարսափած կապիտալիստները գլուխն անցած՝ մոլեգնում է ընդդեմ պարսկական ռևոլյուցիոներների, այդ հասկանալի է, և միջազգային գահիճների դերը առաջին անգամ չէ, որ բաժին է ընկնում ռուսական քրիստոսասեր ռազմիկներին»։

Մոհամմեդ Ալի շահն իր արյունոտ գործը Թեհրանում հեշտ վերջացրեց։

Այլևս չկար մեջլիսը։ Նոր միայն ընդունված սահմանադրությունը ոտնահարվեց։ Շահին մնում էր վայելել իր հաղթանակը։ Բայց երկրի շատ վայրերում դեռ հորդառատում էր ռևոլյուցիայի բոցը և սպառնում ընդգրկել ողջ երկիրը։

Շահի ձեռքից գնում էր երկրի ամենահարուստ գավառը՝ Հարավային Ադրբեջանը, ուր ժողովուրդը, համախմբված իր լեգենդար առաջնորդի՝ Սաթթար խանի շուրջը, ստեղծել էր մի նոր, ռևոլյուցիոն իշխանություն և իրեն հայտարարել անկախ։

Թեհրանցիների դեմ տարած հաղթանակից ոգևորված Մոհամմեդ Ալին հրամայեց ինչ գնով էլ ուզում է լինի հնազանդեցնել ըմբոստ ադրբեջանցիներին։ Ազատության, իրենց ազգային արժանապատվության համար մարտնչող հերոսական ադրբեջանցիները անձնատուր չէին լինում։ Եվ անձնատուր չեղան անգամ այն ժամանակ, երբ շահի զորքերը պաշարել էին քաղաքը։ Իրենց պայքարով, ռևոլյուցիոն վճռականությամբ ադրբեջանցիներն օրինակ դարձան Պարսկաստանի մյուս նահանգների և մի քանի ցեղերի համար։

Շահի դեմ ելան Գիլյանի դեմոկրատները, հարավի բախտյար ցեղերը և, օգտվելով ստեղծված պայմաններից, պաշարեցին Թեհրանը։

Մոհամմեդ Ալին, որ իր իսկ ժողովրդի հետ փորձում էր խոսել սրի լեզվով, ստիպված եղավ փախչել մայրաքաղաքից։

Այնուհետև նա բավական ճիգ գործադրեց Թեհրան վերադառնալու համար, սակայն, այդ նրան այլևս չհաջողվեց, չօգնեց նույնիսկ արյունարբու իմպերիալիստների միջա-

մությամբ։ Իսկ իմպերիալիստները գործին միջամտեցին զինված ուժով։ Նրանք ճնշեցին ռևոլյուցիոն շարժումը Թավրիզում, ապա Անգլիայի հետ համաձայնությամբ գալով արշավանք կազմակերպեցին դեպի Թեհրան։ Բայց իմպերիալիստները երբեք չկարողացան ադրբեջանական ժողովրդի մեջ մեռցնել ազգային անկախության, ազատության և դեմոկրատիայի համար տարվող պայքարի ըմբոստ ոգին։ Դրանից հետո մեկ անգամ չէ, որ ադրբեջանցիները ոտքի ելան և Սաթթար խանի դրոշի տակ կանգնած պայքար տարան շահի ինքնակալության և օտարերկրյա իմպերիալիստների դեմ։

Այդ պայքարում ընկան հազարավոր ադրբեջանցի քաջարի մարտիկներ, ընկավ և ինքը՝ դյուցազն Սաթթար խանը, ընկան նրա զինակիցները։ Ո՛չ տեռորը, ո՛չ առատորեն թափվող արյունը, հալածանքն ու ճնշումներն ադրբեջանցիներին հետ չպահեցին պայքարից։

Այն ծանր ու դաժան օրերին նրանց պայքարին ուշադիր հետևում էր ինքը Վ. Ի. Լենինը և ամեն հարմար առիթով բողոքում արյունարբու իմպերիալիստների քաղաքականության դեմ։

Լենինի ձայնը դա ռուս աշխատավոր մասսաների, բանվորների, գյուղացիների, ազնիվ ինտելիգենցիայի ձայնն էր։ Լենինի բողոքի ձայնը դա բոլշևիկների պարտիայի ձայնն էր։ Ահա թե ինչու բոլշևիկների Պրագայի 1912 թվի կոնֆերանսի բանաձևում Լենինի առաջարկով գրվեց. «Ռուսաստանի սոցիալ դեմոկրատական բանվորական պարտիան բողոքում է ցարական շայկայի ավազակային քաղաքականության դեմ, շայկա, որ որոշել է խեղդել պարսկական ժողովրդի ազատությունը և դրանում կանգ չի առնում ամենաբարբարոս և զզվելի գործողությունների առաջ։

Կոնֆերանսը նշում է որ ռուսական լիբերալների կողմից ամեն կերպ ռեկլամացիայի ենթարկվող և պաշտպանվող ռուսական և անգլիական կառավարությունների դաշինքն առաջին հերթին ուղղված է ասիական դեմոկրատիայի ռևո-

յուցիոն շարժման դեմ և որ այդ դաշինքը անգլիական լիբերալ կառավարությունը ցարիզմի արյունալի գազանությունների մասնակիցն է դարձնում։

Կոնֆերենցիան իր խորին համակրանքն է հայտնում պարսկական ժողովրդի պայքարին և, մասնավորապես, պարսկական ս.-դ. պարտիային, որն այնքան կորուստներ է կրել ցարական բռնացողների դեմ տարվող պայքարում»։

Այս փաստերն աչքաթող անել չի կարելի։

Ռզա շահն էլ ցանկացավ գնալ Մոհամմեդ Ալի շահի հետքերով։ Բայց հեռու չգնաց։ Գահ բարձրանալու հենց առաջին օրվանից Ռզա շահն Իրանի սահմանադրության հետ վարվեց ճիշտ այնպես, ինչպես նույն այս Թեհրանում Մոհամմեդ խան Ղաջարն էր վարվել Քյարիմ շահի հետ։ Ղաջարը Քյարիմ խանի աճյունը Շիրազից բերել էր Թեհրան, թաղել իր գահի աստիճանների տակ, որպեսզի ամեն օր իր թշնամու գերեզմանը կոխկրտի։ Իսկ Ռզա խան Փեհլևին, թաղելով Իրանի սահմանադրությունը, նրա վրա կանգնեցրել էր իր արձանը ձի հեծած և հաղթանակած ինքնակալի տեսքով։

Բայց ամեն մի չարագործ վաղ թե ուշ իր պատիժը կրում է։ Իրանի ժողովուրդը միահեծան շահին պատժեց և այդ պատիժն արժե, որ միշտ հիշեն Իրանի ռեակցիոներները, նրանք, որոնք օտարերկրյա իմպերիալիստների ձեռքին խաղալիք են դարձել։

1941 թվի այսպես կոչված շահրիվարյան (օգոստոսյան)[1] դեպքերի օրերին Թեհրանի ազատասերներն Ռզա շահի արձանի թևի տակ փտած պոմիդորներ դրին։ Այն ժամանակ շահը կենդանի էր և ժամանակ ուներ մտածելու, թե ինչը նրան հասցրեց այդ տխրահռչակ փառքին։ Նա թողեց գահը և փախավ իր հին բարեկամների՝ անգլիական իմպերիալիստների մոտ. փախավ իր իսկ ժողովրդի դատաստանից, ժո-

1 Դաշնակիցների զորքերի մուտքը Իրան։

ղովուրդ, որին նա միշտ արհամարհել էր։ Նա փախավ հրապարակում կանգնեցրած իր արձանի մոտով։

Այո, Թեհրանի հրապարակի հետ շատ պատմություններ են կապված։ Սա Թեհրանի կենտրոնական հրապարակն է, նրա սիրտը։ Եվ նրանք, ովքեր ամեն օր փափուկ ավտոներում, կառքերում նստած և կամ ոտքով անցնում են այս հրապարակով, չպետք է մոռանան և Թեհրանի մյուս՝ Բահարիստանի հրապարակի մասին։ Մայրաքաղաքում նրա անունը քիչ է հիշատակվում և կամ բնավ չի հիշատակվում։ Բայց հենց այդ հրապարակից էր, որ ազատության և սահմանադրության կողմնակիցները, քառասուն տարի առաջ, զինված հարձակվեցին ռեակցիայի խաժամուժ ոհմակի վրա, ցրեցին այն, գոչելով.

— Կեցցե Մոռթաշար էդ-Դովլեն, կորչի Մուխբիր էս-Սալթանեն...

Ամեն մի ժողովուրդ իր անցյալում ուսանելի շատ բան ունի։ Նույնը կարելի է ասել նաև երկրի տիրողների մասին։ Իրանի ներկայիս վաճառված ղեկավարներին անհրաժեշտ է շատ լավ հիշել Բահարիստան հրապարակի մասին։

Իրանի ներկայիս տերերը շատ քիչ դասեր են առել Ռզա շահի փախուստից, մոռացել են, որ նրանից առաջ էլ Թեհրանից փախչողներ եղել են և դեռ կլինեն, մոռացել են այն ամենը, ինչ ինքնահավան Ռզա շահին հասցրեց այդ խայտառակ փախուստին։ Իսկ երբ որևէ ուսանելի բան մոռանում են՝ վատ չէ այն հիշեցնել։

ՌԶԱ ԽԱՆ ՓԵՀԼԵՎԻ

Ո՞վ էր Ռզա խան Փեհլևին, ի՞նչպես նա դարձավ Իրանի տիրակալը և ի՞նչը նրան հասցրեց այդ խայտառակ վախճանին։

Այս հարցերը շատերին են հետաքրքրում։

Ընդհանրապես Ռզա շահի պատանեկական և երիտասարդական տարիների մասին շատ քիչ բան է հայտնի։ Ինքը

շահը միջոցներ էր ձեռք առնում, որպեսզի այդ մասին չխոսվի և մանավանդ՝ չգրվի։

Հայտնի է միայն, որ նա ծնվել է Մազանդարանի Սավադքուխ կոչված վայրում։ Երիտասարդական տարիներին նա զինվորական ծառայության է մտել։ Նրա դեմքի սպին այդ տարիների հիշատակն էր։ Դաշույնի հարվածը նրան տվել էր ընկերներից մեկը։ Ասենք նրան շատ են ծեծել։ Մի անգամ նա ինքնակամ կերպով հագնում է ավագի ուսադիրներ, որի համար նրան մի լավ ծեծում են, ապա փոխադրում Փեհլևիում գտնվող զորամասը։

Այս փոքրիկ, առաջին հայացքից կարծես ոչինչ չներկայացնող փաստի մեջ, ինչպես հայելում, արտացոլվում է Ռզա խանի կյանքի ուղին։ Ավագի կոչումը դեռ ոչինչ բան է։ Հետագայում նա ինքն իրեն տվել է ավելի մեծ տիտղոսներ և ստիպել մարդկանց, որպեսզի ենթարկվեն իրեն։

Զինվորական ծառայության մեջ բավական արագ առաջ գնալով, 1921 թվին նա արդեն դառնում է գնդի հրամանատար։

Ռզա խանը միայն զինվորական ծառայությամբ չի բավարարվում։

Օգտագործելով զինվորականի ազդեցությունը, նա զանազան խարդախ միջոցներով կալվածքներ է ձեռք բերում, օրեց-օր ավելի հարստանում։ Իր կոչումն ու դիրքը Ռզա խանն օգտագործում է այլ ավելի կեղտոտ բաների համար. նա դառնում է անգլիացիների լրտեսը, որի համար, պետք է ենթադրել, որ անգլիացիները քիչ չէին վճարում։

Նա որպես այդպիսին անգլիական իմպերիալիստներին հարկավոր եղավ մանավանդ 1917 թվից հետո։

Սովետական իշխանությունը լարված պայքար էր մղում կոնտրռևոլյուցիայի, ինտերվենտների դեմ։

Անդրկովկասում և Անդրկասպյան երկրներում էսէրները, մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթականներն սանձ-

ծել էին կոնտրռևոլյուցիոն խռովություններ, փակել Սովետական Ռեսպուբլիկայի ճանապարհը դեպի Իրան։

Իրերի այսպիսի դրությունը խիստ ազդեց Իրանի տնտեսության, առևտրի վրա։ Երկրում ստեղծվեց մինչ այդ չտեսնված ճգնաժամ։ Լայն սպառման ապրանքները՝ շաքարը, լուցկին, նավթը անասելի թանկացան։

Անգլիական իմպերիալիստներն շտապեցին օգտվել Իրանում ստեղծված ճգնաժամային վիճակից և 1919 թվին նրա վզին փաթաթեցին ստորացուցիչ մի պայմանագիր, ըստ որի Անգլիան պարտավորվում էր Իրանին տալ հարկավոր քանակությամբ «խորհրդատուներ»՝ իրանական կառավարական մարմիններում աշխատելու, և սպաներ ու անհրաժեշտ հանդերձանք՝ իրանական զինված ուժերը վերակազմակերպելու համար։ Նույն պայմանագիրը նախատեսում էր այս միջոցառումներն իրականացնելու համար Իրանին 2 միլիոն ֆունտ ստերլինգ վարկ տալ։

Իրանն իր կողմից պարտավորվում էր իրավունք տալ Անգլիային՝ երկաթգծի և ճանապարհային շինարարության ընկերություններ ստեղծել։

Վեց կետից բաղկացած այդ պայմանագիրը փաստորեն ճորտացնում էր իրանական ժողովրդին։

Բայց պայմանագրի տակ կար միայն իրանական ռեակցիոն կառավարության ստորագրությունը, իսկ ժողովուրդը նրա տակ չէր ստորագրել և չէր ցանկանում ստորագրել։ Ավելին, այս ու այնտեղ նա իր կառավարության և անգլիական իմպերիալիստների դեմ հայտնում էր իր բուռն բողոքը, զենքը ձեռքին ցանկանում էր դուրս վռնդել անգլիացիներին երկրից։

Այդ օրերին իրար հետևից կազմակերպված ցույցերից փոթորկվում էր Թեհրանը, ահաբեկիչ լուրեր էին ստացվում Թավրիզից, Գիլանից, Հարավից...

Ռուսաստանի Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի ազդեցությունն օրեց-օր ավելի ուժեղ էր զգացվում Իրանում։

Իսկ անգլիացիները ձեռք էին առնում բոլոր միջոցները, որպեսզի Իրանը հեռու պահեն այդ ազդեցությունից։

Նրանց դրդմամբ Սովետական Ռեսպուբլիկայի դիպլոմատիկական ներկայացուցիչներին հալածում էին, բանտարկում։

Անգլիական իմպերիալիստները կանգ չէին առնում նույնիսկ ամենաքստմնելի ոճրագործությունների առաջ։ Նույն այդ 1919 թվի օգոստոսի 18-ին Աշուր-Ադե կղզում սպանվեց Սովետական Ռեսպուբլիկայի կողմից Իրանում դեսպան նշանակված Կոլոմիյցևը։

Բայց ինչ էլ անեին անգլիական իմպերիալիստները, ինչ ստոր միջոցների էլ դիմեին, չէին կարող պատմության անիվը շուռ տալ։ Իրանում արդեն շատերը գիտեին, թե ի՞նչ է կատարվել հեռավոր Պետերբուրգում ու Մոսկվայում, և պահանջում էին անմիջապես կապեր հաստատել Ռուսաստանի հետ։ Իր կառավարությանը ժողովուրդն այդ պահանջը ներկայացնում էր զենքը ձեռքին։

Բանն այն էր, որ այդ օրերին կառավարությունից դժգոհ էին ոչ միայն լայն մասսաները, այլև զորքը, որը երկար ժամանակ ռոճիկ չէր ստանում և սպառնում էր արշավել Թեհրանի վրա, զոռով վերցնել իրեն հասանելիք աշխատավարձը։ Այս տրամադրությունների մասին շատ լավ գիտեին նաև անգլիական դեսպանական լիազորները և դա նրանց ջատ ձեռնտու էր։ Իրենց հետ պայմանագիր կնքած իրանական կառավարությունը կորցրել էր հեղինակությունը և իրեն ուժեղ չէր զգում։ Ազգային ազատագրական շարժման ղեկավարները կարող էին տիրել կառավարությանը և անգլիացիներին բոլորովին դուրս վռնդել երկրից։ Իսկ Ռզա շահի հրամանատարության տակ գտնվող զորքի արշավանքը դեպի Թեհրան կվերջանար մի ռեակցիոն կառավարությունը մյուսով փոխարինելով։

Անգլիացիները նախապես պայմանավորվել էին, թե ով ում պետք է փոխարինի։

Դեպի Թեհրան կատարվող արշավանքի գլուխ կանգնեց անգլիական լրտես Ռզա խանը։

Նա շատ լավ գիտեր, թե ինչո՞ւ է գնում Թեհրան և ի՞նչ պետք է անի այնտեղ։

Տեղ հասնելուն պես Ռզա խանի առաջին գործը եղավ զենքի ուժով պետական հեղաշրջում կատարելը։ 1921 թվի փետրվարի 21-ին էր դա։ Նա ցրեց նախկին կառավարությունը, պետական մի շարք գործիչների ձերբակալեց, ապա կազմեց նոր կառավարություն։

Ամեն ինչ կատարվեց այնպես, ինչպես նախատեսել էին անգլիացիները։

Նոր կառավարության մեջ պրեմիեր մինիստրի պաշտոնը հանձնվեց անգլիական մեկ ուրիշ լրտես՝ Սեիդի-Զիա-Էդ-Դինին, որը մինչ այդ խմբագրում էր անգլիացիների կողմից ֆինանսավորվող «Ռադ» թերթը։ Ռզա խանին հասավ զինվորական մինիստրի պորտֆելը։

Սակայն երկրում ստեղծված դրությունը դրանով չփոխվեց։ Հարկավոր էր հյուսիսային հարևանի հետ վերականգնել կապերը։ Եվ այդ պահանջողներն այս անգամ ոչ միայն դեմոկրատական շարժման պարագլուխներն էին, այլ նույնիսկ վաճառականները։ Երկրում, մանավանդ հյուսիսային մասում, տնտեսական ծանր վիճակից դուրս գալու միակ ելքը դա էր։ Դա հասկանում էին անգամ կիսագրագետ մարդիկ, իսկ իրանական կառավարությունն առավել ևս պարտավոր էր հասկանալ։ Որքան էլ անգլիացիները խանգարում էին, այնուամենայնիվ, իրանական կառավարությունն ստիպված էր Սովետական Ռեսպուբլիկայի հետ բանակցություններ վարել՝ սովետա-իրանական փոխադարձ պայմանագիր կնքելու մասին։

Լենինի և Ստալինի ստորագրությամբ հրապարակված հայտնի դիմումից հետո 1921 թվի փետրվարի 26-ին Իրանի հետ կնքվեց համաձայնություն, ըստ որի Ռուսաստանի Սոցիալիստական Ռեսպուբլիկան չեղյալ համարեց ցարական Ռուսաստանի և Իրանի միջև կնքված պայմանագրերը և առանց հատուցման Իրանին տվեց Ջուլֆա—Թավրիզ երկաթուղին, «Հաշվա-փոխատու» բանկն իր ակտիվով և պասի-

վով, Էնզելու նավահանգստի սարքավորումները, զորանոցները, հեռագրատները, խճուղիները, հրաժարվեց ցարական կառավարության կողմից Իրանին տրված 67500 հազար ռուբլու (ոսկով) փոխառությունից՝ հետապնդելով միայն մի նպատակ՝ տեսնել պարսկական ժողովրդին անկախ, ծաղկող և ամբողջ իր «ունեցվածքն ազատ կերպով տնօրինող»։

Իրանական տերիտորիայի վրա ցարական Ռուսաստանի ունեցվածքն Իրանին վերադարձնելու հետ միասին Սովետական Ռեսպուբլիկան հրաժարվում էր երրորդ կողմերի հետ կնքված այն բոլոր պայմանագրերից, որոնք այս կամ այն չափով խախտում էին Իրանի ինքնուրույնությունը։ Վերականգնվում էին հին սահմանները։ Եվ վերջապես երկու պայմանավորվող կողմերը համաձայնվեցին, որ այն դեպքում, երբ երրորդ երկրների կողմից փորձ արվի զինված միջամտությամբ Պարսկաստանի տերիտորիայի վրա նվաճողական քաղաքականություն իրականացնել կամ Պարսկաստանը դարձնել Ռուսաստանի դեմ ելնելու բազա, եթե այդ դեպքում վտանգի տակ դրվի ՌՍՖՍՌ կամ նրան դաշնակից պետությունների սահմանները և եթե Պարսկաստանի կառավարությունը Ռուսաստանի կառավարության նախազգուշացումից հետո ինքն ի վիճակի չլինի կանխել այդ վտանգը, Ռուսաստանի սովետական կառավարությունը իրավունք է ունենալու իր զորքերը Պարսկաստանի տերիտորիան մտցնելու, որպեսզի ինքնապաշտպանության նպատակով ձեռք առնի ռազմական անհրաժեշտ միջոցներ։ Տվյալ վտանգը վերացնելուց հետո Ռուսաստանի կառավարությունը պարտավորվում է անհապաղ դուրս բերել իր զորքերը Պարսկաստանի սահմաններից»։

Պայմանագրի մյուս կարևոր կետն այն էր, որ «Պարսկաստանի կառավարությունն իր կողմից խոստանում է այս պայմանագրի համաձայն Պարսկաստանին վերադարձված կոնցեսիաները և ունեցվածքը չհանձնել ոչ մի երրորդ պետության կամ նրա քաղաքացիների տիրապետությանը, տնօրինությանը կամ օգտագործմանը, պահպանելով բոլոր վերա-

հիշյալ իրավունքներն ի բարօրություն պարսկական ժողովրդի»։

Ինչ խոսք, որ այս պայմանագիրն ստորագրվեց օտարերկրյա իմպերիալիստների և առաջին հերթին անգլիական իմպերիալիստների կամքին հակառակ։

Սակայն ուրիշ ելք չկար։

Դեմոկրատական շարժումը երկրում սպառնագին չափերի էր հասնում։ Ժողովուրդը պահանջում էր դուրս վռնդել անգլիացիներին։

Անգլիացիների գործակալ Սեիդ Զիան այդ դրությունից դուրս գալու միջոցներ էր որոնում։ Անգլիացիներն «օգնության» հասան։ Նրանք Սեիդ Զիա էդ-Դինին նստեցրին սեդանի մոտ և իրանական ժողովրդին ուղղված մի դեկլարացիա թելադրեցին, ըստ որի «վերացվում էր» 1919 թվին անգլիացիների հետ կնքված փոխադարձ համաձայնությունը։

Դեկլարացիան հրապարակվեց 1921 թվի փետրվարի 26-ին, այսինքն Թեհրանում պետական հեղաշրջում կատարելուց հինգ օր հետո։ Դա ևս չօգնեց։ Դեմոկրատական շարժումներն Իրանում շարունակվում էին։ Չօգնեց նույնիսկ այդ դեկլարացիայի մեջ հողի ռեֆորմի մասին եղած հիշատակությունը։

Հարկավոր էր մի նոր ելքի դիմել։

Եվ ահա այս ծանր կացությունից աշխատեցին օգտվել ամերիկյան իմպերիալիստները, որոնց գործակալները Իրանում վաղուց հող էին պատրաստում մյուս երկրների իմպերիալիստներին դուրս վանելու համար։ Տակավին 1911 թվից Իրանում, որպես ֆինանսական գործերի «գլխավոր խորհրդատու», աշխատում էր ամերիկացի Մորգան Շուստերը։ Դա նրա պաշտոնական կոչումն էր, մինչդեռ Շուստերի գործունեության շրջանակներն ավելի լայն էին։

Այժմ, երբ իրանական կառավարությունը գլուխ էր ջարդում դժվար կացությունից դուրս գալու համար, ամերիկյան իմպերիալիստները մի չտեսնված դեղատոմս առաջարկեցին.

— Վերցրեք ահա մեր այս դոկտոր Միլսպոյին և նա֊ գրությունը կփրկի։

Միլսպոն՝ ամերիկացիների այդ գործակալը, այն ժա֊ մանակ էլ առաջարկեց այն, ինչ այսօր առաջարկում են նրա֊ հայրենակիցներն իրանցիներին։

— Դուք մեզնից խնդրեցեք 10 միլիոն դոլլար վարկ և գրությունը կփրկվի...

Այսինքն իրանական ժողովրդի ոտքն ու ձեռքը կկապվի, իսկ նրանից հետո ինչպես կուզես վարվիր նրա հետ։

Երկերեսանի Սեիդ-Զիա-էդ-Դինն ամերիկացիների հետ սկսեց բանակցություններ վարել այն ժամանակ, երբ դեռ չէր չորացել սովետա-իրանական պայմանագրի թանաքը։ Ամերիկական «Ստանդարտ օյլ» և «Սինկլեր» ընկերություն֊ ների հետ բանակցություններ սկսեցին վարել երկրի հյու֊ սիսային շրջանների նավթը շահագործման տալու մասին։ Բանակցություններից անցան գործի։ «Ստանդարտ օյլ»-ին կոնցեսիոնների իրավունք տվին։

Սովետական Ռուսաստանի բողոքից հետո միայն իրա֊ նական կառավարությունը «խելքի եկավ», նրան չհաջողվեց լռեցնել ժողովրդին։ Ընդհակառակը, բողոքներն ավելի սուր բնույթ էին ստանում։ Ժողովրդի հետ պետք էր խոսել զենքի լեզվով, իսկ այդ ձևով ամենից լավ խոսում էր Ռզա խանը։

Թավրիզից, Գիլանից և այլ տեղերից շարունակվում էին «վատ» լուրեր գալ։ Երկրում ծավալված ռևոլյուցիոն շարժ֊ ման հիմնական նպատակն էր դուրս քշել անգլիական իմպե֊ րիալիստներին, իսկ անգլիացիները ոչ մի գնով Իրանից հրաժարվել չէին ցանկանում։ Ուրեմն, ինչ գնով էլ ուզում է, պետք էր ճնշել ռևոլյուցիոն շարժումը երկրում։ Դա ավելի ձեռնտու էր կատարել հենց իրենց իրանցիների ձեռքով։ Ռզա խանն ամենահարմար թեկնածուն էր այդ արյունոտ գործը կատարելու համար։ Թեհրանի դեպքերի ժամանակ իր դաժանությամբ նա ապացուցել էր այդ։

Թեհրանից հետո հերթը Ռեշտինն էր։

Չէ՞ որ Ռեշտում ավելի վտանգավոր բաներ էին տեղի

ունենում, քան Թեհրանում։ Ռզա խանը մտավ իր իսկական դերի մեջ. նա չտեսնված դաժանությամբ հաշվեհարդար կատարեց ռևոլյուցիայի կողմնակիցների հետ, Ռեշտում վերականգնեց ռեակցիոն կարգերը։

Գիլանի ռևոլյուցիան ճնշելուց հետո Ռզա խանը կանգնեց իրանական զինված ուժերի գլուխ։ Նա ոչ թե խոսքով, այլ արյունոտ գործերով ցույց տվեց, որ ինքը իմպերիալիստների և սեփական երկրի կալվածատերերի և բուրժուազիայի հավատարիմ մարդն է, ռևոլյուցիայի դաժան դահիճը։ Այժմ նրանից, որպես դահճից, շատերն էին վախենում։ Եվ նա օգտագործում էր շրջապատի այդ վախն իր անձնական նպատակների համար։ Առանց թաքցնելու Ռզա խանը ձգտում էր երկրի իշխանությունը կենտրոնացնել իր ձեռքում։ Սեիդ Զիա-էդ-Դինի կառավարության մեջ զինված ուժերի հրամանատարի պաշտոնը փոքր էր թվում նրան։ Հարկավոր էր բացարձակ իշխանություն։

Երկրում իշխող իմպերիալիստները դրան դեմ չէին։ Վերջիվերջո նրանց նպատակն էր Իրանը հեռու պահել «բոլշևիկյան ազդեցությունից», իսկ Սեիդ Զիայի կառավարության մինչ այդ կատարած հուսահատական քայլերը գործին քիչ օգնեցին։ Ճիշտ է, Սեիդ Զիան շարժվում էր անգլիացիների թելադրանքով, բայց և այնպես, ինչպես երևում էր, բավական ճկուն չէր։

1925 թ. փետրվարին Ռզա Խանը տապալեց ղաջարների դինաստիան և մեջլիսի կողմից նշանակվեց ռեսպուբլիկայի պրեզիդենտ, իսկ նոյեմբերին զավթեց գահը՝ իրեն հայտարարելով երկրի ինքնակալ՝ Ռզա շահ Փեհլևի։

Այժմ նա կարող էր ամեն ինչ կատարել՝ ոչ ոքի առաջ հաշիվ չտալով։ Մնում էր մի շատ չնչին, ձևական բան։ Մինչ այդ շահի գահը մեկից մյուսին էր անցել ժառանգաբար, իսկ ինքը գահը զավթել էր ղաջարների դինաստիայի հետ ոչ մի կապ չունենալով։

Բայց կար միջոց, որ կարող էր հաստատել նրա նոր

տիտղոսը։ Միայն հարկավոր էր քիչ թե շատ նախապատրաստական աշխատանք տանել։

Ինչ էլ լիներ, մեջլիսը մնում էր որպես մեջլիս։

Իսկ ըստ սահմանադրության իրանական մեջլիսն ընտրվում է երկու տարին մեկ անգամ։ Դեպուտատների թիվը 162 է, իսկ առանձին դեպքերում 200-ի է հասնում։ Մեջլիսում մեծ մասամբ ընտրվում են երկրի հարուստները՝ խոշոր կալվածատերերը, բուրժուաները։

1943 թվին մեջլիսի 14-րդ հավաքի 136 դեպուտատներից 60 տոկոսը կազմում էին կալվածատերեր, 30 տոկոսը խոշոր արդյունաբերողներ և առևտրականներ, և միայն 10 տոկոսն ինտելիգենցիայի և աշխատավորության ներկայացուցիչներ։

Մեջլիսը մեծ կախում ունի շահից։ Նա միայն կարող է օրենքներ մշակել, որոնք հրապարակվում են միայն և միայն շահի ստորագրությունից հետո։

Մեջլիսի դեպուտատները որևէ տեղ աշխատելու իրավունք չունեն։ Ընտրվելուց հետո նրանք երդվում են և ապա կարող են օգտագործվել մեջլիսի ընտրությամբ։ (Ընտրական իրավունքն էլ իր առանձնահատուկ կողմերն ունի։ Իրանում ընտրական իրավունքից օգտվում են 20-ից բարձր տարիք ունեցող տղամարդիկ։ Ընտրվել կարող են 30—70 տարեկանները։ Կանայք, զինվորականները, դատապարտվածները և քաղաքականապես անհուսալիներն ընտրական իրավունքից չեն օգտվում)։

Ընտրական սիստեմն այնպիսին է, որ հնարավորություն է տալիս մեծ զեղծումներ կատարել և ցանկացած մարդու դարձնել մեջլիսի դեպուտատ։

Ռզա շահը հենց այդպես էլ վարվեց։

Իր կողմնակիցներին մեջլիս քաշելուց հետո նա իր նոր տիտղոսը հաստատելու հարցը դրեց։

1925 թվի դեկտեմբերի 12-ի նիստում Իրանի մեջլիսը Ռզա խանին հաստատեց երկրի ինքնակալ։

Այսպիսով Իրանի գերագույն իշխանությունը բռնագրա-

վեց դեմոկրատիայի դահիճ, անգլիական իմպերիալիզմի գործակալ Ռզա խանը։

Գահ բարձրանալու հենց առաջին տարին նա կազմակերպեց դաժան ռեպրեսիաներ՝ պրոֆմիութենական, քաղաքական կազմակերպությունների դեմ, ջարդ ու փշուր արեց դրանց։

Իրենց ազատության, անկախության, ազգային պատվի համար մարտնչող մարտիկներին արի քաշելուց հետո Ռզա խանը բանտերը լցրեց դեմոկրատական ճակատի մարտիկներով։ Դատական օրգանները շարունակ զբաղված էին այդ մարտիկների գործերի քննությամբ։ Երբ դատարանը մեկին ու մեկին մահապատժի ենթարկելու համար հարկավոր ապացույցներ չէր ունենում, ապա նրան մահվան դուռն էին հասցնում թույնի, ծեծի, տանջանքի միջոցով՝ մութ ու խոնավ զնդաններում։ Թեհրանի Ղասր Ղաջար բանտը վկա է բազմաթիվ այդպիսի սպանությունների։

Ռեակցիան անխնա հարձակում սկսեց նաև ազգային փոքրամասնությունների, մանավանդ ազատատենչ ադրբեջանական ժողովրդի, հայերի և մյուսների դեմ։ Փակվեցին դրանց դպրոցները, կուլտուրայի օջախները...

Ադրբեջանցիներից վրեժ լուծելու, նրանց մասնատելու և մարտական ոգին ընկճելու նպատակով Ռզա շահը հետագայում Հարավային Ադրբեջանը բաժանեց մի քանի մարզերի միջև։

(Ադմինիստրատիվ գծով Իրանը 1938 թվից բաժանվում է 10 օստանի (մարզ), որ միացնում է 49 շահրեստան (գավառ)։ Շահրեստանը միացնում է մի քանի բախշեր (նահանգ), բախշը՝ մի քանի դախեստան (շրջան), իսկ դախեստանը՝ մի քանի գյուղեր։ Օստանները 10-ն են՝ Ռեշտ, Թեհրան, Թավրիզ, Խոյ, Համադան, Խորեմաբադ, Շիրազ, Քիրման, Մեշխեդ, Իսֆահան)։

Խավար, դժնի օրեր էին։

Միաժամանակ Իրանի շահը ջանք չէր խնայում օտար-

երկրյա իմպերիալիստներին դուր գալու համար։ Դրա շահի օրոք էր, որ անգլիական իմպերիալիստներն Իրանում սկսեցին կառուցել երկաթուղիներ, խճուղիներ, որոնք որտեղից էլ սկիզբ էին առնում, վերջին հաշվով հասնում էին Սովետական Միության սահմաններին։ Այսպես օրինակ՝ Տրանսիրանական երկաթգիծը կապում էր Անգլո-իրանական նավթային ընկերությունը Թեհրանի, Պարսկական ծոցը կենտրոնի և Կասպից ծովի հետ։ Կառուցվեցին Թեհրանը Ջալուսի և Գորգանի հետ կապող խճուղիները, Թեհրանից Միանե տանող երկաթուղին։

Իրենց ռազմական պլանների կիրառման հետ միասին օտարերկրյա իմպերիալիստները մորթած ոչխարի պես մաշկում էին Իրանը։ Նրանք չնչին կոպեկներ էին վճարում երկրից դուրս տարվող հարստությունների համար, իսկ շահը շատ գոհ էր։ Նա ինքն էր միջոցներ փնտրում անգլիական իմպերիալիստներին ծառայելու։ Այսպիսի մի ծառայություն էր թեկուզ անգլո-իրանական կոմպանիայի պայմանագրի վերակնքումը 1933 թվին, որի նպատակն էր իբր թե կրճատել անգլիացիների եկամտի բաժինը, մինչդեռ իրականում ավելի էր ամրապնդում անգլիական իմպերիալիստների դիրքերը երկրում, որովհետև ժողովրդի մեջ վարկաբեկված անգլո-իրանական նավթային համաձայնությանը նոր ուժ էր տալիս։ Նախկին կեղտոտ կաթսան նորից հասարակության մեջ էր հանվում որպես «սրբազան» ջրով օծված։ Հասարակության մեջ նորից ամրապնդվում էր այն կարծիքը, թե Սուլեյմանե,—Քերմանշախ-Խորեմաբադ-Շիրազ-Բեյուշիստան մարզերի սահմաններից հարավ ընկած նավթային հողամասերն անգլիացիներինն են և ոչ ոք դրա դեմ խոսելու իրավունք չունի։

Ամերիկացիները սակայն, նման արտոնություններ չունեին «աւյուծի և արևի» այս երկրում։ Վերջապես իրանական ռեակցիան պարտավոր էր հիշել, որ աշխարհի տերը միայն Անգլիան չէ։ Աշխարհում կար և մեկ ուրիշ երկիր՝ Ամերիկան, որին Իրանը երբեք չպետք է մոռանար։ Ամերիկա-

ցի իմպերիալիստներն իրենք էլ չէին ուզում հաշտվել այդ երկրում երկրորդական-երրորդական դեր կատարելու հետ և շարունակ զգացնել էին տալիս իրենց գոյության մասին։

Ինքը Ռզա շահն էլ չէր ցանկանում նրանց մոտ վատամարդ լինել։

1923 թվի դեկտեմբերին նրա համաձայնությամբ հյուսիսային նավթի կոնցեսիան նորից տրվեց ամերիկացիներին։ Այս անգամ «Ստանդարտ օյլ»-ի փոխարեն հյուսիսային նավթի մշակման գործը ձեռնարկեց Սինկլերի ամերիկյան ընկերությունը։

Բայց Սինկլերը չկարողացավ Իրանին տալ խոստացած գումարը՝ 10 միլիոն դոլլարի փոխառություն։

Ռզա շահն իր առևտուրն ամերիկյան իմպերիալիստների հետ ստիպված էր որոշ ժամանակով հետաձգել։

1937 թվին ամերիկյան «Դելավեր կամպանի» ընկերությունն Իրանի հյուսիս-արևելյան մասի (Կասպից ծովից մինչև Աֆղանիստան) նավթի մշակման և այդտեղից մինչև Պարսկական ծոցը նավթատար խողովակ անցկացնելու իրավունք ձեռք բերեց։ Ամերիկացիներն այստեղ ուրիշ նպատակներ ևս ունեին։ Նրանց հարկավոր էր ոչ միայն այդ, այլև Աֆղանիստանի, Բելուջիստանի նավթը։ Եվ ոչ միայն նավթը։ Վերջին հաշվով Մերձավոր Արևելքում մի բան պետք է շատ լավ հասկանային՝ աշխարհում այլևս ոչ ոք առանց Ամերիկայի մի համեղ պատառ բերանը տանելու իրավունք չուներ։ Գիշատիչների սեղանի շուրջն այլևս ոչ ոք ամերիկյան գիշատիչներին չպետք է աչքաթող աներ, մոռանար։ Իսկ երբ մոռանում էին, ապա այդ սեղանն արևելյան քծնանքով սպասարկող երկերեսանի Ռզա խանը ժպիտը դեմքին դիմում էր ամերիկացիներին.

— Խնդրեմ, միստեր, ես դեմ չեմ, Դուք էլ վերցրեք ձեր բաժինը...

Դա նա ասում էր շշնջյունով, գիշատիչների ականջներին խոնարհված, որովհետև շատ լավ գիտեր, որ այն, ինչ առաջարկում է ուրիշներին, իրենը չէ, այլ ժողովրդինը։ Ամ-

բողջ աշխարհի առաջ իրանական կառավարությունը պարտավորվել էր ժողովրդի այդ ունեցվածքը ծախու առարկա չդարձնել, թույլ չտալ ուրիշներին նավթային հողերը մշակելու պատրվակի տակ հյուսիսային շրջաններին օգտագործել իբրև ռազմաբեմ Իրանի դրացի մեծ պետության դեմ։

Իսկ Ռզա շահը չէր կարողանում թաքցնել իր թշնամանքը դեպի այդ դրացին։ Հակասովետական նրա արարքները շատ բանում էին իրեն զգացնել տալիս։

Սովետական Միությունից շաքար, լուցկի, կտորեղեն և այլ արդյունաբերական ապրանքներ չներմուծելու պատրվակով նա օտարերկրացիների օգնությամբ սկսեց կառուցել նման ապրանքներ արտադրող գործարաններ ու ֆաբրիկաներ։ Ներքին շուկայի կարիքները հոգալու համար Քերմանշահում կառուցվեց նավթաթորման գործարան։

Դրա հետ մեկտեղ նա սահմանեց արտաքին առևտրի մենաշնորհ, թեյի, շաքարի առևտուրն ամբողջովին պետության ձեռքը վերցրեց, արտահանվող ապրանքների վրա մեծ մաքսահարկ դրեց։

Սովետական Միության հետ եղած կապերն աստիճանաբար թուլանում էին։ Իրար հետևից փակվում էին սովետական տնտեսական ու կուլտուրական հիմնարկները։ Իսկ այն անձնավորությունները, որոնք հավատարիմ էին մնում այդ հիմնարկների հետ կնքված պայմանագրին, ենթարկվում էին հալածանքների։ Ամեն ինչ արվում էր շահական ինքնակալությունը երկրում ուժեղացնելու համար։ Այն ժամանակ, երբ շահի բարեկամներն ու օգնականները նրան մեծարում էին «շինարար» ածականով, աշխատավոր մասսաների դրությունը երկրում օրեց-օր ավելի անտանելի էր դառնում՝ ընկնում էր նրանց գնողունակությունը, ավելանում էր անգործների, մի կտոր հացի կարոտ մարդկանց թիվը քաղաքներում ու գյուղերում։

Այս պայմաններում Ռզա շահը շարունակում էր իր հակասովետական քաղաքականությունը, որը բոլոր երկրների իմպերիալիստների սրտովն էր։ Սովետական Միության դեմ տենդագին թափով պատերազմ նախապատրաստող

գերմանական իմպերիալիստները ևս ցանկացան Իրանը դարձնել ռազմաբեմ։ Անգլիական և ամերիկյան իմպերիալիստական շրջանները դրան դեմ չէին։ Վերջին հաշվով գերմանական իմպերիալիստների քաղաքականությունն Իրանում առաջին հերթին ուղղված էր Սովետական Միության դեմ։ Անգլիական և ամերիկյան իմպերիալիստները գերմանացիների գործողություններին նայում էին հետաքրքրությամբ։

Մեջտեղ գոյություն ուներ և մի խորամանկ հաշիվ՝ թույլ տալ հիտլերյան Գերմանիային կռվել Սովետական Միության դեմ, այսպիսով երկսին թուլացնել, ապա վերջում երկուսի դատաստանը միասին տեսնել։ Այս խորամանկ հաշիվներից ելնելով է, որ անգլիական իմպերիալիստական շրջանները ոչ մի անգամ չէին բողոքում, երբ հիտլերյան Գերմանիան Իրանը լցնում էր իր գործակալներով՝ «մասնագետներով», «առևտրական-արդյունաբերական ֆիրմաների ներկայացուցիչներով», իսկ հետագայում նաև բազմաթիվ կասկածելի «տուրիստներով»։

Հարկավոր էր շատ կարճ ժամանակամիջոցում կազմակերպել հակասովետական զորայուներ, հող պատրաստել ֆաշիստական զորքերն Իրան մտցնելու համար։

Ռզա շահը դրան բնավ դեմ չէր։

1940 թվի հոկտեմբերին ֆաշիստական Գերմանիան Իրան ուղարկեց փորձված գործակալներ՝ Ռոման Գամոտային և Ֆրանց Մայերին։ Դրանցից հետո՝ 1941 թվի ապրիլին Իրան ժամանեց նաև գերմանական հետախուզության ղեկավարության անդամ Բերտհոլդ Շուլցը։ Մինչ այդ գործող ագենտուրան ըստ երևույթին, դանդաղկոտություն էր հանդես բերում Իրանում հակասովետական աշխատանքին նոր, ռազմական բնույթ տալու գործում։ Գերմանական ստացիոնար գործակալությունը սկսած «ֆինանսական գործիչ» Լինդենբլատից, որ Իրան էր ժամանել դեռևս 1927 թվին, կարողացել էր Իրանն ամբողջովին կախման մեջ գցել Գերմանիայից։ Շուկայից դուրս էին վանվել ուրիշ

երկրների ապրանքները, բազմաթիվ կամպանիաներ մնձվել էին գերմանական առևտրական-տնտեսական ֆիրմաների ցանցերում. տարվել էր բավական մանրազնին հետախուզական աշխատանք՝ օդանավակայաններ, ռազմական ճանապարհներ կառուցելու, թիկունքային հենակետեր ստեղծելու ուղղությամբ։ Բայց պատերազմի նախօրյակին, երբ ֆաշիստական Գերմանիան ամենայն մանրամասնությամբ նախապատրաստել էր Սովետական Միության վրա հարձակվելու ծրագիրը, Իրանում տարվող հակասովետական աշխատանքի բնույթը հիմնովին պետք է փոխվեր։ Այժմ այդտեղ տարվող տնտեսական-քաղաքական պայքարը շատ քիչ էր։ Անհրաժեշտ էր անհապաղ նախապատրաստել երկիրը ռազմաբեմ դարձնելու համար, ըստ որում իրանական զինված ուժերի մասնակցությունը Սովետական Միության դեմ տարվող հարձակման ժամանակ շատ ցանկալի կլիներ։ Այս գործին տենդագին թափ տալու համար էր, որ Մայերը և Շուլցը ժամանեցին Իրան։ Կարճ ժամանակամիջոցում նրանք երկրում կարողացան ստեղծել մի քանի գաղտնի օդանավակայաններ, իրենց կողմը գրավեցին իրանական ռեակցիոն, ռազմաշունչ տարրերին, որոնց խոստացան Իրանի սահմանները լայնացնել... մինչև Կովկասյան լեռնաշղթան։

Ի՜նչպիսի ցնորամիտ հեռանկարներ։

Իսկ Ռզա շահը դրան, իհարկե, դեմ չէր։ Նա ինքն էլ երազում էր լինել Պարսից ծոցից մինչև Կովկասյան լեռները փռվող երկրի շահնշահը։ Նա ըստ երևույթին հավատում էր, որ պատմության անիվը կարելի է շուռ տալ, կարելի է վերադառնալ դեպի միջնադարյան խավարը։

Ֆաշիստական գործակալների Իրանում տարած աշխատանքին սկզբում փիլիսոփայական սառնասրտությամբ նայող անգլիացիները, երբ տեսան թե ինչպես գերմանական ռումբերից Լոնդոնում շենքերը հողին են հավասարեցվում, հասկացան, որ իրենք սխալվել են, որ Իրանում տեղի ունեցող երևույթներին սառնասրտությամբ նայել չի կարելի։

Իսկ Սովետական Միությունը, որ միշտ էլ աչալրջությամբ հետևել էր ֆաշիստների գործողություններին Իրանում ու

մի քանի անգամ նույնիսկ զգուշացրել էր իրանական կառավարությանը, հիտլերյան Գերմանիայի հետ պատերազմ սկսելուց հետո այլևս չէր կարող սպասել, մինչև ֆաշիստներին այստեղից նրա դեմ․ բանային երկրորդ ճակատը, համաձայն 1921 թվի պայմանագրի, իր զորքերը 1941 թվի օգոստոսի 25-ին մտցրեց Իրան։

Հարավից Իրան մտան նաև անգլիական զորքերը։

Իրենց հաշիվներում խիստ սխալված Ռզա շահը և պրեմյեր մինիստր Ալի Մանսուրին հրամայեցին դիմադրել Սովետական զորքերին։

Դա նրանց վերջին հուսահատական քայլն էր։ Իրանի զինված ուժերը երբեք չէին կարող որևէ լուրջ դիմադրություն ցույց տալ Սովետական Բանակին։ Ռզա շահի գեներալները շատ լավ էին հասկանում այդ։ Լավ էր հասկանում նաև զինվորական մինստր գեներալ Նախիջևանին։ Սա շուտեց, որ դառնալ Ռզա շահի կամայականությանը և հրամայեց դադարեցնել դիմադրությունը։ Ռզա շահը նրան ձերբակալեց և բանտ նետեց։

Ռազմական գործողությունները տևեցին ընդամենը երեք օր՝ օգոստոսի 25-ից մինչև 28-ը։

Օգոստոսի 28-ին, Ալի Մանսուրի կառավարությունը հրաժարական տվեց։ Նրան փոխարինեց Ալի Ֆարուգին։

Սեպտեմբերի 16-ին Ռզա շահը հրաժարվեց գահից, զիջելով այն իր ավագ որդուն՝ Մոհամեդ Ռզային։ Հենց նույն օրն էլ նա թողեց Թեհրանը։ Հետևյալ օրը սովետական և անգլիական զորքերը մտան Թեհրան։

1942 թվին հունվարին Իրանը պայմանագիր կնքեց Սովետական Միության և Անգլիայի հետ։ Այդ պայմանագրի 4-րդ և 5-րդ կետերն իրավունք էին տալիս դաշնակիցներին իրենց զորքերը պահել Իրանում։ Ամերիկայի Միացյալ Նահանգները թեև նման պայմանագիր չունեին, բայց ինքնակամ կերպով իրենց զորքերը մտցրին Իրան։

«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ» ԹՈՒՂԹԵՐ

Աղմկոտ էր Թեհրանն այդ օրերին։

Փողոցներով անվերջ այս ու այն կողմ էին սլանում տարբեր երկրներից բերված հազար տեսակ ավտոներ։ Կարճ վարտիքներով ամերիկացիներն ու անգլիացիները, հաճախ, խախտելով քաղաքում սահմանված օրենքները, իրենց ավտոները քշում էին անթույլատրելի արագությամբ։ Անճոռնի բեռնատար ավտոներն աղմկելով, իրենց հետևից փոշի բարձրացնելով, փողոցների եզրերին էին սեղմում վախվխելով առաջացող ուղտերի փոքրիկ քարավաններին, բեռնված գրաստներին, բիդոնների մեջ մածուն, կաթ, հավերով կանաչ խոտ, բանջարեղեն տանող հեծանիվ քշողներին, թեթև մարդատար ավտոներին...

Թեհրանում չկա ոչ տրամվայ, և ոչ էլ տրոլեյբուս։ Գործածական են միայն կապույտ ներկած ավտոբուսները։ Նրանք հեռու տեղեր գնալիս ճամփորդների բեռները դարսում են իրենց կտրին և դառնում մի տեսակ երկհարկանի։ Երկաթուղին էլ վաղուց չէ, որ գործում է։ Երկաթուղու կայարանի մոտ, գծերի վրա, կամուրջ է ձգված։ Երբ շոգեգնացքները մանևր են կատարում, կամուրջի վրա հավաքվում են բավական մարդիկ և հետաքրքրությամբ դիտում մանևրները։

Երկաթուղով երթևեկողները շատ քիչ են։ Գնացքը մեկնելու ժամանակ նորակառույց կայարանի շենքում և նրա դիմը բացվող հրապարակում բավական խաղաղ է լինում, իսկ երբեմն թվում է, թե գնացքին սպասող միակ ճամփորդը Ռզա շահի արձանն է։

Թեհրանի աղմկոտ տեղերից է փակ շուկայի շրջակայքը։ Այստեղ փողոցին նայող բոլոր տների առաջին հարկերը խանութներ են և ոսկերչների, համետագործների, կոշկակարների, պայտարների արհեստանոցներ։ Երբեմն ոտքով ընդունիչների նորոգման արհեստանոցից մի քանի քայլ անցնելուց հետո պատահում եք պայտարներին։ Նրանք կամ

զնդանի առաջ նստած մեխ են պատրաստում և կամ էլ խանութների առաջ ձի, ջորի, էշ են պայտում։ Կից խանութում համեմատագործը գովում է իր ապրանքը, գլխարկներ ծախողները՝ իրենցը, իսկ դրսում ամեն տեղ անխոնջ շրջող հալվա, պաղպաղակ, գունավոր ջրեր ծախողներն էլ միաբերան գովում են իրենց ապրանքը։

Ամենուր թափառում են մուրացկաններ։ Նրանց կարելի է տեսնել ամեն մի փողոցում։ Մուրում են և խեղանդամները և ծայրահեղ աղքատության դուռը հասած, հիվանդություններից, սովից այլանդակված մարդիկ։ Լալեզարից, Նադրիից հետո քայլում ես այդ մարդկանց մոտով և ակամայից մտածում այն վիթխարի տարբերության մասին, որ կա այս քաղաքի ունևոր և ընչազուրկ մարդկանց միջև։

Այո, Թեհրանը ևս թշվառների և ունևորների քաղաք է։ Նրանք՝ այդ թշվառները և երջանիկներն ապրում են կողք-կողքի, բայց և իրարից խիստ տարբերվում են։ Հեռու տեղից եկած մարդն անգամ, հենց առաջին հայացքից, նկատում է այդ տարբերությունը, նկատում է, թե ինչպես հարուստները մյուսներից տարբերվում են իրենց ավտոմեքենաներով, իրենց շքեղ հագուստներով։ Վատ հագնված, գունատ, հոգնած և տանջված աշխատավոր մարդիկ առավոտից մինչև երեկո աշխատում են գործարաններում, արհեստանոցներում, նոր կառուցվող շենքերի վրա։ Իսկ նոր շենքեր կառուցվում են զուտ շահադիտական նպատակներով։

Ահա հենց Փեհլևի պողոտայի վրա հարուստներից մեկը մեծ կինո-թատրոն է կառուցում։ Թեհրանում դրա կարիքը չի զգացվում։ Առանց այն էլ քաղաքում գործող կինոթատրոնների թիվը հասնում է երեսունչորսի։ Նրանցում ցուցադրվում են ամերիկական էժանագին, մարդու հոգուն ու սրտին ոչինչ չտվող կինոնկարներ։

Քաղաքում օպերային թատրոն չկա։

Մի քանի տարի առաջ օպերայի համար շենք կառուցելու փորձ է եղել, սակայն գերմանացի ճարտարապետի կառուցած շենքը դեռ կեսին չհասած ծովել է։

Այն օրվանից էլ ոչ ոք այլևս չի մտածում օպերա ստեղծելու մասին։

Իսկ կինո-թատրոնների շենքեր կառուցելու գործում կապիտալիստներն իրար հետ մրցում են, որովհետև դրանք ավելի օգտաբեր են։

Մի հարուստ վճռում է Լալեզարի վրա, գործող կինո-թատրոնի մոտ, նոր կինո-թատրոնի շենք կառուցել։ Հին կինո-թատրոնի տերը նրան արգելել չէր կարող, բայց և չէր ցանկանում հեշտությամբ զրկվել իր եկամտի զգալի մասից։

Ի՞նչ անել։

Սա կաշառում է նոր կինո-թատրոնը կառուցող ինժեներին և պահանջում նրանից այնպես տանել աշխատանքները, որ նոր կինո-թատրոնի տերը դեռ շենքը չավարտած սնանկանա։

Այդպես էլ արվում է։

Շենքը դեռ կիսատ, տերը մնում է առանց կոպեկի։ Այդ ժամանակ «օգնության է գալիս» հարևանը։ Նա խոստանում է նոր հարևանին նեղ վիճակից «հանել» մի պայմանով միայն՝ եթե նա իրեն նոր կինո-թատրոնի բաժնետերը դարձնի։ Այսպիսի խարդախությամբ նա տեր է դառնում նոր կինո-թատրոնի եկամտի կեսին։

Եվ մի՞թե սրա նման մարդիկ երբևէ կարող են մտածել իրենց ժողովրդի կարիքների մասին։ Նրանց միայն ոսկի է հարկավոր։ Հանուն շողշողուն այդ մետաղի նրանք պատրաստ են վաճառել նույնիսկ իրենց մերձավորներին։ Իսկ հայրենիքի մասին այլևս ավելորդ է խոսել։ Հայրենիքը նմանների համար վաղուց ծախու առարկա է դարձել։ Մի՞թե հայրենիքի գնով չեն նրանք ձեռք բերում ամերիկական էժանագին նկարներ և, ցուցադրելով դրանք, կապիտալ կուտակում։ Սեփական կինո-արդյունաբերության զարգացման մասին նրանք չեն էլ մտածում։ Եղած կինո-արդյունաբերությունը շատ թույլ է։ Դրա ակնհայտ ապացույցն է վերջին տարիներս արտադրած «Ֆերդովսի» կինո-նկարը։ Դա ուղղակի վատ կատարված գործ է,

Իրանական երիտասարդությունն այստեղ ևս մեծ հաճույքով հաճախում է այն կինո-թատրոնները, որտեղ ցուցադրում են սովետական բովանդակալից կինո-նկարներ։

«Լենինը Հոկտեմբերին» կինո-նկարից հետո Ռեշտում մի օր ցուցադրում էին սովետական պարտիզանների կյանքը պատկերող նկար։

Պարտիզանը (էկրանի վրա) գաղտագողի մոտենում է կամուրջին, որով քիչ հետո պետք է անցնի գերմանական էշելոնը։ Ահա՛ նա հասավ կամուրջի կամարներին, այնտեղ դրեց պայթուցիկ նյութ և հեռացավ։

Զինամթերքով ու զորքով բեռնված գերմանական էշելոնը սլանում է դեպի կամուրջը։

Հանդիսականները լարված հետևում են գործողության ընթացքին։ Եվ երբ լսվեց խլացուցիչ աղմուկ, կամուրջն օդ թռավ, ապա թնդաց նաև դահլիճը՝ բուռն, երկարատև ծափահարություններից։ Այսպես ջերմ էր ընդունում իրանական ժողովուրդը սովետական մարդկանց հաղթանակը, սրտով ու հոգով զգալով, որ այդ մարդիկ աշխարհում նրանց ամենալավ և անկեղծ բարեկամներն են։

Երբ այս առթիվ խոսք եղավ, մեր մի նոր ծանոթն ասաց.

— Սովետական կինո-նկարների մեջ ամենագնահատելին կյանքի ճշմարտությունն է։ Իսկ արվեստի մեջ այն, ինչ ճշմարիտ է, ինչ մարդուն օգնում է քայլելու դեպի երջանկություն՝ գեղեցիկ է։ Սովետական կինո-նկարները մարդու մեջ միշտ էլ առաջացնում են աշխատասիրություն, դժվարությունները հաղթահարելու ցանկություն, ազնվություն, սեր դեպի աշխատավոր մարդը։ Ահա թե ինչն է գնահատելի սովետական կինո-նկարներում, արվեստում։ Իսկ ահա հենց այս փողոցի վրա կա մի խանութ, ուր ամերիկացիները բացիկներ են ծախում։ Դա ձեզ շատ պետք կգա, ուստի կխնդրեի տեսնել այդ խանութը։

Նրա ցույց տված խանութն այնքան էլ հեռու չէր և մենք էլ դեռ բավական ժամանակ ունեինք։ Գնացինք տեսնելու։

Այստեղ՝ Թեհրանի կենտրոնում գտնվող խանութում,

ամսագրերի, թերթերի հետ միասին ամերիկացիները վաճառում էին ամենաքստմնելի, ամենաստոր պոռնոգրաֆիական բացիկներ։ Ներքինիի դեմքով պարսիկ գործակատարը մեզ դիմավորեց ժպիտը դեմքին և ձեռքերն իրար շփելով։ Նրա խանութում առանց ամաչելու չէր կարելի նայել պատերին։ Ուր էլ փորձեիր նայել՝ կամա-ակամա հայացքդ խոնարհվում էր գետնին։ Իսկ գործակատարը լպիրշ հայացքով մերթ մեզ էր նայում, մերթ իր նկարներին, տեսնելու համար, թե որի վրա կանգ կառնի մեր հայացքը։ Ես ամոթով նայում էի դուրս։ Խանութի առջևից անցնում էին կանայք և աղջիկներ։ «Իսկ եթե հանկարծ նրանցից մեկն ու մեկը ներս մտնի՞», անցավ իմ մտքով և ես զգացի, որ միայն այդ մտքից այտերս սկսեցին այրվել։

— Ոչինչ չհավանեցի՞ք,— հարցրեց գործակատարը։

— Այս խանութը եթե մեզ մոտ լիներ, նավթ կածեին վրան և կվառեին,— որպես պատասխան նկատեց մեր ընկերը։

Գործակատարի ժպիտը չքացավ դեմքից, իսկ աչքերը թռան ճակատին։

Ես ընկերոջս թևը բռնած դեպի դուռը քաշեցի։

— Գնանք, գնանք։

Փողոցում մեր ծանոթը տխուր հառաչեց, ասելով.

— Այս բոլորն ամերիկացիների արտադրանքն է. նրանք այսպես են «դաստիարակում» մեր ժողովրդին։

Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ արևելցիք պատվարժան մարդիկ են, մանավանդ, երբ խոսքը վերաբերվում է նրանց ընտանիքի, կանանց, աղջիկների պատվին։ Իսկ ի՞նչպես էին հանդուրժում թեհրանցիներն այս խանութի գոյությունը հենց մայրաքաղաքի կենտրոնում։

— Շատ բան մենք չենք ուզում հանդուրժել։ Մի՞թե ցանկալի է, որ մեր երկրում այսքան թշվառներ, այսքան անգործներ լինեն։ Բայց կան։ Ամերիկացիները պատերազմի սկզբի օրերին շատ խորամանկ խաղ սկսեցին մեր ժողովրդի հետ։ Մի հասարակ ճանապարհի վերանորոգման հա-

մար եթե հարկավոր էր հիսուն բանվոր, նրանք վարձում էին հարյուրը, որպեսզի մարդկանց աչքին թոզ փչեն և ցույց տան, թե որքան բարի են իրենք։ Դա իսկական խաբեություն էր. ճանապարհի վրա աշխատանքը երկար չի տևի։ Շատ-շատ մարդիկ կարող են աշխատել երկու-երեք տարի, իսկ հետո՞։ Հետո ի՞նչ պետք է անեն։ Իսկ երբ Սովետական Միությունն իսկապես ցանկանում է օգնել մեր երկրին, հյուսիսում իրանա-սովետական նավթային խառն ընկերություն ստեղծել, վերջ տալ անգործությանը, հարստացնել մեր պետական բյուջեն, երկրի հյուսիսային շրջանը հանել իներտ վիճակից, տանել այն ինդուստրացման ճանապարհով, ապա ամերիկացիները և անգլիացիները խանգարում են։

Մեր ծանոթը պարզապես ուրախ էր իր սրտինը դատարկելու համար։ Իր ժողովրդի կրած զրկանքները նրան շատ էին վշտացնում և այժմ, պատահական առիթից օգտվելով, նա ըստ երևույթին ցանկանում էր վշտերը բաց անել մեր առաջ։ Եվ այն, ինչ նա պատմում էր, պետք է ասել, որ մեզ համար այն ժամանակ նորություն էր։ Մենք պարզապես ոչինչ չգիտեինք ամերիկացիների գործունեության մասին։

— Դուք Թեհրանում մի քիչ մնացեք, դեռ շատ բան կիմանաք,—խորհրդավոր ասաց նա, երբ մենք նրան շնորհակալություն հայտնելով հրաժեշտ էինք տալիս։ —Թեհրանում դժվար է իսկույն հասկանալ շուրջդ կատարվածը։ Նայում ես քաղաքին. այնքան էլ մեծ չէ։ Մի քանի կենտրոնական փողոց, մի քանի հրապարակ, ծայրամասերում խղճուկ, կավածեփ հյուղակներ և ուրիշ ոչինչ։ Իսկ ինչքան խարդախություններ են կատարվում այստեղ։ Եվ, դուք այդպես միք զարմանա, այդ խարդախությունների հեղինակներն աչնիվ մարդկանց դիմակ հագած ամերիկացիներն ու անգլիացիներն են։ Դուք դեռ մի քիչ էլ մնացեք և ինքներդ դրանում կհամոզվեք։ Իսկ եթե ես սուտ եմ ասում, մի օր կտեսնենք ինձ, կթքեք երեսիս։ Ցտեսություն։ Ներեցեք շատախոսությանս համար։ Միշտ չէ, որ մարդ ձեզ նման հաճելի զրուցակիցներ է գտնում։

Եվ նա գնաց՝ բեռից ազատված մարդու թեթև քայլվածքով, չհայտնելով մեզ ոչ իր անունը, ոչ հասցեն և ոչ էլ նույնը մեզնից հարցնելով։

Այնքան էլ շատ չէր հարկավոր սպասել, մինչև մենք համոզվեինք այդ մարդու ասածի մեջ։

Գիշերելու համար մենք կարող էինք կանգ առնել և հյուրանոցում, սակայն իմ մտերիմ ընկերը՝ Նազլուխանյանն աշխատում էր օդանավակայանում։ Նրա մոտ չգնալ չէի կարող։ Հետո նա կարող էր իմանալ, որ եղել եմ Թեհրանում, իր մոտ չեմ գնացել և կվիրավորվեր։

Ինչպես և ամենուր, Թեհրանում ևս օդանավակայանը գտնվում է քաղաքից դուրս։ Քսան րոպեից հետո մենք արդեն այնտեղ էինք։ Ընկերս՝ Հակոբը մեզ ընդունեց հաբազատի պես։ Իսկույն տարավ ճաշարան, պատվիրեց օղի, գինի, շնիցել և եթե մենք չառարկեինք ով գիտե ինչեր կպատվիրեր։ Նրա ուրախությանը սահման չկար։ Ուրախ էր և մեզ տեսնելու և նրա համար, որ իրենց գործերն արդեն ավարտվում են։ Ինքն այլևս այստեղ անելիք չի ունենա։ Կգնա հայրենիք, կտեսնի կնոջը, երեխաներին, ծնողներին։

— Ախր դուք չեք իմանում, թե ինչքա՜ն եմ կարոտել բոլորին,— ասաց նա բաժակները գինով լցնելով,— սիրտս ուղղակի պայթում է։

— Քո սիրտը հրանոթով չես պայթեցնի,— ասացի ես, նայելով ընկերոջս լայն կրծքին և ամառային բարակ շապիկի տակից երևացող բազուկների պիրկ մկաններին։ Այդ աժդահա մարդու հետ միշտ հաճելի էր կատակել։

Ճաշից հետո էլ, նստած նրա հով սենյակում, այսպես խոսում էինք դեսից-դենից, երբ հանկարծ օդում լսվեց մոտորների աղմուկ։

— Մերո՞նք են,— հարցրի Նազլուխանյանին։

— Ոչ, ամերիկացիներն են. նորից դիվանագիտական թռիչքներ են կատարում...

Եվ նա քաշեց պատուհանի վարագույրը, որպեսզի կարողանանք երկինքը տեսնել։ Մի հայացքով չկարողացանք գտնել ամերիկական ինքնաթիռները։ Պատուհանից

երևում էր միայն արևի վերջին շողերի տակ ոսկեզօծված երկնակամարը։ Իսկ մոտորների ձայնից ես արդեն գիտեի, որ դրանք ռմբակոծիչներ են և թռչում են բավականին ցածր։ Դրանից էլ գետինը դղրդում էր, ինչպես ռազմաճակատում, երբ մեր «Իլերն» էին թռչում թշնամու վրա։ Եվ մենք գիտեինք, որ ֆաշիստները չեն սիրում մեր «Իլերի» աղմուկը, սարսափում են։ Բայց դա տեղի ուներ ռազմաճակատում։ Գրոհի գնացող ինքնաթիռները դիտմամբ այդպես ցածր էին թռչում՝ թշնամու վրա ահ ու սարսափ ազդելու համար։ Իսկ այստեղ մենք ռազմաճակատից մի քանի հազար կիլոմետրի վրա էինք։ Հետևապես ի՞նչ կարիք կար այդպես դղրդացնել գետինը։

— Ասացի, որ դիվանագիտական թռիչքներ են,— կրկնեց մեր ընկերը։

Նրա ասածից ոչինչ չհասկանալով, դուրս թռա սենյակից՝ ամերիկյան ինքնաթիռները սեփական աչքերով տեսնելու համար։ Ինը «թռչող բերդեր», ինչպես օդաչուներն են ասում, «անիվի տակ էին տալիս» Թեհրանի խաղաղ երկնակամարը, աշխատելով չհեռանալ քաղաքի շրջագծից։ Եթե մի քիչ էլ ցածր թռչեին, ամբողջ քաղաքը կարող էր խլանալ, իսկ թե ինչպես կպահեին իրենց Թեհրանի փողոցներում, բակերում գտնվող անասունները՝ ձիերը, ջորիները, ուղտերը... ես դժվարանում եմ ասել... Անսովոր անասունները երևի կկարծեին, թե երկրաշարժ է։ Իհարկե այդ աղմուկն օգտավետ չէր նաև թույլ ջղերով մարդկանց համար։

— Բայց ի՞նչ ասել է «դիվանագիտական թռիչք»,— հարցրի ընկերոջս այնպես բարձր, ինչպես կարելի է խոսել հրետանու համազարկի ժամանակ։

— Ի՞նչու դժվար ես հասկանում։ Այն օրից, ինչ խոսք է ծագել իրանա-սովետական նավթային խառն ընկերություն ստեղծելու մասին, ամերիկացիներն այսպես հաճախ են ելնում Թեհրանի կտուրը և զգուշացնում. «Չհամարձակվեք հա՞, թե չէ տեսնո՞ւմ եք ինչեր կարող ենք բերել ձեր գլխին...»

Ինչպես ես ինքս չէի հասել այդ մտքին։ Ախր քիչ առաջ ժուռնալիստն էլ նույնն էր ասում. «խանգարում են»։ Իհարկե, այս աղմուկը շատ բանի կարող է խանգարել։ Հասարակ ճշմարտություն էր դա։ Եթե նույնիսկ շահը լիներ այդ պահին հեռախոսով մեկի հետ խոսելիս, ստիպված հեռախոսափողը պետք է ցած դներ։ Անտանելի աղմուկ էր, խանգարում էին։ Բայց քիչ է ասել խանգարում էին. ավելի ճիշտ կլինի ասել ահ էին ազդում։ Իսկ դա շատ ձեռնտու էր մայրաքաղաքի ռեակցիոներներին։ Նավթային ընկերության կազմելու կողմնակիցներին, նրանք մատնացույց էին անում դրանց և ասում.

— Դեռ պետք է սպասել, ժամանակը չէ. տեսնու՞մ եք ձեր գլխին ինչեր են կատարվում...

Իսկ նրանց գլխին այնքան էլ հաճելի բաներ չէին կատարվում։

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԶՈՐԱՀԱՆԴԵՍ

Որքան էլ անհաճելի լիներ Թեհրանի երկնակամարում տեղի ունեցածը, ժողովրդին դա վախեցնել չէր կարող։ Երկրի վրա կային ավելի սոսկալի բաներ՝ գործազրկություն, սով, թշվառություն։ Գործազրկությունը պատերազմի ժամանակ չէր վերացել, միայն պակասել էր։ Իսկ պատերազմի վերջում այն արդեն ահավոր չափեր էր ընդունում։

Եվ դրա համար էլ ժողովուրդը չէր ուզում ետ կանգնել իր պահանջներից։ Իրանա-սովետական նավթային խառն ընկերությունը շատ պայծառ հեռանկարներ էր բաց անում իրանական ժողովրդի համար։ Այդ լավ հասկանում էր հենց ինքը, իրանական ժողովուրդը և պահանջում էր իր կառավարությունից անմիջապես պայմանագիր կնքել Սովետական Միության հետ, թույլ տալ նրան հյուսիսային նավթը մշակելու։ Ամերիկյան և անգլիական իմպերիալիստները իրենց գործակալներին ասում էին. «Այն ձեռքը, որ բարձրանա այդ պայմանագիրը ստորագրելու՝ պետք է կտրել»։ Իսկ որով-

հետ պայմանագիրը կարող էին ստորագրել բազմաթիվ ուրիշ ձեռքեր, դաշույնը չէր հասցնի այդքան ձեռքեր միանգամից կտրել։ Բացի դրանից Իրանում քիչ չեն քաջ մարդիկ, որոնք ոչ մի դաշույնից չեն վախենում։ Նրանք երկրի տարբեր քաղաքներից բողոքում էին Սայեդի ռեակցիոն կառավարության դեմ, որը որոշակի չէր ասում ուզու՞մ է ստորագրել պայմանագիրը, թե ոչ։

Դիվանագիտական մաներներն այստեղ արդեն օգնել չէին կարող։ Հարկավոր էր որոշակի ասել «այո» կամ «ոչ»։ Իսկ Սայեդը երկուսից էլ միաչափ վախենում էր։ «Այո» չասելու համար նա բավական մեծ գումար էր ստացել։ Գումարը տվողները նրան երկար վարժեցրել էին «այո» չասելու ձևի։ Չէ՞ որ անվարժ մարդը հանկարծ կարող է մոռանալ, որ իրեն արգելվում է «այո» բառն ասել։ «Ոչ»-ը նրան չէին արգելել, բայց ինքը սարսափում էր դրա հետևանքներից։ Սարսափում էր, որովհետև դա հասարակ «ոչ» չէր. նրան չէին հարցնում ղելյան կուզի՞ ծխել, որպեսզի հանդիստ պատասխանի «ոչ»։

Այստեղ գործը ավելի լուրջ էր։ Ժողովուրդը ցանկանում էր ազատվել տառապանքներից, գործազրկությունից, ցանկանում էր օգտվել բարի դրացու օգնությունից, գնալ երջանիկ ուղիով և հարցնում էր նրան.

— Համաձայն ե՞ս մեզ հետ, թե ոչ։

Նրա գլխին ձին քացի չէր տվել, որ միանգամից ասեր ոչ կամ այո. Սայեդը փնտրում էր մի բառ, որ մի քիչ նմանվեր «այո»-ին, մի քիչ էլ «ոչ»-ին։ Աշխարհի ժողովուրդները շատ շիտակ են եղել և նման բառ չեն ստեղծել իրենց լեզուներում։ Նա գտավ ոչ առաջին և ոչ էլ երկրորդ բառին նման մի խոսք, և վերջապես ժողովրդին ասաց.

— Պետք է սպասել։

Խորամանկ աղվեսն այս գյուտն այնքան էլ հեշտ չէր արել։ Նրան հանդիստ մտածելու ժամանակ չէին տալիս բազմաթիվ քաղաքներից եկող հեռագրերը։ Ժողովուրդը հուզվում էր, վրդովվում, պահանջում էր ստորագրել պայ-

ժամադիրը։ Կառավարության հետագա դանդաղկոտությունը ճղի էր լուրջ հետևանքներով։ Ի՞նչ անել։ Այստեղ կառավարության օգնության եկան ամերիկացիները։ Սայեդին նրանք ասացին. «Կարող ես չհուզվել և հանգիստ շարունակել քո գործը։ Մենք չենք թողնի, որ այս կայծերը կրակ դառնան»։

Եվ ահա թե ինչպես էին ցանկանում բռնկվող կրակը մարել։

Թեհրանում գտնվելու առաջին օրը մենք չկարողացանք տեսնել ոչ շահի պալատը և ոչ այն փողոցը, ուր սպանվել էր անմահ Գրիբոեդովը։ Մինչդեռ Թեհրան գնալիս մտադրվել էի անպատճառ տեսնել և՛ մեկը և՛ մյուսը։ Շատ բան էի լսել շահի պալատի մասին և շատ էլ կարդացել։ Այժմ առիթը չէր կարելի փախցնել սեփական աչքերով այն տեսնելու համար։

Տնից դուրս եկանք առավոտյան ժամը 9-ին, երբ Թեհրանում խանութպաններից շատերը ծուլորեն և ասես դժկամությամբ ու ձանձրույթով բաց էին անում իրենց խանութները։

Զով օդում, փողոցներն ավլելուց հետո, արևի շողերի տակ ոսկեզույն փոշի էր կանգնած։ Այդ փոշուց էր, թե ինչից, զգում էիր, թե ինչպես օդը քերում է կոկորդդ։ Երևի, վերահաս տոթից վախենալուց, կաթնավաճառները բիդոնները ձեռքներին կամ էշերի ու հեծանիվների վրա դրած, շտապում էին բակից բակ, փողոցներում բարձրաձայն կանչում։

Տներից շատերը նման էին պաշարված բերդերի. ներսից ոչ մի ձայն, կյանքի ոչ մի նշան։ Ամուր փակված էին դռները, պատուհանները, իսկ մի քանի հին շենքեր նույնիսկ փողոցի վրա պատուհաններ չունեին։ Ովքե՞ր էին ապրում այդ տներում, ի՞նչ էին մտածում աշխարհի, իրենց ապագայի մասին, դժվար էր ասել։ Իսկ երբ շենքը փողոցի վրա պատուհան չուներ, թվում է թե նրա ներսում կյանք չկա։ Իսկ այն տները, ուր փողոցին նայող պատուհաններ կային, աշխարհին նայում էին միայն երկրորդ, երրորդ հարկերից։ Առաջին հարկերը լքված էին թվում։

Մի քանի տեղ սակայն, բաց էին նաև առաջին հարկերի պատուհանները և դժվար չէր տեսնել ներսի կահավորանքը։ Բայց ավելի լավ է ես ոչինչ չտեսնեի։ Դրանց ներսում չկային ոչ սեղաններ, ոչ աթոռներ, ո՜չ էլ մահճակալներ։ Տեղաշորերը փռված էին հատակին, խսիրների վրա, իսկ մի տեղ՝ պատշգամբից էին կախված։ Դրանք արդեն երկրորդ հարկի բնակիչների տեղաշորերն էին։ Իսկ թե ինչո՞ւ այդքան կեղտոտ, կարկատած էին, դժվարանում եմ ասել։ Իրենք, Թեհրանում ապրողները, թերևս ինձնից շատ լավ գիտեն, թե ովքե՞ր են ապրում նման բնակարաններում, ինչո՞ւ նրանց պատուհանները զուրկ են վարագույրներից, ինչո՞ւ նրանք պառկում են քնելու հատակին և ոչ մահճակալների փափուկ զսպանակի վրա, փափուկ տեղաշորի մեջ։

Մենք միայն հյուրեր էինք և շատ բան գուցե այնպես չէինք հասկանում, ինչպես տեղացիները։ Իհարկե, մեզ համար կարող էր և դժվարըմբռնելի լինել այնքան աղքատ, թշվառ, անապաստան մարդկանց գոյությունը Թեհրանում։ Եվ ոչ միայն այդ։ Որտեղի՞ց էին այնքան անտեր շները Թեհրանի փողոցներում, որ վաղ առավոտյան քրքրում էին աղբի արկղները, փողոցներով վազվզում դես ու դեն։

Մեզ հարկավոր էր տեսնել շահի պալատը և ահա մենք հասանք այն փողոցը, ուր գտնվում է այն։

Ասֆալտապատ փողոցի երկու կողմերով ուղիղ ձգվում են սոսիների շարքերը։ Մայթերի եզրերով կչկչալով վազում էր լեռնային պղտոր ջուրը։ Բայց ո՞ւր է պալատը։

— Կանգնիր,—ասում եմ շոֆերին, երբ մենք հասնում ենք մի բարձր պարսպի, որը բակում գտնվող շենքերը բաժանում է փողոցից։ Պարսպի վրայից՝ ծառերի խիտ ճյուղերի միջից, երևում է շենքի մի մասը միայն։ Պարզվում է, որ մինչև ներս չմտնես՝ պարսպից ոչինչ չես տեսնի։ Իսկ ո՞վ կթողնի մեզ։

Սակայն ահա պարսպի մեջ կա մեծ, երկաթակուռ դարպաս։ Դարպասի մեջ միջնադարյան պալատական պերճաշուք զգեստով երկու պահակ կանգնած են դեմ հանդիման՝

դանակի պես լայն սվիններով հրացանները ձեռքներին։ Իրանում այժմ էլ բացի պալատից ոչ մի տեղ այդպիսի զգեստով զինվորներ չկան։ Զինվորներն այդպես հագնվել են շահ Աբբասի և իրար հաջորդող այլ շահերի ժամանակ։ Այսօր նրանք, իրենց կարմրերիզ գլխարկներով, իրենց հագուստով թվում են հանկարծ, ինչպես հեքիաթում, հարություն առած մարդիկ։ Պալատի երկաթակուռ դարպասների առաջ կանգնած պահակները գլուխներն անգամ չշարժեցին մեզ նայելու համար։ Նրանք արձանացած նայում էին միայն իրար։

Բակում մարդ չկար։ Ծառերի մեջ երևացող գեղեցիկ շենքում երևի բոլորը քնած էին։

Մենք գուցե և երկար կանգնեինք շահի պալատը դիտելու համար, եթե խաղաղ փողոցում հանկարծ չերևար ամերիկյան մոտոցիկլային մի զորասյուն։ Նրանք փողոցը ներխուժեցին ներքևից և ապա սլացան դեպի քաղաքի կենտրոնը։ Հանկարծ, հենց մեր աչքի առաջ, ծառազարդ, խաղաղ փողոցի պատկերը փոխվեց։ Մոտոցիկլների խլացուցիչ ձայներից դողացին շարքով տնկված ծառերը, տների պատերը։ Ապա այս ու այն բակերի դռները բացեցին վախեցած տղամարդիկ, կանայք, երեխաներ։ Մի տեղ մոր հետ տան շեմքին իսկույն երևաց և երեխան, ցանկացավ վազել դեպի մայթի ծայրը, սակայն մայրը նրան խփեց մի քանի անգամ, ապա թևից բռնած քաշեց բակը։

Մոտոցիկլային զորասյունը մարտական հանդերձանքի մեջ էր, լրիվ զինված։

Նրանց հետևից առաջ շարժվելով, Նադրի փողոցի մոտերքում, մենք դեմ առանք ամերիկյան հրետանային ու հետիոտն զորամասերի, որոնք բոլորն էլ տեղավորված էին ավտոմեքենաների վրա։ Դրանք ևս լրիվ զինված էին։ Ավտոմեքենաների հետևից, սայլակների վրա ամրացված էին հրանոթներ։ Ավտոմեքենաների, մոտոցիկլների աղմուկի մեջ պարզորոշ լսվում էր ինչ որ որոտ։ Առայժմ դժվար էր ասել, թե ինչ որոտ է դա։ Բայց ահա երևացին մանր ու

խոշոր տանկեր՝ իրենց հրանոթների խողովակներն սպառնագին առաջ մեկնած։ Ամեն ինչ պարզ էր։

Տեղացիները, դուրս նետվելով փողոց, հարցնում էին իրար։

— Այս ի՞նչ է պատահել...

— Վայ, այս ու՞ր են գնում։

— Սրբա՛ք, չգիտեք ի՞նչ է պատահել։

Գետինը, ինչպես երկրաշարժից, դղրդում էր։ Այդ աղմուկի մեջ դժվար էր բան հասկանալ։ Դժվար էր ասել, թե ինչո՞ւ հանկարծ ամերիկացիների սիրտն ուզել էր քաղաքի անդորրը խախտել իրենց զենքերի շառաչով, տանկերի աղմուկով։

Այնուամենայնիվ ի՞նչն էր դրա պատճառը։

Տխրահռչակ հիտլերականները վերջին ժամերն էին ապրում և հետևապես Թեհրանի շամիշին տիրելու համար դեսանտ չէին իջեցնի։ Նախօրյակին էլ Թեհրանում առանձին բան տեղի չէր ունեցել։ Մեր աչքով տեսել էինք առևտրի, մի բան շահելու տենդով տարված խանութպաններին, իրենց օրվա հացը ձեռք բերելու հոգսով տարված արհեստավորներին՝ այդ դալուկ, դեղնադեմ պղնձագործներին, կոշկակարներին, դերձակներին, համետագործներին, ինչպես նաև մշակներին ու անապաստան թշվառներին։ Ի՞նչ կարող էին անել նրանք մի օրում։

Ճիշտ է, Թեհրանի ռադիոն նախօրյակին հաղորդել էր Դարեհի մասին տարածված երգը։ Բայց Դարեհը վաղուց, շա՜տ վաղուց չկար և ամերիկացիները նրանից վախենալու հիմք չունեին։ Իսկ ռադիոն այդ երգը հաճախ էր հաղորդում։

Ուրեմն ի՞նչ էր պատահել։

Մեզնից ոչ հեռու, հենց մայթի եզրին, կանգնած էր լայնեզր գլխարկով, դեղնավուն ակնոցներով և թևի տակ կաշվե թղթապանակ պահած տարեց մի իրանցի։ Նա հետաքրքրությամբ նայում էր անցնող հրանոթներին, տանկերին և երևում էր, որ ոչ մեկը դրանցից բաց չէր թողնում։ Նրա դեմքի կնճիռներն ավելանում էին այն պահին, երբ մոտո-

ցիկլների սև ծուխը հասնում էր նրան, մի բոպեով ծածկում գլուխը և ապա դանդաղորեն վեր ելնում։ Դժվար էր ասել ինչ արհեստի տեր էր այդ մարդը։ Համենայն դեպս մի բան պարզ էր՝ նա մտավորական էր։ Ուրիշներն այդպես չեն հագնվում։ Հենց այդ մարդուն էլ մոտենալով ես հարցրի.

— Դուք չգիտե՞ք, ինչի՞ առթիվ է այս զորահանդեսը։

Մարդը սթափվելով նայեց ինձ և մեղավորի պես ժպտալով ասաց.

— Դժվարանում եմ ասել. բայց ենթադրում եմ, որ մեզ ցանկանում են ամերիկական զորքի և զենքի հետ ծանոթացնել։ Զորահանդեսի ժամանակ մի անգամ անցնում են և վերջանում է։ Իսկ սրանք երեկ առավոտյան էլ նույնն են արել։ Այսպես նրանք գնում են Նադրով, մյուս փողոցով շրջվում և շարունակ պտտվում ։

— Նույն զորամասերը պտտվու՞մ են։

— Այո։ Ահա ժամ ու կես կլինի, ինչ կանգնած նայում եմ և տեսնում, որ նույն տանկերը, նույն ավտոմեքենաները երկրորդ անգամն են գալիս անցնում։

Իրենք, ամերիկացիները շատ լավ գիտեին, թե ինչո՞ւ են այդպես անում։ Չէ՞ որ առանց նպատակի նրանք իրար հետևից զորքերը չէին հանի խաղաղ, երբեմն ասես կիզիչ արևի տակ նիրհող Թեհրանի փողոցները, այդքան ջանքեր չէին թափի, այդքան վառելիք չէին փչացնի։

Իզուր ես այդքան շատ մոռացել էի ընկերոջս ասածը «դիվանագիտական թռիչքների» մասին։ Ասենք ի՞նչպես չմոռանայի, երբ այստեղ դիվանագիտության հետք անգամ չկար՝ թեպետ դրա, այդ զորահանդեսի կազմակերպիչներն ամերիկյան դիվանագետներն էին։ Սա պարզ, ուղղակի սպառնալիք էր իրանցիներին։ Ամերիկական «դեմոկրատիան» իր իսկական դերի մեջ էր։

Այն ժամանակ Բերևս մեկն ու մեկը կասկածեր դրանում, բայց որոշ ժամանակ հետո թեհրանցիներից ոչ ոք չէր կասկածի, որ իսկապես ամերիկացիներն իրենց վախեցնում են և այն էլ՝ շատ խիստ։

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆԻ ԴԵՐՈՒՄ

Իրանցիները չվախեցան ոչ ամերիկական խնքնաթիռներից, ոչ սպառազինված զորքից։ Նրանք ամենուր սկսեցին բողոքել կառավարության դեմ, որը շատ խորամանկ կերպով մերժեց Սովետական Միության առաջարկը Հյուսիսային Իրանի նավթային հողամասերը շահագործելու համար սովետա-իրանական խառն ընկերություն ստեղծելու մասին։

Բուռն բողոքի միտինգներ ծայր առան Թավրիզում, Սպահանում, Գիլանում, Մազանդարանում և այլ տեղեր։ Ցույցերն առանց միջադեպերի չէին անցնում։

Թավրիզի ցույցերից մեկին մասնակցեց հինգ հազար աշխատավորություն։ Ցույցի վերջում Թավրիզի զինվորական հրամանատար Սարթիբ Խոսրովանու հրամանով զինվորները հեռվից հեռու կրակ բաց արին ցուցարարների վրա։ Ժողովրդի մի մասը խուճապի մատնված սկսեց ցրվել և գնալ դեպի ոստիկանատան կողմը։ Այժմ սկսում են կրակել շատ մոտիկից։ Ոստիկանության մի սպա ատրճանակից կրակում է խոսող հռետորի վրա, բայց վրիպում է։ Մի ուրիշ կրակոցով վիրավորում է ակտիվ երիտասարդ բանվոր Իսմայի խան Ամիրին, որը մինչև առավոտ խորը վերքից մեռնում է։ Նրան թաղելու համար հավաքվում է մոտ 50 հազար բնակչություն։

Վրդովված ժողովուրդը պահանջում է ոճրագործներին անմիջապես դատի տալ։

Երեք օր հետո «Մաղբարա» մզկիթում տեղի ունեցած արարողության առթիվ փակվում են քաղաքի շուկաները, խանութները։ Ժողովուրդն ավելի է համախմբվում «Ազատության ճակատ»-ի շուրջը, հեռագիր հեռագրի հետևից է ուղարկվում Թեհրան՝ պահանջելով Սայեդի կառավարությունից անմիջապես հրաժարական տալ։

Նույն կարգի միտինգներ տեղի են ունենում համարյա բոլոր խոշոր քաղաքներում։

Եվ ահա այդպիսի մի ցույց էլ տեղի ունեցավ Թեհրանում։

Վաղ առավոտվանից տեղական «Նաջաթ» թերթի խմբագրատան առաջ հավաքվեց աշխատավորների մի հսկա բազմություն։

Բարձրախոսներն զգուշացրին ցուցարարներին՝ խստիվ հետևել կարգ ու կանոնին, ոչինչ ավելորդ թույլ չտալ։ «Ազատության ֆրոնտի» մեջ միացած կազմակերպությունների ներկայացուցիչները, ելույթ ունենալով, խոսեցին Սայեդի կառավարության ռեակցիոն քաղաքականության մասին։

Սայիդը և նրա զինակիցները Շահրուդում, Քուրդիստանում, Սիմնանում քայքայիչ աշխատանք էին տանում ազգային փոքրամասնություն կազմող քրդերի, լոռերի, թուրքմենական ցեղերի մեջ, ցանկանում էին նրանց հանել իրար դեմ։ Այս գործում նրանց քիչ չէին օգնում նաև ամերիկացիներն ու անգլիացիները։ Վերջիններս էքսկուրսիայի, կինոնկար ցուցադրելու պատրվակի տակ գնում էին տեղական մի շարք ցեղերի, մանավանդ քրդերի մոտ, նրանց հրահրում զինվել...

Բայց հռետորները ամերիկացիների մասին ոչ մի խոսք չէին ասում։ Եվ պարզ էր, թե ինչու չէին ասում։ Իրանում խառնակչություն մտցնող ամերիկացիները ոչ մի կապ չունեին ամերիկյան ժողովրդի հետ։ Դրանք Ուոլլ-ստրիտի ներկայացուցիչներն էին՝ ամերիկյան ժողովրդի ոխերիմ թշնամիները։ Նրանք իրենց արածի համար պատասխանատու էին գլխավոր շտաբի պետ Մարշալլի առաջ։ Իսկ Մարշալլն իր արածի արժեքը գիտեր։ Նա չէր կարող չկատարել Ուոլլ-ստրիտի՝ իր տերերի հրամանները։ Իրանական ժողովուրդը պահանջում էր իր կառավարությունից գերի չդառնալ իմպերիալիստներին, Սովետական Միությանը թույլ տալ մշակել Իրանի հյուսիսային նավթը, որով վերջ կտրվեր անգործությանը, վերանար տնտեսական ճգնաժամը։

Հռետորների ճառերից հետո բազմահազար բազմությու-

նը կենտրոնական փողոցներով շարժվեց դեպի մեջլիսի շենքը։ Թեհրանի աշխատավորներն իրենց հետ տանում էին լոզունգներ, որոնց վրա գրված էին. «Ռեակցիան Իրանի ժողովրդի անգործության և աղքատության պատճառ է դառնում», «Սովետական ժողովուրդը իրանական ժողովրդի անկեղծ բարեկամն է», «Պահանջում ենք հաստատել նավթային ընկերություն Սովետների հետ»...

Բավական բազմություն էր հավաքվել նաև փողոցների մայթերի վրա։ Ցուցարարների շարքերում ոչ մի կին չկար, իսկ մայթերին խռնված ամբոխի մեջ բավական թվով կանայք և երեխաներ կային։ Եվ չնայած փողոցները ծայրեծայր լիքն էին մարդկանցով՝ ոչ մի աղաղակ, ոչ մի ձայն չէր լսվում։ Ցուցարարների դեմքերին կարելի էր կարդալ զսպված բարկություն։ Նրանք տարբեր արհեստի, տարբեր բնագավառում աշխատող մարդիկ էին։ Ֆաբրիկաների, գործարանների, արհեստանոցների բանվորներն աչքի էին ընկնում իրենց աղքատիկ հագուստով, դեմքերին դրոշմված հոգսերի, տանջանքների նշաններով։ Բանվորների հետ միասին քայլում էին նաև արհեստավորներ, ծառայողներ։ Կուռ շարքեր կազմած մարդկային այդ բազմությունը մեծ ուժ էր ներկայացնում։

Լուռ էին։

Մայթերին խմբվածներն էլ լուռ էին։ Այն, ինչ ցանկանում էին ասել փողոց եկած մարդիկ, գրված էր ճերմակ լոզունգների վրա։ Դրանից ավելին նրանք չէին ցանկանում։ Իսկ լոզունգները քիչ բան չէին պահանջում։ «Պահանջում ենք հաստատել նավթային ընկերություն Սովետների հետ»։ Դրա մեջ արդեն ամեն ինչ ասված էր։ Դրա, այդ մի քանի բառի մեջ կար և՛ հացի, և՛ բարեկեցության, և՛ երջանկության պահանջ։

Ժողովուրդը շատ լավ հասկանում էր իր պահանջի գինը, դրա համար էլ դուրս էր եկել ցույցի և մայրաքաղաքի փողոցներով առաջանում էր՝ թշնամիներին ահ ազդող հաղթական քայլվածքով։

Նրանք, որոնց դեմ ուղղված էր այդ ցույցը, չէին կարող անտարբեր նստել իրենց տներում։ Վերջին հաշվով պահանջ ներկայացնողը ժողովուրդն էր և հարկավոր էր նրան պատասխան տալ։

Ցուցարարներն իրենց պահանջների պատասխաններն ստացան ավելի շուտ, քան պետք էր։

Փողոցներից մեկում նրանց դեմ ելան մի քանի մանր տանկեր։

Ամբողջ բազմությունը մի րոպե լարված նայում էր դեպքերի ընթացքին։

Մայթերին խռնվածներից ոմանք շտապեցին ցրվել դեսուդեն։ Փողոցին նայող պատուհաններից գլուխները վար կախած մարդիկ շտապ ետ քաշեցին իրենց գլուխները և պատուհաններն խկույն փակեցին։

Րոպե առ րոպե դրությունը լարվում էր։

Նույն պահին ցուցարարների երկու կողմերին երևացին զինված ոստիկաններ։ Թվում էր, թե ահա ուր որ է արյունահեղ դեպքեր տեղի կունենան։ Բայց ցուցարարները շա՜տ-շատ էին։ Նրանք հեղեղի պես լցվել էին հարևան փողոցները։ Մարդկային այդ հեղեղը կարող էր քշել տասնյակ տանկեր։

Տանկերի մեջ նստածները երևի այդ մասին չէին էլ մտածում։ Նրանք իրենց տանկերը քշում էին ուղիղ ցուցարարների վրա։

Ընդհարման համար մի առիթ էր հարկավոր։

Ցուցարարները խուսափեցին ընդհարումից։ Նրանք, ինչպես լուռ քայլել էին մինչ այդ, այնպես էլ լուռ, առանց խուճապի շարունակեցին քայլել։ Միայն թե տանկերի մոտ շարքերը կիսվեցին։ Տանկերը մարդկային հեղեղի հունի մեջ խոշոր ժայռերի պես մնացին ցցված։ Հեղեղը երկու կողմից դրանց իր մեջն առավ։

Բայց ահա ցուցարարների դեմ դուրս եկան ավելի խո-

քոր տանկեր և որոտալի ձայներով առաջ շարժվեցին։ Նրանք նման էին ջրից ցամաքը ելած վիթխարի կոկորդիլոսների, շարժվում էին դանդաղ, սպառնագին։

Ցուցարարներն ավելի լարվեցին։

Ահը չէր նրանց լարվածության պատճառը, այլ զարմանքը։

Եվ չզարմանալ չէր կարելի։

Նրանց դեմ տանկեր էին հանել ամերիկացիները։ Ամերիկացի տանկիստներից մի քանիսը, երբ շարժումը կանգ առավ, չհամբերեցին և գլուխները դուրս հանեցին տանկերից։ Ասենք եթե նույնիսկ նրանք չերևային՝ ժողովուրդը կասեր, թե ի՞նչ տանկեր են դրանք և ո՞ւմ են պատկանում։ Մինչ այդ չորս օր իրար հետևից այդ տանկերը մասնակցել էին ամերիկյան զորահանդեսներին, ամերիկյան «հրապարակային ներկայացումներին»։ Բայց այն ժամանակ թեհրանցիներից ոչ ոք դեռ չէր կարող ասել, որ դրանք երբևէ կտրամադրվեն Թեհրանի ոստիկանապետին՝ ժողովրդի դեմ հանելու համար։

Մինչ այդ Ուոլլ-ստրիտի ներկայացուցիչներն ինչպիսի՜ քնքշանքով էին խոսում ու գրում դեմոկրատիայի, ժողովուրդների և անհատի ազատության մասին։

Իրանում մինչ այդ շատ հայտնի աշուղներ էին հայտնվել և երգում էին այնպիսի երգեր, որոնց կնախանձեր ինքը՝ աշխարհի մեծագույն քնարերգուներից մեկը՝ Սաադին՝ սոխակների ու վարդերի մեծ սիրահարը։

Ոչ ոք և երբեք չէր նմանեցնի ամերիկացիների երգերից, եթե հանկարծ այն չփոխվեր տանկերի դղրդյունի, մոտոցիկլների ճարճատյունի։ Իրարից բավական տարբերվող ձայներ էին դրանք։

Թեհրանցիները զարմանալու և զայրանալու շատ բան ունեին։

Սակայն թեհրանցիներն այդ օրը զսպեցին իրենց։

Նրանք այդ տանկերի կողքով առաջացան դեպի մեջլիս։

Բայց մեջլիսին մոտենալ չէին կարող։ Մեջլիսի շենքը շըրջապատված էր զինվորներով։ Հուզված բազմությունն այդտեղ կանգ առավ։ Զինվորները խանգարեցին նրանց ավելի առաջանալ։ Այլևս ոչ մի քայլ անել չէր կարելի։

Ահա այստեղ էլ հանդես եկան հռետորները և բարձրաձայն հայտնեցին իրենց բողոքը։ Զինվորներն իզուր էին փորձում ցրել ժողովրդին։ Ցուցարարները մեջլիսի դռներից հեռացան այն ժամանակ միայն, երբ հռետորները վերջացրին իրենց ասելիքը։

Հետևյալ օրը դեմոկրատական բոլոր թերթերը գրեցին Թեհրանում հայտնված նոր ոստիկանության—ամերիկական գործերի մասին։ Չգիտեմ ի՞նչպես էին զգում իրենց ամերիկացիներն այդ նոր կոչումը ստանալուց հետո։

Մինչ այդ ամերիկացիները շատ էին գովում իրենց ապրանքը՝ ամերիկական «դեմոկրատիան», «ազատությունը»։ Բայց ահա պարզվեց նրա իսկական գինը։ Դա էլ ֆաշիստական Գերմանիայից ստացված էրզաց մետաքսի նման մի բան էր, որը քանի չես հագել՝ գեղեցիկ է, իսկ հագնելուն պես կարծես մարմինդ թիթեղի մեջ է դրված։

Գնալով ամերիկացիներն ավելի սանձարձակ էին դառնում Իրանում, ավելի էին միջամտում երկրի ներքին գործերին։

Չբավարարվելով զինված ուժով իրանական ժողովրդին սպառնալուց, նրանք իրենց գործակալներին խցկում էին Իրանի կառավարական ապարատը, բանակի, ժանդարմերիայի, ոստիկանության ղեկավար մարմինները։

1944—1945 թ. թ. Իրանում քիչ չէին խոսում ու գրում ամերիկացի Միլսպոյի մասին, որն Իրանում 1942 թվից մինչև 1944 թիվը աշխատել էր որպես ֆինանսական և տնտեսական հարցերի «խորհրդատու»։ Սա երկու տարվա ընթացքում քաոսային վիճակ ստեղծեց Իրանի տնտեսական-ֆինանսական գործերում։

Իր գործունեությամբ Միլսպոն ցանկանում էր տնտեսապես թուլացնել Իրանը և ապա ստիպել նրան վարկ խնդ-

րել Ամերիկայից։ Նա համոզում էր իրանցիներին իրանական նավթի մշակումը հանձնել ամերիկացիներին։

Միլսպոն հաճախ հանդես էր գալիս որպես պետական «խորհրդատու» և ուղղություն էր տալիս իրանական արտաքին քաղաքականությանը։

Իրանի հասարակայնությունը վրդովված էր Միլսպոյի գործունեությամբ։ Հետզհետե նրա դեմ ավելի վճռական էին դառնում իրանցիների բողոքները։

Իրանական կառավարությունը վախեցավ անտեսել պրոգրեսիվ շրջանների բողոքները և ստիպված էր հրաժարվել Միլսպոյից։ Նրան առաջարկվեց թողնել Իրանը։

Ուոլլ-ստրիտի ներկայացուցիչներն առանձնապես չառարկեցին Միլսպոյի արտաքսման դեմ։ Վերջին հաշվով ամեն մարդ կյանքում իր դերն ունի կատարելու։ Այն, ինչ պետք է կատարեր Միլսպոն, կատարել էր և վատ չէր կատարել։

Քաղաքական պայմաններն Իրանում շատ արագ կերպով փոփոխվում էին և այժմ ուրիշ մարդիկ, ուրիշ «խորհրդատուներ» էին հարկավոր։

Տարօրինակ մարդիկ են այդ ուոլլ-ստրիտցիները։ Կարծես նրանց հայրենիքում կանայք աշխարհի համար միայն խորհրդատուներ են ծնում։ Անհասկանալի է միայն, թե ինչո՞ւ այդ խորհրդատուները հայրենիքում իրենց խորհուրդներով չեն կարողանում բավարարել Նյու-Յորքի անգործներին։

Ասենք Իրանում էլ նրանց խորհուրդները բոլորին չէ, որ կարող էին սփոփել։

Ես չգիտեմ, թե նրանք ի՞նչ խորհուրդներ կտային Թեհրանի փողոցներում «դրոշակներով շարժվող» մարդկանց, իսկ «դրոշակներով շարժվողներն» արժեն հիշատակության։ Այդ մասին գրել էր իրանական երգիծաբանական ամսագիրը։

Մաղրանկարում իրանցիներից մեկը Թեհրանի քարտեզը փռել էր առաջը, բազմաթիվ փողոցներում դրոշակներ տընկել ու մտածում էր։ Տարբեր երկրներում ճիշտ նույն կերպ էին վարվում պատերազմական գործողություններին հետևող

միլիոնավոր մարդիկ՝ մեծ քարտեզի վրա։ Տարբերությունը Իրանումն էր, որ իրանցու առաջ փռված էր Թեհրանի քարտեզը, ուր պատերազմական գործողություններ չկային։ Եվ ահա հենց այդ պատճառով էլ մարդիկ զարմացած հարցնում են դրոշակներ տնկողին.

— Այդ ի՞նչ է, պատերազմական գործողություննե՞րն ես նշում։

— Ոչ, դրոշակիկներով նշում եմ պարտատերերիս տեղը, որպեսզի այդ փողոցներով չանցնեմ, ամաչում եմ։

Ինչ խոսք, սրամիտ ծաղրանկար էր դա։ Ծանր է անցնել այն պարտատերերի մոտով, որոնց պարտքը վճարել չես կարող։ Բայց ամերիկացիները ցանկանում էին պարտքի տակ դնել ամբողջ իրանական ժողովրդին։ Այդ ամսագիրը վատ չէր անի, եթե պատկերացներ մի երկիր, ուր բոլորը պարտքի տակ են։ Այն ժամանակ դրոշակիկներն էլ չէին օգնի։ Ամբողջ ժողովուրդն ամոթով պետք է շարժվեր իր երկրում, որովհետև նրա ուսերին պիտի ծանրանար ամերիկացիների պարտքը։

Պատմությունը հարուստ է այնպիսի փաստերով, երբ ժողովուրդները չեն ցանկացել իրենց ուսերի վրա տանել նման ծանր բեռ և այն թոթափել են։ Այդ լավ գիտեն նաև ամերիկացիները։ Դրա համար էլ Իրանում նրանք սկսեցին իրենց ձեռքը վերցնել բանկի, ոստիկանության ղեկավարությունը։ Նրանք այդ սկսեցին կատարել շատ նուրբ խաբեության ճանապարհով։ Բանից պարզվեց, որ ուոլլ-ստրիտցիները, բավական սեր տածելով դեպի ոստիկանությունը, ժամանակակից կուլտուրայի դեմ բան էին համարում իրանական ոստիկանության անմարտունակ լինելը։

Մի՞թե կարելի է։

Քսաներորդ դարը քաղաքակրթության դար է։ Ամեն օր Նյու-Յորքի ռադիոն հաղորդում էր անհատի, խղճի, ժողովուրդների ազատության մասին։ Եվ հանկարծ այստեղ՝ Իրանում ուոլլ-ստրիտցիները տեսնում են վատ զինված, ավտոմատներից, արցունքաբեր գազերից, գնդացիրներից զուրկ

և միայն ռետինե ճիպոտով ու հրացանով (այն էլ անգլիական տիպի հրացանով) զինված ոստիկաններ։

Ինչպիսի՞ հակասություն։

Եվ ինչպե՞ս էլ աշխարհում մարդիկ չեն խղճում այդ իրանական ոստիկանությանը, որը դարեր շարունակ միայն բանտարկել է մարդկանց, գնդակահարել և մնացել է իր զարգացման նույն աստիճանի վրա կանգնած։

Խե՛ղճ ոստիկանություն։

Գոնե իմանար գազերով ցուցարարներին ցրել, տանկերով ժողովրդին ճզմել, գնդացիրներից, ավտոմատներից աշխատավորության վրա կրակ բացել և վերջապես՝ որպես զորամաս թշնամու դեմ մարտեր վարել։ Չգիտեր, իրանական ոստիկանությունը այդ ամենը չգիտեր։

Քսաներորդ դարում մի՞թե կարելի է նման զուտ ամերիկական ծագում ունեցող բաները չիմանալ։ Իսկ երբ չգիտեր, ամերիկյան գեներալ Շվարցկոպֆը մի՞թե կարող էր հանգիստ նստել և չշտապել Իրան՝ խորհուրդներ տալու։ Չէ՞ որ նա ամերիկյան հումանիստ էր։

Հանուն հումանիզմի աշխարհում մեծ գործեր են կատարվել։ Հումանիզմից ելնելով մարդիկ նույնիսկ իրենց անձն են զոհել։ Դա հասկանալի է։ Երբ ժանտախտի ժամանակ բժիշկներից ոմանք իրենց զոհ էին բերում հազարավոր կյանքեր փրկելու համար, ապա նրանք անմահանում էին իրենց հերոսությամբ։ Այդ հերոսությունը նրանք կատարում էին հումանիզմից ելնելով։ Սակայն դահիճները միշտ էլ վայելել են աշխարհի ժողովուրդների ատելությունը։ Բոլոր լեզուների մեջ կարելի է հանդիպել այս արտահայտությանը—նրանք դահիճներ են և ոչ թե մարդիկ։ Իրանական ոստիկանությունը միշտ էլ դահճի դեր է կատարել։ Այդ շատ լավ գիտեին և ուոլլ-ստրիտցիները։ Բայց դե Ամերիկայում «խղճի ազատություն է»։ Թող ովքեր ուզում են խղճան ու սիրեն թշվառներին, իսկ ուոլլ-ստրիտցիները խղճում էին իրանական ոստիկանությանը։

Գեներալ Շվարցկոպֆը ուղղակի խղճահարվելուց էր եկել Իրան։

Ինչպես էլ իրանցիներից շատերը չէին հասկանում ոստիկանության նկատմամբ նրա հանդես բերած հոգատարության իմաստը։

Զարմանալի մարդիկ են այդ իրանցի անգործները, աղքատները։ Միշտ ցանկանում են, որ բոլորն էլ իրենց մասին հոգան։ Եվ միշտ էլ դժգոհ են։ Դա բխում է նրանց անհեռատեսությունից։ Վաղը նրանք կարող են իրենց դժգոհությունն արտահայտել այլ ձևով։ Դուրս կգան փողոց, կպահանջեն կառավարությանը, հաց կուզեն, աշխատանք և դեռ ո՞վ գիտե ինչե՞ր կուզեն։ Իսկ մեկը պե՞տք է լինի, որ նրանց ցասումը մեղմի՝ հացի տեղ արցունքաբեր գազեր տալով։ Իսկ եթե չլինի ոստիկանությունը, ո՞վ կարող է այդ գործը կատարել։

Բանա՞կը։

Ա՜խ, ինչպես այդ իրանցիները չեն հասկանում բանակի իսկական նշանակությունը։

Օրը ցերեկով դուրս եկեք Թեհրանի փողոցները և համարյա ամեն քայլափոխում դուք կտեսնեք գեղեցիկ հագնված զինվորականների։ Նրանք-երբեք չեն շտապում։ Ծիրանագույն համազգեստով, նույն գույնի գլխարկներով, գալիֆեներով, կամ այլ ձևի երկար շալվարներով, ինքնագոհ ժպիտները դեմքերին նրանք ճեմում են փողոցներում։ Ոչ ոք թեհրանցիներից չգիտե, թե ինչո՞վ են զբաղվում այդ զինվորականները, ինչպե՞ս են մթնեցնում իրենց օրը։

Բայց այդ միամիտ թեհրանցիները չգիտեն, որ իրենց բանակը մի մեծ պակասություն ունի։ Ինչպես էլ իրենք, իրանցիները չեն նկատում այդ բացը։ Այդ ի՞նչպես կարող է իրանական բանակը յոլա գնալ առանց ամերիկյան խորհրդատուների։ Դա ուղղակի ծաղր է մեր օրերի իրանական բանակի համար։

Ամերիկացիներն շտապեցին այդ բացը հասկացնել իրանցիներին և իսկույն որպես «խորհրդատու» առաջարկեցին գեներալ Գրոուին։

Միլսպոն որոշ ժամանակ կարող էր թաքնվել «խորհր-

գամվիս անվան տակ, իսկ զինվորականներին այդ անունը բնավ չի սազում։ Հայտնի բան է՝ զինվորականները սիրում են հրամայել։ Գրոուն նույնպես զինվորական է և նա այլ կերպ վարվել չի կարող։ Նա սկսեց այսպես.

— Իրանական բանակին հարկավոր են տանկեր, հրանոթներ, զրահակիրներ, գնդացիրներ և… ամերիկյան սպաներ։ Տանկեր, հրանոթներ, գնդացիրներ, զրահակիրներ մենք կծախենք ձեզ, իսկ…

— Իսկ փո՞ղը,—հարցրին նրան,—այդքան մեծ գումար մենք որտեղի՞ց գտնենք։

Պարզ է, երբ փող չունեք, պետք է պարտք խնդրել մեզնից։ Իսկ սպաներ մենք կնշանակենք… Դուք միայն պետք է նրանց լիովին ապահովեք։

Շվարցկոպֆը գեներալ Գրոուից ավելի ճարպիկ դուրս եկավ։ Շատ շուտով ամբողջ ոստիկանությունը նա իրեն ենթարկեց։ Իրենք իրանցիներն էլ չգիտեին, թե որպես ծառայող նա ում է ենթարկվում՝ իրանական կառավարությա՞նը, թե՞ ամերիկյան։

Կատակով ասում էին, թե այդ մասին հարցրել են պրեմիեր մինիստրին, իսկ նա ուսերը թոթվելով պատասխանել է.

— Չգիտեմ, մի իմացեք տեսեք ումնից է ռոճիկ ստանում։

Նրան պատասխանել են, թե երկու տեղից էլ ռոճիկ է ստանում։

— Դե այդ դեպքում հարցրեք իրեն, տեսեք ինքն իրեն որ երկրի գործիչ է համարում։

Հետաքրքրական քաղաք է այդ Թեհրանը։

Ես այնտեղ մեկ անգամ չէ, որ եղել եմ և ամեն անգամ էլ մի տարօրինակ բան տեսել կամ լսել եմ։ Առաջ, երբ մեզ հանդիպում էին ամերիկացիներ և առիթ էր լինում խոսելու, մենք իրար լեզու վատ հասկանալով, ձեռքի շարժումներով, զանազան բացագանչություններով կատակում էինք իրար

հետ։ Նրանցից շատերը մեզ տեսնելու պես բացականչում էին։

— Ստալինգրադ։

Դա հնչում էր բարևի պես։ Դե, ճիշտն ասած, հպարտանում ես, երբ ուրիշը քեզ բարևում է այդ ձևով.

— Ստալինգրադ։

Իրենք որ այդպես էին բարևում մեզ, մենք ի՞նչու նույն կերպ չբարևեինք։ Մենք էլ հպարտությամբ և ուրախ պատասխանում էինք.

— Ստալինգրադ։

Նրանցից շատերը ուրախանում էին։ Եվ կարելի էր կարծել՝ թե այդ ամերիկացիները բոլորն էլ մի տեսակ են՝ ուրախ։ Բայց ահա մի դեպքից հետո ես ստիպված էի մտածել, թե ինչ կնշանակի ամերիկացու ուրախությունը, երբ նա գործ ունի իրենից թույլ մարդու հետ։

Այդ դեպքը պատահեց Թեհրանում։

«ՈՒՐԱԽ» ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐ

Սովորական մի երեկո մենք դուրս եկանք զբոսանքի։ Ցերեկվա համեմատությամբ երթևեկությունը Թեհրանի փողոցներում ավելի էր աշխուժացել։ Կենտրոնական փողոցներում երթևեկողների մեջ առանձնապես շատ էին երիտասարդ տղաներ և աղջիկներ, համարյա բոլորն էլ գլխաբաց։

Խանութները, ճաշարանները, սրճարանները դեռ բաց էին։

Մայթերի ծայրերին կիտրոն, ծխախոտ, թերթեր, պաղպաղակ ծախողները անխոնջ շարունակում էին գովել իրենց ապրանքը՝ չարժանանալով անցորդների ուշադրությանը։

Այդ պահին փողոցներում քիչ չէին նաև ամերիկացի զինվորականները։ Նրանք շրջում էին խմբերով և կամ մեկ,

երկու հոգով։ Շրջում էին՝ ամեն տեղ իրենց վրա գրավելով ուրիշների ուշադրությունը։ Որևէ խանութ, ռեստորան մտնելիս նրանք անշուշտ խոսում էին բարձրաձայն, մի տեսակ աղմուկով։ Իսկ փողոցում ընկերոջը կանչում էին նույնիսկ շվոցով։

Ամերիկացիները տանել չէին կարողանում անգլիացիներին և այդ առթիվ քիչ կռիվներ չէին լինում փողոցներում, ռեստորաններում, կինո-թատրոնների ֆոյեներում։

Կռիվները ծագում էին շատ հեշտ, հաճախ մի չնչին պատճառից։ Եվ այդ ընդհարումներին չէին նախորդում երկար ու բարակ հայհոյանքներ։ Բավական էր ամերիկացուն մի բան դուր չգար և ահա նա թևերը քշտելով կռվի մեջ էր մտնում։ Երբեմն այդ կռիվները վեր էին ածվում իսկական գզգզոցի։ Կռվողների թիվը քանի գնում շատանում էր, մի քանի րոպե հետո տեսնում էիր իրար խառնված մարդկանց մի խումբ, որի մեջ անհայտ էր թե ով ում էր հարվածում և ով ում պաշտպանում։

Տեղացիները, շատ լավ ծանոթ լինելով ամերիկացիների այսօրինակ բարքերին, աշխատում էին նրանց հետ վեճի չմտնել, չնայած երբեմն դրա կարիքը խիստ զգացվում էր։

Ճիշտ այդպիսի մի դեպքի մենք ներկա եղանք հենց այդ երեկո Թեհրանի կենտրոնական փողոցներից մեկում։

Մեզնից ընդամենը տասը-տասնհինգ քայլի վրա մի խումբ ամերիկացիներ առաջ էին գնում և րոպեն մեկ խմբովին ծիծաղում։ Չորս երիտասարդ տղաների միատեղ ծիծաղը չէր կարող անուշադրության մատնվել։ Փողոցի երկու կողմով երթևեկողները մի պահ կանգ էին առնում և նայում այդ ուրախ երիտասարդներին։

Նրանց մեջ ծիծաղ էր առաջացնում մեկը, նա խմբից երկու քայլ առաջ ընկած ձեռքին երկու փունջ ծաղիկ՝ հետույքն անճոռնիորեն ծամռելով մոտենում էր անցորդ աղջիկներին և նրանց մեկնում ծաղկեփնջերը։ Աղջիկները հանկարծակիի եկած, անցնում էին մյուս մայթը և կամ վախեցած բացագանչում.

— Վայ բաբամ...

Ամերիկացի զինվորականներին դա մեծ հաճույք էր պատճառում։ Բայց Թեհրանի փողոցներում առանձին զբոսնող աղջիկներն այնքան էլ շատ չեն։ Ահա մի տեղ էլ նրանց դիմից գալիս էր աղջիկների և տղաների մի խումբ։ Ծաղրածուի դեր կատարող նույն զինվորը հեռևը թաքցրած ծաղկեփնջերը հանեց և դեմ արավ աղջիկների քթին՝ հաշվի չառնելով տղաների ներկայությունը։ Աղջիկները, անջատվելով տղաներից, փախան դես ու դեն։ Տղաները, չնայած ամերիկացիներից քիչ չէին, բավարարվեցին միայն «ուրախ» զբոսնողներին խեթ-խեթ նայելով։ Իսկ երբ քիչ հեռացան՝ անմեղ հայհոյանքներ տվին։ Ամերիկացիները հաշվի չառան ոչ նրանց խեթ հայացքները և ոչ էլ լսեցին իրենց ուղղված անհասկանալի լեզվով հայհոյանքները։ Նրանք անճոռնի ծիծաղով առաջ շարժվեցին։

Ամերիկական զինվորների կատակները դրանով չվերջացան։ Նույն ուրախ ծիծաղով, աղմուկով նրանք ներս մտան առաջին պատահած ռեստորանը։

Այդ ռեստորանում ոչինչ չկար, որպեսզի մենք էլ, թեկուզ հետաքրքրության համար, մտնեինք այնտեղ։ Ծխով լիքը դահլիճ, հոգնած մի տրիո, սեղանների շուրջը նստած ով գիտե որտեղից և ինչ նպատակով եկած մարդիկ՝ ահա այն ամենը, ինչ կար ռեստորանում, ուր մի անգամ մենք արդեն եղել էինք։

Փողոցում ավելի հաճելի էր, ուստի շարունակեցինք մեր զբոսանքը։

Բավական շրջելուց, կինո-թատրոններից մեկում երկու ժամ տխուր նստելուց հետո վերադառնում էինք, երբ հանկարծ մեզնից առաջ քայլողների մեջ լսեցինք նույն ամերիկացիների ծիծաղը։ Բայց այս անգամ նրանք փողոցներում զբոսնող աղջիկների հանդիպել արդեն չէին կարող։ Փողոցները դատարկվել էին. թեհրանցիները քաշվել էին իրենց տները։ Բաց էին միայն մթերեղենի խանութները։ Հենց դրանցից մեկի առաջ էլ կանգնած էր մի կառք։ Դրա մոտ սպասում էր երիտասարդ և բարեկազմ մի տիկին։ Նա հա-

ճակն նայում էր խանութի ներսը, ուր երևի ամուսինը կամ բարեկամներից մեկը գնումներ էր կատարում։ Կառապանը մեջքից կորացած նստած էր իր տեղը։

Միմյանցից բավական տաքացած ամերիկացիները ինչ որ բացագանչություններով շրջապատեցին կառքի մոտ սպասող տիկնոջը, իսկ նա հարբած զինվորներից խուսափելու համար նստեց կառքի մեջ։ Զինվորները նրանից ձեռք չքաշեցին։ Նրանք շրջապատեցին կառքը, իսկ մեկը նստեց տիկնոջ կողքին։ Նրա օրինակին հետևեց և մյուսը՝ կառքի մյուս կողմից։ Երրորդը նստեց նրանց դիմաց, իսկ չորրորդը կարգադրեց կառապանին քշել։ Կառապանը չուզեց ենթարկվել։ Այդ ժամանակ գետնին մնացած հաղթանդամ զինվորականը թռավ, նստեց կառապանի մոտ, նրանից խլեց ձիերի սանձը և քշեց։

Կինը ցանկացավ թռչել կառքից, բայց կողքը նստած զինվորները պահեցին նրան իր տեղը։ Ուժեղ սանձելուց հետո արձակած ձիերը քառատրոփ վազեցին։ Կառապանը փորձ արեց ետ վերցնել ձիերի սանձը, սակայն նրա հետև նստած զինվորը նրան այնպես ապտակեց, որ կառապանը հետագա հարվածներից խուսափելու համար ստիպված էր երկու ձեռքով ամուր ծածկել դեմքը։

Երբ արդեն կառքը բավական հեռացել էր, խանութում գտնվող տղամարդը մի քանի փաթեթ ձեռքին դուրս եկավ և բնավ չհասկանալով. բանն ինչ է, կառապանին կանչեց։ Բայց իզուր, կառքը չէր կանգնի։ Անցորդներից մեկը մոտեցավ կառքի հետևից կանչողին, բացատրեց եղելությունը։ Սա սարսափահար սկսեց առաջ վազել՝ թևի տակ պահած փաթեթներից շաքար և հրուշակեղեն թափելով...

Նա կառքի համեմատությամբ շատ դանդաղ էր վազում և երբեք չէր հասնի, «ուրախ» ամերիկացիներին։

Մենք խեղճ տիկնոջն օգնել չէինք կարող, որովհետև չէինք ենթադրում, որ հարբած զինվորների կատակն այդքան շուտ կփոխվի ավազակության։ Եվ հետո այդ ամենը կատարվեց շատ արագ։ Հատ ու կենտ անցորդները եղելու-

թյունը հասկացան, հավաքվեցին խանութի առաջ այն պահին, երբ կառքը արդեն ծածկել էր ուրիշ փողոց։ Դրանց մեջ մեծ դանակը ձեռքին խանութպանն անընդհատ բացականչում էր․

— Բաբամ, էսպես էլ բան կլինի՞, էսպես էլ ավազակություն կլինի՞, մարդու կնոջը փախցրին...

Բավական ժամանակ անցնելուց հետո դեպքի վայրը եկավ մի ոստիկան, երկար-բարակ հարցեր տվեց խանութի առաջ կանգնածներին։ Հետո վճռեց գործի անցնել. գնաց, կանգնեց փողոցի կենտրոնում՝ անցնող ավտոներից մեկը կանգնեցնելու հույսով։ Հակառակի պես ավտոներ չկային։ Մոտ հինգ րոպե սպասելուց հետո մեկը երևաց, ուշադրություն չդարձնելով ոստիկանի վրա, կողքով անցավ։

Նույնքան ժամանակ ևս սպասելուց հետո երևաց մի «վիլլիս»։ Սա չուզեց անուշադրության մատնել ոստիկանին։ Կանգնեց ուղիղ նրա մոտ։ Ներսից երկու ամերիկացի զինվորական դուրս նայեցին, ոստիկանի դեմքին շվացրին, շվոցից հանկարծակիի եկած ոստիկանը ետ քաշվեց, իսկ ամերիկացիներն ուրախ ծիծաղելով մեքենան քշեցին։

Դա էլ յուրատեսակ պատիժ էր՝ ավտոն կանգնեցնելու համար։

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը՝ կառքով փախցրած կնոջ մասին տարբեր ենթադրություններ անելով և զարմանալով մեր տեսածի վրա։ Իսկ քնի մեջ ընկղմվող Թեհրանը ոչինչից չէր զարմանում։ Ի՞նչու պետք է զարմանար, երբ ավելի սոսկալի դեպքեր էին տեղի ունենում։ Վերջին հաշվով ի՞նչ բան է մի կին փախցնելը, երբ օրը ցերեկով ողջ ժողովրդի ապագան, նրա երջանկությունը փախցնողների, խոշտանգողների դեմ ոչինչ չէին կարողանում անել։ Թեհրանը կարողանում էր տանել ավելի մեծ կարգի, միլիոն անգամ ավելի վտանգավոր ավազակների։ Բոլորն էլ տեսնում էին այդ ավազակներին, գիտեին նրանց նենգ ծրագրերի մասին, և ոչինչ, հանդուրժում էին։

ՍԵԻԴ ԶԻԱ-ԷԴ-ԴԻՆ

Աշխարհը լրտեսների մասին շատ բան է լսել և նրան չես զարմացնի նորերի մասին պատմելով։ Ճիշտ է, Սեիդ Զիան նոր լրտես չէ։ Նրան ճանաչում են շատ-շատերը։

Սեիդ Զիան աճեց, հասակ առավ, որպես իրանական ժողովրդի ոխերիմ թշնամի, թունդ ռեակցիոներ։ Ասված խոսք է. «Ձկնորսը ձկնորսին հեռվից է տեսնում»։Երբ Ռզա խանն Իրանում կանգնեց ռեակցիայի գլուխ և պայքար ծավալեց միահեծան կառավարություն ստեղծելու համար, Սեիդ Զիան շտապեց նրան օգնության հասնել։

Ռզա խանը չհրաժարվեց նրա օգնությունից, բայց միևնույն ժամանակ աչքի տակով հետևում էր Սեիդ Զիային։ Նրա չափից դուրս ջանասիրությունը կասկածելի էր։ Վերջին հաշվով Ռզա խանն ամեն ինչ անում էր իր համար։ Նա ցանկանում էր լինել երկրի միահեծան տիրակալը, և անհասկանալի էր, թե ինչո՞ւ դրա մեջ Սեիդ Զիան շատ էր շահագրգռված։ Շուտով այդ հանելուկը պարզվեց։ Սեիդ Զիան ցանկանում էր տապալել Ռզա խանին և ինքը նրա փոխարեն գահ բարձրանալ։ Բայց Ռզա խանն ավելի խորամանկ գտնվեց։ Նա կռահեց Սեիդ Զիայի մտադրությունը։ Դավադրին սպառնում էր խիստ դատաստան։ Հարկավոր էր մի ելք՝ կախաղանից փրկվելու համար։ Միակ ելքը երկրից փախչելն էր։ Սեիդ Զիան այդպես էլ վարվեց։ Պետական միջոցներից մի պատկառելի գումար յուրացնելով նա փախավ Եվրոպա և փրկեց իր գլուխը։ Քսան տարի շարունակ նա երկրում ոտք դնելու իրավունք չուներ։ Սկզբում Եվրոպայում, ապա Պաղեստինում նա փառավոր կյանք էր վարում և սպասում իր տերերի՝ անգլիացիների հրամանին։ Անգլիացիները նրան որպես պահեստի լրտես տեղավորել էին Պաղեստինում։ Ուրիշ խոսքով ասած պահել էին իրենց հսկողության տակ և սպասում էին հարմար առիթի։ Այդ հարմար առիթը վերջապես եկավ Իրանում Ռզա շահի գահը խորտակելուց հետո։ Երկրում ծայր առավ դեմոկրատական շարժումը։ Շարժման

գլուխ կանգնեց Թուդե (ժողովրդական) պարտիան։ Պրոֆկազմակերպությունները ուժեղացան՝ ավելի ուժեղացնելով իրենց ազդեցությունը բանվորական մասսաների վրա։

Ժողովրդական պարտիայի ձեռք բերած նվաճումները և նրա հեղինակությունը պետական մարմիններին լուրջ մտահոգում էին։ Քիչ չէին մտահոգվում նաև ամերիկյան և անգլիական իմպերիալիստները, որոնք Իրանն գաղութացնելու ծրագրից երբեք չէին հրաժարվել և այժմ ձեռք էին առնում բոլոր միջոցները՝ իրանական ռեակցիոն կառավարությունն անսասան պահելու համար։ Դրա համար հարկավոր էր ժողովրդի ուժերը մասնատել, հարկավոր էին փորձված պրովակատորներ, հարկավոր էին տեղին և պայմաններին ծանոթ սրիկաներ, ժողովրդի թշնամի հետադիմականներ, որոնք կարողանային շփոթություն առաջացնել երկրում, շեղել ժողովրդի ուշադրությունը պայքարի հիմնական խնդիրներից։

Եվ այդպիսիները գտնվեցին։

Անգլիացիները երկար ժամանակ պահեստում պահած իրենց լրտեսին՝ Սեիդ Զիային Իրան վերադառնալու իրավունք տվին։

Տեսնել էր հարկավոր, թե ինչ զայրույթի ու ցասման տեղիք տվեց Սեիդ Զիայի վերադարձը Իրան։ Տարբեր քաղաքներում ու գյուղական վայրերում ժողովուրդը բողոքի ցույցեր կազմակերպեց։ Իրանում չտեսնված ցույցեր էին դրանք։ Ցուցարարները մեծ տրանսպարանտներ էին տանում, որոնց վրա գրված էին. «Կորչի՛ Սեիդ Զիա Էդ-Դին»-ը, «Սեիդ Զիա Էդ-Դինին դո՛ւրս վռնդել երկրից»...

Ժողովուրդը ծաղրանքով նրան «Պաղեստինի նվեր» անունն էր տալիս և բացեիբաց հրաժարվում էր այդ «նվերից»։ Իրանցիներն իրենց զայրույթը հայրենիքի դավաճանի դեմ արտահայտում էին ոչ միայն խոսքով։ Թեհրանում աշխատավորների զայրացած մի խումբ հարձակում գործեց Սեիդ Զիայի ավտոմեքենայի վրա։ Սեիդ Զիային հաջողվեց փախչել, իսկ նրա մեքենան ջարդ ու փշուր արին։ Դրան

որպես պատասխան անգլիական դեսպանությունը հետևյալ օրը Սեիդ Զիային նվեր ուղարկեց մի նոր ավտոմեքենա։

Անգլիացիները գիտեին իրենց արածի՛ արժեքը։ Նրանք զբանով արգելում էին իրանցիներին ձեռք բարձրացնել իրենց մարդու վրա։ Սեիդ Զիան հասարակ մի խանութպան չէր, որից անգլիացիները հեշտությամբ հրաժարվեին։ Շատ կարճ ժամանակամիջոցում նա կարողացավ արդարացնել իր տերերի՝ իմպերիալիստների հույսերը։ Իսֆահանում նա սկսեց կազմակերպել իր «Վաթան» պարտիան, որի մեջ առաջին հերթին հավաքագրեց տարբեր տեսակի ավազակների, բախտախնդիրների, մարդասպանների և հետադիմականների։

Նա իր գործունեության վայր ընտրեց Իսֆահանը, որովհետև այդ քաղաքը երկրում ամենախոշոր արդյունաբերական կենտրոններից մեկն է։ Երկար տարիներ շահագործված բանվորությունն օգոստոսյան դեպքերից հետո համախմբվեց պրոֆկազմակերպության մեջ և պայքար ծավալեց ռեակցիայի դեմ։

Սեիդ Զիայի «Վաթան» պարտիայի մեջ համախմբված ավազակները հարձակվեցին Իսֆահանի գործարանների վրա։ Զորքը և ոստիկանությունն էլ միացան ավազակներին և կրակ բաց արին բանվորների վրա։ Դրա հետևանքով 36 բանվոր վիրավորվեց, իսկ մեկն սպանվեց։ Սպանվածների թիվը շատ քիչ էր և ոչ մի կերպ չէր գոհացնում Շվարցկոպֆին։ Այստեղ ևս իրեն զգացնել տվեց իրանական ոստիկանության հետամնացությունն ու թուլությունը։ Երբ զենք էր բարձրացվել, կարելի էր ավելի շատ կոտորել։ Ա՜խ, այդ անճկուն ոստիկանությունը։ Սակայն այդքանն էլ բավական էր դեպքերին ցանկացած ընթացքը տալու համար։

Դեպքի հետևյալ օրը Իսֆահանի 17 հազար բանվորներ գործադուլ հայտարարեցին։

Բայց նրանք երկար ժամանակով գործադուլ հայտարարել չէին կարող։ Ընչազուրկ բանվորներին հաց էր հարկավոր։ Ուստի պրոֆկազմակերպությունների հետ համաձայ-

նության գալով նրանք վերսկսեցին աշխատանքը։ Սակայն այժմ գործարանատերերը միացան և իրենք լոկաուտ հայտարարեցին, հրաժարվելով բանվորների աշխատավարձը վճարելուց։

Բանվորներին և նրանց ընտանիքներին սպառնում էր սովը։

Այդ ժամանակ դեպքի վայրը եկած մեջլիսի ներկայացուցիչը, տեղական դատախազի համաձայնությամբ, կարգադրեց մթերեղենի պահեստները բանալ, որպեսզի բանվորները սովամահ չլինեն։

Ահա սա էր, որ երկար ժամանակ դարձավ իրանական հասարակայնության և մեջլիսի քննության առարկա։

Ռեակցիոն տարրերը Սեիդ Զիայի գլխավորությամբ շտապեցին Իսֆահանի դեպքերի մեղքը գցելու Թուդե պարտիայի վրա։ Ասենք փորձված ավազակներն այլ կերպ վարվել չէին կարող։ Միայն փորձված գողերն են, որ հանցանքում բռնված ժամանակ կանչում են. «բռնեցե՜ք գողերին»։ Այս պրովոկացիայի իսկական նպատակը հետո միայն պարզվեց։ Ռեակցիոն կառավարությանը հարկավոր էր ինչ կերպ ուզում է լինի ճնշել բանվորական շարժումն Իսֆահանում։ Դրա համար պետք էր մի առիթ։ Եվ ահա առիթը նախապատրաստեց Սեիդ Զիան։

Տեղի ունեցածի հիման վրա մեջլիսում ռեակցիոն տարրերն առաջարկեցին Իսֆահանում զինվորական դրություն մտցնել, ասել է թե՝ միանգամայն արգելել բանվորական շարժումը։ Հետո դա կտարածվեր և ողջ երկրում, նաև... Ադրբեջանում։ Այստեղ ևս Սեիդ Զիան ցանկանում էր կազմակերպել պրովոկացիաներ։ Նրա պարտիան Թավրիզում և Ադրբեջանում հանդես էր գալիս մերթ «Հեզբ Մաշրութա» և մերթ էլ «Ջամիաթե ազատ» անվան տակ։ Դրանք, անկախ իրենց անուններից, քարոզում էին ամենառեակցիոն, ազգայնական, հակաժողովրդական գաղափարներ։ Սեիդ Զիայի կողմնակիցների պարտիան իր ծրագրով հետևում էր ֆաշիստական պարտիային։ Բավական է ասել, որ Թավրիզի

«ջամիթա ազատ» պարտիայի մեջ էին համախմբված բարձրաստիճան և ցածրաստիճան զինվորականներ, ոստիկանական և պետական պաշտոնյաներ, հոգևորականներ, գործարանատերեր, հակասովետական տարրեր... Այդ պարտիայի մեջ էր մտնում Թավրիզի ոստիկանապետ Մովասակին, նրանց պաշտպանն էր հանդիսանում Թավրիզի վարչապետ Մոհթաշամին, Իրանի ներքին գործերի մինիստր Սրուրին։

Դրանք բոլորը իրանական ժողովրդի երդվյալ թշնամիներն էին և իրենց հովանավորությունն էին գտնում ամերիկացիների մոտ։ Նրանց ֆաշիստական կերպարանքը պարզվեց այն ժամանակ մանավանդ, երբ Սովետական Բանակը, հարգելով մինչ այդ կնքված պայմանագիրը, թողեց Իրանը։ Դրանից հետո Սեիդ Զիայի կողմնակիցները և Կավամ էս Սալթանեի դահիճները կախաղան բարձրացրին դեմոկրատական գործիչներին։ Այսինքն վարվեցին ճիշտ այնպես, ինչպես ֆաշիստներն էին վարվում ժողովուրդների ազատագրության համար մարտնչողների հետ։ Եվ դա ամերիկացիների ու անգլիացիների սրտովն էր։

Ահա թե ի՞նչ ծառայություններ էր մատուցում Սեիդ Զիան իր տերերին։

Այդ նույն Սեիդ Զիան 1945 թվի մայիսի 7-ին դատ բաց արեց Ռզա Ռուստանի դեմ միայն նրա համար, որ նա համարձակվել էր իրեն՝ Սեիդ Էդ-Դինին հայտարարել Իրանի ժողովրդի թշնամի։

Մայիսի 7-ին Թեհրանի դատական պալատի բակն ու սրահը լիքն էր բազմությամբ։

Դրսում կախած մի պլակատի վրա նկարված էր Սեիդ Զիան՝ էշի վրա թարս նստած, մի ձեռքով էշի պոչից բռնած, իսկ մյուսով՝ բանվորական մուրճի հարվածներից պաշտպանվելիս։ Նկարում ուրիշի ձեռքեր օգնում էին նրան։

Զարմանալի էր. ինքը դատի տվողը դատարան չէր ներկայացել։ Իսկ ժողովուրդը մի ծաղրանկարով իր դատավճիռն էր հանել։

Մզա Ռուստամին դատի կանչելուց հետո Թեհրանի, բոլոր թերթերը լցվեցին Սեիդ Զիայի դեմ ուղղված բազմաթիվ հոդվածներով։ Աչքի ընկնող պրոգրեսիվ քաղաքական գործիչներ, մեջլիսի դեպուտատներ, գրողներ, բժիշկներ, ինժեներներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին և հայտարարեցին, որ իրենք ևս Սեիդ Զիային ժողովրդի թշնամի են համարում և մեղադրում են նրան Իրանի ազատության դեմ կատարած դավաճանության մեջ։

Ամբողջ երկրում բողոքի մի նոր ալիք բարձրացավ Սեիդ Զիայի դեմ։ Տարբեր տեղերից հեռագրեր էին գալիս դատարանի հասցեով։ Ժողովուրդը պահանջում էր մեղադրյալի աթոռին նստացնել ոչ թե «Մզա Ռուստամին, այլ հենց իրեն՝ Սեիդ Զիային»։

Այս բոլորից հետո ևս Սեիդ Զիան հանգիստ շարունակում էր մնալ Իրանում, որովհետև նրան պաշտպանում էին իմպերիալիստները, որոնց բնավ ձեռնտու չէր իրանական ժողովրդի ինքնագիտակցությունը։ Ինքնագիտակցության գալով ժողովուրդը շատ լավ տարբերում էր իր թշնամիներին բարեկամներից։ Նա համակրանքով էր լցվում դեպի Սովետական Միությունը, որը բոլոր դեպքերում պաշտպանում էր իրանական ժողովրդի շահերը։ Իսկ ամերիկյան և անգլիական իմպերիալիստներին դա ձեռնտու չէր։ Նրանք շարունակ ձգտում էին իրանական կառավարության գլուխ դնել ամենառեակցիոն տարրերին։

Կառավարություններն այդ տարիներին Իրանում փոփոխվում էին ձնծաղի վերնազգեստների նման։ 1941 թվի օգոստոսից մինչև 1946 թիվը փոխվեց 16 կաբինետ։ Հենց որ նոր կաբինետը իր քարտերը բաց էր անում և ցույց տալիս հակաժողովրդական իր կերպարանքը, ժողովուրդը միահամուռ բողոքում էր կառավարության վարքագծի դեմ։ Ոչ մի դիմակ չէր կարողանում փրկել նոր ռեակցիոն կառավարությանը։ Բոլորովին հաշվի շառնել մասսաների բողոքը՝ ռեակցիոներները չէին կարող։ Այդ բողոքները հղի էին լուրջ հետևանքներով։ Ամեն մի նոր կաբինետ երկար ժամանակ ցանկանում էր լռությամբ պահպանել լայն հասարա-

կայնությանը հուզող հարցերի շուրջը։ Հենց նույն կերպ վարվեց և իրանական ժողովրդի ոխերիմ թշնամի, մեծ կալվածատեր և ռեակցիոներ Կավամ էլ Սալթանեն։

Նա՝ Իրանի ամենամեծ չեյթանը, հանդես եկավ դեմոկրատիայի պաշտպանի քողի տակ, սակայն հետո իրեն մերկացրեց որպես ամենաստոր խաբեբա և հայրենադավ։ Նրա դավաճանական քաղաքականությունը հայտնի դարձավ ողջ աշխարհին։

Կավամ էս Սալթանեն իրանական դեմոկրատիայի դահիճը դարձավ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱԶԱՏԱՏԵՆՉ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐ

Դեգերել եմ քո լեռներում, կախարդե՜լ են իմ հոգին
Աղբյուրներդ՝ կռունկի աչք, ծաղիկները քո դյութիչ,
Ունկ եմ դրել ես Արաքսի գիշերային մեղմ երգին
Ու երազել խորախորհուրդ մրմունջի տակ շամբուտի։
Քո լեռներում, որ գանգուրներ ունեն՝ կաթի՜ց էլ ճերմակ
Վայելեցի բախտի գինին, սիրո նեկտարն անապակ...
Շուշանադեղ ամպերն են քեզ որպես չադրա շղարշում,
Սեգ ճակատիդ բյուր դարե՜ր են բախվե՜լ ահեղ, մոլեգին,
Արծաթվել է գլուխը քո վշտի, արյան մշուշում,
Սակայն դու կաս, հո՛ղ հայրենի, ծաղկո՜ւմ, ցնծո՜ւմ ես կրկին...

Ս. ՎՈՒՐԳՈՒՆ

Ադրբեջա՜ն։

Ինչքա՜ն ջերմ, անջնջելի հուշեր են կապված այդ անվան հետ։

Մանկուց է այդ անունը մտել իմ սիրտը, մանկուց եմ սկսել շրջել այդ երկրի գյուղերը, քաղաքները, հունվար ամսին կանաչ հովիտները, սարերը, մրգառատ այգիները, արե-

վաչատ, լայնարձակ դաշտերը… վարդաստանները, ուր սոխակի երգն է միշտ դայլայլում։ Մանկուց նատել եմ նրա պարզ, հյուրասեր հովիվների հետ օջախի շուրջը, ճաշակել անուշահամ յուխան[1]՝ պանրով ու կարագով։ Մեր կողքին մուշ-մուշ նիրհել են ոչխարի հոտերը, քիչ այն կողմ հավիրժական երգը շրթին վազել է Որոտանը, իսկ պարզ, անհուն երկնքում պլպլացել են աստղերը։

Ո՞ւր է այժմ այն աստղավառ լուրթ աչքերով, վարդագույն այտերով ու շուրթերով աղջիկը՝ Զմրուտը, որի հետ մենք, երկու մանուկ, մրցում էինք ձիերը դեպի գետը քշելիս։ Իմ կյանքում առաջին անգամ նրա աչքերի մեջ նայելիս եմ զգացել, որ ես այս աշխարհում տղա եմ ծնվել։

Դեռ այն ժամանակ, նստած օբաների տակ, ունկնդրել եմ աշուղների երգին և չեմ հասկացել, թե ինչո՞ւ այն այնքան թախծոտ ու վշտոտ է։

Հետո, երբ երկիրն այդ, ինձ չտարբերելով իր զավակներից, խնամեց, աճեցրեց, երբ ես էջ առ էջ կարդացի նրա վշտերի գիրքը, նոր միայն հասկացա այդ տխուր, թախծալի մեղեդիների իմաստը։

Դարերի խորքից է գալիս նա։

Դարեր շարունակ այդ երկիրը ենթարկվել է օտարերկրյա նվաճողների՝ արաբների, սելջուկների, մոնղոլների ասպատակություններին, հրի ու սրի է մատնվել նրանց կողմից։ Ավերվել են քաղաքները, գյուղերը, ավերվել են կուլտուրայի հոյակապ կոթողները։ Մի նվաճողին փոխարինել է մյուսը։ Ամեն մի նոր նվաճողի մուտքը երկիր կապված է եղել նոր ավերածությունների, նոր թշվառությունների հետ։

Հրով ու սրով են մտել Ադրբեջան նաև պարսկական նվաճողները։ Նրանք մտել են աշխարհում մեծ համբավ հանած, հարուստ Թավրիզի, Շամախու, Գյանջայի (այժմ Կիրովաբադ) և բազմաթիվ այլ քաղաքների ու ավանների հարստություններին տիրելու, ժողովրդին ճորտացնելու համար։

———

[1] Լավաշ։

Իսկ խաղաղասեր, ստեղծագործ ադրբեջանական ժողովուրդը միշտ չէ, որ լռությամբ է տարել օտարերկրյա նվաճողների ծանր լուծը։ Տարբեր առիթներով զենքը ձեռքին նա դուրս է եկել հարստահարիչների դեմ։ Քանի՜-քանի՜ արյունոտ մարտեր են տեղի ունեցել Ադրբեջանի հնամենի մայրաքաղաք Թավրիզի, Շամախու, Գյանջայի պարիսպների տակ։ Քանի՜-քանի՜ անգամ օտարերկրյա զավթիչները դուրս են վռնդվել երկրի այս կամ մարզից։ Բայց նրանք նոր ուժեր հավաքելով նորից են եկել, նոր ավերածություններ պատճառել երկրին, նոր վիշտ պատճառել ժողովրդին։

Արաքսի այս և այն ափին փլատակներ կան, որոնք մինչև օրս մնում են որպես լուռ վկաներ՝ հեռու անցյալում կատարված այդ ավերվածությունների։

Ադրբեջանական ժողովուրդը միշտ էլ ձգտում էր թապալել օտարերկրյա հարստահարիչների և մանավանդ պարսիկ կեղեքիչների ծանր լուծը։

1826—28 թվին, երբ ռուսական զորքը մտավ Թավրիզ, ադրբեջանցիների ուրախությանը չափ ու սահման չկար։

Նրանք վաղուց իրենց ազատագրության հույսը կապում էին ռուս մեծ ժողովրդի հետ։ Եվ ահա, պատմական այդ օրը, լայն բացվեցին Թավրիզի պարիսպների դարպասները, քաղաքի առաջնորդները ռուսական բանակին դիմավորեցին աղ ու հացով։ Թավրիզի հոգևոր առաջնորդ Միր Ֆեթթահինը ժողովրդին կանչեց ցնծության սեղանի շուրջը, բոլոր մզկիթներում աղոթքներ եղան ռուսական բանակի պատվին։

Կարծես թե հասել էր ազատության ժամը։

Սակայն Թյուրքմենչայի 1828 թվի պայմանագրի համաձայն Արաքս գետը Ադրբեջանը բաժանեց երկու մասի, դարձավ Ռուսաստանի և Պարսկաստանի սահման։

Գետի հարավային կողմում մնացին ադրբեջանական Արդաբիլ, Մարանդ, Միշքին, Մերաբ, Միանե, Զենջան, Խալխալ, Թուֆարգան, Միլան և այլ քաղաքներ ու ավաններ։ Գետի այն կողմ՝ պարսկական տիրապետության տակ մնաց նաև Ադրբեջանի նախկին մայրաքաղաք Թավրիզը, որ այնքան ջերմ հույսեր էր կապել ռուսական զորքերի հետ, որ

այնքան արյուն էր թափել իր ժողովրդի ազատագրության համար։

Դժվար էր հաշտվել այն մտքի հետ, որ հարազատ Արաքսը սրի նման պետք է կտրի, երկու մասի բաժանի մի սիրտ, մի մարմին։ Եվ վերջապես ծանր էր, անչափ ծանր նորից մնալ պարսկական դաժան, անսիրտ հարստահարիչների լծի տակ։ Պարսկական շահերի, խաների պատճառած վշտերը, տառապանքները թվում էր, թե երբեք չեն ամոքվի։ Ժողովուրդը չէր մոռանում հրկիզվող քաղաքների բոցը, երկինք ելած մուխը, մանուկների ու կանանց անօգնական, հուսահատական ճիչերը, և կիսախելագար զորավարների գլխավին բոլորը՝ ավերվող քաղաքների, ավանների ծուխն ու փոշին, մարդկանց տառապանքը դիտելիս։

Ո՛չ, աղբեջանական ժողովուրդը չէր կարող հաշտվել այդ զազանությունների հետ։ Նրա համբերությունը շատ հաճախ հատնում էր և նա ամբողջ քաղաքներով, գյուղերով ելնում էր պարսկական նվաճողների դեմ։

Այս ու այնտեղ ծագած ապստամբությունների լուրը հասնում էր Թեհրան, շփոթություն, ահ ու սարսափ առաջ բերում շահի պալատում։

Թեհրանն ինքն էլ չգիտե, թե քանի՛ անգամ զորք է ուղարկել այդ անհնազանդ, «խռովարար» ժողովրդի դեմ, չգիտե, թե քանի՜-քանի՜ հերոս աղբեջանցիների գլուխ է կտրել, քանի-քանիսին կախաղան բարձրացրել և դարձյալ չի կարողացել ընկճել այդ ժողովրդի ազատատենչ ոգին։

Մի ապստամբությանը հետևել է մյուսը։

Ո՛չ անթիվ զոհերը, ո՛չ կախաղանները, ո՛չ հրկիզվող քաղաքներն աղբեջանցիներին չէին կարողանում ետ պահել պարսկական նվաճողների դեմ տարվող պայքարից։

Եվ, պետք է ասել, որ դրանք փոքրիկ, տեղական բնույթ կրող ընդհարումներ չէին։ Նրանց պայքարը երբեմն կանգնում էր աշխարհի ուշադրության կենտրոնում։

ՍԱԹԹԱՐ ԽԱՆՆ ՈՒ ԽԻԱԲԱՆԻՆ

1909 թվին, երբ բոցավառ ռևոլյուցիոներ Սաթթար խանն իր հայրենակիցներին ոտքի էր հանել պարսիկ նվաճողների դեմ, ֆրանսիական «Էկո դե Փարի» և «Ռադիկալ» թերթերի թղթակիցները Եվրոպային տեղյակ էին պահում Հարավային Ադրբեջանում տեղի ունեցող դեպքերին։

Ֆրանսիական թերթերը հաղորդում էին.

«Սաթթար խանի և Ռահիմ խանի զինված ուժերի միջև արյունալից մարտեր են տեղի ունենում։

Մարտերն սկսվել են Թավրիզում։ Այդ մարտերի մասին առայժմ ստույգ տեղեկություններ չկան, ինքը Սաթթար խանը գտնվում է ռևոլյուցիոներների հետ և անձամբ մասնակցում է գրոհներին»։

Ադրբեջանական ժողովրդի ազատագրական պայքարին մեծ ուշադրությամբ էր հետևում Վ. Ի. Լենինը։

Երբ իմպերիալիստների ուժերով դեմոկրատական այդ շարժումն արյան մեջ խեղդվեց, երբ նրա պարագլուխները մահվան մատնվեցին ու Թավրիզի փողոցները արյունով ներկվեցին, թվում էր, թե ադրբեջանցիներն այդ դաժան հաշվեհարդարից հետո այլևս գլուխ չեն բարձրացնի։

Իր արժանապատվությունն իմացող, իրեն սիրող ժողովուրդը երբեք չի համաձայնվի դառնալ արյունարբու դահիճների ստրուկը։

Ադրբեջանական մի սերունդ իր ազգային-ազատագրական, ռևոլյուցիոն պայքարի փորձը հաղորդում էր մյուսին։

Եվ այսպիսով միշտ անշեջ էր մնում հարստահարիչների դեմ տարվող պայքարի հուրը։

Սաթթար խանի գլխավորած մարտերի ժամանակ, Թավրիզի փողոցներում կառուցված դիրքերում, փամփշտակալը խաչաձև կապած, 26—27 տարեկան մի երիտասարդ աչքի էր ընկնում իր խելքով ու անվեհերությամբ։ Այն ժամանակ նրա մասին հայտնի էր միայն, որ նա Թավրիզի Խիաբանի թաղեցի, նույն թաղի Էնջումայի առաջնորդ Շեյխ Մամեդ Խիաբանին է։

Այդ երիտասարդը Սաթթար խանի հետ մասնակցեց ազատության համար տարվող մարտերին, սեփական աչքով տեսավ Սաթթար խանի սխրագործությունները և վերջապես նրա գլխավորած շարժման ողբերգական վախճանը։ Եվ հենց այն ժամանակ, երբ շահի դահիճները մահվան մատնեցին Սաթթար խանին և նրա զինակից Բաղըր խանին, աքսորի մեջ գտնվող Շեյխ Մամեդ Խիաբանին շտապեց վերադառնալ Թավրիզ, որպեսզի տեղում ղեկավարի իր ժողովրդի ազատագրական շարժումը։

Խիաբանին Թավրիզում և ամբողջ Հարավային Ադրբեջանում լայն քաղաքական աշխատանք ծավալեց։ Նա շատ լավ էր հասկանում, որ միայն ժողովրդի միահամուռ ուժով կարելի է տապալել պարսիկ հարստահարիչների լուծը, ուստի իր խմբագրած թերթի էջերից նա կոչ էր անում.

«Հե՜յ, Ադրբեջան, հե՜յ դեմոկրատական Ադրբեջան, գլուխդ բարձր պահիր։

Բռնությունը, տառապանքները, զրկանքները, կախաղանները, շղթաները և զնդանները, ինչքան էլ դաժան ու ամուր էին՝ քո ուժի, կամքի դեմ մեկ-մեկ ջախջախվեցին։ Բռնությունները, թշնամու գրոհները և պատճառած նեղությունները, կոտորածները քեզ մասնատեցին, տակն ու վրա արեցին, բայց չկարողացան հաղթել...»։

Խիաբանին անցավ տեղի դեմոկրատական պարտիայի գլուխ, կազմակերպեց քաղաքի և գյուղի աշխատավորությանը՝ ազատագրական պայքարի համար։ Նրա նախաձեռնությամբ կազմակերպվեց Հարավային Ադրբեջանի դեմոկրատական պարտիայի կոնֆերանսը, որին մասնակցեցին տարբեր քաղաքներից եկած 480 դելեգատներ։ Այդ կոնֆերանսն ընտրեց Հարավային Ադրբեջանի դեմոկրատական պարտիայի ղեկավար մարմին։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի լուրը Հարավային Ադրբեջանում ընդունեցին մեծ ցնծությամբ։

Խիաբանու գլխավորած ազատագրական պայքարը նեղ, ազգային բնույթ չէր կրում։ Ինքը—Շեյխ Մամեդ Խիաբանին

ինտերնացիոնալիստական ոգով տոգորված քաղաքական գործիչ էր, միշտ քարոզում էր տարբեր ազգությունների պատկանող աշխատավորների սերտ համագործակցություն ու եղբայրություն։ Նա հրապարակորեն ասում էր, որ ռուս ժողովուրդն ադրբեջանական ժողովրդի ամենաջերմ բարեկամն է։

Կանգնած լինելով այս դիրքերի վրա, Խիաբանին չէր կարող հաշտվել այն քաղաքականության հետ, որ Իրանում վարում էին անգլիական օկուպանտները՝ իրանական ռեակցիոն շրջանների օգնությամբ։

Անգլիացիների հետ 1919 թվին կնքած պայմանագիրն ուղղակի ճորտացնում էր Իրանում ապրող ժողովուրդներին։ Հենց այդ պատճառով Ադրբեջանի դեմոկրատներն իրենց ղեկավարի՝ Խիաբանու հետ միասին վճռական պայքար հայտարարեցին թե անգլիական օկուպանտներին և թե իրանական կառավարական շրջաններում նստած նրանց գործակալներին։

Հարավային Ադրբեջանին հետևեցին և Իրանի մյուս մարզերը։

Սակայն անգլիական գործակալները բավականաչափ մեծ գումար էին ստացել, որպեսզի հրաժարվեն իրենց տերերի հետ կնքված պայմանագրից։

Ադրբեջանական դեմոկրատիայի մարտական ձայնն այն ժամանակ ևս Թեհրանում իրարանցում առաջ բերեց, Սաթթար խանի տարած պայքարը նորից ոգի ու շունչ էր առնում։ Այժմ այդ շարժման գլուխ էր կանգնած Սաթթար խանի լավագույն աշակերտ Մամեդ Խիաբանին, որին չընկճեցին ոչ բանտը, ոչ աքսորը և ոչ էլ հալածանքները։

Նրա գլխավորած շարժումը գնալով ավելի էր հզորանում, խոր արմատներ ձգում ժողովրդի մեջ։ Հզորանում էր նաև դեմոկրատական պարտիան։ Խիաբանու գլխավորած ռևոլյուցիոն շարժումը 1920 թվի ապրիլին այնպիսի ծավալ ստացավ, որ Թեհրանի կողմից նշանակված պաշտոնյաներն անկարող էին նրա դեմ որևէ լուրջ միջոց ձեռնարկել։

Դեմոկրատական պարտիան, գլխավորելով ռևոլյուցիոն շարժումը, երկու օրվա ընթացքում գրավեց պետական բոլոր

հիմնարկությունները, մաքրեց դրանք Թեհրանի կողմից նշանակված պաշտոնյաներից։ Վերջիններից շատերը փախան Թեհրան։

Թավրիզում դեմոկրատական կարգեր հաստատելու մասին հրապարակված հռովարտակը դեմոկրատները թարգմանեցին և ուղարկեցին արևմտյան երկրներին։

Այդ լուրն ամենուր ապշեցուցիչ տպավորություն թողեց։ Առավել ապշեցին Թեհրանի տիրուկները, որոնք անմիջապես սկսեցին դավեր նյութել ադրբեջանական դեմոկրատիայի դեմ։

Թեհրանի ռեակցիոն շրջանների հետ ձեռք-ձեռքի տված սկսեցին աշխատել նաև անգլիական գործակալները։

Անգլիական հետախուզության ներկայացուցիչ Էդմոնդը Ղազվինից շտապեց Թավրիզ՝ դավադրական խմբակ կազմակերպելու համար։ Նա տեսակցություն ունեցավ տեղի հակադեմոկրատական տարրերի հետ, բացեիբաց առաջարկեց խորտակել դեմոկրատական կարգերը։ Անգլիացիներին խիստ նարսափեցրել էր Կարմիր բանակի մուտքը Անդրկովկաս, «ջենգելցիների» և առավել ևս խիաբանցիների շարժումը։ Թավրիզի դեմոկրատական շարժումը տապալելու համար նրանք խոստացան մեծ գումար։

Նույն 1920 թվի հունիսի 23-ին դեմոկրատական պարտիայի կենտկոմը իր թերթի խմբագրատնից փոխադրվեց տեղական իշխանության շենքը։ Այդ օրը քաղաքի հիմնարկությունները, խանութները, շուկան փակվեցին։

Դրա նախօրյակին Խիաբանին ելույթ ունեցավ ու հայտարարեց, որ Թավրիզում իշխանությունը լիովին գտնվում է դեմոկրատների ձեռքին և որ դեմոկրատական կարգերը Թավրիզից սկսվելով, տարածվելու են Հարավային Ադրբեջանի և ապա Իրանի բոլոր մասերում։

Հունիսի 23-ը Թավրիզում վերածվեց ժողովրդական տոնի։

Քաղաքի աշխատավորները՝ արհեստավորները, բանվորները, մտավորականները, աշակերտները, մանր առևտրականները փողոց ելան, զինված ազատասերների՝ ազգային

բանակի հետ շարքեր կազմեցին։ Ապա հնչեցին ժողովրդական երգերը, փողային երաժշտախմբի նվագը։

Ցնծալից բացագանչություններով, երգով, նվագածությամբ ժողովուրդը շարժվեց դեպի Ալա-Կափը կոչված շենքը, ուր մինչ այդ նստում էին պարսկական սատրապները և ուր այժմ պետք է տեղավորվեր Հարավային Ադրբեջանի ժողովրդական կառավարությունը։

Տեղ հասնելով, ժողովուրդը կանգ առավ։ Նրա առաջ բացվում էին իշխանության շենքի դռները, որ դարերով փակ էին եղել։

Այստեղ, ժողովրդին դիմելու համար, խոսք վերցրեց Շեյխ Մամեդ Խիաբանին։ Բազմության միջից լսվեցին.

— Կեցցե՜ Խիաբանին...

— Կեցցե՜ դեմոկրատական պարտիան...

Բուռն ծափերի, ջերմ բացագանչությունների տակ հանդես գալով, Խիաբանին ասաց.

— Քաղաքացիներ. մենք այսօր այս շենքն ենք փոխադրվել դեմոկրատական կարգերն ուժեղացնելու նպատակով։ Ինքնիշխան և նեխած հիմքերով կարգերի և բռնության ժամանակը վերջացավ...

Հարավային Ադրբեջանի դեմոկրատների օրեց-օր աճող ազդեցությունը մասսաների վրա և ապա նրանց կատարած գործնական քայլերն արդեն հանգստություն չէին տալիս Թեհրանի ռեակցիոն շրջաններին։ Անգլիացիների լրտես Սեիդ Զիա-Էդ-Դինն Թեյթի էջերից կատաղի պայքար մղեց ադրբեջանցիների դեմ։ Նույն ժամանակ կառավարությունն արագ կերպով զորքեր էր կուտակում Թավրիզի շուրջը՝ դեմոկրատական շարժումն արյան մեջ խեղդելու համար։

1920 թվի սեպտեմբերի 13-ին կաշառված կազակական զորքերը հարձակվեցին Հարավային Ադրբեջանի կառավարական տան՝ Ալա Կափիի վրա և գրավեցին այն։

Քաղաքում սկսվեց սոսկալի կոտորած։

Դեմոկրատական շարժման կողմնակիցներին գնդակա-

հարում էին հենց քաղաքի փողոցներում։ Խիաբանին զենքը ձեռքին դիմադրեց թշնամիներին և ընկավ հերոսի մահով։

Թեհրանի ոգրունները, անգլիական վարձու գործակալները և անգլիական իմպերիալիստները կարող էին ցնծալ։ Այս անգամ էլ նրանց հաջողվեց արյան մեջ խեղդել Հարավային Ադրբեջանի դեմոկրատական շարժումը։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՆ ՈՒ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Այն օրերին, երբ մենք Թեհրանում էինք, նորից տագնապալից լուրեր էին գալիս Հարավային Ադրբեջանից, նորից Թեհրանի ծախու մինիստրներն ակնապիշ հետևում էին այն ամենին, ինչ տեղի ուներ այդ միշտ «անհանգիստ», ըմբոստ մարզում։

Պարզ էր. ադրբեջանցիների սրտերում չէր մարել պայքարի հուրը, հին վերքերը տակավին չէին ամոքվել։

Եվ ի՞նչպես ամոքվեր, երբ 5 միլիոն ժողովուրդը դարձյալ իր ուսերին կրում էր հարստահարիչների ծանր լուծը, երբ նորից նա դառը դատում էր, դատարկ նստում։

Ադրբեջանական դեմոկրատները չուզեցին հաշտվել այդ անիրավության հետ և Սաթթար խանի, Խիաբանու օրինակով պայքար հայտարարեցին իրենց ազգային անկախության, ժողովրդի ազատության համար։

Հարավային Ադրբեջանում դեմոկրատական պայքարն առանձնապես սուր բնույթ ստացավ մեջլիսի 14-րդ հավաքի ընտրությունների շուրջը տարվող պայքարի ժամանակ։ Իրանական ռեակցիան ամեն կերպ ձգձգում էր Ադրբեջանի դեպուտատների ընտրությունը։ Դա հասկանալի էր։ Ադրբեջանի քաղաքներն ու գյուղերը մեջլիս պետք է ուղարկեին 22 դեպուտատ, որոնցից մեկը հայերի ու ասորիների կողմից։ Միայն Թավրիզն իր շրջակայքով պետք է ընտրեր 9 դեպուտատ (Թեհրանն ըստ սահմանադրության ընտրում էր 12 դեպուտատ)։ Պարզ էր, որ Իրանի ռեակցիան չէր ցանկանում մեջլիսում Ադրբեջանից այդքան դեպուտատներ ունե-

նալ, որոնք, անշուշտ, կլինեին դեմոկրատական խավերի ներկայացուցիչները։ Ռեակցիայի դեմ տարվող պայքարում հաղթանակով դուրս գալու նպատակով ժողովրդական պարտիան, նահանգային բանվորական միության խորհուրդը, Ադրբեջանի բանվորական միությունը և երիտասարդական խմբերը, ինչպես նաև Հակաֆաշիստական Միությունը և Գյուղացիական միությունը միանալով՝ կազմեցին Ազատության միասնական ճակատ։

Իրանի և Հարավային Ադրբեջանի դեմոկրատական շարժման պատմության մեջ աշխատավորների միասնական ճակատ ստեղծելը նոր երևույթ էր և այն տվեց իր դրական արդյունքները։ Ընտրությունների ժամանակ միասնական ճակատը բացարձակ հաղթանակ տարավ։ Միայն Թավրիզում ժողովրդական պարտիայի դեպուտատները, ռեակցիոն ուժերի քայքայիչ աշխատանքի պայմաններում, ստացան ավելի քան 10.000 ձայն։

Ադրբեջանից ընտրված դեպուտատների շարքերում էր գտնվում նաև ժողովրդի շահերի համար տարվող մարտերում սատգված քաղաքական գործիչ, Թեհրանում լույս տեսնող «Աժիր» թերթի խմբագիր Ջաֆար Փիշևարին, որը հետագայում այնքան մեծ դեր կատարեց Ադրբեջանի դեմոկրատական շարժման մեջ։

Ընտրությունները նշանակալից էին նրանով, որ նրանում ակտիվ մասնակցեցին գյուղի և քաղաքի աշխատավորները, որոնք ընտրական պայքարի ընթացքում հասկացան Թուդե պարտիայի դերն ու նշանակությունը։ Ժողովրդական պարտիայի ազդեցությունը մասսաների վրա օրեց-օր ավելանում էր։

1944 թվի օգոստոսի սկզբներին Թեհրանում գումարվեց Իրանի Հեզբ Թուդեի (ժողովրդական պարտիայի) առաջին կոնգրեսը, որին ներկա էին 190 դելեգատներ։ Կոնգրեսը քննության առավ երկրի ներքին ու արտաքին քաղաքական դրությունը, մշակեց նոր ծրագիր։ Ծրագրի առաջին կետում ասվում էր, որ Հեզբ Թուդեն շահագործվող դասակարգերի

բանվորների, գյուղացիների, ազատասեր ինտելիգենցիայի և արհեստավորների պարտիան է։ Որպես այդպիսին նա, ի լուր բոլորի, հայտարարեց, որ «Հեզբ Թուդե Իրանը կողմնակից է Իրանի անկախությանը և ամբողջականությանը։ Նա պայքար է մղում ամեն տեսակի գաղութացման քաղաքականության դեմ։ Եվ ապա Հեզբ Թուդե Իրանը կողմնակից է ազգային ժողովրդական կառավարության և երկրում իսկական դեմոկրատական կարգերի հաստատման»։

Ժողովրդական պարտիայի կոնգրեսին առանձնապես ջերմ արձագանքեցին Հարավային Ադրբեջանի աշխատավորները, որովհետև այդ պարտիայի ծրագիրը համապատասխանում էր ադրբեջանցիների դարավոր երազանքներին։

Եվ հենց դա էլ կատաղեցնում էր Թեհրանի ռեակցիոն շրջաններին։

Նրանք մի եր էին փնտրում Ադրբեջանի դեմոկրատական շարժումը ճնշելու և չէին ամաչում դիմել ամենաստոր միջոցների։ Նրանք հայտարարեցին, որ իբր Հարավային Ադրբեջանում մեջլիսի դեմոկրատ դեպուտատներն ըստ կանոնի չեն ընտրվել։ Հիմք ընդունելով իրենց իսկ հնարած այդ սուտը սուտը, նրանք չէին ցանկանում հաստատել ժողովրդի իսկական ընտրյալներ՝ Ջաֆար Փիշևարու, Սրտաշես Հովհաննիսյանի և մյուսների մանդատները։

Ադրբեջանի դեմոկրատներին ռեակցիայի բանսարկությունը բնավ չէր վհատեցնում։ Նրանք նոր եռանդով շարունակում էին իրենց պայքարը՝ ժողովրդի ազատության, երջանիկ ապագայի համար։

Թուդե պարտիայի տարած պայքարի շնորհիվ Ադրբեջանի պրոֆմիությենական կազմակերպությունները 1944 թվին կարողացան կոլեկտիվ պայմանագրեր կնքել բանվորների և գործարանատերերի միջև, որը թեթևացնում էր բանվորների ստրկական աշխատանքը, հաստատում էր ութ ժամյա բանվորական օր, արգելում էր մանուկների շահագործումը ֆաբրիկաներում ու գործարաններում, տանելի պայմաններ էր ստեղծում բանվորուհիների համար։

1944 թվի հունվարի 11-ին տեղի ունեցավ Ադրբեջանի

Հեղբ Թուդեի առաջին նահանգային կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցելու համար 130 դելեգատ էին եկել Արդաբիլից, Աստարայից, Մարաքից, Շահիսուրից, Խոյից, Մարաղայից, Ռիզայեից, Մարանդից և այլ տեղերից։

Այդ օրերին Ադրբեջանի Թուդե պարտիան իր շարքերում ուներ 43716 անդամ, որից յոթ հազարը Թավրիզում, իսկ մնացածը՝ շրջաններում։ Կազմակերպությունն ուներ 16 շրջանային կոմիտեներ։

Կոնֆերանսը հանրագումարի բերեց ռեակցիայի դեմ տարվող պայքարում ձեռք բերված նվաճումները, կոչ արեց շարունակել պայքարը ռեակցիայի, դավաճան Սեիդ Զիայի, ամերիկյան իմպերիալիստների գործակալ Միլսպոյի և նմանների դեմ, որոնք խանգարում են իրանա-սովետական բարեկամական հարաբերությունների զարգացմանը, ցանկանում են վիժեցնել սովետա-իրանական նավթային ընկերություն ստեղծելու գործը։

Թեհրանը նորից տագնապի մեջ էր։

Նա շտապեց Թավրիզի ֆարմանդար (նահանգապետ) նշանակել Սեիդ Զիայի գործակալ Մոհթաշամին։ Սա տեղ հասնելով սկսեց ամբողջ Ադրբեջանում ինտրիգներ կազմակերպել դեմոկրատների դեմ։ Նրա կարգադրությամբ մի քանի կալվածատերեր հալածանքներ սկսեցին գյուղացիների դեմ, ցանկացան ցրել դեմոկրատական պարտիայի տեղական կազմակերպությունները։

Թուդե պարտիայի կենտրոնական օրգան «Ռահբար» թերթը գրեց.

«Վերջին տարիներս, մասնավորապես 1945 թվին, ռեակցիան սկսել է ավելի ակտիվ դառնալ։ Իրար հետևից և միաժամանակ սկսեցին սև հարյուրյակային հարձակումներ, խռովություններ և ինտրիգներ Շահիում, Յազդում, Իսֆահանում, Ռիզանում և Մալեքանդի գյուղական շրջանում։ Ռեակցիան աշխատում է ցրել արհեստակցական միությունները ու Հեղբ Թուդե Իրան պարտիան։ Իրանում սկսվել է մի շրջան՝ նման եվրոպական պրոֆաշիստական շրջանի, որը աքողվում է դեմոկրատական պետության անվան տակ»։

Որպես պատասխան ռեակցիայի լկտի արարքների, 1945 թվի մարտի 15-ին բազմամարդ ցույցեր տեղի ունեցան Ադրբեջանի բոլոր քաղաքներում և գյուղական շրջաններում։

Ցուցարարները պահանջեցին Իրանի կառավարությունը կազմել ազատասեր տարրերից, ձերբակալել և դատի տալ գյուղացիների վրա հարձակում կազմակերպող խաներին, դուրս քշել Թավրիզից նահանգապետ Մոհթաշամիին, Թավրիզի ոստիկանապետ Մովասսակիին, երկրում ծավալվող անգործության առաջն առնել և վերջապես կարգադրել, որ անհապաղ սկսվեն նահանգային և քաղաքային խորհուրդների ընտրություններն Ադրբեջանում և ողջ Իրանում։

Ընդամենը քսան օր հետո՝ ապրիլի 5-ին, Թավրիզում նորից կայացավ մեծ միտինգ, վերջինիս ընտրած ներկայացուցիչները գնացին հեռագրատուն և 6 կետից բաղկացած հեռագիր ուղարկեցին Թեհրան՝ մեջլիսին, պրեմիեր մինիստրին և դեմոկրատական պարտիայի մեջլիսի դեպուտատներին։

Հեռագիրն ուլտիմատումի ձևով պահանջում էր անմիջապես փոխել ազատարարների դեմ կամայականություններ թույլ տվող Միանեի բախշդար Աբդուլլա Անսարուն, դատի տալ Իսֆահանի նահանգապետ Վարասթեին և ոստիկանապետ Շահփուր Մուխտարուն, ձերբակալել ազատասերների դեմ զենքը ձեռքերին պայքարող մի շարք ավազակների։

Մասսաների բողոքը կառավարության դեմ գնալով ուժեղանում էր։

Պատերազմը վերջանալուն պես իրանական ժողովրդի դրությունն ավելի ծանրացավ։ Հազարավոր տրանսպորտային աշխատավորներ, որոնք պատերազմի տարիներին աշխատում էին դաշնակիցների համար, պատերազմն ավարտվելուց հետո անգործ մնացին։ Անգործների թիվը միայն Թավրիզում հասնում էր տասը հազար մարդու։

Ռեակցիոն կառավարությունը ոչինչ չէր ձեռնարկում ժողովրդի թշվառությանը վերջ տալու համար։

1945 թվի սեպտեմբերի 3-ին Ադրբեջանի դեմոկրատա-

կան պարտիան կոչ արեց ադրբեջանցիներին համախմբվել դեմոկրատական պարտիայի շուրջը՝ ներքին ավտոնոմիա ձեռք բերելու համար։

Կոչի մեջ ասված էր.

«1. Իրանի անկախությունն ու ամբողջությունը պահպանելով հանդերձ, Ադրբեջանը պետք է ունենա ժողովրդական ներքին գործերի ազատություն և կուլտուրական ավտոնոմիա, որպեսզի ամբողջ երկրի արդարացի օրենքները պաշտպանելու հետ միասին, նա կարողանա իր կրթական, շինարարական գործի, իր զարգացման և իր բախտի տնօրենը դառնալ։

2. Այս նպատակը կյանքում իրականացնելու համար պետք է շուտափույթ կերպով անջումանը այալաթիի և վիլայաթիի (շրջանային և նահանգային սովետների) ընտրությունները կատարել և գործի անցնել»։

Ապա դիմումը շարադրում էր բոլոր այն խնդիրները, որ Հարավային Ադրբեջանում պետք է իրագործվեին՝ դեմոկրատական կարգերի պայմաններում։ Դրանցից կենսական նշանակություն ունեին ադրբեջաներեն լեզվի դասավանդումը տարրական դպրոցներում, արվեստի, կուլտուրայի գործն առաջ տանելը, առևտրի ընդարձակումը, քաղաքների շինարարությունը, գյուղացիական լայն մասսաների դրության բարելավումը և այլն։

Սեպտեմբերի 5-ին սկսեց լույս տեսնել «Ադրբեջան» թերթը, որի առաջնորդողի մեջ ասված էր. «Մենք մեր ունեցած ամբողջ ուժերով պաշտպանելու ենք Ադրբեջանի ազատությունը։ Թող ռեակցիոն շրջաններն իրենց հաշիվը հասկանան։ Ադրբեջանն ընտրելու է ազատության ճանապարհը։ Եթե Թեհրանը գնալու է ռեակցիայի ճանապարհով, համեցեք՝ նա կարող է գնալ առանց Ադրբեջանի»։

Ինքնավարության գաղափարը Թավրիզում նոր չէր ծագել։ Այն խոր արմատներ էր ձգել ամեն մի ադրբեջանցու սրտում։ Ամեն մեկը ցանկանում էր իր որդիներին կրթություն տալ մայրենի լեզվով, ունենալ իր թատրոնը, իրեն հասկանալի լեզվով տպագրված թերթեր, գրքեր, լսել իր սրտից բխող հարազատ երգեր...

Այդ ամենը նրան Սադր-Օլ-Աշրաֆիի կառավարությունը երբեք չէր տալ ընդհակառակը, Սադր-Օլ-Աշրաֆիի կառավարությունը շանսված մի հալածանք սկսեց դեմոկրատական պարտիայի դեմ։ Նա սկսեց մեկ-մեկ փակել դեմոկրատական ակումբները։ Թեհրանում ոստիկանությունը խուզարկության ենթարկեց «Հեղբ Թուդե»-ի և պրոֆմիությունների ակումբները, ապա ժողովրդական պարտիայի հասցեին սկսվեցին տարածվել սուտ լուրեր, իբր այդ պարտիան պատրաստում է զինված ապստամբություն։

Ոստիկանությունը հարձակում գործելով Թուդե պարտիայի Թեհրանի ակումբի վրա, ձերբակալեց 50 հոգու, կողոպտեց ակումբի ունեցվածքը։ Դրա ժամանակ սվինի հարվածով վիրավորվեց նաև Մեջլիսի անդամներից մեկը։

Նույնպիսի մի հարձակում ոստիկանները կատարեցին Թուդեի Ռեյ քաղաքի ակումբի վրա, սվիններով վիրավորելով 40 հոգու։ Դրանցից 12-ը բժշկական օգնության համար փոխադրվեցին Թեհրան։

Քաղաքական այդ ճնշումն այնքան ուժեղ էր, որ անգամ Լոնդոնի դեսպան Թաղի-Զադեն ստիպված էր հեռագրով հիշեցնել Իրանի կառավարությանը՝ նրա խստությունների մասին։

Ոչ մի սպրեսիա ադրբեջանցիներին այլևս չէր կարող ետ պահել նրանց ընտրած ճանապարհից։

Նրանք ի լուր ամբողջ աշխարհի հեռագրեցին արտաքին գործերի մինիստրների Լոնդոնի կոնֆերանսին.

«Ռեակցիան զրկել է մեզ Ադրբեջանում մեր տարրական դեմոկրատական ժողովրդական իրավունքներից, մայրենի լեզվի ազատությունից և դաստիարակությունից։ Մենք, ադրբեջանցիներս, կամենում ենք ազատ կարգերի մեջ ապրել և ազատ լինել մեր լեզվի և ներքին գործերի մեջ։ Մենք այս դիմումը հղում ենք Ատլանտյան Խարտիայի հիման վրա, ուր ազատասեր ժողովուրդներն ուխտել են երկրում ազատ և դեմոկրատական կարգեր ստեղծել՝ ամեն տեսակի ռեակցիայի և պատերազմների դժբախտությունների առաջն առնելու համար»։

Եվ այսպես, ադրբեջանական ժողովուրդն իր նպատակներն աշխարհից չէր թաքցնում և չէր էլ կարող թաքցնել։ Նրա պայքարի մասին աշխարհը վաղուց գիտեր, իսկ այժմ թող իմանար, որ հասել է ազատագրության ժամը։ Այլևս ոչ ոք նրա ներքին գործերին չպետք է խառնվեր։ Հինգ միլիոն ժողովուրդն իրավունք ուներ տնօրինելու իր բախտն այնպես, ինչպես ինքն էր ցանկանում։

Նա ուներ իր պարտիան, որն իր ուսերի վրա էր վերցնում ժողովրդի ազատագրության գործը։ Ժողովուրդը լի հավատքով հետևում էր նրան։

1945 թվի աշունն էր, հոկտեմբերի 2-ը։

Փիշեվարու գլխավորած ժողովրդական պարտիան հավաքվեց իր վճռական խոսքն ասելու իր բախտի, իր հետագա վիճակի մասին։ Տարբեր քաղաքներից ու գյուղերից Թավրիզ հավաքվեցին 240 դելեգատներ։ Եկան նաև ազգային փոքրամասնությունների՝ քրդերի, ասորիների ներկայացուցիչները։

Բոլորը, բոլորը միաձայն պահանջում էին ազգային ավտոնոմիա, պահանջում էին անցկացնել դեմոկրատական ընտրություններ։

Բազմամարդ, հուզումնալից միտինգները ծայր առան ամենուր։

Եվ ամենուր ընտրվեցին ներկայացուցիչներ՝ Ադրբեջանի համաժողովրդական հիմնադիր ժողովին մասնակցելու համար։

Մոտ երկու ամիս տևեցին այդ միտինգներն ու ժողովները։

Նոյեմբերի 20-ն էր։

Թավրիզի Շիրխուրշիդի սրահում հավաքվեցին ժողովրդի 700 ընտրյալներ։

Վերջապես հասել էր ըղձալի ժամը։

Այդ կոնգրեսը, ռեակցիայի դեմ տարվող պայքարի պայմաններում, ադրբեջանական ժողովրդին շատ բան պետք է տար։ Նա պետք է տար ազատություն, սովի ճիրաններում

տղաաղողներին օրվա հացը վաստակելու իրավունք, մատաղ սերնդին՝ մայրենի լեզվով կրթվելու, կուլտուրային հաղորդակից լինելու միջոցներ։

Իսկ այդ բոլորն ստանալու համար ժողովուրդը պետք է թոթափեր պարսկական հարստահարիչների լուծը, որ 600 տարի շարունակ կրում էր իր ուսերին։

Եվ այս անգամ էլ գործն առանց զենքի գլուխ չեկավ։ Միանեում, Արտաբիլի շրջանում, Սարաբում, Մարաշում և այլ տեղեր գյուղացիները զինաթափ արեցին ոստիկաններին, զինվեցին նրանց զենքերով։ Զենք ձեռք բերելու համար գյուղացիները ծախում էին անգամ իրենց լծկան անասունները։ Զինված գյուղացիները, պարտիզանական ջոկատներ կազմած, համախմբվեցին իրենց առաջնորդների շուրջը։ Շրթիցշուրթ անցան պարտիզանական առաջնորդների անունները։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎՏՈՆՈՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային մեծ հիմնադիր ժողովը որոշում ընդունեց ամբողջ Ադրբեջանում անցկացնել ազգային պառլամենտի ընտրություններ, որոնք պետք է ավարտվեին մինչև նույն տարվա դեկտեմբերի 3-ը։

Միաժամանակ ժողովը որոշեց իր պահանջների մասին տեղեկացնել Իրանի կենտրոնական իշխանությանը։ Ժողովը հատուկ հայտարարություն ներկայացրեց Հաքիմիի կառավարությանը, որ Ադրբեջանի ժողովուրդը, համաձայն Ատլանտյան խարտիայի, ցանկանալով տնօրինել իր բախտը, միաժամանակ չի խախտի Իրանի սահմանադրությունը։ Ադրբեջանի ժողովուրդը Իրանի բոլոր նահանգների պես ներկայացուցիչներ է ուղարկելու մեջլիս և մասնակցելու է արդարացի հարկերի վճարմանը»։

Ապա հայտագրում ասված էր.

«Ադրբեջանի ժողովուրդը ազատության և դեմոկրատիա-

յի համար շատ նեղություններ է քաշել ու զոհեր տվել, ուստի կամենում է իր ինքնավար իշխանությունը ստեղծել ճըշմարիտ դեմոկրատիայի հիմունքների վրա։ Դրա համար, ըստ կոնգրեսի կողմից վավերացված ներքին կանոնադրության, իր ազգային մեջլիսն է ընտրում և անհրաժեշտ է համարում, որ Ադրբեջանի ազգային ու ներքին իշխանությունն այս մեջլիսի ներկայացուցիչներից ընտրվի և նրա առաջ պատասխանատու լինի։

Դեկտեմբերի 12-ին բացվեց Հարավային Ադրբեջանի նորընտիր մեջլիսի անդրանիկ նիստը։

Մեջլիսն ընտրեց ազգային կառավարություն՝ հետևյալ կազմով։

1. Պրեմիեր մինիստր՝ Սեիդ Ջաֆար Փիշևարի.
2. Ներքին գործերի մինիստր՝ դոկտ. Սալամօլան Ջավիդ.
3. Ժողովրդական բանակի մինիստր՝ Ջաֆար Քավյան.
4. Երկրագործության մինստր՝ դոկտ. Մեհթաշ.
5. Լուսավորության մինիստր՝ Մոհամեդ Բիրիա.
6. Առողջապահության մինիստր՝ դոկտոր Օվրանգ.
7. Ֆինանսների մինստր՝ Ղուլամ Ռիզա Իլհամի.
8. Արդարադատության մինիստր՝ Յուսուֆ Ազիմա.
9. Ճանապարհների և փոստ-հեռագրի մինիստր՝ Բաբիրի.
10. Առևտրի և տնտեսության մինիստր՝ Ռասուլի։

Գերագույն դատարանի նախագահ ընտրվեց Ղիամին, իսկ գլխավոր դատախազ՝ Իբրահիմին։

Նույն օրը, առավոտյան ժամի 11-ին, քաղաքի ոստիկանությունը հանձնվեց նորընտիր կառավարությանը։

Մեջլիսի բացման առաջին օրվանից ժողովրդական միլիցիան իր դիրքերումն էր, պաշտպանում էր քաղաքի պետական հիմնարկությունները, հետևում էր կարգ ու կանոնին։

Ապա սկսվեց Ավտոնոմ իշխանության դեմ թշնամաբար տրամադրված բանակի զինաթափումը։ Արագ կերպով ստեղծվեցին կամավորական ջոկատներ։ Հազարավոր երիտասարդներ, զենք վերցնելով, ցանկացան պաշտպանել աշխատավորների շահերը։

Ամբողջ Հարավային Ադրբեջանում սկսվեց պատմության մեջ չտեսնված ազգային վերածնության մի շրջան։

Փիշևարու կառավարությունը շտապ միջոցներ ձեռք առավ անգործությանը վերջ տալու, անօթևան որբերին, ծերերին նյութապես ապահովելու, գյուղացիների, բանվորների կյանքի պայմանները բարելավելու, քաղաքները բարեկարգելու համար։

Ժողովրդական կուլտուրային, լուսավորության գործին զարկ տալու նպատակով Թավրիզում հիմնվեց պետական համալսարան, որի բոլոր ֆակուլտետներում դասավանդությունը տարվում էր ադրբեջաներեն լեզվով։

Համարյա միաժամանակ բացվեց գեղարվեստական տեխնիկում՝ արձանագործական, նկարչական, զարդագործական, երաժշտական բաժանմունքներով։

Քաղաքներում և գյուղերում իրար հետևից բացվեցին բազմաթիվ տարրական և միջնակարգ դպրոցներ։ Կազմակերպվեց նաև մեծահասակների անգրագիտության վերացման գործը։

Դրան հետևեց դրամատիկական թատրոնի բացումը Թավրիզում։

Ադրբեջաներեն լեզուն Հարավային Ադրբեջանում հայտարարվեց պետական լեզու, պետական որոշումները, օրենքները պետք է գրվեին ադրբեջաներեն։ Դատական մարմիններում, առևտրական, պետական հիմնարկություններում խոսակցական լեզուն դարձավ ադրբեջաներենը։

Կառավարությունը որոշում ընդունեց անապաստան երեխաների համար որբանոցներ բանալու և մուրացկանությունը վերացնելու մասին։

Ավտոնոմ կառավարությունը վճռական միջոցներ ձեռք առավ նաև աշխատավորների սանիտարական սպասարկման գործը կազմակերպելու ուղղությամբ։

Բացվեցին պետական հիվանդանոցներ, ուր բժշկությունը ձրի էր կատարվում։ Որոշում ընդունվեց կարճ ժամանակամիջոցում բուժել տրախոմայով հիվանդ երեխաներին։ Ապա

կազմվեց հատուկ հանձնաժողով՝ վեներական հիվանդներին գյուղերում և քաղաքներում հայտնաբերելու և նրանց բուժման գործը շուտափույթ կերպով կազմակերպելու համար։

Ամենից կարևորը դա հողազուրկ գյուղացիներին հողով ապահովելու գործն էր։ Հարավային Ադրբեջանում մոտ մի միլիոն գյուղացի հողազուրկ էին։

Երկու և կես ամիս տարվող նախապատրաստական աշխատանքից հետո ազգային կառավարությունն սկսեց հող տալ հողազուրկ գյուղացիներին։ Առաջին հերթին գյուղացիներին բաժանվեց այն կալվածատերերի հողը, որոնք փախել էին Ադրբեջանից և շարունակում էին պայքարել նոր կարգերի դեմ։ Այնուհետ գյուղացիությանն էին հատկացվում այն հողերը, որոնք անցյալում պատկանում էին պետությանը, իսկ Ռզա շահը վաճառել էր կալվածատերերին։

Անցյալում ընչազուրկ, մերկ, մի կտոր հացի կարոտ գյուղացին այժմ ստանում էր 5 հեկտար հող։

Մի շարք գավառներում գյուղացիները բնավ չէին սպասում կառավարական հանձնաժողովին, այլ իրենք իրենց նախաձեռնությամբ կազմակերպում էին հողաբաժանում։

Ամենուր տիրում էր չտեսնված խանդավառություն։ Աշխատավոր մասսաներն զգում էին, որ վերջապես երկրում ստեղծվել է մի կառավարություն, որը պայքարում է միայն և միայն նրանց շահերի համար։

Դա նկատվում էր ամեն քայլափոխում։

Շինարարական մեծ աշխատանք ծավալվեց նաև քաղաքներում։

Պարսկական տիրակալների քաղաքականության հետեվանքով կեղտոտ, հետամնաց Թավրիզում արագ թափով ծավալվեց մեծ շինարարական աշխատանք։

Ժողովուրդը լծվեց պետական շինարարական-ստեղծագործական մեծ աշխատանքի։

Գործարաններում, ֆաբրիկաներում, քաղաքի թաղամասերում անգրագետ բանվորներն ու բանվորուհիներն

աշխատանքից հետո իրենց ձեռքը վերցրին գիրքը, որպեսզի որքան կարելի է շուտ վերջ տան իրենց անգրագիտությանը, որքան կարելի է շուտ հաղորդակից լինեն ժամանակակից առաջավոր կուլտուրային։

Ազգային կառավարությունը ժողովրդի խաղաղ ստեղծագործ աշխատանքը պաշտպանելու համար կազմեց ժողովրդական բանակ։

Ժողովրդական բանակի մինիստրի 1946 թվի փետրվարի 4-ի № 1 հրամանում ասված էր.

«Ադրբեջանի ազգային շահերը պաշտպանելու համար, Ադրբեջանում պաշտոնապես կազմվում է ժողովրդական բանակ։

Ադրբեջանի ժողովրդական բանակն իսկական ժողովրդական բանակ է և ամեն մի ադրբեջանցի առանց կրոնի ու դասային խտրության պարտավոր է ծառայել։ Այս ծառայությունը յուրաքանչյուր անհատի սրբազան պարտականությունն է»։

Երիտասարդ սերնդի զորակոչը վերածվեց ժողովրդական մեծ տոնի։

Պատմության ընթացքում առաջին անգամ պետությունը զենք էր տալիս Իրանում ապրող ադրբեջանցու ձեռքը և ասում.

— Սովորի՛ր, մարզվի՛ր և պաշտպանի՛ր քո ժողովրդի շահերը։

Երիտասարդներն ազգային եռագույն դրոշի տակ ծնկաչոք երդվում էին հավատարիմ լինել իրենց ազգային շահերին։

Մեծ էր խնդությունը, աննկարագրելի էր ժողովրդի ցնծությունը։

Բայց թշնամիները քնած չէին։

Թեհրանի ռեակցիոներները տեսնում էին այդ բոլորը։

Դա անասելի ցավ էր պատճառում նաև անգլո-ամերիկյան իմպերիալիստներին։ Նրանք սկսեցին իրար խառնվել։

Առանձնապես անհանգիստ էին ամերիկյան իմպերիալիստները։

Նրանք իրենց մոտ հրավիրեցին Վաշինգտոնի Իրանի դեսպանին, ցանկանալով, նրա օգնությամբ, ողջ հանցանքը գցել Սովետական Միության վրա։ Չէ՞ որ Սովետական Միությունը խանգարում էր ամերիկյան իմպերիալիստների պլանների իրագործմանը, մանավանդ Իրանի հյուսիսային շրջանների նավթին տիրանալուն։ Չէ՞ որ նրանք՝ իմպերիալիստները դեռ 1944 թ. սկսեցին բանակցություններ վարել այդ նավթը գավթելու համար, իսկ նրանց խանգարեցին։ Խանգարեցին այն ժամանակ, երբ ուրիշները լիանում էին Իրանի հարստությամբ։ «Անգլո-իրանական» նավթային ընկերության իրավունքները տարածվում էին 250 քառակուսի կիլոմետրի վրա։ Այդ ընկերությունը միայն 1945 թվին տասնյոթ միլիոն տոննա նավթ հանեց։ Նրա բանվորների թիվը 60 հազարից անցավ։ Նա ուներ իր երկաթուղին, նավատորմը, նույնիսկ իր ոստիկանությունը։

Սա աշխարհին էր հայտնի։ Իսկ ամերիկացիներն Իրանում առայժմ վարձով աշխատող գործակալներից բացի համարյա ոչինչ չունեին։ Դրանք Ամերիկային խոստացել էին ամեն ինչ՝ հյուսիսի նավթը, հանքերը, օդանավեր, երկաթուղիներ կառուցելու իրավունք։ Ստացած գումարների դիմաց Իրանի ռեակցիոներները առայժմ քիչ բան էին արել՝ տեղավորել էին Միլսպոյի հետ եկած 60-ից ավելի խորհրդատուներին, խոստացել էին երկրի իշխանությունը շուտով տալ դրանց ձեռքը... և հենց այդ ժամանակ հանկարծ Իրանը ցանկանում է սովետա-իրանական նավթային ընկերության պայմանագիր կնքել։ Բացի դրանից, թույլ է տալիս, որ հյուսիսային ադրբեջանցիներն ստեղծեն իրենց ազգային իշխանությունը, տիրանան շատ հարստությունների։

Ոչ, այդ չպետք է լինի։

— Մենք այնպես կանենք, որ Իրանի հարցը քննվի Անվտանգության խորհրդում...— ասացին ամերիկացիները։ Ամերիկայում Իրանի դեսպան Հուսեյն Ալային շատ գոհ էր, որ իր տերերին մի բանով կարող էր ծառայել. նա դիմում գրեց և ներկայացրեց այնտեղ, ուր հրամայել էին։

Աշխարհի թերթերը, ռադիոն անվերջ խոսում էին Իրանի մասին։

Տագնապ, մինչ այդ չեղած, չտեսնված տագնապ էր իմպերիալիստների ճամբարում։

Ադրբեջանը գնում էր ձեռքից, ցանկանում էր ազատվել իմպերիալիստների ճիրաններից և իր համար ազատ կյանք վարել։

Եվ ի՞նչպես, ո՞վ էր թույլ տվել։

Ոչ, դա չպետք է լիներ, նրան պետք էր նորից շղթայով կապկպել։

Այստեղ ռեակցիան իր մատը դրեց Կավամ էս Սալթանեի վրա։

Այդ երիցս անիծյալ, արևելյան շողոքորթ երկերեսանին հանձն առավ հարթել իրերի վիճակը, հանձն առավ կատարել իր իմպերիալիստ տերերի ցանկությունը։

Դահիճը հրեշտակի ճերմակ թևերով թռավ Մոսկվա՝ դեմքին լպիրշ ժպիտ տալով, ձևանալով խաղաղության, ազգությունների համերաշխության բարեկամ։

1946 թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 4-ը նա մնաց Մոսկվայում, խոստացավ նպաստավոր պայմաններ ստեղծել՝ երկու երկրների միջև եղած փոխադարձ բարեկամական հարաբերություններն էլ ավելի ամրապնդելու համար։ Այս ասում էր նրա լեզուն, իսկ գլխում այլ մտքեր էին։

Նա ցանկանում էր որքան կարելի է շուտ ազատվել Սովետական Բանակի ներկայությունից։

Դա դահիճներին կաշկանդում էր։

Վերադառնալով Իրան, նա այսպես էլ ասաց թերթերի թղթակիցներին։

«Ամենակարևորը Սովետական զորքերի էվակուացիան է Իրանից։ Բոլոր մնացած խնդիրները կախված են այս հարցի հաջող լուծումից։ Ադրբեջանին վերաբերող հարցերը համեմատաբար ավելի քիչ կարևորություն ունեցող հարցեր են։ Ռուսական զորքերն Իրանից էվակուացնելու դեպքում դրանք կլուծվեն բանակցությունների կարգով»։

Հուդան ստում էր։ Նա ահավոր մտքեր ուներ Ադրբեջանում դեմոկրատական շարժումը խեղդելու մասին։ Առայժմ հարկավոր էր ստել, խաբել։ Նա չամաչեց նույնիսկ գրավոր սուտ հայտարարություններից։ Ապրիլի 4-ին Սովետական Միության դեսպան Սադչիկովին գրեց.

«Պարոն դեսպան.

Ի լրումն մեր միջև տեղի ունեցած բանավոր բանակցությունների, պատիվ ունեմ հաղորդելու Ձեզ, որ Իրանի նորին Մեծության Շահնշահի կառավարությունը համաձայն է այն բանի հետ, որ Իրանի և Սովետական Միության կառավարությունները ստեղծեն խառը Սովետա-իրանական ընկերություն՝ հետախուզելու և շահագործելու Հյուսիսային Իրանի նավթահանքերը»...

Իր սուտը համոզիչ դարձնելու համար նա նույնիսկ հիշատակել էր, որ եկամտի 49 տոկոսը կստանա Իրանը 51 տոկոսը՝ Սովետական Միությունը և որ ընկերության գործողության ժամկետն ընդունվում է 50 տարի։

Ինչ կա որ, սուտը ճշմարտության տեղ հրամցնելու համար այն պետք է համեմել մանրամասնություններով։ Արևելքի մեծ շեյթանը գիտեր ստել։Նա պատրաստ էր ամեն ինչ անել, միայն թե ազատվեր սովետական զորքերի ներկայությունից։

ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Սովետական զորքերը հավատարիմ մնալով Իրանի հետ կնքած պայմանագրին, 1946 թվի մարտ ամսին սկսեցին էվակուացիան։

Սովետական բանակի հրամանատարության՝ իրանական ժողովրդին ուղղած դիմումի մեջ, ի թիվս այլ բաների, ասված էր.

«Մնաք բարով, հարգելի բարեկամներ.

Այսօր մենք թողնում ենք հնագույն կուլտուրայի հայրենիք հանդիսացող ձեր երկիրը...

... Սովետական Միության և Իրանի ժողովուրդները չորս

տարվա սերտ համագործակցության պայմաններում իրար հանդեպ փոխադարձ հարգանքի, անկեղծ բարեկամության և անսահման վստահության զգացմունքներ են տածել։

Սովետական Միությունը և նրա հերոսական բանակը ապագայում էլ կանգնած կլինեն խաղաղության և խաղաղասեր ժողովուրդների ապահովության շահերի պաշտպանության դիրքում։

Մենք ձեզնից բաժանվում ենք որպես անկեղծ բարեկամներ։

Թող աճի և ամրանա սովետա-իրանական բարեկամությունը»։

Սրտառուչ հրաժեշտի օրեր էին։ Իրանական ժողովուրդըն այդ չորս տարվա ընթացքում համոզվել էր, որ Սովետական Բանակը դա աշխատավոր մարդկանց, ճնշվածների պաշտպան միակ բանակն է աշխարհում։

Դժվար էր անջատվել այդպիսի բարեկամից։

Ահա հերթը հասավ նաև Թավրիզին։

Դա 1946 թվի մայիսի 5-ին էր։

Երբեք, ոչ մի անգամ Թավրիզն իր ոչ մի բարեկամին այդպես սրտառուչ կերպով ճանապարհ չի դրել։

Ամեն տեղից ժողովուրդը շտապում էր դեպի Սաթթար խանի պողոտան, իր անկեղծ բարեկամին բարի ճանապարհ մաղթելու։

Փողոցներում, մայթերի վրա շարժվելու տեղ չկար։ Մարդիկ բարձրացել էին կտուրները, ծառերի վրա։

Քաղաքային այգու մոտ կառուցվել էր մի հաղթական կամար ու զարդարվել ընտիր գորգերով, Սովետական Միության առաջնորդների նկարներով, Ադրբեջանի և Սովետական Միության պետական դրոշակներով։

Ադրբեջանի ժողովրդական բանակի զինվորները երկու շարք պահակ էին կանգնել։ Յուրաքանչյուր քայլափոխում կանգնած էին ծաղկեփնջեր բռնած դպրոցական երեխաներ։

Ժողովրդական այդ չտեսնված հանդեսին մասնակցում էր հարյուր հազարից ավելի ազգաբնակչություն։

Նրանք մեր բանակայինների ավտոմեքենաների մեջ էին նետում ծաղկեփնջեր, չորացած մրգեր և այլ նվերներ։

Թավրիզը թնդում էր անցնող տանկերի, հրանոթների ձայներից, ժողովրդի բացագանչություններից։

— Բարի ճանապարհ մեր սիրելիներին...

— Մենք երբեք ձեզ չենք մոռանա...

— Փա՜ռք հերոսական Սովետական բանակին...

— Ողջույն Սովետական հերոս ժողովրդին, ողջույն մեծ զորավար Ստալինին։

Հուզմնալից, սրտառուչ տեսարաններ էին դրանք, որ երբեք չեն ջնջվի իրանական ժողովրդի հիշողությունից։

Հենց այն ժամանակ, երբ վերջին սովետական զինվորն անցել էր Ջուլֆայի կամուրջը, Կավամ-էլ-Սալթանեն բարձրանալով իր բազկաթոռից, սկսեց ձեռքերը շփել։

Վերջապես հասավ դեմոկրատիայի հետ հաշվեհարդարի նստելու ժամը։ Միայն թե ամեն ինչ խելոք չպետք է կատարվեր։ Հնարավոր չէր միանգամից հողմացրիվ անել այն ամենը, ինչ ստեղծվել էր դեմոկրատիայի երկար պայքարի հետևանքով։ Առանձնապես դա դժվար էր անել Հարավային Ադրբեջանում, ուր կար ուժեղ պարտիա, ժողովրդական բանակ։

Նա դեռ ցույց էր տալիս, որ ինքն իր խոստումի տերն է, որ ադրբեջանցիների հետ ամեն ինչ ցանկանում է խաղաղ ճանապարհով հարթել։

Իբր թե այդ նպատակով էլ Ադրբեջանի ժողովրդական կառավարության նախագահ Փիշևարուն հրավիրեց Թեհրան։

Տեր չեյթանը ձևացավ դեմոկրատիայի կողմնակից։ Նա հայտարարեց, թե ինքը ձեռք կառնի բոլոր միջոցները, որպեսզի հողի ռեֆորմը տարածվի Իրանի բոլոր նահանգների վրա։ Նա խոստացավ դրա հետ միասին պայքարել ողջ Իրանի դեմոկրատացման համար։ Հետևապես ի՞նչ կարիք կար Ադրբեջանում ստեղծել առանձին դեմոկրատական կառավարություն, երբ այդպիսի կառավարություն է

տեղծվելու հենց Թեհրանում, ի՞նչ կարիք կար ունենալ առանձին բանակ։

— Ես ձեռք կառնեմ շատ կտրուկ միջոցներ, որպեսզի ամբողջ Իրանը ընթանա դեմոկրատիայի ճանապարհով։

Իր հրեշավոր սուտը թաքցնելու համար նա նույնիսկ պայմանագիր կնքեց Ադրբեջանի կառավարության հետ։ Ըստ այդ պայմանագրի Ադրբեջանի Ազգային Պառլամենտ անունով ընտրված և կազմված մարմինը ճանաչվում էր որպես Ադրբեջանի նահանգային խորհուրդ, բանակն Իրանի բանակի մասն էր հաշվվում, ֆիդայի անվան տակ կամավորական խմբերը վեր էին ածվում ոստիկանության, միայն թե Ադրբեջանում նրանք այլ անուն պետք է կրեին։ «Ինչ վերաբերվում է Ադրբեջանում տեղի ունեցած դեմոկրատական շարժման հետևանքով գյուղացիների միջև բաժանված հողերին, որովհետև կառավարությունը սկզբունքով համաձայն է ամբողջ Իրանում պետական հողերը գյուղացիների միջև բաժանվելու տեսակետին, ուստի այդ ուղղությամբ կատարված բաժանումներն առանց արգելքի ճանաչում է և առաջին պատեհ առիթով սույն բաժանման վերաբերող օրինագիծը ներկայացնելու է պառլամենտի վավերացմանը»։

Կավամ-էլ-Սալթանեի կառավարությունը «թույլ էր տալիս» ադրբեջանցիներին միջնակարգ և բարձրագույն դպրոցներում դասավանդությունը տանել պարսկական և ադրբեջանական լեզուներով։

Կառավարությունը գիտեր, որ կազմում է կեղծ փաստաթուղթ, որի նպատակն է խաղաղ ճանապարհով ցրել Ադրբեջանի ազգային կառավարությունը, ժողովրդական բանակը, իսկ հետո դրանք խեղդել արյան մեջ։

Ադրբեջանցիներն իրենք էլ ցանկանում էին ամեն ինչ լուծել խաղաղ ճանապարհով, ուստի մնացին հավատարիմ իրենց ստորագրությանը։ Քիչ հետո Կավամ-էլ-Սալթանեի կառավարությունը նենգաբար նրանց դեմ հանեց կառավարական զինված ուժերը։

Իմպերիալիստների ցանկությունն այս անգամ էլ կա-

տարվեց։ Թեանկցիոն կառավարության գլխված ուժերը Թավ-րիզ մտնելով, հաշվեհարդար տեսան դեմոկրատների հետ։ Դեմոկրատներից նրանք, ովքեր ընկան նրանց ձեռքը, գնդա-կահարվեցին, կախվեցին...

Նորից Թավրիզի փողոցները արյունով ներկվեցին, նորից ազատագրական ժողովրդի համար սկսվեցին ծանր, անտանելի օրեր...

Այս մեծ ողբերգության հեղինակները մի օր սակայն կկանգնեն ժողովուրդների դատաստանի առաջ։ Նրանք թող լավ իմանան, որ ազատատենչ ազրբեջանական ժողովրդի սրտում պայքարի հուրը միշտ վառ կմնա։

Զարմանալի բաներ են կատարվում արևելյան մեծ քաղաքում՝ Թեհրանում։ Մարդասպաններն ու դահիճներն այստեղ կարող են մնալ անպատիժ, իսկ ճշմարտության կողմնակիցները պատժվում են։ Եվ այն էլ ի՜նչ պատիժներ։ Այդ պատիժների մասին լսելուց հետո փշաքաղված մտածում ես. «Մի՞թե խկապես Իրանի ոստիկանությունը, ժանդար-մերիան օտարերկրյա խորհրդատուների կարիք ունեն։ Մի՞թե աշխարհը չգիտի թե ի՜նչ ահավոր բաներ են կատարվում արևելքի այս քաղաքում։ Իսկ երբ գիտի, ի՞նչու չի բողո-քում միջնադարյան բարբարոսության, մարդասպանության քստմելի ձևերի դեմ»...

Քանի խոսք է եղել, ես պետք է պատմեմ այն ահավոր բարբարոսությունների մասին, որ կատարել են իրանական պատժիչ մարմինները և որոնց շեֆությունն այսօր իրենց վրա են վերցրել Ուոլլ-ստրիտի ներկայացուցիչները։ Թող ամբողջ աշխարհն իմանա, թե ամերիկացիներն Իրանում ո՞ւմ հետ են ձեռք-ձեռքի տված գործում, ինչի՞ համար են այսպես ջանասիրությամբ ձգտում ուժեղացնել իրանական ժանդարմերիան, ոստիկանությունը, որոնք իրենց դաժանու-թյամբ, սադիզմով կարող են մրցել աշխարհի բոլոր ոստիկա-նությունների հետ, բացառությամբ ամերիկյան ոստիկա-նության։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԻՐԱՆԻ ՀՊԱՐՏ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Թեհրանում կա Ղասր Ղաջար անունով վիթխարի մի զնդան, ուր տեղավորվում են երկրի տարբեր ծայրերից բերված կալանավորները։

Այդ զնդանի բորբոսնած պատերը, խոնավ խցիկները վկա են եղել հազարավոր մարդկանց անլուր տանջանքների։ Այդ զնդանում հազարավոր մարդիկ շշնջացել են իրենց կյանքի վերջին բառերը։ Հազարավոր մարդիկ այդտեղ տարիներ շարունակ հյուծվել են, ոսկրացել, վարակվել թոքախտով, տիֆով, թունավորվել... Տարիներ շարունակ այդտեղ տանջվել են և իրանական ժողովրդի հպարտ, հերոսական զավակները, իրանական դեմոկրատական շարժման ղեկավարները։

Ռեակցիան ցանկացել է ջնջել իր հանցագործությունների հետքերը, թաքցնել ազատության ճակատի մարտիկների դեմ կատարած զազրելի ոճրագործությունը, սակայն այդ նրան չի հաջողվել։ Նրան չէր հաջողվի թաքցնել և այնպիսի մի մարդու սպանությունը, ինչպիսին էր դոկտոր Էրանին։ Մինչ այդ, ընդամենը մի քանի օր առաջ, Ղասր Ղաջարի խցիկներից մեկում սպանվեց ժողովրդական բանաստեղծ, ազատագրական շարժման ակտիվ մասնակից Ֆարրուխին։ Դա այն Ֆարրուխին էր, որի շրթունքները Մահմեդ Ալի շահը կարել էր ու պտտեցրել Թեհրանի փողոցներում՝ մյուս ազատասերներին սաստելու համար։ Բայց հետագայում պարզվեց, որ երբ ջերմ, բոցաշունչ խոսքը բխում է սրտից, նույնիսկ կարված շրթունքները չեն կարող լռեցնել։ Շրթունքները կարելի է կարել, սակայն նրան կփոխարինի հուրհրատող սիրտը։ Այն, ինչ պետք է ասեին շրթունքները, մարդը կարող է գրել թղթի վրա, իսկ մեկ ուրիշը կկարդա։ Ազնիվ խոսք, սրանք տարրական բաներ էին, որ չգիտես ինչու՞ դժվար էր հասկացել Իրանի ոստիկանությունը։

Ուրիշ բան է էլեկտրական աթոռը...

Այո, ամերիկացի Շվարցկոպֆը ժամանակին էր հասել Իրան։ Իրանական ոստիկանությունը, չնայած իր հարուստ փորձին, նրանից շատ բան ուներ սովորելու։

Բայց մի կարևոր բան մինչև այժմ չեն հասկացել ո՛չ ամերիկյան և ո՛չ էլ իրանական դահիճները։ Կան մարդիկ, որոնք չեն մեռնում ո՛չ էլեկտրական աթոռի, ո՛չ կախաղանի, և ո՛չ էլ կրակի վրա։ Անգամ կրակի վրա այրելուց հետո բանից պարզվում է, որ նրանք ավելի են պայծառանում, նրանց անունը շրթից շուրթ է անցնում։ Դրանք ճշմարտության զինվորներն են, դրանք ժողովուրդների երջանկության, ազատության համար մարտնչող մարտիկներն են։

Իրանական ռեակցիան սպանեց իրանական Պրոմեթևսին։ Սպանեց շղթայակապ։ Սպանեց ոչ թե ժայռին, այլ բանտի խոնավ խցիկին գամած։ Նրա շուրջը խոնավությունից սունկ էր բուսնում։ Մարդու հայացքը դժվարությամբ էր թափանցում այդ մութ զնդանը։ Եվ ողաշահյան դահիճները կարծում էին, թե նրա մահվան մասին ոչ ոք չի իմանա։

Բայց ահա ժամանակները փոխվեցին և երբ մենք Իրանում էինք, նրա մասին շատերն էին խոսում։ Խոսում էին ջերմ սիրով, ափսոսանքով։ Եվ նրա՝ դոկտոր Էրանու մասին դեռ երկար կխոսեն, իրանական ժողովուրդը նրան երբեք չի մոռանա։ Իրանական ժողովրդի զավակները կքայլեն այն պողոտայով, որը կկրի դոկտոր Էրանու անունը, կսովորեն այն ինստիտուտում, որը կկոչվի նրա անունով։

Իսկ ո՞վ է դոկտոր Էրանին։

Նա ծնվել է 1902 թվին Թավրիզում։ Նախնական կրթությունն ստանալուց հետո նա մտնում է Թեհրանի ճեմարանը և 1920 թ. առաջին աշակերտի վկայականով ավարտում այն, ապա ընդունվում Թեհրանի բժշկական ինստիտուտը և 1922 թվին ավարտելով՝ մեկնում է Բեռլին։ Նույն տարվա ձմեռը հաճախում է Բեռլինի համալսարանը՝ որպես հասարակական գիտությունների ազատ ունկնդիր, իսկ 1923 թվին

պաշտոնապես արձանագրվում է փիլիսոփայական գիտությունների ինստիտուտում։ Ավարտելով դասընթացը և մինչև 1931 թիվը մնալով Գերմանիայում, դոկտոր Էրանին դասախոսում է Բեռլինի համալսարանում։

Այդ ժամանակամիջոցում նա կարողանում է ծանոթանալ ֆաշիստների հայացքներին, նրանց հրեշավոր նպատակներին և մինչև նրանց պետության գլուխ կանգնելն ատելությամբ է լցվում դեպի ֆաշիստները։

Վերադառնալով հայրենիք նա տեսնում է իրանական ժողովրդի ծանր, անտանելի վիճակը և իրեն նվիրում է նրա ազատագրության մեծ գործին։

Զբաղվարարվելով դասատվական աշխատանքով, նա հիմնում է «Դունիա» (աշխարհ) ամսագիրը։ Այդ ամսագրի հենց առաջին համարը, շնորհիվ իր ձախ սկզբունքների, իրանական նեխված իրականության մեջ պայթում է ռումբի պես և տեղի տալիս թշնամիների բազմաթիվ հարձակումների։

Էրանին, որպես պատասխան իր թշնամիների, գրում է. «Մենք գիտենք, որ հոսանքին հակառակ ենք լողում, բայց այնքան պիտի լողանք, մինչև մեր կարող բազուկներով շուռ տանք հոսանքը»։

Այս խիզախ մարտահրավերն ավելի է կատաղեցնում իրանական ռեակցիային։ Իրանում ոչ ոք մինչ այդ իրեն չէր հակադրել ընդհանուր հոսանքին։ Կատաղած թշնամիները նրան սկսում են քարկոծել ամեն կողմից։ Անվեհեր մարտիկ-գիտնականը չի վախենում, չի ցանկանում հրաժարվել իր հայացքներից։

Ոչ ոք նրան չէր քարոզել մարքսիզմ-լենինիզմ։ Նա ինքը, ուսումնասիրելով հումանիտար գիտությունները, համոզվել էր, որ մարքսիզմ-լենինիզմի գիտությունը ճշմարիտ գիտություն է աշխարհի վերափոխման, կապիտալիզմի կործանման, պրոլետարիատի հաղթանակի, ժողովուրդների ազատագրության մասին։ Հայտարարելով իրեն այդ աշխարհայացքի քարոզիչ, նա հենց սկզբից գիտակցել էր,

որ պետք է գնա հոսանքին հակառակ, որ պետք է կրի զրկանքներ, պետք է հալածվի։ Բայց այդ ամենը՝ և զրկանքները և հալածանքը և բանտարկություն, կախաղանի վտանգները չվախեցրին անվեհեր մարտիկին։ Ընդունելով նոր վարդապետությունները՝ մարքսիստական աշխարհայացքը, նա վաղօրոք հաշտվել էր այդ ամենի հետ։

Եվ ահա մարքսիստական փիլիսոփայության պրոպագանդայի համար էլ նրան 1937 թվին բանտարկեցին։

Ես դժբախտաբար չեմ կարողացել անձամբ կարդալ Էրանու պաշտպանական ճառը Թեհրանի դատարանում։ Բայց լսել եմ այդ մասին։ Ասում են՝ Էրանին դատարանում սառը ջուր է լցրել դատավորների գլխին։ Նա մերկացրել է իրանական ռեակցիային, ծաղրել է իր ագետ դատավորներին, որոնք չգիտեին, որ մարքսիստական փիլիսոփայությունը ժամանակակից առաջավոր գիտություն է, որը ժխտել չի կարելի, ինչպես չի կարելի ժխտել կյանքի գոյությունը երկրագնդի վրա։

Իրանական ռեակցիան սոսկալով Էրանու քարոզած հայացքներից, նրան զնդան նետեց։ Դրանով չբավարարվեց։ Զնդանում էլ Էրանին, թեկուզ շղթայակապ, վտանգավոր էր։ Այդ վիճակում, խոնավ խցիկի մեջ, նա չէր հրաժարվում իր հայացքներից։ Հենց դրա համար էլ ոստիկանությունը որոշեց վերջ տալ Էրանու կյանքին։ Նրան թունավորեցին բծավոր տիֆով, բայց գտան, որ դա քիչ է, ուստի այդ վիճակում գանակոծեցին։ Հետո գտան, որ այդ էլ քիչ է՝ հիվանդ վիճակում թունավորեցին։ (Տեսնու՞մ եք ինչ տարրական ձևերով են վերջ տվել այդ գիտնական մարդու, ժողովրդի բարեկամ Էրանու կյանքին։ Այսքանից հետո Շվարցկոպֆն ի՞նչպես չշտապեր Իրան՝ տեղի դահիճների որակը բարձրացնելու համար)։

Էրանին մեռավ 1940 թվի բահմանի (փետրվարի) 14-ին։

Իրանական դահիճները մի բան հաշվի չէին առել։ Դոկտոր Էրանին արդեն մենակ չէր։ Հենց նույն օրը Ղասր Ղաջար բանտում վերահսկիչներից գաղտնի հավաքվեցին

Էրանու ընկերները՝ քաղաքական բանտարկյալները, մեկը սկսեց խոսել։

— Ընկերներ,— ասաց նա,— մենք կորցրինք մեր ամենալավ, ամենից համարձակ, ամենից անձնազոհ և պայքարող ընկերներից մեկին, որի նմանը մենք մեր մեջ չունենք։ Ռզա խանի ոստիկանությունն սպանեց նրան։ Ամենածանր մոմենտներին Դր. Էրանին մեզ ոգևորողն էր, մեզ կյանքի և պայքարի կոչողը։ Ոստիկանությունը դիտմամբ խլեց մեզնից մեր ամենասիրելի ընկերոջը։ Մեզ համար այս ծանր ժամին խոսք տանք միմյանց, որ շարունակելու ենք մեր պայքարն Իրանի ազատ և լավ կյանքի համար։ Այս բահմանի (փետրվարի) 14-ը մենք հիշելու ենք ամեն տարի։ Իրանի ազատագրական պայքարի զոհերի հիշատակի օրը կլինի բահմանի 14-ը»։

Հետագայում, երբ մենք արդեն Իրանում չէինք, իրանական ռեակցիոներները, ամերիկացիների անմիջական խորհուրդներով, ադրբեջանական դեմոկրատների հետ ավելի դաժան վարվեցին։ Ադրբեջանցի դեմոկրատներին նրանք կախեցին Թավրիզի փողոցներում։ Բայց հայտնի է, որ ոչ մի դաժանություն պատմության անիվը շուռ տալ չի կարողացել։

Ինչ էլ լինի, համենայն դեպս իրանական հասարակայնության լայն շրջաններում շատ լավ հասկանում են ամերիկյան խորհրդատուների իսկական արժեքը։ Դոկտոր Էրանուն սպանող դահիճների նոր ուսուցիչները արժանացել էին իրանական դեմոկրատիայի ատելությանը։

Թեհրանի գմբեթների, սոսիների տակ այդ բանը թերևս վատ է զգացվում, որովհետև շատ խայտաբղետ է Թեհրանի բնակչության կազմը։

ԿԵՆԴԱՆԻ ԿԱԴԵՏԸ ԵՎ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ «ՀՈՒՄԱՆԻՍՏԸ»

Կադետների մասին ես միայն գրքերում էի կարդացել։ Գիտեի, որ նրանք եղել են Սոցիալիստական Մեծ ռևոլյու-

ցիայի ոխերիմ թշնամիները, ՛ վենքը ձեռքին պայքարել են սովետական նորաստեղծ իշխանության դեմ և ջարդ ու փշուր են եղել, ոչնչացվել։

Այսպիսով։

Կյանքում երբեք կենդանի կադետ չէի տեսել և ինձ թվում էր, թե նրանք վերացել են աշխարհից։

Բայց ահա Թեհրանում մենք տեսանք կենդանի կադետի և մի պահ ինձ թվաց, թե այդ Թեհրանը վաղուց ջախջախված պարտիաների, մարդկության պրոգրեսի թշնամիների մի թանգարան է։ Պետք է ասել, որ այդ կադետը բավական հետաքրքրական էքսպոնատ էր։ Գլուխը ճաղատ էր, բոլոր ատամները թափված էին և ոսկով փոխարինված, աչքերի անկյուններից ակոսների խուրձ էր կախված, ինքը քիչ կուզ էր, բայց ցանկանում էր ուղիղ կանգնել։ Այստեղ նա խմիչքների խանութ ուներ՝ նախաճաշարանի հետ։ Անգործությունից կանգնած խանութի առաջ՝ անցորդներին հրավիրում էր ներս։ Մեզ տեսնելով նա դեմքին խորամանկ ժպիտ խաղացնելով, հրավիրեց։

— Համեցե՛ք, համեցե՛ք, պարոններ։

Մենք ստիպված ետ նայեցինք, տեսնելու համար, թե մեր հետևից գալի՞ս են արդյոք ուրիշ պարոններ։ Ոչ ոք չկար։ Միաժամանակ մեզ զարմացրեց այդ մարդու մաքուր ռուսերենը, արտաքինով նա շատ նման էր իրանցիներին։ Նրա կողքին նստած էր նույնպես բավական տարիքոտ, արծվաքիթ, ակնոցավոր մի մարդ՝ ձեռքին բռնած հայերեն դաշնակցական մի թերթ։ Այդ ամենը նկատելով ես հեգնանքով ասացի.

— Այնպես եք հրավիրում, կարծես ամեն ինչ ձեզ մոտ ձրի է։

— Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ, ռուսական սպաներին կարող եմ և ձրի տալ։

Ես ցանկացա իմանալ նրա կեղծավորության պատճառը։

— Այդ ինչո՞վ բացատրել ռուսական սպաների նկատմամբ ունեցած ձեր սերը։

Մարդու ժպիտը մի րոպե աղճատվեց ,ապա նա իրեն գտնելով ասաց.

— Չէ՞ որ հայրենակիցներ ենք։ Ես Ռուսաստանից եմ եկել այստեղ։ Ինքս էլ ձեզ մոտ կադետ եմ եղել, բայց դուք երիտասարդներ եք, չեք իմանա ինչ բան է կադետ։

Ընկերս, որ միշտ էլ սիրում էր սուր կատակներ, իսկույն պատասխանեց.

— Ինչպես թե չենք իմանում։ Կադետ նշանակում է՝ контрреволюционный драпальщик в экзотическом Тегеране.

Մարդը ձևացրեց, որ դրանից չի վիրավորվում և նույն խորամանկ ժպիտով ասաց.

— Տեսնու՞մ եք, որ չգիտեք։ Ախր դուք այն ժամանակ երևի երկու-երեք տարեկան եք եղել։

Ես շտապեցի նրա վրա սառը ջուր ածել.

— Նա կատակ է անում և շատ լավ գիտի։ Կադետների պարտիան բուրժուական կոնտրռևոլյուցիոն պարտիա էր, որն իրեն անվանում էր կոնստիտուցիոն դեմոկրատ և ցանկանում էր տապալել Սոցիալիստական ռևոլյուցիան մեր երկրում, բայց չկարողացավ։ Ռևոլյուցիոն պրոլետարիատը ջարդ ու փշուր արեց այդ պարտիային։ Իսկ թե նրա անդամներից քանիսն են հասել Թեհրան, այդ մենք չգիտենք։ Երևի դուք եք և ձեր ընկերը։

Կադետը նորից ձևացրեց, թե չի նեղանում և պաշտպանեց ընկերոջը։

— Ոչ, նա կադետ չի եղել։ Նա հումանիստ է եղել։

— Ա՜, հումանի՞ստ։ Այդ դեպքում այդ թերթում հումանիզմ միք փնտրի, դաշնակցականների մոտ այն երբեք չի եղել։

Ակնոցավոր մարդը նույնպես ցանկացավ ժպտալ, բայց այդ նրան չհաջողվեց։ Նա թերթը խնամքով ծալելով ասաց.

— Է, հիմա ի՞նչ դաշնակցական։

Ընկերս հարցրեց ինձ.

— Իսկ դաշնակցականները հայկական կադետնե՞րն են։

Նա քաշեց նրա թևը, ասելով.

— Ավելի վատերն են, գնանք։

Նա պարզ տեսնում էր, թե ինչպես երկու ընկեր իրար շատ լավ գտել են։ Նրանք այդ պահին մեզ հետ խոսում էին կեղծ ժպիտները դեմքերին։ Սովետական Միության ոխերիմ թշնամիներն ստիպված էին մի առ ժամանակ, քանի մեր բանակն այնտեղ էր, բռնել քծնանքի ճանապարհը։ Դրանց թվին էին պատկանում և դաշնակցականները։ Դրանցից ոմանք ձևացնում էին, թե իրենք իբր այլևս ոչ մի կապ չունեն դաշնակցության հետ։ Մինչդեռ հայ ժողովրդի այդ ոխերիմ թշնամիները դաշնակցության կենտրոնի հետ կապ էին պահպանում օտար մի դեսպանատան միջոցով և երբ աշխարհում ցրված հայերը հարց էին բարձրացնում Թուրքիայից վերցնել հայկական գավառները և տալ Սովետական Հայաստանին, ապա դաշնակցականները, անգլիական իմպերիալիստների թելադրանքով, քարոզում էին ստեղծել բուրժուական Հայաստան՝ Թուրքիայի հովանավորության տակ։

Երբ դաշնակցության մասին խոսք է լինում, ես հիշում եմ մեր գյուղը, ուր անց եմ կացրել իմ մանկությունը։ Զանգեզուրի Խնձորեսկ գյուղն է դա։ Այդտեղ դաշնակցականներն իմ և մյուսների աչքի առաջ հինգ հոգու գնդակահարեցին միայն նրա համար, որ համարձակվել էին բոլշևիկներին օգնել։ Իմ ավագ ընկերոջ Սամսոնի մայրը՝ Սոնան էլ դրանց մեջ էր։ Ատրճանակներից իջնելիս նա ցանկացավ դիմել ժողովրդին, բայց դաշնակցական սպայի սուրն իջավ կնոջ վզին։ Մեր ամբողջ գյուղը սիրում էր իմ տատիկին։ Բայց նրանք այդ բարի, սիրելի կնոջը ծեծեցին միայն նրա համար, որ նա չէր ցանկացել մեզ՝ որբերիս համար պահած գարին տալ նրանց ձիերին։ Դաշնակցության անունը լսելիս հիշում եմ Շուշի քաղաքը։ Դա իր մեծությամբ Անդրկովկասում երրորդ քաղաքն էր։ Բայց

ավերվեց՝ դաշնակցականների կողմից կազմակերպված ազգամիջյան կռիվների պատճառով։ Նրանք ցանկացան մեզ թշնամացնել մեր հարևան ժողովուրդների՝ ադրբեջանցիների, վրացիների հետ, որոնք դարերով եղել են մեր ամենամոտ բարեկամները։ Դաշնակցությունը հայ ժողովրդի ամենաոխերիմ թշնամին է։ Նա կարճ ժամանակամիջոցում Հայաստանը հասցրեց կատարյալ աղքատության, սովի դուռը։ Նա զենքը ձեռքին կռվեց հայ ժողովրդին փրկող Կարմիր Բանակի դեմ, բայց ջարդ ու փշուր եղավ, փախավ արտասահման և այդտեղ մտավ Սովետական Միության ամենաոխերիմ թշնամիների շարքերը։

Ահա թե ովքեր են դաշնակցականները։

Իրանում նրանք այդ տարիներին վախենում էին ձայն հանել նաև այն պատճառով, որ տեղի հայ աշխատավորությունն ատելությամբ էր լցված դեպի այդ պարտիան։ Բազմաթիվ փաստեր էին բերում, թե ինչպես նրանք իրանական գաղտնի ոստիկանության լրտեսների դեր են կատարել։ Նրանք վախենում էին իրենց արյունոտ մռութները ցույց տալ և այն պատճառով, որ Սովետական Բանակը, ֆաշիզմի դեմ մղած պայքարում, իր հերոսությամբ ցնցել էր աշխարհը։ Ամենուր Սովետական Բանակի, սովետական ժողովրդի մասին խոսում էին խորին սիրով ու հարգանքով։ Եվ մի՞թե պարզ չէ, թե ինչո՞ւ դաշնակցականներն ստիպված էին թաքնվել անմեղ մարդկանց, նույնիսկ հումանիստների (ի՜նչ ահավոր խաբեություն) անվան տակ։

«ՄԵՆՔ ՆԱԽԱՆՁՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ»

Թե ինչպիսի սեր էր վայելում մեր հերոսական բանակը, մեր հերոսական ժողովուրդը արտասահմանում, այդ շատ լավ կարելի էր տեսնել և զգալ նաև Իրանում։ Դժվար է մեկ առ մեկ պատմել բազմաթիվ այն փաստերի մասին, երբ Իրանի աշխատավոր մարդիկ, խոսելով սովետական ժողովրդի, սովետական կարգերի մասին, բառեր չէին գտնում

իրենց հիացմունքն արտահայտելու: Մեզ մոտ, սովետական երկրում, աշխատավորները թերևս հաճախ առանձին նշանակություն չեն տալիս, որ տարեկան մի ամիս արձակուրդ ունեն, կարող են գնալ հանգստյան տուն, սանատորիա, որ աշխատում են ութ ժամ, ձրի բուժվում են, չեն մտածում գործազրկության մասին, որ երեխաները պարտադիր պետք է սովորեն դպրոցում և հազար նման բաներ, որոնցից զուրկ են կապիտալիստական երկրների աշխատավորները: Ես էլ, քանի չէի տեսել աշխատավորների վիճակն արտասահմանում, այդ ամենի մասին առանձնապես չէի մտածում: Այդ ամենը մեզ թվում է բնական, որովհետև աչք բանալու օրից այդպես էլ տեսել ենք, սովորել այդ բոլորին: Բայց ես խոսել եմ կաշեգործարանի մի բանվորի հետ, որը տասներկու տարվա ընթացքում ոչ մի անգամ արձակուրդից չէր օգտվել: Այդքան ժամանակամիջոցում նրա ձեռքերից կաշվի ներկը չէր մաքրվել, որովհետև մի անգամ լվացվելով ներկը չէր մաքրվում. օրական նա աշխատում էր տասը ժամ: Երկար ժամանակ խոնավ ցեխում աշխատելուց հիվանդացել էր ռևմատիզմով, բայց դեռ աշխատում էր և սոսկումով մտածում այն օրվա մասին, երբ ինքն այլևս չի կարողանա աշխատել: Ընդհանրապես կապիտալիստական աշխարհում մենակության զգացումից կարելի է խեղդվել: Իսկ այդ մենակությունն ավելի զգալի և ահավոր է դառնում, երբ մարդ կորցնում է աշխատունակությունը, երբ նրան դժբախտ մի դեպք է պատահում:

Այդ ահա բանվորը, չգիտեմ որտեղից, իմացել, լսել էր մեր աշխատավորների վիճակի մասին, նա ինձ ասում էր.

— Ես լսել եմ, որ երբ ձեզ մոտ բանվորը կորցնում է աշխատունակությունը, նրան մինչև կյանքի վերջը թոշակ են տալիս:

— Այո,—ասացի նրան,—թոշակ են նշանակում, ձրի ուղարկում են բուժվելու, դրա հետ միասին աշխատում են մի թեթև գործ տալ՝ եթե ինքը համաձայնությամբ ցանկանում է: Այդ դեպքում նա և՛ թոշակ է ստանում և՛ աշխատավարձ:

Այդ մարդը սևեռուն հայացքով մի պահ տխուր նայեց ինձ ու հեռուն և ասաց.

— Դրա համար էլ մենք բոլորս նախանձում ենք ձեզ։

Դա ինձ չէր զարմացնում։ Նման խոսքեր ես առաջին անգամ չէի լսում։ Բազմաթիվ մարդիկ, ուրիշ առիթներով նույն միտքն էին կրկնում, մեզ ասում էին այնպիսի բաներ, որոնց մասին թերևս մենք չենք մտածում։

Նրանցից, այդ աշխատավորներից, անգործ, թշվառ մարդկանցից շատերը գիտեին, որ Սովետական երկրում կապիտալիստներ, շահագործողներ չկան։ Հանդիպելով մեր զինվորներին, նրանք խոսում էին բարեկամորեն։ Երբ լեզուն չգիտեին, ողջույնի փոխարեն միայն ասում էին.

— Մարշալ Ստալին։

Եվ բարեկամաբար, ջերմ ժպտում էին։

Թեհրանի ճաշարաններից մեկում, որի տերը պատին փակցրել էր Ստալինի նկարը, ես հանդիպեցի ավազի գույնի վերնաշապիկ և կարճ, մինչև ծնկները շալվար հագած մի հնդկացի զինվորի։

Ճաշարանի տերն ինձ ասաց, թե այդ հնդկացի զինվորը գալիս է այստեղ ճաշելու նրա համար, որպեսզի նայի Ստալինի նկարին։ Նստում է աթոռին և շարունակ մտախոհ նայում նկարին։

Ես հնդկացի զինվորին հարցրի.

— Իսկ դուք գիտե՞ք ում նկարն է դա։

Հնդկացու աչքերում ուրախության բոց շողաց.

— Իհարկե։ Նա մեր բարեկամն է։ Հնդկաստանում մարշալ Ստալինին շատ են սիրում։

Հետո նա ավելացրեց.

— Շատ ցավում եմ, որ ես այստեղ չեմ եղել, երբ մարշալ Ստալինն այստեղ էր։

Հպարտության զգացում էր պատում մեզ, երբ լսում էինք նման խոսքեր։ Հեռավոր, բազմամիլիոն Հնդկաստանում մեր սիրելի առաջնորդին սիրում էին նրա համար, որ զգում էին, թե ինչպես նա աշխատում է նրանց տեսնել

իմպերիալիստների ծանր լծից ազատագրված։ Իսկ մենք մեր ամբողջ կյանքում վայելում էինք այն ազատության պտուղները, որը մեզ համար բերել և ապահովել էր Ստալինը։ Նա մեր հեռավոր բարեկամը չէր, այլ մեր հարազատը, որ մեզ ապահովել էր նյութապես, կրթել, դաստիարակել, դարձրել մի մեծ, անհաղթելի, հզոր երկրի տերեր։ Հնդկացին իր սիրտն գոհացում էր տալիս մեծ մարդու նկարին նայելով, իսկ մենք նրան քանի՜-քանի՜ անգամ տեսել էինք Մոսկվայի Կարմիր հրապարակում, թրթռացող սրտով անցել նրա մոտով, պատասխանել նրա հայրական ողջույններին։ Եվ մի՞թե մենք կարող էինք չհպարտանալ նրանով, որ աշխարհի բոլոր անկյուններում, նաև այդ բազմամիլիոն Հնդկաստանում, սիրված մարդը մեր առաջնորդն է, մեր հարազատը։ Ահա կթողնենք Իրանը, կգնանք հայրենիք և մի առիթով, երբ լինենք Մոսկվայում, նրան նորից կտեսնենք մոտիկից, շատ մոտիկից՝ ժպիտը դեմքին, ձեռքով մեզ ողջունելիս։

Դուք, սիրելի ընկեր հնդկացի, անշուշտ կարող եք նախանձել մեզ։ Եվ միայն դուք չեք նախանձում։ Աշխարհում մեզ շատերն են նախանձում։ Ինչ կա որ, երջանիկներին միշտ էլ նախանձել են։ Բայց մենք չենք թաքցնում մեր երջանկության գաղտնիքը։

Մենք ձեզ, բոլոր մեր հեռավոր բարեկամներին, աշխարհի բոլոր ճնշվածներին ասում ենք, թե ինչպես ձեռք բերինք մեր երջանկությունը։

Մեր հայրերը հանուն ազատության չխնայեցին իրենց արյունը և Լենինի—Ստալինի դրոշի տակ պայքարեցին բոլոր տեսակի շահագործողների, իմպերիալիստ-զավթիչների դեմ, կործանեցին բուրժուական կարգերը, հաստատեցին իրենց պետությունը։ Իսկ մենք չխնայեցինք մեր արյունը մեր սրբազան հայրենիքը ներխուժած, մեզ ստրկացնել ցանկացող ֆաշիստների դեմ տարվող պայքարում, դուրս վռնդեցինք զավթիչներին մեր երկրից, ջարդ ու փշուր արեցինք նրանց։ Դա մեզ հաջողվեց, որովհետև մեր գլխի վերև միշտ փող-

փողում էր կոմունիստական պարտիայի, Լենինի—Ստալինի պարտիայի դրոշը։

Ահա մեր երջանկության գաղտնիքը։

Այստեղ, Թեհրանում, մենք ցավով էինք տեսնում մարդկանց թշվառությունները։ Այն ամենը, ինչ մենք տեսնում էինք այստեղ, մեր շուրջը, մեր երկրում մեզ թվացել էր վաղուց մոռացված, ծանր ու տխուր մի հեքիաթ՝ անցյալի մասին։

Հենց այդ պատճառով էլ մեր սիրտը լի էր մեր սրբազան, մեր սիրելի հայրենիքի նկատմամբ ունեցած կարոտով։

Արևելքի մեծ քաղաք Թեհրանը թողնելով աշնանային մշուշի մեջ, ճանապարհվեցինք դեպի Կասպից ծովի հարավային ափերը։

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՓԵՐԻՆ

Նույն ճանապարհով չպետք է վերադառնայինք։ Կասպից ծովափ կարելի է հասնել նաև ուրիշ ճանապարհով։ Այն սկիզբ է առնում Քերեջ ավանից, անցնում Ալբորզ լեռնաշղթայի վրայով և հասնում Չալուս կոչված քաղաքատիպ ավանին։

Ավտոճանապարհը Քերեջից ծովելով անցնում է քարքարոտ, մերկ լեռների արանքով ու խոր ձորերով։ Ճանապարհն այստեղ երբեք չի հեռանում Ալբորզ լեռնաշղթայի կատարից հոսող գետից։ Եվ նույնիսկ անկարելի էր այն հեռացնել։ Շուրջը բոլոր լեռներ են՝ մռայլ, մերկ, գույնզգույն լեռներ։ Ձորերում սղմված գետն անկարող է եղել կյանք տալ ոչ միայն իր շրջապատի լեռներին, այլև իր ափերին։ Թեհրանի հարթավայրին նայող բարձր այդ լեռների վրա շարունակ արշավում են տաք հոսանքներ, խլում եղած խոնավությունը, մահվան դատապարտում տեղի բուսական կյանքը։

Գետի աջ ու ձախ ափերին երբեմն միայն երևում են քղաչափ հարթ տարածություններ, ուր ունկված են բարակ, լղարիկ ոսիններ։ Ըստ երևույթին դրանք վառելափայտի կամ գեղեցկության համար են։ Շատ ձանձրալի է երկար ժամանակ պտտվել բուսականությունից զուրկ լեռների մեջ՝ մոտ 80 կիլոմետր բարձրանալ լեռների, կիրճերի արանքով, հասնել ծովի մակերևույթից 2800 մետր բարձրության և ոչ մի տեղ չտեսնել կանաչ։ Այստեղ էլ ճանապարհից դեպի աջ կամ ձախ արահետներ չկան։ Դա նշան է, որ լեռներն անմարդաբնակ են։ Անգամ վայրի կենդանիներից ու թռչուններից շատերը հրաժարվել են այստեղ ապաստան գտնելուց։

Հետագայում իմացանք, որ լեռնաշղթայի վերին մասերում վխտում են վայրի այծերի հոտեր։ Իսկ ներքևի մասում կարելի էր տեսնել միայն վայրի աղավնիներ։

Ահա այսպիսի տեղերով է բարձրանում ճանապարհը Քերեջից դեպի Սլբորզի բարձունքները։ Սակայն ճանապարհը լեռնաշղթայի ամենաբարձր կետին չի հասնում։ Անհնարին է այն հասցնել համարյա տարին բոլոր ձյունով պատած բարձունքին։ Առանց այն էլ այս ճանապարհը պիտանի է միայն ամռան ամիսներին։

Վաղ աշնան վերին մասերում իջնում է ձյունը, փակում ճանապարհը։ Գարնանը, երբ պետք է ձյունը հալչի, բարձր սարերի գագաթներից ձյան վիթխարի շերտերը պոկվելով՝ ահավոր աղմուկով ցած են գլորվում, ճանապարհը դարձնում լեռների թեք լանջեր։ Տեղ-տեղ նույնիսկ ոտքով անհնար էր անցնել ավտոմեքենայի այդ ճանապարհով։ Տեղ-տեղ ձյան սահանքը շատ երկար է տևում։ Դրա համար էլ ճանապարհի վրա պատրաստված են ցեմենտի սրահներ, որպեսզի ձյան շերտերը ներքև գլորվելիս դրանց վրայով անցնեն։

Դժվար ճանապարհ է։

Նրա վերին մասում, երբ ամռան շոգից թեհրանում քնել չի լինում, մարդիկ մրսում են ցրտից։ Գետի ակունքների մոտ մատդ ջրի մեջ պահել չես կարող, սառչում է։ Այս-

տեղ, Թունելին շատ մոտ, Գիշեռար կոչված վայրում շահն իր համար հյուրանոց է կառուցել։ Հյուրանոցի շուրջը բարձրացել են և մի քանի ուրիշ շենքեր՝ գարաժը, ճաշարանը, սպասավորների գիշերելու շենքը, մի նրկու խանութ։ Շահի ապարանքի միջով հոսում է գետակը, որի ափին երկինք են ալանում սոսիներ։ Աջ ափին մի թզաչափ հող էլ կա՝ բանջարանոցի համար։ Ահա այն ամենը, ինչ ուղևորը կարող է տեսնել Գիշեռար կոչվող ավանում։

Տեղացիներից այդտեղ մշտապես ապրում էին երեք-չորս ընտանիք՝ հյուրանոցի վիրեկտորը, խանութպանը, երկու բանվոր։ Այդ օրերին այդտեղ կանգ էին առել ճանապարհին հետևող սովետական զինվորները, որոնք գիշեր-ցերեկ աշխատում էին, նորոգում ,մաքրում ճանապարհը ձյունից։

Դա աքսորավայրի նման մի տեղ էր, մինչև այդտեղ աշխատում էին, բնության արհավիրքների դեմ մաքառում սովետական անվեհեր մարտիկները։ Նրանց անձնազոհության ու տոկունության մասին անշուշտ պետք է գրել։ Բայց դա մեկ ուրիշ առիթով։ Առայժմ ասենք միայն, որ շնորհիվ այդ զինվորների անխոնջ աշխատանքի, Քերեջ-Չալուս ճանապարհն իր գոյության ընթացքում առաջին անգամ աշխատում էր ողջ տարին։ Իսկ, պետք է ասել, ճանապարհից մեծ մասամբ օգտվում էին իրանցիները։

ԱՄԵՐԻԿՅԱՆ «ՏՈՒՐԻՍՏՆԵՐ»

Այս անգամ հասնելով Քերեջ, ավտոմեքենան կանգնեցրինք իրանցու խանութի առաջ՝ մի-մի բաժակ օղի խմելու համար։ Չորս հոգով ներս մտանք, խանութը լիքն էր ամերիկացիներով։ Սեղանների շուրջը նստած էին յոթը զինվոր, երկու սպա և երկու չգիտես ինչ ազգի պատկանող ռուսախոս աղջիկ՝ ոտից մինչև գլուխ հագնված ամերիկացի տուրիստների զգեստ, զինված հեռադիտակով, արևից պաշտպանվելու համար գունավոր ակնոցներով, ֆոտոապարատներով։ Սպաները կրում էին նաև անձնական զենքեր։

Այդքան մեծ խմբի երևալը սովետական զոնայում շատ տարօրինակ էր, ուստի ես չհամբերեցի, հարցրի.

— Ի՞նչ առիթով եք բարեհաճել այս կողմերը։

Սպաներից մեկը, որ սուր քիթ ու խորամանկ, կասկածելի հայացք ուներ, ըստ երևույթին օղու ազդեցության տակ, ասաց.

— Էքսկուրսիա ենք եկել, ձեր կողմերը հրաշալի են, եթե մենք լինեինք, երբեք այստեղից չէինք հեռանա։

— Այդ ո՞ր տեղերն են մեր կողմերը,—հարցրի նրան։

— Այ, Թունելից այն կողմ, լեռնաշղթայի մյուս լանջը, վայրէջքը՝ մինչև Ջալուս, հենց ինքը Ջալուսը, Ռամսարը...

— Միստր կապիտանը մոռանում է, որ լեռնաշղթայի և՛ այս և՛ այն կողմերը մերը չեն և չեն կարող լինել։ Դրանց տերերն իրանցիներն են։

Կապիտանն իրանցիների անունը լսելիս արհամարհանքով թափ տվեց ձեռքը և ապա նույն արհամարհանքով խանութպանի գլխարկը քաշեց աչքերին։ Այդ մարդը երկար ժամանակ այդքան փողեր չունենալով, այժմ իրեն զգում էր յոթերորդ երկնքում, ամերիկացիներին սպասարկում էր ծառայի պես։ Նրա հեզ դեմքին քաշած գլխարկը մի պահ միայն Թցրեց ժպիտը։ Գլխարկը բարձրացնելով նա ատամներն ավելի բացեց, իսկ կապիտանին ասաց.

— Սա՛ է տերը։

Կապիտանի արարքն ամերիկացիների մեջ ծիծաղ առաջ բերեց։ Ջծիծաղեցին միայն երեք զինվոր։ Նրանք զբաղված էին պահածոյի տուփից երշիկ հանելով։ Այդ երեք զինվորները ձեռքով ինչ որ նշաններ էին անում մեր շոֆերին, հրավիրում խմելու, մինչդեռ նա ճանապարհին մի կաթիլ անգամ խմիչք չէր խմում։

Ինձ համար պարզապես վիրավորական էր ամերիկացի կապիտանի վարմունքն իրանցու հետ։ Ես չկարողացա զսպել ինձ և հարցրի.

— Եթե ձեր երկրում մի օտարերկրացի ձեզ հետ այնպես վարվեր, ինչպես վարվեցիք այս մարդու հետ, դուք ի՞նչ կանեիք։

— Ես նրանից աղած միս կպատրաստեի։ Բայց այս անասունը երազում էլ Ամերիկա չի տեսնի։

Աղջիկները նորից ծիծաղեցին, իսկ կապիտանը մի շիշ ևս բանալով ցանկանում էր մեզ հետ խմել։

Ես նայելով այդ կապիտանի աչքերի մեջ, ասացի.

— Մենք, ռուսներս, սիրում ենք նստել այնպիսի սեղանի շուրջը, ուր բոլորը հավասար են լինում և իրար հարգում են։ Իսկ այնտեղ, որտեղ սեղանի տիրոջն անասուն են անվանում, ծաղրում, մենք չենք նստում։ Կապիտանը պետք է իմանա, որ այստեղ մենք հյուրեր ենք։

Այս ասելով մենք դուրս եկանք խանութից, դրսում սպասեցինք, մինչև նրանք գնան։ Մի քանի րոպե հետո նրանք դուրս եկան։ Զինվորներից մի քանիսը բարեկամաբար ժպտալով մեզ, գնացին դեպի իրենց ավտոմեքենան։ Իսկ կապիտանը հոնքերը կիտել էր։ Մի տեսակ երկչոտությամբ մեր կողմն էին նայում և ամերիկացիների համար երկուպաշտոն կատարող ռուսախոս աղջիկները։

Մեր արածի համար մենք չէինք զղջում։ Ուոլլ-սթրիտյի կապիտանը թող հասկանար, որ սովետական մարդիկ իրենց պես չեն կարող արհամարհել որևէ ժողովրդի, չեն կարող աչք ունենալ ուրիշի հողի, երկրի վրա։

Տեղի սպաներից մեկը մոտենալով մեզ, զարմացած հարցրեց.

— Այդ ի՞նչպես էր, որ ամերիկացիները շտապ գնացին։

— Իսկ ի՞նչու պետք է մնային,—հարցրինք նրան։

— Օ՛, նրանք այստեղ գալուց երկար են մնում։ Եվ համարյա ամեն օր գալիս են։ Ի՞նչ են լսել դրանք, կարծես գործ չունեն կատարելու։ Իսկ մի գնդապետ գալիս է ամեն շաբաթ և ամեն անգամ ասում է, թե էքսկուրսիա է եկել։

Մեզ համար դժվար չէր հասկանալ, թե ինչո՞ւ ամերիկացի սպաներն այդպես սիրահարվել են սովետական զոնային։ Տրումենի և Մարշալի ցուցումներով նրանք արդեն հետախուզական աշխատանք էին սկսել։ Նրանց հակասովետական արարքը տեղի ուներ այն ժամանակ, երբ Եվրոպա-

յում միայն նոր էին դադարել ռազմական գործողությունները, երբ որբացած մանուկների, սգավոր մայրերի և կանանց աչքերի արցունքները դեռ չէին չորացել։ Բայց ի՞նչ նշանակություն կարող էին ունենալ այդ արցունքները Տրումենի և Մարշալի համար։ Այդ արցունքները նրանց և Ուոլլ-ստրիտի տերերի համար քիչ դոլլարներ չէին բերել։ Նրանց գործն էլ չէր, որ աշխարհի ժողովուրդները դեռ կեղեքվում են սովի, կարիքի մեջ։ Մի՞թե ամերիկացիների համար միևնույնը չէ, թե ի՞նչ ճանապարհով դոլլարներ կվաստակեն։ Ամերիկական «խղճի» ազատությունը թույլ էր տալիս ամեն հնարավոր ճանապարհով դոլլարներ վաստակել։

Ընդամենը մի քանի ամսում նրանք հեղեղեցին իրանական շուկան հին զգեստներով։ Դժվար էր ասել ի՞նչ հագուստներ են դրանք, ովքե՞ր են հագել մինչև այստեղ ուղարկվելը։ Բայց վաճառում էին շատ էժան և կարճ ժամանակամիջոցում այլևս ավելորդ դարձրին իրանական ջուլհակների ու դերձակների աշխատանքը։ Նրանք պետք է վերաորակավորվեին և թերևս ամենանպատակահարմարը համետագործի արհեստն էր, որովհետև մյուս արհեստավորներն էլ կամաց-կամաց դուրս էին գալիս շարքից։

Ամերիկան հեղեղում էր իրանական շուկան ապրանքներով, լուծում, քայքայում տեղական արդյունաբերությունը՝ առաջացնելով անգործություն, սով, անտանելի աղքատություն։

Իսկ առանց այն էլ աղքատությունը վաղուց էր տանջում իրանական ժողովրդին։ Դրանում մենք համոզվել էինք վաղուց, բայց ահա քիչ հետո մի ավելորդ անգամ համոզվեցինք դրանում։

Ք Ո Չ Վ Ո Ր Ն Ե Ր

Քոչվորների մի մեծ քարավան էր բարձրանում դեպի լեռները։ Քարավանում կային տղամարդիկ և կանայք, ծերեր և երեխաներ։ Նրանք գնում էին ձիով, ջորիով, էշով ու ոտ-

քով։ Իրենց հետ տանում էին մաղեր, թաղիքներ, սանդերքներ, հավեր։ Մեզ նկատելով քոչվորներն իրար անցան, շտապեցին բռնել ու պահել ջորիների գլուխները, որովհետև դրանք վախենում էին ավտոյից։ Մեր մեքենայի շչակից նրանք ցնցվում էին, մի կողմ թռչում։ Իսկ ցածում անհուն ձոր էր։

Սովորական քարավան էր դա. զարմանալու ոչինչ չկար։ Զարմանալին այն էր, որ բոլոր այդ մարդիկ՝ և՛ կանայք և՛ տղամարդիկ, բոլորն առանց բացառության, հագել էին մի գույնի՝ կապտավուն շոր։

Հեռվից դա շատ անսովոր և հետաքրքրական էր։

Երբ մենք դուրս եկանք մեքենայից և մոտեցանք քոչվորներին, ամեն ինչ պարզվեց։

Նրանց բոլորի հագուստը կարված էին տանը գործած կապտավուն կտավից։ Տղամարդիկ իրենց հագին ունեին միայն անդրավարտիքներ և շապիկներ; որոնց տակից երևում էին նրանց բաց կրծքերը։ Նույն այդ կտավից էին կարած նաև կանանց վերնազգեստները։ Այսպիսով ամբողջ գյուղն իր համար հագուստ էր կարել միևնույն կտորից և երևում էր, որ այդ հագուստը մարդիկ չեն հանում ոչ ցերեկը և ոչ էլ գիշերը։ Նրանք լեռների բնակիչներ էին՝ անասնապահներ։ Նրանցից մեկը՝ ճերմակամորուս, դարչնագույն աչքերով մի ծերունի, բարի հայացքով ինձ էր նայում։ Նա նույնպես կանգնած էր ճանապարհի եզրին՝ երկու ձեռքով ջորու գլուխը պահած։ Ես մոտեցա նրան.

— Սալամ, ամի։

Ծերուկը շփոթվեց։ Նա զարմացած նայում էր իմ ձեռքին և ըստ երևույթին չէր հավատում, որ այն մեկնել եմ իր ձեռքը սեղմելու։

— Ո՞ւր եք գնում,—հարցրի ծերուկին՝ նրա կոշտ ձեռքը սեղմելով։

— Սարերը, հոգուդ ղուրբան։

Շփոթությունից նա շառագունեց, շուրթերը դողում էին։

— Իսկ ի՞նչու բոլորդ մի տեսակ հագուստ եք հագել։

— Բա ինչ անենք, հոգուդ ղուրբան, ինչ որ գտնվել է գյուղում, այն էլ հացել ենք։

Այստեղ, այդ քուչվորներին հանդիպելիս, մեկ ավելորդ անգամ ինձ համար պարզվեց, թե ինչու Ռեշտի, Թեհրանի և Իրանի ուրիշ քաղաքների խանութները լիքն էին ապրանքներով և գնող չկար։

ԱԼԲՈՐՋԻ ԼԵՌՆԱՇՂԹԱՅԸ

Գիջեսարից մինչև Ալբորզի բարձրունքներում գտնվող թունելը 12 կիլոմետր է։ Ուղիղ գծով թերևս երկու երեք կիլոմետր լինի այդ տարածությունը, սակայն ավտոների համար հարկավոր էր եղել այդքան երկարացնել։ Մագլցելով մի քանի սարերի լանջերով մենք հասանք թունելին, որ անցնում էր երկնահաս լեռան միջով։ Լեռան կատարին ձյուն կար։ Թունելը 1800 մետր երկարություն ուներ։ Այն կառուցել էր Ռզա խանը՝ իմպերիալիստների օգնությամբ։ Կառուցման մասին այստեղ լեգենդներ էին պատմում։ Իբր թե կառուցող ինժեներն ինքնասպան է եղել՝ կողմերը իրար ուշ միանալու պատճառով։ Մյուս մուտքի մոտ իսկապես կար մի գերեզմանաքար, «Վիլիս-Քրիստ» տապանագրով։ Բայց թե ինչպես է ընկել այստեղ այդ Վիլիս-Քրիստը, մենք չիմացանք, որովհետև տեղում իրանցիներ չկային։ Ասում էին միայն, որ իբր նրա ինքնասպանությունից 15 րոպե հետո կողմերը միացել են։ Իսկ նրա ինքնասպանության պատճառը մասնագիտական ինքնասիրությունը չի եղել, այլ վախն իր տերերի առաջ։ Ճանապարհը կառուցողներն շտապում էին։ Նրանց հարկավոր է եղել դեպի Սովետական Միությունը տանող մեկ մագիստրալ ևս ունենալ՝ պատերազմի ժամանակ օգտագործելու համար։ Ինժեներից պահանջել են որքան կարելի է շուտ վերջացնել իր գործը, որպեսզի նրանից օգտվի պատերազմի հրձիգը՝ Հիտլերը։ Հիտլերը շատ էր շտապում։ Նա երևի մտածում էր այստեղից ոչ այնքան հեռու գտնվող Դեմավենդ լեռան վրա սեպագրել՝ «իմ զորքով

անցա այս ճանապարհով, հրին ու սրին մատնեցի Իրանը, Ռուսաստանը, այդտեղի բնիկներին դարձրի իմ ճորտերը»։ Դրա համար էին շտապում Հիտլերին աջակցող իմպերիալիստները, շտապեցնում կառուցողներին։ Իսկ Վիլիս-Քոխստոն անհաջողությունից հուսահատված երևի, ինքնասպան էր եղել՝ բանտում չտանջվելու համար։

Պատմությունը կրկնողություն չի սիրում։ Աշխարհի ոչ մի տիրակալի այլևս չի վիճակվի մեկ ուրիշ ժողովրդին ճորտացնելու մասին Դեմավենդի վրա մակագրություն անել։

Ահա մենք անցնում ենք այն թունելով, որը կառուցվել է մեր դեմ օգտագործելու համար։ Նրա կեսը չոր է, իսկ կեսից կաթկթում է ջուրը և ապա վտակ կազմած վազում դեպի հյուսիսային մուտքը։

Թունելի մոտերքից սկիզբ է առնում մի ուրիշ գետ և նույնպես թավալգլոր վազում դեպի Կասպից ծովը։

Հենց թունելի ուղիղ կեսից էլ սկսվում է վայրէջքը դեպի Կասպից ծովի ափերը։ Դրանից հետո մոտ 90 կիլոմետր կարելի է քշել ավտոն՝ առանց բենզին ծախսելու։

Զարմանալի լեռնաշխարհ է բացվում ձեր առաջ՝ թունելից դուրս գալուց հետո։ Ավելի շուտ լեռնաշխարհներ են դրանք՝ մեկը մյուսի վրա բարձրացած։ Թունելի մոտերքում նրանք մերկ են, ձյունապատ, իսկ հետո գալիս են վայրի անտառներով ծածկված լեռներ, ուր մարդը, նույնիսկ մեր օրերում, դժվարությամբ կարող է ոտք դնել։ Այստեղ արդեն հարուստ է և կենդանական աշխարհը։ Օդի մեջ անվերջ թռչում են ջայլեր, աղավնիների երամներ, կաչաղակներ, փայտփորիկներ, կկուներ։

Ճանապարհը երբեմն անցնում է ահավոր վիհերի եզրերով։ Երբեմն այդ վիհերի խորությունը հասնում է 400 մետրի։ Այստեղ էլ ձմեռը և վաղ գարնանը վտանգավոր է երթևեկությունը։ Վիթխարի ձյունաշերտերի սահանքին հետևում է ժայռերի փլչելը։ Լեռների կատարից պոկվում են հսկայական քարեր, ապա ճանապարհին զարնվելով ժայռերին՝ գլորվում ցած։ Այդ պահին թվում է, թե շրջապատի անհուն անդունդներում ռմբակոծություն տեղի ունի։

Ճանապարհը անցնելով գետի մեկ այս, մեկ այն ափով՝ շարունակ իջնում է դեպի ծովը։ Երբեմն թվում է, թե լեռները վերջացան և ահա դրանց կփոխարինեն հարթ տարածություններ, բայց ահա մի լեռնալանջից հետո ձեր աչքի առաջ բացվում են նոր լեռներ, նոր վիհեր, նոր ժայռակերտ բարձունքներ։ Եվ այդպես գլորվելով մի լեռնապարից մյուսը, մեր ավտոն հասավ Կասպից ծովափին գտնվող Չալուս ավանին։

Քաղաքատիպ այս ավանը տեղավորվել է Ալբորզ լեռնաշղթայից վազող գետի երկու ափին։ Այն ունի բարեշինված մի փողոց, որի վրա են գտնվում խանութները։ Չալուսը հայտնի է իր երկու մետաքսագործական ֆաբրիկայով։ Դրանցից մեկը պատկանում էր ֆրանսիացի մի կապիտալիստի։ Դա բնավ դուր չէր գալիս անգլիացիներին։ Նրանք բանսարկությունների միջոցով ամեն կերպ ցանկանում էին տեղի ֆաբրիկաներն իրենց ձեռքը գցել։ Անգլիացիներին ջղայնացնում էր նաև այն, որ ամերիկացիները քիթ են խոթում այնտեղ, որտեղ իրենք վաղուց իրենց թաթն էին դրել։ Իսկ ամբողջ Իրանի հարստության, մանավանդ նավթային հարստությունների վրա, անգլիացիները վաղուց էին դրել իրենց թաթը։ Բայց ամերիկացիներին այնքան էլ չէր զբաղեցնում անգլիական կապիտալիստների ջղայնությունը։ Նրանք Իրան էին եկել ամեն ինչի տիրելու, ամեն ինչ իրենց ձեռքը վերցնելու նպատակով։ Նրանք իրենց բավական ուժեղ էին զգում, որպեսզի արհամարհանքով լսեն անգլիացիների փնթփնթոցները։ Անգլիացիները փնթփնթալուց բացի դիմում էին և ուրիշ միջոցների, սակայն շատ զգույշ, գաղտնի։ Իսկ ֆրանսիացիներից նրանք բնավ չէին վախենում և արհամարհում էին նրանց այնպես, ինչպես ամերիկացիներն իրենց։

Չալուսի ֆաբրիկաներում աշխատավորների դրությունը չափից դուրս ծանր էր։ Այստեղ բանվորները շատ հաճախ գործադուլներ էին հայտարարում տերերի դեմ։

Չալուսից դեպի Ռեշտ ճանապարհը շարունակ անցնում է Կասպից ծովի ափով։ Այդ ճանապարհի կողքերին գյուղացիները ցանում են բրինձ, թեյ, ցիտրուսային կուլտուրաներ։

Հարավային մեղմ, խոնավ կլիման փարթամ կանաչով է պատել ծովափը՝ Ջալուսից մինչև Ռեշտ։ Ռեշտ հասնելու համար պետք է անցնել մի քանի փոքրիկ քաղաքների՝ Ռամսարի, Ռուդոսարի, Լանգերուդի, Լահիջանի միջով։

Երկրի այս հարուստ հողամասերի վրա իրենց թաթերն են դրել Իրանի մեծ ֆեոդալները։ Ռամսարում, ուր ծծմբաջուր կա, Ռզա շահը կառուցել է վիթխարի հյուրանոց՝ Թեհրանից բուժվելու եկածներին վարձով տալու համար։ Հյուրանոցում ոչ մի արհեստավոր, նույնիսկ միջին եկամուտ ունեցող մասնագետ կանգ առնել չի կարող, որովհետև գները շատ թանկ են։ Այստեղ հանգստանում են միայն հարուստ առևտրականները, գործարանատերերը, կալվածատերերը։ Աշխատավոր մարդիկ՝ գյուղացիները, բանվորները այդ հյուրանոցի դռնով նույնիսկ ներս մտնելու իրավունք չունեն։ Ամառ ժամանակ այդ վիթխարի եռահարկ շենքում հանգստանում են երբեմն երկու-երեք հոգի, այն էլ տուրիստներ։ Երբ Թեհրանից հարուստ հանգստացողներ չկան, հսկայական շենքը թվում է լքված։

Ռամսարից դեպի Ռեշտ գտնվող Լահիջան քաղաքում էր գտնվում և իրանական ժողովրդի թշնամի Կավամ Էլ Սալթանեի կալվածքը՝ իր թեյի պլանտացիաներով և թեյի մեծ ֆաբրիկայով։ Ֆաբրիկայում նա մշակում էր նաև շրջապատի գյուղերից բերված թեյը։ Սակայն նա այդքանով չէր ցանկանում բավարարվել։

Այստեղ՝ Լահիջանում դեմուդեմ երկու սարեր կան, որոնցից մեկը կոչվում է Շեյթան քուհ (սատանայի սար), իսկ մյուսը՝ Շահ նշին (թագավորանիստ)։ Իրանի ամենամեծ շեյթան Կավամ Էլ Սալթանեն վաղուց էր երազում տիրական հայացքով նայել Իրանի իշխանությանը։ Բայց տեղում ավանդություն գոյություն ունի, որ թագավորանիստ սարը բարձրացողին մի ահավոր վտանգ է սպառնում։ Ճանապարհին իբր մի տեղ կա, ուր ոտք դնողը քարանում է։ Կավամ Էլ Սալթանեն այնպիսի աղվեսներից չէր, որ իսկույն ծուղակն ընկներ։ Նա հեռվում նստած դիտում էր թագավո-

րանիստ սարը բարձրանալ ցանկացողներին ու մտքում ծիծաղում նրանց վրա։ Մարդիկ չէին հասկանում, որ Շեյթան սարն էլ նույն բարձրությունն ունի, ինչ և Թագավորանիստը։ Կարելի է բարձրանալ առաջինի գագաթը և տիրաբար նայել շուրջը։

Եվ ահա նա բարձրացավ Շեյթան սարը։ Միևնույնը չէ՞, որ սարից կհսկես շուրջը։

Իրանի մեծ շեյթանին ավելին էր հարկավոր։ Նրան քիչ էին թվում Լահիջանի շրջանի գյուղացիության արյուն-քրտինքի պտուղները։ Նա ցանկանում էր շատ ունենալ։ Սակայն թեյ արտադրելով վաստակածը քիչ էր թվում։ Եկամտի ուրիշ, ավելի արդյունավետ աղբյուր էր հարկավոր։ Նրան առաջարկեցին այդ աղբյուրը։ Ասացին, որ առանց այն էլ ծերանում է, կարելի է ծախել հոգին և դրա համար քիչ չեն վճարի։ Նա դրան դեմ չէր։ Բայց տեսավ, որ Անգլիայից բացի ամերիկացիները ևս փող են առաջարկում իրեն՝ հոգին ծախելու, Իրանի դեմոկրատական շարժման դահիճը դառնալու համար։ Նա դեմ չէր և չմերժեց ո՛չ մեկին, ո՛չ էլ մյուսին։

Ժողովրդի դահիճն անցավ գործի և հայտնի է, թե ինչեր արեց։

Իսկ այն օրը, երբ մենք անցնում էինք Լահիջանով, նա դեռ իրեն ձևացնում էր դեմոկրատիայի կողմնակից։ Դրա համար էլ տեղացիներից մեկն ասաց.

— Դուք առանձնապես միք հավատա այս հին գայլին։ Նա հարդի տակով գնացող ջուր է։ Երեսից քաղցր կխոսի, իսկ հետևից ածելիով վիզդ կկտրի։

Մինչ օրս էլ այդ խոսքերը չեմ մոռանում։

Սակայն մեզ սփոփում էր մի միտք։ Համարյա բոլոր ժողովուրդների պատմության մեջ եղել են ծախու, դավաճան իշխանավորներ, որոնք լիզել են օտարերկրյա զավթիչների կրունկները, բաց արել հայրենիքի դռներն այդ զավթիչների առաջ։ Սակայն ժողովուրդները նրանց միշտ էլ մերկացրել են, խայտառակության սյունին գամել։ Այժմ Իրանի ծախու տիրակալները դավաճանաբար ծախում են

իրենց երկրի շահերն անգլո-ամերիկյան իմպերիալիստներին, հայրենիքը մատնում ադքատության, սովի։ Բայց իրանական ժողովուրդը չի ների այդ դավաճաններին։ Նա շատ լավ է տեսնում այդ դավաճանների արարքը, տեսնում է, թե ինչպես իրեն զրկում են սովետական ժողովրդի եղբայրական օգնությունից և նետում գայլերի պես երկիրը թալանող ամերիկյան իմպերիալիստների ճիրանները։

Իրանական ժողովուրդը չի ցանկանա խեղդվել դաժան հարստահարիչների ճանկերում։ Նա իր մեջ ուժ կգտնի այդ ճանկերից ազատվելու։ Կգտնի և կազատվի։ Ո՛չ տեռորը, ո՛չ հալածանքները չեն մարի այն ջերմ սերը, որ իրանական ժողովրդի սրտում կա դեպի սովետական ժողովուրդը։

Իրանցիները դարերով համոզվել են պապական ճշմարիտ մի խոսքի մեջ. «Լավ հարևանը մարդու ամենամոտ հարազատից էլ լավ է»։

Քանիցս նրանք փորձել են համոզվել, որ բոլոր հարևանների մեջ սովետական ժողովուրդն ամենաանկեղծ, ամենաբարի, մեծահոգի ու մարդասեր հարևանն է։

Իրանական ժողովրդի զգալի մասը շատ լավ է հասկանում, որ միայն ջերմ, անկեղծ բարեկամությունը հյուսիսային իր մեծ, հզոր հարևանի հետ կտանի նրան դեպի երջանկություն։

Այդ երջանկությունից այժմ նրան զրկում են, բայց իրանական ժողովուրդն այն ձեռք կբերի։

Այս համոզմունքով էլ մենք թողեցինք Իրանը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՄԵՋՆԻՑ ՀԵՏՈ

Երբ մենք հեռանում էինք Իրանից, ես ուշադիր նայում էի փողոցների մայթերի վրա խմբված մարդկանց և աշխա-

տում էի հասկանալ, թե ինչ են մտածում նրանք։ Այս ու այնտեղ պատահում էին և ծանոթ դեմքեր։ Ահա այն երիտասարդը, որ մայիսմեկյան ցույցի ժամանակ ամբիոնից ճառ էր ասում, ահա նրա ընկերը, որ գնաց ցույցի առաջին շարքում՝ դրոշը գլխից վեր պարզած։ Ահա և ուրիշները՝ ժողովրդական պարտիայի ակտիվ անդամներ, հասարակական գործիչներ։ Մեկի դեմքը նույնիսկ շատ լավ եմ հիշում։ Նա Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ին, երբ Ռեշտում մինչ այդ չտեսնված տոնախմբություն էր, երբ քաղաքի բոլոր տները, հիմնարկների ճակատներին փողփողում էին իրանական եռագույն և մի քանի տեղ սովետական կարմիր դրոշները, և երբ ուրախությունից ցնծացող մասսան հավաքվել էր քաղաքային հրապարակ, ուր նվագախումբն էր նվագում, նա ամբողջ ուժով մեկ կրկնում էր.

— Կեցցե՛ Սովետական անհաղթ Բանակը... կեցցե՛ Ստալինը։

Ի՞նչ էր մտածում նա այն պահին, երբ մենք հեռանում էինք։ Դժվար էր ասել։ Այժմ նա տխուր էր, զուսպ։ Նա անշուշտ ցավում էր մեզնից բաժանվելու համար։ Սակայն վաղ թե ուշ այս բաժանումը պետք է լիներ։ Մենք միշտ էլ ասում էինք, որ Սովետական Բանակը կմնա մինչև վերջնական հաղթանակը, մինչև մեր զորքերը հաղթանակի դրոշը բարձրացնեն Բեռլինի վրա։

Բոլորը, բոլորը գիտեին, որ մենք Իրանում հյուրեր ենք միայն։ Այդ երիտասարդն էլ շատ լավ գիտեր։ Նրա տխրության մեջ ես մի հարց էի կարդում. «Ի՞նչ է լինելու այսուհետև»։

Ճիշտն ասած այդ հարցը շատերի դեմքին կարելի էր կարդալ, որովհետև նրանք հասկանում էին, որ դրությունը երկրում կարող է փոխվել։

Իրանական աշխատավորներն իրենց Կավամ Էլ Սալթանեին բնավ չէին հավատում։ Այն օրերին, երբ նա ճոռոմ ճառեր էր ասում իրանա-սովետական հարաբերությունները կարգավորելու մասին, երբ նա իրեն դեմոկրատ էր ձևացնում, մի քանի իրանցի ինձ ասում էին.

— Հին աղվես է․ բոլորի աչքին թող է փչում։

Կավամ էլ Սալթանեի մասին այսպես էին խոսում նույնիսկ այնպիսի մարդիկ, որոնք քաղաքականությունից հեռու էին կանգնած։

Հետո, երբ Կավամ էլ Սալթանեի դիմակը պատռվեց և լիովին երևաց նրա գազանային դեմքը, ես մեկ-մեկ հիշում էի նրան հին աղվես անվանողներին։ Այո, իզուր չեն ասում, թե ժողովուրդն իմաստուն է։

Իրանական ժողովրդի մեջ շատ մարդիկ կային, որոնք նախազգում էին, որ Սովետական Բանակը հեռանալուց հետո երկրում իրերի վիճակը կփոխվի։ Նրանց տխրությունը մեր բանակի էվակուացիայի օրերին հենց դրանով էլ պետք էր բացատրել։

Կավամ էլ Սալթանեին չվստահողները շատ լավ գիտեին, որ նա մի մարդ է, որի համար խորթ չեն ուխտադրժությունը, երկերեսանիությունը, կաշառակերությունը, շահամոլությունը։ Հանուն իր անձնական շահերի նա կարող է հարյուրավոր մարդկանց հրի ու սրի մատնել։

Եվ նրանք չսխալվեցին։

Բավական ուշագրավ է Մազանդարանի դեմոկրատների դեմ կազմակերպված խարդախությունը։

Այստեղ իշխանությունը, հենց ինքը գեներալ Արփան, ավազակների մի խումբ էր զինել և նրան թալանի, տեռորի իրավունք տվել։

Ասենք այդպիսի բանդաներ կազմակերպվում էին ոչ միայն Մազանդարանում։ Ճիշտ նույնպիսի մի բանդա էր կազմակերպված նույնիսկ Թեհրանում՝ ռեակցիոներ Զոլֆագարիի գլխավորությամբ, որն ահ ու սարսափ էր տարածում քաղաքացիների վրա։ Բանդաները գործում էին նույնիսկ օրը ցերեկով։ 1946 թվի դեկտեմբերի 27-ին Թեհրանի ամենակենտրոնական փողոցներից մեկի՝ Ստամբուլի վրա գտնվող խանութպանները, վախենալով Զոլֆոգարիի բանդայի հարձակումից, ստիպված փակեցին իրենց խանութները։

Այս պայմաններում միանգամայն բնական է, երբ մար-

դիկ դիմում էին ոստիկանությանը, իրենց անձը պաշտպանելու համար զենք խնդրում։

Բայց Մազանդարանում 1946 թվի վերջերքին ոստիկանությունը հանկարծ սկսեց ձերբակալել անձնական զենք կրողներին։ Դրանց մեջ կային նաև բանվորներ, որոնց ոտքերին կանդալներ հագցնելով դուրս հանեցին քաղաքների հրապարակները և ժողովրդի աչքի առաջ սկսեցին ամենադաժան պատժի ենթարկել։ Բանտարկյալներին ծեծում էին մինչև նրանք իրենց գիտակցությունը կորցնեն։ Հետո նրանց, կիսակենդան վիճակում, տանում էին բանտ, տխպում կեղծ ցուցմունք տալ այն մասին, որ իբր ժողովրդական պարտիան ցանկանում էր Մազանդարանում «զինված ապստամբություն» բարձրացնել, ստեղծել «ավտոնոմ կառավարություն», պայթեցնել Վերեսկի կամուրջը և այլն։

Ռեակցիայի այս կարգի միջոցառումների նպատակը շատ պարզ էր։ Կառավարության ռեակցիոն շրջանները պարզապես նպատակ ունեին զրպարտել ազատության գաղափարները, ժողովրդի աչքում գցել Թուդե պարտիայի հեղինակությունը, հասարակության լայն շրջաններին տագնապի մեջ պահելով թույլ չտալ, որպեսզի նրանք իրենց բողոքի ձայնը բարձրացնեն երկրում տիրող արյունալի տեռորի դեմ։ Չէ՞ որ Հարավային Ադրբեջանում տեղի ունեցող դեպքերը, ուր հարյուրավոր ազատատենչ ադրբեջանցիներ էին գնդակահարվում, կախաղան բարձրացվում, դեռ չէին ավարտվել։ Կառավարությունը նպատակ էր դրել Ադրբեջանում ոչ մի դեմոկրատի չթողնել։ Ամեն օր Թավրիզից լուրեր էին գալիս նոր սպանությունների, կախաղանների մասին։ Մարդկանց մահապատիժն «օրինական» դարձնելու համար գիշեր-ցերեկ աշխատում էին ռազմադաշտային, քաղաքացիական դատարանները։ Մահապատժի ենթարկվելու համար առանձնապես մեծ հանցանք հարկավոր չէր։ Միայն դեմոկրատական շարժման մասնակից լինելը բավական էր, որպեսզի դատապարտյալը կախաղան բարձրացվի։ 1946 թվի դեկտեմբեր ամսին Թավրիզի ռազմա-դաշտային դատարանը մահապատժի են-

թարկեց կապիտաններ Ջուդաթին և Ասերիին, լեյտենանտներ Յաքիրնային, Աղինքախին, Կուխանին և Դանղիանին միայն նրա համար, որ նրանք հարել էին դեմոկրատներին։

Մահապատիժները, գնդակահարությունները, չտեսնված ռեպրեսիաները երկրի տարբեր քաղաքներում և մարզերում 1946 թվից սկսած շարունակվում են մինչև մեր օրերը։

1947 թվի հունվարի 13-ին Հարավային Ադրբեջանի Արդաբիլ քաղաքում գնդակահարվեցին իրանական սպաներ Դանեշվարը, Շեյխին և Սուխրաբին, որոնք նույնպես հարել էին դեմոկրատներին։

Հարավային Ադրբեջանի Մերանդ քաղաքում 1947 թվի մայիսի 3-ին կախեցին ադրբեջանական դեմոկրատական շարժման մասնակից Միր Կասիմ Ադամին։

Մայիսի 4-ին Թավրիզում կախեցին Սարի Ռահիմին և Ալլահվերդուն։

Մայիսի 5-ին կախաղան բարձրացրին դեմոկրատներ Սադըխ Անսարին, Խաշիմին և Հարությունին։

Մայիսի 23-ին Թավրիզում հայտնի դարձավ, որ Իրանի շահը՝ Մոհամմեդ Ռզա Փեհլևին պիտի ժամանի Հարավային Ադրբեջան։ Դահիճները որոշեցին շահի այցելությունը նշանավորել նոր զոհերով։ Եվ ահա նրա գալստյան նախօրյակին Թավրիզի քաղաքային հրապարակում կախաղան բարձրացրին դեմոկրատական Ադրբեջանի նախկին դատախազ Ֆերիդուն Իբրահիմին, որը մի տարի առաջ Փարիզի խաղաղության կոնֆերանսում դեմոկրատական Ադրբեջանի մամուլի ներկայացուցիչն էր։ Դրա նախօրյակին կախաղան էր բարձրացվել դեմոկրատ Ասադուլա Բաբա օղլին, իսկ 14 հոգու ոստիկանությունը գնդակահարել էր քաղաքից դուրս։

Դահիճները, մարդասպանները, ավազակներն աշխատում էին ամեն օր, առանց դադարի։

Որոշ ժամանակ հետո Թավրիզում կախաղան բարձրացվեցին դեմոկրատներ Միր Մոհամմեդը, Հուսեին Մահմադին, Իսմայիլ Օմարամին, Իսմայիլ Իբրահիմին և Մոհամմեդ Քազիմ Աժանգուն։

Նույն այդ օրերին Մերաբ քաղաքում կախեցին դեմոկրատների մի նոր խմբի, որի մեջ էին մտնում Ջաֆար Կուլի Էչալին, Մոհամմեդ Բամուզին, Մոհամմեդ Սաթարին և Բախշի Թորաբին։

Միայն Մերաբ քաղաքում չորս օրվա ընթացքում՝ օգոստոսի 13-ից մինչև 17-ը, կախեցին 16 դեմոկրատների։

Բայց մի՞թե հնարավոր է մեկ առ մեկ հիշել բոլոր մահապատժի ենթարկվածներին։

Բավական է ասել, որ միայն Թավրիզում դեռևս 1947 թվի կեսին 1000 ֆիդայիներ (Ադրբեջանի դեմոկրատական ռազմական կազմակերպության անդամներ) և դեմոկրատական կազմակերպության ղեկավարներ ու շարքային անդամներ էին բանտարկված։

Հարավային Ադրբեջանի դեմոկրատներն իր ժամանակին, ինչպես հայտնի է, ղեկավարվելով ժողովուրդների եղբայրության գաղափարով, սերտ կապ էին ստեղծել հարևան քրդերի հետ։ Սրբազրական այդ կապն ահ էր ազդում իրանական ռեակցիային։ Կավամ Էլ Սալթանեի դահիճներն անմիջապես միջոցներ ձեռք առան նաև քուրդ դեմոկրատների ղեկավարների դեմ՝ մեղադրելով նրանց Մեխաբադի ավտոնոմության վրա հարձակվելու (որի ժամանակ հինգ ոստիկան էր սպանվել), քրդական ինքնուրույն ռեսպուբլիկա ստեղծելու, Մեխաբադից իրանական պետական ծառայողներին քշելու մեջ։ 1947 թվի մարտի վերջերին իրանական ռեակցիան մահապատժի ենթարկեց քրդական դեմոկրատների ղեկավարներին։

Իրանական դեմոկրատիայի դեմ ուղղված այս հալածանքը սկսվեց և շարունակվեց մի այնպիսի ժամանակ, երբ պետք է տեղի ունենային մեջլիսի 15-րդ հավաքի ընտրությունները։ Ռեակցիան շանտաժի, խարդախությունների դիմելով, ձեռք էր առնում ամեն տեսակի միջոցներ, որպեսզի երկրի դեմոկրատիան մեջլիսում իր ներկայացուցիչները չունենա։

Ընտրությունների հենց նախօրյակին իրանական կառա-

վարությունը, սուտ պատճառներ հնարելով, բանտարկեց ժողովրդական պարտիայի կողմից Գորգանից և Բաբոլից առաջադրված թեկնածուներին և աքսորեց նույն պարտիայի Սեմնանի, Խուզիստանի և Քերմանի թեկնածուներին, Թեհրանում ու գավառներում անցկացրեց բանվորների մասսայական բանտարկություններ։

1947 թվի դեկտեմբերի 30-ին Թեհրանի համալսարանի պոլիտեխնիկ ինստիտուտի ուսանողները հավաքվել էին միտինգի՝ իրենց բողոքը հայտնելու մեջլիսի ընտրությունների գործում եղած խարդախությունների դեմ։ Ուսանողների միտինգի ժամանակ մի քանի ավտոբուսով այդտեղ եկան Կավամ էլ Սալթանեի նորաստեղծ «դեմոկրատական պարտիայի» անդամները և հարձակվեցին ուսանողների վրա։ Ուսանողներին ծեծելով նրանք միտինգը ցրեցին։ Ծեծված, վիրավորված ուսանողներից մի քանիսը հիվանդանոց փոխադրվեցին։

Աբադանում, Անգլո-իրանական նավթային ընկերության ծառայող հնդկացի Մոխիդդին Խինդին, պետական ծառայողների հետ միասին, գիշերները շրջում էր բանվորների տները և նրանց բանտարկում։ Հետևյալ օրը Անգլո-իրանական նավթային ընկերության վարչությունը ձերբակալված բանվորներին հեռացնում էր աշխատանքից՝ իբր թե աշխատանքի դուրս չգալու պատճառով։

Մինչ այդ շտեմնված հալածանք սկսվեց նաև իրանական պրոֆմիությենական կազմակերպության դեմ։ Այս ու այնտեղ բանի ուժով փակում էին պրոֆմիությենական ակումբները, ջարդ ու փշուր անում այդ ակումբների ունեցվածքը։ Ճիշտ այդպես վարվեցին Գիլանի, Խորասանի քաղաքներում և Շահրուդում։

Ոստիկանությունը շապեց բանտարկել նաև իրանական պրոֆմիությունների կենտրոնական խորհրդի քարտուղար Ռուստին։

Թավրիզում ոստիկանությունը օրը ցերեկով շրջապատում էր հիմնարկությունները, տները և բանտարկում բոլոր

նրանց», ովքեր երբևէ ապրել էին արտասահմանում։ Այդ քանտարկություններին զուգակցվում էր թալանը։

1947 թվի ապրիլին միայն Ղարադաղի շրջանի Իրզուայան և Ալաղան գյուղերից չորս հարյուրից ավելի հայ գյուղացիներ, ցանկանալով փրկվել տեղական կալվածատերերի թալանից ու հալածանքներից, փախել էին Թավրիզ, ուր ստիպված էին մուրացկանությամբ զբաղվել։

Թալանին մասնակցում էին շարքային ոստիկանից, ժանդարմից սկսած մինչև գեներալը։

Վերջիններիս թվին է պատկանում և գեներալ Հաշիմին։

Սա անհայտ մարդ չէ։

Ադրբեջանական ազատատենչ ժողովուրդը Հաշիմին չի մոռանա, չի մոռանա արևելյան այդ սադիստի գազանությունները, պատճառած կսկիծն ու ցավը։ Ոչ ոք չի մոռանա, թե ինչպես ոսկեզօծ ուսադիրներ դրած գեներալը շուկայի գրպանահատի, ավազակի պես մի ձեռքով մարդկանց սիրտը դաշույն էր խրում, իսկ մյուս ձեռքով թալանում նրանց։ Թալանի միջոցով էլ շատ կարճ ժամանակամիջոցում նա դարձավ Իրանի ամենահարուստ մարդկանցից մեկը, «վաստակելով» երկու միլիոն թուման։

Նույնիսկ իրենք՝ Իրանի ծախու տերերը, շուտով զգացին, թե թալանի գործում որքան հեռուն է գնացել Հարավային Ադրբեջանում դեմոկրատական շարժումը ճնշելու համար ուղարկած էքսպեդիցիոն զորքերի հրամանատարը։

Հասարակության աչքին թոզ փչելու, աշխարհի առաջ վերջնականապես չպախարակվելու համար նրանք գեներալ Հաշիմու գործը տվին ռազմական քննիչ մարմիններին։ Իհարկե նրան բոլորովին ձեռք չէին տա, եթե նա ուրիշների նման կարողանար իր արածը թաքցնել։ Իրանում ո՞ր պետական գործիչը չէր օգտվում քաղաքում երկրով մեկ ծայր առած այդ տեռորից։ Մեկը թալանով էր վաստակում, իսկ մյուսը պարզապես կաշառք էր վերցնում։ Տարբերությունը նրանց և գեներալ Հաշիմու մեջ կայանում էր նրանում, որ գեներալն զգույշ չէր «աշխատում», հետևապես իր նման մի խումբ ավազակների դնում էր մերկացման վտանգի տակ։ Ավազակ-

ների խմբում՝ մեկի անզգուշությունը կարող է մյուսներին տապալել։ Անզգույշ գործողին միշտ պատժում են։ Իսկ թալանով ու կաշառքով միայն Հաշիմին չէ, որ զբաղվում էր։

Ամբողջ աշխարհին է հայտնի, որ այդ նույն ժամանակ իր ունեցածին քիչ չավելացրեց, քիչ չվաստակեց նաև պրեմիեր մինիստր Կավամ էլ Սալթանեն՝ իր երկրի շահերը օտարերկրյա իմպերիալիստներին ծախելու, երկրում արյունալի դեպքեր կազմակերպելու համար։ Պրեմիերին թվում էր, թե ուրիշ գոտի վրա բարձր գոռալով իր գողությունը լիովին կծածկի։ Բայց իմաստուն խոսք է ռուսական առածը. «Մախաթը պարկում չես թաքցնի»։ Քանի Կավամ էլ Սալթանեն պրեմիեր էր, մարդիկ վախենում էին խոսել։ Չէ՞ որ նա վաղօրոք հայտարարել էր, թե ամենադաժան միջոցները ձեռք կառնի բոլոր նրանց դեմ, ովքեր իրեն կխանգարեն։

ՄԱՆՐ ԱՎԱԶԱԿՆԵՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԽՈՇՈՐ ՇԵՖԵՐԸ

Հաշիմի, Կավամ էլ Սալթանեի տիպի մանր ավազակներն Իրանում ունեին շատ խոշոր, մեծ մասշտաբի գործերի մեջ փորձված շեֆեր։ Իրանում տեղի ունեցող բոլոր հալածանքները, արյունալի տեռորը նրանց ցուցումով էր կազմակերպվում։

Դեռ պատերազմը չվերջացած, ամերիկական գանգստերները երազում էին նոր պատերազմի մասին։ Սկզբից էլ նրանց նպատակն էր Սովետական Միության դեմ ուղղված այդ նոր պատերազմում Իրանն իրենց համար ռազմաբեմ դարձնել։ Սակայն ամերիկյան իմպերիալիստների այս ծրագրումներին լուրջ կերպով կարող էին խանգարել երկու բան՝ դեմոկրատական շարժումն Իրանում և սովետա-իրանական բարեկամությունը։

Երկու հարևանների միջև փոխադարձ անկեղծ բարեկամությունը կարծես արդեն գլուխ էր գալիս։ Իրանական հասարակության ամենալայն խավերը պահանջում էին ստեղծել

Սովետա-իրանական նավթային խառն ընկերություն, որը զգալիորեն կթեթևացներ իրանական ժողովրդի ծանր վիճակը, կկրճատեր գործազուրկների թիվը, զարկ կտար ազգային արդյունաբերությանը և կազատեր երկիրն օտարերկրյա իմպերիալիստների կախումից։ Այդ դեպքում ամերիկյան իմպերիալիստները ևս Իրանում անելիք չէին ունենա, իրանական ժողովուրդն ինքն իր բախտը կտնօրիներ։

Իրանական կառավարությունը 1946 թվին ոչ մի կերպ չէր կարող անտեսել ժողովրդի այդ արդարացի պահանջը։ Ժողովրդական պարտիայի, Ադրբեջանի դեմոկրատների շուրջը համախմբված մասսաները մեծ ուժ էին ներկայացնում և նրանց այդ արդարացի ցանկությունը չկատարելը կապված էր լուրջ վտանգի հետ։

Ապրիլի 4-ին Թեհրանում ստորագրվեց Սովետա-իրանական նավթային խառն ընկերություն ստեղծելու մասին համաձայնագիրը։

Ապրիլի 8-ին Իրանի շահ Մոհամմեդ Ռզա Փեհլևին իր կողմից հավանություն տվեց այդ համաձայնագրին։ Մնում էր, որ այն հաստատեր իրանական մեջլիսը։

Եվ հենց այն պահին, երբ հայտնի դարձավ սովետա-իրանական նավթային խառն ընկերության մասին համաձայնագիր ստորագրելու ակտը, իրանական ռեակցիոն մամուլը մի չտեսնված աղմուկ բարձրացրեց դրա դեմ։

Սակայն Կավամն իր դերը շատ լավ էր խաղում։ Նույն 1946 թվի մայիսի 18-ին մամուլում հանդես գալով, նա հայտարարեց.

«Խոսում են այն մասին, իբր թե ինչո՞ւ ես գնացի Մոսկվա և ՍՍՌՄ-ի հետ փոխըմբռնում ձեռք բերի... Ահա հենց սրա համար էլ ես դիմում եմ ռեակցիոն տարրերին՝ ժողովրդի վզին փաթաթած անարդ դեպուտատներին։ Եթե այդ պարոնները խղճի գեթ մի հյուլե ունենային, ապա նրանք պետք է նշեին, որ բոլոր այն դժվարությունները, որոնցով մենք շրջապատված ենք, նրանց բազմիցս հանցավոր գործողությունների արգասիքն է։ Նրանք իրենց ցնորամիտ գոր-

ծողությունները դիտմամբ վատթարացրել են իրանա-սովետական հարաբերությունները։ Նրանք՝ այդ մարդիկ, պրովոկացիաների և կոռուպցիայի նպատակով շարունակ դիմել են արտասահմանյան դեսպանություններին, ինտրիգներ և պրովոկացիաներ են սարքել, հաշվի չառնելով, որ ոչ մի արտասահմանյան պետություն ոչ մի կերպ չպետք է միջամտի Իրանի ներքին գործերին»։

Կավամի այս ելույթում ամենից ուշագրավը նրա դերասանական ձիրքն է։ Կյանքում քչերին է հաջողվում հասարակության աչքի առաջ անել մի բան, իսկ քարոզել իր արածի միանգամայն հակառակը։ Նա այնպես էր պախարակում ծախու դեպուտատներին, որ կարծես ինքը նրանց թվին չէր պատկանում, կարծես ինքը մյուսների նման օտարերկրյա դեսպանությունների դռները չէր ծեծում։

Հայտնի էր, որ հենց այդ ժամանակ իրանական կառավարությունը դիմել էր ԱՄՆ կառավարությանը և նրանից փոխառություն խնդրել՝ երկրում ներքին կարգը ապաշտպանելու, այսինքն ոստիկանությունն ու բանակը զինելու համար։

Ընդամենը մի քանի շաբաթ դրանից առաջ իրանական մեջլիսը որոշել էր բանակը վերազինել, նրա անձնակազմի քանակն ավելացնել 10 հազար մարդով, զենք գնելու համար ռազմական մինիստրի տեղակալ Հեդայաթի գլխավորությամբ մի կոմիսիա ուղարկել ԱՄՆ։

Բանակից ետ չէր ուզում մնալ նաև իրանական ժանդարմերիայի փաստացի պետ, ամերիկյան գեներալ Շվարցկոպֆը։ Նա մամուլում հայտարարել էր, որ ժանդարմերիայի անձնակազմի քանակը հասցվում է 40 հազարի, կազմակերպվում է ժանդարմական երեք նոր գունդ և մեկ ժանդարմական պահեստային գունդ։ Շվարցկոպֆն իր այդ ռեֆորմների համար պահանջում էր 60 միլիոն թուման այն ժամանակ, երբ ողջ իրանական բանկը մեջլիսից խնդրում էր հաստատել 150 միլիոնանոց բյուջե։

Այսպիսով Իրանում ամերիկական գեներալը կազմում էր երկրորդ բանակ, որի նպատակներն ու անելիքները շատ պարզ էին ու հասկանալի։

Բայց իրանական կառավարությունը թե այս և թե այլ միջոցառումների համար բավականաչափ միջոցներ չուներ։ Դա հայտնի էր և ամերիկյան գեներալ Շվարցկոպֆին։ Նա շատ լավ գիտեր, որ իրանական կառավարությունն առանց փոխառության յոլա չի գնա։ Ներկայացնելով իր ծախսերը, Շվարցկոպֆը միաժամանակ տալիս էր հասցեն, թե որտեղից կարելի է վերցնել անհրաժեշտ գումարը։ Իրանական կառավարությունն այդպես էլ վարվեց։

Ամերիկան համաձայնեց փոխառություն տալ երեք պայմանով.

1) Իրանական կառավարությունը վերջնականապես պետք է վերջ տա ժողովրդական պարտիային և բանվորական ձախ կազմակերպություններին. 2) նոր մեջլիսում մեծամասնությունը պետք է բաղկացած լինի այնպիսի մարդկանցից, որոնց ԱՄՆ-ը վստահում են. 3) փոխառությունը պետք է ծախսվի այն միսիայի համաձայնությամբ, որին ԱՄՆ-ի կառավարությունը կուղարկի Իրան։

Հետո միայն պարզվեց, որ դա ամերիկացիների լրիվ պահանջը չէ։ Նրանք այդ ամենից բացի պահանջում են Իրանում օդանավակայաններ, Զահեդան-Մեշխեդ երկաթգիծ կառուցելու և Պարսկական ծոցի ափերին նավահանգիստներ հիմնելու իրավունք։

Այս բանն իրանական կառավարությունն անում էր ժողովրդից գաղտնի։ Երկար ժամանակ լռություն պահպանելով, նա ցանկանում էր ցույց տալ, թե ոչինչ չի պատահել։ Ժողովուրդն այն մասին, թե ԱՄՆ-ի կառավարությունն Իրանին 25—50 միլիոն դոլլարի փոխառություն է տալիս, առաջին անգամ իմացավ Փարիզի ռադիոյի ապրիլի 20-ի հաղորդումից։

Իսկ մինչ այդ, քանի դեռ չէր վճռվել Իրանը ձեռքով ու ոտքով կապելու հարցը, քանի Սովետա-իրանական նավթային խառն ընկերություն կազմելու հարցն օրակարգից չէր հանվել, ամերիկացիներն Իրանում կատաղի հակասովետական կամպանիա էին ծավալել։

Թեհրանում ամերիկյան դիվանագետները անամոթաբար ելույթ էին ունենում և հայտարարում, թե իբր Սովետական Միության քաղաքականությունն ուղղված է Իրանի ինքնուրույնության դեմ, իբր Սովետական Միությունը ձգտում է Պարսկական ծոցում նավահանգիստ ձեռք բերել։

Ամերիկացիները կանգ չէին առնում նաև բացարձակ պրովոկացիաների առաջ։

1947 թվի հունվարի 19-ին ամերիկյան ռազմական կցորդի օգնական ռուս սպիտակ գվարդիական ծագում ունեցող Գաղարինն իր հերթական շրջագայությունների ժամանակ, Արդաբիլ քաղաքում իր մոտ է կանչում տեղական ոստիկանության պետին և կարգադրում է. «ուժեղացնել տեղական բնակիչներին ռուսների դեմ հանելու աշխատանքը»։

Հակասովետական կամպանիա մղելու համար ամերիկացիները, ինչպես միշտ, այս անգամ ևս, օգտագործում էին բոլոր հնարավոր միջոցները։ Իսկ նման գործում մամուլն անփոխարինելի դեր կարող էր խաղալ։ Զբաղվելով այն բանով, որ իրանական թերթերից մի քանիսը գնված են, ամերիկյան «Յունայտեդ պրես» հեռագրական գործակալությունն շտապեց պայմանագիր կնքել իրանական «Փարս» հեռագրական գործակալության հետ, նրան հաղորդագրություններով ապահովելու մասին։ «Յունայտեդ պրես» գործակալության Թեհրանի թղթակիցն շտապեց օգտվել դրանից և 1947 թվի ապրիլի վերջերին մի թղթակցություն թխեց այն մասին, որ իբր «չորս հազար ռուսներ փորձ են արել դաշնակների անվան տակ անցնել Իրան»։ Տարբեր շահագրգռված թերթեր այդ լուրին տարբեր երանգ էին տալիս։ Անգլիական «Դեյլի տելեգրաֆ էնդ Մորնինգ պոստ» թերթը շտապեց այդ լուրն հաղորդել իր ընթերցողներին հետևյալ կերպ. «Մեծ քանակությամբ ռուս տեռորիստներ են անցնում իրանական սահմանը»։

Սովետական Միության դեմ պրովոկացիոն լուրեր տարածելու գործում ետ չմնացին նաև Թեհրանի «Թեհրանն Մոսավար» ժուռնալը և «Աթեշ» («Կրակ») թերթը։

Դրանցից առաջինը սենսացիա տարածելու մեջ ցանկացավ առաջնություն վերցնել։ Նա 1947 թ. հուլիսի 25-ին հանդես եկավ պրովոկացիոն մի հոդվածով, որի մեջ ասված էր, թե իբր ժողովրդական պարտիան բացարձակ կապ է հաստատել սովետական մարմինների հետ և կամավորներ է հավաքում հունական պարտիզաններին օգնություն ուղարկելու համար։ Նույն այդ պրովոկացիոն հոդվածում ասված էր. «Պաշտոնական տվյալների համաձայն մինչև հիմա ցուցակագրվել են 258 կամավոր, որոնք ցանկություն են հայտնել կռվել հունական պետական զորքերի դեմ»...

«Աթեշ» թերթը պրովոկացիոն լուրեր տարածելու մեջ ավելի հեռուն գնաց, քան իր ստախոս զինակիցը։ Նա ուղղակի հայտարարեց իրանական կամավորների մեկնելու մասին։ Ըստ այդ հաղորդագրության կամավորները գնացել էին հյուսիսային սահմանով։ Սուտը ճշմարտության մոտեցնելու համար թերթը որոշ մանրունքներ էր հնարել և առանց ամոթի զգացմունքի գրում էր. «Մեր թղթակիցներից մեկը երեկ հայտնել է, որ հունիսի 19-ին անհետացել է մի բանվոր՝ Հաջի Ալի Մեքրադին, Ռամազանի որդին... Նրա ընտանիքը համոզված է, որ նա Իրանից գնացել է սովետական սահմանի վրայով...»։

Այս կարգի աղմուկի ու զրպարտանքի մթնոլորտում ամերիկացիները ձգտում էին թաքցնել Իրանի նկատմամբ ունեցած իրենց հրեշավոր պլանները, պղտոր ջրում ձուկ որսալ։ Բայց այդ նրանց չէր հաջողվում։ Ինչպես ռուսական առածն է ասում «Հողն ականջ ունի»։ Ամերիկացիների հրեշավոր գործերն ու պլանները մեկ առ մեկ բացվում էին ժողովրդի աչքի առաջ։

Իրանական «Շահբազ» թերթը 1947 թ. ապրիլի 15-ին հանդես գալով մեծ հոդվածով, մերկացնում էր ամերիկյան իմպերիալիստների բազմաթիվ զավթողական պլաններից մեկը։ Թերթը գրում էր, որ ամերիկացիները ծրագրում են իրենց հովանավորության տակ ստեղծել «մեծ Քրդիստան», որը հող պետք է պատրաստի հետագայում Կովկասի նավթը գրա-

վելու, Մոսուլի, Քերմանշահի, Սուլեյմանիեի և Դիարբեքիրի նավթային հողամասերին տիրելու համար։

Այս դեպքում ամերիկացիներին լուրջ կերպով կարող էր խանգարել դեմոկրատական պարտիայի շուրջը համախմբված Հարավային Ադրբեջանի ժողովուրդը։ Դրա համար էլ ամերիկացիներն ամեն կերպ դրդում էին իրանական կառավարությանը զորք ուղարկել Հարավային Ադրբեջան, այնտեղ դեմոկրատական շարժումը ճնշելու համար։

Այսպիսով, Թավրիզի, Հարավային Ադրբեջանի այլ քաղաքների ու գյուղերի փողոցներն արյամբ ողողվեցին ամերիկացիների ուղղակի ցուցումներով ու պահանջով։

Ուշագրավ է այդ տեսակետից այն փաստը, որ երբ ամերիկյան գեներալ Շվարցկոպֆը եկավ Թավրիզում, այնտեղ սկսվեցին նոր ռեպրեսիաներ ադրբեջանցիների ու հայերի դեմ։

Հենց որ Շվարցկոպֆը թողեց Թավրիզը, նրա հետևից սկսվեցին մասսայական ձերբակալությունները։

Հազարավոր մարդկանց կյանքի, արյան գնով ամերիկացիները ձգտում էին Իրանը դարձնել իրենց գաղութը, տիրել նրա հարստություններին։

Իրանական «Մարդոմ» («Ժողովուրդ») թերթը 1947 թվի մայիսին հաղորդում էր, որ Ռոկֆելլերի խմբի հետ կապված ամերիկական նավթային ընկերությունը, ձգտելով ձեռք բերել Բելուջստանի նավթը, բանակցություններ է վարում հոլանդական այն ընկերության հետ, որը 1939 թվին իրանական կառավարությունից Իրանի հարավ-արևելքում և հյուսիս-արևելքում նավթային հողամասերը հետախուզելու և մշակելու թույլտվություն էր ստացել, սակայն 1944 թվին սնանկացել էր, և դրա պատճառով նրա հետ պայմանագիրն անվավեր էր համարվել։ Այս գործը գլուխ բերելու համար բավական ջանք էին թափում նաև իրանական պետական երկու խոշոր գործիչներ։

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄ ԻՐԱՆ

Ամերիկացիները քայլ առ քայլ ներթափանցում էին իրանական կյանքի բոլոր բնագավառները։ Բանակում ունեցած իրենց ազդեցությունն ուժեղացնելու նպատակով Իրանի ռազմական մինիստրության ամերիկյան խորհրդատուն հարց էր դնում իրանական բանակի սպայական դպրոցի համար դասատուներ հրավիրել Ամերիկայից, այլ կերպ, իբր թե, իրանական բանակում նոր ռեֆորմ անցկացնել հնարավոր չէր։

Խոսք չկա, որ Իրանը գաղութացնելու ամենահուսատու միջոցն Իրանի ժողովրդի վզին փոխառություն փաթաթելն էր։ Փոխառության մասին արդեն փոխադարձ հայտարարություն կար, սակայն այդ մասին բարձրաձայն խոսելու համար, ինչպես ասացինք, հարկավոր էր կանխապես ջլատել դեմոկրատական կազմակերպությունների ուժերը։ Նշանները ցույց էին տալիս, որ դա այնքան էլ հեշտ չէր։

1947 թվի մայիսմեկյան միտինգները տարբեր քաղաքներում, երկրի տարբեր ծայրերից եկող բողոքի հեռագրերը պրոֆմիութենական կազմակերպությունների քարտուղար Ռուստայի ձերբակալության դեմ և այլ ուրիշ բաներ իրանական կառավարությանը պարզապես զգուշություն էին թելադրում։

Իրանական ուխտադրուժ կառավարությունը բացարձակապես վախենում էր իր դավաճանական քաղաքականության մերկացումից։ Բայց Ամերիկայից փոխառություն ստանալու փաստը ծածկել չէր կարելի։ Ռեյտեր գործակալությունը 1947 թ. հունիսի 21-ին ամբողջ աշխարհին հայտնեց, որ մի օր առաջ ԱՄՆ Իրանին 25 միլիոն դոլլարի փոխառություն են տվել՝ հրանոթներ, տանկեր, բեռնատար ավտոմեքենաներ և զինամթերք գնելու համար։ Այս լուրը մեծ դժգոհություն առաջացրեց իրանական հասարակության պրոգրեսիվ շրջաններում։ Ամեն կողմից լսվեցին բողոքի ձայներ։ Բայց նույնիսկ այս դեպքում իրանական կառավարությունը լռություն պահպանեց։

Մեջլիսի 15-րդ հավաքի անդրանիկ նիստը հրավիրված էր 1947 թվի հուլիսի 17-ին։ Այդ նիստում իրանական կառավարական շրջանները պետք է հաշիվ տային իրենց գործունեության մասին։ Եվ ահա, որպեսզի դավաճանները մեջլիսում հանգիստ կարողանան խոսել, դրա նախօրյակին, հուլիսի 9-ին, Թեհրանում և նրա մերձակայքում ռազմական դրություն հայտարարվեց։

Ռազմական դրություն մտցնելու հրամանն ստորագրել էր Կավամ էլ Սալթանեն։

Կավամ էլ Սալթանեի գլխավորած կառավարությունը, հակառակ իրանական ժողովրդի ցանկության, երկրի բոլոր դռները բաց էր արել ամերիկացիների առաջ։ Բանակը, ժանդարմերիան փաստորեն գտնվում էր ամերիկյան գեներալներ Գրոուի և Շվարցկոպֆի հրամանատարության տակ, որոնք մարզելով ու վերազինելով իրանական զինված ուժերը, ցանկանում էին այն դարձնել ժամանակակից պատերազմի համար պիտանի մի բանակ։

Բայց ամերիկյան իմպերիալիստներին չէր բավարարում Իրանում ունեցած իրենց «խորհրդատուների» քանակը։ Նրանք ամեն տեսակի պատրվակի տակ նոր մարդիկ, նոր «խորհրդատուներ», «կոնսուլտանտներ», «մասնագետներ» էին ուղարկում Իրան։

1947 թվի սեպտեմբերի 26-ին Թուրքիայից Թեհրան ժամանեց ամերիկյան ներկայացուցիչների ութ հոգուց բաղկացած մի խումբ։

Թեհրանում եղած ժամանակ այդ ներկայացուցիչների խումբը զրուցեց Կավամ էլ Սալթանեի հետ, այցելեց շահին, ընդունվեց զինվորական մինիստր Ջամմի և գլխավոր շտաբի պետ Ռազմարի կողմից։

Ժուռնալիստների հետ ունեցած զրույցի ժամանակ այդ դելեգացիայի նախագահ Շորտը հայտարարեց, որ դելեգացիան իր ճանապարհորդությունն սկսել է Եվրոպայից և շարունակում է Մերձավոր Արևելքի երկրներում։

— Մենք ցանկանում ենք,— ասաց Շորտը,— ուսումնա-

տիրել այդ երկրների ռազմական, տնտեսական, քաղաքական և սոցիալական վիճակը։ Հասկանալի է, որ Իրանը չի մըտնում այն երկրների թվի մեջ, որոնց վրա տարածվում է Մարշալի պլանը և որոնց հետ մենք ծանոթացել ենք։ Սակայն, քանի որ մենք հաճախում ենք նաև բոլոր այն երկրները, ուր գտնվում են ամերիկյան ռազմական ուժեր կամ ամերիկյան ռազմական միսիաներ, ապա մենք եկանք նաև Իրան։

Խոսելով Շվարցկոպֆի և Գրոուի մասին, Շորտը շեշտված ասաց.

— Գեներալ Գրոուն և գեներալ Շվարցկոպֆը, որոնք գտնվում են Իրանում, վայելում են մեր վստահությունը։

Շորտի այս հայտարարության առթիվ բավական սրամիտ ելույթ ունեցավ իրանական «Իրանե մա» թերթը։

«Մենք չգիտենք,—գրում էր թերթը,—թե ի՞նչ ֆունկցիաներ ունի ԱՄՆ-ի ռազմական գործերի հանձնաժողովը, որպեսզի նա կարողանա խնամքով ուսումնասիրել ամերիկյան միսիաների գործունեությունն Իրանում։ Արդյոք գեներալներ Գրոուն և Շվարցկոպֆը, ինչպես այդ հաստատում են մի քանիսը, հանդիսանո՞ւմ են իրանական կառավարության ծառայողներ, արդյոք աշխատո՞ւմ են նրանք Իրանի համար, թե՞ հանդիսանում են ամերիկյան զինվորական ծառայողներ, որոնք աշխատում են Ամերիկայի համար, որը և ի նկատի ունենալով, ամերիկյան կոնգրեսի ռազմական գործերի հանձնաժողովն իր պարտքն է համարում խնամքով ուսումնասիրել նրանց գործունեությունը։ Եթե այս պարոնները՝ իրանական կառավարության ծառայողները, աշխատում են Իրանի համար, այդ դեպքում նրանց գործունեության մանրամասն ուսումնասիրությունն ու վերանայումը մտնում է ոչ թե ամերիկյան կոնգրեսի ռազմական գործերի հանձնաժողովի, այլ իրանական կառավարության ֆունկցիաների և իրավասության մեջ։ Այնուամենայնիվ, ըստ դելեգացիայի անդամների խոսքերի, ստացվում է այն, որ, չնայած այդ պարոնները աշխատավարձ են ստանում իրանական կառավարությունից և աշխատում են որպես իրանական ծառայողներ,

բայց, ըստ երևույթին, հանդիսանում են ամերիկյան ռազմական ատ.իկանության ուղեցույցները Իրանում։

Իրանը փաստորեն գտնվում է այն երկրների շարքում, ինչպես Թուրքիան և Հունաստանը, որոնք համաձայն «Տրումենի դոկտրինայի և կոնգրեսի հավանության, ԱՄՆ-ից ստանում են ռազմական և ֆինանսական օգնություն, և որտեղ ամերիկյան միսիաները կոնսուլտացիաներ են տալիս ռազմական հարցերի շուրջը, խառնվում սույն հարցերին»։

Իրանի համար սա բացառիկ երևույթ չէր։ Քիչ ամերիկացիներ չկան խցկված իրանական պետական ապարատը, որոնք իրանական կառավարությունից ռոճիկ են ստանում, սական աշխատում ամերիկյան իմպերիալիստների օգտին։

Ամերիկական կոնգրեսմեններին ամեն գնով հարկավոր էր Իրանը գրավել իմպերիալիստական զավթիչների բլոկի մեջ։ Նրանք չէին կարող հաշտվել Իրանի չեզոքության հետ։ Այդ բանը նրանք նույնիսկ չէին թաքցնում։

1947 թվի վերջերին Թեհրանի ամերիկյան դեսպանության աշխատակիցներից մեկը շատ պարզ ասաց.

— Ներկայումս դրությունն Իրանում շատ կրիտիկական է և չեմ կարծում, որ իրանական կառավարող շրջաններն առաջիկայում կարողանան երկու մեղեդի միասին նվագել։

Առաջնորդվելով այս թեզով, ամերիկացիները շտապեցին վերջնականապես կողմնորոշել Իրանին։

Փոխառություն բաց թողնելուց հետո, նրանք, 1947 թվի վերջերին, Իրանի հետ ռազմական փոխադարձ համաձայնություն կնքեցին։ Ասել է թե՝ թոկը Կավամ էլ Սալթանեի կառավարության վիզը գցած քաշեցին անգլո-ամերիկյան բլոկի մեջ։ Ուրեմն իզուր չէին մինչ այդ եղած խոսակցություններն այն մասին, որ շուտով իրանական բանակը պետք է հագնի ամերիկյան ֆորմա։ Սկզբում դա գաղտնիք էր։

1948 թվի փետրվար ամսին իրանական «Փարս» թերթը գրեց, որ ամերիկական գեներալ Գրոուն իրանական բանակը վերակազմելու լայն պլան է կազմել։ «Այդ պլանն ընդուն-

ված է.—գրեց Թերթը,—դրա կապակցությամբ գեներալ Գրոուն մեկնում է ԱՄՆ... Այժմ ռազմական շրջաններն Իրանում սպասում են ամերիկյան այդ սպայի գործողություններին։ Հաստատում են, որ եթե իրագործվի գեներալ Գրոուի պլանը, իրանական բանակը կփոխի իր այժմյան տեսքը, ձեռք կբերի մեծ մանևրականություն և ի վիճակի կլինի արագությամբ կենտրոնանալ սահմանի յուրաքանչյուր այն կետի վրա, ուր այդ անհրաժեշտ կլինի»։

Սակայն ամերիկացիներն Իրան էին ներթափանցում ոչ միայն ռազմական գործերի կապակցությամբ։

Ոչ անհայտ, ֆինանսների գծով «խորհրդատու» Միլսպոյից հետո, որն իր ժամանակին (1942—44 թ. թ.) մեծ ջփոթ առաջ բերեց երկրի ֆինանսական-տնտեսական վիճակում, գալիս էին նոր «խորհրդատուներ»։ Դրանց միակ նպատակն էր Իրանի ֆինանսական-տնտեսական կյանքում նոր քաոս առաջացնել, չոքեցնել Իրանն այսպես կոչված «Ռեկոնստրուկցիայի Միջազգային բանկի» առաջ, որի տերերը ամերիկացիներն էին։

Ամերիկացիները «հոգ տարան» Իրանի, այսպես կոչված, տնտեսական զարգացման յոթնամյա պլանը կազմելու մասին։

Այդ պլանը հրապարակվել էր 1947 թվի մարտին։

Դրա ամերիկյան հեղինակները պլանը կազմելիս ավելի ինկատի էին ունեցել ամերիկյան իմպերիալիստների, քան իրանական ժողովրդի շահերը։ Ըստ պլանի իրանական ժողովուրդը յոթ տարվա ընթացքում բավականաչափ թվով ռազմական օբյեկտներ և Պարսկական ծոցում նոր նավահանգիստներ պետք է կառուցի։

Այդքան թվով ռազմական օբյեկտներ Իրանին ոչ մի դեպքում հարկավոր չեն լինի։ Այն, ինչ պետք է կառուցվի ըստ այդ յոթնամյա պլանի, առաջին հերթին հարկավոր է իմպերիալիստական ագրեսորներին։

Այդ ռազմական օբյեկտները, ի դեպ ասած, չատ նման են սեփական հարկի տակ գտնվող վառոդի պահեստների,

որոնց պայթյունից, ինչ խոսք, որ ամենից մեծ վնասը, ամենածանր կորուստը տանտիրոջը պետք է հասնի։

Իրանական ծախու տերերին առանձնապես չի էլ անհանգստացնում իր ժողովրդին վառոդի պահեստի վրա նստեցնելը։

Նրանք պարտավոր էին կատարել ամերիկյան գանգստերների ցանկությունները։ Միայն թե յոթնամյա պլանով նախատեսնված այդ կառուցումների համար դարձյալ փող էր հարկավոր։ Ներքին միջոցները ոչ մի դեպքում չէին բավարարի։

Այս դեպքում դարձյալ առաջանում է բազմիցս կրկնված հարցը. «որտեղի՞ց գտնել փող»։ Ամերիկացիները նման դեպքերում չեն դժվարանում պատասխանել։

— Խնդրեմ, Ռեկոնստրուկցիայի Միջազգային բանկը պատրաստ է փող բաց թողնելու, միայն...

Ամերիկացիների տրամադրության տակ գտնվող այդ բանկը ոչ բոլոր դեպքերում է փող բաց թողնում։ Այստեղ գրավականն էլ նշանակություն չունի։ Քի՞չ երկրներ կան, որ գրավականով կարող են փող վերցնել։ Գրավականը դա ինքնին հասկանալի է։ Դրա հետ մեկտեղ հարկավոր են և այլ երաշխիքներ։

«Միջազգային» բանկի տերերն այդպես էլ ասացին իրանցիներին, երբ յոթնամյա պլանի կապակցությամբ նրանք դիմեցին այդ բանկին 25 միլիոն դոլլար փոխառություն ստանալու.

— Այդ գումարը մենք կարող ենք բաց թողնել միայն այն դեպքում, երբ ձեր յոթնամյա պլանին Վաշինգտոնը հավանություն տա և երբ Իրանի ներքին դրության մեջ «քաղաքական համապատասխան» ֆոն լինի։

Ամերիկացիների առաջին պահանջը ձևակերպված է շատ հստակ. իրանական յոթնամյա պլանը պետք է բավարարի Վաշինգտոնի պահանջներին։ Իսկ ինչ վերաբերվում է երկրորդ պահանջին, ապա այդ ամերիկական իմպերիալիստները ձևակերպել են, դիմելով դիվանագիտական բառերի արսենա-

չին։ Այն ժամանակ «քաղաքական համապատասխան ֆոն» ստեղծել Իրանում նշանակում էր՝ իրանական ռեակցիոն կառավարության դիրքերն ամրացնել, բոլորովին անհնարին դարձնել բարեկամությունը Սովետական Միության հետ։ Ավելի պարզ ասած, դա նշանակում էր. «Հրաժարվեք սովետա-իրանական նավթային խառն ընկերություն ստեղծելուց, և ընդհանրապես ձեր երկրի ներքին և արտաքին գործերը կատարեցեք մեր ցուցումներով»։

Ամերիկացիներն օգտագործում էին ամենաչնչին առիթը, իրենց մարդկանց Իրան մտցնելու համար։ Նրանք Իրան էին ուղարկում ֆինանսական, տնտեսական, զինվորական, ժանդարմական գործերի «մասնագետներ»։

Իրանի քաղաքացիական օդագնացության մեջ ևս օգտագործվում են ամերիկյան օդաչուներ։ «Իրան-Թուրս» ավիոգծի վրա աշխատող օդաչուներն ու բորտմեխանիկներն ս. թ. փետրվար ամսին ամերիկացիներ էին, որոնք պարսկերեն խոսել չգիտեին։

Քաղաքացիական զգեստ հագած ամերիկական ռազմական օդաչուներն սպասարկում են նաև Թեհրան-Թավրիզ ավիոգիծը։

Ամերիկյան զինվորական օդաչուների տեղն Իրանում ավելի ամրացնելու համար, ԱՄՆ-ի կառավարությունը, 1947 թվի վերջերին, ստիպեց Կավամ էլ Սալթանեի կառավարությանը մի համաձայնագիր ստորագրել, որով այդ օդաչուների մնալն Իրանում երկու տարով երկարաձգվում էր։

Այն դեպքում՝ երբ այս կամ այն միջամտությունը հանդիպում էր ամենաչնչին դիմադրության, ամերիկացիները դիմում էին ճիշտ այնպիսի շանտաժի, ինչպես 1944—46 թվերին։

Ամերիկացիներն իրենց ամեն տեսակի զինված ուժերը ցույց էին տվել իրանցիներին, բացի ծովային ուժերից։ Եվ ահա 1948 թ. մարտի վերջերին իրանական հասարակությանը հայտնի դարձավ, որ չինական ջրերից Պարսկական ծոցն են գալու ամերիկյան մի մեծ ավիակիր և երկու ականակիր նավեր։

Իրանն իրենց ուշադրության կենտրոնում պահելու համար ԱՄՆ-ի կառավարական դեպարտամենտը Հունաստանի, Թուրքիայի և Իրանի հատուկ բաժին էր կազմակերպել։

Այդ վարչության պետ Ջոն Ջերնիկին, 1948 թվի մարտին ժամանելով Թեհրան, իրանական կառավարությանն առաջարկեց կազմակերպել «ամերիկյան փոխառության հատուկ դեպարտամենտ»։

Ըստ երևույթին այդ դեպարտամենտը պետք է զբաղվեր ամերիկյան ռազմական փոխառության իրացման գործով։ Անշուշտ փոխառության իրացումը կապված էր որոշ վտանգների հետ։ Իրանական ժողովուրդն ամբողջ հոգով դեմ էր դրան։ Այդ պատճառով էլ կառավարությունը միջոցներ էր ձեռք առնում եղած խոչընդոտները վերացնելու համար։ «Իրանե-մա» թերթի 1948 թ. ապրիլի հաղորդման համաձայն իրանական կառավարությունը ծրագրում էր Տրանսիրանական երկաթուղու վրա աշխատողների պրոֆմիությունները և ընկերությունները փակել, որովհետև երկաթուղին պետք է սկսեր ԱՄՆ-ում գնած զենքի և զինամթերքի փոխադրությունը։ Դեռ խոսակցություն կար, որ երկաթուղու վրա ռազմական դրություն կհայտարարվի։

Չնայած մինչ այդ գործադրած դաժան միջոցներին, թե՛ ամերիկացիները և թե՛ իրանական կառավարությունը լուրջ կերպով վախենում էին իրանական ժողովրդից, որը սովետաիրանական փոխհարաբերությունների վատացման հետևանքով խիստ գրգռված էր։

ՈՒԽՏԱԴՐՈՒԺ ԿԱԲԻՆԵՏԻ ՎԵՐՋԸ

Իրանական դեմոկրատիայի դեմ ձեռք առած միջոցներից արդեն պարզ երևում էր, թե Կավամ էլ Սալթանեի կաբինետըն ինչ դիրք է բռնել Սովետական Միության դեմ։ Սակայն Կավամը հրապարակորեն դեռ չէր հրաժարվել իր ստորագրած պայմանագրից։

Եկավ և դրա ժամանակը։

1947 թվի օգոստոսի 12-ին ՍՍՌՄ Իրանի դեսպան ընկ. Սադչիկովը, այցելելով պրեմիեր մինիստր Կավամ Էս Սալթանեին, հանձնեց նրան սովետա-իրանական նավթային խառն ընկերության պայմանագրի նախագիծը։

Իրանական կառավարությունը համաձայն 1946 թվի ապրիլի 4-ի իրանա-սովետական համաձայնագրի, նրա տեքստը պետք է համաձայնեցներ, ապա դներ մեջլիսի հաստատմանը։

Այստեղ էր ահա, որ իրանական ռեակցիոն շրջաններն սկսեցին հակասովետական մի այնպիսի կամպանիա, ինչպիսին տանում էր Հիտլերի հետ համագործակցած Ռզա շահի նախկին կառավարությունը։ Ռեակցիոն շրջանների պրոպագանդիստները ցանկանում էին գործն այնպես ներկայացնել, իբր թե սովետա-իրանական նավթային խառն ընկերությունից իրանցիներն ավելի քիչ օգուտ պետք է ունենան, քան անգլո-իրանական նավթային ընկերությունից։ Դա ասվում էր մի պայմանագրի մասին, ըստ որի 50 տարվա ընթացքում ընկերության շահույթի 49 տոկոսը պետք է ստանային իրանցիները, իսկ Սովետական Միությունը, բոլոր կապիտալ ներդրումները կատարելով հանդերձ, պետք է ստանար շահույթի 51 տոկոսը։ Մինչդեռ անգլո-իրանական ընկերությունից իրանցիներն ստանում են մաքուր շահույթի 20 տոկոսը՝ որից անգլիացիները նորից մի շարք հանումներ են անում և, ի վերջո, միայն կոպեկներ տալիս Իրանին։ Հակասովետական այդ կամպանիան բորբոքում էին ամերիկյան գործակալները, դիվանագիտական ներկայացուցիչները։ Հայտնի է, որ հատկապես այդ շրջանում ամերիկյան դեսպան Ալլենը բավական «մտահոգված» էր Իրանի «ազգային շահերով» ու «անկախությամբ»։ Իրանցիների առաջ Իրանի «անկախության» մասին հայտարարություններ անելով, նա խարդախությամբ ցանկանում էր վարկաբեկել սովետա-իրանական ընկերության նպատակները։

Կավամ Էս Սալթանեի ծախու կառավարությունը ևս կանգնեց քաղաքական այն գծի վրա, որի վրա մինչ այդ

կանգնած էին Ռզա շահի, Սայեդի, Սադրի, Հաքիմի կառավարությունները։

1947 թվի հոկտեմբերի 22-ին, տարուց ավելի ուշացումով, Կավամ Էլ Սալթանեն մեջլիսին զեկուցեց 1946 թվի ապրիլի 4-ի սովետա-իրանական նավթային համաձայնության մասին։ Հենց ինքը Կավամը, որ ստորագրել էր այդ համաձայնությունը, խոսեց համաձայնությունը հաստատելու դեմ։

Իրանական մեջլիսն իր այդ նիստում որոշեց սովետա-իրանական նավթային համաձայնությունը համարել անվավեր։

Մեջլիսն իր որոշումը հիմնավորեց 1944 թվի դեկտեմբերի 2-ի օրենքով, ըստ որի կառավարությանն արգելվում էր որևէ երկրի հետ կոնցեսիայի պայմանագրեր կնքել։ Ժողովրդին հայտնի դարձավ, որ նախ քան այս որոշումն ընդունելը Կավամ Էլ Սալթանեն խորհրդակցել է ամերիկյան դեսպան Ալլենի հետ։ Որոշման նախագծում, ինչպես հայտնում էին իրանական թերթերը, խոսք է եղել նաև Պարսից ծոցում գտնվող Բահրեյնական կղզիների մասին։ Նախագծի հեղինակները փորձ են արել խոսել նաև այդ կղզիների վրա տարածվող իրանական սուվերենության մասին։ Բայց քանի որ այդ կղզիների վրա գտնվում են ամերիկյան նավթային կոնցեսիաներ, Ալլենը պահանջել է որոշման նախագծից այդ կետը հանել, մանավանդ, որ իրենք՝ ամերիկացիները, մինչև այդ հանդես էին եկել բահրեյնական շեյխի «ինքնուրույնության» պաշտպանությամբ։

Կավամ Էլ Սալթանեի այս երկերեսանությունը և ուխտադրժությունը ժողովրդի մեջ ուժեղ բողոքի տեղիք տվեց։

Նրա կառավարության քաղաքականության դեմ հանդես եկան իրանական բազմաթիվ թերթեր։

Բնութագրելով մեջլիսի 15-րդ հավաքի կառավարական դիրքը, իրանական «Ղիյամե Իրան» թերթը գրեց.

«Արտաքին քաղաքականության ասպարեզում մեջլիսն իրեն նպատակ է դնում քաշել Իրանն ամերիկյան քաղաքական խմբավորման մեջ»։

Այն ժամանակ, երբ ամերիկյան կառավարությունը հանձնարարել էր իր ներկայացուցիչներին շնորհակալություն հայտնել Կավամ էլ Սալթանեին՝ նրա վարած քաղաքականության համար, «Նիդայի Ազադի» («Ազատության ձայն») թերթն առաջնորդող հոդվածում կշտամբում էր մեջլիսի դեպուտատներին՝ Կավամ էլ Սալթանեին ենթարկվելու և նրա կամքը կատարելու համար։

«Եթե մեր փոխհարաբերությունները ՍՍՌՄ-ի հետ վատանա, ապա ապագա դեպքերի մեղքը կընկնի մեզ՝ դեպուտատներիս վրա»։

Ժողովրդի բողոքի ձայնն ստիպում էր դեպուտատներից մի քանիսին բացարձակ կերպով հանդես գալ Կավամի կառավարության դեմ։

Պրեմիերն արդեն կորցրել էր իր հեղինակությունը դեպուտատների զգալի մասի մոտ և նրանք պահանջում էին քննարկել, թե կարելի՞ է արդյոք այնուհետ վստահել նրան։

Հատկանշական է, որ այդ օրերին ամերիկյան դեսպան Ալլենը մեկնել էր Անկարա և չկար մեկը, որի հետ պրեմիերը համաձայնեցներ իր առելիքը։

1947 թվի դեկտեմբերի 10-ին Կավամ էլ Սալթանեն 60 դեպուտատների պահանջով ստիպված էր ելույթ ունենալ մեջլիսի առաջ։ Լսելով պրեմիերին, մեջլիսը քվեարկության դրեց նրան վստահելու հարցը։

Դեպուտատների մեծամասնությունը դեմ քվեարկեց Կավամին։

Մեծ շռայլ առանց սրտի կսկծի չթողեց այդ պաշտոնը, որովհետև ողջ Իրանում դրանից ավելի եկամտաբեր պաշտոն չկար և նա իր պաշտոնից քիչ օգուտ չէր քաղել։

Ինչպես հետո պարզվեց 14 հազար տոննա գարու և 12 հազար տոննա բրնձի արտահանման լիցենզիա (հատուկ թույլատվություն) տալու համար Կավամ էլ Սալթանեն ստացել էր 4 միլիոն ռեալ, իսկ 400 տոննա թեյի լիցենզիայի համար՝ 8,500 ռեալ։

Ամբողջ աշխարհին հայտնի է, որ Կավամ էլ Սալթանեի

գործը տրվեց դատարան: Սակայն իրանական օրենսգրքի հոդվածների արանքով Կավամ էլ Սալթանեն այնպես թռավ դեպի արտասահման, ինչպես միայն չղջիկը կարող է գիշերվա խավարի մեջ թռչել:

Կավամի կառավարության հրաժարականից հետո Իրանի քաղաքական տարբեր խմբավորումների միջև կատաղի պայքար սկսվեց նոր պրեմիեր մինիստր և կառավարության նոր կազմ առաջադրելու համար: Այդ պայքարին պակաս մասնակցություն չէին ունենում նաև Թեհրանի անգլո-իրանական շրջանները, որոնք ամեն կերպ ցանկանում էին ազդել մեջլիսի ազդեցիկ շրջանների, շահի վրա և նոր կառավարության գլուխ դնել իրենց ցանկացած մարդկանց:

Ի վերջո, 1947 թվի դեկտեմբերի 22-ին, շահը Հաքիմի-օլ Մոլքին հանձնարարեց կառավարության կազմելը:

Իրանում Հաքիմին հայտնի էր հակասովետական իր դիրքով ու գործունեությամբ:

Տակավին այն ժամանակ, երբ Սովետական երկիրը հերոսական պայքար էր տանում իմպերիալիստական ինտերվենտների դեմ, երբ նա առաջին անգամ մարդկային պատմության մեջ բարձրացրել էր խսկական ազատության դրոշը և կրծքով պաշտպանում էր ռևոլյուցիայի նվաճումները, Հաքիմին, օգտվելով հանգամանքից, 1919 թվի Փարիզի խաղաղության կոնֆերանսում, պահանջ էր դնում Իրանի սահմանները հասցնել համարյա մինչև Հեռավոր Արևելքը և Կովկասյան լեռնաշղթան, այսինքն Իրանին տալ Ադրբեջանը՝ Բաքու քաղաքի, Թուրքմենիստանը՝ Աշխաբադի, Հայաստանը Երևանի հետ միասին:

Ցնորամիտ այս պլանը մեր օրերում անգամ, Ռզա շահի ռեակցիայի տարիներին, մնում էր իրանական անհեռատես տերերից մի քանիսի գլխում: Այդ պլանների մասին խոսողները Հաքիմեն և նրա զինակիցներն էին՝ Հիտլերի չմերկացված գործակալները:

Մի՞թե պարզ չէ, որ այդպիսի մի ռեակցիոներ ոչինչ չպետք է աներ իրանա-սովետական հարաբերությունները

թարելավելու, իրանական ժողովրդի ծանր վիճակը թեթևացնելու ուղղությամբ։

Նրա՝ կառավարության գլուխ անցնելը ուրախացնում էր անգլիացիներին, որոնք շատ լավ գիտեին Հաքիմիի արժեքը։ Հենց որ Հաքիմին կառավարության գլուխ կանգնեց, անգլիացիները երկրի տարբեր ծայրերում՝ Հարավային Ադրբեջանում, Գիլանում և ուրիշ մարզերում ակտիվ գործունեություն ծավալեցին՝ իրենց ազդեցությունն Իրանում ավելի ուժեղացնելու համար։

Ամերիկացիներն առանձնապես անհանգստանալու պատճառ չունեին, որովհետև իրենց փոխառությամբ ոտով գլխով կապել էին իրանական կառավարությանը և հետո՝ Հաքիմին մի այնպիսի ընկույզ էր, որին ամերիկացիները ևս իրենց ատամի տակ փորձել էին։

Տխուր էր միայն իրանական ժողովուրդը։

Նրա դրությունն օրեց-օր ավելի էր վատանում։ Օրեց-օր ավելանում էր գործազուրկների թիվը, օրեց-օր շուկայից վերանում էր պարենամթերքը և առանձնապես հացն ու բրինձը։

1948 թվի մայիսին իրանական թերթերը տագնապալի լուրեր էին հաղորդում երկրում տիրող սովի, համաճարակների մասին։

Թերթերը հաղորդում էին, որ Բուշիրում (Պարսից ծոցի ափ) հաց, բրինձ և այլ պարենմթերքներ բոլորովին չկան։ Սովի պատճառով մայիսի 2-ից սկսած Բուշիրում փակվել էին բոլոր խանութները, հիմնարկությունները։ Տեղական ֆաբրիկայի 1300 բանվորները սովի էին մատնվել։

Այդ ժամանակ բրնձի գինը հյուսիսային մարզերում այնքան բարձրացավ, որ նրա մշտական գործածողները այլևս բրինձ գնել չէին կարող։

Ախարա քաղաքում, որն, ի դեպ, գյուղատնտեսական շրջանի կենտրոն է, ս. թ. մայիսին բնակիչները զուրկ էին մնդամթերքից, հացից։

Սովը մահվան ուրվականի պես շրջում էր Իրանի նահանգներում ու գավառներում։

Մյուս կողմից Հաքիմիի կառավարությունը որքան կարող էր ուժեղացնում էր ռեպրեսիաներն իրանական ժողովրդի դեմ։

Մույն թվի հունիսի սկզբներին Ահվազից հաղորդում էին, որ պարենամթերքի պակասությունը բնակչության մեջ ուժեղ բողոքների տեղիք է տալիս։

Այս լուրն առնելուն պես ներքին գործերի մինիստր Ախմեդին շտապեց գնալ Ահվազ, սակայն ի՞նչ կարող էր անել նա բացի ռեպրեսիաներից։

«Քեշվար» թերթը բնութագրելով Իրանի ներքին դրությունը, գրում էր.

«Երկրի հարավային շրջաններն արտաքսված ադրբեջանցիների ամբողջ խմբեր ապրում են բացարիկ ծանր դրության մեջ և մատնված են դանդաղ մահվան։ Մազանդարանի քաղաքներում ռազմական դրություն է հայտարարված։ Գորգանի բնակչությունը ևս գտնվում է ռազմական դրության շղթաների մեջ։ Իսֆահանում մի խումբ կապիտալիստների և ֆաբրիկանտների շահերը պաշտպանելու համար երկու տարի է, ինչ գոյություն ունի ռազմական դրություն»։

Այլ թերթեր գրում էին, որ Ադրբեջանում, Մազանդարանում, Գորգանում, Գիլանում, ինչպես և Փարսում քաղաքացիական իշխանություններն իրենց տեղը զիջել են զինվորական իշխանություններին։ Եթե ինկատի ունենանք, որ սրանք այն մարզերն են, ուր սովետական զորքեր են եղել, ապա միանգամայն պարզ կլինի Հաքիմիի կառավարության դեմքը։

Ոչ մի ցանկություն չունենալով բարելավել ժողովրդի վիճակը և հարաբերությունները Սովետական Միության հետ, Հաքիմիի կառավարությունը շատ շուտով կորցրեց իր հեղինակությունը և ս. թ. հունիսի 8-ին ստիպված էր հրաժարական տալ։

Հաքիմիին փոխարինեց Հաժիրը։ Երբ սա ս. թ. հունիսի 22-ին, առաջին անգամ, որպես պրեմիեր մինիստր, ամբիոն բարձրացավ իր կառավարության անդամներին մեջլիսին

ներկայացնելու և իր ծրագիրը հայտարարելու, հասարակության հատկացրած տեղերից նրա դեմ բացագանչություններ լսվեցին։

Նոր պրեմիերն իր գործունեության հենց առաջին պահից ստիպված էր դիմել ոստիկանության օգնության։

Երբ ոստիկանությունը դահլիճը մաքրեց ցուցարարներից, կարծեց թե այնտեղ խաղաղությունը պետք է թագավորեր։ Բայց այս անգամ էլ սկսեցին աղմկել դեպուտատները՝ իրենց ռեպլիկաներով ընդհատել նրան։

Համիրին ևս իրանական ժողովրդի համար լավ ոչինչ չարեց։

ԻՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲՈՂՈՔՈՒՄ Է

Ծանր է, խիստ ծանր իրանական ժողովրդի դրությունը։ Իսկ անգլո-ամերիկական իմպերիալիստների ու նրանց գործակալների քաղաքականությունն նրան բերում է նոր տառապանքներ ու զրկանքներ։

Իրանական հասարակության պրոգրեսիվ խավը դա շատ լավ է հասկանում։ Նա գիտե, որ ամերիկյան կոնգրեսմեն-ների, մեկը մյուսի հետևից երկիրը եկող «խորհրդատուների», «մասնագետների» նպատակն է գաղութացնել Իրանը, զրկել նրան ինքնուրույնությունից, ազգային անկախությունից և դարձնել պլացդարմ իրենց ցնորամիտ ռազմական պլանների իրագործման համար։

Իրանական ժողովուրդը բազմիցս համոզվել է, որ հանձին Սովետական Միության նա ունի մի հզոր, անշահախնդիր, խաղաղասեր բարեկամ, որը միայն մի նպատակ է հետապնդում՝ թույլ չտալ պատերազմի հրձիգներին դարանակալել իր հարևանի հարկի տակ և հենց այդտեղ, կից կպած հարկի տակ խաղաղ ժողովուրդների դեմ նոր պատերազմ նախապատրաստել։ Սովետական Միությունը, իրանական ժողովրդին մի բան է ցանկանում. այդ այն է, որ նա լինի անկախ, հզոր, անխորտակելի և ընդունակ սեփա-

կան ուժերով սեփական հարկի տակից դուրս վռնդել պատերազմի հրձիգներին, օտարերկրյա գաղութարարներին։

Իր մեծ հարևանի այս անկեղծ ցանկությունների մասին շատ լավ գիտեն իրանական հասարակության լայն խավերը, ահա թե ինչո՛ւ նրանք չեն դադարում բողոքել ռեակցիայի դեմ, որը, ծախվելով անգլո-ամերիկյան իմպերիալիստներին, իր նեղ էգոիստական շահերից ելնելով, ոչինչ չի անում սովետա-իրանական հարաբերությունները կարգավորելու համար։

Իմպերիալիստական գաղութարարների, սեփական ռեակցիոն կառավարողների վարած քաղաքականությունն իրանական ժողովրդի զայրույթն ու ցասումն է առաջացնում։

Ահա թե պրոգրեսիվ մամուլն ինչպես է արտահայտում իրանական ժողովրդի բողոքը։

Թեհրանի «Մոզաֆֆար» («Հաղթանակ») շաբաթաթերթը 1947 թ. հոկտեմբերին գրեց.

«Այժմ բոլորին հայտնի է, որ օտարերկրյա պետություններից միայն ԱՄՆ և Անգլիան են խառնվում մեր ներքին գործերին և մեր երկրի ժողովրդին զրկում են իր բախտը տնօրինելու իրավունքից։ Եթե ամերիկյան և անգլիական ժողովուրդները միջազգային կապիտալիստների չարամիտ պրոպագանդայի պատճառով տեղյակ չեն, ապա իրանցիները գիտեն, որ սովետական իշխանությունը ամենաչնչին չափով չի խառնվում մեր ներքին գործերի մեջ, իրանական ժողովուրդն ամենաչնչին վիրավորանքի չի ենթարկվում այդ հզոր հարևանի կողմից։

Իրանին, իրանական դժբախտ մասսաներին բոլոր տեսակի զրկանքներ պատճառողները կապիտալիստական և իմպերիալիստական երկրներն են, որոնք պաշտպանելով մեր երկրի արատավոր կառավարական շրջանները, ցանկանում են Իրանը դարձնել իրենց տնտեսական գործունեության արենան, մեր երկիրը դարձնել իրենց պաշտպանության առաջին գիծը և, հարկավոր դեպքում, պլացդարմ՝ Սովետական Միության դեմ...»։

Նույն այդ ժամանակ Թեհրանի մի այլ շաբաթաթերթ «Ջեհանե քուշեշ»-ը գրում էր.

«Իրանում վերջին ժամանակներս թագավորում է գլխավային քաղաքականությունը... Ամերիկան և նրա գործակալները «նեյտրալ» անձնավորությունների և կամ «երրորդ կողմի» ներկայացուցիչների դիմակի տակ բացարձակորեն խառնվում են մեր ներքին գործերին»։

«Ներդայե ազադի» շաբաթաթերթը խոսելով ամերիկյան փոխառության մասին, գրում էր, որ «ամերիկացիներն այդ «օգնությունը» ցույց են տալիս միայն իրենց տնտեսական, քաղաքական և ռազմական շահերն ապահովելու համար։ Նրանք ցանկանում են տոկոսներ, նրանց հարկավոր են օդանավակայաններ, բազաներ, ստրատեգիական ճանապարհներ։ Նրանք զբաղված են այնպիսի պլանների մշակմամբ, որոնք ստրատեգիական մեծ նշանակություն ունեն։ Ամերիկան ցանկանում է Իրանը դարձնել իր ենթամանդատային երկիրը և ռազմական բազան...»։

Ուրիշ մի թերթ 1947 թ. նոյեմբերին գրեց. «Ամերիկյան փոխառության միակ արդյունքն այն կլինի, որ իրանական դժբախտ ժողովրդի և նրա ապագա սերունդների մեջքերը կկորանան այդ փոխառության ծանրության տակ»։

«Քիամե Իրան» թերթը նույն ժամանակ խոսելով ամերիկական օգնության մասին, գրեց. «Դա օգնություն չէ, այլ միջամտություն»։

«Դադ» թերթը նշում էր, որ «ամերիկական փոխառությունը հրում է Իրանին դեպի միակողմանի քաղաքականություն։ Նման քաղաքականության արդյունքը կլինի Իրանը քաղաքական բլոկի մեջ մտցնելը և կհասցնի նրան, որ իրանական մինիստրությունները և հիմնարկությունները կգտնվեն օտարերկրյա խորհրդատուների և էքսպերտների հսկողության տակ»։

Ամերիկական փոխառության դեմ վճռականորեն ելույթ էին ունենում նաև «Մարդոմ», «Ռազմ» («Մարտ»), «Իրանե մա» («Մեր Իրանը») և այլ թերթեր։

Քիչ բողոքի տեղիք չի տալիս և իրանական պետական այն գործիչների արարքը, որոնք, ծախված լինելով անգլիական իմպերիալիստներին, ամեն ինչ անում էին նրանց դուր գալու համար։

Իրանում այդպիսիներից մեկն էր Հաքիմին։

«Մարդոմ» թերթը ս. թ. հունվարին մերկացնելով Հաքիմիի քաղաքականությունը գրեց. «Նույն չափով, ինչ չափով նախկին կառավարությունը խրախուսում էր Ամերիկայի իմպերիալիստական քաղաքականությունն Իրանում, նույնքան և նոր կառավարությունը ցանկանում է կողմնորոշվել դեպի անգլիական քաղաքականությունը և Անգլիային Իրանում ազատ գործելու նախաձեռնություն տալ»։

Նույն թվի հունվարի կեսերին «Մարդոմը» շատ սրամիտ կերպով բնորոշեց Հաքիմիի քաղաքականությունը։ «Հաքիմին,—գրեց թերթը,—սիրախաղում է Անգլիայի հետ և միաժամանակ աչքով է անում Ամերիկային»։

Ժողովուրդն արդեն շատ լավ տեսնում էր, թե իր համար ի՞նչ է բերում իր ծախու տերերի շանսոնետկաներին (ուրախ երգչուհի) վայել այդ վարքը։

«Թավրիզ» թերթի ս. թ. փետրվար ամսվա մի հաղորդագրության մեջ իրանական պետական գործիչների ծախու քաղաքականության արդյունքները շատ լավ է պարզվում։ Թերթը գրում է. «Ոչ մի պետություն այնպես չի կարողանում իր անորակ ապրանքը ծախել օտար պետություններին, ինչպես այդ անում են ԱՄՆ։ Մենք նույնիսկ դժվարանում ենք որոշել, ո՞ւմ կեղտոտ հագուստն է սա՝ գյուղացո՞ւ, զինվորականի՞, թե այն վերցված է հիվանդանոցներից»։

Այդպիսի ապրանքով է հեղեղում Ամերիկան Իրանի շուկաները։

Իրանական ժողովուրդը չի կարող իր վրդովմունքը չհայտնել օտարերկրյա իմպերիալիստների քաղաքականու-

թյան դեմ։ Նա ամբողջ հոգով բողոքում է անգլո-ամերիկյան գաղութարարների և անփական ծախու կառավարության դեմ։

Եվ կասկածից դուրս է, որ հուսահատության դուռը հասած իրանական ժողովուրդը մի օր ցասմամբ դեն կնետի օտարերկրյա գաղութարարների լուծը և վրեժխնդիր կլինի նաև իմպերիալիստների կրտմիկները լիզող իր իսկ տերերից, որոնք նրան այնքան զրկանքներ են պատճառել։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

էջ

Երկու աշխարհ մի գետակի ափին 3
Գողացված կինը 9
Հանելուկային մարդը 11
Խանի մոտ 16
Մութ անտառում 24
Անհաջող որս 27

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Փեհլևի 31
Անժպիտ պատանին 34
Ինչո՞ւ են բանտարկել 37
Ծովափին 41
Ձկնորսների մոտ 44
«Ուղղափառ» մուսուլմանը 50
Մի քանի էջ պատմություն 55
Անգլիացիների «նվերը» 61
Թուդե պարտիայի ներկայացուցիչը 65
Ինչի՞ մասին է պատմում հողը 68

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ռեշտ 74
Քաղաքային ժամացույցը և մասնավոր երկաթուղին 77
Անգլիական բանկի դիրեկտորը և այլ հազվագյուտ բաներ 78
Թշվառներ 82

	Էջ
Թրքական լրտես ֆաբրիկանտն ու չորս տարեկան բանվորը	84
Պարոն Վիլսոնը	90
Նոր բնակիչներ	93
«Վոլգա-Վոլգան» և մոլլան	99
Ոստիկանության լրտեսը	102
Ռեշտի շուկան	109

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ոստիկաններ ու ժանդարմներ	112
Ինչպես են Իրանում հարցաքննում	116
Տարակուսելի գողեր և անտարակուսելի ավազակներ	120
Այցեպան Ալլահվերդին	123
Ուսուցիչ գործակատարը	126
Նովրուզ	129
Նախկին զինվորի խոստովանությունը	133
Արթնացող գյուղը	136
Անգրագետ դեղագործը	140

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հայեր	145
Կոշկակար Ավագն ու նրա որդին	148
Իր կյանքում մի անգամ կրակած որսկանը	153
Ռեշտի ցիցերոնը	162
Ռեշտի «աստղը»	166
Զոհը	174
Ազատության կամուրջը	179
Մայիսմեկյան ցույցեր	183

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Օձագալար ճանապարհի պատմությունը	185
Ածխի խանը	189
Հանդիպում անգլիական լրտեսի հետ	193
Մենջիլ	197
Գյուղական ռեակցիոները և դեմոկրատը	203
Թեյարան	208
Ղազվին	212
Ամերիկացիները Ղազվինում	215
Ծարավ հարթավայր	219

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

	էջ
Թեհրան	224
Ինչի՞ մասին կարող է պատմել Թոփխանե հրապարակը	228
Ռզա խան Փեհլևի	235
«Դիվանագիտական» թռիչքներ	252
Ամերիկյան զորահանդես	260
Ամերիկացիները ոստիկանի դերում	267
«Ուրախ» ամերիկացիներ	278
Սեիդ Զիա-Էդ-Դին	283

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ազատատենչ ադրբեջանցիներ	289
Սաթթար խանն ու Խիաբանին	293
Ժողովրդական պարտիան ու նրա գործունեությունը	298
Ժողովրդական ավտոնոմ կառավարությունը	306
Բարեկամների հրաժեշտը	313

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Իրանի հպարտ զավակները	318
Կենդանի կադետը և դաշնակցական «հումանիստը»	322
«Մենք նախանձում ենք ձեզ»	326

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

Կասպից ծովի հարավային ափերին	330
Ամերիկյան «տուրիստներ»	332
Քոչվորներ	335
Ալբորզի լեռնաշխարհը	337

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Մեզնից հետո	342
Մանր ավազակների ամերիկյան խոշոր շեֆերը	350
Ինչպես են ամերիկացիները ներթափանցում Իրան	357
Ուխտադրուժ կաբինետի վերջը	364
Իրանական ժողովուրդը բողոքում է	371

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Խմբագիր՝ Վ. ԳԱՐՏԻԶՈՒՆԻ
Տեխ. խմբագիր՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎՖ 01688 Պատվեր 31. Տիրաժ 8000.
Տպագրական 24 մամուլ
Հանձնված է արտ. 2/II 1949 թ.:
Ստորագր. է տպ. 29/VI 1949 թ.:

Հայպոլիգրաֆհրատի Վարչության
№ 3 տպարան, Ալավերդ-
յան № 65, Երևան, 1949 թ.:

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

1950.IX.7.

[In 604]
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0638914

Կռա
2704